



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՎԱՐԱՆԴԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

ՋԵՌՆԱՐԿ Է. Յ. Դ. ՌՈՍՏՈՄ ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԵԱՆ

**Է. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ**

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

**Ա. ՀԱՏՈՐ**

**Բ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ**


համագործակցությամբ Ալիբ հաստատություն

Թեհրան

1981







1890 - 1981

## ՄՇԱԿ ԲԱՆԻՈՐ

Մշակ բանւոր, բէնջպէր ախպէր,  
Արի՛ք, միանանք, յառաջ գնանք,  
Աշխատանքի դատի պաշտպան  
Դաշնակցութեան թեւ թիկունք տանք:

Թաւ է տանջւենք, քրտինք թափենք,  
Արիւն վաստակ դատենք, դիզենք,  
Շահագործող ցեցեր վառենք,  
Իսկ մեզ շոր հաց բաժին հանենք:

Դէ՛ն, սեւ օրեր, քողոք դարձէք,  
Արիւն, քրտինք երկունք մտէք,  
Տանջանք, զրկանք, լեզու առէ՛ք,  
~~Աստիճակներն համբայ բացէ՛ք...~~  
*Դաշնակցութեան*

## ՆՈՐ ԱՍՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հ. Յ. Դաշնակցութիւնը հայկական նոր ասպետութիւնն է: Ելէք, ելէք, ժողովուրդ հայոց, արձանագրուեցէք հայկական նոր ասպետութեան, թեւ թիկունք տուէք անոր, զի խաչին եւ մահին հետ՝ փրկարար է նաեւ ասպետին սուրը:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ



ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ



0 0 U S A U



ՋԱԽԱՐԵԱՆ

## ԱՅՍ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻՔՈՎ

Տարիներ է որ սպառուել են Միքայել Վարանդեանի «Լ. Յ. Գաշնակցութեան Պատմութիւն» աշխատասիրութեան վերջին օրինակները: Գոհացում տալու համար, ի մասնաւորի երիտասարդութեան պահանջին, անհրաժեշտ նկատուեց սոյն երկի վերահրատարակումը:

Համապատասխանեցնելու համար երկու հատորների ծաւալները, սոյն հրատարակութեան երկրորդ հատորի մէջ են փոխադրուել Ա. հրատարակութեան առաջին հատորից ինը գլուխներ, սկսեալ «նոր ճակատի վրայ» գլխից:

Լ. Յ. Գ. «ՌՈՍՏՈՄ» ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԻՒՆ



ՄԱՍ ԵՐԱՏՆԱԿԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Զարկի է որ ստանի ին վրայի լուրերով էլ. 8.  
Բարձրագույն թանձրացումը ստանալու համար  
ստանալու համար, և հարմարեցնելով  
ստանալու համար, և հարմարեցնելով  
ստանալու համար, և հարմարեցնելով

Հարմարեցնելով համար, և հարմարեցնելով  
համար, և հարմարեցնելով համար, և հարմարեցնելով  
համար, և հարմարեցնելով համար, և հարմարեցնելով  
համար, և հարմարեցնելով համար, և հարմարեցնելով

Լ. Ս. Գ. ԿՈՍՏԱՆՍՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



*W. H. ...*



## ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆՂԵԱՆ

Միքայել Վարանդեանը, բուն անունով Միքայել Յով — հաննիսեան, Ղարաբաղի Վարանդա գաւառից էր. այստեղից եւ նրա ծածկանունը՝ Վարանդեան, որ հետագային դարձաւ իսկական անուն: Ծնւել էր 1874-ին: Միջնակարգ կրթութիւնը ստացել էր Շուշիի ռէալական դպրոցում եւ աշակերտական տարիքից արդէն տարւած էր ժամանակի յառաջադիմական — յեղափոխական գաղափարներով: Ութսունական թւականների վերջերին անցաւ Զուիցերիա ուսանելու և շուտով դարձաւ Փրնեի հայ ուսանող. շրջանակի գործօն անդամներից մէկը: Համալսարանում հետեւում էր ընկերային — քաղաքական գիտութիւններին: Առանձնապէս նրան հետաքրքրում էին ընկերվա — րութեան հետ կապւած հարցերը: Նա դասախօսութիւններ լր — սեց եւ գերմանական համալսարաններում, յատկապէս, ժամանակի նշանաւոր ընկերաբաններից:

Երբ, 1892-ին, Փրնեւ եկաւ Ռոստոմը եւ հիմնեց «Երօշակ»ը, Վարանդեանը, Սիմոն Շիսեանի հետ, դարձաւ նրա սերտ գործակիցը՝ համալսարանական պարապմունքներից դուրս ազատ ժամանակը տրամադրելով գրական աշխատանքի: Միևնոյն ժամանակ աշխատակցում էր Արասխանեանի «Մուրճ»ին, եւ «Մշակ»ին EGO ծածկանունով:

1895-ին Ռոստոմը հեռացաւ Փրնեւից, եւ «Երօշակ»ի խմբագրութիւնը վարեց Յոնան Դաթեանը: Վարանդեանը աւելի գործօն կերպով կապեց «Երօշակ»ի հետ՝ երբեմն նաեւ փոխարինելով Յոնանին, որպէս խմբագիր: Այժմ այլեւս նա կատարում էր եւ կազմակերպական աշխատանք՝ խմբագրութեան կողմից թղթակցելով արտասահմանեան մարմինների եւ ընկերների հետ:

1897-ին, լրացնելով ուսման շրջանը, Վարանդեանը, այդ օրերին Բուլգարիայում եռուն գործունէութեան լծւած՝ Ա. Վր-

ուսմանի առաջարկութեամբ, անցաւ Ռուսաստան, որպէս Դաշնակցական գործիչ, բայց երկար չկարողացաւ մնալ այնտեղ. մատուցեալ հետեւալքով ձերբակալեց ռուսական կառավարութիւնից եւ հեռացեց երկրի սահմաններից դուրս:

Վերադառնալով ժընեւ, Վարանդեանը, 1898-ին, որոշ ժամանակ վարեց «Դրօշակ»ի խմբագրութիւնը մինչեւ Քրիստափորի հասնելը ժընեւ, նոյն տարւայ վերջերը: Քրիստափորը նրան մնայուն կերպով կապեց «Դրօշակ»ի հետ, եւ այնուհետեւ, մինչեւ Առաջին Համաշխարհային Պատերազմը, փոքրիկ ընդհատումներով, Վարանդեանը մնաց «Դրօշակ»ում, մերթ, իբրեւ խմբագրութեան անդամ եւ մերթ խմբագրական ամբողջ աշխատանքը տանելով մեկակ: 1899 թւից սկսած «Դրօշակ»ի գրեթէ ամեն համար բովանդակում է Վարանդեանի այս կամ այն բնոյթի գրածքներ՝ խմբագրական, տեսութիւններ, ուսումնասիրութիւններ, կենսագրականներ, բանավէճ հակառակորդի հետ, երկրի քաղաքացիութիւնների վերամշակում, ընթացիկ տեղեկութիւններ: Քրիստափորի մահից յետոյ՝ «Դրօշակ»ը լեցնող ու խմբագրող, երբեմն եւ միակ ոյժը եղաւ Վարանդեանը: «Դրօշակ»ում տպւած նրա գրածքների կարեւոր մէկ մասը յետոյ լոյս տեսաւ առանձին հատորներով, ինչպէս «Հայկական Եւրոման Նախապատմութիւնը», «Հոսանքներ» և այլն:

Խմբագրական եւ գրական գործերից զատ Վարանդեանը աշխատում էր եւ հայկական պրոպագանդի մարզում՝ դասախօսութիւններով, յօդւածներով եւրոպական մամուլում ու «Pro Armenia» յում, համաժողովներում ներկայացնելով Դաշնակցութիւնը, որպէս Արեւմտեան Բիւրոյի անդամ՝ մասնակցելով կուսակցութեան ընթացիկ կեանքին:

1905 թ. ռուսական յեղափոխութիւնից յետոյ, Վարանդեանը մեկնեց Կովկաս եւ որոշ ժամանակ աշխատեց «Ցառաջ» եւ յաջորդող թերթերի խմբագրական կազմի մէջ: Այս օրերին նրա գրչի տակից դուրս եկան «Կովկասեան Վանգէտ», «Դաշնակցութիւնը եւ նրա հակառակորդները» գրքոյկները եւ մի շարք սուրբ բանավիճային յօդւածներ, որոնք այնքան ուժեղ տպաւորութիւն գործեցին հասարակութեան մտքերի վրայ: Մանաւանդ, երիտասարդութիւնը յափշտակութեամբ կարողում էր նրա գրածքները:

1907-ին, մեկնելով Վիեննա, Հ. Յ. Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովին, Վարանդեանը այլեւ չվերադարձաւ Կովկաս: Ակնու նիի եւ Արարատակիի հետ նա խմբագրեց Դաշնակցութեան նոր ծրագիրը Չորրորդ Ընդհ. Ժողովի կողմից ընդունւած սկզբունքների համաձայն: Ապա յաջողեցրեց Դաշնակցութեան ընդունելութիւնը Ընկերվարական Միջազգայնականի մէջ եւ մասնակցեց Ընկերվարական Միջազգային Համագումարին, Շտուտ գարտում, իբրեւ Դաշնակցութեան պատգամաւոր: Օսմանեան Սահմանադրութիւնից յետոյ, կարճ ժամանակով, այցելեց Պոլիս՝ իր բաժինն եւս բերելով նորազատ Թուրքիայի հայութեան մտաւորական կեանքին:

Այնուհետեւ Վարանդեանը, մինչեւ 1915 թ., մնաց Եւրոպայում, որպէս «Դրօշակ»ի խմբագիր, Դաշնակցութեան ներկայացուցիչ, ապա, իբրեւ գործակից Պօղոս Նուպարի պատերակութեան: 1915-ին, որոշ ժամանակի համար, անցաւ Կովկաս եւ վարեց «Հորիզոն»ի խմբագրութիւնը: Վերադարձաւ Եւրոպա եւ գործակցեց Ազգ. Պատերակութեան, մինչեւ Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը, որից յետոյ նշանակեց Հայաստանի դեսպան Հռովմում: Թէ՛ որպէս դեսպան եւ Թէ՛ իբրեւ Ընկերվարական Միջազգայինի ներկայացուցիչ Վարանդեանը շարունակեց քաղաքական աշխատանքը Եւրոպայում՝ համագործակցաբար Հ. Հ. Փարիզի պատերակութեան հետ:

Հայաստանի անկախութեան խորտակումը եւ, մանաւանդ, Լոզանի շարադէտ դաշնագիրը ծանր կերպով ազդեցին Վարանդեանի հոգեկան վիճակի եւ առողջութեան վրայ: Թէեւ նա շարունակեց կուսակցական գրական աշխատանքը, բայց այլեւս նախկին կորովը չէր մնացել: Նա լոյս ընծայեց Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան առաջին հատորը, Մուրատի եւ Զաւարեանի կենսագրութիւնները, անընդհատ աշխատակցում էր մեր մամուլին, բայց ոչ առաջին շրջանի ուժով ու փայլով:

Վարանդեանի համար առանձնապէս ծանր հարւած եղաւ Ահարոնեանին պատահած դժբախտութիւնը Համազգայինի Մարտէլլի հանդէսում: Ահարոնեանի հետ նա կապւած էր ընկերական կապերով, եւ մասամբ իր խորհրդով Ահարոնեանը ընդունել էր բանախօսելու հրաւերը: Ահարոնեանի կաթւածից

յետոյ, Վարանդեանը այլեւս երկար չապրեց՝ մեռաւ 1934 թ. Ապրիլ 22-ին սրտի կաթուածից:

Ընդարձակ էր Վարանդեանի հետաքրքրութեան սահմանը, բայց նրա գլխաւոր եւ մեայուն արժէքը գրականութեան մէջ է, յատկապէս, հրապարակագրութեան: Նրա պատմական հատորներն էլ, մեծ չափով, հրապարակագրական բնոյթ են կրում: Նա գերազանցապէս քարոզիչ էր, բանավիճող ու պայքարող: Դիրասահ եւ թեւաւոր ոճով, խաւդավառ թռիչքներով ու վիպապաշտ ոգիով համակած նրա երկերը ամբողջ սերունդներ են ոգեւորել: Եւ այսօր էլ դեռ մեր երիտասարդութիւնը, մեծ չափով, Վարանդեանի գործերով է Դաշնակցական դաստիարակութիւն ստանում: Ինչպէս Ահարոնեանը գեղեցիկ գրականութեան միջոցով, Վարանդեանը իր հրապարակագրութեամբ փառաւորեց Հայկական Ազատամարտը եւ յատկապէս Դաշնակցութեան մեծագործութիւնները: Քնարերգակ - հրապարակագիր էր Վարանդեանը՝ մտքով գիտուն՝ եւ սրտով՝ բանաստեղծ, հայրենապաշտ ու հերոսապաշտ: Եւ, որպէս այդպիսին, մեայուն տեղ ունի հայ յեղափոխական դարաշրջանի պատմութեան մէջ:

Ս. ՎՐԱՑԵԱՆ

«Յուշապատում 2. Յ. Դաշնակցութեան»

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայոց պատմութեան հերոսակամ շրջանը պէ՛տք է որ դրւի: Առանց լացի եւ անէծքի, առանց անմիտ խորագանձումներու եւ անազան մարդարէութիւններու...

Ի՞նչ կը լինէր աշխարհի վիճակը, եթէ մարդիկ — ռահվիրաները — կարենային ի սկզբանէ մարդարէանալ, նախատեսել այն բոլոր սայթաքումները, ճախողանքներն ու աղէտները, որ յառաջ կուգան անխուսափելիօրէն մեծ, ազատարար վերելայրումներու ընթացքին:

Երբ Խաչակրաց բանակները տասնեւէկերորդ դարուն մէջ — վառւած, անշուշտ, նիւթական նւաճումներու ախորժակով, բայց եւ տարւած գաղափարային, կրօնական խանդավառութեամբ — հարիւր հազարներով կը նետւէին դէպի Արեւելք՝ Երուսաղէմը ազատելու, քրիստոնէութեան դրօշը պարզելու, Արեւմտեան դադափարը պաշտպանելու ասիական բարբարոսութեան յորձանքին դէմ, երբ անոնք կ'երթային ճանճերու պէս կոտորելու անապատներում, խողխողելու այլակրօն դահիճներու ձեռքով, — չէին, անշուշտ, գուշակեր, որ այդ երկարատեւ մաքառումներէն, իրենց կրկնակի, արիւնալից, երբեմն յողթական թռիչքներէն յետոյ, քրիստոնէութեան սրբավայրը դեռ ամբողջ իննը դար պիտի մնար արիւնարբու հորդաններու լուծին տակ...

Երբ Ալեքսանդր Հերցեն, անցեալ դարու վաթսուհակամ թւականներուն կ'ազդարարէր իր «Ձանգ»ին մէջ Ռուսաստանի ազատագրութեան մօտալուտ գարունը, երբ գրեթէ նոյն ատենները Հայր Ալիշան կը հնչեցնէր իր ազատաշունչ դարնան երգը — «Ո՛վ դու իմ վաղաք մտնուած հայրեմիք, ահա գարունիկդ հասն'լ է, հասել» — երկու մեծանուն ռահվիրաներու մտքովն անգամ չէր անցներ, որ այդ օրերէն ամբողջ եօթանասուն տարի յետոյ ռուս ու հայ ժողովուրդները դեռ պիտի սգան իրենց անգութ ճակատագիրը ամենէն դատան լուծին տակ: Եւ եթէ հրաքով մը կրնային գուշակել, գուցէ բնաւ չպիտի շարժէր անոնց դրիչը՝ անգամ ամենէն վեհ գաղափարները շեփոթելու համար:

Չպիտի շարժէին բոլոր ազատախօս գրիչները աշխարհի բոլոր ծայրերում — և անգամ դուցէ Ռուսոներն ու Վօլթէրները չպիտի հրահրէին Ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնը, որ ազատութեան աւետարանը բերաւ աշխարհին և ազատարար շառաչով անցաւ երկրագունդի վրայէն, բայց և նիւթեց արեան անվերջ հեղեղներ, ամենէն առաջ Ֆրանսայում՝ Բօնապարտի մը բռնաւոր դիկտատորութեան ընթացքին: Պիտի կանգ առնէր ուրեմն համաշխարհային յառաջդիմութեան անիւր և մարդկութիւնը յաւիտենօրէն պիտի դեգրէր խաւարի ու ստրկութեան արիւնագոնդ անդունդներուն մէջ...

Եզեր են, անշուշտ—և պիտի լինին—անակնկալ ու այլանդակ գարտուղութիւններ մարդկային պատմութեան ընթացքին, յետախաղաց շարժումներ, որոնք — երէկ իսկ — այնքան շարաշուք անդրադարձումներ ունեցան մասնաւորապէս մեր հայկական ճակատագրին վրա... Այդպիսի մէկն էր կարմիր կոշւած յեղաշրջումը Ռուսաստանի մէջ, որ 1917ի հոկտեմբերին մէկէն ի մէկ խաւարեցուց Փետրուարեան Յեղափոխութեան պայծառ արեւը, խոշտանդեց մեր նորածիլ ազատութիւնն եւս — և դարձեց սօցիալիզմի անուշով բռնակալութեան ամենէն մռայլ, ազատասպան սխտեմներէն մին: Եւ նոյնպիսի կործանարար անակնկալ մըն էր աշխարհի համար Մեծ Պատերազմը, որ յարմարագոյն առիթը տւաւ մեր թշնամուն՝ տարադրելու և բնաջնջելու հայ ժողովուրդը, ճիշտ այն սրահուն, երբ Հայաստանը կը վերածնէր Համիտի նիւթած աւերակներէն, կը թեւակոխէր նոր դարաշրջան — ազատութեան ու բարօրութեան — երբ այդպիսով Հայկական Յեղափոխութիւնը, ի դէմս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, քան տարւոյ օրհասական մարտնչումներէ ետք՝ կը հասնէր վերջապէս իր բազմալի հանգրամին...

Եւ այնուամենայնիւ, պատմութեան մեծ պրօցէսը—չնայած այդ բոլոր գարտուղութիւններուն, յետախաղաց և աւերիչ ծփանքներուն — ընդհանուր առմամբ դրական է, չինարար, ստեղծագործ, նա կը տանէ վերջ ի վերջոյ, քայլ առ քայլ, դէպի ազատութեան ու ժողովրդապետութեան յաղթանակը՝ ընդդէմ ամէն տեսակ կամայապետութեան ու բռնութեան...

Գրե՛նք պատմութիւնը: Անցեալի պաշտամունքը — Հերոսներու և Հերոսական գործերու պաշտամունքը — ամենագորաւոր խթաններէն է ազգերու յառաջդիմութեան: Գալոց սերունդները

չառ մը հրահանգիչ դասեր պիտի քաղեն հայ յեղափոխական տարեգրութեան այդ սրտաուռ էջերէն, — դասեր ինքնամերձ գոհութեան, քաղաքացիական արիւթեան և ջինջ, բարձրասլաց դադափարականութեան:

Գալոց սերունդներուն համար ազնիւ ներշնչումներու տեսպառ աղբիւր պիտի լինի այն տիտանեան սերունդը, որ ասիէ քառասուն տարի առաջ իր ձեռքն առաւ հայ ազատագրական շարժման գութանը և անվհատ քալեց իր ճամբան անդունդէ-անդունդ, տաղնաղէ-տաղնապ, հերկեց, տնջաց ու նահատակեցաւ ամենէն նւիրական դադափարին համար, ամենէն դժնդակ միջավայրում...

Հարո՛ւստ է, այո՛, Հերոսական սիրազործութիւններով նաեւ մեր փոքրիկ համայնքը: Այն ազգը, որ տասնեակ տարիներ առաջ բարբարոս Ասիոյ խորքերում պարզեց ապստամբութեան դրօշը, այն ժամանակ, երբ իր շուրջը — Անգօրայէն մինչև Քիւրդիստան ու Թեհրան, Մակեդոնիոյ դաշտերէն մինչև յունական ծովեզերք ու Արարիա — ստրկութեան մեռելային լուծիւնը կը թագաւորէր, — այդ ազգը արժանի է դատելու յառաջադէմ ու յեղափոխական ազգերու շարքը, մարդկային իրաւունքներու համար պայքարող ու զոհարերող ազգերու շարքը:

Եւ այն մեծ Եարժումը, որ հակառակ աշխարհագրական ու քաղաքական միջավայրի բիրաւոր խոչընդոտներուն, տւաւ այնքան չքեղ դրւազներ ռազմական կորովի ու քաջութեան և որ իր բոլոր գարհուրանքներով հանդերձ ստեղծեց մար հայութիւն մը, կոտորակած, բայց կանգուն, բարոյապէս աւելի բարձր, պատրաստ միշտ կուրծք տալու իր իրաւունքներու պաշտպանութեան համար — հո՞ժ, համախումբ հայութիւն մը, որ Բնաշխարհի գնդանին մէջ չուզեր ճկել իր պարանոցը նորագոյն բռնաւորներու առջև, չուզեր լքել իր ազատաշունչ և հայրենաշունչ հաւատամբը — այդ շարժումը իր պատւաւոր տեղն ունի համամարդկային շարժումներու տարեգրութեան մէջ և արժանի է, հետեւաբար, որ գրի առնւի ու յանձնւի յետնորդներուն:

\*\*\*

Խիզախ գործ մըն է՝ մէկ-երկու հատորի մէջ ամփոփել քառասուն տարւան պատմութիւն: Պէտք են թերեւս քառասուն հատորներ: Ասկէ 20 տարի առաջ, Հայ Յեղափոխական Դաշնակցու-

թեան մեծազորը դատի ընթացքին, Պետերբուրգի մէջ, ցարական կառավարութիւնը կամեցաւ պարզել Ռուսաստանի առջեւ այդ կուսակցութեան ընդամենը քանի մը տարւան գործունէութեան պատկերը, չոր փաստաթուղթերով, և տւաւ ոչ պակաս քան եօթ անգամ ինչ հատորներ: Եւ այդ՝ միայն կովկասեան հասուածի պատկերն էր, բուն իրականութեան մէկ թոյլ արտայայտութիւնը:

Հայկական Յեղափոխութեան շրջանը դեռ չէ գոցւած: Ի՞նչ պիտի լինի շարժման վախճանը, ինչպէ՞ս պիտի ներկայանայ վերջին դրագը այն երկարածիք, արիւնոտ Դրամային, որ կը թաւալի յիսուն տարիէ ի վեր և գուցէ դեռ պիտի տեւէ ուրիշ տասնեակ տարիներ... Մեր գաւակները կամ թոռները կ'իմանան այդ:

Անո՞նք միայն ի վիճակի պիտի լինին — տեսնելով Դրամայի վերջին արարածը — հանգամանօրէն ուսումնասիրելու և արդարօրէն դատելու բովանդակ գործազուրիւնը, ըստ արժանւոյն գնահատելու անոր այլազան դրւագները, դէպքերն ու դերակատարները: Անո՞նք միայն պիտի կարենան լիովին օգտագործել Կուսակցութեան արշիվները — և արշիվները ողջ նորագոյն մեր պատմութեան, որ այնքան սերտօրէն հիւսւած է ազատագրական շարժման ելեւէջներուն հետ, Դաշնակցութեան հարուստ ու յուզումնալից պատմութեան հետ:

Մեր գաւակները միայն պիտի ունենան այդ նուրբ, դժւարին, պատասխանատու աշխատանքին համար անհրաժեշտ հոգեկան անդորրութիւնն ու պաղարիւնը:

Հ. Յ. Դաշնակցութեան մանրամասն ու լիակատար պատմութեան հոգը կը մնայ, ուրեմն, գալիք սերունդներուն:

\* \* \*

Երկար է շարժման ճանապարհը, լի դժւարին զիգզագներով ու խորխորատներով . . . Այստեղ չենք կարող մտնել այդ ճամբու բոլոր խորշերուն մէջ: Ստիպւած ենք կանգ առնել միայն գլխաւոր հանգրւաններուն վրայ, ցուցադրել պատմութեան կարեւորագոյն դրւագները և ջանալ զիչ-չատ ամբողջական գաղափար տալու Կուսակցութեան կատարած պատկառելի աշխատանքի մասին — Թուրքիա, Կովկաս, Պարսկաստան, Արտասահման — հրատարակելով մանրամասն նկարագրութիւններէ, ընդարձակ քաղաքներէ, վերլուծումներէ ու մեկնութիւններէ:

Նմանապէս, Յեղափոխութեան հազարաւոր զինւորները կան,

մեծ մասամբ նահատակ, որ ընկեր են այդ զարհուրելի Գողգոթայի ճանապարհին, քառասուն տարիէ ի վեր, և որ չեն կարող ամենքը տեղ դտնել այս գրքին մէջ: Հայոց ազատութեան շարժումը իր խիզախ ու արիւնալի թռիչքներով, ինքնապաշտպանութեան դժւարին ու մեծագործ ճիգերով՝ անոնց բոլորի հաւաքական գործն է: Ո՛չ մէկը խորթ, օտար է մեզ — ապրե՛ր ենք անոնց հետ ամբողջ տասնեակ տարիներ, մօտ կամ հեռու, շրջապատւած անոնց պաշտելի սուերներով — ամենէն խոնարհագոյնը իր յուզիչ պատմութիւնն ունի, որ կարող է արցունք բերել ամենակարծր աչքերէն: Սակայն գրքիս ծաւալը կը հարկադրէ կանգ առնել միայն գլխաւոր դերակատարներու կամ տիպար-զինւորներու վրա, լուրթեամբ անցնելով, տարաբախտաբար, ուրիշ բազմաթիւ, «անանուն» հերոսներու վրայէն:

Ապա շարժման պարունակութիւնը այնքա՛ն բարդ է և այլազան. — խօսքի ու գրչի պրոպագանդ, կազմակերպական աշխատանքներ, ծրագիր ու աշխարհայեացք, մամուլ ու գրականութիւն, գէնքի արհեստանոցներ, դրամական և զինական Փօնդեր, գէնքի ու ռազմամթերքի փոխադրութիւն, ժողովուրդի զինում ու մարզում, ինքնապաշտպանութեան կռիւներ ու ապստամբութիւններ, տերրօր, ցուցական գործունէութիւն, խաղաղ ու զինւած ցոյցեր, դաւադրական, «ստորերկրեայ» աշխատանք, արհեստակցական միութիւններ, կռիւ բռնակալ իշխանութեանց դէմ, կռիւ տնտեսական ճնշումներու դէմ, կռիւ դրացի, յարձակողական խուժաններու դէմ, կռիւ ներքին ամէն տեսակ ցեցերու դէմ — լրտեսներու, մատնիչներու, դաւաճաններու — կռիւ հասարակաց անտարբերութեան, բէակսիոնի դէմ... Միւսոյն ժամանակ՝ «զիւանագիտական» աշխատանք, Հայ Դատի պրոպագանդ արեւմտեան աշխարհում, հրատարակութիւններ օտար լեզուներով, հայասիրական շարժումներու կազմակերպում, յարաբերութիւններ և համերաշխութեան բանակցութիւններ դրացի ազգերու հետ, միջազգային համագումարներ. ապա նաեւ — այդ ծանր առաքելութիւնն եւս Դաշնակցութիւնը քառասուն տարիէ ի վեր հպարտութեամբ տարեր է իր ուսերուն վրայ — կուլտուրական, շինարար աշխատանք, դպրոցներ, դրադարան-ընթերցարաններ, հանրային այլ և այլ ձեռնարկներ, անգամ ճամբաներու բացում (հայ-թաթարական կռիւներու ատեն), կենդանի մասնակցութիւն բոլոր հանրային գործերու մէջ, ժողովրդական շահերու պաշտպանութիւն, յեղափոխական ատեաններ ու դատավարութիւն, խաղաղ,

անդուլ քարոզչութիւն և սերունդներու կրթութիւն ու դաստիարակութիւն, երկրի մէջ — հայրենիքի բոլոր երեք հատածներում — և երկրէն դուրս, ամէն տեղ, ուր կ'ապրին հայութեան հոծ զանգւածներ: Վերջապէս՝ պետական շինարարութիւն ազատագրած հայրենիքի մէջ:

Վիթխարի աշխատանք մը... Գործունէութեան այդ բոլոր ձեւերուն, ինչպէս ըսինք, չպիտի կարենանք ընդարձակ տեղ տալ այս տեսութեան մէջ:

Չպիտի տեղ տանք, բնականաբար, և մեր կուսակցութեան մեծ ու փոքր հաւաքովիներու արձանագրութիւններուն, երկրի ու գաղութներու Ընդհանուր ու Շրջանային ժողովներու երկարաշունչ, ստէպ ամբողջ ամիսներ տեւող, տենդային վիճաբանութիւններուն:

Չենք կարող, սակայն — անգամ այս հակիրճ դրածքին մէջ — գէթ թուցիկ ակնարկ չնետել հայ ազատագրական շարժումներուն ու գաղափարային հոռանքներուն վրայ՝ նախ քան Գաղմակցութիւնը: Քաջել պատմութեան թելը 1890 թվականէն, կը նշանակէր ցուցադրել հետեւեւեմը, առանց պարզելու պատմաունկերը: Քիչ չեղան մարդիկ մեր ազգային դժբախտութիւններու օրերուն — և ոչ միայն աչառոտ հակառակորդներու շարքերում — որոնք թերեւս համոզւած էին և կ'ուզէին հաւատացնել, թէ հայկական շարժումը աւելորդ պերճանք մըն էր, կամ, լաւագոյն պարագային, վաղաժամ էր, չհասունցած, թէ նա իր ծագման պրոցէսի մէջ չունէր բնաւ այն երկաթէ պատմաազգայնութիւնը (détérminisme), որ կը ղեկավարէ ուրիշ ազգերու նոյնօրինակ շարժումները, թէ հայ ժողովուրդի կացութիւնը օսմանեան ուժ-ժիմի տակ բնաւ այնքան անհանդուրժելի ու յուսահատական չէր, թէ կարելի էր և պէտք էր տոկալ ու համբերել, թէ, մէկ խօսքով, Հայ Յեղափոխութիւնը չունէր լուրջ հիմնաւորում, թէ նա պայ-թեց ու գահավիժեցաւ, որպէս փոթորիկը՝ ջինջ, անամպ երկնքի տակ, չնորհիւ քանի մը մոլեռանդ աղանդաւորներու յախուռն որոշումներուն...

Պարիզ, 1931 Սեպտեմբեր.

Մ. Վ.

I

### ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐժՈՒՄԸ ՆԱԽՔԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Շարժման ծնունդը. — Իրականութիւն և գաղափարային խմորումներ. — Շարժման նախակարապետները. — Խորհեամ և իր «Վամգոյժ»ը. — Ազգային Սահմանադրութեան լոյսերն ու ստեղծները. — Ըմբոստացումի ճայներ. — Վասպուրականի շարժումները. — Հրոսախումբեր. — Չաթօ - Շեթօ. — Ղոււմրիկեան. — Կարնոյ ցոյցը. — Կովկասեան տրամադրութիւններ. — Մոսկուայի խումբը. — «Ազատութեան Աւետարեք».

Հայ ազատագրական շարժումը ծնունդ է երկու տեսակ հոլովոյթի, երկու շարք ազգականերու.

- 1. Իրերու հոլովոյթ (էւօլիւսիոն).
- 2. Գաղափարներու հոլովոյթ:

Մէկը միւսի անհրաժեշտ լրացուցիչն է:

Իրերը, կամ ըսենք՝ իրականութիւնը, ժողովուրդի մը, առօրեայ կեանքը բռնապետական լուծին տակ՝ կարող է լինել ծանր, տանջալի, անհանդուրժելի, բայց այդ ժողովուրդը չի յուզուիր, չի փոթորկուիր, երբ չկայ տակաւին Ոյժ-Գաղափարը, որ կուզայ անոր մտաւորականութեան թելերուն վրայ, որպէս թարգման, անդրադարձում նոյն դժնդակ իրականութեան, կուզայ որպէս պատմութիւն, գրականութիւն, քարոզչութիւն՝ առաջնորդելու զանգւածները դէպի լոյս ու ազատութիւն:

Հինգ դար դերութիւն ապրեցաւ հայ ժողովուրդի մեծ զանգւածը օսմանեան տիրապետութեան տակ, առանց ձէն ու ծայրուտ հանելու, վասնզի կ'ապրէր գրաստի խորունկ անգիտակցութեամբ, կը դիտէր լուծն ու տառապանքը, որպէս երկնառաք, անչեղելի մի ճակատագիր: Կը պակսէր իրքան-գաղափարը, կը բացակայէր գրի, խօսքի, քարոզչութեան լուսարձակ ջահը:

Բայց նոյն գրաստային անխոռով կենցաղը կը շարունակէր և այն ժամանակ, երբ այդ ջահը կամացուկ արդէն բարձրացեր էր

հետու հորիզոնին վրայ, — ասկէ ութսուն տարի առաջ — երբ վենետիկեան ջուրերէն գոռ բամբերով կը հնչէր Նահապետի ըմբոստ քնարը:

«Բամբ որոտան»ը, «Աւարայրի Բլրուլը», երկու Մասիսններու խորհրդաւոր գրոյցը, Աւագ Մասիսի ամպրոպագոռ որոտումները կը մնային «Ձայն բարբառոյ յանապատի» ամբողջ տասնեակ տարիներ:

Ձայն բարբառոյ — և «Արծուի Վասպուրականի»ի ոգեշունչ քարոզները անցեալ դարու 50ական, 60ական թւականներուն, Խրիմեանի, Սրուանձտեանի, Թոխմախեանի, Վարազի մեծ ու փոքր արծիւներու խանդավառ գրած քնարը, Ռուսիսեանի, Նալբանդեանի, Պէշիկթաշիեանի հայրենաշունչ տաղերը...

Իրականութիւնը հասունցած չէր, պատրաստ չէր ընդունելու և մարտելու ազատարար գաղափարները: Ամենամեծ բանաստեղծներն անգամ անգոր էին սոսկ իրենց քնարի ուժով փշրելու մեղկութեան ու անտարբերութեան սառոյցը... Պէ՛տք էին ուրիշ ազդակներ:

Պէ՛տք էր իրերու հոլովոյթը: Պէ՛տք էր փոթորկումը տնտեսական կեանքի մէջ, աննախընթաց տակնուվրայումը Օսմանեան կայսրութեան մէջ, պէտք էին բալկանեան ցնցումները, ռուս-թրքական պատերազմը, Բուլղարիայի ազատագրումը, Թուրքիայի անդամահատման յարաճուն պրոցէսը, Բերլինի Վեհաժողովը, Յէրզ յողածը և այլն, և այլն:

Եւ ահա, երբ այդ բոլորը կատարեցաւ իրական, առարկայական աշխարհի մէջ — Թուրքիոյ և հայութեան կեանքի մէջ — երբ «Հիւանդ Մարդը» գետնատարած փուկեցաւ Ռուսաստանի ոտքերուն տակ, յոշոտեցաւ ու հասաւ հոգեվարքի դուռը. երբ ռուս յողթական բանակը, հայ զօրավարներու առաջնորդութեամբ գնաց պարզելու իր դրօշը. երբ դրոշմի մէջ և քիչ յետոյ, Վեհաժողովի որոշումով, միացուց թուրքահայաստանի մէկ մասը իր հայկական հողերուն. երբ պատերազմի հետեւանքով հրոյ ու սրոյ ճարակ եղան հայրենիքի ընդարձակ տարածութիւններ քիւրտ ու թուրք հրոսակներու ձեռքով, երբ բուլղար ժողովուրդը, աւելի անմշակ, յետամնաց քան Հայը, չնչին գոհարերութեամբ թօթափեց դարաւոր գերութեան լուծը և դարձաւ ազատ, անկախ պետութիւն. երբ օսմանեան կառավարութիւնը, իր երբերուն դիրքերը պահպանելու և օտար միջամտութիւններէ մի անգամ ընդմիջաւ ազատելու համար, կրկնապատկեց իր ճնշումներն ու կեղեքում-

ները հպատակ հայութեան դէմ, հիմնեց կազմակերպած թալանի ու սպանութեան սիստեմ մը, նպատակ դնելով իսպառ անդամալուծել ու նոյնիսկ չքացնել հայ տարրը արեւելեան վիլայէթներէն. երբ նա ազատ ասպարէզ կոչեց Քիւրտերը այդ հայաջինջ գործի համար, հրահրեց բոլոր գիշատիչ ախորժակները և հրէշաւոր չափերու հասցուց տուրքերու կործանարար մեքենան. երբ օսմանեան մեռելածին Սահմանադրութիւնը վիժեցաւ (1878ին) և Յէրզ յողածը, պահ մը յուսադրելէ և խանդավառելէ յետոյ, գնաց մրափելու դիւանագիտական արշիվներուն մէջ. երբ ստրուկ ցեղի բոլոր կոչերն ու աղերսանքը Թուրքիոյ տէրերուն ու աշխարհի զօրաւորներուն՝ ապարդիւն անցան և Հայաստանցի ժողովուրդը, լքած, յուսաբեկ, մատնեցաւ չարչարանքի բոլոր ձեւերուն՝ աշխարհի ամենէն բարբարոս ոչէթիմին տակ, — ամիս ժամանակ ահա՛ հայ միտքն ալ փոթորկեցաւ, հայ գրականութիւնը իր նոր բանաստեղծներով, վիպասաններով, հրապարակագիրներով հնչեցուց, մրկածայն հազարանգի պէս, վշտի ու ըմբոստացումի շեփորը — և հնչեցուց ոչ այլ եւս «անապատի մէջ»... Հայ ժողովուրդը, ի դէմս իր զգայուն տարբերու, ունկնդրեց շեփորի ձայնին, հասկցաւ և որդեգրեց յեղափոխական կարգախօսը:

Ձենք արձանագրեր մէկ առ մէկ անուններն ու գործերը բոլոր ռաիվիրաններու: Շատուր են վշտի ու ազատութեան երգիչները նոյնիսկ նախայեղափոխական շրջանին մէջ:

Ձենք կարող, սակայն, չյիշատակել մէկ քանիսը: Եւ ամենէն առաջ, Խրիմեան Հայրիկի մուսան էր, որ դեռ բալկանեան պատերազմի օրերուն, դեռ Կայծերու հեղինակէն առաջ, ողբաձայն դայլայլներով կը փողհարէր հայ վիշտն ու ցասումը՝ Վան քաղաքի խորհրդաւոր հրդեհին առթիւ:

Ակա՛նջ դրէք. թո՛ղ անգամ մըն ալ կարդան, լսեն հոյակապ վեղարաւորի այս ցնցող Երեմիականը բոլոր անոնք — տղէտ ու գիտուն — որոնք տասնեակ տարիներէ ի վեր կը հողովեն տարօրինակ դաղափարներ նախայեղափոխական «երանելի» վիճակին շուրջ:

Ահա թէ ինչ կը գրէր յիսունեօթ տարեկան Խրիմեանը, Հայոց աշխարհի ամենէն իրազեկ, հասուն ու հեղինակաւոր քաղաքացիներէն մէկը — իր կարմրավառ Վանգոյժին մէջ\*):

\* Տպւած 1877ին Քիֆլիդում, Թուրքաց վաղանցուկ Սահմանադրութեան մեղքաւորների ընթացքին, «Կայծեր»ու հրատարակութեան հոթ տարի առաջ:

Առիթը Վանայ գարհուրելի աղէտն է — շղթայագործւած նենգ թշնամու ձեռքերով — բայց նիւթը՝ ողջ թրքահայ ժողովուրդի անօրինակ մարտիրոսութիւնը։—

«Չգիտենք թո՞ւմեք ի՞նչ էր, ո՞վ անգէն և հլու հնազանդ ժողովուրդ Վանայ, դու ոչ գէնք ունէիր և ոչ երբեք ըմբոստացար տիրող դաւազանին դէմ. թո՞ւմեք հաւատարմութեան չափ հինգ հարիւր տարի է և թո՞ւմեք միայն խօփն ու արօր, արեւսա և վաճառակաւնութիւն թո՞ւմեք գրազուծն էր. և միթէ՞ այս եղեւ հատուցումն թո՞ւմեք հաւատարիմ հպատակութեան։

Թուրքաստանի վերանորոգ սահմանադրութեան գոհ մի պէտք էր և այն փառաւոր գոհ դու մատուցիր, ժողովուրդ Հայոց...

Ո՛հ, նշարակով բոլոր մարմնոյդ երակները բացին, թո՞ւմեք, որ դու այնուհետեւ տակաւ տակաւ մեռանիս չարաշուք աղքատութեան մէջ. և թո՞ւմեք երակահատներ չքմեղս լինելով, աշխարհի առաջ ձեռքերին լւանան և ասեն. «Քաւեալ եմք մեք յարենէ դորա»...

Ողորմի՛մ քեզ, ժողովուրդ Հայոց, ողորմի՛մ, արդեօք լաւագոյն չէ՞ր քեզ, որ միանգամ մեռնէիր և կնքէիր թո՞ւմեք հանգստեան գերեզման... քան թէ այսպէս ի գետին թալկանալով, արիւնացամաք մեռնի... Մինչև ե՞րբ անսամ քեզ, որ ինքնագոհ մեռնի սարվիս. աշխարհ սարվեցաւ այդ դասը, իւր մրցամակն առաւ, դու դեռ անուս մանուկ մնացիր...

... «Ո՞վ Գուրա՛ն, Գուրա՛ն... ես չգիտեմ, թէ ջախջախելով, ջախջախելով, ի՞նչ շահեցան թո՞ւմեք որդիները... Քա՛ւ թէ թշնամագիր ոգւով կը գրեմ, ես Թուրքաստանի աշխարհին մի հայ գաւակն եմ, ի մանուկներէ անտի երկրի յառաջդիմութեան միշտ սիրահար...

... «Նախատեսէ՛, ով Թուրքաստան. սուրն ու դանակ քաղաքակրթութեան պատենին մէջ դիր. գիտցի՛ր, եթէ ջանաս միշտ թո՞ւմեք վաստակաւոր եզն իւր վարած ակօսին մէջ մորթել, ի՞նչ կը լինի այնուհետեւ թո՞ւմեք շահն — ոչինչ, միայն միտն ու կաշին և յայնժամ դու անազան ուրեմն կը յուշարբերիս և աւա՛ղ կը տեսնես, որ երկիրը անմշակ մնացեր է, հացին ու դանձին սովը կը տիրէ»...

Եւ գարձեալ Խրիմեան ըմբոստացումի հրուէր կը կարգայ թրքահայերուն։—

— «Ի՞նչ գիտես, ո՞վ հաւատարիմ ժողովուրդ Հայոց, մարդիկ և ազգեր կան, որ աշխարհ հաւատարմութիւնդ կը ծաղրեն ու կը մեղադրեն քեզ, երբ կը տեսնեն, որ իրստ անմոռնչ և անզգայ կը լինի հաւատարմութեանդ մէջ, մինչև անշունչ, անբարբառ դիակ մը կը դառնաս դու, այնպէս որ քու գարկեշտութիւնդ կը նշաւակեն և կոխկոտելով կանցնին վրայէդ և դու չես իմամար։

Միթէ՞ դուհեաց կաւ ես դու աշխարհիս երեսին. ես էլ կը դատեմ քեզ, թէ այդչափ ստրկանաս և աղարտես մարդկային ազատ պատիւ»։

Կենդանի բողոք մըն է և «Հայգոյծ»ը, գրւած Ալաշկերտի և այլ վայրերու ջարդ ու աւերածի առթիւ։ Հայ յեղափոխական գրականութեան ամենէն պաթեթիկ էջերէն մէկն է։ Կ'ողբայ Խրիմեան հայ ընտանեկան սրբութիւններու պղծումը, կ'ողբայ այրերու մեղի, անպատիւ կրաւորականութիւնը և կը նախընտրէ հայոց ազգովին բնաջնջումը...

«Դստե՛րք Հայոց, բիւր երանի կուտայի ձեզ, թէ նոր Շահ Աբբաս մի գար գձեզ ի գերութիւն վարէր և դուք երթայիք միահամուռ և կամակար թափւէիք Երասխայ գետին մէջ... քան թէ կուսական արեան մէջ թաթախելով, նշաւակէր գձեզ վատշուէր Քիւրտին վայրագութիւն...»

«Ողբամ գձեզ, Հայոց մայրեր, որ կորուսիք ձեր լծակից ամուսիններ և սիրական գաւակներ... Միթէ՛ այժմ կ'ապրիք դուք և լաւագոյն չէ՞ր մեռնիլ, քան այդ չարավիշտ կեանք... Քաջաբազուկ, հուժկու այրեր կը վատանան իրենց ընտանեկան պատիւ թահու չափ պաշտպանելու...»

«Բաղբեւանդայ փոքրիկ հօտին փոքրիկ հովիւներ, ո՞վ քահանայք... առէ՛ք իջեցուցէք ի վայր ընդ ձող և ընդ ցից հանեալ Հայոց սօսանման երիտասարդներն... Ո՞վ Բաղբեւանդայ դժբախտ որդիներ, վայրագ խուժն գձեզ կոտորեց... դանակն առաւ և միահամուռ մորթեց գձեզ... դուք անխօս, անմոռնչ, անշարժ մնացիք, որպէս ոչխար իւր կտրչին առաջ... Այս աշխարհիս օրէնք, կարգ ու խղճմտանք այսպէս է. մարդիկ... պիտի մորթին, երբ չունին խեթկիչ եղջիւր, որ ցուլի նման ոգորեն իրենց կտրիչներուն դէմ...»

«Յո՛ւշ, յո՛ւշ, ո՞վ Հայոց ողջ ու մնացորդ որդիներ, դեռ պիտի մորթիք, քանի որ անդէն, անեղջիւր, անասպար կ'ապրիք... Ո՞վ դու մաշած և հիւժած հիւանդ... թէ ստոյգ ազատութիւն կը ցանկանաս, ո՞ն, ուրեմն, փոքր ինչ խլրտի մահճիդ մէջէն, ինքնաշարժ եղիր. ահաւասիկ Աստուծոյ մատն ու հրեշտակ աշխարհիս յեղափոխութեան աւագանին ջուրը կը յուզեն. ով որ զինքն վաղ ձգէ նորա մէջ, նա միայն իւր ցաւերէն ազատ կը լինի... Ես իրրեւ դաս, խօսեմ քեզ, որ դու խելամտիս, թէ քանի՞ թանկ է ազատութեան զին. աշխարհիս Փրկիչ գայն իւր խաչով և արիւնով գնեց. նոյն գունակ մեր նախնի քաջեր Եկեղեցւոյ և Հայրենեաց ազատութիւն մահով և արիւնով գնեցին։ Միթէ՞ դու ցանկալի ազատութիւն առանց գոհի և արեան, ձրի ստանալ կ'ուզես»...

«Կայծեր»եան էջեր են... Եւ Բաֆֆիի կայծերու մէջ դժւար է գտնել ազատամբութեան աւելի բացորոշ, աւելի ցնցող քա-



րոգ ու յորդոր: Ինչպէ՛ս պիտի գրէր, ի՛նչ ահարկու շեշտերով պիտի խօսէր Վարագի ըմբոստ Մարգարէն, եթէ գրաքննութեան կապանքները և մանաւանդ երկիւղը թրջական իշխանութիւններէն՝ չկաշկանդէին իր գրիչը... Այդ քարոզները, աւելի վարագուրած ձեւերով նա մղեր էր դեռ 60ական թւականներուն իր «Արծւի» մէջ, իսկ այժմ, բալկանեան ապստամբութեանց ու պատերազմի օրերուն, անոր ձայնը ահագանգի շեշտ մը կ'առնէր:

Եւ նոյն ահագանգը կը հնչէր թրջահայոց մտաւոր կեդրոն — Կ. Պոլսէն: Ուրիշ արիասիրտ վեղարաւոր մը, Եղիշէ վարդապետ Այվազեան, Խրիմեան Հայրիկին ձայնակցելով, հետեւեալը կը գրէր (1878թ. Ապրիլ 29) Փռնցի մէջ, որ 70ական թւականներու վերջերուն ժամադրավայրն էր հայ ազատատենչ երիտասարդութեան.

— «Հայոց ազգի անմիտ երկչոտութիւնը մինչև այն աստիճան հասած է, որ իւր թշաւո վիճակին վրա խռովելու նշան անգամ չի ցուցներ: Երբեմն իւր յոյսերը Սահմանադրութեան վրա դրած էր, այսօր ալ իւր բոլոր ակնկալութեանց կեդրոն ըրած է դպրոցները և կը սպասէ, որ դպրոցներէն դտնէ ազատութիւն: Բայց միթէ՞ դպրոցին մէջ կը սորվի հայն արիւննուշտ քիւրտին թուրը ջախջախել... Պաշտպանել պէտք է ազգութիւնը, ինչ միջոցով ալ ըլլայ, եթէ բարոյական ազդեցութեամբ, եթէ բռնութեամբ, եթէ յեղափոխութեամբ, միայն թէ հայրենիք փրկել»...

Նոյն Փռնցի էջերուն մէջ, Պարտ և Մարտ խորագրին տակ, Եղիա Տէմիրճիպաշեան կը գրէր ազատաշունչ այլաբանութիւններ: Գսաներորդ դարը — կ'ըսէ նա Միլլուայի ուրախանի բերնով — պիտի բերէ ի շարս այլ ազատութիւններու՝ նաեւ Հայոց ազատութիւնը: Նա պէտք է լինի «դարերու մեծագոյնը»...

— Այն բարոյական սկիզբներ, որք կոտնահարւին այսօր, պիտի վեհապետեն այն վեհագոյն դարին մէջ. այն ժողովուրդներ, որք մի անմիտ խնամակալութեան տակ են այժմ, չափահաս պիտի լինին և ինքնազուլի պիտի վարեն իւրեանց ճակատագիր: այն ժողովուրդներ, որք կը հեծեն լուծի տակ, պիտի փչրեն իւրեանց շղթաներ... Չե՞ս նշմարեր այն արշալոյսն, որ կը մառափայլէ Մասիսի գագաթին վրա\*»...

Չխօսինք «Արծուի Վասպուրականի» չրատարակութիւններու մասին, չյիշենք Խրիմեանի պատրիարքութեան օրով դիզած «Հարստահարութիւններու տեղեկագիրները», լի արիւնոտ ոճի

\*) Փռնցի, 1877թ. Մարտ 10:

ներու նկարագրութիւններով: Ադոնց մասին խօսեր ենք արդէն շատ անգամ: Ահա ազատախօս թերթ մըն ալ 1871 թւականէն, որմէ մէկ թիւ դիպւածով մնացեր է մեր դիւանին մէջ. —

«Մամուլ» թերթը (Արձագանգ հասարակաց կարծեաց) իր 1871թ. սեպտեմբեր 30 թւին մէջ, ամուան ոճիրները արձանագրելէ ետք, հետեւեալ տողերը կը գրէ. —

«Գրեթէ անհնար է մի առ մի թւել այս ամուան ոճրագործութիւններն (Պօքը Վանայ սանճակի մասին է: Թերթն ալ ըստ երևոյթին կը հրատարակէր Կ. Պոլսոյ մէջ: Մ. Վ.)... Նաև կուսապղծութիւնները, որոնց մին է եօթն տարեկան կոյս աղջիկ մը տաճկէ պղծւիլը ի նախատինս ազգին: Ասոնց համար ազգին մէջէն եւս բաւական մարդիկ միտարանած՝ կրօնափոխութեան խորհուրդներ կը յղանան... Թերեւս ազատութիւն մը ըլլայ...

«Վանայ կողմերը ասոնք (կախարհէ թուրք-քիւրտ հրոսակներուն վրա: Մ. Վ.) քէֆերնուն փշած ատեն կը քաշեն, կը սպանեն, կ'այրեն, կը պղծեն, կը կողոպտեն... Մինչև հիմա լրագիրները բիւր անգամ ասոնց բարբարոսութիւնները հրատարակեցին, պոլսեցւոյն քար սիրտը չհարժեցին, ընդհանուր ժողովին անգութ խիղճը չխայթեցին, Վանեցի պատրիարքը քունէն չարթնցուցին, անշարժ քաղաքական ժողովը տեղէն չհարժեցին»...

Ահա գաւառացիի դատավճիռը Ազգային Սահմանադրութեան դէմ...

Ու կը շարունակէ «Մամուլ»ը. —

«Ընթերցող էֆէնտի, անանկ հայ եմ ըսելով պարծիլ ու ինքզինքդ դիւցազնի մը տեղ դնելով խրոխտալը խեր չըններ: Հայուն պարծանքը չմնաց, պատիւն ալ չմնաց, ստացւածքն ալ չմնաց, աչքդ գոցես բանաս նէ՛ Հա՛յն ալ չպիտի մնայ... Ի՞նչ է ասոր պատճառը. — Գու հայ ու անգղայ ըլլալը է...

... «Ուրեմն դո՛ւք գձեց պաշտպանեցէք, ո՛վ ասիացիք, դո՛ւք ձեր փրկութիւնը հողացէք... Երբ մարդ այնպիսի երկրի մը մէջ կապրի, ուր կեանքն ու ինչքը անապահով է, հարկ անհրաժեշտ է, որ կրէ իր վրա ինչ որ իւր կենաց, ընչից և պատուոյ ապահովութեան համար պէտք է»...

Իրաւացի էր Այվազեան վարդապետը — Սահմանադրութեան ճամբով չէր միայն, որ պիտի պատրասուէր «երկաթէ շերեփ»ի սերունդը, հայոց ինքնապաշտպանութեան և հայկական ազատամարտի սերունդը...

Անշուշտ, Սահմանադրութիւնը դարձեալ մեծ բարիք մըն էր: Հայ ժողովուրդը թուրքիոյ մէջ ձեռք կը բերէր իրաւունք՝ հիմնելու իր սեփական դպրոցներն ու այլ մշակութային հաստա-





ւածը վերացնելու համար, արտաքին միջամտութիւններու յաւիտենական սպառնալիքը բառնալու համար՝ յղացաւ մեծ ջարդերու ծրագիրը...\*)

\*\*\*

Ուշ, այո՛, տարաբախտաբար, — բայց այնուամենայնիւ արթնցանք: Ըմբոստացումի քարոզը, մերթ թոյլ ու երկչոտ, մերթ դորաւոր ու յանդուզն, կը շարունակէր հնչել թրքահայոց մամուլի ու գրականութեան մէջ: Անգամ Ծերեմոյս—Շիշմանեանը, հակառակ իր խիստ չափաւոր խառնածքին, լոյս ընծայեց շարք մը վէպեր, որոնք եկան հարստացնելու մեր հերոսական վիպերգութիւնը: Թորոս Լեւոնի, Թէոդորոս Ռշտունի և Երկուսի գարկ կուտան հայ ռազմական ինքնաճանաչութեան, կարծարծեն պայքարի անհրաժեշտութիւնը, վերարտադրելով գեղարւեստական հուժկու էջերու մէջ մեր պատմութեան դիւցազնական դրւագնբը, ուր առանձնապէս փայլեր է ցեղի կենսական կորովը, անոր գործօն ինքնապաշտպանութեան ճիգը:

Ըմբոստացումի գանգը հնչեց, վերջապէս, նոյնիսկ Պոլսոյ չափաւոր ու խոհական Ազգային ժողովի բեմէն: Բերլինի վեհաժողովէն յետոյ էր: Տաղնապալի օրեր էին: Ճարգ յողւածը սկսեր էր արդէն դրսևորել իր սին, ամուլ, աղիտաւոր բնոյթը: Անգլիա — Դիդրայէլի շարաշուք վարչապետութեան տակ — բնաւ չէր հետաքրքրեր Հայաստանով ու հայկական բարենորոգումներով և Կիպրոսեան դաշնադրութեամբ (1878թ.) իր հովանիին տակ առեր էր Օսմանեան կայսրութիւնը (ընդդէմ Ռուսիոյ հնարաւոր յարձակումներուն): Անտարբեր էր և Ռուսաստանը, անտարբեր էր ողջ Եւրոպան: Ու սուլթան Համիտ, քաջալերած այդ ընդհանուր անտարբերութենէն, մոռացութեան գամբիւղը նետեր էր Ճարգ յողւածը. և երբ — 1879թ. Յունւարին — օր մը Հայոց Պառն ժողովի պատգամաւորութիւնը գնաց Բ. Դուռը՝ «յարաճուն հարըստահարութիւններու մասին տեղեկագիր ու գանգատ բառնալու», համիտեան սատրաղամը պաղ, թշնամական խօսքերով դիմաւորեց զայն և ճամբու դրաւ, ըսելով, թէ «Ասիական Թուրքիայով գրաւելու ժամանակ չունի»...:

Պորուկ յուսալքում ծայր կուտար բոլոր հայ շրջաններու

\*) Տե՛ս. Der Christliche Orient, 1897թ. № № 11 և 12 (յողւած Ձէյմս Բրայսի):

մէջ և 1879ի Մայիս 11 ին Ազգային ժողովի նախագահը, Մատթէոս Իգմիրլեան, կարտասանէր արդէն իր դամբանականը Ճարգ յողւածին վրայ.

— «Գիտեմ, որ ամէն երեսփոխան անհամբեր պիտի ուզէ տեղեկանալ, թէ ի՞նչ են Հայաստանի բարեկարգութեան համար կառավարութեան ձեռք առած միջոցները... Համբերեցէ՛ք, տեաք երեսփոխանք, զիչ մ'ալ... Այս համբերութեան խրատը կուտանք մեր բոլոր դաւառական վարչութեանց, որք նորանոր հարստահարութեանց տեղեկագիրներով հետզհետէ կուտեն Պատրիարքարանը և Պերլինի դաշնադրին Ճարգ յողւածին դործադրութեան ժարանը և Պերլինի դաշնադրին Ճարգ յողւածին դործադրութեան ժարանը կը հարցնեն... Գիտեմ, պիտի ըսէք, թէ համբերութիւնն ալ չափ ու սահման ունի: Սակայն մեր յայտ կարած չենք մեր վեհափառ Սուլթանէն... և Պերլինի դաշնադրին ստորագրող կառավարութիւններէն»:

Երբ Սատրաղամի վերը յիշատակած պատասխանը հազորուեցաւ Ազգային ժողովին, Ստեփան Փափագեան — թրքահայ մտաւորականութեան ամենէն զգայուն և ըմբոստ ներկայացուցիչներէն — խորապէս յուզած, ամբիսն բարձրացաւ և արտասանեց ցնցող harangue մը.

— Կառարկեն, թէ Բ. Դուռը Եւրոպական Տաճկաստանի դործերով պաշարած է և չունի ժամանակ Հայաստանի վրա դարձնելու ուշադրութիւն: Այո՛, չունի ժամանակ Հայաստանի վրա իր ուշքը դարձնելու, վասն զի եւրոպական Տաճկաստանի մէջ ապստամբ և գինեալ ժողովուրդներ կան, փոթորիկ կայ, մինչդեռ ապստամբ և գինեալ ժողովուրդներ կան, փոթորիկ կայ, մինչդեռ ապստամբ և գինեալ ժողովուրդներ կան, փոթորիկ կայ... Եւրոպական հրոսակներու մատնած, որ կը սպաննեն, կը քանդեն, կը յափշտակեն և կը մնան ազատ ու անպատիժ, չնորժիւ անպիտան պաշտօնակալաց... Ի՞նչ դժւարութիւն կայ, որ դէժ գէնք չեն տար հայ ժողովուրդին, որ գինքը պաշտպանէ... Եւրոպական Տաճկաստանը ապստամբութեան դիմելով, կրցաւ կորցել այդ իրաւունքը, իսկ Ասիոյ հայ ժողովուրդը, վասն զի ալերսական կերպով կը խնդրէ, անոր կը զլացել ամէն հաւասարութեան իրաւունք»...:

Ապստամբութեան համարձակ կոչ մըն էր Ազգային ժողովի բեմէն...

Ստեփան Փափագեան, Ներսէս Վարժապետեան, Մկրտիչ Փորթուգալեան, Եղիա Տէմիրճիպաշեան, Եղիշէ վ. Ալվաղեան, Մինաս Չերազ, Արիփար Արիփարեան և այլն — նոր, վառվառ սերունդն էր, ազատութեան պատգամաբեր Երիտասարդ Հայաստանն էր: Բայց «հին գլուխներէն» եւս շատեր նոյն հողեկան վի-

ճակը կը մատնէին և նոյնքան սեւատես էին հայ ժողովուրդի կացութեան հանդէպ՝ թրքական տիրապետութեան տակ: Սեւատեսներ կային անգամ հայ մէսուլաններու շարքերում, որոնք ոռութուրք պատերազմի ընթացքին, թուրքիոյ անդրանիկ Խորհրդարանի բեմէն ի լուր աշխարհի կը պանծացնէին օսմանեան բէժիմը, մերժելով ոռութեան հովանին և խարանելով ոռութեան «հայակուլ» տիրապետութիւնը:

Պոլսոյ «Մասիս»ի մէջ (1877թ. Յունիս 19) արձանագրուած է օսմանեան պարլամենտի ամէնէն հետաքրքրական նիստերէն մէկը, ուր կարնոյ երեսփոխան Համադասպ էֆ. Պալլարեան խօսած է քրտական խնդրի մասին: Եւ այդտեղ հայագրի մէսուլը չէ վարանած մատը դնելու հիմնական խոցին վրայ — այն ահաւոր *raison d'Etat* ի, որ կը ծանրանար հայութեան ճակատագրին վրայ և որուն զօրութեամբ հայ ժողովուրդը կը տապալէր, կ'ողջակիզէր իր դարաւոր հայրենիքի մէջ, առանց փրկութեան ոեւէ յոյսի... Համադասպ Պալլարեան կը պատմէր իր ճառին մէջ, թէ ինչպէս աշխրէթապետները անպատիժ կը նիւթեն ամէն տեսակ սոսկումներ և վալիներէն ու միւթէսարիֆներէն շատեր կը գործակցին քիւրտերուն...

— «Երբ կը հարցնէի կուսակալներուն, թէ ինչո՞ւ քիւրտերը չեն պատժուիր, որոյ համար երկու վաշտ զօրք բաւական է, և այսպէս անպատիժ թոյլ կը տրուի որ շարունակեն իրենց չարագործութիւնները, ինձի կը պատասխանէին, թէ այս գործին մէջ «հիֆմէթի հիւֆիւմէթ» կայ (պետական գաղտնիք): Վերջէն խելամուտ կոչայ, թէ ի՞նչ է եղեր այդ պետական գաղտնիք ըսածնին. այդ հիֆմէթը սա է եղեր, թէ կառավարութիւնն անոր համար այդ վիճակին մէջ կը պահէ եղեր Քիւրտերը, որ եթէ Հայերը Հայաստանի մէջ ապստամբական շարժում մ'ընեն, Քիւրտերը գահոնք գտան, և մէկ մ'ալ, որ Քիւրտերը, երբ պատերազմ բացուի Ռուսիոյ դէմ, օսմանեան բանակին իբրեւ կամաւոր զօրք օգնութիւն պիտի ընեն եղեր»...

Առանց Համադասպ էֆէնտիի այդ պատմական յայտարարութեան ալ, շատերու համար գաղտնիք չէր, անշուշտ, այդ անիծապարտ հիֆմէթի հիւֆիւմէթը, որ կը խեղդէր հայ ցեղի մեծամասնութիւնը իր պողպատէ ճիրաններուն մէջ և որու հանդէպ հայ բաղամատան ժողովուրդը, յանձին իր խորհող ու գզացող տարրերու, յանձին իր սրտցաւ, դաղափարական փոքրամասնութեան, մէկ ելք միայն կը նշմարէր — ապստամբութիւն:

Վարանումը այլեւս ոճիր էր մեր յառաջապահ մտաւորականութեան աչքին: Միմիայն ֆիզիքական տառապանքները չէին, միմիայն տնտեսական և քաղաքական ճնշումը չէր, միմիայն աղաղակող անապահովութիւնն ու գանգաւածներու թշուառութիւնը չէր, որ ցասումով կը համակէր հայ զգայուն ու աչքաբաց տարրերը, այլ և այն սարգ, մտրակող գիտակցութիւնը՝ թէ հին, քաղաքակիրթ ազգ մը — որ դեռ տասնըհինգ դար առաջ տւած է մարդկութեանը մտքի ու արեւստի գեղեցիկ կոթողներ, որ նորագոյն ժամանակներում տւեր է լէգէոն մը բանաստեղծներու, վիպասաններու, գիտնականներու, բժիշկներու, նկարիչներու, պետական գործիչներու, զօրավարներու, և որ այժմ ալ կը հանդիսանար, հելլէն տարրին հետ՝ թուրք կայսրութեան գերազանցօրէն ստեղծագործող ու յառաջողէմ ոյժը իր գրականութեամբ, մշակոյթով, իր հողագործ, արդիւնագործ և առեւտրական ընդունակութիւններով — ենթակայ է կիսավայրենի ցեղերու այլասերող տիրապետութեան, կը մաշի ու կը սպառի անոնց բիրտ կրունկներուն տակ, ոտնահարած, անարգած, մարդկային ամէն արժանապատուութիւն կորսնցուցած:

Եթէ անգամ չլինէր հարստահարութիւններու, տնտեսական հրէշաւոր կեղեքումներու գուլումը և հայութեան մարմինը կրծող բոլոր միւս չարիքները — միմիայն այդ խայթող գիտակցութիւնը բաւ էր արդէն ըմբոստացումի հրդեհը արծարծելու...

Մէկ ելք, ուրեմն, — ապստամբութիւն...

Եւ այդ բառը — նոյնքան վսեմ, կախարդիչ, որքան և ահագոցիկ — կը հոլովէր թրքահայ մտաւորականութեան գաղտնի ժամադրավայրերուն մէջ. նա դարձաւ ազատատենչ երիտասարդութեան կարգախօսը այն ալեկոծ օրերէն ի վեր. հազար ու մէկ եղանակներով երգեցաւ Հայոց ազատութեան երգը, հազար ու մէկ արձագանգներով տարածեցաւ մայրաքաղաքի ու գաւառի մէջ — և այնուամենայնիւ, պէտք եղաւ սպասել դեռ երկար տարիներ, մինչեւ որ խօսքէն գործի անցնէին, մինչեւ որ երկրի մէջ ծնունդ առնէին գաղտնի, դաւադիր կաղմակերպութիւններ, մինչեւ որ Մկրտիչ Փորթուզալեան, Երիտասարդ Հայաստանի ըմբոստ և արի գաւակներէն մին, երթար տնկելու ազատ Փրանսայի մէջ հայկական ազատ խօսքի դրօշը, հայ յեղափոխական շարժման դրօշը: Եւ այդ ալ միայն առաջին երկչոտ թոթովանքն էր արթնցող ստրկին...

Իրերու հոլովոյթը, ուրեմն, դեռ բաւականաչափ չէր յա-

ուջացեր, հայկական իրականութիւնը բաւականաչափ չէր հասունցեր, պէ՛տք էին նոր հարւածներ — և անոնք ալ չուշացան:

Կացութիւնը պատերազմէն յետոյ աւելի եւս վատթարացաւ: Ոչ միայն ՅԵՂԵՍՅԱՆԻ Հետ կապւած յոյսերն ի դերեւ ելան, ոչ միայն ռուս բանակի ու հայ զօրավարներու յաղթական մուտքը էրզրում և ժողովրդական ցնծութիւնը տեղի տւին տխուր նահանջի ու ընդհանուր յուսալքումի, այլ և հայութեան աչքերուն առջեւ պարզեցաւ աւերածի ու սարսափներու լայնածաւալ տեսարան մը, որու նմանը Թուրքաց Հայաստանը չէր տեսած դարերէ ի վեր:

Թրքահայութիւնը պատերազմի ընթացքին ծայրագոյն հաստատութեամբ կատարեւ էր իր պարտքը հանդէպ օսմանեան պետութեան. 20-30,000 հայ մարդիկ կոխներու ատեն լծւեր էին իբրև ճշմարիտ զրաստներ՝ Թնդանօթներն ու ռազմամթերքը հեռու վայրեր փոխադրելու և առհասարակ ամենածանր աշխատանքներ կատարելու համար, հայ ժողովուրդը կողոպտեր էին, առեր էին ամէն ինչ՝ պատերազմի ծախքերը հոգալու համար... Ո՛չ մի ըմբոստացում, ոչ մի Թրքահայ կամաւոր ռուսական բանակի մէջ, ոչ մի կամաւորական շարժում կողկասահայոց մէջ — և այնուամենայնիւ Թուրքաց Հայաստանը ենթարկեցաւ վիթխարի աւերածութեան. ջարդ, թալան, բռնութիւններ Թուրք անկանոն զօրքերու և քրիւտերու ձեռքով, հրդեհած հարիւրաւոր գիւղեր, սըրբապղծւած վանքեր ու եկեղեցիներ, անիշխանութիւն, ահ ու սարսափ, խուճապ ու գաղթ... Ամբողջ գաւառներ դատարկւած և զանգւածային գրոհ դէպի ռուսական սահմանը, ուր տասնեակ հազարաւոր գաղթականներուն կը սպասէր անխուսափելի սովի և համաճարակ հիւանդութիւններու պատուհասը:

«Իմ քոյր գրիչը անկարող է նկարագրել այն բոլոր սարսափները, որ նիւթեցին Հայաստանի մէջ Քիւրտերն ու օսմանեան բանակի այլ կամաւոր վաշտերը» — կը գրէր 1877 թն անգլիական Թայմսի թղթակիցը, Նօրման, որ ուղեկցած է Թուրք բանակին Հայոց լեռնադաշտի վրա և ապա հրատարակած է իր հետաքրքրական թղթակցութիւնները խոշոր հատորով մը «Armenia and the campaign of 1877» խորագրով: Հայ թղթակիցները, հայ մամուլն ու գրականութիւնը, Բաֆֆիներն ու Արծրունիները կարո՞ղ էին չափազանցել այդ օրերուն կատարւած քրիւտերու և բաշխողութիւններու վայրագութիւնները. բայց հազիւ թէ այդպէս վարւէր պահպանողական Թայմսի ներկայացուցիչը, — այն Թայմսի, որ ազդեցիկ օրգանն էր լորտ Բիկլնսֆիլտի Թրքասէր կառավարութեան:

The subject is too painful to need any coloring (Նիւթը չափազանց ծանր է և պէտք չունի գունաւորումի) — կըսէ Նօրման, և կը շարունակէ:

— «Այդ հրէշներու ձեռքով կատարւած արհաւիրքներու պարզ արձանագրումն իսկ բաւ է յարուցանելու անոնց դէմ արժանաւոր պատիժ: Կը բաւէ ըսել, որ Բայազետը հիմնադէս կողոպտեր է և աւելի քան 1100 բնակիչներ կոտորելէ ետք, կը ներկայացնէ այսօր աւերակոյտ մը... Գագանութիւններու թատերավայրեր են Վանի, Բիթլիսի, Ալաշկերտի շրջանները: Ամենուրեք լքւած գիւղեր, պարպւած, ամայացած քաղաքներ, առեւտուրը դադրած, հունձքը կը սպասէ հնձուրներուն, այրեր՝ որ կը սգան իրենց անարգւած կիները, ծնողներ՝ որ կողբան իրենց խողխողած գաւակները... Ալաշկերտի դաշտին մէջ 122 հայ գիւղերէն 113ը կատարելապէս ամայացեր են և այն փոքրաթիւ քրիստոնեաները, որ չեն կարողացած օգտուիլ ռուսական հովանաւորութենէն, բարբարոսաբար կոտորւեր են... Ամայի է Բիթլիսը... Մայիս 4ին քիւրտ կամաւորները իրենց ցեղապետ Իսմայիլի հրամանով դիմեցին դէպի Վան: Ճամբուն վրա — թալան, ջարդ ու աւերած: Աւգուլի գիւղին մէջ հրդեհեցին եկեղեցին, ուր ապաստանած էին կանայք ու երեխաներ, ապա բռնաբարեցին բոլորը ու թողին մերկ: Նոյն վիճակին ենթարկեցաւ Եւհրատի (?) հայ բնակչութիւնը... Շէյխ Ջելալեդդին կը ճարակէր ամբողջ տարածութեան վրա, Վանէն մինչև Տէրիք փաշայի բանակը՝ կը նետուէր իր հրոսակներով հայ գիւղերու վրա, կը յափշտակէր բոլոր կոյսերն ու մանուկները, կը կողոպտէր և կը պղծէր եկեղեցիները: Ս. Բարթոլոմէոս վանքը ենթարկեցաւ Ալի խանի ճիւղերներու յարձակման. շրջակայ գիւղերէն հող ապաստաններ էին կանայք և երեխաներ. ամենէն ցանկալիները տարան իրենց հետ և քահանան, որ փորձեց պաշտպանել իր աղջիկը, տեղն ու տեղը սպանեցաւ... Շէյխ Իբրահիմը մարդիկ կը մրցէին Ջելալեդդինի դրօշին տակ գործող իրենց ընկերներուն հետ... Մուշի շրջակայքում քիւրտ Մուսա պէյը փոքրաթիւ ճիւղերով կաւերէր և կը հրդեհէր հայ գիւղերը: Սարցի մէջ այդ ճիւղերը կը մտնէին հայ քահանային տունը, որ նոր բերեք էր իր հարսնացուն հայրական տունը: Չարագործները պարանով կը կապեն մէկտեղ ծեր քահանան ու իր դաւակը և անոնց աչքերուն առջեւ կը բռնաբարեն աղջիկը: Ապա կը հրամայեն սրէ անցրնել երեքն ալ... Այլ եւս չեմ կարող գրել»...

Եւ դարձեալ — այս բոլորը չէր: Աւելի գարհուրելին կար: Է Ռի Դիլօն, հռչակաւոր անգլիացի թղթակիցը, օր մը կը գրէր, Սասնոյ կոտորածի առթիւ (1894թ.), որ ջարդերը «երկնքի ողորմութիւն են», համեմատած Հայերու առօրեայ դժոխային կացու-

քեան հետ: Ճշմարտութեան բաժինը կայ այդ տարօրինակ յայտարարութեան մէջ:

Տուրքերու հրէշաւոր սխտեմը կար, որ կը ծանրանար հայ ժողովուրդի տնտեսական կեանքին վրայ և տգրուկի պէս կը ծծէր անոր ամէնէն կենսական հիւթերը: Պատերազմէն յետոյ, տուրքերը բազմապատկեցան: Պատերազմը ուժասպառ ըրեր էր թուրք կայսրութիւնը և դիրքերը շտկելու համար գերագոյն միջոցն էր՝ ոյժ տալ կեղեքման ու հարստահարութեան մեքենային: Քաւութեան նոխազը միշտ աշխատաւոր դիւղացիութիւնն էր և մանաւանդ հին, հաւատարիմ կթան կովը—հայ շինական և քաղաքային ժողովուրդը... Եւ այդ՝ այն օրերուն, երբ տնտեսական կեանքը մարեր էր Հայաստանի մէջ, երբ կործաներ էր և՛ հայ շինականը և՛ հայ առևտրական դասակարգը: Իսկ 1880ին պայթեցաւ նաև սովի արհաւիրքը. համիտեան կառավարութիւնը — միշտ նպատակ դարձուցած Հայաստանի պարպումն ու Հայերու բնաջնջումը — մէկէն ի մէկ կաշկանդեց մթերքներու ազատ փոխանակութիւնը, արգիլեց հացահատիկներու արտահանումը այն վայրերէն, ուր անոնք համեմատաբար առատ էին: Ալաշկերտէն ծայր տալով, սովը տարածեցաւ հետզհետէ, համաճարակ հիւանդութիւններու հետ և շուտով հսկայ բառաչիւն մը աղեկտուր ելեւէջներով բարձրացաւ թրքահայաստանէն ու նոր սովահար բազմութիւններու կարաւանը դիմեց դէպի Կովկաս:

Արդէն իսկ պատերազմէն առաջ չափազանց ծանր էր օրինաւոր և ապօրինի տուրքերու բեռը, զոր կը կրէր իր վտիտ թեւերուն վրայ հայ աշխատաւոր ժողովուրդը, թուրք-քրտական կրկնակի լուծին տակ: Արդէն իսկ անասելի չարիք մըն էր միջնադարեան խափիրութիւնը, աւատական հարկատուութեան այդ այլանդակ մնացորդը, որու զօրութեամբ քիւրտ աղան բաժին ունէր իր հպատակ հայ շինականի բոլոր այլազան բերքերէն — հացահատիկներէն, ոչխարէն ու բուրդէն, մեղրէն ու կարագէն, ձեռագործ արդիւնքներէն և տուրք կ'առնէր կամ դրամով, կամ թէ բնական բերքերով:

Շատ է դրւեր թրքական հարկահանութեան սխտեմի մասին, որ իր անասհման կամայականութեամբ, անշուշտ, եղակի է կազմակերպուած պետութիւններու շարքին և շատ անգամ օտար հետադասողներ զարմանք յայտնել են հայ ժողովուրդի համբերութեան առթիւ: Անգլիական Կապոյտ Գրքերն ալ յիշատակու-

քեան հետ: Ճշմարտութեան բաժինը կայ այդ տարօրինակ յայտարարութեան մէջ:

Տուրքերու հրէշաւոր սխտեմը կար, որ կը ծանրանար հայ ժողովուրդի տնտեսական կեանքին վրայ և տգրուկի պէս կը ծծէր անոր ամէնէն կենսական հիւթերը: Պատերազմէն յետոյ, տուրքերը բազմապատկեցան: Պատերազմը ուժասպառ ըրեր էր թուրք կայսրութիւնը և դիրքերը շտկելու համար գերագոյն միջոցն էր՝ ոյժ տալ կեղեքման ու հարստահարութեան մեքենային: Քաւութեան նոխազը միշտ աշխատաւոր դիւղացիութիւնն էր և մանաւանդ հին, հաւատարիմ կթան կովը—հայ շինական և քաղաքային ժողովուրդը... Եւ այդ՝ այն օրերուն, երբ տնտեսական կեանքը մարեր էր Հայաստանի մէջ, երբ կործաներ էր և՛ հայ շինականը և՛ հայ առևտրական դասակարգը: Իսկ 1880ին պայթեցաւ նաև սովի արհաւիրքը. համիտեան կառավարութիւնը — միշտ նպատակ դարձուցած Հայաստանի պարպումն ու Հայերու բնաջնջումը — մէկէն ի մէկ կաշկանդեց մթերքներու ազատ փոխանակութիւնը, արգիլեց հացահատիկներու արտահանումը այն վայրերէն, ուր անոնք համեմատաբար առատ էին: Ալաշկերտէն ծայր տալով, սովը տարածեցաւ հետզհետէ, համաճարակ հիւանդութիւններու հետ և շուտով հսկայ բառաչիւն մը աղեկտուր ելեւէջներով բարձրացաւ թրքահայաստանէն ու նոր սովահար բազմութիւններու կարաւանը դիմեց դէպի Կովկաս:

Արդէն իսկ պատերազմէն առաջ չափազանց ծանր էր օրինաւոր և ապօրինի տուրքերու բեռը, զոր կը կրէր իր վտիտ թեւերուն վրայ հայ աշխատաւոր ժողովուրդը, թուրք-քրտական կրկնակի լուծին տակ: Արդէն իսկ անասելի չարիք մըն էր միջնադարեան խափիրութիւնը, աւատական հարկատուութեան այդ այլանդակ մնացորդը, որու զօրութեամբ քիւրտ աղան բաժին ունէր իր հպատակ հայ շինականի բոլոր այլազան բերքերէն — հացահատիկներէն, ոչխարէն ու բուրդէն, մեղրէն ու կարագէն, ձեռագործ արդիւնքներէն և տուրք կ'առնէր կամ դրամով, կամ թէ բնական բերքերով:

Շատ է դրւեր թրքական հարկահանութեան սխտեմի մասին, որ իր անասհման կամայականութեամբ, անշուշտ, եղակի է կազմակերպուած պետութիւններու շարքին և շատ անգամ օտար հետադասողներ զարմանք յայտնել են հայ ժողովուրդի համբերութեան առթիւ: Անգլիական Կապոյտ Գրքերն ալ յիշատակու-

Թիւններ կ'ընեն այդ մասին. 1880թ. սեպտեմբեր 23 ին բրիտանական հիւպատոս Էվէրստ կը գրէր Էրզրումէն կոմս Գրէնվիլին.

— «Միմիայն ժողովուրդի (հայ ժողովուրդի. Մ.Վ.) համրութեամբ, երկչոտութեամբ և անոր դանազան խաւերու մէջ եղած կապերու թուլութեամբ կարելի է բացատրել այն հանգամանքը՝ որ արեւելեան սանջակները անցեալ տարի տուրքերը բաշխելու միջոցին չապստամբեցան կառավարութեան դէմ, ոտքի կանգնելով մէկ մարդու պէս»:

Հարստահարութեան, ճնշումի ու տառապանքի ոչ մի ձեւ չինայեցաւ այդ վատարախտ ժողովուրդին: Պատերազմի արհաւիրքներ, հզօրներու պաղ, անգութ անտարբերութիւն, տնտեսական աւերած, սով ու գաղթականութիւն, խմբովին բանտարկութիւններ, կանանց առեւանգում, դանդաժային բնաջնջումի դիւական ծրագիրներ, տուրքերու յարածուն բեռ և քրդական անհատնում բռնութիւններ, որոնք յանգեցան Մուսա բէյի աշխարհազոյրդ գազանութիւններուն—բոլորը, բոլորը եկան հիմն ի վեր կործանելու, տակն ու վրա ընելու դարաւոր հոգեբանութիւն մը, որ նիւթաւ էր արեւելեան ճակատադրապաշտ անշարժութենէ և գետնատարած հնազանդութենէ...

Ապստամբութիւնը — աւելի ճիշտ՝ դաւադրական գործունէութիւնը — ծայր սուււ վերջ ի վերջոյ, երբ դանակը ոսկորին հասեր էր...

«Ռա՛յեա», դարերու անխօս, անմունչ ստրուկը խլրտաց վերջապէս և ուզեց ցոյց տալ աշխարհին, որ ինքն ալ անարգ գրաստ մը չէ, այլ մարդ-էակ մը,— սուեր մը չէ, այլ գոյութիւն... «Je m'insurge, donc je suis!». (Կապստամբի՛մ, ուրեմն կա՛մ). անգամ մը եւս արդարացաւ հին, դաժան ճշմարտութիւնը, որ անմահացած է աշխարհի մեծագոյն բանաստեղծներէն մէկուն — Շիլլերի — այս հրեղէն բառերով.

« Երբ որ մնչաւս այստեղ, աշխարհում  
Դատ ու իրաւունք բնաւ չի գտնում,  
Երբ որ բռնութեան լուծը գարշելի  
Դառնում է ստրկին անհանդուրժելի,  
Նա իր ձեռքերը երկինք է մեկնում  
Եւ վստահօրէն այնտեղից խլում  
Իր իրաւունքներն յաւիտեանական,  
Որոնք երկնքի աստղերի նման

Անշարժ, անվախճան անհունի՛ն փարած  
Մնում են այնտեղ յաւիտեան կայսրած:  
.....

Երբ էլ նար չունիմք, սուրին ենք դիմում,  
Մենք մեր հայրենի հողն ենք պաշտպանում,  
Ընդդէմ մեզ մնշող անարգ բռնութեան  
Պաշտպանում ենք մեր կին ու երեխան»:

Յեղափոխական դադափարի ամենէն առատ ցանքը կատարւեր էր Վանի մէջ\*), ուր կ'ապրէր Խրիմեան (Վարազայ վանքը), ուր հստատուած էր և Մկրտիչ Փորթուգալեան իր համբաւաւոր Վարժապետանցով: Փորթուգալեան նախապէս ունեցեր էր արդէն կրթական-յեղափոխական քարոզչութեան շրջան մը—դեռ 70ական թւերու սկիզբներուն — որպէս ուսուցիչ Թոգատի մէջ, ուր կը պատրաստէր նոր, գաղափարական երիտասարդութիւն, կոխ կը մղէր աղայականութեան ու բռնութեան դէմ և այդ պատճառով շղթայակապ բանտարկեցաւ Թոգատի մէջ, աքսորեցաւ Սերաստիա, ապա վերադառնալով իր ծննդավայրը, Պոլիս, հրատարակեց որոշ ժամանակ Ասիա անունով ազատաշունչ թերթ մը, որ երկար չկրցաւ ապրիլ:

Այդ մարդը, որուն վիճակաւ էր յետագային հիմնել առաջին հայ յեղափոխական կուսակցութիւնը և դառնալ ռահվիրայ հայկական շարժման, իր շիտակ ու անվախ բնաւորութեամբ և տաք, յեղափոխական խառնածքով, չափադանց արմատական կ'երեւէր իր հայ շրջապատին, որը շարունակ կը դաւէր անոր դէմ, կանգ չառնելով անգամ մատնութեան սուղեւ: Բայց երիտասարդ առաքեալը ունէր նաեւ իր բազմաթիւ հիացողները: Մէկը հաղազիւտ պոլսեցիներէն՝ նա համաձայնեցաւ, երթալ Հայաստան, որպէս գործակալ Պոլսոյ նորակազմ Արարատեան Ընկերութեան:

Գնաց Վան 1877ին, շրջագայեց, ուսումնասիրեց, պատրաստեց գետինը կրթական հաստատութիւններ հիմնելու համար: Ռուս — թրքական պատերազմի ընթացքին պնաց Կովկաս,

\*) Ձենք յիշատակեր Ձէյթունն ու Սասունը, որոնք երկու ուլախէն էին ստրկութեան անապատին մէջ, մանաւանդ Ձէյթունը, որ վաղուց ծածօթ էր իր պարբերական ընդվզումներով և նոյն իսկ 1877ին վերստին յուզեց թուրք կառավարական շրջանները անակնկալ խլրտումներով, Յարութիւն Չաքրեանի և այլոց ղեկավարութեամբ: Ձենք մոռնար նաեւ 1872ին Վանի մէջ հիմնուած «Միութիւն և Փրկութիւն» դադունի խմբակը:



ժողովուրդը Գրիգոր Արծրունիին, մնաց երկար ամիսներ անոր հոռու աշխատանքին մէջ, յօդուածներ տուաւ «Մշակ»ին, Արծրունիի թելադրութեամբ ներկայացաւ Կովկասեան բարձր իշխանութեան և արտօնութիւն ստացաւ հանգանակութիւն մը կատարելու ռուսահայոց մէջ ի նպաստ Արարատեան Ընկերութեան: Ապա, քաջալերւած «Մշակ»ի խմբագրապետին հեղինակաւոր աջակցութեամբ, վերադարձաւ Վան և հիմնեց այնտեղ 1878ին իր Վարժապետաձոցը, որ պիտի դառնար տեսակ մը կեդրոնական վառարան Հայաստանի վերածնութեան համար: Սակայն այդտեղ եւս չուտով ծայր տւին շուկներն ու գաղտասուքները կղերական-պահպանողական հայ շրջապատէն, լուր տարածեցին, թէ նորեկ առաքելը «մշակութային» վարադոյրին տակ յեղափոխական գաղափարներ կը սերմանէր Վասպուրականի երիտասարդութեան մէջ... Ինչ որ ճիշտ էր, անտարակոյս... Վարժապետանոցը ազատաշունչ գաղափարներու մարգարան մըն էր յունական հեթերիաներու օրինակով: «Փորթուզալեան ազատութեան շունչ մը փչեց ամբողջ Վանի վրայ — կը դրէր Արփիար. առանց Յեղափոխութիւն բառը արտասանելու, պատրաստեց յեղափոխական սերունդ»\*):

Եւ քանի մը տարի ապրելէ յետոյ, դպրոցը փակեցաւ կառավարութեան հրամանով: Ինչը Փորթուզալեան — ինչպէս օր մը կը պատմէր մեզի — միանգամայն համոզւած էր, որ այդ համակրելի ձեռնարկի խափանումը հայ դաւադրութեան արդիւնք մըն էր: Բայց և միւս կողմէ հաւանական է, որ ինքն ալ մեծապէս նպաստեց է հակառակորդներու դաւերուն, իր չափազանց ազատ կեցածքով և ծայրայեղ քարոզչութիւններով... Շրջահայեցութիւնն ու խոհականութիւնը, աւա՛ղ, հայ գործիչի առաջնակարգ առաքիւնութիւններէն չեն... Վասպուրականի սրտին մէջ անպատմութեան շեփորը կը հնչեցնէին տանիքներու վրայէն... Ունինք ձեռքի տակ պարզ, անպաճոյճ պատմութիւնը Փառնա Թերլիմէզեանի — նոյն հինաւուրց սերունդէն և Վարժապետանոցի սաներէն — որ, ինչպէս ամէն հայ, խոր յարգանք ու պաշտամունք ունի Փորթուզալեանի և Խրիմեանի համար, բայց և շատ բարձր չի գնահատեր անոնց տակտն ու շրջահայեցութիւնը: Օր մը հայ անւանի նկարիչը մեր խնդրանքով թելադրեց մեզի իր յուշերը Վասպուրականի այդ առաջին յեղափոխական սերունդի

\* Նաք Կեանք, Յուլիս 1890թ.

մասին, անոր վարիչներու, խոշոր դէմքերու, մտաւորականներու և հայդուկներու, որոնք եղան ազատագրական շարժման կարապետներ (80ական թւերու սկիզբները) Թրքահայաստանի ամենէն հայաշատ և գուցէ նաև ամենէն բարեկեցիկ գաւառին մէջ: Այդ սերունդէն ելաւ նշանաւոր Աւետիսեանը (Մկրտիչ Թերլիմէզեան), որ իբրեւ Արմենական Կուսակցութեան պարագլուխ, երկար տարիներ գործակցեցաւ մեր Պետոյին. այդ սերունդէն ելան յեղափոխական գաղափարի բազմաթիւ այլ քարոզիչներ, որոնք գործեցին Վասպուրականի շրջաններում և շատերը զայցին դէպի բանտ ու կախաղան, գրկեցին Աւետիսեանի պէս մարտիրոսութեան փառապսակը: Եւ նոյն այդ սերունդէն հրապարակ ելան առաջին հայ «աւագակները», որոնք լեռներուն ապաւինելով, պարզեցին ինքնապաշտպանութեան դրօշը, հարւածելով քրտական հրոսակներն ու կառավարական պաշտօնեաները ակն ընդ ակնի օրէնքով: Թողունք որ խօսի Փանոս Թերլիմէզեանը այդ պատմական շրջանի դէպքերու և դէմքերու մասին.

— «Հայերս անտակտ էինք մեր հայրենասիրական ցոյցերու մէջ, որոնք, ի հարկէ, չէին վրիպեր կուսակալի ուշադրութենէն: Հայրիկն անգամ, որ Վարազի վանահայրն էր, կարծես թէ կը քաջալերէր այդ ցոյցերը...» Ազգային Սահմանադրութեան տօնակատարութիւնները շատ վրան-բաց էին... Տասը հազար մարդով կերթայինք Վարազ, ազգային դրօշակներ պարզած, հայրենասիրական երգեր երգելով... Փորթուզալեանն ալ ջահէլութիւններ կը ներ: Քննութիւններու ժամանակ, կուսակալի ներկայութեանը, աշակերտները Գամառ-Քաթիպայի թուրքատեաց ոտանաւորները կարտասանէին»...

Կեդրոնական վարժարանը ի վերջոյ փակեցաւ, բայց իր կարճատեւ գոյութեամբ իսկ բեղմնաւոր եղաւ: Աշակերտները ցրեցան դէպի Մուշ, Խնուս, Բաղէշ, Պարսկաստան, ռուսացական և քարոզչական առաքելութեամբ: Անոնցմէ էր Ագրիպասեանը, որ 1889ին կուսեցաւ ու նահատակեցաւ Գօլօշեանի հետ: Բայց Փորթուզալեանի աշակերտներէն մեծագոյնը Աւետիսեանն էր, որ

\* Շուկներ կային Թուրքոյ մտաւորականներու մասին: Իրողութիւն է, որ մեծ իշխան Միխայիլ Նիկոլայեւիչ (կովկասեան փոխարքան), որ կը վարէր Հայոց ճակատագիրը ցար Ալեքսանտր Բ.ի անունով, առհասարակ կը նպաստաւորէր Թրքահայոց շարժումը եւ նոյն իսկ Վանի ռուսական հիւպատոս նշանակեցաւ — առաջին անգամը — հայ մարդ մը, Կոստանդին Կամարական, որ, ինչպէս ժամանակին անձամբ կը պատմէր մեզի, կենդանի շփման մէջ եղեր է Խրիմեանի ու այլ ազգեցիկ հայ գործիչներու հետ:

դեռ ընդամենը 20 տարեկան՝ բացառ Վանի մէջ կիրակնօրեայ դպրոց, ուր կը հաւաքէր երիտասարդութիւնը և հայոց պատմութեան ու զրականութեան դասեր կուտար: Բուն նպատակը դարձեալ յեղափոխական քարոզչութիւնն էր: Թաղական Պորհուրը վախէն մատնեց... Կառավարութեան հրահանգով այդ կիրակնօրեայ դպրոցի դռներն ալ փակեցան: Բայց երիտասարդութիւնը, կատաղած, գրոհ տուաւ ու կուզէր բանալ. և երբ չյաջողեցան, լեռները կ'անցնէին ու հոն կը շարունակէին դասախօսութիւնները: Փակած դպրոցի վարժապետներէն էին ինքը Փանոսը, Միքայէլ Նաթանեանը, որ քանի մը անգամ աքսորուեցաւ, Գէորգ Օտեանը, — ամէնքը վանեցի: Յետագային Երամեան որբանոցը հիմնեցաւ և անոր ուսուցիչներն ալ դարձեալ Փորթուգալեանի աշակերտներն էին ու գաղտնի կը թղթակցէին վարպետին հետ, որ Թուրքիայէն աքսորուած էր արդէն:

«Հասաւ, ըստ Սահմանադրութեան, Քաղաքական Ժողովի անդամներու ընտրութեան օրը: Տիրահոշակ Պողոս եպիսկոպոսը ուզեց իր մարդիկ անցկացնել... կանչեց թուրք զինուորները: Բայց երիտասարդութիւնը կուրծք տուաւ սեփններուն, կուրք փրթաւ, մեքայինք կը կուէին զինուորներուն դէմ աղիւսներով: Շատեր վիրաւորուեցան սեփներով, շատեր բանտարկուեցան, ոմանք փախան, բայց հակաժողովրդական կղերի և աղաներու ծրագիրն ալ վիժեց: Ընտրութիւնները չկայացան. եկեղեցիներու դռները զոցուցին (Պողոս եպիսկոպոսը հետագային սպանուեցաւ յեղափոխականներու ձեռքով): Պողոսեան-Ապօղոսեան կոիւններէն յետոյ, Աւետիսեանը փախաւ Սալմաստ, ապա գնաց Մարսէյլ Փորթուգալեանի մօտ, ուրկէ շուտով վերադարձաւ, իբրև պատերազմի Հայոց Հայրեմա-սիրական Ընկերութեան: Դրամ ալ բերաւ հետը. սկսեցինք գնել Պարսկաստանի մէջ բերդաններ ու ատրճանակներ, զոր կը փոխադրէինք Վասպուրական: Երբեմն կոիւններ ալ կուենայինք: Օր մը չորս հոգիով գացինք այն գիւղը՝ Անոս լեռան հարաւ-արևելեան փեշի վրա՝ ուր մտեր էր ցեղապետ Շաքիրը (Նորդուզի ու Շատախի տէրն ու սարսափը) և հաց ու ոչխար թալնած կը պատրաստէր տանիլ Քրտիստան: Գացինք որպէս քիւրտեր, յարձակեցանք Շաքիրի խումբին վրա, երկու քիւրտ սպանեցինք, միւսները փախան: Յաջորդ օրը ընդհարում մըն ալ ունեցանք թուրք ժանտարմներուն հետ, որ կտրել էին ճամբան, երկուքը սպանեցինք ու անհետացանք: Պրոպագանտ կընէինք Շատախի մէջ՝ տեղական կոմիտէներ հիմնելու և Վանի հետ կապելու համար»:

Այդ առաջին հայրուկային արշաւախումբն էր Վասպուրականում: Անոր մէջ էին երկու քրտախօս հայեր — Չաթօ և Մէրօ — երկու անբաժան կտրիճներ, որոնց նկարագրի և սխրագործու-

թիւններու շուրջ հէքեաթային զրոյցներ հիւսուած են, որոնց մասին այնքան պատմեր են մեզ «Դաշնակցութեան» առաջին խմբապետները՝ Վարդանը, Դուռանը, Իշխան Արղութեանը: Տեսակ մը կրօնական հիացմունքով կ'արտասանէին անունները այդ երկու զարմանալի երիտասարդներու — անուս, վայրենի և փոքր ինչ աւագակարարոյ — որոնք մարմնացած սէր էին իրարու հանդէպ և մարմնացած վրէժխնդրութիւն հայութեան ոսոխներու դէմ: Չաթօն վայրի գազան էր — կ'ըսէ Փանոս — քաջ և անեղ. կը պաշտէր սուրն ու հրացանը և առիթը չէր փախցնէր թուրք մը, քիւրտ մը խողխողելու: Մէրօն — ոչ այնքան քաջ, որքան չար-քաշ, տոկուն ու դիմացկուն: Քանի մը տարի շարունակ երկու անբաժան ընկերները ձմրան սկիզբը, գէնքերը Պարսկաստան ձգելով, կ'երթային Թիֆլիզի մէջ աշխատելու և օրապահիկը վաստակելու, փայտ ճեղքելով, և դարնան ձիւները հալելուն պէս կը վերադառնային իրենց գէնքերով Վասպուրական:

Չաթօ, Մէրօ անուններուն կը հանդիպինք նաև Դերեկի կոիւններու պատմութեան մէջ, և հոն ալ սկսաւ այդ ճաշխարհիկ զոյգի սրտայոյզ ողբերգութիւնը: Օր մը, ընկերներու հրացանները մաքրելու ատեն՝ գնդակ մը կը թռչի ու կը սպանէ Չաթօն: Մահացու հարուած մըն էր և միւսին համար... Մէրօ դառնօրէն ողբաց ընկերով կորուստը և այնուհետեւ ինքն ալ արդէն մահ կը փնտռէր: Տարի մը յետոյ — յուզիչ, պաթեթիկ տեսարան մը: Կռիւ էր Դուռմանայ ձորին մէջ, ուր թաղուած էր Չաթոյի մարմինը: Բուռն, արիւնալի կոիւններէն մէկը քիւրտերու դէմ, մեր Դուռմանի խմբապետութեամբ: Մէրօն այդտեղ է, Դուռմանի հետ է: Կը կուր օրհասական կատաղութեամբ, ծանր վէրք կը ստանայ և նահանջելով ու կուելով, կ'երթայ ուժասպառ կ'ընկնի Չաթոյի դամբարանին վրայ ու կը մեռնի:

\* \* \*

Քարոզիչներ, դաւադիր ընկերութիւններ և զինակիր, ինքնապաշտպան խումբեր եղեր են Թուրքիոյ ու Հայաստանի միւս դաւառներուն մէջ ևս: Նախայեղափոխական շրջանի ամենէն նշանաւոր դաւադրական խմբակցութիւնը կազմակերպուած էր հրդուժի մէջ, 80ական թւականներու սկիզբները: Հայկական Tugend-

սուսն էր\*), ընդարձակ ընկերակցութիւն բազմաթիւ անդամներով, որոնք կուգային ժողովուրդի բոլոր խաւերէն — ուսուցիչ, արհեստաւոր և այլն: Ճշմարիտ գաղափարական ուխտ մը, միացած երկման արարողութեամբ: Գաղտնի ընկերութիւնը, հանդարտ քարոզչութեամբ կը պատրաստէր ապստամբութիւն Բարձր Հայքի սրտին մէջ: Ունէր և գէնքի պահեստ, երիտասարդները կը պարապէին զինավարժութեամբ:

Գաղտնիքը ի վերջոյ բացւեցաւ, վատ հայերու շնորհիւ, ինչպէս բազմաթիւ այլ գաղտնիքներ հետագային: 1882 թւականին թուրք սոսիկանութիւնը իր թաթը դրաւ Ընկերութեան վրա և 1 ստորւեցան մեծ թուով ձերբակալութիւններ: Ապա տեղի ունեցաւ դատավարութիւն: Շատեր երկար տարիներ տնջացին բանտերու մէջ\*\*):

\*) Արդ գորու սկիզբներուն ծնւած դերման մեծազոյն դաւադիր ընկերութիւնը («Առաջինութեան դաշնակցութիւն»):

\*\*\*) Ինչպէս կը կարգանք ժամանակի կովկասահայ թերթերու մէջ, Գաղտնի Ընկերութիւնը բացւեց է 1882թ. դեկտեմբերին և դէպքը, որպէս զգայացունց անակնկալ մը, բաւական յուզեր է հայ ազգային ու բուրք կառավարական շրջանները, ունեցեր է արձագանգներ նաեւ արեւմտեան մամուլի մէջ: Շատ մանրամասնել կը գտնենք «Մշակ» և «Արձագանք» թերթերում: Իսկ եւրոպական Eastern Express թերթը այսպէս կը գրէր դէպքի մասին (կը քաղենք այս տեղեկութիւնները «Մշակ»էն, 1883թ. № 4).

— Կարնոյ հայոց գաղտնի ընկերութեան նպատակը հայրենասիրական է, ազգային, յեղափոխական: Անդամները կը պարտաւորին իրոք հպատակութիւն ղեկավարներուն: Գործը վարելու համար սահմանւած են տասնապետներու, հարիւրապետներու և հազարապետներու պաշտօններ: Թէեւ փոքր քանակով, հայոց տուններու մէջ գտնւած են գէնքեր, — ոչ միայն Կարնոյ այլ և դաշուի գիւղացիներու մօտ: Կ. Պոլսոյ անգլ. Դեսպանատան տեղեկութիւններուն համաձայն՝ կը թւի թէ այդ մարդիկ (յեղափոխականները) մէկ ազգանշանի վրա պիտի ելնէին դաշտ ու լեռներ, փոքրիկ խումբերու բաժնւած և պիտի մղէին ասպատակային կողմեր՝ նման Բօսնիա-Հերցեգովինայի ասպատակներուն... Դաւադրութեան շրջանը ըստ երեւոյթի սահմանափակւած է Կարնոյ դաշտով... Ձերբակալուածները կը պատկանին ժողովուրդի խոնարհ խաւերուն: Ըստ ումանց, անոնց թիւը 70 է, ըստ այլոց՝ մօտ 350: Գերապ. Օրմանեանը թիւք լրտեսներով է շրջապատւած: Վարագայ վանքը հսկողութեամբ տակ է: Թէ Կարնոյ բանտի մէջ և թէ «Ազիզիէ» անբոցում փակւած բանտարկեալները ծեծ ու անարգանք կրեն են թուրքերու կողմէ:

Յայտնի քարոզիչներէն յիշատակելու է Ղումրիկեան Կարապետ Էփէնտին, որ դեռ եօթնասնական թւականներուն յեղափոխական պրոպագանտ կը մղէր Պոլսոյ, Երզնկայի, Տերսիմի շրջաններում: Ինիկ Սեբաստացի, առանց որեւէ կրթութեան, բայց բնականէն օժտւած, շատ թափառած, քաջածանօթ իր երկրին և ամբողջ Արեւելքին, խստաբարոյ, գաղափարական գործիչ մը, որու խօսքէն հմայւած, բազմաթիւ երիտասարդներ գացին նոյն քարոզչական առաքելութեամբ դէպի Տարօն ու Սեբաստիա: Մեռաւ 1912ին իր ծննդավայրին մէջ: Մեր Մուրատը (Սեբաստացին) դամբանական յուղիչ ճառ մը արտասանեց, որ տպւած է Կ. Պոլսոյ «Ազատամարտ»ին մէջ, և անւանեց Ղումրիկեանը «Յեղափոխութեան հայր»: Յիշենք նաև Հաճի Գալուստ Արխանեանի, Մինասեանի հրոսախումբերը Երզնկայի ու Սեբաստիոյ շրջաններում, 80ական թւականներու վերջերը, 90ականի սկիզբները:

Ահա և Ժիրայր (Պոյաճեան), Արարօ, Յունօ և ուրիշ Յունօներ ու Արարօներ, որ կը վարեն նոյն դաւադրական աշխատանքը երկրի այլ և այլ անկիւններում, նախքան յեղափոխական կազմակերպութիւններու ծնունդը, ցաք ու ցրիւ, առանց կապի ու սխտեմի:

\*\*\*

Ժամանակը կը հասուննար գիտակցական, կազմակերպւած, նպատակաւոր կուր համար: Մկրտիչ Փորթուզալեան 1885 ին հիմներ էր արդէն իր ազատ տպարանը Մարտէյի մէջ: Առաջին մեծ, հանդիսաւոր, նշանակալից քայլն էր դէպի գործ... Ազատ խօսքը

Ահա ուրիշ մանրամասներ Մշակի նոյն 1883 թւի №№ 12 և 14ի մէջ լոյս տեսած Կարնոյ թղթակցութիւններէն.

— Առաջին գիշերն իսկ քաղաքը պաշարման վիճակի ենթարկուեցաւ, ժամդարմական խումբեր սկսան խուզարկութիւնները... Թուրք խումբի մէջ լուր հանեցին, թէ Կարնոյ հայ եկեղեցու տակ գտնուելու են 6000 հրացան և 6 թնդանօթ... Մինչեւ իսկ 22ուկներ՝ թէ Սեբաստիոյ հայերը յարձակել են թուրք մզկիթի վրա ու կտորներ 200 թուրք... Խուզարկուները գտնուելու են քանի մը թուրքեր (Կարնոյ հայերու մօտ), նաեւ վիճատիկ մեքենայ... Խիստ հսկողութիւն կայ նաեւ վաճառ մէջ, ձիաւոր խումբեր կը պատին գիշերները մինչեւ լոյս... Անգամ Ալաշկերտի մէջ ձերբակալուած են 7 հայեր, որոնք իբր թէ յարաբերութիւն ունէին Կարնոյ գործիչներուն հետ:

նախադուռն է դէպի ազատագրական շարժում: Առանց ազատ խօսքի՝ չկայ և ազատ մարդ... Սկիզբները վարանոտ, զգուշաւոր, տարտամ՝ Փորթուգալեան հետզհետէ սաստկացուց իր թափը, այրեց բոլոր նաւերը և բարձրաձայն հնչեցուց յեղափոխութեան քարոզը: Իր պարզ, անպաճոյճ, բայց համարձակ խօսքով ու տարրական նշանաբաններով, իր ստեղծած «Հայրենասիրական Միութեան» օթեակներով և այն մեծ հեղինակութեամբ, որ կը վայելէր Վասպուրականի հայ երիտասարդութեան մէջ ու դաղութներում՝ «Արմենիա» խմբագիրը սկիզբ դրաւ հայ շարժման կազմակերպւած պրօպագանդին:

Կուրի տենդը կամաց-կամաց կը սաստկանայ բուն իսկ երկրին մէջ: Եւ ատոր հետ միասին քաղաքական ձեռքարկալութիւններն ալ կը դառնան յաճախակի: 1885ին Վանի մէջ բանտ նետուեցան Պալտօզեան, Վարժապետեան, Թոմաս Կեռլեան, Յովհաննէս Շիրվանեան, Մկրտիչ Սէֆրիւսեան: Դեռ 80ական թւականներու սկիզբները, քաղաքական յանցանքով, Գրիգ. եպ. Ալէաթճեան, Մշոյ առաջնորդը Պոլիս տարուեցաւ և միայն 1885ին թոյլտուութիւն ստացաւ վերադառնալու Մուշ: Նմանապէս Արարիկի առաջնորդ Եգնիկ եպ. Ապահունի, որ քանի մը տարի առաջ, Պոլիս փոխադրուած էր, դարձեալ իբրև քաղաքական յանցաւոր, 1886ին միայն կրցաւ վերադառնալ իր պաշտօնատեղը: Դարձեալ Վանի մէջ ձերբակալուեցաւ փաստաբան Մահակ Գալճեան ու Պոլիս տարուելով, բանտարկուեցաւ:

1886ին ձերբակալուեցան Վանում ուսուցիչ Մկրտ. Թերլէմեղեան, ապա Տէհրէզեան, Ժամկոչեան: Տեղի ունեցած յուզումներուն հետևանքով 37 հոգի ձերբակալուեցան այդ միջոցին: Մօտ 10 հոգի կրցան փախչիլ, 7 հոգի ազատ արձակուեցան, մնացածները դատապարտուեցան 3էն մինչև 10-15 տարի բանտարկութեան: Ձերբակալուածներու մէջ էր Նաթանեան, որ աքսորուեցաւ:

Նոյն թւականին բանտ նետուեցաւ Բաշկալէի ուսուցիչ Արգար Պաղաղորդեան, վանեցի Աւետիս Պարթևեան, իսկ Պոլսոյ մէջ՝ Գարեգին Բաղէշեան և Մարգար Բժիշկեան:

1886ի դեկտեմբերին տեղի ունեցաւ գաղտնի ոստիկանութեան խուզարկութիւն Կարնոյ Առաջնորդարանի մէջ: Նոյն ատեն ձերբակալուեցաւ Միացեալ Ընկերութեանց Հայաստանի վարժարաններու ընդհանուր տեսուչ Մկրտիչ Սարեան և փոխ-տեսուչ Մարկոս Նաթանեան: Նոյն դեկտեմբեր ամսու մէջ Վանում ոս-

տիկանութիւնը ձեռք անցուց կիրակնօրեայ վարժարանի աշակերտները՝ Շատախեան, Խոնդիկեան, Մելքոնեան, Ախիկեան, Քանքանեան, Ռուբ. Շատուրեան, Օտեան, Միք. Նաթանեան և այլն: Երեք հոգի աքսորուեցան Գոնիա:

1887-88ին հիմնուեցաւ — նոյնպէս հեռու գաղթավայրում — Հնչակեան Կուսակցութիւնը, որ սպասումի երկարատև շրջանէն յետոյ, կը բանար հայ շարժման ազիտացիական շրջանը (agitation, յուզում): Բայց Թուրքիոյ մէջ այդ կուսակցութիւնն սկսաւ իր աշխատանքը միայն 1890ին:

1890ի Յունիսին — կը գրէ «Արմենիա» նոյն տարւան իր Յունիս 25 առաջնորդողի մէջ — Վան քաղաքում «չորս հարիւր հայեր, չկրնալով դիմանալ Թուրքերի հարստահարող բռնութեան... դինեալ և հեծեալ կը քաշին լեռներ, իրենց բռնած դիրքէն կը կուրին 250ի չափ զինուած Քիւրտերի դէմ, 10ի չափ դետին կը փռեն անոնցմէ և վերջապէս... մի քանի օր անհաց, անջուր պաշարուած մնալէ յետոյ, կը ձերբակալուին և Վան քաղաքը կը բերւին»:

Փորթուգալեան, խանդավառուած, կը յիշէ նաև Գօլօզեանի ու Ազրիպպասեանի հերոսական նահատակութիւնը ատկէ թիւ առաջ, Վասպուրականի Ձխուր Կեստուքի մէջ և կոչ կ'ընէ հայութեան՝ փոքրիկ, խմբական ընդհարումներու տեղ յառաջ բերել «մեծ, արդիւնաւոր շարժում»...

1890ի Յունիսին կատարուեցաւ Պոլսոյ մէջ Գում-Գափուի ցոյցը (Հնչակեաններու ձեռքով, արմենական դործիչներու աջակցութեամբ), որ նոյնպէս ուժեղ ցնցում պատճառեց հայ շրջաններում:

Բայց ամէնէն դուր արձագանգը համայն հայութեան մէջ ունեցաւ նոյն տարւան արիւնահեղ բռնկումը Հայաստանի սրտին մէջ իսկ — Երզրում\*):

\*) Դէպքը, որ պատահեց 1890թ. յունիս 20ին, այսպէս է նկարագրուած «Արմենիա» Նոյն տարւան յուլիս 5ի թւին մէջ.

«Յուզման ու տառնապի մէջ է Հայաստանի մայրաքաղաքը: Պոլիս տեղեկութիւն հասած լինելով, թէ Կարնոյ Հայերը դէնք մթերած են Առաջնորդարանի մէջ, Դուռը հրաման կը դրէ Կարնոյ վալիին, որ միջոցներ ձեռք առնէ... Կիրակի օր զինուորներ ու ոստիկաններ կը խուսէն Առաջնորդարան, ճիշտ այն պահուն, երբ եկեղեցու մէջ պատարագ կար: Եկեղեցին դռնուղ ժողովուրդը լսելով որ Առաջնորդարանը կը խուզարկուի, զայրացած դուրս կը խուսէ եկեղեցիէն եւ կը դիմէ Առաջնորդարան: Հայ մը չկարենալով դիմանալ, կը բաշտէ»

Ռուսը մըն էր, որ պայթեցաւ... Ասես հինաւորց Հայրենիքը իր այեղարդ լեռներով ու սգաւոր դիւցազուններով մէկէն ի մէկ արթնցաւ լեթարգիական մրափէն, — և ցնցող, մրրկաբեր զօղանջով տարածեցաւ կովկասեան Հայաստանի մէջ ազատութեան նոր ուղիները՝

Ձայնը հնչեց էրգրումի հայոց լեռներէն,  
Թունդ-թունդ ելան հայոց սրտեր գէմփի շաչիւնէն...

Կ'երգէին նորարողը Հայրենասէր պատանիները, կ'երգէին ամէնքը այդ ոգեշունչ տաղը, որ նոյն կախարդիչ տպաւորութիւնը կ'ընէր մատաղ սերունդին վրայ, ինչպէս ժամանակին գարիբալդեան ծանօթ հիմնը իտալական Հայրենիքում՝

Si scopron le tombe, si levan i morti  
I martiri nostri son tutti risorti.\*)

Եւ նոյն 1890 թւականին հիմնեցաւ Հ.Յ.Դաշնակցութիւնը:  
Չ'աճապարենք:

\* \* \*

Նախ քան Դաշնակցութեան պատմութեանն անցնելը, տեսնենք թէ ինչ էր այն օրերու ընդհանուր պատկերը Հայութեան միւս հատածին մէջ, — կովկասահայ ժողովուրդի, որ համեմատաբար աւելի բարեկեցիկ վիճակ ունէր և որու ճիգերու ծնունդն էր

ուշիւղէն ու կը պարպէ հարկաբազանի կուրծքին ու կը սպանէ: Ձինւորները կը կրակեն Հայոց վրա: Հայերը բիրերով ու իրենց ձեռքն անցած զէնքերով կը յարձակին զինւորներուն վրա: 4 հայ կը մեռնին, մի քանի ալ թուրք զինւորներ: Ապա զինւորներն ու ոստիկանները կը բաշխեն:

Քիչ յետոյ կը յայտնուի, որ Հայերէն Օ հոգի սպանւեր են և 78 վիրաւորներ: Երկու յոյն ալ սպանւեր են, իբր ջրիստոնեայ: Կաւի ստեղծութեան օգնութեան հասեր է զօրքին (հրգրումի մէջ թուրքերը կրկնապատիկ աւելի էին թուով, քան Հայերը): Յայտնեցաւ նաեւ, որ թուրքերու մէջ եւս բազմաթիւ եղեր են սպանւածներն ու վիրաւորները: Առաջնակարգ դեր է խաղացեր այդ շարժման մէջ Վարդգէսը (Սէրէնգիւլեան): Քաղաքը մի առժամանակ շրջապատու էր զինւորական շրջափակով:

\*) Կը բացւին շիրիմներ, վեր կենեն մեռելներ,  
Մեր բոլոր նահատակներ կեանք կառնեն վերստին:

գլխաւորապէս նոր մարտական-քաղաքական Կուսակցութիւնը, ծնած միութեան կարգախօսով, կոչւած համադրելու մէկ հօր ու ներդաշնակ բանակի մէջ երկրի և գաղութներու բոլոր ըմբոստ, յեղափոխական խմբումները:

Ի՞նչ հոսանքներ ու տրամադրութիւններ կային ռուսահայ մտաւորական շարքերուն մէջ, որոնք ցան ու ցրիւ Երեւանէն մինչեւ Թիֆլիզ ու Մոսկւա կը յուզէին հայութեան ճակատագրի հետ կապւած ցաւոտ հոգսերով և սրտատրոփ կը հետեւէին հայկական խնդրի ելեւէջներուն, ձգտելով իրենց բաժին մասնակցութիւնը բերել անոր լուծման մէջ:

Ի՞նչ վարկ, հմայք ու ազդեցութիւն ունէին եղած յեղափոխական կուսակցութիւնները — «Հնչակ», «Արմենիա» — և ինչո՞ւ պահանջ զգացւեցաւ նորը ստեղծելու:

Սահմանները կը չքանային ռուսահայի ու թրքահայի միջեւ: Ռուս-թրքական պատերազմը, կովկասահայ զօրավարներու առաջնորդութեամբ, թրքահայ հողերու զբաւումը անոնց ձեռքով, ապա նահանջը և գաղթականներուն անվերջ թափօրն ու տառապանքը, թրքահայոց բուռն ապրումները 1876 թւականներէն ի վեր, Վանայ հրդեհը, սովը, Խրիմեանի պոյսոյները Կովկասի մէջ, ռուսահայոց ժողովարարութիւնները, Ազգային Պատգամաւորութիւնն ի Բերլին և ի վերջոյ հայկական խնդրը՝ նւիրագործւած միջազգային դաշնագրով — այդ բոլորը եկաւ ջնջելու դարաւոր անջրպետները ցեղի երկու հատուածներու միջեւ և ստեղծեց ընդհանուր համահայկական կեանք մը, իր յատուկ իդէալներով ու ձգտումներով: Իդէալներ ու ձգտումներ՝ որոնք նոյնքան կը փոթորկէին կովկասահայ ընտրանին իր Բաֆֆիներով ու Արծրունիներով, որքան թրքահայ մտաւորականութեան չքեղ բոյլը իր Խրիմեաններով ու Օտեաններով:

Առաջին անգամ, երկար դարերու թշուառ, տորուած մեկուսացումէն յետոյ, համազգային գաղափարը, որ մինչ այն աղօստեան մըն էր միայն — սեփականութիւն փոքրաթիւ ընտրեալներու — կը դառնար զանգւածները ոգեւորող Ոյժ-Գաղափար, որ շուտով, ի դէմս Հայ Մարտական Կազմակերպութեան, պիտի վերածւէր — կուրի ու տանջանքի ջուրային մէջ — խօսուն, կենդանի իրականութեան:

Առաջին անգամ, երկար դարերու մղձաւանջէն ետք, հայութիւնը՝ Գողթանէն ու Ղարաբաղէն մինչև Մուշ ու Ձէյթուն՝ ըզ-

գաց, որ ինքը մէկ ազգ է, մէկ հող ու արիւն, մէկ լեզու և մշակոյթ, մէկ կրօն ու պատմութիւն:

Ազգային Միութեան գաղափարն էր, որ կը կոչէր, կը պարտադրէր նաեւ միգրելու միութիւնը ընդհանուր, համազգային պայքարի մէջ:

«Ես հայ եմ և ինչ որ հայկական է, չի կարող խորթ, օտար լինել ինձի» — այսպէս պիտի խորհէր Երեւանցին, Շուշեցին, Գիւմրեցին, Կարսեցին, նոյնքան իրաւունքով, որքան Բուլանըսցին, Արաբկիրցին, Սալմաստցին ու Սասունցին:

Եւ այդպէս, ուսահայութիւնն ալ վառեցաւ թրջահայկական գաղափարով, որ այն օրերուն համազգային հերթական և տիրական գաղափարն էր: Այդպէս եղած է աշխարհի բոլոր ծայրերում մեզի պէս յօշոտած ու «մրրկաւ զատւած» բոլոր արթնցող ցեղերուն մէջ: Իդէալը մէկ էր — ճամբաները կարող էին տարբեր լինել: Արծրունի, որպէս պարագլուխ ողուսահայ յառաջադէմ մտաւորականութեան, իր ձեռքն առնելով հայկական դատը—1877-78 թւականներուն—փարեցաւ ողուսական հովանիին և իր դէմ հանեց թրջահայ ընտրանին, որ կառչած էր անդթուրք օրիէնտասիոնին ու յուսով էր անոր շնորհիւ ինքնավար Հայաստան ստեղծել\*):

Պոլսոյ մէջ կեդրոնացած գրեթէ ամբողջ հայ գործօն մտաւորականութիւնը տարւած էր անգլիական հովանաւորութեան երազներով, կը քարոզէր ատելութիւն դէպի «հայկուլ Ռուսաստանը» և ցատումով յետ կը մղէր Ռուսիոյ ամէն միջամտութիւն հայկական գործերու մէջ:

Այդ ողուստեաց մտաւորականներէն մէկն էր Տեւկանց — այսօր սղջ ու խոր ծերութեան մէջ — որ 80ական թւականներու սկիզբը հրապարակ նետեց «Շահէնն ի Սիպիլը» խորագրով պաթեթիկ վէպը, որու մէջ մոռցւած էին թրջական ուժեղ մարհալէրները և որ միայն կրակ ու բոց կը ժայթքէր Ռուսաստանի տիրապետութեան դէմ, խանդավառելով երիտասարդութեան անգիտակից տարրերը, սահմանէն ասդին և անդին: Հակառուս ոգի-

\*) Երբ 1878ի հայ պատգամաւորութեան քարոզչական թափօրի ընթացքին Սերոպայի արտաքին գործոց նախարարները եւ ալ ազգեցիկ մարզիկ կը հարցնէին մերկներուն՝ «կարո՞ղ էք արդեօք ձեր ուժերով պաշտպանել երկիրը, քանի որ ինքնավար Հայաստան կուզէք, նման Լիբանանին», — Երթեման կը պատասխանէր, որ եթէ հայ բռնակիրներուն գէնք տրւի, անոնք կը պաշտպանեն երկիրը...

ով խմբազրւած էր Ներսէս Պատրիարքի համբաւաւոր շրջաբերականը: Հակառուս էին իրենց ճառերուն մէջ և Օսմանեան Խորհրդարանի հայ մէպուսները... մինչ ողուսասէր էր բուն թրջահայ ժողովուրդը, որ կը տապկէր թուրք-քրտական կաթսային մէջ և ցնծութեամբ կը դիմաւորէր Լօրիս-Մելիքովի բանակը... Հակառուս էին Օտեան և ուրիշներ, որոնք իրենց բոլոր յոյսը կապեր էին մէկ կողմէ Անգլիայի, միւս կողմէ Միթհատեան Սահմանադրութեան հետ:

Հակառուս էր և թրջական ուղղութեան կուսակից՝ ինքը Հայոց Կաթողիկոսը, Գէորգ IV, ծնեալ թրջահայ\*): Ռուսաստեաց էր, վերջապէս, կովկասահայ կղերա-պահպանողական նւազ ազդեցիկ կուսակցութիւնը, որ այն ատենները գաղափարակից էր էջմիածնի և իր «Մեղու Հայաստանի» մէջ կը պայքարէր Արծրունիի դէմ\*\*):

Ռուսահայութեան հեղինակաւոր պարագլուխները կը տեսնէին թրջահայոց փրկութիւնը դարձեալ միայն ողուսական հովանիին մէջ: Արծրունի, առանց վարանելու, արտասանեց նոյնիսկ կցում բառը (annexion) և անոր նախաձեռնութեամբ Թիֆլիզի հայ հասարակութիւնը փոխարքայի միջոցով հանդիսաւոր դիմում ըրաւ Պետերբուրգ, աղերսելով որ ցարի կառավարութիւնը իր հայկական հողերուն կցէ և թրջահայաստանը, որ արդէն զրաււած էր (խոշոր մաս մը) ողուս գործերով: Արծրունիի այդ քայլը

\*) Հայկակ-Արփիար հետեւեալ ցասկոս սողերը կը գրէր Մշակի մէջ (1879թ. № 69):

— «Սերոպայն մեծ բան մը շուսալու համոզումը կ'ընդհանրանայ եւ յուսամբ, թէ էջմիածին եւս ըմբռնէ, որ ինքն ալ կոշումն ունի հայ աշխարհի քաղաքական շարժումներուն մէջ... Այս ընդհանուր շարժումի միջոցին էջմիածնի պարսկ կենսին հանելուկ մը դարձած է եւ զայրոյթ կը պատճառէ, եւ այս զայրոյթին թարգման կը հանդիսանայ Մասիս, որ այսօր (25 Ապրիլ) առաջնորդող խիստ կծու յօղած մը կը հրատարակէ վեհափառ Հայրապետի քաղաքականութեան նկատմամբ»:

\*\*\*) Այդ հակառուս արտայայտութիւնները չէին, անուշտ, որ վիժեցուցին հայկական դատը, Բերլինի մէջ, բայց թրջահայ ընտրանիի այդ բացարձակ եւ ազդակից ըմբոստացումը Ռուսիոյ դէմ թերեւս չէր մոռցւած Պետերբուրգի մէջ 1895ի սեւ օրերուն, երբ Լոբանով մէկ կողմէն ջարդել կուտար թրջահայ ժողովուրդը, միւս կողմէն կը յայտարարէր նախանօրէն ի լուր աշխարհի, թէ Ռուսաստանը չուզեր ստեղծել երկրորդ Բուլղարիա մը իր սահմաններուն կից...

դատապարտեցին Պոլսոյ հայ շրջաններուն մէջ, որպէս դաւաճանութիւն.

Արժուոյնի և իր համախոհները չէին բաժնոր պոլսահայ ղեկավարներու այն կարծիքը, թէ իբր հայութիւնը կովկասի մէջ դատապարտած է ձուլելու, կորսնցնելու իր ազգային դիմագիծը: Անգամ Ալեքսանդր Գ. ի յետախաղաց ուժի մի օրով, հակառակ ճնշումներուն և ուսացման հովերուն, հայ տարրը կը յառաջդիմէր, կը զօրանար տնտեսապէս և մտաւորապէս, կը դառնար պատկառելի ազգակ մը համակովկասեան հրապարակի վրայ, օգտւելով հաստատուն օրէնքներէն ու յարաբերական ապահովութենէն — և անհամեմատ աւելի բարօր վիճակ մ'ունէր, քան իր արիւնակից համայնքները սահմանէն անդին: «Պոլսէնիէ», դրաքննութիւն, դպրոցներու ժամանակաւոր փակում, հալածանք հայ դրականութեան ու մշակոյթի դէմ և այլն, — ոչինչ էին հանդէպ այն մտայլ, անյոյս, ողբերգական պատկերի, որ կը ներկայացնէր Թրքահայ ժողովուրդի կեանքը...

Վերջապէս, Ռուսաստանը գլխաւոր ազդակն էր նոյն իսկ Թրքահայոց խնդրի լուծման մէջ. անհնարին էր անգիտանալ անոր գոյութիւնը, եւս առաւել արհամարհել զայն: Կովկասահայերու մտքովն անգամ չէր անցներ այն օրերուն՝ որդեգրել «Շահէն ի Սիպիր» հեղինակին ու նմաններուն դադափարները, անոնք չէին կարող ըմբոստացումի դրօշը բարձրացնել Ռուսաստանի դէմ: Մէկ հատիկ վէրք կար այն ժամանակ հայ ազգային մարմնոյն վրա, խոր, արիւնհոս վէրք մը — քրիստոնոց կացութիւնը — զոր հարկ էր դարձանել ամէն գնով, ազատագրել օսմանեան բռնակալութեան ճանկերէն, — և այդ գործին շուրջ, պէտք էր համախմբել ողջ հայութիւնը: Պէտք էր արծարծել հայկական դատը ուսահայ ժողովուրդի մէջ, լուսաւորել անոր միտքը քոյր հատուածի տառապանքներու և իղձերու մասին, խթանել գոհարբութեան ոգին, գրչով ու խօսքով մղում տալ ազգային ազատութեան մեծ, հրատապ, ստիպողական գործին — Սուրբ Գործին:

Ունենա՛լ ազատ անկիւն մը լայնածաւալ պատմական Հայաստանի մէջ, ուր հինաւուրց քաղաքակիրթ ժողովուրդը կարենար անկաշկանդ թռիչք հաղորդել իր շինարար հանճարին, կազմակերպել իր ուրոյն, ազգային, քաղաքական և իմացական կեանքը, երկար դարերու գերութեան մղձաւանջէն յետոյ...

Այդ էր, անշուշտ, բաղձանքը ուսահայ շրջաններու — ինչպէս և Թրքահայ մտաւորական շրջաններու — պատերազմի

օրերէն ի վեր, երբ վիժեր էր Յուդէոսը և Անգլիա յայտնապէս փարեր էր Թրքամու ուղղութեան, մինչ Ռուսաստանը պաղ, անտարբեր դիրք էր բռնել դէպի հայութիւնն ու հայկական հարցը:

Եւ առաջ եկաւ 80ական թւականներու այն արտակարգ մտաւորական եռուզեռը, որու նմանը ուսահայութիւնը չէր տեսած իր ամբողջ պատմութեան ընթացքին: Աննախընթաց զօրաշարժ մըն էր կեանքի բոլոր մարգերուն մէջ և մանաւանդ դրական-հրապարակագրական ասպարէզի վրայ: Ամէն բան կը դառնար նոյն առանցքին շուրջը: Թրքահայոց ազատութիւնն էր, որ կը հովւէր վիպասանութեան, բանաստեղծութեան, հրապարակախօսութեան մէջ:

Կովկասահայը յարաբերաբար բախտաւոր եղած էր ոչ միայն նիւթական բարեկեցութեամբ: Նա և աւելի մարդաւոր էր ազատութեան հաւատամքի մէջ: Նւազ տրորած օտար լուծին տակ, քան իր Թրքահայ եղբայրը, նւազ համակերպող ու ճակատագրասպաշտ, աւելի խիզախ, գուցէ նաեւ աւելի գինավարժ ու ռազմունակ: Տասնեակ տարիներ իր կիսազատ մթնոլորտին մէջ կովկասահայ երիտասարդութիւնը երգեր էր Նալբանդեանի Ազատն Ասուածը, երգեր էր Ալիշանի, Ռուսինեանի, Պէշիկթաշլեանի, Նար-Պէյի հայրենասիրական երգերը. տասնեակ տարիներ այդ երիտասարդութեան լաւագոյն տարրերը աներ էին նաեւ ուս յեղափոխական վարպետներու երկերով ու դադափարներով: Եւ այժմ ալ կրկնակի խանդավառութեամբ կ'երկրպագէին իրենց նորածին հայրենաշունչ տաղանդներուն:

Ինչպէս Իտալիայում, ինչպէս բոլոր արթնցող ազգերու մէջ, պատմական մրրկածուփ վայրկեանը այստեղ եւս, հայկական միջավայրում, գտաւ իր մեծութեան համապատասխան բանաստեղծը և իմացական ղեկավարը յանձին Փայաջուկցի Վարպետին...

Բաֆֆին — քսան դարու հայ պատմութեան ասօրինակ ստեղծագործող ոյժը, միանգամայն արւեստագէտ և խորհող. Բաֆֆին — բիւրեղ լեզու, ահարկու ոճ, անզուգական գրիչ, որ կը խանդավառէր և կը լացացնէր, որ կարտադրէր իր մտքի ու երեւակայութեան գանձերը բնութեան խօլ կատաղութեամբ ու առատութեամբ: Բաֆֆին — վտիտ, լուրիկ, անշուք, խոնարհ, արեղայական կերպարանք մը, որ սակայն ներքուստ լափող կրակ մըն էր, հրեղէն շատրւան, որ կը ժայթքէր ժողովրդական հոգւոյն խորերէն գոռ, սասանեցուցիչ որոտներով...

Հայոց մեծ Վրիպասանն եւս արապարակ իջաւ ուսմանտիղմի դրօշակին տակ, նման իտալացի Մանցօնիին և լեհ Միցկիվիչին — երկու աշխարհահռչակ գրողներ՝ որոնցմէ իւրաքանչիւրը 19րդ դարու սկիզբը Բաֆֆիի դերը խաղաց իր ստրուկ հայրենիքում: Հայոց Բաֆֆին — աւելի պաթեթիկ, աւելի ցասկոտ ու մոլեգնոտ... Վասնզի հայ տառապանքն ալ աւելի սրտաուռ է, ողբեր-



Ր Ա Յ Յ Ի

գական էր, քան լեհականն ու իտալականը: (Մոլեգին շեշտ ունէր և միւս ուսնափորայի քնարը — Գամառ-Քաթիպայի — որ եղաւ հայ ազատագրական շարժման բանաստեղծը):

Մանցօնի փորձեց չափաւորել, «բարեխառնել» յեղափոխական պրօպագանդը քրիստոնէութեան միատիկ շունչով, խոհակա-նութեան, «ողջմտութեան» քարոզներով... Վրիպեցաւ: Վասն զի ուսմանտիղմը իր էութեամբ թշնամի է նեղ, իրապաշտ և օգտապաշտ հասկացողութիւններու, ուսմանտիղմն ըմբոստ է ընդդէմ ամէն սահմանափակումի, չափի ու շրջանակի: Ազգի մը դժոխս-յին տառապանքներու, բռնակալութեան անհանդուրժելի ճնշում-ներու հանդէպ՝ ժողովրդապաշտ գրողը չէ կարող մնալ պաղ, վերլուծող գիտնականի—բնախօսի, հանքադէտի — զիրքին մէջ. սիրտն ու երեւակայութիւնն ալ հրամայօրէն իրենց տեղն ու իրա-ւունքը կը պահանջեն պատմութեան մեծ սեղանին առջև... Ահա

թէ ինչու հասաւ շուտով Մածծինիի թևերուն վրա ուսմանտիղմի նոր, աւելի արմատական հոսանքը, որ արհամարհանքով յետ մղեց չափաւոր Մանցօնին և քարոզեց իր բոցաշունչ գրածքներով Յեղափոխութեան արիւնհավառ վարդապետութիւնը, ուր այնքան դեղեցիկ է, վիպական է Իդէալի մոլեռանդ պաշտամունքը, դեղեցիկ է, վսեմ է գաղափարային անդուստլ յափշտակութիւնը և ջինջ, անվերապահ, հերոսական անձնագոհութեան սլացքը... Հեռու ծոյլ պատեհապաշտութիւնը, կեցցե՛ն յանդուզն ու սիւքոտ թռիչքները...

Եւ այնուհետև, Մածծինիի ղեկավարութեամբ, Իտալիայի հայրենասէր երիտասարդութիւնը դեռ ամբողջ քառասուն տարի դալարեցաւ բռնակալական զնդաններու մէջ, կախաղաններու վրա — այնուհասակի և անողորք ճակատագիր բոլոր ստրուկ ժողովուրդներուն — բայց ատով հայրենիքը փրկեցաւ:

«Իտալիան աշխարհագրական բառ մըն է (expression géographique), Իտալիան մեռելներու երկիր մըն է» — կ'ըսէր աւստրիական բռնապետութեան Համիդը՝ Մետեմիխ\*): Մածծինի խնդաց այդ անարգական բացականչութեան վրա, կոչ ըրաւ ազգի թարմ, կենսունակ տարրերուն — իտալական դէմօսին — և մեռելը յարութիւն առաւ 50-60 տարիներու արիւնհալի մաքաւումներէ վերջ:

Հայկական ուսմանտիղմը առաջին իսկ օրերէն ստացաւ քաղաքական-արմատական դունաստրում: Ձերժ Միցկիվիչի սլավոնական mystiqueէն, զերժ Մանցօնիի քրիստոնէական ծոյլ, թմրեցուցիչ ազդեցութիւններէն: Հայոց ուսմանտիղմի Ռաբբին դեռ երիտասարդութեան օրերուն — երբ լալով ու հատաչելով կը շրջէր Վասպուրականի հայրենեաց աւերակներու, հին-հին դարուց յիշատակներու մէջ և կը յորինէր իր մելամաղձոտ ու սրտաուռ «Չա՛յն տուր ո՛վ Մովսիս» — վաղաժամ ազատազրկեցաւ կրօնական Ֆէտիշներէն, հրաժարեցաւ աղաւինելի ղթառատ աստուածներու խնամքին, որոնք երբեք չժպտեցան հայ վատաբախտ ժողովուրդին և քարոզեց ինքնապաշտպանութեան, ինքնօգնութեան աւետարանը, կոչ ըրաւ, Մածծինիի պէս՝ իր հարազատ դէմօսին, հայ տառապող, վաստակաւոր զանդաւածին և գոռաց

\* Մեռելութեան, յաւիտենական ստրկութեան դատապարտած էր այդ դաժան սատրապը Հարսուրդեան կայսրութեան միւս ազգերն եւս — լեհ, լեհ, մաշաւ եւ այլն, որոնք այսօր կը ներկայացնեն անկախ ազգ-պետութիւններ:



տաճիկ Մետերնիխին, որ նոյնպէս խաչ քաշեր էր Հայաստանի ու հայութեան վրա .

— Ո՛հ, Հայաստանը գերեզմանոց չէ, հայ ազգը դեռ մեռած չէ... Մեռեր են, այո՛, անյուսօրէն այլասերներ հայ հողերը ու առևտրական դասակարգերը, որոնք այլ ևս անպէտք են ազգային վերածնութեան համար, բայց կայ հայ հայ շինարար, աշխատաւոր դէմօսը, կայ, մեռած չէ և պիտի շարժի, ի դէմս իր պաշտօն, գաղափարական փոքրամասնութեան, ու իր տեղը պիտի պահանջէ Արեւին տակ...

Յեղափոխութեան աւետարանը, որ կցկտուր ձևերով իրմէ առաջ քարոզեր էին իր մեծանուն նախորդները, ինքը սկսաւ քարոզել համադրած, ամբողջացած իր նախադիմ-վէպերուն մէջ, պարզ ու յստակ իրենց թափանցիկ, վիսպական վարագոյրին տակ:

Կայծեր, Խենթ, Ջալալեդդին կը կրկնէին Ալիշաններու, Խրիմեաններու հին յանկերզը — Հայրենիք, Ըմբոստացում, Ազատութիւն — բայց կը կրկնէին դիւթիչ բարբառով, շքեղ, պատկերաւից և յուզումնալից:

Գաղափարը այդ վէպերով իջաւ բանականութեան բարձունքներէն, դուրս նետուեցաւ հայոց Ընտրանիի սահմանափակ շրջաններէն, մտաւ գանգաւորներու սրտին խորքերը և յառաջացուց յուզումի ու հառաչանքի, բողոքի ու ցասումի, խանդավառութեան, արիւթեան ու անձնագոհութեան աննախընթաց հեղեղ մը ողջ հայութեան մէջ, — հեղեղ մը, որ քնից տարաւ բոլոր տարակուսանքներն ու վարանումները և նետեց ցեղի գգայուն, գաղափարական հատուածները դէպի արիւնոտ կրկէսը... Հայկական ուսմանտիզմը պատերազմի դաշտ իջաւ Բաֆֆիի փոթորկածայն շեփորի որոտներուն տակ:

\* \* \*

Տեղ-տեղ, ուսուսակներու մէջ, դեռ 80 ական թւականներու սկիզբները, ծնունդ առին դաւադիր ընկերութիւններ՝ Ս. Գործի նախաձեռնութիւնը ստանձնելու և թրջահայերուն օժանդակելու նպատակով: Ամենէն հինը և նշանաւորը ատոնց մէջ Մոսկուայի հայ ուսանողներու ընկերութիւնն էր, որ հիմնուեցաւ էրզրու-

մի 1882ի դէպքին հետեւանքով և ունեցաւ իր բերան-օրգանը, 1883 թւականին — Ազատութեամբ Աւետարեք անունով\*):

Դարձեալ հեռաւոր գաղթավայրում... Մոսկուայի մէջ, ուր վաղուց ի վեր հաստատուած էր Հաղարեան ձեմարանը — հայ մշակոյթի մեծագոյն ոտանոցներէն — և ուր ատկէ քառորդ դար առաջ հրատարակներ էր Նազարեանի և Նալբանդեանի Հիւսիսափայլը: Կովկասի մէջ անգամ, այն ատենները անհնարին էր գլուխ բերել նման ձեռնարկ:

Մեր առջեւ դրած են ասկէ 48 տարի առաջ հրատարակուած այդ խմորատիպ\*\*\*) թերթի 2 թիւեր — բարեբախտաբար, դեռ ընթեռնելի — որոնց վրա, անշուշտ, շատ գլուխներ են կորացեր կէս դար առաջ, շատ արցունքներ գլորուեր: Ռուսահայոց ամենահին յեղափոխական թերթն է:

Մեռեր են անոր դրեթէ բոլոր նախաձեռնողներն ու խմբագիրները — Դաւիթ և Թամարա Ներսիսեաններ, Միքայէլ Չալեան, Մարգար Արտեմեան (բժիշկ-ուսանողներ), Արբահամ Դաստակեան, Սիմէոն և Սրապիոն Տէր-Գրիգորեան և այլն: Շատերը հետագային՝ անդամներ կամ համակիրներ է. Յ. Գ. Դաշնակցութեան: Այդ անդրանիկ փաղանգէն ողջ մնացած է թերևս միայն Ներսէս Արէլեանը: Եւ, ինչպէս մեզի կը պատմէր գործին սիւներէն մէկը, հանդուցեալ բժիշկ Չալեան ասկէ 15 տարի առաջ ժընեւի մէջ, թերթի գլխաւոր խմբագիրն ու հրատարակագիրը եղած է նա ինքը՝ Ներսէս Արէլեան\*\*\*):

\*) Կար նաև Պետերբուրգի մէջ հայրենասէր հայ ուսանողներու ընկերութիւն, որ կապ կը պահպանէր Մոսկուայի խումբին հետ:

\*\*) Մաս մըն ալ հրատարակուած է մեքենագիր:

\*\*\*) Ահա թէ ինչպէս կը ներկայացնէր հանգուեալ բժիշկը այդ պատմական դրագը:

— «1880 թւականին Մոսկուա գնալով, գտայ այնտեղ Ներսէս Արէլեանը, Մ. Արտեմեանը, Դաւիթ Ներսիսեանը: Վերջինս ձեռքադրել էր, որպէս մասնակից ուսուցիչ յեղափոխական շարժման, շուտով սակայն ազատ էր արձակուել... 1883ի աշնան եկան Մոսկուա Սիմոն և Սրապիոն Տէր-Գրիգորեանները, երաւարանութեան ուսանողներ, ապա և Թամարա Ներսիսեանն ու Արբահամ Դաստակեանը: Կազմեցինք Հայրենասիրաց Միութիւնը: Հիմնադիրը իրօք Դաւիթ Ներսիսեանն էր, միւս անդամները՝ Թամարա, Արէլեան, Դաստակեան, Չալեան, Արտեմեան, Վէրելեան: Հիմնեցինք «Ազատութեան Աւետարեք»ը, խմորատիպ: Ապա և սպարան գնեցինք 100 ուրլով. բայց զիջ օգտուեցանք, հրատարակութիւնը երկար շաբաթ: Հետագային այդ տարեքը ինքս տարայ Թիֆլիզ և նրանցով սպեցին «Դաշնակցութեան» առաջին թուոցիկները: «Ազատութեան Աւե-

Հետաքրքրական են այդ առաջին օրգանի տեսական հայ-  
կացիները, անոր ընկերային-քաղաքական աշխարհահայեացքը,  
որմէ ներշնչած են մի քանիսը մեր մեծ ընկերներէն, — Հ. Յ.  
Դաշնակցութեան հիմնադիրներէն:

Ուստի հարկ է փոքր ինչ կանոն առնել Ազատութեան Աւետա-  
բերին մտա:

Ճակտին տպւած է «Միութիւն Հայրենասէրներէ»: Էմբլեմը  
— դաշոյն և ատրճանակ:

«Հայաստանի բազմաչարչար ժողովրդի դարևոր վիշտը —  
այսպէս կը սկսի առաջին թիւի խմբագրականը — և նրա ազա-  
տութեան գաղափարը սկիզբն և կեանք տւին «Հայրենասէրների  
Միութեանը»: Սկսելով իր յեղափոխական գործունէութիւնը, «Հ.  
Մ.»-ը պարտք է համարում պարզել այն հիմնաւոր գաղափարնե-  
րը, որոնք կազմում են նրա գոյութեան հոգին...

«Հայրենասէրների Միութեան» պատգամներից մէկն է ազ-  
գերի համերաշխութիւնը... Ուստի մենք քարոզում ենք սերտ հա-  
մերաշխութիւն Հայաստանում բնակող ազգերի մէջ...») Մենք  
հաւասարաչափ յարգում ենք իւրաքանչիւր ազգի լեզուն, կրօնը և  
անկախութիւնը, եթէ միայն նա չէ ձգտում հարստահարել ուրիշ-  
ներին, արգելք չի դնում ուրիշների կանոնաւոր զարգացման...

«Ժողովրդի ազատութեան հիմնաքարն է նրա տնտեսական  
անկախութիւնը: Ուստի «Հ. Մ.»-ը աշխատելու է, որ երկիրը,  
հողը իր բնական հարստութիւններով և աշխատանքի գործիքները  
դառնան աշխատաւորների, բանւորների սեփականութիւն: Եթէ  
Հայաստանի աշխատող, արդիւնաբերող ուժերը՝ երկրագործը,  
արհեստաւորը, մշակը տնտեսապէս հարստահարւելու են, — «Հ.  
Մ.»-թեան աչքում ոչ մի քաղաքական ազատութիւն միտք և նշա-  
նակութիւն չունի: «Հ. Մ.»-թեան ատելի են թէ քիւրդ ասպատա-  
կող շէյխը, թէ թուրք ճնշող պաշտօնեան և թէ հայ հարստահա-  
րողները...

... «Մենք թշնամի ենք ներկայ առանձնական, բաժան-բա-

տաբերձի դիւաւոր դրողը Արէլեանն էր, մեր խմբի մէջ ամենահինը եւ փո-  
ճառուն: Որոշած էր թերթը դարձնել զուտ հայրենասիրական օրգան, ներւած  
թուրքահայ դատին: Բայց Արէլեան, յափշտակած ուսուսական սօյիակցով,  
յաճախ պտոյանք կ'ընէր նաեւ այդ վարդապետութեան աշխարհում: Մեր  
խումբը մի փոքրիկ նամայնէ էր: Պ'ապրէինք ամենքս մէկ բնակարանի մէջ,  
ընկերովի, մեր ամսականները միացուցած, մէկտեղ ալ կը կերակրէինք, սե-  
փականութիւն չէինք ճանչնար...

\*) Թերթի 3րդ թիւին մէջ ըսած է աւելի որոշ. «բազմատեսակ ազգերի  
հարստահարող ուժերի մէջ»: Մ. Վ.

ժան՝ կազմակերպութեան, որտեղ տկարը անօգնական է, իսկ  
ուժեղը հարստահարող և անգութ: Մենք քարոզում ենք ընկերական  
միաբանութիւն, որտեղ ընդհանուրը հոգում է իւրաքանչիւրի հա-  
մար, իսկ իւրաքանչիւրը ընդհանուրի համար: Ահա ինչու բոլոր  
մասնաւոր կալւածատէրերի և պետութեան ձեռքի հողերը պէտք  
է անցնեն համայնքների ձեռքը. համայնքը միակ սեփականատէրն  
է, միակ սպառողն է, որովհետև նա միակ աշխատող, արդիւնա-  
բերողն է: Միևնոյն ժամանակը համայնքները ներկայացնում են  
այն սկզբնական քաղաքական տարրերը, որոնցից պէտք է կազմվի  
ընդհանուր քաղաքական դաշնակցութիւն, Ֆեդերացիա»:

Այս է մօտաւորապէս «Ազատութեան Աւետաբեր»ի հաւատոյ  
հանգանակը, անոր ընկերային աշխարհայեացքը:

Համակերելի է, ի հարկէ, և նոյն իսկ գործնական պայքարի  
տեսակէտով բանաւոր ու անհրաժեշտ է ազգերու համերաշխութեան  
և եղբայրութեան սկզբունքը — բան մը, որ հետագային քարոզեր  
է Հ. Յ. Դաշնակցութիւնը: Միայն «Աւետաբեր»ի խմբագիրները  
ներշնչած էին ոչ թէ արեւմտեան, այլ ուսու ինքնատիպ ընկեր-  
վարականներէն, որոնք սկիզբէն ի վեր ներկայացուցին տարածերժ-  
աղանդ մը համաշխարհային ընկերվարական հոսանքին մէջ: Ռու-  
սական ընկերվարութիւնն է, (տեղ-տեղ բուն իսկ Բակունինի  
ոգին), որ կը խօսի «Ազատութեան Աւետաբեր»ի էջերում,  
մասնաւորապէս այս տողերուն մէջ. «Եթէ Հայաստանի աշխատող,  
արդիւնաբերող ուժերը՝ երկրագործը, արհեստաւորը, մշակը տըն-  
տեսապէս հարստահարւելու են, «Հ.Մ.»-թեան աչքում ոչ մի քա-  
ղաքական ազատութիւն միտք և նշանակութիւն չունի»:

Ուրիշ խօսքով, մեր այդ առաջին ընկերվարականներու աչ-  
քին միևնոյն է՝ լինի՞ երկրի մէջ սուլթանական բռնապետութիւն,  
թէ ազատ-ոսմկավար-գլխցերական հանրապետութիւն, որու մէջ  
նոյնպէս չկայ տնտեսական հաւասարութիւն և աշխատաւորները,  
բանւորները չեն ստանար իրենց աշխատանքի լիակատար, արդար  
վաստակը... Այդ անտարբերութիւնը դէպի քաղաքական կազմակեր-  
պութեան ձեւերը սկիզբէն ի վեր եղեր է ուսու ընկերվարականնե-  
րու ամենէն յատկանշական գիծերէն մէկը — որմէ չափազանց  
տուժեր է միշտ Ռուսաստանի ազատագրութեան գործը: Այդ գիծը  
առանձնապէս կը շեշտէր ուսու մարքսիստներու և անիշխանական  
բակունիստներու մէջ: Նարոյնայա վօլիա կուսակցութիւնը փոքր  
ինչ բարեխառնեց այդ միակողմանի հոսանքը, ուժգին շեշտելով  
քաղաքական կուլի (բռնապետութեան տապալումի) անհրաժեշտու-  
թեան վրա, բայց անոնք եւս — նարողովորեցները — չափազանց

մեծ տեղ կուտային ընկերային խնդրին և ընկերվարական պրոպագանդին 70ական, 80ական թւականներու խաւար, յետամնաց, թշւառ ու խոպան Ռուսաստանի մէջ, ուր արդիւնաբերող բուրժուազին և գործաւոր պրոլետարիատը գրեթէ տակաւին սաղմի մէջ էին...

Նոյն այդ ոռւսական գիծը (ընկերվարութեան և ընկերային կարգերու ուժեղ շեշտումը ծրագրի ու տակտիկի մէջ) «Հնչակ»ի միջոցաւ փոխադրեցաւ հայկական իրականութեան մէջ — «Ազատութեան Աւետարներ»էն չորս հինգ տարի յետոյ — բայց շուտ չքացաւ, այդ կուսակցութեան վաղաժամ պառակտումին հետ: Հ. Յ. Դաշնակցութիւնը հիմնապէս սրբազրեց գայն, ընդունելով վարդապետութիւնը իր արեւմտեան կաղապարով: Ռուսական որոշ ազդեցութիւններ մնացին, այնուամենայնիւ, մեր ծրագրի մէջ ևս:

«Նարոզնայա Վոլիա»\*) հերոսական կուսակցութեան\*\*) հաւատամքէն փոխ առած են նաև «Ազատութեան Աւետարներ»ի այս տողերը.

— «Մարդկութեան միակ հիմնական ձգտումն է—հասնել երջանկութեան, հասնել մի այնպիսի հասարակական և կուլտուրական դրութեան, որտեղ իւրաքանչիւր մարդու Փիղիքական, մտաւոր և բարոյական զարգացումը համահաւասար ապահովված լինի»:

Լավրովի ձեւակերպած հիմնական սկզբունքներէն մէկն է այդ, որ յետոյ անցաւ նաև Դաշնակցութեան աշխարհայեացքի մէջ:

Ապա Մոսկւայի հայ անդրանիկ յեղափոխական օրգանը կը լուսարանէ ճշմարիտ հայրենասիրութեան հաւատամքը և կռիւ կը յայտարարէ մէկ կողմէ թթու ազգայնամոլներու (չովէններու) դէմ, որոնք «ատելով օտար ազգերին, երեւակայում են, որ սիրում են իրենց հայրենիքը», միւս կողմէ անգոյն համաշխարհաքաղաքացիներու դէմ, որոնք «համամարդկութեան, կոսմոպոլիտիզմի քողով են ծածկում իրանց ոչնչութիւնը»:

\*) «Ժողովրդական Ազատութիւն»:  
\*\*) Այդ այն կուսակցութիւնն է, որ 80ական թւականներու սկիզբներուն աշխարհ դրդացուց իր դիւցազնատիպ հերոսներով (Ժելեարով, Սոֆիա Գերովսկայա, Պայուսիկ և այլն) և և իր դաւադրական սխրագործութիւններով — տերբօր, ահաբեկում բարձրաստիճան պալատեաններու, ուժանակային պաթլումներ արքայական պալատին մէջ, ի վերջոյ, ցար Ալեքսանդր Բ-ի սպանութիւն օր ցերեկով ռուսներու տարափին տակ — վայրկեան մը հասցուց ցարական ահաբեկ բռնապետութիւնը հոգեվարքի դուռը:

Տեսական երկարաշունչ պատճառաբանութիւններէն յետոյ, կուգայ վերջապէս, «Ազատութեան Աւետարներ»ի այժմէական, հրատապ խնդրի՝ նպատակի ձեւակերպումը.

— «Եթէ Հայաստանի ժողովուրդը հարստահարում է, եթէ նրա ստացվածքը, նրա աշխատանքի պտուղները յափշտակվում են, եթէ նրա մարդկային սուրբ իրաւունքները և զգացմունքները ոտնակոխ են լինում, անկասկած այս բոլոր շարիքների սկզբնապատճառը թիւրքիայի բարբարոս կառավարութիւնն է, նա ինքն է ամենամեծ հարստահարողը, աւագակը, որի հովանաւորութեան տակ ապրում և գործում են մնացեալ փոքր ասպատակողները և արիւն ծծողները: Ուստի «Հայրենասէրների Միութիւնը» մահառիթ պատերազմ է յայտարարում թիւրքիայի կառավարութեանը... Մ-ը իր բոլոր պատրաստի ուժերը ուղղել է ոչնչացնելու նրա վարակված պետական կազմվածքը, որը կաշկանդել է ազգենրի կանոնաւոր զարգացումը: Այս ծանր պատմական խնդիրը իրագործելու համար հարկաւոր են... անձնէր, նահատակութեան ընդունակ գործիչներ և նիւթական միջոցներ»...

Մոսկւայի «Հայրենասէրների Միութիւնը» իր թերթի առաջին թիւին մէջ խանդավառ բառերով կը պանծացնէ 1882ի Կարնոյ քաղաքի դաւադրութիւնը, անոր հեղինակները.

— «Հայաստանի վշտակիր ժողովուրդը ապստամբութեան էր պատրաստվում... Բայց մատնիչները հայերի միջից դեռ չեն անհետացել: Նրանք մատնեցին հայ գործիչներին տաճիկ կառավարութեանը, իսկ սա յարձակվելով հայ գիւղերի վրա... կալանաւորեց և բանտարկեց հարիւրաւոր մարդիկ իր մութ և խոնաւ բանտերի մէջ... Ուրախանանք, Հայեր, որ վերջապէս, Հայաստանի կենտրոնից հնչեց ապստամբութեան փողը...»

..... «Եթէ այդ ապստամբութիւնը մի փոքրիկ, մասնաւոր խմբի բան չէ, այլ բուն ժողովրդական շարժում է — այդ տեսնում ենք նրանց, որ Կարինի անցքի առիթով կալանաւորւածները ներկայացնում են ժողովրդի համարեա բոլոր դասակարգերի մարդիկ, այն է՝ գիւղացիք, արհեստաւորներ, բանւորներ, առեւտրականներ և այլն»:

Յօդւածը կը վերջանայ սրտառուչ կոչով մը.

... «Հաւատով և անվեհեր շարունակե՛նք սկսած գործը: Թո՛ղ գիտնականը նւիրէ իր մտաւոր ուժերը, թո՛ղ ունեցողը չբխնայէ իր ոսկին, երիտասարդը զոհ բերէ հայրենիքի ազատութեան իր անձը, իսկ հայ ծնողները... պատրաստեն իրենց օրդկերանցից հայրենիքի ապագայ պաշտպաններ...»

«Բայց ամենից առաջ, հայեր... պարտականութիւն կայ մեզ վրա՝ շարունակել մեր օգնութիւնը Հայաստանի այն թշւառ ընտանիքներին, որոնց աշխատաւորները դեռ ևս տոչորվում են»

խոնաւ բանտերի մէջ. ո՞վ գիտէ, նրանցից ոմանք կը մեռնին, ոմանք կաքսորվեն հայրենիքից, ո՞վ գիտէ ուր»...

Քիչ կը տարածւէր, բնականաբար, այդ խմորատիպ հրատարակութիւնը — և արդէն, ինչպէս տեսանք, երկար կեանք չունեցաւ նա: Շարք մը համարներ լոյս տեսնելէ յետոյ, ոուս ոստիկանութեան թաթն իջաւ «Հայրենասէրների Միութեան» վրա և թերթն ալ խափանեցաւ: Բայց «Ազատութեան Աւետարներ»ը, յեղափոխութեան և ընկերվարութեան անդրանիկ բանբերը\*) ոուս սահայոց մէջ, չանցաւ առանց հետք թողնելու Ռուսաստանի և Կովկասի մեր մտաւորական շարքերուն մէջ:

\*) Չենք մոռնար, որ հայոց առաջին ընկերվարականը Միքայիլ Նալբանդեանն էր, որ մօտիկ չփում ալ ունեցեր էր ՅՕական թւականներու ոուս մեծանուն աքսորականներուն հետ — Հերցեն, Բակունին, Օզարեով — բայց Նալբանդեանի ընկերվարութիւնը դեռ շատ խալ էր, տարտամ, մուշայի և երբեմն այն տպաւորութիւնը կընէ, որ կարծէք «ի միջի այլոց» բան մըն է, պատահական մարդանք մը անոր լուռն, տենդային, հայրենասիրական հրապարակազրութեան մէջ... «Ազատն Ասուած»ի, «Մեր Հայրենիք»ի հեղինակը ամենէն առաջ ջերմ, խանդավառ հայրենասէր մըն էր: Մոսկուայի ուսանողները աւելի լաւ իւրացուցած կերեւին բուն ընկերվարական վարդապետութեան հիմունքները, որ եւ ինչ-չառ յտակօրէն ցուցադրած են «Ազատութեան Աւետարներ»ի իրենց հակիրճ յօդածներուն մէջ: Բնականաբար, ընկերվարութիւնն ալ, իրբեւ շարժում ու վարդապետութիւն, մեծապէս յտաջաղիմեր էր, պարզ ու յստակ ձեւակերպւեր, շուրջ քսան տարիէ ի վեր, Նալբանդեանի օրբէն մինչեւ 1883 թւականը:

II

2. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Թիֆլիզեան խմորումներ և խումբեր. — «Ազգային» և «Միջազգային» — Ռուսահայ գաւառը. — Քանի մը յուշեր. — Թրփահայ առաքելները Թիֆլիզի մէջ. — Չափրեան, Սարկաւագ, Յուսո. — «Դաշնակցութեան» երկումէր և Գրիգոր Արծրունի. — «Հայ Յեղափոխականներու Դաշնակցութիւնը» և «Հնչակ». — Միութեան բանակցութիւններ և վիժում. — Հնչակեան կուսակցութեան գործը. — Պառակտում. — Հ. Յ. Դաշնակցութիւնը հրապարակի վրա. — Կուկունեանի արշաւանքը.

Ուժգին խմորումներու թատր էր մանաւանդ հայկական Անդրկովկասը: Մեծ էր եռուզեռը Թիֆլիզի մէջ, ՅՕական թւականներուն:

Սունկի պէս կը բուսնէին կովկասեան մայրաքաղաքի մէջ գաղտնի ընկերութիւնները: Ազգային բնոյթ չունէին անոնք: Բաֆֆին վառեր էր ոուսահայ գանգաւոր, բայց դեռ հոսանքը չէր սկսեր դէպի սահմանի միւս կողմը:

«Դէպի Հայաստան» կոչնակը դեռ չէր տւեր ուժեղ, մասային արձագանգ: «Կայծեր»ը հրատարակեցաւ առաջին անգամ 1884ին միայն: Թրքահայ դատը կը զրադեցնէր առ այժմ գլխաւորապէս ձեմարանի, Ներսիսեանի ու այլ դպրոցներու աշակերտները, որոնք Բաֆֆի, Պատկանեան կը կարդային և կը հրահրէին ազգային պատմութեան ու գրականութեան ուսումնասիրութիւնը:

Տարբեր հովերով էր տարւած բարձր մտաւորականութիւնը, ինտելիգենցիան: Գաղտնի ժողովները անոնցն էին:

Սկիզբը անմեղ, զարգացողական ժողովներ էին: Կը պարապէին ընթերցանութեամբ, ինքնադարգացմամբ: Կը կարդային մեծ մասամբ արմատական բնոյթ ունեցող բնափիլիսոփայական և ընկերաբանական հեղինակութիւններ: Դարվին, Ֆոխտ, Սպենսեր, Մարքս, Լասսալ և այլն: Երիտասարդութիւնը կը ստանար մայրաքաղաքէն և կը տարածէր ոուս գաղտնի, յեղափոխական գրականութիւն:

Ձուտ ազգային խնդիրներով չէին զբաղեր: Պարապմունքները կընթանային միջազգային նշանակին տակ: Մեծագոյն խնդիրը, որ ամենքը կը յուզէր ու կողմնորէր, Ռուսաստանի ճակատագիրն էր: Հակառակ տիրող բէականոնին, որ սկսաւ Ալեքսանդր Բ.ի սպանութեան և Լօրիս-Մելիքովի հրատարականի օրերէն, ամենուն մէջ վառ էր հաւատը, որ նոր, ազատարար ցնցումները անխուսափելի են կայսրութեան մէջ (Իսկ ոռու յեղափոխական շարժումը մարեր էր իրօք... ընդերկար):

Դեռ շատ կային «Նարոզնայա Վոլիա»ի կուսակիցներ կովկասեան մտաւորականութեան մէջ, ոռու, հայ, վրացի: Ռուսահպատակ բոլոր ազգերու համերաշխութիւնը բռնապետական կարգերուն դէմ՝ ամենէն հրապուրիչ նշանախօսքն էր այդ երեք ազգերու վերին, գիտակից խաւերում: Կար մինչեւ իսկ Թիֆլիզի մէջ խառն ընկերութիւն մը, բաղկացած հայերէ, ոռուերէ, վրացիներէ: Հայ արմատական երիտասարդութիւնը կը ներկայացնէր այդ կրօնովի մէջ Աբրահամ Դաստակեան, որ հետագային աջ սորուեցաւ և ազատուելէ ետք գործօն մասնակցութիւն ունեցաւ Դաշնակցութեան հիմնարկէքին մէջ ու եղաւ անդամ այդ կուսակցութեան առաջին «կեդրոնին»:

Քրիստափոր կուտայ քանի մը տեղեկութիւններ այդ հետաքրքրական շրջանի մասին՝ իր յուշատետրի մէջ, տարարատարար, շատ համառօտ և կցկտուր:

«Երիտասարդութեան իդէալներու բնոյթը կ'որոշէր մինակ «Նարոզնայա Վոլիա» կուսակցութիւնը, որ այն ժամանակ կը տիրէր կովկասեան երիտասարդութեան բոլոր զգայուն ու գիտակից տարրերու մտքերուն: Միջազգային ընկերվարութիւնն էր այդ իտէալը, որ կը պահանջէր անձնագոհ և անվերապահ կռիւ կեանքի հին ձեւերու դէմ: Տեղական, ազգային կամ գուտ քաղաքական բնոյթ կրող ոչ մի հարց ոչ ոքի միտքէն չէր անցնէր: Ռուսը, վրացին, հայը, հոգով միացած ընդհանուր, աշխարհաքաղաքացիական իդէալի հանդէպ, կը ճանչնային միայն մէկ նպատակ և կուր միեւնոյն միջոցներ... Նոյն ուղղութիւնը կը նկատուէր ինքնազարգացողական բոլոր խմբակներու մէջ...»

Հայրենասիրական փոքրիկ խումբերն ալ կը մղէին իրենց պրոպագանդը, կը հրատարակէին նոյնիսկ գաղտնի խմորատիպ թերթեր ու թուոցիկներ («Հայրենասէր Ձայն», «Մունետիկ» և այլ անուններով), երբեմն նոյնիսկ հակացարական յօդուածներ, ուր կոչ կ'ընէին ըմբոստանալու կառավարութեան դէմ, որ փակեր էր հայ դպրոցները (1884ին):

Կամաց-կամաց, Թրքահայաստանի ծանր դէպքերու մղու-

մով՝ միւս, «կոսմոպոլիտ» հայ ընկերութիւններն ալ թեքեցան դէպի ազգ ու հայրենիք: Եւ այդ թեքումի մէջ ղեկավարող դեր խաղաց ինքը Քրիստափորը:

Թիֆլիզէն խմորումն անցաւ դէպի դաւառական կեդրոնները: Ամէն տեղ կը հիմնէին խմբակներ, միանգամայն հայրենասիրական և յեղափոխական: Հեռուոր Ղարաբաղի մայրաքաղաքում գաղտնի ընկերութիւնը — «Ոյժ» անունով — ձգեր էր իր ցանցը նաև ոռու պետական (ռէալական) դպրոցի աշակերտներուն մէջ: Կը կարդային արգելած գիրքեր, կարծարծէին ազգային գաղափարը, կը քաջալերէին մայրենի լեզուի, պատմութեան, դրականութեան ուսուցումը և այլն: «Ոյժ» ընկերութեան անդամներն ալ հետագային մեծ մասամբ համախմբուեցան Դաշնակցութեան դրօշին տակ:

Գոյութիւն ունէին նոյն ընկերութիւնները և Բագուի, Երեւանի մէջ:

Թիֆլիզի հայրենասիրական խումբերը երբեմն — երբեմն մարդիկ ալ կը ղրկէին — սուրհանդակներ — դէպի Թուրքաց Հայաստան՝ գետինը շօշափելու և ուսումնասիրութիւններ կատարելու նպատակով: Այդ սուրհանդակները, որ կը ճամբէին դեռ 80-ական թւականներու սկիզբները, բաւական խոշոր թիւ կը կազմեն. Ձաքի (Թաւաքալեան), հետագային վարդապետ, որուն կը հանդիպենք Դերիկի նշանաւոր կռիւներու ատեն, նոյնանուն վանքի մէջ, Սանդալ (Պետրոսեան), որ առաքելն էր Մոսկուայի «Ազատութեան Աւետարներ»ի, Տիգրան Փիրումեան, Արսէն Թոխմախեան, Լեւոն Սարգսեան, Հայկ Մելիք-Դադայեան, Դարալագեազցի Տէր-Գրիգոր, Ղարամելիք (Բարսեղ Մելիք-Գրիգորեան, հետագային դաշնակցական կարեւոր գործիչ), Մկրտիչ Ղազարեան և ուրիշներ: Կերթային ոմանք թրքական կամ քրտական տարադովուրիշներ, որպէս պարզ ուխտաւորներ Մշոյ Ս.Կարապետի, ամիսներով կը շրջէին, կը գետէին երկիրը, ժողովուրդը, անցուղարձը, և կը վերադառնային, առանց շօշափելի հետք ձգելու: Լուրեր կը բերէին Խրիմեանէն ու Փորթուզալեանէն կովկասեան գործիչներուն՝ Արծրունիի, Արզար Յովհաննիսեանի և այլն: Անոնց նըպատակն էր արդէն՝ հետաքրքրութիւն յարուցանել կովկասահայերու մէջ դէպի Թրքահայ ժողովուրդի վիճակը:

Թիֆլիզի մէջ խմբակ մըն ալ կը ղեկավարէր Քրիստափորը: Թիֆլիզաբնակ մշեցի բանւորներու «խմբակն» էր: Գրել-կարդալ կը սորվեցնէր անոնց, հայրենասիրական քարոզներ կը կարդար,





ԱՌԱՋԻՆ ՍՈՒՐԶԱՆԴԱԿՆԵՐ :  
ՎԱՐԸ, ԱՋԻՆ ՉԱՆ, ԹԱԻԱՔԱԼԵԱՆ, ՀԱՅԿ ՄԵԼԻՔ-ԴԱԴԱՅԵԱՆ ԵՒ ՂԱՐԱՄԵԼԻՔ

ըմբռնատացումի գաղափարը կարծարծէր : Կիրակի օրերն ալ, քա-  
ղաքէն դուրս, խումբը զինավարժութիւն կընէր : Այդ շրջանէն  
եւան, որպէս մկրտած յեղափոխականներ, համբաւաւոր Աբարօն,  
տարօնցի Մարգար Վարժապետը, Քաւոր Պետրոսը, որոնք հետա-  
գային կուեցին և նահատակեցան Թուրքահայաստանում :

\* \* \*

Խանդավառութեան ալիքը երթալով կը բարձրանար և մթնո-  
լորտը կը տոգորէր խորհրդաւոր շուկներով : Կը մօտենային  
վճռական օրերը, երբ ուսանայ երիտասարդութիւնը, հնազան-  
դելով փայլունկցի Կախարդի պատուիրանին, պիտի երթար  
խիտ շարքերով ստանձնելու Կարօներու և Ասլաններու առաքելու-  
թիւնը — պիտի երթար քարոզելու, կուելու և նահատակելու :

Թիֆլիզը և զաւառը արտակարգ իրարանցումի մէջ էին :  
Չեռքէ ձեռք կ'անցնէին գաղտնի հրատարակութիւնները — արտա-  
սահմանէն ստացւող — Արմէնիաի հազազիւտ թիւերը, արգիլ-  
ւած Ռուսաստանի մէջ, Հնչակը, նոյնպէս արգիլւած : Չեռքէ  
ձեռք կ'անցնէին և Պետերբուրգի հայ ուսանողներու կարմիր բը-  
շիւները, որոնց մէջ կը պատմէին բուլղար, յոյն ապստամբնե-  
րու — սարկաւազ Լեվսկիներու և Թոմաս Բոցարիաներու — դա-  
ւազբական և ուղղական սխրագործութիւնները :

Բայց ամենէն ուժով կը զարնէին կովկասահայոց սրտին ու  
մտքին Թուրքահայաստանէն տեղացող սարսոեցուցիչ լուրերը :  
Մուսա պէյի գաղանային նախճիրները (1889ին) և թրքական  
դատավարութեան եղբրակատակը, որ վերջացաւ չարագործին ար-  
դարացումով, ցասման փոթորիկ հանեցին Կովկասի մէջ :

Եւ այդ ցասումը տեղի տուաւ համատարած ցնծութեան, երբ  
քիչ յետոյ լուր եկաւ էրզրումի խիզախ ցոյցի մասին :

Խմորումը կ'ընդարձակէր ու կը սաստկանար : Անգամ Փոք-  
ծի խմբազիրը—պահպանողական Արգար Յովհաննիսեան—սկսաւ  
տպել իր օրգանին մէջ Գամառ Քաթիպայի մարտաշունչ երգերը,  
Վանեցու Հայր մերը և ուրիշներ :

Գրիչը, սակայն, չէր բաւեր. գրչի, խօսքի պրոպագանդը  
ուսանայոց մէջ ըրեր էր արդէն Բաֆֆին իր հրաբխավէժ վէպե-  
րով, ըրեր էր Խրիմեան իր «Վանդոյժ»ով, ըրեր էր Մերենց իր  
ուղղամաշունչ գրուածքներով : Մարդիկ կը խորհէին, որ ժամանակ  
է՛ խօսքէն գործի անցնելու : Եւ ամէն կողմէ գաղափարական տար-



բերը կը մղէին գէպի թիֆլիզ, Ռուսահայոց մտաւոր կեդրոնը, հայկական Ընտրանիի ժամադրավայրը, որ 1889-90 թւականներուն գաղտնի, աղմկայոյց ժողովներու և բուռն, գաղափարային բախումներու թատերաբեմ էր:

Դիմենք դարձեալ Քրիստափորի յուշերուն.

«1889 թւականի ձմեռն էր, պրօպագանդն արդէն այնքան էր յառաջացած, որ անհրաժեշտութիւն զգացւեցաւ կազմակերպական կանոնագիր ստեղծելու և աշխատանքներու ծրագիր մշակելու:

«Այսպիսով յառաջ եկաւ Երիտասարդ Հայաստան կազմակերպութիւնը, որ հետագային ստացաւ Եւրօմօսօւէրայի խմբակ անունը, որովհետեւ Եւրօմօսի Եօսեքա հիւրանոցի մէջ կը բնակէին մէկ քանի ընկերներ, որոնց մօտ յաճախ տեղի կունենային հաւաքոյթները...»

«Արա հասաւ 1890 թւականը: Երիտասարդ Հայաստան կազմակերպութիւնը արդէն Հայաստան էր զրկեր ընկերներ Մ. Մարգարեանը և Յովսէփ Արղութեանը: Ասոնց միացաւ Մոսկուայի ուսանողներու խմբակի կողմէն Արշակ Բարխուդարեանը, երբ տեղի ունեցաւ էրզրումի և ապա Պոլսոյ ցոյցը: Այդ գէպերու յարուցած տպաւորութիւնը շատ ուժեղ էր: Առաջին անգամն էր, որ թուրք կառավարութեան դէմ կազմակերպւած դիմադրութեան ու ձեռակերպւած պահանջներու հետեւանքով կը հոսէր հայու արիւնը: Ամբողջ հայ հասարակութիւնը, ժողովուրդի բոլոր խաւերը յուզւեցան: Անտարակոյս, ատոր մեծ չափով նպաստեց նաեւ այն ուշադրութիւնը, զոր կը ցուցնէին յիշատակած իրողութիւններու առթիւ եւրոպական և ուսու մամուլն ու դիւանագիտութիւնը: Անգլիական «Դէյլի Նիւզ»ը նոյնիսկ թղթակից էր ճամբեր Կովկաս — Տից—Ջերալդը — որպէսզի մօտէն հետեւէ թուրքիոյ անցքերուն և ատով գոհացում տայ Անգլիոյ յուզւած հանրային կարծիքին»:

Դաշնակցութեան ծնունդի երկունքն էր և բոլոր աչքերը յառած էին գէպի թիֆլիզ: Լուրերը կուգային այնտեղէն գէպի գաւառ խիստ գունաւորւած, չափազանցւած. կ'ըսէին, թէ այնտեղ, մայրաքաղաքի մէջ, ստեղծւեր է մեծ, հեղինակաւոր Կամբուտ, համազգային կեդրոնական մարմին մը, Գրիգոր Արծրունիի նախագահութեամբ, որ պիտի գլուխ կանգնի Հայաստանի ազատագրութեան գործին և որուն հայ հարուստներն ալ պիտի տրամադրեն միլիոններ\*): Մեծ էր իրարանցումը այդ օրերուն —

\* Բազուի նախարարներու խոստացեր է հարիւր հազար ուրլի դնել Արծրունիի արամադրութեան տակ, եթէ այդ վերջինը համաձայնէր անցնի Եւրոպա:

1890ի գարնան — հայկական գաւառներուն մէջ: Մենք անոր ականատես էինք Ղարաբաղի մայրաքաղաքում: Աննախընթաց խանդավառութիւն դպրոցներում ու հրապարակներում, պատանիներու և ամբողջ երիտասարդութեան մէջ: Խորհրդաւոր առաքեալներ, «մշեցի», «սասունցի» անուններով, որ իբր թէ կուգային հեռաւոր Հայաստանէն, քանի մը օրով, կը հաւաքէին աշակերտներս քաղաքէն դուրս, կը պատմէին արտասուելով թրքական դարհուրանքները և կը զինուորագրէին տղաները Ս. Գործին համար:

\* \* \*

Երկարատե բանակցութիւններէ և բուռն վիճարանութիւններէ վերջն էր, որ ծնաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը 1890ի ամառը: Ինչպէ՞ս կատարւեցաւ այդ ծնունդը: Ժողովները սկսւած էին դեռ 1889ի աշնան: Մեր տրամադրութեան տակ գտնւած վաւերագրերը բաւարար լոյս չեն սփռեր, տարաբախտաբար, այդ ժողովներուն ու բանակցութիւններուն, գաղափարներու և տեսակէտներու բախումներուն վրա: Հայ իրականութեան անօրինակ պայմանները թոյլ չէին տար, որ գէթ միւթերը պահպանէին պատմութեան համար: Քանի՞ արձանագրութիւններ կորած են անհետ, քանի՞ նամակներ ու վաւերաթուղթեր՝ կրակի ճարակ եղած ոստիկանական ներխուժումի և խուզարկութեան պահերուն...»

Մեզի հետաքրքրող շրջանի լաւագոյն արձանագրողը կարող էր լինել ինքը կուսակցութեան գլխաւոր հիմնադիրը: Բայց նա ոչինչ չթողուց մեզ, կամ գրեթէ: Ոչինչ՝ նաեւ Զաւարեանին ու Ռոստոմէն: Գուցէ անոնց մտքովն անգամ չէր անցներ՝ գէթ քանի մը ժամ անդրադառնալ անցեալին և նիւթեր թողուլ պատմութեան համար: Կուր տեղը յառաջ կը մղէր և յետ նայելու ժամանակ չկար: Աւելի երիտասարդ ընկերներն ալ, որ տարիներով ապրեցան այդ մեծ գործիչներուն հետ, չունեցան երբեք գաղափարը՝ զանոնք հարկադրելու իրենց յուշերը թելադրելու՝ կուսակցութեան արշիւններուն համար: Դաժան էր հայ իրականութիւնը, բայց և այնպէս ոչ ոք կը խորհէր, թէ երբ մեծ առաջնորդներն ալ պիտի սպաննէին կամ մեռնին այնքան վաղաժամ...»

Ունինք միայն անոնցմէ լսած հակիրճ, կցկտուր պատմութիւններ և քանի մը յուշեր, տպագրւած — գլխաւորապէս «Հայրենիք» ամսագրին մէջ — մեր հին ընկերներու ձեռքով, գէպերէն 30-35 տարի յետոյ...»

Ինչպէս ըսինք նախընթաց էջերում, կային արդէն Թիֆլիզի մէջ այլ և այլ խմբակներ, ոմանք գուտ մշակութային, ուրիշները՝ ազգային-յեղափոխական. մաս մը, որ կը քարոզէր թեւ տալ թրքահայ ազատագրական շարժման, մաս մը, որ կը յորդորէր ըմբոստանալ ցարական հայահալած ուժերին դէմ, ուսու ու վրացի յեղափոխականներուն հետ ձեռք ձեռքի: Կային Նարադուլիցներ, ուսու յեղափոխական կուսակցութեան համակիրներ—Դաստակեան, Միքայէլեան, Զաւարեան և այլն — ուսական տիպի ընկերավարականներ, Լավրովի, Միխայլովսկիի դպրոցէն. կային թունդ շնվէն աղգայնականներ, և անոնցմէ էր Կոստ. Պատիսեան. կար հայրենասէրներու միւս խմբակը, իր ժամադրավայր պանդոկին սնունով — «Եռեթնի Նոմերնոյ». անդամներ՝ Յովսէփ Արղութեան, Մարտին Ծաթիրեան, Տիգրան Ստեփանեան, Արշակ Թագևոսեան, Յ. Իւսուֆեան, Նիկ. Մատինեան, Արամ Նաղարէթեան և այլն: Կային թունդ, մոլեռանդ Արծրունականներ — և անոնցմէ էր Ալվուսի (Պաշտուր Մալումեան), այն ատեն գլխաւոր աշխատակիցը «Մշակ»ի: Կային, վերջապէս, հնչակեան ընկերավարականներ Մարքսեան դպրոցէն:

Աջ և ձախ, չափաւոր և արմատական, աղգային և համամարդկային ձգտումներով, — ամէն դոյնի ու գաղափարի մարդիկ, հայութեան բոլոր դասակարգերու ներկայացուցիչներ՝ ժողովրդական խոնարհ խաւերէն մինչև բուրժուա մեծատունն ու արհեստանոցը, — ամենքն ալ տողորած թրքահայոց ազատութեան գաղափարով: Թիֆլիզեան բուրժուազիան իր մտաւորական ներկայացուցիչներն ունէր ի դէմս Կ. Պատիսեանի, Գարո Միրզոյեանի և ուրիշներու:

Հայ մեծատանց զաւակներէն ամենաջերմ մասնակցութիւն բերաւ այդ ժողովներուն Կոստանդին Խատիսեան, խոշոր, շեշտաւած անհատականութիւն մը, համալսարանաւարտ, մոլեռանդ հայրենասէր, դիտուն ու պերճախօս, որ նոր կը սորվէր հայերէն և եկեր էր իր հմուտ քիմիկոսի օժանդակութիւնը բերելու աղգային յեղափոխական շարժումին ու այդ նպատակով ծրագրեր էր պայթուցիկ նիւթերու գործարան հիմնել Բուլղարիոյ մէջ: Կոստանդին Պատիսեան ունէր իր ատանձին «Ճրակցիան» (հատաձիկ), որ երկար անհամաձայնութիւններէ ու վարանումներէ վերջ, նոյնպէս միացաւ «Հայ Յեղափոխականներու Դաշնակցութեան»: Երկար չմնաց, սակայն, շարքերուն մէջ, և հետագային, իր չափաւոր խառնածքի մղումով, նետուեցաւ խա-

ղաղ, մշակութային գործունէութեան ասպարէզ, նաւթային մայրաքաղաքում, ուր երկար տարիներ իր անսպառ եռանդով և ստեղծագործ ձեռներէցութեամբ առաջնակարգ ծառայութիւններ մատուց հայրենի մշակոյթին և այդ մարզին մէջ մեծ անուն ու հռչակ հանեց:

Ամէն դոյնի ու գաղափարի մարդիկ... Իրօք մեծամասնութիւնը արծրունակներ էին, «Մշակ»ի յառաջդիմական դպրոցի սաներ: Արծրունական էր ինքը Գրիստափոր իր մտերիմներով: Անոնք կամեցան գործին մէջ քաշել և Արծրունին: Մշակի խմբագրապետը ինքն արդէն բուռն կերպով հետաքրքրուած էր թրքահայոց շարժումներով և նոր Միացեալ Յեղափոխական Կուսակցութեան ստեղծումով: Իր կողմէն նա գարկ կուտար դրամական հանգանակութիւններուն ի նպաստ շարժման, կ'օժանդակէր սկիզբները նաեւ Կուկունեանի արշաւաքին և ըստ ամենայնի կը ջանար հետաքրքրել այդ շարժումներով հայ ունեւոր դասակարգը: Մարտին Ծաթիրեանի ըսելով, նա երբեմն նոյնիսկ անձամբ ներկայ կը գտնւէր խումբերու խորհրդակցութեան: Եթէ անմիջական մասնակցութիւն ալ չունէր Արծրունի սկսած շարժման մէջ, անոր անուղղակի մասնակցութիւնը ակներեւ է: Ճիշտ կը նկատէ Ծաթիրեան, որ Պաշտուր Մալումեանը առանց իր մեծ վարպետի հաւանութեան չէր մասնակցեր ոեւէ հանրային գործի մէջ: Իսկ Մալումեան իր սենեակի մէջ իսկ կը գումարէր Դաշնակցութեան չէնքը կերտող ժողովները: Ստոյգ է նաև, որ «Դրօշակ»ի առաջին մէկ երկու յօդուածներ Պաշտուրին ձեռքով գրուած են\*):

Երիտասարդները առաջարկեր էին Մշակի խմբագրին անցնիլ Եւրոպա, ստանձնելու համար միացեալ յեղափոխական ուժերու ղեկավարութիւնը՝ յաջա երկրի ժողովուրդի և Եւրոպայի:

Այդ ծրագիրը, սակայն, ջուրն ընկաւ, ինչպէս և վիժեց, տարաբախտաբար, հնչակեաններու ծրագիրը՝ Պրիմեանը Եւրոսաղէմէն Եւրոպա փոխադրելու: Թէեւ դիւրութեամբ իրագործելու բան մըն էր այդ փոխադրութիւնը — անգամ Պրիմեանինը — և կրնար, անշուշտ, ուժեղ գարկ տալ հայ յեղափոխական գործին, գրաւել մանաւանդ մեր ունեւոր դասակարգի օժանդա-

\* Երբ Արծրունի բուրժուին յետ քաշեցաւ, Մալումեան եւս դադարեց իր մասնակցութիւնը հայկական շարժման մէջ, որպէսզի 1890ին վերստին նետուի մեր շարքերուն մէջ և գործէ անդուլ եռանդով, մինչև հայոց պատմութեան վարհուրանքի թակածը, երբ նա իր ընկերներուն հետ գրկեց նահապետութեան խաչը:



կութիւնը, որու պակասը հայկական շարժման ամենէն աղէտաւոր կողմերէն մէկն էր... Դրամի սովը, ուրիշ բացասական ազդակներու հետ, կոտորեց այդ շարժման թափը, ջլատեց ու վիժման գատապարտեց ամենէն հերոսական ճիգերը...

Գրիգոր Արծրունի եւս ատեն մը յեղափոխական քարոզներ ըրեր էր — Խրիմեանի պէս — և 1878ի դէպքերու միջոցին, «Մշակ»ի մէջ ըմբոստացումի կը հրաւիրէր թուրքահայերը:

Սակայն, 1890ի ընդհանուր խանդավառութեան օրերուն, անոր մասնակցութիւնը գործերուն մէջ կարճատեւ եղաւ: Չուզեց, անշուշտ, այրել իր նաւերը Ռուսիոյ հանդէպ, ազդուած էր գուցէ Կոնկոնեանի արշաւանքի տխուր վախճանէն և ոռոսաց աննպաստ քաղաքականութենէն... ու չուզեց վտանգել «Մշակ»ը, որ իր աչքին խիստ կարեւոր դեր մը ունէր:

Հաւանական է Մ. Շաթիրեանի վարկածն եւս, որու համեմատ, Գրիգոր Արծրունի, որպէս չափաւոր բուրժուա-ազատական մը, իբր թէ հաշտ աչքով չէր նայեր այդ նոր բռնկող ժողովրդական շարժումներուն վրա, որոնց հետեւանքով երիտասարդութեան սուար տարրեր դուրս կը սահէին իր գաղափարային խնամակալութենէն, կը հեռանային մշակական, արծրունական դպրոցէն ու կը նետուէին բուն յեղափոխական պայքարներու մէջ՝ աւելի արմատական հաւատամքով, ճշմարիտ դեմոկրատիզմի դրօշին տակ, ներկած հայ աշխատաւոր ժողովուրդի և անոր ողնայարը կազմող հայ միլիոնաւոր գիւղացիութեան շահերուն\*):

\* \* \*

Ստեղծող Միութեան նախաձեռնողները չմոռցան, ի հարկէ, և Հնչակը: Կովկաս կը գտնուէր այդ կուսակցութեան սիւներէն մէկը, հանգուցեալ Ռուրէն Խանազատ, որ դեռ 1889 թւականին բուն պրոպագանդ կը մղէր Կովկասի հայութեան մէջ, ձգտելով

\*) Թէեւ նորակազմ «Դաշնակցութեան» գաղափարաբանութիւնը սկիզբը չունէր որոշ զեւած արմատական ուղղութիւն մը և պատրաստ էր ընդունելու իր շարքերուն մէջ տարբեր աշխարհայեացքի տէր մարդիկ յանուն ընդհանուր դատի և պայքարի յաջողութեան: Յայտնի է նաեւ, որ Արծրունին իր ժողովրդականութեան գաղափարակէտին հասու չորհրդի իսկ դաշնակցական պարզալուծներուն — Քրիստափոր, Չաւարեան եւ այլն — որոնք կազմակերպեցին անոր շքեղ յորելանական հանդէսը 1890ի ամառը (գրական գործունէութեան 25ամեակը):

ընկերվարական դարձնել երիտասարդութիւնը և գրաւել զայն «Հնչակ»ի կողմը: Երբ կը սկսուին Թիֆլիզի խորհրդակցութիւնները գոյութիւն ունեցող այլազան խումբերու միջեւ, մեր ընկերներէն մին, Արշակ Տէր Գրիգորեան, կերթայ Բաթում, ուր կը գտնուէր Խանազատ, և Թիֆլիզի խումբերու կողմէն կը խնդրէ մասնակցիլ տեղւոյն խորհրդակցական ժողովներուն: Այսպէս կը գրէ «Հայրենիք» ամսագրի իր յուշերուն մէջ\*\*), ինքն իսկ Ռուրէն Խանազատը: Երկու շաբաթ յետոյ, նա Թիֆլիզ կերթայ — լիազօրւած, անշուշտ, իր կուսակցութեան կեդրոնէն — և նախ երկարօրէն կը տեսակցի Քր. Միքայէլեանի ու Չաւարեանի հետ:

Ու անմիջապէս հարց կը դնէ «Դաշնակցութեան» երկու ռահվիրաներուն — կընդունի՞ն արդեօք Թիֆլիզեան խումբը ընկերվարական ծրագիրը, կարելի՞ է արդեօք միացնել զանոնք այդպիսի ծրագրի մը շուրջ...

Սոցիալիզմի նորընծաներու ամենէն այրող մտահոգութիւնն էր այդ... Թերեւս համոզուած «սոցիալիստ-մարքսիստներ» էին Թուրքիոյ մէջ գործող իրենց կուսակից ձհանկիւլեան, Տամատեան, Դժոխք և ուրիշ մտաւորականներ... Անհամակրելի ժեսթ մըն էր հնչակեան պատերազմի այդ հարցումը — թելադրած, անշուշտ, ժընեւի կեդրոնէն\*\*\*) և որ կարծէք սկիզբէն կուզէր ըսել Թիֆլիզցիներուն. «մենք չպիտի միանանք»: Բնականաբար, այդ խիստ շեշտած հարցումը չփոթութիւն յարոյց Թիֆլիզեան շրջաններում: Մեր մեծ ընկերները երկարօրէն և քաղցրօրէն վիճաբանեցան Խանազատի հետ այդ կնճռոտ խնդրին շուրջ: Եւ պէտք եղաւ Քրիստափորի հմուտ stratagèmeը, հակառակորդը դինաթափ ընելու և գէթ անոր առժամեայ ու ձեւական համակերպումը վաստկելու համար:

Ընկերվարութիւնը մարդկային ցեղի ամենէն վսեմ վարդապետութիւնն է, որ նպատակ ունի ազատագրելու աշխատաւոր և տառապող զանգուածները ամէն տեսակ լուծերէ — քաղաքական, տնտեսական, կրօնական — և հասցնելու զանոնք լիակատար ազատութեան ու բարօրութեան:

\*) 1927 Դեկտեմբեր:  
\*\*) Ինքը Խանազատ կը գրէ Հայրենիքի նոյն թիւն մէջ (1927 դեկտեմբեր). «Տրագիկում ու Պոլսում ունեցածս գործունէութիւնը ինձ պարզ կերպով ցոյց էր աւել, որ մարքսիստական գործունէութեան համար այդ երկրում ոչ մի հոգ չկար: Թուրքիայի միջավայրում մարքսիստը անելիք չունէր»:

Այդ մտքով ընկերվարական էին և Քրիստափոր, Չաւարեան ու շատ մը ուրիշ ընկերներ, վասնզի խորապէս ժողովրդասէր էին, դեմոկրատ, վասնզի — ուսանողութեան օրերէն — փոխ առեր էին ուս ու արեւմտեան ռահվիրաներէն ժողովուրդի պաշտամունքը, հէգ ու խոնարհ, հարստահարած և հալածուած աշխատաւոր ընդհանրութեան պաշտամունքը: Եւ անոնք չեն, որ պիտի խրոչէին «ընկերվարութիւն» բառէն: Սակայն և գիտէին, որ այն հեռուոր ապագայի իրէջալ մըն է — գիտէին անոնք, որ եթէ «ընկերվարութիւն» բառը սուր կերպով դուէր հայկական շրջաններուն մէջ, պիտի խրոչէին շատ շատեր անգէտ, անպատրաստ հասարակութենէն ու անգամ դեմոկրատ մտաւորականներէն — և միութիւնը պիտի վիժէր... Իսկ իրենց զերազոյն նպատակն էր — հրատապ ու ստիպողական — համախմբել մէկ դրօշի տակ բոլոր սրտացաւ հայրենասէրները, յանուն ընդհանուր պայքարի, ընդդէմ ընդհանուր ոսոխին — սուլթանական բռնապետութեան:

Ուստի մերինները շատ աշխատեցան, յորդորեցին, որպէսզի հնչակեան պատերազմը\*) առժամապէս լուութիւն պահէ այդ բառին շուրջ. բայց սա խորոխտ կերպով կը պնդէր իր ըսածին վրա, յայտարարելով սոցիալիզմը, իբրև անհրաժեշտագոյն պայման — *conditio sine qua non* — ուժերու միութեան:

«Զէ՞ որ յեղափոխական կուսակցութիւնը պէտք է իր պարզ և որոշ ծրագիրն ունենայ... Երբ ցանկանում էք, որ Հնչակեան կուսակցութիւնն էլ միանայ ձեր կազմակերպութեան հետ, պէտք է որ ձեր ծրագիրը անպայման սոցիալիստական լինի»...

Այսպէս կը պահանջէր հնչակեան պատերազմը, իր իսկ խոստովանութեամբ\*\*): Եւ ահա մերիններուն պատասխանը.

«Ի հարկէ, ծրագիր կուենանք, սակայն, այնպէս պիտի անենք, որ մեզնից չխրտնեցնենք շատ շատերին... Իսկական գործիչները մենք ենք լինելու, իսկ նրանք օժանդակողներ, դրամ տւողներ միայն, մենք ինչպէս ուզենանք, այնպէս էլ կը տանենք գործը: Պէտք է իմանալ, թէ ո՞ւմ հետ ի՞նչպէս խօսելու և վարելու է... ամէն կերպ պիտի աշխատենք կուսակցութեան նպատակը այնպիսի Փորձուլայի տակ դնել, որ քո ուզածը լինի և Հնչակեան կուսակցութիւնն էլ մեր ընդհանուր միութեան մէջ

\*) Ռ. Պանազատի հետ էր տրապիզոնցի Հմայակ Խուլպուլեանը, որ 1893-96 թւականներուն ազատ ունկնդիր էր ժընեւի համալսարանում, շատ աւելի մոլեռանդ իր մարքսիզմի մէջ, քան իր ընկերը:

\*\*) Տես Հայրենիք ամս. դեկտ. 1927:

մտնի... Մենք բառերին մեծ նշանակութիւն չենք տալիս, գլխաւորը գործն է...»)

Եւ փրկարար բանաձեւը գտնւեցաւ: Մշակող ծրագրին մէջ իբրև նպատակ ընդունւեցաւ ժողովուրդի տնտեսական և քաղաքական ազատութիւնը:

Ի վերջոյ, Պանազատ կը համակերպի, յաճախ, սակայն, կրկնելով իր այս ծանր մտահոգութիւնը՝ «մի գուցէ ես ակամայից դաւաճանած լինիմ մեր սոցիալիստական ծրագրին ու սկզբունքներին և խաղալիք դառնանք բուրժուազական լիբերալ հոսանքին»:

«Չափազանց վախենում էի նոյնպէս — կը շարունակէ Ռ. Պանազատ — որ ժընեւի ընկերներս չպիտի համաձայնին ընկերվարական տեսակէտով այդպիսի անորոշ ծրագրին ընդունելու»: Ապա խումբերու ընդհանուր ժողովին մէջ վիճարանութեան կը դուրի այն հարցը՝ թէ ո՞ւր հաստատուի Միացեալ Կազմակերպութեան կենդանը: Թիֆլիզցիները կը շեշտէին Թիֆլիզի վրա: Ժընեւը թէ հեռու էր երկրէն և թէ միանգամայն Թիֆլիզցիներու մեծամասնութեան մէջ պարզ դիտաւորութիւն կար՝ վերցնել գործի ղեկավարութիւնը Հնչակեան երկու պարագլուխներու ձեռքէն — պարոն և տիկին Նազարբէկեաններու — որոնք համակրանք չէին վայելել Կովկասի մէջ: Պանազատ կը գրէ, որ իր խորհուրդով ժողովը կանգ առաւ Տրապիզոնի վրա, իբրև կեդրոնի, ուր և քիչ յետոյ պիտի ղրկէին Չաւարեանն ու Արղուիթեանը:

Որոշուեցաւ «Հնչակ»ը թողնել ժընեւում, որպէս նոր կուսակցութեան օրգան — Քրիստափորի ու Նազարբէկի խմբագրութեամբ — և հրատարակել նաև մարտական թերթ մը «Դրօշակ» անունով:

Ի վերջոյ, յայտարարուեցաւ, որ Հնչակեան կուսակցութիւնն եւս մտած է նոր ստեղծուած Միութեան մէջ: Հնչակեան պատերազմները մեկնեցան Թիֆլիզէն, որպէս դաշնակցականներ, գործեցին քանի մը շաբաթ Օդեսա և այլ վայրերու մէջ յանուն «Հայ Յեղափոխականներու Դաշնակցութեան»:

Կազմուեցաւ այդ Դաշնակցութեան առաջին վարչութիւնը — «Կեդրոնը» — Քր. Միքայէլեան, Միմոն Չաւարեան, Աբրահամ Դաստակեան, Յ. Լորիս-Մելիքեան և Լեւոն Սարգսեան, որ նոր վերադարձեր էր էրդրուժի իր ուղեւորութենէն:

\*) Բառացի չէ բերած, ի հարկէ, Պանազատի կողմէն 27 տարի առաջ տեղի ունեցած այս զրոյցը, բայց ընդհանուր առմամբ ճիշտ պէտք է լինի:

Կեդրոնի ժողովները տեղի կունենային մեծ մասամբ բժիշկ Լորիս-Մելիքեանի տանը, իսկ «Դրօշակ»ի խմբագրական մասնա-  
 ժողովի նիստերը կը կայանային Ներսիսեան դպրոցի ուսուցիչ Ալեքսանդր Մելիք-Ալազիբերդեանի սենեակում (Արքունական թատ-  
 րոնի դէմ, Դոբժանսկիի տանը, որ յետոյ անցաւ Մանթաշեանի  
 ձեռքը) :

Հնչակեաններու Միութեան յարիւր, տարաբախտաբար, կարճատեւ եղաւ : Ժընեւեան կեդրոնի որոշումով այդ կուսակցու-  
 թիւնը վերստին հեռացաւ ու մեկուսացաւ\*):

\*) 1896ի խոր պառակտումէն ետք, Հնչակեանութիւնը փաստօրէն դադ-  
 րեցաւ գոյութիւն ունենալէ, որպէս քաղաքական խոչալ մը հետապնդող, քիչ-  
 շատ համատարբ ու գործօն, դադարաւորական կուսակցութիւն մը : Այսպիսի  
 անունը կրող անհատներ ու խումբեր շարունակեցին հոս հոն, գլխաւորապէս  
 գաղութներու մէջ աղմկել հրապարակը թերթերով ու ճառերով, երբեմն նաև  
 մասնակցեցան ազգային ինքնապաշտպանութեան կռիւներուն 1905-906ին, կամ  
 կամաւորական շարժումներուն մեծ պատերազմի ընթացքին : Մերթ ընդ մերթ  
 — մասնաւորապէս Օսմանեան Սահմանադրութեան առաջին տարիներուն —  
 իրենք իսկ դաշնակցական մարմինները, յանուն ներքին անդորրութեան եւ ազ-  
 գային միացեալ ճակատի, համերաշխութեան հրահրներ են ուղղեր նաև Հն-  
 չակեաններուն, բայց այդ պարագան ոչինչ չէր աւելցնէր անոնց կուսակցական  
 գոյութեան իրաւունքին եւ յեղափոխական արժէքին : Ամէն ոք դիտէր, որ ոյժ  
 մը չէին անոնք հայկական իրականութեան մէջ : Եթէ երբեմն քանի մը  
 սրացաւ, դադարաւորական անհատներ հրապարակ կուզան այդ վաղեմի կուսակ-  
 ցութեան աւերակներուն վրա, տարաբախտաբար, աւելի շատուր են այնպի-  
 սիներ՝ որոնք լինելով անընդունակ սեւէ դրական գործ կատարելու, քարշ կու-  
 տան միայն մակարոյժի գոյութիւն մը, կը շահագործեն հայ ժողովուրդի միամ-  
 աութիւնը, կը լեցնեն ազգային ցեցերու շարքը եւ միացած համայնավար ու  
 այլ հակառակորդ տարրերուն՝ կ'արդարացնեն իրենց գոյութիւնը՝ պայքարելով  
 միայն ու միայն Հ. Յ. Դաշնակցութեան դէմ : Նոյն պայքարը հնչակեան խում-  
 բեր մղեցին Փոքր Հայքի ու Կիլիկիոյ մէջ, ուր 1896 թւականէն ի վեր դադեր  
 է անոնց յեղափոխական գործունէութիւնը : Իսկ Մեծ Հայքի մէջ կուսակցու-  
 թիւնը գոյութիւն չունէր նոյն թւականէն ի վեր : Այս է իրողութիւնը, զոր  
 պարտաւոր ենք արձանագրել :

Երբեմն ալ հնչակեան հակամարտ խումբերու երկպառակութիւնը կը  
 վերածէր փողոցային ըմբռնմանի եւ արիւնոտ տեսարաններու, ինչպէս դիտե-  
 ցինք 1902 թւականին, երբ Լոնդոնի, Պարիզի, Օքսֆորդի հրապարակներուն վրա  
 մին միւսի ետեւէ կը փուշէին հնչակեան պարագլուխներու դիակները իրենց  
 նախկին ընկերներու դիակներուն տակ : Ամբողջ շարաթներ տեսնց որսախու-  
 ճապը, զզւանք յարուշանելով եւրոպացիներու մէջ :

\*\*\*

Իր կարճատեւ գոյութեան ընթացքին Հնչակեան կուսակ-  
 ցութիւնը շարք մը ծանր վրիպումներու հետ, ունեցաւ քանի մը  
 յաջողութիւններ : Քիչ-շատ կրցաւ օգտագործել առաջին շրջանի  
 համատարած ոգեւորութիւնը եւ կատարեց զուտ ազիտարար աշ-  
 խատանք — (յուզել, ցնցել զանգաւածները, յանկարծակի խլրտում-  
 ներով, անհատական տերորներով, կախաղաններով...): Աշխա-  
 տանք մը՝ որ անխուսափելի սկզբնաւորութիւնն է եղեր շատ ու-  
 րիչ ժողովուրդներու ազատագրական շարժումներուն : Այդ տեսա-  
 կէտէն՝ պատմական քննադատութիւնը թերևս շատ ալ խստապա-  
 հանջ լինելու չէ հանդէպ այն յախուռն, դահավէժ ցոյցերուն ու  
 շարժումներուն, զորս հնչակեանները նիւթեցին 1890էն մինչեւ  
 1895ը. — Գում Գափուի ցոյցը 1890ին Պոլսոյ մէջ, Փոքր-Ասիոյ  
 արիւնալի դէպքերը — 1893ին — երբ հնչակեան գործիչներ  
 յապտամբութեան կեղծ կոչեր հրատարակեցին մահմետական ժո-  
 ղովուրդներու անունովը եւ յարուցին թուրքերու կատաղի յար-  
 ձակումը հայոց դէմ, որու հետեւանքով նիւթեցաւ Գաղատիոյ  
 զարհուրելի դատավարութիւնը իր անգութ մահաւճիւններով ու  
 կախաղաններով... Ապա Սասունի խլրտումները 1893-94ին, առանց  
 քիչ-շատ լուրջ ու գինեալ պատրաստութեան : Վերջապէս, Բար-  
 Ալիի 1895ի թափօրը, որ նոյնպէս կատարեցաւ յախուռն կերպով,  
 առանց գէնքի ու կազմակերպութեան :

Հնչակեան գործունէութիւնը իր ամբողջ տեւողութեան ըն-  
 թացքին ազիտացիական բնոյթ կրեց : Տեսակ մը յեղափոխական  
 հրապարակութիւն էր, որու համար պէտք չկար մեծաքանակ ուժե-  
 րու, կուտղներու, միջոցներու... կուսակցութիւնը միանգամայն  
 կանտեսէր ժողովուրդի ինքնապաշտպանութեան հոգը, որ սա-  
 կայն, հայ շարժման ամենէն հրատապ հոգերէն էր : Նա չէր մտա-  
 ծեր ժողովուրդը գինելու, մարդելու մասին, եւ երբ հնչակեան  
 Մուրատը — Պոյաճեան — 1893ին Սասուն կերթար առաջին ան-  
 դամ քիչ-շատ լուրջ ժողովրդական ըմբոստացում պատրաստելու,  
 նա հարկադրած էր կովկաս անցնելու եւ Հ. Յ. Դաշնակցութեան  
 օգնութեանը դիմելու (որ և իրենք չմերժեցաւ) : Եւ Մուրատի  
 մերթախալումէն յետոյ, անոր ընկերը, Դոնիսէ-Հրայր, յոյսը կըս-  
 րած իր կուսակցութենէն, սկսաւ գործել Տարօնի մէջ բացասապէս  
 դաշնակցական միջոցներով, դաշնակցական ընկերներու հետ, կրե-  
 լով, սակայն, որոշ ատեն «հնչակեան» անունը (1895ին Հրայր  
 արդէն մեր շարքերուն մէջ էր) : Կը մնայ Զէյթունի ապստամբու-  
 թիւնը (1895-96թ.), որ իրօք հայ ազատագրական շարժման կա-  
 րեւորագոյն դրւագներէն մինն է և որու մէջ խոշոր դեր ունեցան  
 հնչակեան խմբապետներ — Աղասի, Մլիհ, Ապահ, Հրաչեայ Մա-  
 րալ. բայց այդտեղ ևս՝ նոյն անփոյթ վերաբերմունքը, որ երեւան  
 եկաւ կուսակցութեան պառակտումի օրերուն, 1896ին : Արդարեւ,  
 Տամատեաններու կողմէ հին կեդրոնի դէմ արձակւած դատապար-

տութեան վճռագրի մէջ գլխաւոր մեղադրանքներէն մէկն ալ այն էր՝ որ Կեդրոնը իր ձեռքը գտնուած գէնքերէն ու մեծաքանակ դրամէն կէսը միայն ղրկած էր ապստամբներուն և ան ալ ուշ ու ձախող կերպով:

Այս բոլոր թերացումները չէին կարող տարրալուծող դեր չխաղալ յեղափոխական կուսակցութեան կեանքին մէջ: Յիստ վնասեց Հնչակեան Կուսակցութեանը և կեդրոնացման սխալներ: Ժրնեէն, Լոնտոնէն կամ Աթէնքէն անկարելի էր ղեկավարել լայնարձակ հայ աշխարհի շարժումները, եթէ անգամ կեդրոնի մէջ բազմած լինէին հեղինակաւոր, ձեռնհաս, մտաւոր ու բարոյական արժանիքներու տէր մարդիկ:

Հետեւանքը — վաղաժամ և մահացու պառակտումը: Այդ կուսակցութիւնը երբեք չկարողացաւ — և չէր կարող — արմատ բռնել քիչ-չատ ուժեղ կազմակերպութիւններով՝ Մեծ Հայքի ու Կովկասի մէջ: Կովկասահայ մտաւորականութեան չնչին տոկոսը միայն կը գործէր անոր դրօշին տակ — գրեթէ բացառապէս Նար-Դարի և Արձագանգի մարդիկ: Նա ծնաւ, որպէս գաղութային կուսակցութիւն և մնաց այդպիսին մինչև իր վախճանը: Նա ծնաւ, իրրեւ կեանքի հրամայական պահանջ, բայց չկրցաւ քայլել կեանքին հետ: Սովը տիրեց միշտ անոր շարքերուն մէջ — սովի ամենէն ահաւոր տեսակը — մարդոց սովը... Պառակտումէն յետոյ ալ, նոր, «վերակազմեալ» Հնչակեանութեան պարագլուխ յայտնեցաւ Արփիար Արփիարեան, որ արդէն՝ իսկ վարկաբեկած էր 1890ի իր ծանօթ «Մեղայական»ով: Իր շուրջ յարուցած ամբաստանութիւններով ու վէճերով՝ նա ամբողջ տարիներ զբաղեցուց Հնչակեանները և Դաշնակցութիւնը, որուն հետ անոնք կ'ուզէին միանալ, բայց մերժեցան: Մարգարէ գրչի տէր, մեծատաղանդ արձակագիր և հրապարակագիր՝ Արփիար Արփիարեան, տարբարատար, պոլսական վատթարագոյն տիպի գրողներէն էր, անսկզբունք, աննկարագիր, միանգամայն անպէտք քաղաքական կուսակցութիւն մը վարելու համար և շատ չանցած, կնքեց իր մահկանացուն, եղբրական ձեւով, իր իսկ ընկերներու զնդակներուն տակ...

Մարդոց սովը... Նախքան պառակտումն ալ՝ մատերու վրա կարելի էր համբել Հնչակեան շարքերուն մէջ քիչ-չատ խոշոր մտաւորական գործիչները: Մտաւորականութեամբ համար աղքատ մնաց այդ կուսակցութիւնը իր ամբողջ տեւողութեան ընթացքին. — մտաւորականութիւն՝ կիրթ ու սրտցաւ, շիտակ ու պարասճանաչ, ղեկավարող և շնչաւորող: Միակ առաջնորդը կուզէր լեցնել իր անձի հմայքով այդ աղէտաւոր բացը, բայց չէր կարող: Չուզեց ալ մտնել նոր ստեղծւող «Յեղափոխականներու Դաշնակցութեան» մէջ: Քոտախտը շուտ ծայր տաւ այդ կուսակցութեան շարքերում: Նա պիտի քայքայէր ճակատագրորէն և ուրիշ մէկը պիտի գրաւէր հրապարակը:

Նւ այդ միւս ոյժը պիտի գար աւելի հիմնական գործունէ-

ութեան ծրագրով, նա պիտի յենուր Թուրքիոյ, Կովկասի, Պարսկաստանի, գաղութներու հայ մտաւորականութեան լաւագոյն տարրերուն վրա և հայոց գոյութեան կուր սուր վայրկեաններուն՝ պիտի համախմբէր իր դրօշին տակ — ողջ հայութիւնը:

\* \* \*

Հայ քաղաքական կուսակցութեան ծնունդի օրերուն, Թուրքիայէն և Թուրքաց Հայաստանէն Թիֆլիզ եկան ինքնաբերաբար շարք մը նշանաւոր թուրքահայ դէմքեր: Ամենէն նշանաւորները — Չաֆրեան, Յուսո, Սարկաւազ:

Առաջինը, բնիկ ղէյթունցի, ղեկավարող դեր խաղացեր էր 1878ի Չէյթունի ծանօթ խոռվութիւններուն մէջ, շրթայակապ Պոլիս տարւեր էր ու բանտարկւեր: 1890ին նա մէկէն ի մէկ, «Չէյթունի իշխան» անուն տակ, լոյս ընկաւ Թիֆլիզի մէջ, ներկայացաւ Գրիգոր Արծրունիին, ծանօթացաւ մտաւորականութեան բոլոր ականաւոր դէմքերուն հետ: Բարձրահասակ, ջղուտ, երկայն բեխերով, աղղու կերպարանքով, մօտ 40 տարեկան մարդ մը, ինքնահաւան և մեծամուր, որ անդադար կը թմբկահարէր, թէ Թուրքիան և Հայաստանը յեղափոխական կազմակերպութիւններու ցանցով պատած է, թէ ինք կապ ունի ամենուն հետ, կը ղեկավարէ ամէնն ալ... և եկած է ռուսահայ եղբայրներու աջակցութիւնը խնդրելու:

Արծրունի և դաշնակցական մտաւորականները սկիզբէն իսկ թերահաւատ դռնեցան այդ տարօրինակ առաքեալի հանդէպ, որ դուցէ՛ ժամանակին ըրեր էր օդտակար ծառայութիւններ, բայց այդ օրերուն, անտարակոյս, խիստ կը չափազանցնէր Հայաստանի մէջ ստեղծւած «յեղափոխական կացութիւնը» և «արջի ծառայութիւն» էր, որ կը մատուցանէր... Այդ օրերէն ի վեր Յարութիւն Չաքրեան վարկաբեկեցաւ և քաշեցաւ յեղափոխական հրապարակէն: Կը մնար, սակայն, անունին որոշ հմայքը և երկար ատեն դեռ կային շրջաններուն մէջ չաֆրեանականներ:

Նման տաքցուի արկածախնդրի տիպ մըն էր մշեցի Սարկաւազը: Կովկաս անցնելով, նա սկսաւ միւսի պէս փողհարել, թէ Թուրքահայ ժողովուրդը միանգամայն պատրաստ է ազատութեան կուր համար, թէ ինքն ալ գործեր է 12 տարի դաւառներուն մէջ և ծանօթ է բոլոր դիրքերուն, թէ լաւագոյն յարաբերութիւններ մշակած է քիւրտերու հետ. կը հաւատացնէր, թէ խումբերով մեծ քանակութեամբ գէնք կարող է փոխադրել և բաժնել ժողովուր-

գին: Մշեցին աւելի հաւատ ներշնչեց կովկասցիներուն, կարողացաւ օգտագործել անոնց խանդավառութիւնը և խոշոր գումարներ հաւաքեց ասպատակային խումբեր կազմելու համար: Սակայն, ինչպէս կը տեսնենք հետագային, չարդարացուց իր հանդէպ եղած վստահութիւնը և եղբրական վախճան ունեցաւ:

Վանեցի Յուլիոն (Յարութիւն աղա), որ նոյնպէս եկեր էր կովկասցի եղբայրներու օգնութեանը դիմելու «Դաշնակցութեան» ծնունդի օրերուն և որ կարճ միջոց մը — իր կեանքի վերջին տարին — գործեց անոր դրօշակին տակ, բոլորովին տարբեր մարդ մըն էր, հակառակար Սարկաւազի ու Չաքրեանի: Կիսագրագէտ, յաղթ, առոյգ տղամարդ մը, որ ասպատակային խումբ մըն էր վարեր և արկածալից կեանք մըն էր անցուցեր հերոսական կռիւներու մէջ, քիւրտերուն հետ. ամբողջ ամիսներով թագնւած մնացեր էր մութ, խոնաւ գետնայարկերուն մէջ, խուսափելու համար զինքը հետապնդող իշխանութիւններէն: Մարդ մըն էր, որ չէր թմբկահարեր միւս երկուքին պէս, չէր տարւիր շատախօսութեամբ, ինքնագովութեամբ — տիպար հայդուկ մըն էր, որ կը գործէր լուռ ու մունջ, լի անարկու վրէժխնդրութեամբ թուրքերու և մանաւանդ քիւրտերու հանդէպ, որոնցմէ շատ շատերն էր մեռցուցեր իր անվրէպ զնդակներով: Նոր կազմուող «Դաշնակցութեան» ուշադրութենէն, բնականաբար, չէր կարող վրիպիլ այդպիսի մարդ մը: Տարաբախտաբար, ընդամենը տարի մը յետոյ, այդ մեծ հայդուկը պիտի նահատակէր անհաւասար ճակատամարտի մը մէջ:

\* \* \*

Սարկաւազի, մասամբ և Չաքրեանի քարոզչութիւնն ու լաւատես յայտարարութիւնները միանգամայն ապարդիւն չանցան:

Անոնցմով սաստիկ խանդավառւեցան Պետերբուրգի բարձրագոյն դպրոցներու խումբ մը հայ ուսանողներ, որոնք արդէն մկրտւած էին նոր շարժման աւագանին մէջ:

Պումբի հոգին էր ուտիացի Սարգիս Կուկուլեան (Նուխուայ գաւառի Նիթ գիւղէն): Պարագլուխներէն էր այն հայրենասէր խմբակի, որ 1889ին թարգմանաբար հրատարակ նետեց ծանօթ մարտաշունչ բրօշուրները բուլղարական կեանքէն («Բուլղար Աւագակապետ», «Աղբայրի», «Դանչօ» և այլն): Երիտասարդը արդէն իսկ ուխտեր էր «երկիր» անցնելու, և ազատ ժամերուն զինա-

վարութեամբ կը պարապէր: Գիտէին այդ իր ուսանողը՝ բնաբը: Լսեր էր Կուկուլեանի մասին և Կարապետ Եզեան, որ հայագրի բարձր պաշտօնեայ էր Պետերբուրգի մէջ, պահպանողական ու ջերմօրէն հայրենասէր: Նա ևս սաստիկ մտահոգւած էր թուրքահայոց ճակատագրով (ինքը խնամակալն էր Սանասարեան դպրոցի), կը հովանաւորէր Կուկուլեանը. և երբ, օր մը, վերջինս գնաց անոր առջեւ իր սիրտը բանալու և խորհուրդ հարցնելու, Եզեան հետեւեալ ծրագիրն առաջադրեց երիտասարդին.

— Երթալ Պարսկաստան, մտնել պարսից ծառայութեան մէջ, ստանալ խանի տիտղոս — իր, Եզեանի աջակցութեամբ — հաստատուիլ թուրք-պարսկական սահմաններուն մօտ, և բաւականաչափ ոյժ կազմելէ յետոյ՝ կազմակերպել շարժումներ Վասպուրականի մէջ:

Ու կուտայ Կուկուլեանին յանձնարարականներ Պարսկաստանի շարք մը հայագրի բարձրաստիճան անձերու համար:

1890թ. մայիսին հայրենասէր երիտասարդը, իր քանի մը ընկերներով մեկնեցաւ Թիֆլիզ ու գնաց խորհրդակցելու Գրիգոր Արծրունիի հետ, Կօջօրում: Արծրունին սիրով ընդունեց Կուկուլեանը և թելադրեց հրատարիլ Եզեանի ծրագրէն — որ երկար ժամանակ կը պահանջէր ու անցնիլ խումբով թուրքաց Հայաստան: (Այն ատեն Թիֆլիզ հասած էր անգլիական «Դէյլի Նիուզ»ի թղթակից Փից-Ջէրալդ, որ եկած էր իր թղթակցութիւններով Եւրոպայի, մասնաւորապէս Անգլիայի, ուշադրութիւնը հրաւիրել թուրքաց Հայաստանի վրա):\*)

Կուկուլեան Թիֆլիզի մէջ դարձաւ ընդհանուր ուշադրութեան առարկայ: Պետերբուրգէն եկած խումբը գրկաբաց ընդունելութիւն դտաւ «Երիտասարդ Հայաստան» կոչւած գաղտնի ընկերութեան մօտ, — ընկերութիւն մը՝ որ շուտով պիտի մտնէր Հ. Յ. Դաշնակցութեան մէջ: Ու սկսաւ կամաւորներու հոսանքը: Ձէնք չկար, սակայն, և ամէնքը զինավարժ չէին: Դիմեցին ժողովարարութեան: Նոյնինքը Արծրունին կը քաջալերէր գայն՝ իր անձնական դիմումներով: Հայ հարուստներէն՝ Առաքել Մատուրեան յանձնեց Կուկուլեանին 5000 ռուբլի, խոստանալով աւելի խոշոր նւիրատուութիւն հետագային:

\*) Այդ խորհրդատու մարդը, որ կենդանի չժաման մէջ էր Արծրունիի և հայ մատուրական շրջաններուն հետ, օր մը առեղծւածային կերպով անհետացաւ ուսումնական սահմաններուն մօտ. կ'ենթադրուի թէ զոհ գնաց թրքական դաւադրութեան մը:

Սարկաւազի յորդորներով և «Երիտասարդ Հայաստան»ի աջակցութեամբ, Կուկունեան ձեռնարկեց մեծ արշաւախումբ մը կազմակերպելու, քանի մը հարիւր երիտասարդներէ, որ պիտի երթար շանթի պէս հարւածելու թշնամին սահմանի միւս կողմը, ջարդ տալու քիւրդերուն, իրարանցում հանելու և Եւրոպայի ուշադրութիւնը հրաւիրելու հայ դատի վրա, իրագործելու 61րդ յօդւածը . . . 1890ի դարունն էր: Համալսարանական խմբապետը իր սպայակոյտով թափօր կ'ընէր Ալեքսանդրապոլի ու Կարսի շրջաններում, կամաւորներ հաւաքելով և ամենուրեք կ'արժանանար ժողովրդական խելայեղ ցոյցերու: Կուկունեանը, «Սարգիս աղան» հանդէս կուգար, որպէս «Փրկիչ»: Իւրաքանչիւրը կը զոհարերէր, ինչ որ կարող էր: Կուտային բնակարան, սնունդ մարդկանց ու ձիերուն: Կանայք կը հոգային զինւորներու ճերմակեղէնն ու այլ անհրաժեշտ պիտոյքներ: Երեսանները խումբ խումբ «Մեր Հայրենիք» կ'երգէին: Ողջ Շիրակը տօնական կերպարանք էր առեր. . . Տեղի ունեցան սրտաշարժ դէպքեր: Կամաւորական սպայակոյտի այդ թափօրը եղաւ տեսակ մը տրամադրաչափ կովկասահայ ժողովուրդի՝ հանդէպ իր տառապող եղբայրներուն: Բաշ-Քեաթիլիեար զիւղի մէջ երկու մայրեր բերին իրենց երկու զաւակը Կուկունեանին, խնդրելով, որ տանէ զանոնք Հայաստան՝ իրենց ջոյրերու վրէժը առնելու: Ուրիշ կին մը, Մաքօն, լաւ հրացանածիք և զինավարժ, կուգէր նոյնպէս երթալ կուրի թշնամուն դէմ և ապարդիւն դիմումներ կ'ընէր խմբապետին:

Արշաւախումբը կաճէր օր աւուր: Կային կամաւորներ Հայաստանի բոլոր ծայրերէն, շատ մը թուրքահայ երիտասարդներ, Ալաշկերտցի, Մշեցի, Վանցի և այլն: Մեծ մասը Արարատեան գաւառներէն էին, շատերը անփորձ, փափկասուն տղաներ: Արշաւանքէն յետոյ, Մշեցի Մեսրոպ Վարդանեան այսպէս կը գրէ բառացի իր յուշերուն մէջ. — «Մեզնից կարող եմ ասել, թէ երեք մասը տղերքանց փափուկ ապրած տղերք են, ոչ բեռ չալակել տեսած են, ոչ անօթութիւն, ոչ այսպէս երկար ճանապարհ քալած ունէին: Բայց այն սէր, որ տպաւորւած էր անոնց սրտին մէջ, ոչ թէ այն նեղութիւններ, այլ ամենայն սիրով մեռնիլ ազգի ազատութեան համար»:

Հազարաւոր վերապրողներէն՝ Թաւրիզցի Յովսէփ Մովսէսեանն ալ հետեւեալը կը գրէ իր յուշերուն մէջ.

«1889 թւին երեք ընկերներով, ես, Յովհաննէս Բիթլիսցի և

Ղարաբաղցի Արրահամը անցանք Տաճկահայաստան. . . Թիֆլիզ վերադառնալով, Արրահամի հետ մտածեցինք մի հրոսակային խումբ կազմելու և անցնելու Տաճկահայաստան, ազատելու համար մեր եղբայրներին ու ջոյրերին. . . Մեզ միացաւ Եփրեմ Գանձակեցին, Պարսկաստանի ապագայ հերոսը. . . Մեզ միացաւ նաև Վիրաբ Դաշոյեան և Արրահամ Դաղթեցին, որը 12 տարեկանից, մի թուրքի սպանութեան պատճառով փախստական կեանք էր վարում. . . Ուղում էինք անցնել Ղարաբաղի և Գանձակի կողմերը՝ մեր խումբը աւելի սոււարացնելու կուրի հմուտ ընկերներով: Բայց այդ օրերում Թիֆլիզում յայտնեց մշեցի Յակոբ Սարկաւազը, որ եկաւ մեզ դտաւ և համոզեց, որ աւելի լաւ է միասին գործել. . . Դրա համար էլ մեզ տարաւ ծանօթացրեց Կուկունեանի հետ. . . Ես, Եփրեմը և Վիրաբը ճանապարհւեցինք Սարղղամիշ, ուր Կուկունեանին տեսանք՝ աստիճակիւր աշխատանքից փախած դիլիջանցի աւաղակ Սարղարի հետ: Հէնց այդ օրերին էր, որ եկաւ (Թիֆլիզից) Յովսէփ Արդութեանը: Նա եկել էր մեզ համոզելու, որ մեր խումբը ցրենք: Բայց մենք չհամաձայնեցինք: Սեպտեմբեր 23ին, 110 հոգուց բաղկացած մեր խումբը Չուրուկից Շահ-Եօլի վրայով անցաւ տաճկաց սահմանը. . .

Արշաւախումբի մէջ էր և էրդրումցի «Քեաւթառ Արշակը», ապագայ Քեռնի:

Կուկունեան կուգէր ըստ կարելոյն շուտ անցնիլ սահմանադուրիւր, բայց մէկ կողմէն չէր ստանար անհրաժեշտ դրամական օգնութիւնը Թիֆլիզէն, միւս կողմէն բուն առաջնորդը, վալադը, Մշեցի Սարկաւազը չէր ուզեր քալել և միշտ նորանոր պատրւակներ կը հնարէր յետաձգելու արշաւանքը: Ի վերջոյ «կը համոզուին», որ նա պարզ խաչագող մըն է և Սարկաւազը կը սպանուի:

Ահա թէ ինչպէս կը պատմէ դէպքը Մշեցի Մեսրոպ Վարդանեան, արշաւախումբի ողջ անդամներէն.

«. . . Կարս և Ալեքսանդրապոլի հայաբնակ գիւղերը ամբողջ կը սպասէին Սարկաւազի Հայաստան մտնելուն. . . Կարսի փողոցներ կը տեսնէիր ամէն զոյնի մարդ: Այդ բոլորը եկած էին ըսելով, թէ Տարօնացի Սարկաւազ ինչ որ ըսէ, մենք անոր խօսքին պէտք է մեռնինք. այնչափ ժողովուրդ Սարկաւազը հաւատացեր էր, իբր լուսաւորիչ մը. . . Ալեքսանդրապոլի ռուսական զորանոցներու հայ զինւորները ամբողջ պատրաստուած էին. . . Սարկաւազին կը սպասէին. այնտեղից կարող էին հօթ ժամից սահմանն անցնել հանգիստ: Սարկաւազ սպասեց այսօր-վաղը ըսելով. քաջ Կուկունեան Սարգիս յուսահատեցաւ, կանչեց մի երեկոյ իր պանդոկ. ի՞նչ կը սպասես, ի՞նչ է քո նպատակ. . . Սարկաւազ պատասխանեց, որ Թիֆլիզէն ինձ նամակ կայ, ես այս տարի չեմ կրնայ երթալ մինչև գարուն: Պատասխանեց Սարգիս (Կուկուն-

եան) . եղբայր , այսքան մարդ մեզ կը սպասէ . . . եթէ մենք սպասենք գարնան , դրանցից մէկին չենք կրնար գտնել , ոուս կառավարութիւն կիմանայ , գէշ կը լինի մեր ապագան : Սարգիս , Սարգար , Յովնան շատ մը խօսելէ վերջ , Համոզեցան , որ Սարկաւազ խաչագող մըն է . . .

Մշտի Մեսրոպ Վարդանեան իր այս յուշերը գրի առած է 1900թ . հոկտեմբերին , Բուլգարիոյ մէջ : Պարզ ու համոզեցուցիչ չէ , ի հարկէ , անոր պատմութիւնը իր համագիւղացի Սարկաւազի մասին , որ ստացեր է մատնիչին ու դաւաճանին արժանի մահուան պատիժ : Առեղծածի բաժին մը կայ Սարկաւազի ողբերգութեան մէջ , ինչպէս հայ շարժման բազմաթիւ ուրիշ նման դրւագներուն մէջ . . .

Իրողութիւնն այն է , որ Թիֆլիզում եւս հակառակ էին արչաւախումբի մեկնելուն և դրամ այլ եւս չէին դրկեր : Ժողովրդական շարժումը մեծ ծաւալ առեր էր . . . գուցէ՞ ղեկավարները շարեր էին այդ անակնկալի առջև . . . Գուցէ կը վախնային ոուս իշխանութիւններու միջամտութեան և ծանր ֆիասքօժ մը . . . Գուցէ՞ վտանգաւոր կը գտնէին յախուռն ու հապճեպ արչաւանքը գալիք մեծ շարժման յաջողութեան համար . . . Այսպէս թէ այնպէս՝ անվճռականութիւնն ու վարանումը կը տիրէր Թիֆլիզեան ղեկավարներու մէջ :

Իրօք՝ ոուս կառավարութիւնը սկսեր էր իր խստութիւնները : Առժամապէս աչք էր գոցեր հայկական խմորումներուն վրա , բայց երբ ասոնք մեծ ծաւալ առան , սկսաւ հալածել , հսկողութեան տակ առաւ կարեւոր գործիչները : Կուկունեան ազատօրէն կ'ընէր իր պտոյտները գաւառներու մէջ , շնորհիւ ժողովուրդի գաղտնապահութեան : Կամաւորները փոքրիկ խումբերով կը պահուէին հայ գիւղերուն մէջ :

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կազմակերպւեր էր արդէն : Վայրկեան մը անոր վարիչ մարմինը նպատակայարմար գտաւ Կուկունեանի խումբին շուտափոյթ մեկնումը դէպի Թուրքաց Հայաստան : Բայց յետոյ տրամադրութիւնները փոխեցան : Եւ մին-միւսի ետեւէ սուրհանդակները գացին դէպի Կարս համոզելու Կուկունեանին , որ հրատարի իր ծրագրէն և ցրէ կամաւորները : (Շատեր արդէն հեռացած էին ձգձգումներուն շնորհիւ) : Գնաց նախ Կոստանդին Պատիսեան , նորակազմ Մարմնի հեղինակաւոր անդամներէն մին : Ապա գնացին Չաւարեան և Արղութեան : Ապարդիւն անցան բոլոր յորդորները : Սարգիս Կուկունեան ,

աքանչելի անձնուրաց մը , բայց յամառ ու լեցւած իր նւիրական առաքելութեան հմայքով , քաջալերւած ժողովրդական միահամուռ ցոյցերէն , չուզեց ականջ կախել Թիֆլիզի յորդորներուն և 1890ի Սեպտեմբերի 22ին մեկնեցաւ դէպի սահմանագլուխ : Ծուրջ 100 հոգի , 24 ձիաւոր : Քահանաները օրհնեցին , հարիւրաւոր գիւղացիներ արտառաւից աչքերով ողջերթ մաղթեցին : Ձոյգ հայկական դրօշակներ կառաջնորդէին խումբը : Մէկուն վրա՝ Գրիգոր Լուսաւորչի պատկերը , միւսին վրա՝ առիւծ մը , նուրբ , ձեռքով նկարւած : Ձէնքերն էին՝ այնալու և սուրմալու հրացաններ , եւրոպական ատրճանակներ և դաշոյններ : Ձգեստները՝ կողակի ու լազի : Ուսերուն գրւած Մ . Հ . (Միութիւն Հայաստանի) : Կային խումբի մէջ և ոուսաց բանակի հայ զինուորներ և մէկ հարիւրապետ , ախալցխացի Ստեփանը , որ կը սորվեցնէր պէտք եղածը կամաւորներուն :

Երբ հասան ոուսական Բասէնի Չուրիկ գիւղի մօտերը , Կուկունեան և իր օգնականը Աբրահամ դիմեցին արչաւախումբին նոր յորդորով .

— Մեմք շուտով կը մտնենք Թուրքաց Հայաստան . լաւ մտածեցէք . ա՛յնտեղէն վերադարձ չկայ : Մեմք կ'երթանք մեռնելու , որպէսզի ֆանապարհ հարթեմք գալիք կուռ շարքերուն համար : Թող ոչ ոք ձեզմէ յոյս ունենայ , թէ կարող է ողջ մնալ : Ով որ առկէ կը վիստի , թող այժմէն վերադառնայ . . .

Ոչ ոք վերադարձաւ : Սահմանն անցնելուն պէս — անյաղթելի խոչընդոտներ . . . Խումբը կը գարնուի քիւրտերուն — յաւիտեանական ու ճակատագրական պատուհասին , որ սկիզբէն ի վեր հետապնդեր և անդամալուծեր է հայկական շարժումը Թուրք բռնապետութեան դէմ . . . Նախ փոքրաթիւ ձիաւորներ էին այդ քիւրտերը և տղերքը թիւ մը յագեցուցին վրէժխնդրութեան ծարաւը , զանոնք կոտորելով : Բայց հաւարին վրա շատցան քիւրդերը , ետեւէն հասաւ և կանոնաւոր Թուրք զօրքը : Կը մնար նահանջել դէպի ոուսական հողը : Նահանջեցին Կաղզւանի ուղղութեամբ : Բայց հոն ալ ոուս սահմանապահ կողակները դիմաւորեցին խումբը : Կուկունեան խստիւ պատւիրեր էր չդիմադրել ոուսերուն : Բայց երբ այդ տըգէտ ու բիրտ կողակները կրակ բացին «հայ աւազակներուն» վրա և սպանեցին Նադօն , տղայք այլ եւս չհամբերեցին և դաշոյնով խողխողեցին սպանող կողակը . . . Այդ վայրկեանէն և սկսաւ արչաւախումբին ողբերգութիւնը :



Կուկուճեան պատուիրեց տղաներուն փախչիլ, իսկ ինքն անձնատուր եղաւ ուս զինտրական հրամանատարութեանը, որուն բացատրեց խումբին նպատակը: Խումբէն 60-70 հոգի յաջողեցան փախուստ տալ ու ազատիլ: Ուզեցին Կուկուճեանն ալ



ԿՈՒԿՈՒՅԵԱՆ ԵՒ ԻՐ ԽՈՒՄԲԻ ՄԵԿ ՄԱՍԸ

փախցնիլ իրենց հետ, բայց նա մերժեց և անձնատուր եղաւ, որպէսզի հնարաւորութիւն ունենայ դատաւարութեան ընթացքին պաշտպանելու հայկական դատը: Չերբակալեցաւ: Իրմէ առաջ ձերբակալած էին արդէն քանի մը տասնեակ կամաւորներ, որ չէին կրցեր փախուստ տալ, կամ թէ նոյնպէս չէին կամեցեր:

Կը տարւին Կարս: Տպաւորութիւնը չլմեցուցիչ էր կովկասեան հայութեան մէջ: Հայ ժողովուրդը սուգի մէջ էր: Մարտին Շաթիրեան, մեր սակաւաթիւ հին ընկերներէն, որ ականատես եղած է արշաւանքին և ինքն ալ մէկ-երկու ամիս բանտ նստեր է Կուկուճեանի գործի առիթով, հետեւեալը կը դրէ «Հայրենիք» ամսագրի 1923թ. Ապրիլի թւին մէջ:

«Երբ նրանց ձերբակալած բերին Կարս և բանտարկեցին, ամբողջ քաղաքը սուգի մէջ ընկաւ: Երբ բանտարկեալներին դուրս էին բերում բաղնիք տանելու համար, այդ օրերը քաղաքը ստանում էր կէս-սոճական և կէս-սուգի կերպարանք: Շատերը խանութները փակում էին: Երեխաների փոքրիկ խումբեր սկսում էին Մեր Հայրենիք երգել: Կալանաւորները ձայնակցում էին նրանց և բաղնիք գնալու դէպքը ստանում էր քաղաքական ցոյցի բնոյթ: Դրա հետեւանքն այն եղաւ, որ բաղնիս տանելը վերացրին և բանտի պայմանները խստացան»... Այդ խումբը տարան չղթայակապ — Երեւան: Երկու տարի բանտ ու քննութիւն: Կանխօրէն որոշած էր այն գոյնը տալ հայկական արշաւախումբին, որ իբր նա կը գործէր միաժամանակ Ռուսաստանի դէմ և ծրագրած էր Մեծ Հայաստան մը ստեղծել: Հայ կամաւորներու դրօշին վրա գրած «Մ. Հ.» տառերը — որ կը նշանակէին «Միութիւն Հայրենասիրաց» — անոնք (ցարական քննիչները) կ'ուզէին անպատճառ թարգմանել «Միացեալ Հայաստան»...

Տեղի ունեցաւ մեծ, աղմկայոյզ դատաւարութիւն Երեւանի մէջ: Ցարական ատեանը դաժան եղաւ: 26 հոգի աքսորեցան Սիբիր: Անոնցմէ 16ը զրկւեցան այդ երկրի ամենահեռաւոր ծայրը—Սախալին, ուր երկար տարիներ տքնեցին տաժանակիր աշխատանքի մէջ: Կուկուճեան, իբրև խմբապետ, դատաւարուեցաւ քան տարւան տաժանակիր աշխատանքի՝ որմէ եօթ տարին՝ չղթայակապ: Այնուհետև՝ յաւիտենական աքսոր Սիբիրում: Մէկ քանիսը հետագային կրցան փախչիլ: Անոնցմէ էր Նփրեմը, որ Երեւանի պատմական դատաւարութենէն քան տարի յետոյ, սլիտի ստանձնէր պարսից յեղափոխական բանակի հրամանատարութիւնը և սլիտի քչէր յետագէմ Շահնշահը իր դահէն ու երկրէն... Փախչողներու մէջ էր մեր մի ուրիշ ընկերը՝ Ստեփան Ստեփանեան (Բալաջան), որ 1915ին տարագրուեցաւ էրզրումէն և նահատակուեցաւ:

Մէկտեղ փախան Նփրեմ, Բալաջան և վերը յիշատակած Յ. Մովսէսեանը: Յուզիչ ողիսական մըն է երեքի փախուստը,



ինչպէս և այդ ամբողջ հէքեաթային արշաւանքը Սարգիս Կուկունեանի: Երկու ամիս Սախալինի անտառներուն մէջ դեգերելէ յետոյ, լաստ մը կը շինեն և ութ օր ծովու վրա մնալով, կանցնին թաթարեան նեղուցը և դուրս կուգան Սախալին կղզիի հակառակ կողմը, վայրենի Գիլակներու մօտ, որոնք հում ձուկով կը կերակրեն մեր տղաները: Կազդուրելէ յետոյ, կը շարունակեն իրենց ճանապարհը Ամուր գետի վրայով: Կուգան Վերխնի Ուդիսկ քաղաքը, Բայկալեան լճին մօտ: Կը ձերբակալուին: Նորէն շրթայ և նորէն բանտ: Քննութեան ատեն կը հաւատացնեն որ իրենք թաւրիգեցի են: Հայու մը օգնութեամբ կը ստանան կեղծ անցագիրներ, կազատին բանտէն և ճամբան շարունակելով, վերջապէս, 1896ի հոկտեմբերին կը հասնին Թաւրիզ:

Ինքը Կուկունեան մնաց Սախալինի մէջ ամբողջ 15 տարի. վերադարձաւ 1906ի ներման օրերուն հայրենիք, վերստին նետուեցաւ յեղափոխական շարժումներու մէջ — այս անգամ ընդդէմ ցարիզմի — նորէն բանտարկուեցաւ: «Դաշնակցութիւնը» կազմակերպեց իր յաջող փախուստը Գանձակի բանտէն. Կուկունեան մէկ ընկերոջ հետ փախաւ Նոր-Բայազետի ուղղութեամբ: Բայց երբ կը պատրաստուէր սահմանն անցնիլ, վերստին ձերբակալուեցաւ և այս անգամ, իբրև մեծազոյն պատիժ, փոխադրուեցաւ Կովկասէն բուն Ռուսաստանի Օրեօլ քաղաքին բանտը, որ ցարական կառավարութեան վատթարագոյն զնգանն էր, ուր կը նետուէին ամենէն վտանգաւոր քաղաքական յանցաւորները: Եւ այնտեղ ծանրօրէն հիւանդացաւ ու չարաչար տանջանքներու մէջ մեռաւ այդ սքանչելի հայը, որ մարմնացած սէր էր, գաղափար ու գոհողութիւն, և որ եղաւ հայոց ազատագրութեան մեծազոյն նահատակներէն մէկը:

\* \* \*

Կուկունեանի արշաւախումբին այդ եղբրական վախճանը պաղ ջուր մաղեց, ի հարկէ, հայերու խանդավառութեան վրա, բայց շարժումը չկասեցաւ: Մեծ էր հմայքը նորածին «Դաշնակցութեան», որու գլուխ կանգնած էին հայոց ազգի ամենէն գաղափարական ղէմքերը:

### III

## ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐ

Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարային պատկերը. — ժողովրդական և դեմոկրատ. — հրիմեանի, Նալբանդեանի, Րաֆֆիի սերունդ. — Դաշնակցութեան «Կեդրոնը». — Գործիչներ դէպի երկիր. — Տպարան և առաջին քուլցիկներ. — Հայկական շարժման վիպական շրջանը. — «Ձախէլները».

Մենք երկար ծանրացանք «Դաշնակցութեան» ծնունդի պարզաներուն վրա, վասնզի այդ վերջինները մասամբ արդէն կը նախորդէին Կուսակցութեան գալոց ճակատագիրը: Մնած էր նոր քաղաքական մարմինը հայ ազգային իդէալով, կը յենուր գաղափարական երիտասարդութեան նտար շարքերուն վրա, կազարարէր ազատութեան գաղափարին հետ ուսնակավարութեան հաւատամբը: Հայ ունեւոր դասակարգը վաղաժամ լքեց զայն: Հայ խոշոր բուրժուազիան շարունակեց իր կրաւորական դիրքը շարժման հանդէպ՝ անոր ամբողջ տեւողութեան ընթացքին: Հեռացան նորակազմ Դաշնակցութենէն և այդ խոշոր դրամատիքութեան անւանի բանբերները, իդէօլօգները: Մնացին հրապարակի վրա հայ մտաւորականութեան ժողովրդական տարրերը: Մնաց հրապարակի վրայ — հայկական դեմոկրատիան: Նա՛ էր, որ կը կազմէր սկիզբէն ի վեր Դաշնակցութեան ողնայարը: Նա՛ էր որ պիտի լեցնէր մեր շարքերը քառասուն տարի շարունակ: Անշուշտ, ուրիշ դասակարգերէն եւս — վերին, բարեկեցիկ, բուրժուա և նոյնիսկ ազնւական խաւերէն — մնացին հատ-հատ գործիչներ շարքերուն մէջ — իրենք ալ ազնւական՝ սրտով ու մտքով: Բայց գործիչներու ճնշող մեծամասնութիւնը սկիզբէն իսկ, թէ՛ Կովկասի և թէ՛ Թուրքիոյ մէջ, հայ ժողովուրդի խոնարհ, վարին խաւերէն էին. շինականի, արհեստաւորի, քահանայի, կամ մանր առեւտրականի գաւակներ, ուսուցիչներ — Ներսիսեան՝ դպրոցի, Կեդրոնականի, Գէորգեան ձեմարանի, թեմական ու այլ դպրոցներու ուսումնաւարտներ — գրասենեկային ծառայողներ, այլ և բազ-



թեան դէմ, ուխտելով մինչև արեան վերջին կաթիլը կուել հայրենիքի ազատութեան համար...

... «Ուրեմն, երբայրներ, միանա՛նք յանուն սուրբ գործի ընդհանուր թշնամու դէմ:

«Եւ դուք, երիտասարդներ, միշտ և ամեն տեղ վսեմ գաղափարների պաշտպաններ, միացէ՛ք ժողովրդի հետ:

«Եւ դուք, ալիգարդ ծերունիներ, ոգեւորեցէ՛ք ձեր որդոց և օգնեցէ՛ք նոցա ձեր բազմամեայ փորձառութեամբ:

«Եւ դուք, հարուստներ, բաց արէ՛ք ձեր քսակները, գէնք հայթայթելու ժողովրդին, որ նա կարող լինի պաշտպանել իր կուրծքը, որ բաց է արել թշնամու դէմ: Եւ դու, հայ կին, ոգի ներշնչիր սուրբ գործի մէջ: Եւ դու, հայ հոգեւորական, օրհնիր ազատութեան զինւորներին...

«Ապասելու ժամանակը չէ... Համախմբենք, հայեր, և քաջութեամբ առաջ տանենք հայրենիքի ազատութեան սուրբ գործը»:

Երկրորդ և երրորդ մանիֆեստը հրատարակած են, հաւանականօրէն, 1891 թւի սկիզբները — «Հնչակ»ի հեռանալէն յետոյ — և անոնք արդէն կը կոչուին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան և Դրօշակի հրատարակութիւններ:

Երկրորդի մէջ կը կարդանք.

«Սարսափելի կռիւր այժմեանից յուսահատեցնում է թերահաւատներին: Նոքա հարցնում են. ի՞նչ կարող է անել հայը. ոչ թնդանօթ ունի, ոչ զօրք, ոչ պաշտպան: Աւելորդ թերահաւատութիւն... Երբ ժողովուրդը միացած է և պատրաստ կուելու, ոգեւորւած միեւնոյն վե՛հ զգացմունքով, — այլ ևս ոչինչ չարժէ ոչ թշնամու զօրաբանակը, ոչ թնդանօթը և ոչ օտարի պաշտպանութիւնը»...

Երրորդ հրովարտակը նւազ պաթեթիկ ոճ մը ունի, աւելի չափաւոր ու խոհական.

... «Այսպիսի ոգեւորիչ և սրտաշարժ լուրեր են հասնում մեզ զանազան հայաբնակ տեղերից: «Դաշնակցութեան» գործակալները անդադար հարցնում են մեզ. «Ի՞նչ պատասխանել այժմ զրգուած ժողովրդին, ի՞նչ ելք պէտք է տալ նրա վե՛հ զգացմունքին»:

Հայ ժողովուրդը անսահման անձնւիրութեան ապացոյցներ է տալիս. դա արդէն անհերքելի է: Բայց լոկ անձնւիրութիւնը բաւական չէ այդ մեծ ու սուրբ գործի համար... Անհրաժեշտ է լինել հեռատես և զգոյշ: Պէտք է խնայողութեամբ գործ դնել մեր ունեցած ուժերը... Յաղթութիւնը կը տանենք այն ժամանակ,

երբ մեր ոյժերը խմբենք մի ընդհանուր դրօշակի տակ, մեր կամքը հպատակեցնենք մի որոշ կարգի, անհրաժեշտ դիպցիւլինայի... Աղերսում ենք ամէն մի հայրենասէր հայի այս խօսքերը դրոշմել իր սրտում: Թո՛ղ ամէն մի հայաբնակ կենտրոն շարունակ պատրասուի... Բայց ընդհանուր գործ սկսելու համար թող սպասի մի ընդհանուր հրահրի: Իսկ Դաշնակցութիւնը կը տայ այդ հրահրը, որով նա ցոյց կը տայ և ընդհանուր ապստամբութեան ժամանակը Տաճկա-Հայաստանում:

... Հայ-եղբայրներ, յոյսով, հաւատով ու անդրդուլի եռանդով գիշեր-ցերեկ պատրասուենք և ամէն բոլոր պատրաստ սպասենք, որպէս զի կարող լինինք մեր բազմաշարժար տաճկահայ եղբայրների Ընդհանուր Ապստամբութեան նշանին անմիջապէս արձագանք տալը»:

Ապա թուցիկը կը բերէ շարք մը թղթակցութիւններ Թուրքաց Հայաստանէն, ցոյց տալու համար «ապստամբական շարժման կենդանութիւնը»:

Անսահման լաւատեսութիւն կը ցուցնեն կազմակերպութեան վարիչները ժողովուրդի ապստամբական տրամադրութիւններու մասին և, հակառակ խոհականութեան և զգաստութեան հրահրող քանի մը միջանկեալ տողերուն, այդ թուցիկները, ինչպէս և «Դրօշակ»ի առաջին թիւերու յօդածները, կը մատնեն ծայրայեղ, անհաւասարակչիւ հոգեվիճակ մը — միանգամայն բնականօրէն այն օրերուն համար:

Թիւ առաջին «Դրօշակ»ի մէջ կը կարդանք.

«Կար ժամանակ, երբ միայն խրախոյս և խօսք էր հարկաւոր ժողովրդին սթափեցնելու մահացու, ստրկական քնից, այժմ նա դարձել է և... պահանջվում է իւրաքանչիւր հայից ոչ միայն խօսքեր. «Չէ՛նք, գէ՛նք»... աղաչում է ընդդիմադրութեան բոլոր միջոցներից զուրկ հայ ժողովուրդը»...

Եւ դարձեալ, Թիւ 2-ի մէջ.

«Բարեբախտաբար, այսօրւայ հայ յեղափոխական գործիչն ազատւած է... նախապատրաստական գործունէութիւնից. մեր վերջին տասը-քսան տարւայ պատմութիւնը, տաճկական իշխանութեան անտանելի պայմաններն այսօր առաջ են բերել մի յեղափոխական ազգաբնակչութիւն, որ միայն աջող հանգամանքի է սպասում թօթափելու իրանից տաճկական լուծը: Այսպէս կարծելու համար մեզ իրաւունք են տալիս Տաճկական Հայաստանից հասած բազմաթիւ տեղեկութիւնները»...

Քարոզչութեան, ուսումնասիրութեան շատ ալ պէտք չըկայ, ժողովուրդը արթնցեր է, պատրաստ է, գէնք կուգէ միայն. նա պիտի յաղթէ անգամ թնդանօթներուն և կանոնաւոր բանակներուն... Ընդհանուր ապստամբութիւնը պիտի գայ և նոյնիսկ... աղղանշանով:

Այդպէս էր ընդհանուր հաւատն ու համոզումը 90ական թւականներու սկիզբները, այդպէս էր տիրող հոգեբանութիւնը Հայոց մէջ — վարդապետ, բուռն, գահալիժող տրամադրութիւն մը, որ կը վարակէր անգամ ամենէն զգաստ, պաղարիւն առաջնորդները...

\* \* \*

Շարժումը տարեբային էր: Նոր կրօն մը կ'ալեկոծէր հայ աշխարհը, նոր եկեղեցի — Հայ Մարտական Կազմակերպութիւնը — որու առջև կուգային խոնարհելու բոլոր եկեղեցիներու հաւատացեալները՝ լուսաւորչական, կաթողիկէ, բողոքական: Տըպաւորիչ, հազազիւտ տեսարան մը կը պարզէր հայոց Անդրկովկասը — զաղափարային թուիչներու և շղթայադերձ կիրքերու թատերարեմ: Աղգային զաղափարը, վեց դարու գերութենէն յետոյ, կը տարածէր հեղեղի մը կատաղութեամբ, զոր ոչ մէկ թումբ կը կանգնեցնէր: Կուսակցութեան գործակալներն են, որ անդադար կը հարցնէին Կեղրոնին. «Ի՞նչ պատասխանել գըրգուած ժողովրդին, ի՞նչ ելք պէտք է տալ»... և այլն:

Որքա՞ն աւելի ուժեղ էր յափշտակութիւնն ու կուր տենդը կիսազրապէտ և պարզունակ երիտասարդներու մէջ, որոնց աչքին գաղափարը ամենազօր ու անյաղթելի բան մըն էր. Հայոց ազատութեան դատը — այնքա՞ն արդար, ջինջ ու վեհ էր... Եւ որպի՞սի դերադնահատում սեփական ուժերու: Եւ որպի՞սի արհամարհանք դէպի թշնամու ոյժը... Շատերու աչքին թուրքիան քայքայած, մահամերձ պետութիւն մըն էր. բաւական էին քանի մը հարած — և Եւրոպան պիտի միջամտէր և մեծ Երազը պիտի իրագործէր... Հայութիւնը՝ անպարտելի հսկայ մը, թուրքիան՝ դաճած մը...

«Հերի՛՛ք, որդեակի՛... Մեր բառերն է՛ր կանեն մոցա շանսատակ»...

Հայկական շարժման ռումանտիկ շրջանն էր: Անսահման

պատրանքներու և դիւրին խանդավառութիւններու շրջանը: Բոլոր ապստամբ ժողովուրդները ունեցեր են այն: Ինչպէս անհատի, նմանապէս իւրաքանչիւր ժողովուրդի կեանքին մէջ կայ «վերթերեան», «հերոսական» այդ շրջանը — օրեր՝ հսկայ, կենսարար երայներու, օրեր անդուսպ, անյազուրդ պատանեկան իղձերու, երբ արթնցող ժողովուրդը, տակաւին դիտակցութեան սեմին վրա, կը փորձէ խօլ թուիչներով իրագործել անկարելին, կը ծառանայ խիղախօրէն վիթխարի արգելքներուն դէմ և կեանքի վառ տենչանքով կոչում կընէ — Մահուն...:

Այդպէս կը բնորոշէ այդ տարամերժ հոգեվիճակը ինքը Գեօթէ, ռումանտիկ մի հանճարեղ ռահվիրան:

Վիպական շրջանն էր — և անոր ամենէն բուռն արտայայտութիւնն եղաւ Կուկունեանի արշաւանքը: Հնչակեաններու գրեթէ ամբողջ աժիտասնոց-գործունէութիւնը 1890-94 տարիներուն անցաւ նոյն ռումանտիկ հոգեբանութեան նշանակին տակ:

Հայ շարժման հրապարակին վրա բազմաթիւ էին «խենթերը», սերվանտէսեան հերոսները, տաքարիւն ու վեհանձն ասպետները և ամէն տեսակ աղանդաւորներ ու մոլեռանդներ... Մթնոլորտը լեցուն էր մտտողի զինովցուցիչ բուրմունքով, թմբուկ ու ժխորով, ճառերով, երգերով և թեւաւոր նշանաբաններով. «Ամենայն տեղ մահը մի է»... «Ազատութի՛ւն կամ մահ»... «Յաղթել՝ կամ թէ պատուով մեռնիլ»... Եւ դանտոնեան մարտակոչը — «յանդզնութի՛ւն, յանդզնութի՛ւն, դարձեալ ու միշտ յանդզնութի՛ւն»...

Ա՛հ, «խոհեմները», «հաւասարակուած» խելօքները, հանգիստ ու կուշտ փրթողները, պորտաբոյժ անտարբերները կը զարծանան, անշուշտ, երիտասարդներու, «Ենթ ու խելաւ տղաներու» այդ անզուսպ թուիչներուն հանդէպ — անոնք չեն հայ յեղափոխութեան կոչեցեալ դատախազները: Ամբողջ հոյակապ իտալական դիւցադնամարտը կատարեր են 25-30 տարեկան «Չահէլներ» և անոնց գրեթէ հասակակից էին Ֆրանսական Յեղափոխութեան մեծանուն դերակատարները:

Եւ նոյն այդ երիտասարդներն էին, որ օր մը — գարհուրելի, ճակատագրական օր մը — Ղարաքիլիսէի բարձունքներուն, Սարդարապատի դաշտին վրա գրոհ տւին խենթ մոլեգնութեամբ թշնամու ահաւոր ուժերուն դէմ ու փրկեցին Հայաստանի հոգն ու պատիւը...

Երիտասարդութիւնը — գաղափարական շարժումներու և բոլոր խիզախ ձեռնարկներու յառաջապահն ու դրօշակակիրը:

Երիտասարդութիւնը — յոյսի և հաւատի, բոլոր ազնիւ կիրքերու խանդավառ մարմնացումը:

Երիտասարդութիւնը — բունակալական գնդաններու և կախաղաններու մշտաուստ ողջակէզը, ազատութեան հրդեհի յաւիտենական վառելանիւթը...

\* \* \*

Ուժերու անսահման գերգնահատումը և մօտալուստ յաղթանակի հաւատը կը ծնէին յախուռն, քաօօային թռիչքներ: Նպատակը: Գալոց Հայաստանի քաղաքական կազմը... Ատով շատ ալ չէին մտահոգուեր... «Բան մը, անշուշտ, պիտի ըլլայ»... «Բուլղարիոյ պէս բան մը»... «Լիբանանի պէս բան մը»...

Էականը կռիւն է, մնացածը երկրորդական է\*): Եւ կուի բոլոր ձեւերը ընդունելի են, նւիրական: Չարկ տաճկին ու քիւրդին ամէն տեղ, ամէն պարագայի տակ: Չարկ և ներքին ոսոխներուն, ուխտադրուժ ընկերներուն, ամէն կարգի հայ ցեղերուն, դաւաճաններուն, լրտեսներուն, մատնիչներուն: Չարկ, վրէժ՝...

Եւ ի՛նչ խօլական ձեւեր կառնէր վրէժխնդրութեան տենչը... Ոչ միայն թշնամու, այլ և հայ մարդոց հանդէպ: Յունօի գլխուն մէջ նստեր է սևեռուն գաղափար մը — Թոխմախեան լրտես մըն է, դաւաճան մը... Արսէն Թոխմախեան, Վարագի արծւիկներէն, Խրիմեանի քանքալուոր աշակերտներէն, օր մը չարաչար կը խոշտանգուի Յունօի ձեռքով (կըսեն նոյնիսկ, թէ ողջ նետեր է

\*) Կարծէք նոյն նշանախօսքը կը հնչէր եւ բուն իսկ վարիչներու շարքերում: Էականը դործն էր, իսկ նպատակը, ծրագիրը, ապագայի կառուցումները՝ երկրորդական բաներ էին... Ուշագրաւ է, որ իր հիմնարկումի օրերէն դրեթէ ամբողջ 3 տարի Հ.Յ.Դաշնակցութիւնը չունէր ծրագիր, տպած կամ դրած... Թէև արդէն կուսակցական գործիչները հաստատուէր էին երկրի շարք մը կեդրոններում, զինագործարանը կը բանէր Թաւրիզի մէջ, զէնքերը կը փոխադրէին երկիր, իսկ Կովկասը պատած էր դաշնակցական կոմիտէներու ցանցով: Մինիմում ծրագիր եւ մաքսիմում գործ, — այսպէս էր կարգախօսը: «Մենք գործի կուսակցութիւն ենք» — շատոնց այսպէս յայտարարէր էին Դաշնակցութեան հիմնադիրները: Ձիւնակիր խումբ մը, որ մէկ տասնեակ հրացան ու դաշոյն կը փոխադրէր Հայաստան, աւելի մեծ արծէք ունէր մերոնց աչքին, քան տասնեակ ծրագիրներ դալոց քաղաքական-ընկերային կարգերու մասին:

Թոնիրին մէջ և այլուեր), որովհետև շուրջ մը տարածւեր էր — բնաւ չփաստուած — թէ իբր նա պաշտօն ունէր թիւրք կառավարութենէն՝ լրտեսելու հայ յեղափոխականները Կովկասի ու Պարսկաստանի մէջ\*):

Մեր բոլոր հին ընկերներէն միայն պարսաւանք լսած ենք այդ եղբրական դէպքի առթիւ, որ կատարւեր է առանց վերին մարմնի գիտութեան, զուտ անձնական կամ թայֆայական հողի վրա:

Ահա ուրիշ ոճիր մը: Նոյն 1891 թւականին Կերեկցեանը սպանւեցաւ Էրզրումի մէջ, տեղւոյն Կեդր. Կոմիտէի որոշումով: Սրտցաւ հայ մարդ մըն էր, մէկը 1882ին բացւած Կարնոյ գաղտնի ընկերութեան ղեկավարներէն, որ չորս տարի բանտ նստեր էր: Անոր «յանցանքն» այն եղած էր, որ կը մերժէր հապշտապ յեղափոխական գործողութիւնները, խոհեմութիւն կը քարոզէր, կը յորդորէր երկարատեւ պատրաստութիւններ տեսնել: «Ով մեզ հետ չէ, թշնամի է» — այսպէս խորհեր են Կերեկցեանի տաք-զլուխ ընկերները, վիճակ ձգեր են և վիճակն ընկեր է Արամ Արամեանի վրա, որ և սպաններ է Կերեկցեանը:

Սարսափելին այն է, որ այդ երկու եղբայրասպան ոճիրներու հեղինակ կը հանդիսանան հայ շարժման երկու հինաուրց, դէմքեր, մէկը՝ Յունօն, վանեցի Փէղային՝ միւսը՝ Էրզրումցի Արամեանը, Աշոտ-Թաթուլ, որ արկածալից կեանք մը ապրեցաւ ու մեռաւ 1899ին թրքական կախաղանին վրա, երեք տարւան բանտարկութենէն յետոյ:

Սպանութիւնը կատարելէ վերջ, Աշոտը փախաւ Կովկաս, ուր և ամբողջ տարիներ թագնւեցաւ: Կերեկցեանի եղբայրը երկարատեւ հետապնդեց զինքը և չգտնելով, սպանեց Թիֆլիզի մէջ Աշոտի մտերիմ ընկերներէն — Օքոյեանը, որ նոյն Կարնոյ Կեդր. Կոմիտէի անդամ եղած էր:

Դաշնակցութեան Կեդրոնը 1890 թւականին, Արամեանի ներկայութեան, դատապարտեց անոր քայլը և այդ առթիւ հրատարակեց յատուկ թուուցիկ մը: Կեդրոնը հակառակ եղեր էր Կերեկցեանի դէմ արձակած վճռին և, այնուամենայնիւ, Կարնոյ կոմի-

\*) Դէպքը տեղի է ունեցեր 1891ին Նախովկայի վանքի մէջ: Թոխմախեան վանքի էր, բաւական ստան ուսուցիչ եղած էր Ազուլիսի մէջ և վերջը վարդապետ ձեռնադրւած:

տէն իրագործեր էր վճիռը: Յեղափոխական կարգապահութիւնը դեռ խիստ կը կաղար այն օրերուն...\*)

Վերլիչենք և Սարկաւազի սպանութիւնը, որ նոյնպէս դժւար է արդարացնել: Ուրիշ նման դէպքեր ևս, տարաբախտաբար, եղեր են մեր յեղափոխական շարժման ընթացքին, — անխուսափելի, աւա՛ղ, նոյնիսկ մեզմէ աւելի բարձր ազգերու մէջ: Յիշենք միայն Պրանսական Մեծ Յեղափոխութիւնը, երբ մարդիկ կը կոտորէին ամենաթեթեւ կասկածներու հիման վրա, մատնութեամբ կամ պարզ, անձնական թշնամութեամբ: Հայկական իրականութիւնը միայն աւելի դաժան մեթոդներ կը բերէ այդ կարգի մարզանքներուն մէջ...

\*) Հետագային, Սոֆիաի Ընդհանուր Ժողովին մէջ (1904թ. Յունւար) պարզեցաւ, որ Կերեկեան դաւաճան ժը չէր եղած, անշուշտ, բայց խիստ կըքստ ձեւերով վարած է իր պրօպագանդը նոր յեղափոխական գործիչներուն դէմ, անարգելով զանոնք հրապարակաւ, սրճարաններու, խանութներու մէջ...

IV

ՆԵԿԱՎԱՐՆԵՐԸ

Հայ շարժման գաղափարային Երրորդութիւնը — Քրիստափոր, Զաւարեան, Ռոստոմ —

Անցաւ կամաց-կամաց գաղափարներու շփոթը, փարատեցաւ հեպտակոտ ռոմանտիզմի մշուշը և Երիտասարդ Հայաստանը յանդիցաւ իրականութեան աւելի զգաստ ըմբռնումի — իր պարտականութեանց աւելի յստակ գիտակցութեան: Ստեղծեցաւ կուռ, կարգապահ յեղափոխական կազմակերպութիւնը — Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը — իր ընդարձակ ճիւղաւորումներով, նախ Կովկասի, ապա Թուրքիոյ ու Պարսկաստանի մէջ, զուեցաւ իր պատահական տարրերէն, դաստիարակեցաւ անձնագոհութեան և զղաստ, ասոցջ հայրենասիրութեան զպրոցին մէջ, իր մեծ վարպետներուն շունչին տակ:

Այդ փարպետներէն մէկը վաղաժամ աչքի դարնեցաւ գաղափարական մտասորականութեան շարքերում, իր արտակարգ կազմակերպչական տաղանդով, մէկը՝ սրուն վիճակաւ էր ուժեղ ձեռքով դարնել Կուսակցութեան ճակատագիրը —

Քրիստափոր Միքայէլեան:

Նախկին « աշխարհարարացի » Քրիստափորն էր, 80-ական թուականներու թիֆլիսեան խմբակներու Քրիստափորը: Նա, որ Թուրքաստանաստանի գէպքերու ազդեցութեան տակ լքեց պարսպ կոմսպոզիտիվի աւետարանը և հողով-սրտով փարեցաւ հայ ազգային շարժումին: Նա էր, որ Թիֆլիզի մէջ կը ղեկավարէր Մշակչիներու «ինքնապարզացման» խումբը — Արաբօ, Մարգար վարժապետ, Քասր Պետրոս և այլն — կը սորվեցնէր գրել-կարգայ, բնագիտութեան գտակր կուսար և միտածամանակ կը դաստիարակէր գանձեր յեղափոխական ուղիով:

1880ին՝ ստումնասարա Թիֆլիզի Ուսուցչական ճեմարանէն, ապա ստացիչ իր ծննդավայր Աղուլխի մէջ, Բաֆֆիէն յետոյ,



1885-87ին՝ ազատ ունկնդիր Մոսկւայի համալսարանում, 1889ին՝ նորէն ուսուցիչ Ազուլխում — այն ժամանակ, երբ Թիֆլիզը կապրէր խմորումի եռուզեռը:



Ք Ր Ի Ս Տ Ա Փ Ո Ր

Հետուէն կը դիտէր գալոց վարպետը կովկասեան մայրաքաղաքի հայ երիտասարդութեան իրարանցումը և հանդարտ, համեստ, առանց գահաձկտի, առանց թմբուկի ու ընքլամի կը

սպասէր իր անխուսափելի Թատերամուտի ժամուն: Եւ երբ ժամը հասաւ ու զինքը կանչեցին Թիֆլիզէն, նա զնաց նետուեցաւ իր կախարդիչ անձնաւորութեան ամբողջ թափով հակամարտ խրամումներու տենդային վիճարանութեանց ժխորին մէջ, չեզոքացուց կեդրոնախոյս հակումները, հաշտեցուց ու միացուց հակոտնեաները և հարթեց ճամբան յեղափոխական միացեալ կազմակերպութեան:

Վաշտած էր մարդիկ կառավարելու, ծնած էր ղեկավար, առաջնորդ լինելու: Գեւ բոլորովին երիտասարդ՝ նա հեղինակութիւն ու յարգանք կը ներշնչէր իր շրջապատին: Պատկասելի դուրս մը պրոֆէսորի, պետական մարդու. երկայն մօրուբով, դալուկ զկմբով ու խիստ խմացական արտայայտութեամբ. նայածքը՝ աւելի խորհոցի, քան յեղափոխական գործիչի — լուրջ, հանդիսարար, ինքնախտահարութեան և արժանապատուութեան գրոշմը ճակատին. խորունկ ու խոհուն աչքեր, որ մեղմիս կը սրտայայտեն ակնոցի ետեր և կը թափանցեն զխմացիկի հոգւոյն մէջ. նիհար, թուրակազմ մարմին մը, փոքր ինչ գանդապաշարմ, քիչ խօսող, կուտ արժարանոց, բնոջանրապէս սրտ, զուտ, հաւասարակշուած. ներք, սակայն հրարուս մը, ազնիւ կրքի խորանցունց ծով մը, որ շարունակ կ'այլեկսուէր ու զկտի գործ կը մզէր...

Գործի մարդն էր գերազանցապէս և գործի կուսակցութիւն մ'եղաւ անոր ստեղծած Միութիւնը իր ամբողջ տեսլութեան բնթայրին:

Անփիճելի գերազանցութիւն մ'ունէր բոլոր միտներուն հանդէպ: Արթուն կը հսկէր, երբ ամենքը բնած էին: Եւ մինչ միտները աստատարակ հետեւյ էին հոտանքին, բարոյ զկայքերու ետեւէն, նա ինքը նախաձեռնող էր և ստեղծող: Հ. Յ. Գաշնակցութիւնը խոշոր շարժում անոր ստեղծագործութիւնն է: Գուցէ երբեք հարց սրտամտութեան մէջ անհաս մը այնքան խորունկ չէ գրոշմեր իր կնիքը հասարական գործի մը վրա, իր արտակարգ խմացականութեամբ և արտակարգ նկարագրով:

Եւ արդ գործը հասկնարու համար՝ պէտք է ծանօթանանք վարիչին հետ, ծանօթանանք վարիչներուն հետ: Պէտք է յիշենք Քրիտտափորին հետ երկու արիշները, իր գաղափարի մտերիմները Զատարեան և Թոստամ — պէտք է ցուցադրենք, զէթ խոշոր զձերով: Հ. Յ. Գաշնակցութեան անբաժան ներսորդութիւնը\*):

\* Նին տխուրներու փազանդէն — Քրիտտափորի, Սիմանի, Թոստամի



Շատ է գրւած երեքի մասին և տակաւին շատ պիտի գրւի: Անոնց սիրող ընկերները, հազարաւոր գաղափարական յետնորդները իրենց ջերմ և րկրպագութեան մէջ կրնան երբեմն մեղանչել հափաղանցութեամբ ու մոլեռանդութեամբ. պաղ, անաչառ դիտողներն եւս, բարեկամ թէ հակառակորդ, չպիտի կրնան չխոստովանիլ անոնց բացառիկ կարողութիւններն ու հմայքը: Եւ խոստովաներ են յաճախ:

Ի՞նչն է, որ այնքան կը մեծցնէ Քրիստափորը, ո՞ւր է անոր ժողովրդականութեան գաղտնիքը: Նա չունէր բնաւ այն փայլն ու շուքը, որ յատկանիչն է հայոց աշխարհի մեծերուն: Չունէր պերճ, գրաւիչ լեզու, ինչպէս Որիմեան և չէր կատարեր անոր պէս քարոզչական խանդավառող թափօրներ: Չունէր հրապարակագրի կոչում, տաղանդ, ինչպէս Նալբանդեան ու Արծրունի և չէր խօսեր անոնց պէս հայ ժողովուրդին՝ թերթերու, հանդէսներու բարձր ամբիոններէն: Չէր գրեր բոցավառող ու լացցնող վէպեր, ինչպէս Բաֆֆի, չէր օժտւած խօսնակ քնարով, ինչպէս Պատկանեան, չէր կախարդեր բազմութիւնները թատրոնական բեմէն, ինչպէս Պետրոս Աղամեան:

Լուրի, անշուք, համեստ մտաւորական մը, որու միակ արտաքին փայլը իր նուրբ, տանջւած, վեհօրէն գեղեցիկ, առաքելական դէմքի մէջ էր: Շատեր չէին իսկ տեսած զինքը: Ոչ ալ կարողացած իր սակաւաթիւ ու փոքրինչ դժւարամարս յօդւածները: Բայց մէկ բան գիտէին ամենքը. նա կազմակերպութեան գլուխն էր և ինքը գերագոյն կազմակերպիչը... Գուցէ այս տարտամ գաղափարը կար ամենուն մէջ, որ այդ մարդը տարբեր խմորէ էր...

Բանաստեղծներ, վիպասաններ, հրապարակագիրներ ու դերասաններ շատ է ունեցած հայ ազգը, բայց կազմակերպիչ տաղանդներ սակաւ կը ծնւին դարերով պառակտւած, անմիաբանութեան, ծայրայեղ անհաստապաշտութեան ախտով մշակւած հայ անդաստանի մէջ:

Կազմակերպիչ ոգի... Այդտեղ է Քրիստափորեան հմայքի գաղտնիքը: Հազւագիւտ առաջնորդ մը՝ որ իր ընտիր իմացակալութեանը կը միացնէր և բարոյական խոշոր առաքիլութիւններ:

Հին օրերու մտերմագոյն աշխատակիցներէն — կան դեռ, բարբախտաբար, չկ երկու վերապրողներ, պատկանելի տարիքին մէջ: Բայց ողջերու մասին անհասարակ չպիտի խօսինք, կամ շատ բիշ, այս գրքին մէջ:

հաստատուն նկարագիր, անյողողող կամք, անապարտ մաքրութիւն և անկաշառ շիտակութիւն: Կազմակերպչական իր ձիրքը Միքայէլեան ցուցաբերեց տակաւին երիտասարդ տարիքին մէջ, կուսակցութեան ծնունդի օրերուն, երբ իր առջև դրուած էր մեծ, կնճռոտ խնդիր մը — ի մի ձուլել այնքան տարբեր խմբակցութիւններ, ստեղծել կուռ, ներդաշնակ միութիւն մը՝ այնքան հակամարտ, կեղրոնախոյս տարբերէ. խնդիր մը, որու համար անհրաժեշտ էր իրօք արտակարգ կարողութեան տէր մարդ մը, մէկը՝ որ թէ՛ մտաւորապէս և թէ՛ բարոյապէս կանգնած լինէր պատմական վայրկեանի բարձրութեան վրա, մէկը, որ յեղափոխական անրիժ նկարագրի հետ ունենար և անսովոր տակաւ, ճկունութիւն ու հոտառութիւն, մարդկանց ներաշխարհը թափանցելու ունակութիւն, դաղափարական գործակիցներ ընտրելու ձիրք, անաչառ և հաշտարար ոգի և մի իրօք հաղադիւտ վարելակերպ:

Եթէ Հ. Յ. Գալանկցութեան վարիչ շրջաններուն մէջ սկիզբէն ի վեր, հակառակ այնքան ջախջախիչ հարւածներուն ու ներքին խմորումներուն, իշխեց միշտ եղբայրական համերաշխութիւն, եթէ կուսակցութիւնը տասնեակ տարիներու ընթացքին — հիմնադրի մահէն վերջն ալ — կարողացաւ միշտ ճողովրդի սուրթանական ու ցարական որողայթներէն և ներքին, հերձաւածային հոսանքներէն, — ատուր գլխաւոր պատճառներէն, անտարակոյս, մէկն այն էր, որ այնտեղ, այդ կազմակերպութեան ծաւալուն խորշերուն մէջ կ'ապրէր միշտ, գէթ մասամբ, Քրիստափորի ոգին: Գաղափարական ընկերայնութեան ոգին էր այդ, որ այնքան ջերմութիւն, հմայք ու հրապոյր կը հաղորդէր դաշնակցական մթնոլորտին և որ կը բխէր մեր մեծ ընկերոջ ամէն մէկ խօսքէն, ժեսթէն, նամակէն:

«Սիրեցէ՛ք միմիանց» — կըսէր մեզ յաճախ Նազովրեցիի պարզութեամբ, առանց պաթեթիկ շեշտերու: Կազմակերպութեան արշալոյսէն մինչեւ իր եղբրական մահը՝ կրկներ է միշտ այդ գեղեցիկ կարգախօսը. նա ինքը սիրեր է միշտ իր գաղափարակից ընկերները և ձգտեր է նոյն սիրով տողորել կուսակցական շարքերը: Հայ առաջդիմութեան ահաբեկներէն գուցէ ոչ մէկը այնքան խորունկ չի գգացեր հայու անսէր, անբարիշտ բարքերը և ոչ մէկը չի թափեր այնքան յամառ ու բեղուն ճիգ՝ այդ ցեղային արատը գէթ մասամբ մեղմելու համար:

Քրիստափորի կեանքին նպատակն էր այդ: Նա գիտէր, որ



Հայ ազգի ազատագրութեան հսկայ գործը յաջողութեամբ պատկերու համար՝ անհրաժեշտ է հատարել մաքսիմալ (առաւելագոյն չափը) ցեղի գործուն ուժերու, անհրաժեշտ է կերտել այդ ազատութեան գերազանց գործիքը - յեղափոխական գորատըր կազմակերպութիւնը: Նա գիտէր, որ այդ գործիքը ազդու և տեսական գործնելի համար, պէտք էր փչրել հայ մարդկանց դարտըր անմխտանութեան և տարամերժ, անիշխանական անհատամտութեան ստույգը, իսկ այն փչրել կարող էր միայն սիրոյ անդույ, ջերմացնող ու կենսարար հոսանքը, միացած յեղափոխական կենդանի, դժնդակ, ինքնին արդէն մաքրագործող ու զտող աշխատանքին հետ: Ահա թէ ինչու Դաշնակցութեան Յառաջամարտիկը, որ մեծ կազմակերպիչ լինելով հանդերձ, եղաւ նաև մեծ առաքեալ ու քարոզիչ, իր երկարամեայ կառիճի ընթացքին թիֆլիզէն-Քիշինեւ-Ռումանիա-ժընեւ-Պարիզ-Սոֆիա-Ֆիլիպէ-Պոլիս — ամենուրեք նոյն յանկերդն է, որ կը հնչեցնէր այլ և այլ եղանակներով. «սիրեցէ՛ք, սիրեցէ՛ք միմեանց»...

Եւ սակայն, Նազովրեցիի հեղ, դառնուկի դէմք մը չէր այդ: «Գառնուկը» մերթ ընդ մերթ առիւծի խոյանք ունէր, ցասումի ու ատելութեան հզոր պոթկումներ, որոնք կը փոթորկէին իր հոգին, կը տարրալուծէին սովորաբար անխող իր դէմքը: Բաւ է յիշել «Փոքորիկ»ի մոլեգնած, շանթահարող Քրիստափորը, Եւտրդի դաւը նւթող, հայ ժողովուրդի անողոք վրէժխնդրութիւնն անձնաւորող Քրիստափորը...

Նա լաւատես էր առհասարակ մարդկային բնութեան նկատմամբ, աչքը դորաւոր ու թափանցող էր մարդոց լաւ դժերը նըշմարելու համար և շատ անգամ է նա օգտագործեր Հայ Դատի համար այնպիսի մարդիկ, որոնց վրա միւս ընկերները անյուսօրէն խաչ էին դրեր: Նա ինքը ստէպ իր կախարդիչ ազդեցութեամբ կը բարեփոխէր ըմբոստ, յոռի նկարագիրները, ասես կը հիպնոսէր... Եւ այդ հիպնոսին մէջ դեր ունէր իր խօսքի ու տրամարանութեան ոյժը, իր բնական, ինքնայորդոր սէրը, դեր ունէր իր խորունկ հաւատն ու համոզմունքը, գաղափարային թովիչ ու վարակիչ մոլեռանդութիւնը, դեր ունէին իր ձայնի զարումները, իր անոյշ, հազագիւտ աչքերը և ամբողջ վեհափառ կեցածքը... Իրողութիւնն այն է, որ Քրիստափորին դրժւարութեամբ կը մերժէին, երբ նա կը դիմէր մարդոց այս կամ այն խնդրանքով (խօսքս, հարկաւ, քարասիրտներու և անյոյս

տգէտներու, վատերու մասին չէ): Իրողութիւնն այն է, որ նա ուժեր դուրս կը թերէր ամայութենէն, գաղափարային նաճումներ կընէր այնտեղ, ուր ամենքս անգոր էինք: Պերճախօս չէր, — կաղէէր նոյն իսկ առանց խօսելու, իր լուս, խոհուն, մելամաղձոտ նայածքով:



Կովկասեան իշխանութիւնները, բնականաբար, կը ճանչնային հայ յեղափոխականներու առաջնորդը: Հսկողութիւնը խիստ էր անոր շուրջը: Քանի մը անգամ խուզարկեցաւ ու ձերբակալեցաւ: Առաջին անգամը 1891ի դարնան: Մէկ-երկու ամիս Մետեխի բանտը: Ապա աքսոր — Բեսարաբիա, Քիշինեւ, Ներսէս Աշտարակեցիի աքսորավայրը: Քիչ յետոյ, իրեն միացաւ Զաւարեանը, որ Տրապիզոնէն վերադարձին նոյնպէս բանտարկւեր էր, ապա տարազրեր:

Աքսորի մէջ ալ դադար չունի Քրիստափոր: «Իրօշակ»ն այլ եւս անկարող էր հրատարակել թիֆլիզի մէջ: Ժանդարմական խստութիւնները անհնարին դարձուցեր էին դայն: Կը մնար փոխադրել «Դաշնակցութեան» մամուլը դէպի ազատ երկիրներ: Այդպէս որոշած էր դեռ նախքան աքսորը: Առժամապէս Ռումանիոյ մէջ պիտի լոյս տեսնէր օրգանը: Վիեննայի Միլիթարեաններէն զրկւած էին հոն տառերը: Գործը պատահական ձեռքերու մէջ էր, հրատարակութիւնը կը յայտադէր: Աքսորավայրը մօտ էր Ռումանիոյ սահմաններուն: Քրիստափոր դադարուկ կանցնի սահմանը, կուզայ Գալաց և տեղական ուժերուն հետ փութով լոյս կընծայէ «Իրօշակ»ի մէկ թիւը ու կը վերադառնայ Քիշնե: Կուսակցութեան օրգանը վերստին կը մնայ բախտի կամքին, մինչեւ որ Ռոստոմ կուզայ կառնէ տառերը և կը բերէ ազատ Զւիցերիա (1892թ.), ուր կը հաստատուի վերջնականապէս մեր կուսակցական մամուլը\*):

\*) Ատեն մը կը շարի գաղտուկ, Ռոստոմի ալբովին մէջ, ապա գործը օրինական կերպարանք կը ստանայ եւ «Իրօշակ»ը կը մտնէ զւիցերական ազատ մամուլին ծոցը, շնորհիւ միջնորդութեան մեր բարեկամ Ժօրժ Ֆալմի, Արմատական Կուսակցութեան պարագլուխ, ինքն ալ խառնածքով ու գաղափարով յեղափոխական:

\* \* \*

Ընդհանուր էր սերն ու յարգանքը զկտի մեր սիրտացեալ առաջ ընկերս, բայց գուցէ ոչ ոք այնքան կը սիրեր, ինչպէս իր երկու մտերմագոյն գինակիցները — Զատարեան և Ռոստոմ: Եւ պաշտամունքը փոխադարձ էր: Իւրաքանչիւրը հպարտ էր միւս երկուրով:

Գաղափարի եզրայրներ էին անոնք, հապար անդամ աւելի եզրայր, քան արիւնի եզրայրները: Նման օրինակներ շատ չեն եղեր համաշխարհային պատմութեան մէջ: Ստոնեւածքով տարբեր՝ անոնք գիրար կը լրացնէին: Երեք մեծ սիւններ միեւնոյն Աւխտի: «Քրիստափոր և Սիմոն հակոսեաններ են, բայց փոխադարձ լրացուցիչներ» — կըսէր յաճախ Ռոստոմ, անոնց իսկ ներկայութեամբ, ընկերական դարձ խօսակցութիւններու ընթացքին:

\* \* \*

Եւ ահա Ռոստոմը: Նա ինքն ալ խոշոր «լրացուցիչ» մըն էր, ինքն ալ ոչ պակաս անհրաժեշտ Երրորդութեան մէջ՝ թէ իր նուրբ իմացականութեամբ և թէ իր աւելի հանդիստ, հարթ ու հաւատարակուած խառնածքով: Միայն գիտէր ինքզինքը ջնջել միւսներու առջև — և այդ կընէր սիրով, բնականօրէն, առանց ցոյցի ու կեղծ համեստութեան: Մեծամտութեան արատը, որ իր հիւանդագին արտայայտութիւններով այնքան յատուկ է հայ մտաւորականին առհասարակ, խորթ, օտար էր մեր Երրորդութեան անդամներուն, — այն օտար էր մանաւանդ Ռոստոմին: Դժուար է դանել մեր հին ու նոր, ուսասնայ ու թուրքասնայ բարձր մտաւորականութեան շարքերուն մէջ ուրիշ զկեմք մը, որ լինելով ի բնէ այնքան լայնօրէն օժտած, ունենալով խելքի, humourի, արիւնութեան ու անձնագոհութեան այնքան առատ պաշար մը, միեւնոյն ժամանակ այն աստիճան գերծ լինէր ինքնապաշտումի, փառասիրութեան, ունայնամտութեան հակումներէն, ինչպէս Ռոստոմ:

«Կատարե՛նք մեր պարտքը մեր թշուա ժողովուրդի հանդէպ... Փա՛ռք, ծա՛փ, դափնինե՛ր — ունայնութիւն ունայնութեանց»... Այդպէս կըսէր մեզ անոր մշտադարձ ու ժպտուն զէմքը, անոր իւրաքանչիւր խօսքը և ժեսթը:

Գիծ մը՝ որ այնքան կը գեղեցկացնէր զաղափարական դոր-

ծիչը, կուտայ անոր փայլ ու հրապոյր, կը դարձնէր զայն մտաւորականութեան ո՛ր գանդաւաններու սիրելին\*):

Մոսկւայէն Թիֆլիզ վերադառնալով (1890ին), Ռոստոմ իր ընկեր Զատարեանին հետ առաջին փարողներէն եղաւ նորածին Հ. Յ. Դաշնակցութեան և անոր ամենէն գործօն անդամներէն մէկը: Յղնա գիւղէն էր, նոյն Գողթանէն, որ ծներ է Քրիստափորը: Ըմբոստ մըն էր արդէն Մոսկւայի Պետրոսեան ճեմարանին մէջ, ուր մասնակցեր էր ուսանողական ծանօթ խառնակութիւններուն: Սպարտական տիպ մըն էր, խստարարոյ, չարքաչ կեանքի և դժնդակ աշխատանքի մարդ մը: Փիղիքապէս ամենէն ուժեղն ու յողթանդամն էր Երրորդութեան մէջ, որու կրտսեր անդամն էր: Փոքր ինչ դանդաղ էր Քրիստափորի պէս և անոր պէս կամքոտ ու կորովոտ: Առողջ, համաչափ մարմին մը, միջահասակ, լայնաթիկունք և խոշոր, առնական գլուխ մը, խիտ ու ցրիւ մազերով, կարճ ու ցանցառ մօրուքով: Աչքերու մէջ մշտական, հեզնախառն ժպիտ մը: Սուր ըմբռնողութիւն, որ օժտած էր նաեւ սրախօսելու անսովոր կարողութեամբ: Վերին աստիճանի բարի,

\*) Քրիստափորը շատ կը սիրէր Զատարեանը, բայց առանձին քննու-թիւն մ'ունէր դէպի Ռոստոմը: Պէտք էր տեսնել, զգալ Քրիստափորի տառապանքը ամէն անգամ, երբ ոեւէ չարազուշակ լուր կ'առնէր իր սիրելի Քոթոթի մասին: Օր մը, 1903ին, ըստ սովորութեան երկուքով խմբագրատունն էինք, աշխատանքի սեղանին շուրջ: Այդ օրը մեզի լուր հասեր էր Կարսի ուժանակային պայթումի մասին, որուն զոհ դացին չորս ընկեր: Բնականաբար, ամենքս քիչ-չատ ընկճած էինք, խորհելով, որ թանկագին կեանքեր զոհեր են եւ որ դէպքը անշուշտ ոտս ու թուրք կառավարութիւններու ուշադրութիւնն է հրաւիրեր մերիներուն վրա: Բայց Քրիստափոր աւելի ծանրակշիռ պատճառ մ'ունէր յուզելու: Ամբողջ օրը մտայ, սզաւոր տրամադրութեան մէջ էր: Բառ մը չէր արտասաներ, ստէպ նը թողուր աշխատանքը, կը քալէր սրահին մէջ ու անվերջ կը ծխէր: Եւ մինչ ես լուռ կը դբէի, յարգելով իր մտահոգ լուռութիւնը, նա կանկ առաւ ետեւ ու գողգոջուն ձայնով:

— Գիտե՛ս, մեզ մի ծանր հարած է սպասում...

Յայտարարութեան խորհրդաւոր տոնը ցնցեց զիս, թողի դբիչս ու հարցական արտայայտութեամբ դարձայ դէպի Քրիստափորը, որ շարունակեալ աւելի յուզած:

— Իմ հաշուով Ռոստոմը այդ պայթումի միջոցին Կարս պիտը դանկը...

Ու լռեց: Մնացածը պարզ էր: Ռոստոմը «Դաշնակցութեան» ուժանակային գործի մասնագէտներէն էր և այդ օրերը Կարս էր. բնականաբար, դժբախտ փորձին ներկայ պիտի լինէր և ուրեմն, սպանւածներէն մէկը նա էր:

Զարգարաշու Քրիստափորի ենթադրութիւնը. Ռոստոմ զեռ ողջ էր և ինքը Քրիստափորն էր, որ շուտով զոհ պիտի երթար ուժանակային աղէտաւոր արկածին...



ընկերասէր և մարդասէր, ինչպէս իր երկու մտերիմները: Չափազանց պարզ իր շարժումները և ամբողջ կեցածքի մէջ:



Ռ Ո Ս Տ Ո Մ

Ժընևուստ, 1892էն ի վեր, խմբագիրն էր «Դրօշակ»ի և ինքն իսկ գրաշարը: Տարի մը յետոյ, իրեն միացան նոյն կրկնակ պաշտօնին մէջ՝ Յովնան Դաւթեան, Դարեգլին Խաթակ, Սիմոն

Շխեան և ուրիշներ: Թիֆլիզէն ետք, մտերմիկ ընտանիք մըն ալ հաստատուեցաւ Լեմանի ամիսըն: Ռոստոմ — անոր իմացական, յեղափոխական գլուխը:

Գրեկու ձիրք մը չունէր, թէև լաւագոյնն էր եղածներուն մէջ: «Դրօշակ»ի խմբագրապետն էր և ինքն առաջինը կը խնդար իր տխրոսին վրա: Յօդած մը գրել, ճառ մը ըսել, բանախօսութիւն մ'ընել — ճշմարիտ տառապանք էր իրեն համար: Մեծ մասամբ ընկերներուն գրել կուտար «Դրօշակ»ի յօդածները և ինքը սիրով կը շարէր: Մեր ամենէն զարգացած մեծ ընկերներէն էր: Քիչ կը կարդար, բայց լաւ կը մարտէր կարգացածը:

Խմբագրութիւնը և իր ամբողջ ժընևեան կեանքը տաղտուկ կը բերէր ծնեալ դաւադիր-յեղափոխականին և 1895ի սկիզբները նա ձգեց «Դրօշակ»ը իր ընկերներուն, անցաւ Կովկաս ու նոյն տարւան ամառը մտաւ Թուրքաց Հայաստան, էրզրում, որպէս սամովարի (ինքնանու) վաճառական:

\* \* \*

Եւ սպա Սիմոն Զաւարեանը... Մաքրագոյնը մաքուրներէն: «Աշխարհիկ սուրբը», ինչպէս կըսէին ոմանք կատակով: Որոշ կողմերով ասես բոլորովին հակապատկերն էր Քրիստոսափորի: Զիդերու խուրձ մը, որ մշտապէս կաբէկոծէր ու կը բոցավառէր: Փոքրահասակ, վտիտ ու ջղուտ. սիրուն, Ադոնիսեան գլուխ մը, նուրբ դէմքով, թուխ վառվռուն աչքերով: Համակ եռանդ, կեանք ու շարժում: Ըմբոստ, հպարտ, գերազանցապէս ուրոյն, անկախ նկարագիր մը: Երբորդութեան մէջ ամենէն գիտունն էր և գուցէ ամենէն հարցասէրը: Երեքին մէջ ամենէն աւելի թափառեր էր, չիւեր ժողովրդային գանգաւածներուն հետ — և գլուխը լեցուն էր այլազան գիտելիքներու, տեսութիւններու պաշարով:

«Աշխարհիկ սուրբ»... Ոչինչ այնքան ճշտօրէն չի յատկանշեր զազափարի այդ նահատակը, ինչպէս այդ գոյգ բառերը: Աշխարհիկ սուրբ՝ որ նահատակուեցաւ ո՛չ կրօնի սուրբերուն պէս, յանուն սին պաշտամունքներու և ոչ ամուլ քրիստոնէական խոնարհութեամբ, վիզը ծռած բախտի դաժան հարւածներուն տակ, այլ ընկաւ վեհագոյն իդէալի համար, անդուլ պայքարի ճամբուն, որպէս պարծաճանաչ գինուր իր բարձր, նւիրական դիրքին մէջ:

Զինուր — Յեղափոխութեան: Զինուր — նաեւ բարոյական անաղարտ մաքրութեան: Շուրջ քառորդ դար, 1889-90ի երկունքի



օրերէն ի վեր այդ անունը լեցուցեր էր արթնցող հայրենիքի մըթնոլորտը, կովկասահայ երիտասարդութեան շրջանները: Նուրջ



Ջ Ա Ի Ա Ր Ե Ա Ն

քառորդ դար այդ երիտասարդութիւնը դիտէր, որ հայոց մուայլ երկնքի տակ, չոր, նիւթապաշտ բարքերու խոպան աշխարհի մէջ Ջաւարեան անունը ջինջ գաղափարականութեան անուն մըն էր,

վսեմ երազներու և խիզախ ընդվզումներու անուն մը, անվերապահ զոհողութեան և անկաշառ ազնուութեան անուն մը:

Կուգար Լոռիի պատմական բարձունքներէն, ուսկից ելեր են շարք մը նշանաւոր հայ մարդիկ—Լոռու-Մելիքեան, Յովհաննէս Թումանեան (բանաստեղծ), Յովսէփ Արղութեան (Իշխան), Աւետիք Սահակեան (Հայր Աբրահամ) և այլն: Իգահատ գիւղն էր ծննդավայրը, — տարօրինակ գիւղ մը, ուր ուսմիկ դրեթէ չկայ, ամենքն ալ ազնւական են:

Ազնւական — և ինքը Սիմոնը, ազնւական՝ մտքով, հոգով, բարքով:

Մոսկւայի մէջ, նոյն Պետրոսեան ճեմարանում, իր ընկերներուն պէս տարւեցաւ ուսական շարժումներով, բայց երբ, ուսումնաւարտ, վերադարձաւ հայրենիք, շողիացան անոր մէջ աշխարհաքաղաքացիական երազները և ինքն եւս, միւսներուն պէս, համակեցաւ ամենաբուն հայրենասիրութեամբ:

1890 թւականէն ի վեր նա կը դառնայ Կուսակցութեան տիրական դէմքերէն մէկը: Լինելով հանդերձ ուժեղ, շեշտած անհատականութիւն իր ինքնատիպ մտակազմով, խառնածքով ու դիտական սլաշարով, Ջաւարեան եւս առաւել սիրած ու յարգած էր իր բարոյական առաքինութիւններով: Ժողովուրդը իրեն մօտեցող գործիչներուն մէջ ամենէն առաջ այդ բարոյական արժէքներն է, որ կը փնտոէ, և եթէ անոնք չկան, եթէ չկայ մաքրութիւն, շիտակութիւն, անձնփրութիւն, ոչ մի խելք, իմացականութիւն չէ կարող շահիլ ժողովրդեան սիրտը: Կը շահի գուցէ ժամանակաւորապէս — ոչ երբեք յարատեւօրէն: Մարդ-անհատը այնքան աւելի արժէք կը ստանայ իր շրջապատի աչքին, այնքան աւելի կը վաստկի համակրանք ու արժէք, որքան աւելի կը շեշտուին անոր մէջ բարոյական, քաղաքացիական առաքինութիւնները: Առանց ատոնց՝ չկայ իսկ ճշմարիտ մտաւարական մը:

Դիւրին բան չէ մարդ լինել մեր հայկական միջավայրում: «Աշխարհիկ սուրբ»ը — նպաստաւորած, անշուշտ, իր առողջ, բնատուր հակումներէն — ինքն էր մշակել իր բարոյական անձնաւորութիւնը, ինքն էր ձուլել իր քաղաքացիական պատկերը և մէկն էր այն սակաւաթիւ ընտրեալներէն, որոնք կրնան ըսել հպարտութեամբ, — «Homo sum, ես մարդ եմ»...

Եւ վա՛յ անոր, որ կը փորձէր սուեր ձգել այդ անրիծ, մարդկայնատիպ պատկերին վրա... Վտիտ մարմինը կը ծառա-



նար անիրաւ հակառակորդին դէմ՝ սհեղ և անողոք: Ահա քանի մը ուրիշ Կծեր.

«Իրանակցութեան» երկրորդ մեծ առաջնորդը յար և միշտ կը քարոզէր շարքերուն ծայրայեղ խնայողութիւն կուսակցական դրամներու մասին: Եւ իր անձնական ընթացքով օրինակ կուտար ընկերներուն: Այնքան կը քարոզէր խնայողութիւն, որ ընկերներէն ոմանք մանեակ կ'անւանէին զինքը: Պնայողութիւնը կուսակցական դրամներուն վերաբերմամբ անոր աչքին հոմանիշ էր ազնուութեան ու ջինջ դադափարականութեան: Երբ 1903ին Կիլիկիա գնաց և տեսաւ տեղւոյն ղեկավար ընկերներու շուռ, անձնական, անարդարանալի ծախքերը կուսակցական գանձարանէն, վայրկեան մը, ապրած կակիծէն կորսնցուց իր հոգեկան հաւասարակշիռը, ծառայաւ գեղծարար ընկերներու դէմ, որպէս Միքէլ Անջելոյի խաղաղանոց Յիսուսը.

— Դո՛ւրս Հ. Յ. Իրանակցութեան սուրբ տաճարէն, դուք յեղափոխական չէք, այլ գող ու աւազակներ...

Լուծեց անարժան մարմինը, դատի կոչեց գեղծարարները կուսակցութեան դերագոյն ատենին առջև և անոնք դուրս վըտարեցան շարքերէն և Միմոն վերստացաւ իր հոգեկան անդորրութիւնը:

Տեսակ մը Ֆիզիքական դարչանք ունէր դէպի բոլոր փառամունները, ցուցամունները, «աթոռամունները»: Ինքը համեստութեան ու խոնարհութեան կատարելատիպ մըն էր և կատէր կառնիքիտները\*) մինչև հոգու խորքը: Եւ կուզէր, առանց յաւակնոտութեան, մարգել իր կուսակցական շարքերը նոյն համեստութեան ու անշահախնդիր անձնութեան մէջ, առանց որոնց յեղափոխական սուրբ գործը չէր կարող քալել, դադափարական կազմակերպութիւնը չէր կարող ապրել:

Ա՛հ, երբ կուզէք լուծել հայ հաւաքական կեանքի ուշագրաւ առեղծւածներէն մէկը—իմանալ, թէ ի՞նչպէս, ի՞նչ հրաշքով մեր ցաք ու ցրիւ, դարերով անմիաբան ու պառակտած, անհաստապաշտ ու դաւամով ցեղին մէջ ստեղծեցաւ և ամբողջ քառասուն տարի կանգուն մնաց, անհատնում փոթորիկներու մէջ, հայ ծաւալուն քաղաքական կազմակերպութիւնը — երբ կուզէք հասկնալ այդ հրաշք-երեւոյթին գաղտնիքը, յիշեցէ՛ք զեկավար-

\*) Ապարէզի ու սին փառքի հետամուտներ:

Ձերը, յիշեցէ՛ք, որ կազմակերպութեան գլուխ էին կանգնած բուռ մը Զաւարեաններ...

Պոնարհ, համեստ, գերծ գոհհիկ ու մեծամուլ ժեսթերէ — այդպէս բնորոշեցինք զաւարեանական բնաւորութեան մէկ կողմը: Այդպէս էր նա անգամ փառքի գազաթնակէտին, երբ, 1906ին, ողջ կովկասեան հայութիւնը ի դէմս էջմիածնայ Կեղրոնական Ժողովի, վաթսուն պատգամաւորներով, ընտրեց զինքը գրեթէ միաձայն այդ պատմական համագումարի նախագահ:

Եւ սակայն, փառքի — ազնիւ փառքի — մտահոգութիւնը միանգամայն խորթ, օտար չէր մեր ընկերոջ: Նա Ռոստոմ մը չէր, լուիկ-մնջիկ, կորած, քաշած լայն հրապարակէն դէպի խաւար անկիւնները: Զաւարեանի խառնածքը ըմբոստ էր այդ ձևի համեստութեան դէմ: Նա կը ձգտէր դէպի գործի լայնարձակ հրապարակը, դէպի առաջին շարքերը, նա կը ձգտէր... դէպի լեռը: Պատնէչներու, մարտական բարրիկադներու գազաթններն էին, որ կը հրապուրէին զինքը և նա կը մղէր տարերայնօրէն դէպի հոն, իր մտաւոր և հոգեկան ուժերու հպարտ գիտակցութեամբ, երբեք չտարեւելով մանր, անամէջ փառասիրութիւններով, այլ տողորած մէկ տիրական բաղձանքով — փութացնել հայ դատի յաղթանակը, գո՛րծ կատարել ըստ կարելւոյն արագ ու բեղուն և առաջնորդել անօգնական զանգւածները դէպի իդէալը:

Հարուստ ու բազմազան է իր կեանքը Թիֆլիզի մէջ: Գիւղատնտես է — կովկասի առաջնակարգ գիտնական մասնագէտներէն — կառավարութեան պաշտօնեայ է, թերթերու աշխատակից է և միանգամայն գաղտնի ազիտատոր է, քարոզիչ և կազմակերպիչ: Ուր որ հանրօգուտ գործ մը կար, երիտասարդական մի հաւաքոյթ, դադափարային մի հանդէս կամ ըմբոստացման մի արտայայտութիւն, ցոյց ընդդէմ յոռի բարքերու, ցոյց ընդդէմ կառավարութեան, — Զաւարեան միշտ հոն էր և միշտ առաջին շարքերուն մէջ: «Մշակ»ի և Արծրունիի յօբեխանական հանդէսին առաջնակարգ կազմակերպողներէն մէկն էր նա և կը պահանջէր, որ այդ հանդէսէն հեռու պահէին ցուցամուկներն ու փառամուկները նոյն իսկ Մշակի ամենամօտիկ աշխատակիցներէն... Իսկ երբ 1892ի վերջերուն, նոյն Արծրունիի աննախընթաց յուղարկաւորութիւնը կը կատարէր Թիֆլիզի մէջ, երբ կառավարչապետի հրամանով ոստիկանութիւնը միջամտեց ու չէր թոյլ տար, որ յիսուն հազարնոց Ժողովրդական թափօրը ուղղէր Գա-

լովինսկի կոչած կեդրոնական պողոտայով, — խումբ մը երիտա- սարդներ արհամարհեցին կառավարչապետին հրամանը, գլուխ անցան հսկայ թափօրին, տարան իրենց ետևէն զանգաժը և պատ- յեցին ոստիկանական շղթան, դուրս բերելով դազաղը դէպի մեծ պողոտան... Չաւարեանն էր ըմբոստներու յառաջապահը և ամե- նէն յանդուգն առաջնորդը\*):

Այդ առաջին թուիչներն արդէն կը յատկանշէին ապագայ գործիչը:

Գերագանցապէս անհատապաշտ (individualiste) խառնածք մ'ունէր, բառիս, սակայն, արեւմտեան իմաստով, ոչ հայկական: Որքան ալ կը սիրէր ժողովուրդը, որքան ալ սրտով նւիրած լի- նէր զանգաժներու դատին, իր ջերմ ու խորունկ համակրանքը գիտակից անհատներու կողմն էր, խիզախ, ձեռներեց, վճռական, արի փոքրամասնութեան կողմը: Չաւարեանի ըմբոստմով այդ անհատներն են, որ կը նիւթեն համաշխարհային պատմութիւնը, քարշելով իրենց ետևէն կողիտ, յետամնաց, ստէպ անգիտակից, զանգաժը: Կը մերժէր, հետևաբար, մարքսեան տեսութիւնը, որ գերակշռող տեղ կուտայ զանգաժներուն և երկրորդական, եր- րորդական դեր միայն կը յատկացնէ անհատներուն (ղեկավարնե- րուն, հերոսներուն):

1895թ. հոկտեմբեր 7 թւակիր նամակի մը մէջ հետեւեալը կը գրէր թիֆլիզէն ժընեւի ընկերներուն.

— «Ամբոխի վերայ ազդեցութիւն կունենայ աւելի համար- ձակը: Ես Բօկլի, նոյն իսկ սոցիալիստների հետ համամիտ չեմ, որ ամբոխն է ազդում անհատի վերայ: Ընդհակառակն, անհատ- ները, հերոսներն են տանում ամբոխին հոգեբանական տեսակէտից: Կարլայլը, Միխայլովսկին կարծես աւելի արդարացի են»...

Անշուշտ, 1895ին արդէն Չաւարեան և իր զինակիցները եկած էին այն համոզման, որ հայկական մեծ շարժումներ կազ- մակերպելու համար, դժուար է յոյս դնել ժողովրդային մեծ զանգ- աժներուն վրա և որ գործը պիտի տանին իրենց ուսերուն ընտիր, արի ու գիտակից փոքրամասնութիւնները, որոնք պիտի ձգտին քաշել իրենց հետ ծոյլ ու հլու հպատակութեան մէջ մարգած «ամբոխը»: Նոյն համոզումին եկած էին և թուրքահայ ըմբոստ մտաւորականներէն լաւագոյնները, առանց Կարլայլ ու Միխայլով-

\*) Ռուսահայոց առաջին մեծ ցոյցն էր, որու հետեւանքով տեղի ունե- ցան բազմութիւ ձերբակալութիւններ ու բռնատարկութիւններ: Բռնատարկածնե- րուն մէջ էր, բնականաբար, Չաւարեան:

սկի կարդալու: Նոյն համոզումն են ունեցած աշխարհի բոլոր յեղափոխական շարժումներու գրեթէ բոլոր պարագլուխները:

Եւ ինչպէս բոլոր երկիրներու մէջ, նմանապէս Թուրքաց Հայաստանում յեղափոխական գիտակցութիւնը տարածւած չէր ողջ թուրքահայ ընդհանրութեան վրա, այլ միայն ամուր խա- րսիւած էր ընտիր, աչքաբաց փոքրամասնութեան սիրտերուն մէջ: Երբ որոտընդոստ կոչերուն ու յօդւածներուն մէջ ոմանք կը գրէին, թէ ընդհանուր ապստամբութիւնը պիտի պայթի տրւած ազդանշանին վրա, երբ կը գրէին, թէ ժողովուրդը ամենուրեք պատրաստ է ռուսի ելնելու մէկ մարդու պէս, առոնք միայն բա- նաստեղծական ոճեր էին, որ երբեմն պարագլուխներն ալ կը գործածէին ազիտացիական նպատակով, մթնոլորտը երեկտրակա- նացնելու, բոցավառելու միտումով:

Սիմոն Չաւարեանի գրիչը կամ լեզուն չէին հանդուրժեր նման բեմբասացութիւն: Նա բնազդային հակակրանք ունէր դէ- պի այն բոլոր հռետորները, որոնք վայրկենական յաջողութեան համար կուզան ուռցնելու իրողութիւնները, վարագուրելու կա- ցութեան սուերները և շլացնելու իրենց լսարանը մեծաշուք յայտարարութիւններով ու գուշակութիւններով:

Այդ անվախ մարդը մէկ վախ ունէր միայն — կեղծել իրա- կանութիւնը, արտատուրել ճշմարտութիւնը: Եւ ճշմարտութեան նշանաբանը կը հետապնդէր զինքը իր ամբողջ երկարամեայ քա- րոզութեան ընթացքին: Ոչ մի կեղծիք, ոչինչ չինծու, անհարա- գատ, ոչինչ դերասանական...

Հ. Յ. Դաշնակցութեան բարոյախօսն էր նա և դատախազը միանգամայն. — չկար մի հատիկ ընկերական ժողով, ուր նա չիարանէր բարոյական սայթաքումները և չհոլովէր յաւիտենական պատգամները ուղղամտութեան, ազնւութեան, դադափարային կարգապահութեան... Հայկական շարժումը անոր աչքին դերա- զանցապէս կրթիչ ազդակ մըն էր և Հ. Յ. Դաշնակցութիւնը անոր համար միջոց մըն էր՝ ոչ միայն հայ դատը հետապնդելու, այլ և հայ ազգը դաստիարակելու, անոր բարոյական մակարդակը բար- ձրացնելու... Այդպէս կ'արտայայտէր նա անգամ մը եւս Սօ- Փիայի Ընդհանուր ժողովին, իր մէկ երկար բանաձեւի մէջ, որ «կարգապահական» խորագրին տակ կը պահէի Կուսակցութեան արչիվներում:

«Նկատելով — կ'ըսէ Չաւարեան — որ աշխատանքի շահե- րի պաշտպանութիւնը հանդիսանում է մեր նպատակի հիմնական





ՔՐԻՍՏԱՓՈՐ ԵՒ ՍԻՄՈՆ «ԴՐՕՇԱԿ»Ի ՊԱՐՏԵՋԻՆ ՄԷՋ, ԺՐՆԵՒ, 1903Թ.

կէտերից մէկը, իսկ անգործունէութիւնը տանում է մարդկանց անբարոյականութեան և ապրուստի բեքեւ, բայց ծուռ միջոցների դիմելու, որ գցում է կազմակերպութեան վարկը, ժողովը որո-

ղեց՝ ա) որ ամէն մի դաշնակցական օժտւած լինելու է ազնիւ մարդին վայել բարոյական ու յեղափոխական յատկութիւններով, բ) որ ամէն մի դաշնակցական, ուր որ էլ նա գտնուի, տարածելու է իր գաղափարները քարոզով և մանաւանդ կօնկրէտ գործերով, գ) որ ամէն մի գիւնոր, կամ այլ կարգի յեղափոխական, արտասահմանում կամ երկրում, երբ նա ամբողջովին կազմակերպութեան տրամադրութեան տակ չէ, իր ապրուստը ապահովելու է իր ազնիւ աշխատանքով»...

\* \* \*

Այդպէս էր ահա՛ մեր ղեկավարող Երրորդութիւնը: Տարբեր իրենց խառնւածքով՝ երեք ընկերները կը կազմէին լիակատար ներդաշնակութիւն: Զաւարեանը, իբրև ամենէն տաքն ու ըմբոստը, միշտ քննադատող ու հարւածող, Քրիստափորն ու Ռոստոմը, իբրև աւելի հանդարտ, հաւասարակշռւած բնավորութիւններ, — անոնք երեքով կը կազմէին Մեծ Ուխտին բիւրեղեայ կորիզը, որ մտքի ու հոգու անդուլ ճառագայթումով հետզհետէ կարգասաւորէր հայ գաղափարային անդաստանը և կաճեցնէր հայոց սոցատութեան փաղանգը: Տարածայնութիւններ, հարկաւ, կը ծագէին երեքի միջև, դժգոհութիւններ, բուռն վէճեր, հարկաւ, տեղի կունենային, բայց անոնք անգոր էին քանդելու զեղեցիկ ներդաշնակութիւնը, անգոր էին խախտելու — կորիզը:



### ՄՐԱԳԻՐ, ՏԱԿՏԻԿ, ԱՇԽԱՐՀԱՀԱՅԵԱՑՔ

Առաջին համագումար.— Ընդհանուր ապստամբութեան խնդիրը.— Արամ Արամեանի առաջարկը.— Անհատական տերրոր.— Ձէն-  
ֆի փոխադրութիւն և ժողովուրդի մարզում.— Յեղափոխութիւն  
և գանգաւածային հոգեբանութիւն.— Կազմակերպութեան ձևը.—  
Կեդրոնացում և ապակեդրոնացում.— Յոնան և Ջաւարեան.—  
Անփութութիւնը ծրագրային խնդիրներու հանդէպ.— Քաղաքա-  
կան և տնտեսական պահանջներ.— Ժազովրդապետութիւնը՝ Կու-  
սակցութեան հաւատամք.— Ընկերվարական հովեր.—

Եւ ահա 1892ի աշնան Ընդհանուր Ժողովը: Առաջինը Կու-  
սակցութեան ծնունդէն ի վեր:

Ներկայ էին գլխաւոր ղեկավարներուն հետ, ի միջի այլոց,  
Արամ Արամեան, (էրզրումէն), Տերսիմի Քեռին, Պետո, Արարո,  
Նիկօլ-Դուման, Յովսէփ Արղութեան, Յոնան Դաւթեան:

Ժողովները տեղի կունենային ջղայնացած մթնոլորտի մէջ  
(Թիֆլիզում), ուսական ժանդարմերիայի արթուն հսկողու-  
թեան տակ: Ընկերները շարունակ կը փոխադրուէին թաղէ թաղ,  
տունէ տուն:

Եւ այդտեղ, վերջապէս, Հ. Յ. Դաշնակցութեան կարեւո-  
րագոյն գործիչներու այդ անդրանիկ համագումարին մէջ, քննու-  
թեան դրեցան ծրագրային, տակտիկային ու կազմակերպչական  
խնդիրները, շօշափեցաւ անգամ կուսակցական ընդհանուր, ըն-  
կերային աշխարհահայեացքի խնդիրը, թէև ծրագիր, տակտիկ,  
աշխարհահայեացք ու նման բառեր շատ քիչ կը հորովուէին այն  
ատենները կազմակերպութեան լայն շրջաններուն մէջ, չէին հե-  
տաքրքրեր մանաւանդ մեր մարտական շարքերը: Կը խորհէին,  
թէ տակտիկը, գործելակերպը երկար քննութեան պէտք չունէր  
արդէն, նոյն իսկ ղեկավարներուն շրջանում:

«Ձէնք և զինավարժութիւն թուրքահայ ժողովուրդին՝ ինք-  
զինքը պաշտպանելու և կուրի պատրաստելու համար» — այս քա-  
նի մը բառերուն մէջ կամփոփուէր տակտիկի հրատապ պահանջը:

Այլ եւս խօսք չկար ընդհանուր ապստամբութեան մասին — բառ  
մը, որ յաճախ կարտասանուէր երիտասարդ ու խանդավառ տար-  
րերու հաւաքոյթներում և որ անգամ մը երեւցեր էր նոյն իսկ  
Դրօշակեան մէկ յօդուածի մէջ...

Ցնորք մըն էր այդ ընդհանուր ապստամբութիւնը: Երբեք,  
ոչ մէկ երկրի մէջ ամենէն հզօր յեղափոխական կազմակերպու-  
թիւնները չեն կարողացեր իրազործել այն: Ոչ իսկ Դանտոններն  
ու Միրաբօները կրցան նետել Մեծ Յեղափոխութեան դուռ ալիքը  
դէպի Ֆրանսայի բոլոր կողմերը, և փոթորիկը մնաց մեծ մասամբ  
կղզիացած մայրաքաղաք Պարիզին մէջ: Ոչ իսկ Գարիբալդի և  
Մաձձինի յաջողեցին ընդհանրացնել ապստամբութիւնը Իտալիոյ  
այնքան նպաստաւոր աշխարհագրական միջավայրում, ուր Ալ-  
պերէն մինչև Պալերմօ հոծ, միապաղաղ իտալական ժողովուրդ  
մ'ունէին և թիկունքն ալ՝ անկախ Պիեմոնտ մը:

Եւս առաւել ցնորք մըն էր ընդհանուր ապստամբութիւնը  
մեր, հայկական պայմաններուն մէջ... Ուստի ոմանք կը քարո-  
զէին մասնակի խլրտումներու, անհատական և խմբական ընդվը-  
ղումներու, հահարեկումի, տերրօրի անհրաժեշտութիւնը:

Այդ տակտիկի արծարծողն եղաւ, 1892ի համագումարին  
կարնոյ պատգամաւորը, Արամ Արամեան (Աշոտ-Թաթուլ):

— «Անհատական տերրօր թուրք կառավարական պաշտօնեա-  
ներու և հայութեան ամէն կարգի թշնամիներուն դէմ, քանի որ  
մեր տկար ու ցրած ժողովուրդին համար ընդհանուր ապստամ-  
բութիւնը անկարելիութեան չափ դժար է» — այսպէս կը փաս-  
տարանէր Աշոտը համոզուած շեշտով: Եւ կ'աւելցնէր. «Տերրօրը  
կատարելէ յետոյ երբեք փախուստ չտալ, այլ կանգնիլ տեղն ու  
տեղը և յայտարարել, որ ինքն է կատարողը, առանց ուրիշներու  
մասնակցութեան ու դրաման, որպէսզի իր քայլի համար պատաս-  
խանատու չկուզին ուրիշները»...

Ժողովը մերժեց այդ առաջարկը — այսպէս կը վկայէր  
Քրիստափոր («Դրօշակ», 1889, թիւ 8): Ընդունելի էր, ի հար-  
կէ, տերրօրը ընդդէմ ներքին ոսոխներու՝ լրտեսներու, մատնիչ-  
ներու: Թաթուլ դառնացած, ձգեց կազմակերպութիւնը և դնաց  
Թափառելու մէկ երկու տարի, ապա նորէն մտաւ գործօն շարքե-  
րուն մէջ և վերադարձաւ երկիր, Դժոխքի ու այլ խմբապետնե-  
րու հետ:

Ժողովի ընդհանուր տրամադրութիւնն այն էր՝ որ առժա-  
մապէս կազմակերպութեան ճիգերը կեդրոնանան զէնքի փոխա-

դրութեան, ժողովուրդի զինման ու մարզումի աշխատանքին շուրջ: Զգաստ դիտողներ՝ մեր ղեկավար գործիչները հասկցեր էին, որ հակառակ երիտասարդ տարրերու հանուր խանդավառութեան, ժողովուրդի լայն գանգաւածները պատրաստ չէին բնաւ համատարած շարժումի համար...



Ա Ր Ա Մ Ա Ր Ա Մ Ե Ա Ն

Ընկերային գիտութեան տարրական դրութիւններէն մէկն է այս ճշմարտութիւնը՝ որ գանգաւածներու հոգեբանութիւնը ամէն տեղ, անգամ արեւմտեան յառաջադէմ ազգերու մէջ, ընդհանրապէս նորատեսակ է (misonéiste), որ լայն խաւերը առհասարակ մեծ դժարութեամբ կը մարսեն նորոյթներու և յեղաշրջումներու գաղափարը: Սովորութեան գերի են գանգաւածները, կրաւորական, հլու հնազանդ, ստէպ նոյն իսկ ճակատագրապաշտ, սովոր՝ անսորտունջ տանելու լուծը...

Այդպէս է մանաւանդ յետամնաց ազգերու մէջ, այդպէս է հայոց իրականութեան մէջ, ուր սովորութեան բռնակալութիւնը բացարձակ է, ուր ստրկամտութեան բնազդը խոր արմատներ ձգեր է դարերէ ի վեր ամենէն դարչելի լուծին տակ... ԲաժՖին ևս ուժով չեշտեր է ա՛յդ երևոյթը իր կայծերին մէջ, ուր կը յայ-

տարարէ Ասլանի բերնով, որ «ամբոխի», գանգաւածի վրա մեծ յոյսեր դնելու չէ, որ թուրքահայոց ընդհանրութիւնը չպիտի շարժի «գատութեան» կուռի համար և որ միակ յոյսը գաղափարական փոքրամասնութիւնն է:

\* \* \*

Կազմակերպութեան մեռի խնդիրն եւս երկար քննութեան առարկայ եղաւ այդ Առաջին Համագումարին մէջ, և ընդունեցաւ ծանրակշիռ որոշում մը: «Դաշնակցութեան» Կեդրոնը, որ մինչ այն լաւ-վատ կատարեր էր իր պաշտօնը, վերացաւ և այնուհետեւ կուսակցութիւնը սկսաւ գործել ապակեդրոնացման նշանակին տակ:

Կազմակերպական այդ սիստեմը, որ լայնորէն կը քաջալերէ տեղական ձեռներէցութիւնը և մղում կուտայ ընկերային բոլոր ուժերուն, հրամայական թելադրանքն էր նախ և առաջ հայ ժողովուրդի աշխարհազրական կացութեան: Հայ ազգը — ցաք ու ցրիւ վանէն մինչեւ կիլիկիա, Թաւրիզէն մինչեւ Թիֆլիզ և հեռաւոր գաղութները... Տարածութիւն-ազդակը ինքնին արդէն արգելք մըն էր խիստ կեդրոնացած ղեկավարութեան և միօրինակ գործունէութեան դէմ: Ասոր աւելցուցէք մտայնութեանց ու բարքերու տարբերութիւնները հայութեան տարբեր հատուածներու մէջ: Դարերով դատուած և իրարմէ խորթացած, այդ հատուածները առաջին անգամը կը կոչէին ընդհանուր, համագլխային գործի մը համար...

Ապակեդրոն սիստեմի ջերմ փաստարաններ էին՝ Յոնան Դաւթեան\*) — որ այդ սիստեմի խոշոր առաւելութիւնները դիտեք էր դէիցերական կարգերու մէջ — և մանաւանդ Զաւարեան, որ իր անհատական խառնուածքի մղումով իսկ՝ համոզուած ասոյցանն էր տեղական ինքնավարութեան, ոչ միայն յեղափոխական շարժումներու մէջ, այլ և հանրային-քաղաքական կեանքում. հետագային գրքոյկ մը նւիրեց այդ խնդրին, Ապակեդրոնացում խորագրով:

\*) Դաշնակցական Ուխտի ամենէն մաքուր, չին, գաղափարական անդամներէն էր Յոնանը, որ 1887ին վարդանի ու նիկոլ-Դուսմանի հետ Շուշի թեմականը աւարտելէ յետոյ, զնաց հետեւելու ընկերային գիտութիւններուն ժընեւի համալսարանին մէջ, ապա մեկնեցաւ Թաւրիզ ուսուցչական պաշտօնով, ժընեւի համալսարանին — որու հետ կապուած մնաց ամբողջ կեանքը ամե-

Պէտք է լայն իրաւունքներ տալ տեղական մարմիններուն, դաշնակցական կոմիտէներուն, կըսէր Չաւարեան. այդպէս միայն



ՅՈՒՆԱՆ ԵՒ ՕՐԹՈՎԵՆ ՊԱՌԹԵԱՆ

Կազմակերպութիւնը կարող է աճիլ և բարդաւաճիլ... Անհնարին է, որ Կեդրոնական Մարմին մը, բացարձակ լիազօրութիւններով

նասերտ եղբայրութեան կապերով — եղաւ հմուտ քարոզիչ (խօսքով) եւ խզմիտ, անբասիր դործիչ, մասնակցեցաւ մեր անդրանի՛կ Ընդհանուր Ժողովին. ապա 1893ի վերջերը վերադարձաւ Ժընեւ, 2-3 տարի վարեց «Երօշակ»ի խմբագրութիւնը, որոշ ատեն Ռոստոմի ու այլ ընկերներու հետ. իսկ 1898ին վերստին հաստատուեցաւ Քարիդի մէջ, որպէս մշակութային ու յեղափոխական ղեկավար դործիչ, վարեց երկար տարիներ տեսչի պաշտօն Լիլաւայի հայ դպրոցում, ուր կը պաշտօնավարէր եւ իր շնչախորհիկ, մտաւորական ամուսինը, Զեփեբուհի մը՝ որ ջերմօրէն կապուեցաւ իր նոր հայրենիքին հետ, սորվեցաւ հայ լեզուն ու պատմութիւնը, դարձաւ առաջնակարգ քարոզիչ դաշնակցական կանանց շարքերում եւ ամուսնուն հետ թեւ թեւի դաստիարակեցին հարիւրաւոր հայ տղաներ ու աղջիկներ, որոնք այսօր կրօնապաշտութեամբ կը յիշեն իրենց անմոռանալի ուսուցիչները: Երկուքն ալ — Յոնան եւ Հօրթանս — մեռան թոքախտէ 1917 եւ 1916 թւականներուն:

օժտւած, Թիֆլիզէն, Պոլսէն, Ժընեւէն կամ Լոնդոնէն հրահանգներ արձակէ հայութեան բոլոր վայրերու տեղական գործունէութեան համար: Թո՛ղ Կուսակցութեան Ընդհանուր Ժողովը որոշէ ընդհանուր սկզբունքներն ու տակտիկը, բայց թո՛ղ իւրաքանչիւր վայրի ընտրեալ մարմինը ինքը վարէ իր տեղական գործերը, ինքը նախաձեռնէ և կատարէ, ղեկավարելով նոյն ընդհանուր ըսկզբունքներէն:

Ապակեղրոնացման դրութիւնն եւս, անշուշտ, իր խոշոր անպատեհութիւններն ունէր և երբեմն կը քաջալիրէր տեղական մարմիններու, անհատներու ինքնազուլիս, քմահաճ, անիշխանական արարքները... Հարկ էր խուսափել ծայրայեղութիւններէն:

Իրականին մէջ գոյութիւն ունէր յայտնի կեդրոնացում մը. այս կամ այն խոշոր ձեռնարկը ունէ տեղ կը կատարէր առհասարակ կեդրոնական ղէմքերու գիտութեամբ ու հաւանութեամբ (օրինակ, Օսմանեան Բանքայի ղէպքը, Պանասորի արշաւանքը և այլն): Եւ այդ կը լինէր, ի հարկէ, ոչ բռնադատեալ, այլ ինքնայորդոր, ընկերական ձեւով, վասնզի մեծ էր այդ կեդրոնական ղէմքերու հմայքը և ոչ մի կոմիտէ, երկրի ոչ մի վայրին մէջ չէր ձեռնարկեր սեւէ խոշոր պատասխանատու գործի, առանց Քրիստափորի, Չաւարեանի և այլ հեղինակաւոր առաջնորդներու հաւանութեան: Հետագային նոյն իսկ կեդրոնացումը միշտ աւելի շեշտուեցաւ, մտնելով Կանոնադրութեան մէջ, ստանալով այսպէս ասած՝ օրէնքի ոյժ: Ընդհանուր Ժողովը կուսակցութեան գերագոյն ատեանն էր, բայց Ընդհանուր Ժողովներ գումարելը դիւրին բան չէր հայկական իրականութեան մէջ: Երկար տարիներ կանցնէին մէկ ժողովէն՝ միւսը: Իսկ կեանքը չէր սպասեր: Անակնկալ անցքերը կը պահանջէին շուտընդօրոյթ որոշումներ ու ձեռնարկներ: Ահա թէ ինչու կազմակերպութեան ձեւի խնդիրը երկար վիճարանութեան նիւթ եղաւ դարձեալ 1896ի կուսակցական Երջանային Ժողովին մէջ: Այնտեղ մէկ քանի պատգամաւորներ տրտունջ յայտնեցին, թէ կարգապահութիւնը թոյլ է շարքերուն մէջ, թէ երբեմն մէկ կոմիտէի վճիռը կը քանդէ միւս կոմիտէն, մէկ ուրիշը կը գործէ հակառակ Բիւրօի որոշումին ևն:

Ուրիշ ընկերներ յիշեցուցին, որ երբեմն ստիպողական անհրաժեշտութիւն կը յայտնուի այս կամ այն մարմնի համար՝ որոշում մը ընդունիլ յանուն Կուսակցութեան, կամ թէ Ընդհանուր Ժողովի ունէ վճիռը փոփոխել, յարմարցնել պարագաներուն,

գործի ընթացքին: Երբեմն ալ հարկ կը տեսնուի բանակցութիւն վարել այս կամ այն կառավարութեան կամ քաղաքական գործիչին հետ:

Այդ շարք մը նկատումներով, 1896ի ժողովը՝ պահպանելով հանդերձ ապակեղրոնացման հաւատամքը, բայց և կամենալով չեզոքացնել, կանխել այդ սխտեմի ծայրայեղութիւնները, հետեւեալ որոշումներն ընդունեց.

1. Կազմակերպել նոր Բիւրօ մը\*): Ուժեղ խմբադրութիւն մը Դրօշակի համար, որու անդամներէն մէկը պէտք է մերթ ընդ մերթ շրջափոխի արտասահմանում, «կազմակերպէ նորանոր խումբեր, բանակցի այլ և այլ գործիչներու հետ և առհասարակ աշխատի վառ պահել հայկական բողոքը»... «Այդ խմբադրութիւնը միեւնոյն ժամանակ լինելու է ամբողջ Դաշնակցութեան արտասահմանեան ներկայացուցիչ-Բիւրօն:

2. Ժողովը լիազօրութիւն տուաւ երկու Բիւրօներուն և Կ. Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէին, որպէսզի հարկ եղած դէպքում իրարու հետ խորհրդակցելով բանակցին այս կամ այն պետութեան կամ քաղաքական գործիչին հետ, պատասխանեն անոնց հարցերուն ու առաջարկութիւններուն և նոյն իսկ որոշումներ ու վճիռներ կայացնեն ամբողջ Դաշնակցութեան կողմէ:

Աւելի կարեւոր որոշումներ ընդունեց Երկրորդ Ընդհանուր Ժողովը, որ վերջնականապէս հաստատեց երկու Բիւրօներու գրութիւնը: Ահա այդ որոշումներէն կարեւորագոյնները.

Կատարելապէս ապահովելու համար յեղ. ձեռնարկներու իրադրծումը (մարտական ու զինական ուժերու կեդրոնացում որոշ վայրերու մէջ, ցոյցեր և այլն)՝ լայն խնդիրներու տալ այդ ձեռնարկները վարող մարմիններուն, պատասխանատու ճանաչելով զանոնք իրենց յանձնած գործին համար: Այդ մարմինները որոշեցաւ ընտրել Ընդհանուր Ժողովի կողմէն և անանկ Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէներ:

Չորս վայրեր որոշեցան Պատասխանատու Կեդր. Կոմիտէներուն համար: Այդ վերջիններէն իւրաքանչիւրը սեւէ կարեւոր ձեռնարկ մը կատարելէ առաջ պարտաւոր էր խորհրդակցել զոնէ իր շրջանի Բիւրօին և երկու Պատասխանատու Կեդր. Կոմիտէներուն հետ:

Բացառիկ պարագաներու համար — երբ հարկ է ներկայացնել հայ գաղթ օտարներու առջև կամ ուրիշ սեւէ ծանրակշիռ քայլ մը ընել Կուսակցութեան անունով — ժողովը սահմանեց նոր մարմին մը, զոր անուանեց «Հ. Յ. Դաշնակցութեան Կամքը ներկայացնող Մարմին»: Վերջինը կը կազմէր երկու Բիւրօներու և Պատասխ. Կեդր. Կոմիտէներու ներկայացուցիչներէն, ունէր

\*) Մէկը կար արգէն — Արեւելեան Բիւրօն:

Ընդհանուր Ժողովի իրաւունքներ և կը վարէր բոլոր արտաքին յարաբերութիւնները:

Երկրորդ Ընդհանուր Ժողովը (1898ի) ճշտու որոշեց և երկու Բիւրօներու էութիւնը: Բիւրօն գիտակ կը պահէ իր շրջանի Կեդրոնական Կոմիտէներէ գործի ընթացքի մասին. կանոնադրէր զի կը կատարէ դրամի բաշխումին մէջ: Բիւրօն կը հսկէ իր շրջանի Կ. Կ. ներս հաշիւներուն վրա: Բիւրօներու պաշտօնավարութիւնը կը տեսէ մէկ Ընդհանուր Ժողովէն մինչև միւրը:

Արեւելեան Բիւրօի շրջանը կը կազմէին.

ա) Երկիրը՝ Կիրասոն-Պարբերդ-Տիգրանակերտի դժէն արեւելք. բ) Ռուսաստան և Պարսկաստան: Այդ Բիւրօն կը բաղկանայ եօթ անդամէ:

Արեւմտեան Բիւրօի շրջանը կը կազմէին.

ա) Փոքր Ասիա՝ Կիրասոն-Պարբերդ-Տիգրանակերտի դժէն դէպի արեւմուտք. բ) Եգիպտոս, Բալկանեան թերակղզի, Ամերիկա և ամբողջ արտասահմանը՝ Ռուսաստանէն և Պարսկաստանէն դուրս: Արեւմտեան Բիւրօն կը կազմէին հինգ անդամ, որոնցմէ երեքը կը վարէին «Դրօշակ»ի խմբադրութիւնը և բիւրօական ընթացիկ գործերը: Միւս երկուքը՝ շրջուն գործիչներ:

Երրորդ Ընդհանուր Ժողովը (բացած 1904ի Յունուար 31ին Բուլղարիոյ մայրաքաղաքին մէջ) շնչեց «Դաշնակցութեան Կամքը ներկայացնող Մարմին» անունը և սահմանեց «Դաշնակցութեան Խորհուրդ»: Բիւրօներու և Պատասխ. Կ. Կոմիտէներու ներկայացուցչութիւն՝ որ կը զուգարէր ստիպողական պարզաներում՝ լուծում տալու անակնկալօրէն ծագած հրատապ խնդիրները, մնալով, հարկաւ, Ընդհանուր Ժողովի ընդունած որոշումներու սահմաններուն մէջ: Այդպէս, օրինակ, 1905ի մայիսին, ռուսական յեղաշրջումներու հետեւանքով, զուգարեւոյաւ Ժընեւի մէջ Դաշնակցութեան Խորհուրդը՝ կովկասեան գործունէութեան համար նախադիմ մը մշակելու նպատակով:

Աւանդութիւնը, այնուամենայնիւ, կը մնար գորաւոր: Տեղական գործունէութեան համար մեր մարմինները կը շարունակէին պահպանել լայն իրաւասութիւններ, ինքնօրինութիւն: Իրօք կազմակերպութեան ձևը տասնեակ տարիներու ընթացքին տեսակ մը իրաւախոհութիւն էր, համադրութիւն երկու հակոտնեայ ըսկզբունքներու՝ ապակեղրոնացման և կեդրոնացման:



Երազրային տեսական խնդիրներու և նոյն իսկ գործնական պահանջներու մարզին մէջ «Դաշնակցութեան» ղեկավար շրջանները այն օրերուն կը մատնէին մտքերու մեծ շփոթութիւն, անորոշութիւն, վարանում: Տարաբախտաբար, սեւէ արձանագրութիւն չէ մնացած 1892ի Համագումարի վիճարանութիւններէն ևս: Տեղիք կայ ենթադրելու, որ տեսական ընդլծ ունեցող խնդիրները քննելը են ի միջի այլոց, մակերեսային, թուուցիկ ձևով: Ի՞նչ

գարմանք... Աշոտ Թաթուլներն ու Արարօները, Նիկօլ-Դումաններն ու Պետօները — որոնց տանջող ու տիրական մտահոգութիւնն էր ըստ կարելոյն շուտ ազատել թուրքահայ ժողովուրդը թուրքի, քրդի բռնութիւններէն ու կոտորածներէն — սիրտ չունէին, քնականաբար, դրաղելու ծրագրային խնդիրներով. անոնք, առանց յաւակնութիւններու և առանց ընդդիմութեան, կը թողնէին այդ հոգը համեմատաբար ազատ, ուսումնական ընկերներուն, ինչպէս ըրին 1907ին Անդրանիկ, Մուրատ, Սեպուհ, Վարդան, Սաքօ, Իշխան և այլ բազմաթիւ խմբապետները Վիեննայի Ընդհանուր Ժողովին:

Եւ աւելին կայ: Իրենք ուսումնական ղեկավարներն իսկ, նոյնպէս տարւած կուրի հրատապ հոգերով, ժամանակ և սիրտ չունէին լրջօրէն ու բազմակողմանի կերպով քննելու ծրագրի ու աշխարհահայեացքի խնդիրները և անոնց այդ կարգի մարզանքներուն մէջ ևս երևան կուզան անորոշութիւն, հակասութիւններ ու վարանումներ:

Անորոշութիւն՝ անգամ գործնական պահանջներուն մէջ — վերաբերեալ «մօտիկ» ապագային: Բան մը միայն ակնհիշ է: «Դաշնակցութեան» վարիչ շրջանին պահանջները ազատագրելիք հայրենիքի քաղաքական կարգերու նկատմամբ՝ խիստ չափաւոր էին, հեռու անկախութենէ և նոյն իսկ քաղաքական ճշմարիտ ինքնօրինութենէ (autonomie), չափազանց հեռու երեք միացեալ Հայաստաններու անկախութիւնն ազդարարող Հնչակեան երազներէն:

Քաղաքագէտ Քրիստափորի շունչը կերելի այդ խոհական չափաւորութեան մէջ: Նա կամեցեր է պահանջել հնարաւորը, իրագործելին: Կը թւի թէ անոր ու մօտիկ ընկերներուն ուզածը Ներսէս պատրիարքի ծրագիրն էր մօտաւորապէս: Ահա Դրօշակի առաջին տարւան առաջին թւի խմբագրականը, գրւած անտարակուսելիօրէն Քրիստափորի ձեռքով: Քարոզելով հանդերձ, որ հայութիւնը վստահ միայն իր սեփական ուժերուն, նա լաւ գիտէ սակայն, որ դիւսնագիտութիւնը հայի ու թուրքի միջև կը հանդիսանայ երրորդ անխուսափելի, միջնորդ ազդակը, բուն իսկ իրաւաբարը (arbitre). ուստի գոհունակութեամբ կը շեշտէ այդ խմբագրականին մէջ, որ Վարժապետեան յաջողեր է հայկական հարցը դարձնել «եւրոպական դիպլոմատիայի և միջազգային իրաւունքի խնդիր»:

«Ներսէս պատրիարքի այս խոշոր և հեռատես քաղաքական քայլը... մեր ազգի նոր պատմութեան մէջ մի նոր դարագլուխ սկսող էջ պէտք է համարուի... Մէջ կը բերենք «Դրօշակ»ի այս համարում այդ տեղեկագիրը, որովհետև մեր այժմեան պահանջների գլխաւոր կէտերը մնում են մօտաւորապէս միևնույնը\*): Բայց ահա տարբեր փող մը կը հնչէ Դրօշակի յաջորդ թւին մէջ (1891, թիւ 2): Այդտեղ կը կարդանք հետևեալ ազդարարութիւնը «Խմբագրութեան կողմից».—

«Դրօշակ»ի անցեալ համարում մենք գրել էինք, որ մեր այժմեան պահանջները մօտաւորապէս նոյնն են, ինչ որ յայտնւած են Ներսէս Պատրիարքի ծրագրում: Որովհետև այդ բառերը տեղիք են տւել թիւրիմացութեան, մենք կարելոր ենք համարում յայտնել, որ մենք այդ գրելով աչքի առաջ ենք ունեցել այն դէպքը, եթէ Սուլթանը իւր բարի կամքով մտցնի Տաճկական Հայաստանում Ներսէս Պատրիարքի ծրագրում պահանջւած բարենորոգութիւնները, որ շատ անհաւանական է»...

Քաջշուկ մըն է... յարուցւած, անշուշտ, ձախակողմեան ընկերներու բողոքին վրա: Ապացոյց մը այն օրերու մտքերու շիտթին:

Գաղափարներու քառսին մէջ պարզ է մէկ բան. Դաշնակցութիւնը հանդէս կուզար ժողովրդապետութեան սկզբունքի նշանակին տակ, անոր քաղաքական հաւատամքն էր — դեմոկրատիզմ: Անոր առաջին ծրագիրը կը յայտարարէր.

«... Այս բոլորին վերջ կարող է տալ միմիայն բուն յեղափոխութիւնը... Պէտք է... ոչնչացնել արդի միապետական բռնակալ ուժի մը, ձեռք բերել ազգերի համերաշխութիւն, աշխատանքի ապահովութիւն, խղճի, խօսքի, համոզմունքի ազատութիւն»:

Դեմոկրատիզմի (ոսմկապետութեան) հաւատամքը հանգամանօրէն կը լուսարանէր մեր աւագ ընկերներու — գլխաւորապէս Քրիստափորի և Չաւարեանի — Այբ ու Բեն խորագրով յօդւածաշարը, «Դրօշակ»ի առաջին թիւերուն մէջ: Այդտեղ, խօսելով

\* Ահաւասիկ Ներսիսեան Նախագծի այդ գլխաւոր կէտերը. Տաճկահայաստանը պարունակում է իր մէջ երգրումի եւ վանի վիւյթները, հիւսիսային մասը Դիարբեքի Վիւյթի, Արշնայ սանջակը եւ Սզերդի սանջակի հիւսիսային մասը, որոնք կազմում են Մեծ Հայաստանի տաճկական մասը եւ բացէ գրանից, առեւտրական յարաբերութիւնները թեթեւացնելու համար Բիզնէ նաւահանգիստը... Հայաստանը կը կառավարուի հայ Ընդհանուր Նահանգապետով, որ կը նշանակուի Բարձր Դռնից մեծ պետութիւնների համաձայնութեամբ...



Հայաստանի գալոց քաղաքական կարգերու մասին, մեր ընկերները մէկ կողմէ կը մերժեն «Արմենականներու» պարզունակ հասկացողութիւնները, միւս կողմէն հնչականներու ընկերվարական, մարքսիստական շարք մը գաղափարները:

Ստիպած ենք սահմանափակել փոքրիկ քաղաքներով միայն:

«Ամբողջ կուլտուրական աշխարհի պատմութիւնը... ցոյց է տալիս մեզ, որ յանձնել ամբողջ ժողովրդի բախտը մի դասակարգի, որը իր կացութիւնը կարող է հաստատել ծագման, Ֆիզիքական և նիւթական ոյժի կամ թէ նոյն լակ ուսման վերայ, տալ կառավարութեան ղեկը որևէ դասակարգի, կը նշանակէ ստեղծել ճշում այդ դասակարգի, դարձնել ժողովուրդը ծառայող այդ փոքրիկ մասի:

«... Հայ յեղափոխականները միշտ դէմ լինելով որևէ առանձնաշնորհումների, կը զարգացնեն ու կընդարձակեն դարերի ընթացքում հայութեան մէջ... խորը արմատ ձգած ընտրողական սկզբունքը: Ապագայ ազատ Հայաստանում իշխող ռամկավարական սահմանադրութիւնը, ծառայելով ընդհանրութեան շահերին, պիտի հաստատուած լինի ամէն հասակաւոր բնակչի հաւասար ընտրողական իրաւունքի վերայ, առանց որևէ ցէնզի...»\*)

«Որպէս զի ժողովուրդը ոչ միայն խօսքով, այլ և իրականապէս օգտւի իր ձեռք բերած ազատութիւնից... հէնց առաջին քայլերում ժողովրդի ներկայ թշուառ դրութեանը օգնելու համար մենք անհրաժեշտ ենք համարում — տալ չունեցողին հող և... ապահովել մշակողին հողից օգտւելու կարելիութիւնը»:

Ապա բիրիական այս ֆրագը «արդարութեան դիւստրօպա-հանջի մասին», որ Սիմոն Զաւարեանինն է — շատ կը սիրէր մեր ընկերը և ամէն առթիւ կը հոլովէր այն — թէ «ամէն մարդ իր քրտինքովը պիտի աշխատէ կերած հացը և հաւասար աշխատանքի հետ անհատը պիտի ունենայ նոյնպէս հաւասար իրաւունք կեանքից օգտւելու»:

Այս ամենը, որ մտաւ «Դաշնակցութեան» հին ծրագրի մէջ, ոչ միայն սոսկ դեմոկրատիզմ է (ռամկավարական հաւատամք) — այլ և ընկերվարութեան հիմնական սկզբունքներէն են, արտա-յայտուած, փոքր ինչ տարտամ, խակ ու կցկտուր ձևերով: Վասն զի ընկերվարութիւնը (սոցիալիզմ) ոչ այլ ինչ է, բայց եթէ դեմոկրատիզմ, բառիս լիակատար, գիտական իմաստով. ընկերվարութիւնը դեմոկրատիզմն է, հասցուցած իր տրամաբանական եզ-

\*) Յէնչ — սակ:

րակացութեան, իր զարգացման բարձրագոյն հանդրանին: Ժն-դովուրդն է, որ պէտք է իշխէ Հայաստանի մէջ, լիակատար վեհապետական իշխանութեամբ — այս է Դաշնակցութեան վա-րիչներու ընկերային-փիլիսոփայական աշխարհահայեացքի հիմ-նաքարը\*):

Այդ աշխարհահայեացքի ոգով են խմբագրուած ծրագրի այս հիմնական կէտերը:

Ապագայ ազատ Հայաստանում իշխող ժողովրդական-ռամ-կավարական կառավարութիւնը, ծառայելով ընդհանրութեան շահերին... պիտի հաստատուած լինի ամէն մի հասակաւոր բնակչի հաւասար ընտրողական իրաւունքի վրայ, առանց որևէ սակի: Կեանքի և աշխատանքի պաշտօնութիւն ամենախիստ մի-ջոցներով:

Տարբեր ազգութիւնների և դաւանութիւնների հաւասարու-թիւն օրէնքի առաջ:

Ազատութիւն խօսքի, մամուլի, ժողովների:

Ամէն տեսակ տուրքերի քանակութիւնը պիտի որոշուի ըստ կարողութեան, համբայական սկզբունքով:

Վերը ըսինք, որ «Այբ ու Բեն» խորագրով «դրօշակեան» յօդածաշարը պատասխան էր նաեւ Հայ մարքսիստներու չա-փագանցութիւններուն:

Չափագանցութիւն՝ ամենէն առաջ քաղաքական պահանջնե-րուն մէջ: «Դաշնակցութեան» ռահվիրաները իրենց հրապարակա-կախօսութեան մէջ ոչ միայն չէին արտասաններ անկախութիւն բառը, այլ և չէին ընդուններ անկախութիւնը որպէս պահանջ: Ահա թէ ինչ կը կարդանք «Դրօշակ»ի թիւ 5ի մէջ (1893թ.) —

«Մենք հակառակ ենք այն հայեացքներին, որոնք ժողովրդի դրութեան բարեփոխումն անսպասան կապում են միմիայն նրա անկախութեան հետ»...

Հ. Յ. Դաշնակցութիւնը պարզեր էր կուր դրօշը յանուն Տաճկահայաստանի քաղաքական ու տնտեսական ազատութեան և այլ գրօշի սակ կը կոչէր նոյն հողին վրա ապրող քերդերը,

\*) Դեմոկրատիզմը պէտք է լինի ընկերվարական, որպէսզի լիովին հաւատարիմ լինի իր բառացի իմաստին ու կոչումին (դեմո-կրատիկ, ժող-վարդա-պետութիւն): Եւ ընկերվարութիւնն ալ պէտք է լինի դեմոկրատիկ, այսինքն ժողովուրդի անսահմանափակ, անկաշկանդ տիրապետութիւն, այլա-պէս պիտի դառնայ բուրժուական բռնապետական սոցիալիզմ...

Թուրքերը, եղիտիները և այլն: Հնարաւոր է, որ մեր հին ընկերներու մտքին մէջ՝ Տաճկահայաստանի գալիք աղատ, ուսմակաւարական կարգերը պիտի գտնային համգրւամ մը դէպի լիակատար հայկական անկախութիւն, ինչպէս որ Եզու. Բուլղարիայի, Արեւելեան Ռումելիայի և Կրետէի պարապաներում: Հնարաւոր է և հակառակ ենթադրութիւնը: Մերիները երջանիկ պիտի լինէին, անշուշտ, իրականացած տեսնելու թէկուզ հայկական Լիբանան մը... Անոնք դուցէ և բնաւ յոյս չունէին, թէ Թուրքաց Հայաստանի աշխարհադրական և ցեղադրական պայմաններուն մէջ երբեք չէր կարնար ստեղծել անկախ Հայաստան մը... Թուրքահայ ժողովուրդի ցիր-ցան վիճակը չունէր նմանութիւն բալկանեան ազգերու և նոյն իսկ Լիբանանի ժողովուրդի վիճակին հետ:

Եւ այսպէս թէ այնպէս, Դաշնակցութեան առաջին քաղաքացիական պայքարը, այն օրերու պայմաններուն մէջ, հրաժարեցան անկախութիւն սն սկզբունքէն: Իբրև զգաստ, իրապաշտ խորհողներ, անոնք հանդէս եկան Եւրոպայի և Թուրք ու քիւրդ ժողովուրդներու հանդէպ աւելի համեստ, սահմանափակ ծրագրով մը: Լաւ կըմբռնէին, անշուշտ, թէ որքան զրգուիչ ու վանող բնոյթ պիտի ունենար հայ յեղափոխականներու ընթացքը յաշտ խաւամ ազգաբնակիցներու, եթէ անոնք հայկական անկախութիւն մը պահանջէին այն վիճակներուն մէջ, որ մեծամասնութիւնը կը կազմէին նոյն այլ խաւամ ժողովուրդները: Լաւ կըմբռնէին մեր հին ընկերները, թէ որքան յանդուգն ու ցնորական պիտի երևէր անկախ Հայաստանի պահանջը նման պարտաւորելի պայմաններու մէջ, յաշտ Ռուսաստանի, Եւրոպայի, որոնք կացութեան տէրն էին և գերազանց իրաւարարը:

\*\*\*

Հայ մարքսիստներու ծայրայեղութիւններուն, անոնց վարպետին ընկերային կառուցումներուն առթիւ, «Դաշնակցութեան» վարիչները այսպէս կարտայայտէին դեռ «Դրօշակ»ի առաջին թւերուն մէջ.

«Ինչպէս հետաւոր անցելին, նոյնպէս և իղէալական ապագային մենք տալիս ենք երկրորդական նշանակութիւն»: («Դրօշակ», 1892 № 3):

Ինչպէս ըսինք, այն առաջին տարիները ծրագիր տակաւին

չկար և հակասական յայտարարութիւններ ալ կրնային տեղ գտնել Դրօշակին մէջ: Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ ինքզինքը յայտարարեւ էր կենդանի գործի կուսակցութիւն, ծայրայեղօրէն անփոյթ էր թղթի, գրչի մարգանքներուն նկատմամբ — անփութութիւն մը, որ գրեթէ կը սահմանակցէր արհամարհանքի:

Որքան ալ մեր Երրորդութիւնը, դեռ ուսանողական օրերէն, շեմ փարած լինէր ընկերվարութեան գաղափարին, որքան ալ խոր լինէր անոր հաւատը դէպի գալոց արդար, մարդկային իրաւակարգը, — այնուամենայնիւ, կուսակցութիւնը, որ հիմնեցին Քրիստափոր, Ռոստոմ, Զաւարեան ու ընկերները, դուռ ընկերվարական կուսակցութիւն մը չէր և նա չդարձաւ այդպիսին անգամ 1907 թւականին, երբ համառուսական շարժումներու հետեւանքով, ընդունեցաւ ընկերվարական ծրագիրը Վիեննայի Ընդհանուր ժողովին մէջ: Դեկավարող մտաւորականութիւնն էր վարպետութեան դաւանողը — ոչ գանգաւոր: Հակառակ մնացին ընդհանրապէս և ռազմիկ տարրերը, թէև ընդդիմութիւն չէին ընէր:

1892 թւականին ընդունեցաւ ընկերվարական գաղափարը, բայց դեր մը չխաղաց նա երկար տարիներ հայ կեանքին մէջ: Ընդունեալ էր, իբրև հեռաւոր իղէալ մը, գոր կարելի էր քարոզել մեծ հայաբնակ կեդրոններու մէջ, մտաւորական շրջաններում: 1894 թւականին ի վեր, «Դրօշակ»ի խմբագրութիւնը, համաձայն հին ծրագրի հրահանգին, պարբերաբար կը հրատարակէր, ի միջի այլոց, և ընկերվարական գրքոյկներ: Ընկերվարութեան սկզբունքը արծարծեցաւ այդ ծրագրին մէջ, առանց բառը արտասանելու:

Անշուշտ, մարքսիստ հակառակորդները՝ հպարտ իրենց փոխ առած, գրեթէ արտազրած, ընկերվարական ծրագիրներով՝ հեզնեցին «Դաշնակցութեան» վարիչներու մտավախութիւնն ու պատեհապաշտութիւնը... Ինչո՞ւ ասոնք, բայց ու անկեղծ չէին խօսեր «դասակարգային կուր» ու նման բաներու մասին... Տրտունջներ եղան և մեր շարքերում... Ոչ ոք կարող է լուրջ ու արդար պատճառաբանութեամբ մեղադրել Քրիստափորն ու Զաւարեանը, Ռոստոմն ու այլ ընկերները, որ չուզեցին միւսներուն պէս կապկել ուսու յեղափոխականները և զարդարել Թուրքահայ դատի իրենց ամենօրեայ քարոզչութիւնը ընկերվարական Ֆրագաբանութեամբ: Էութիւնը կար — բաւ էր: Եւ այդ էութիւնը աւելին կըսէր քան բառը: Շատերը — անգամ մեր ռազմիկ շարքերէն — կը հասկնային և սիրով կորդեգրէին վարպետութեան էութիւնը:

նը, բայց ընկերվարական բառէն կը խրտչէին, բառը կը հալածէին: Դեռ այսօր ալ, անգամ մեր եւրոպայեան գրող ու գործող մտաւորականներուն մէջ, բազմաթիւ են նախապաշարեալ գլուխներ, որոնք կը սարսափին այդ բառէն: Այնքան կը սարսափին, որ փոքրագոյն ճիշդ մը իսկ չեն ըներ՝ գէթ հարեւանցի ծանօթանալու վարդապետութեան այր ու բենին հետ:

## VI

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ՈՐՊԷՍ ԽԱՐԻՍԻ

ՅԵՂԱՓՈՅԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

Գործիչներու շարանը կովկասէն. — Դաշնակցութեան գիւնագործարանը Թաւրիզում. — Գալուստ Ալոյեան, Սաֆօ, Յովսէփ Արզութեան. — Պետօ, Թերլեմէզեան, Վարդան, Մովսէս Իշխանեան. — Դերիկի կոիւնքը. — Դարձեալ Շէրօ և Զաթօ. —

Պարսկաստանը — դուռ Վասպուրականի: Իտալացի յեղափոխականները ունէին Ֆրանսան, իբրև ապաստանարան, Մակեդոնացիք՝ Բուլղարիան, լեհերը՝ Գալիցիան, հայ յեղափոխականները ունեցան Պարսկաստանը — աւա՛ղ, ոչ այնքան ազատ կայան, ինչպէս Ֆրանսան և Բուլղարիան իտալացիներու և մակեդոնացիներու համար:

Այնուամենայնիւ, խոշոր չափով մը, Շահերու երկիրը ապաստանարանի ու մարդարանի դեր խաղացած է մեզի համար ամբողջ տասնեակ տարիներու ընթացքին և մեր բիւրաւոր խոչընդոտներուն ու ցաւերուն մէջ այդ հանգամանքը հազազիւտ սփոփանքներէն մէկն էր, անշուշտ: Քիչ-չատ ապահով կայան մըն էր, ուր կարելի էր նւիրել նախապատրաստական երկար աշխատանքներու, այլ և յեղափոխական քարոզչութիւնը մղելու, խումբեր կազմակերպելու, գէնքեր շինելու և դէպի երկիր փոխադրելու:

Եղեր են, անշուշտ, վայրկեաններ, երբ պարսից կառավարութիւնն ևս, Երլզըզի տէրերու դրդումով, անոնց հաճելի լինելու համար, անողոք կերպով հալածեք է մեր ընկերները — մասնաւորապէս Խանասորի արշաւանքէն յետոյ — երբեմն նոյն իսկ վատթարագոյն պաշտօնեաները բարբարոսաբար կոտորել են մերիները (Մահլամի դէպքը): Սակայն, ընդհանուր առմամբ, պարսից իշխանութիւնները բարեացակամութեամբ աչք են դոցեր մեր խումբերու երթևեկին և մեր երկարատեւ դաւադրական գործունէութեան վրա, ընդդէմ օսմանեան բռնակալութեան:

Տեաակ մը նահապետական, անարշիկ ազատութիւն էր՝ տակաւին չկազմակերպուած այդ երկրին մէջ, ուր 80ական թւականներէն ի վեր գրեթէ անարգել անցուդարձ կընէին հայ ազատագրական շարժման առաքեալները:

Հոն կը գործէին հին օրերուն — գլխաւորապէս Սալմաստի մէջ — նաև «արմենական» սուար խումբեր, սկիզբները համերաշխ մերիններուն հետ: Անոնք հետզհետէ հալեցան, մաս մը ձուլուելով «Դաշնակցութեան» հետ: (Լուրջ, ամուր կազմակերպութիւն երբեք չեն եղած «Արմենականները»՝ իրենց գլխաւոր ներշնչողն ալ՝ Փորթուգալեանը՝ միշտ հեռու մնաց երկրէն: Կազմակերպուած աշխատանք մը այդ կուսակցութիւնը ցոյց տուաւ միայն 1895-96ի ատենները, այնուհետև գրեթէ բոլորովին չբացաւ հրապարակէն, երբ Ս. Բարթուղիմէոս վանքին մօտ հարիւրաւոր Արմենականներ, Աւետիսեանի առաջնորդութեամբ կոտորեցին քիւրդերու ձեռքով, մեր և հնչակեան խումբերուն հետ միասին):

Մեր կուսակցական գործիչները կը հաստատուէին թաւրիզի, Խոյի, Սալմաստի մէջ, մեծ մասամբ կրթական պաշտօններով — ուսուցիչ կամ տեսուչ: Մեր բազմաթիւ մտաւորականներն ու խմբապետները վարեր են — ոմանք երկար տարիներով — այդպիսի պաշտօններ և օգուեր են իրենց օրինական դիրքէն՝ բուն յեղափոխական աշխատանքը յառաջ մղելու համար: Ետաշատերը նաև երկրի գործիչներէն, այնտեղ, Պարսկաստանի մէջ են զինավարժութեամբ զբաղեր և պատրասուեր աւելի ծանր աշխատանքներու համար, բուն երկրին մէջ: Պարսկաստանէն կանցնէին մեր քարոզիչները և զինակիր ու մարտական խումբեր (կանցնէին նաև Կարսի ու Բազրեւանդի գիծերով):

Մերիններէն առաջին պացողն էր դէպի Պարսկաստան, զինական գործով: Տիգրան Ստեփանեան (1890թ.), որ կարճ ժամանակ մնաց Սալմաստի մէջ: Անոր հետևեցաւ Կովկասէն գործիչներու ամբողջ շարան մը: Հոսանքը կուգար մանաւանդ Բագուէն, որ դարձեր էր Կազմակերպութեան մեծագոյն կեդրոնը Թիֆլիզէն յետոյ, թէ՛ մտաւորական ուժերու և թէ՛ նիւթական միջոցներու իր առատութեամբ: Հոն էր և Դաշնակցութեան ամենատեղ կեդրոնական կոմիտէներէն մէկը, կազմուած ծանօթ գործիչներէ, — Ներսէս Դաւթեան, Աւետիս Դաւթեան, Հայկ Գիւլմուսերեան, Ստեփան Տէր-Մկրտչեան, ապա և Լևոն Թադէոսեան — ամենքը Գողթան գաւառէն, Քրիստափորի ծննդավայրէն: Բազմաթիւ էին նաև երիտասարդական խումբերը Բագուի, Բալախանիի.

Սև Քաղաքի մէջ, որ կը մարգուէին մարտական հայրենասիրութեան մէջ: Տեղի կուեննային ժողովներ, ընթերցանութիւններ ու բանախօսութիւններ: Բագուէն էր, որ Թաւրիզ ճամբեցան հետզհետէ անձնուրաց տղաներ, որոնք դացին սուարացնելու մեր մարտական շարքերը Վասպուրականի սահմաններուն մօտ և որոնցմէ մէկ քանիսը դարձան հետագային մեր շարժման նշանաւոր դէմքեր — Գրիգոր Միրզաբէկեան, Արամայիս և ուրիշներ (առաջինը, աւելի ծանօթ Մաժուկ Խէչօ մականունով, եղաւ մեծ հայդուկ մը, որ մասնակցեցաւ հայ-թաթարական կռիւներուն, ապա Եփրեմի հետ պարսկական կռիւներուն և նահատակեցաւ 1918ին Բագուէն Եամախի ճամբուն վրա, «Դաշնակցութեան» մէկ արշաւանքի ընթացքին, ընդդէմ թաթար հրոսակներու):

Դուամն-Նիկոյը առաջինն էր, որ ձգեց նաւթային մայրաքաղաքը (1891թ.) և հաստատուեցաւ նախ Թաւրիզի մէջ, ապա Սալմաստ՝ Ղալասար և այլ սահմանամերձ կեդրոններում, միշտ կրթական պաշտօններով:

Թաւրիզի մէջ, ըսինք, հիմնեցաւ Դաշնակցութեան Զինագործարան: Զինապահեստներ ունէինք արդէն նաև Կովկասի մէջ քանի մը տեղեր: Մէկը՝ Թիֆլիզ, ընդ հակողութեամբ Ռոստոմի եղբոր, Արիստակէս Զօրեանի (Կարօ), որ մեր լաւագոյն զինագործներէն էր, միանգամայն անվեհեր հայդուկներէն և նահատակեցաւ 1897ին Խանասորի կուին մէջ: Մէկն էր մեր մտաւորական ռազմիկներէն, որ կերթեւեկէր զինական գործով Կովկասի ու Պարսկաստանի միջև: Կովկասեան զինապահեստներուն մէջ կամբարուէին հրացաններ և այլ զէնքեր, որ մերինները — Գալուստ Ալոյեան և Քաթանեան — կը գնէին հեռաւոր Ռուսաստանի Տուլա քաղաքին մէջ, հետզհետէ երկիր փոխադրելու համար: Զօրեան կը գնէր նաև հրացանի մասեր ուս պետական զինանոցի բանուորներէն և անոնք կը փոխադրուէին մեր թաւրիզեան արհեստանոցը, շտկելու, ամբողջացուելու համար: Հ. Յ. Դաշնակցութեան «Պարսիս» գործարանն էր, որու հիմնադրութեան ու սկզբնական աշխատանքներուն մասնակցեցաւ Ռոստոմ (1891թ.): Արհեստանոցը իր բաժանմունքներն ունէր նաև քանի մը հայ թաղերու մէջ: Պատրաստուած զէնքերը կը փոխադրուէին Սալմաստ, այնտեղէն երկիր: (Առաջին զինատար խումբերու գլուխ էին՝ Պետօ, Վարդան, Արդութեան, Տարհատ (Սարգիս Օհանջանեան), Դուամն: Գալուստ Ալոյեան սերտ յարաբերութիւններ հաստատեր էր

դարաբաղցի նշանաւոր մաքսանենդներուն հետ, որոնցմէ կը գնէր փամփուշտ, հրացանի կարևոր մասեր, գիլգի, կապսիւլ, վառօդ և այլն:

Զէնքի մասնագէտներէն էր — միանգամայն Դաշնակցութեան հնագոյն ու արի խմբապետներէն — Սամսոն Թաղէոսեանը (Քրիստափորի քրոջ որդին):



Ս Ա Ք Օ



ԳԱՂՈՒՍ ԱՂՅԵԱՆ

Զինագործի պաշտօնով աշխատելու և թաւրիղի արհեստանոցին մէջ վարպետ Քաթանեանը, ապա շարք մը ուրիշներ — Բագրատ Յովհաննիսեան (Պետրոս), Շիրակեցի Միհրան, Գանձակեցի Լեւոն, Գանձակեցի Փարսաղան, Արամայիս:

Հրապարակի վրա էր և Սեւ Քարեցի Սաֆօն, «Դաշնակցութեան» հին օրերու մեծագոյն զինւորներէն: Նա կապ կը պահպանէր Պարսկաստանի շնորհներուն հետ և Արաքսի ուսուսական ափէն դէնք կը փոխադրէր դէպի միւս ափը, պարսկական հողը:

Թաւրիղ էր, նոյնպէս, ուսուցչական պաշտօնով, Սարգիս Օհանջանեան, որ 1894ին զինական խումբի հետ (Յովս. Արղութեանի առաջնորդութեամբ) մտաւ Վասպուրական: Թաւրիղ էին նոյն պաշտօններով գրեթէ առաջին օրերէն՝ Գարբիէլ Պապեան, օր. Պապեան, եկած նոյն Բագուէն, օր. Սաթ. Մատինեան (Իշխանի

անպազայ ամուսինը), ամենքն ալ ուսումնաւարտ կովկասահայ դպրոցներէն: Օրիորդները կը կազմակերպէին տեղւոյն հայուհիները: Թաւրիղ էր Յոնան Դաւթեան, որոջ ժամանակ և Ռոստոմ (1891): Յեղափոխականներու բարեկամ էին և ջերմ հայրենասէր նաև երկու իրարու յաջորդող թեմական առաջնորդները՝ Ստեփաննոս եպ. Մխիթարեան — Արարօ մականունով — և Սարաջեան եպիսկոպոս:



Գ Ն Տ Օ

Թաւրիղ հասան հետզհետէ դարալազեագցի. Տէր Գրիգոր, իր որդուն հետ, Նիկողայոս Մատինեան, Բաղդ. Մալեան (Գուրգէն), Թաւրիղ հասաւ և բժիշկ Քրիստափոր Օհանեան (Ունասորի բժիշկը), Ժընեւի համալսարանաւարտ, երիտասարդ մը, որ «արմենական» էր մինչև 1895 թւականը և այնուհետև գործեց մշտապէս մեր շարքերում:

Պարսկաստան կը մնար երկար ատեն և Պետօն (Աղէքս. Պետրոսեան), նախքան վերջնականապէս հաստատուիլը Վանի մէջ: Մէկը գաղափարի հնագոյն զինւորներէն, ալեքսանդրապոլցի չքաւոր ընտանիքի գաւազ մը, որ Ներսիսեան դպրոցը աւարտելէ և կարճատե ուսուցչութենէ յետոյ, ինքզինքը տրամադրեց կազմակերպութեանը՝ «երկրի» մէջ աշխատելու համար: Առաջին անգամ Վան մտաւ 1891ի ձմեռը: Գնաց Վան կարաւանի մը հետ, որպէս



պարսկաստանցի վաճառական: Պետոն Կաղմակերպութեան սինն էր Վասպուրականի մէջ, մինչեւ իր նահատակութիւնը (1896թ.):

Պարսկաստան էին, վերջապէս, Նիկոլ-Դուսամ և Վարդան: Երկուքն ալ աւարտեր էին 80ական թւականներու վերջերուն Շուշիի թեմական դպրոցը, ուրկէ ելաւ հետագային անձնէրներու շքեղ փաղանգը՝ իր Արամներով ու Իշխաններով:

Հոն էր, թուրք-պարսկական սահմաններուն մօտ, ուրիշ անւանի դարաբաղցի մը — Մովսէս Իշխանեան:

Դերիվի հայկական վանքին շուրջը բորբոքեր էր կատաղի և յարատու կոիւ, հայերու և քիւրդերու միջեւ — ինքնապաշտ-



ԴԵՐԻՎԱՅ ՎԱՆՔԻ ՊԱՐԻՍՊՈՆՆԵՐԸ. ՀԱՅ ԿԱՄԱՌՈՐՆԵՐ (ՆԿԱՐ. 1915թ.)

պանութեան կոիւ մը, որուն մէջ առաջնակարգ դեր խաղացին այդ երեք դէմքերը:

Դերիվ\*) կիսակեր, խղճուկ վանք մըն էր, բայց խիստ կա-

\*) Քրդերէն կը նշանակէ փոքրիկ վանք:

րևոր դիրքով, Դուշմանայ ձորին մէջ, թուրքական սահմանին մօտ, պարսից հողին վրա: Կառավարիչն էր 1890էն ի վեր Մովսէս Իշխանեան: Մերինները որոշեր էին վերականգնել վանքը, որ պէտք է ծառայէր, իբրև կայան լեռներու մէջ, քրդութեան սըրտում, Վասպուրականի հետ քիչ-շատ դիւրին յարաբերութիւններ պահպանելու համար: Հոն կը կեդրոնանային մեծ մասամբ յեղափոխական ուժերը, անցնելու համար դէպի Աղբալ և Վան: Վանքը միանգամայն կտրւած չէր հայ աշխարհէն. շրջանի մէջ կային ցաք ու ցրիւ հայարնակ դիւղեր, շուրջ 300 տուն: Վանքի վերաշինման աշխատանքներուն մէջ եռանդուն մասնակցութիւն ունէին Մովսէս Իշխանեանին հետ նաև վանքի «արմենականները», Փանոս Թերլեմեզեան, Արմենակ Եգարեան և ուրիշներ: Վանքը շինւեցաւ և 1891ին թէ 92ին այնտեղ եկաւ վանահօր պաշտօնով, Բագրատ վարդապետ Թաւափեան, հինաւորց յեղափոխական սուրհանդակ՝ Զաքին: Այնտեղ հաստատուեցան և Վարդանն ու Սաքօն, իբրև վարդապետի սպասաւորներ: Ապա եկան և Յովսէփ Արղութեան, Սարգիս Օհանջանեան, Զալլաղ: Արմենականները մերիններուն հետ միաբան էին:

Քիւրդերը, հասկնալով, որ իրենց սրտին մէջ վտանգաւոր բոյն մը կը շինուի, տեսակ մը հայկական միջնաբերդ, որոշեցին — թուրք կառավարութիւնն ալ կը դրդէր արդէն — վերցնել մէջտեղէն այդ վանքը: Ուստի պարբերաբար արշաւանքներ կը դործէին անոր դէմ: Կոիւը, ընդհատ-ընդհատ տեւեց տարիներ: Վանքը կը պաշտպանէին հոն հաստատուած բուռ մը յեղափոխականները:

Այնտեղ, Դուշմանայ ձորին մէջ, հերոսական կռիւներ վարեց Դուսամը: Այնտեղ ի վերջոյ սպանուեցաւ ինքը վանքի կառավարիչը, արիասիրտ Իշխանեանը: Այնտեղ պառկեցան վիպական հերոսներու շարքն անցած անմոռանալի Եերօն ու Զաթօն\*):

\*) Ահա թէ ինչ կը դրէր Եերօի նահատակման առթիւ մեր Իշխանը (Յովսէփ Արղութեան) «Դրօշակ»ի 1896ի թիւ 18ի մէջ:

«Ընկաւ Վասպուրականի դաշնակցական հայդուկային խմբերի սիւներից մէկը եւս, հռչակաւոր Եերօն, որ 10 երկար տարիների ընթացքում, որպէս մարմնացած բողոք, ոգևորում, առաջնորդում էր Ռշտունաց աշխարհի իր հայրենակիցներին... Զաթօ - Եերօ... երկու լուսատու աստղեր էին, որոնք երևան եկան յեղափոխական հորիզոնի վրա 10 տարի առաջ, այն ժամանակ, երբ դեռ ոչ ոք մտադ չէր դործել նրանց հայրենիքը... Զկարողանալով այլ եւս տանել իրենց լեռնաբնակ շատախցիները կրած տառապանքները... նրանք թողին իրենց հայրենի կանէթ դիւղը եւ հրոցանը մեռերին երակցին վրէժինդը»





ՅՈՒՆՈՒՄՆԻԿ ԵՒ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՊՈՂՈՒՓՈՒՆՆԵՐ

Դերիկայ վանքը եկար զիմացաւ, շատ անգամներ յետ մղելով քրդերու զրոհը: Շատ անգամներ մեր տղաները — Սաքօ, Վարդան, Լեւոն, Շերօ, Չաթօ և այլն — չափեցին քրդական հրոսակներուն հետ: Վանի արիւնոուշտ վալին, տիրահոջակ Բահրի փաշան — որ 1895ին մեր ահաբեկիչներու զնդակը պիտի առնէր Տրապիզոնի մէջ (տարաբախտաբար, ոչ մահացու) — շարունակ կը լարէր քիւրդերը Դերիկի քանի մը տասնեակ կտրիճներուն դէմ, կը պահանջէր անոնց զլուխները, կը յորդորէր իսպառ աւերել վանքը. յաճախ քիւրդերը զրոհ կուտային հարլւրներով:

Բերենք քանի մը քաղածքներ Սաքօի յուշերէն, ուր անպաճոճ լեզուով ցուցադրուած է մեր առաջին հայդուկներու յամառ ճիգը՝ հաստատելու այդ «միջնարեղ»-վանքին մէջ և այդտեղէն ուժեր կեդրոնացնելու Վասպուրականում:

«1892 թիւն էր. եկաւ ինձ մօտ Քոթոթը\*): Ինձ ուղարկեց Դերիկի վանքը, Չաթիի (Թաւաքալեան վարդապետի) մօտ: Այնտեղ էր և Պետօն:

Մայիս ամիսն էր... Մովսէսի (Իշխանեան) սպանելուց յետոյ, պարսկաց ու տաճկաց սահմանագլխի քիւրդերը թշնամացան մեզ: Վանքում կայինք մօտ 50 կամաւոր... Չայնիի մեծամասնութիւնը ուզում էր վանքին պարիսպ շինել, փոքրամասնութիւնը՝ տներ: Վճուռեց պարիսպ շինել ու շինեցինք: Չքաշեց 2 ամիս, Իսախանը\*\*\*) 500 մարդով քանդել տուց պարիսպը և անցագիր պահանջեց կամաւորներից: Մեզանից ոչ ոք անցագիր չունէր: Չունէր և Չաթին: Մի քանի օրից... Չաթին զնաց Թաւրիզ վանքի գործերի համար, արմենականները փախան, իսկ մենք մնացինք... Չալլազը, Վարդանը, Լեւոնը: Սալմաստի դատաւորի կողմից միշտ գալիս էին պահանջում մեզանից անցագիր. մենք էլ ստիպուած ցե-

լինել... Վերին աստիճանի անվեհեր և յանդուզն զօրծունէութեան շնորհիւ, Չաթօ - Շերօ հոջակ ստացան Վասպուրականում... Քրդերն անգամ իրենց երգերով զրւատեցին նրանց քաջութիւնները...

«Շերօն ամէն տեղ էր, ուր վտանգ կար... Շնորհիւ իր չափազանց նուրբ լսողութեան, իր զարմանալի ընդունակութեան ճանապարհների, տեղեր ճանաչելու... անզնահաստիլի անդամ էր ամէն մի հրոսակային խմբի համար... Կոիւների ժամանակ... արծւի հայեացքով դիտում էր բոլոր ընկերներէ բռնած գիրքերը և եթէ նկատում էր մէկի կամ միւսի դիրքի թուլութիւնը, իսկոյն շտապում էր օգնութեան և խմբի նոր անդամներն իրենք էլ առիւծ էին կտրում, երբ տեսնում էին Շերօին թշնամու տեղացող զնդակների տակ սրա կամ նրա կողմը ուղղելիս»...

\*) Թոստոմ:

\*\*) Պարսից իշխանաւոր:



ընկերները փախչում էինք մօտի սարը, իսկ գիշերը վերադառնում էինք վանք...

... Վանքում էին յայտնի աւագակապետ Շերօն և Չաթօն...  
Չորս ընկերներով զնացինք Սալմաստ: Վանքից հեռացել էինք



ՅՈՒՆՕ (ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂԱ)

Երեք վերստաչափ, ձորի մէջ, Երբ հրացանի ձայներ լսեցինք...  
Տղերը կուր են բռնել, վաղեցինք: Մինչև մեր հասնելը, սպա-  
նել էին Կարօն և Գեւօն: Արդէն մութ էր, թշնամուն շտեսանք:  
Վերցրինք դիակներն ու վերադարձանք վանք... Մի խումբ ար-  
մենականներ գնում են վանքի հողերին մօտիկ սպանում են հինգ

քիւրդ և մէկն էլ վիրաւորում... Որպէս թէ Կարօն և Գեւօնի  
վրէժն են լուծում: Շերօն պատմեց, թէ ինչ նպատակով են արել  
այդ սպանութիւնը, որպէս զի ապագայում վանքը իրենց ձեռքում  
մնայ:

... Վիրաւոր քիւրդին տանում են Վանի կուսակալ Բահրի  
փաշայի մօտ... Փաշան հրամայում է ցեղապետ Շարաֆ աղային,  
որ վանքի մէջ եղածների գլուխները կտրէ և վանքն էլ քանդէ...

... Երկու շաբաթ է, որ համարեա սպաշարած էինք. նա-  
խիրը չէինք թողնում հեռու սարը գնալու... Այն օրը ես ասացի  
նախորդին, որ մի քիչ հեռացնի... Մէկ էլ լսեցինք վանքի պա-  
հապանի պայմանական նշանը: Ամենքս վեր թռանք, տեսանք...  
քսանի չափ ձիւտները յարձակեցին չիմանում կապած ձիւտների  
վրա... Հրացաններս ուղեցինք դէպի այն կողմը. քիւրդերը նեղ-  
ւած, թողին ձիերը և ուղղեցին դէպի նախիրը...

Երբ փորձեցինք մօտենալ նախիրին, ի՞նչ տեսնենք. շրջա-  
կայ բոլոր սարերի կատարներից մութ է բարձրանում... Յետ-յետ  
դէպի վանք վաղեցինք, մտանք նախօրոք պատրաստած տեղը և  
սկսեցինք կատաղի կռիւ, որ տեսց վեց ժամ: Մենք թւով 17 էինք,  
իսկ քիւրդերը 400ից աւելի համիդիէ զինուորներ... Կուր ժամա-  
նակ օրիորդ (Մաղիկը\*) հաւաքել էր մօտը վանքի կանանց. դրանք  
փամփուշտ էին սրբում և բաժանում կուռղներին:

Երբ Շարաֆ աղան տեսաւ, որ հեշտ չէ Բահրի փաշայի  
հրամանը կատարելը՝ տանել Դերեկցիների գլուխը, սկսեց նա-  
խիրը քշել, որպէսզի մենք դուրս գանք զիրքերից ու նախրի յե-  
տեւից գնալիս կոտորենք: Ի հարկէ, մենք այդ սխալը չարինք»...

\* \* \*

Մեր ընկերները սկսան կամաց-կամաց երկիր մտնել, գէնք  
փոխադրել: Առաջին դացողներու մէջ էին՝ Իշխան Արղութեան,  
Վարդան, Սաքօ:

Վարդան հաստատուեցաւ Շատախի մէջ, ուր մնաց մօտ Լը-  
կու տարի, կազմակերպեց ինքնապաշտպան խումբեր և վարեց  
շարք մը կռիւներ:

Նիկօլ-Դումանն ալ մէկ-երկու անգամ գինւած խումբով  
մտաւ Վասպուրական, գէնք հասցուց տեղացիներուն և քանի մը  
անգամ, ստիպւած, ընդհարեցաւ քիւրդերուն հետ:

Երկու ռազմիկներուն — Վարդան և Դուման — այնուհետև  
յաճախ կը հանդիպինք «Բաշնակցութեան» վարած կռիւներուն  
ընթացքին, Թուրքիոյ և Կովկասի մէջ: Երկուքն ալ առաջնակարգ  
դեր խաղացին Պանասորի արշաւանքին և հայ-թաթարական մէկ

\*) Սաթենիկ Մատինեան:



ու կէս տարւան պատերազմին մէջ: Բնաւորութեամբ հակոտնեա- ներ էին. Վարդանը՝ մեղմ, փափուկ սրտի տէր, Երբեմն փոքր ինչ



Վ Ա Ր Գ Ա Ն

վարանոտ, անվճռական: (1905ի թուրք-հայկական ընդհարում- ներու ատեն, երբ նա ընդհանուր հրամանատար էր Ղարա- բաղի մէջ և մեծ ժողովրդականութիւն կը վայելէր, ստէպ կը մերժէր ընկերներու յորդորները՝ ակն ընդ ականի օրէնքով զոր-

ծել թշնամիին դէմ, վառել այս կամ այն թաթար դիւղը, ոչնչա- ցընել խուժանը, անդամ երբ նման դործողութիւնները մեծ գոհեք չէին պահանջեր):

Դուժման-Նիկօլ, ընդհակառակը, դաժան ու անխնայ էր ամէն կարգի սոխներու դէմ, նաև ներքին հակառակորդներու: Սարա- գանն էր շանթաժիտներու, դասալիքներու, անկարգապահ զին- ւորներու և ամէն տեսակ վատերու: Հ. Յ. Գաշնակցութեան պա- տիւր ամէն բանէ վեր էր անոր համար: Հ. Յ. Գաշնակցութեան հմայքը պաշտպանելու համար, պատրաստ էր նետելու ամենա- վտանգաւոր արկածներու մէջ: Հակառակ իր բուն խառնածքին՝ նա ինքը կարգապահութեան մարդն էր, անդամ այն պարագանե- րուն, երբ անարդարօրէն կը վերաւորէր իր ինքնատիրութիւնը: Ահա թէ ինչու, Սանասորի արշաւանքին ալ, հակառակ իր դէմ կատարած անիրաւութեան, Դուժման բերաւ իր ջերմ մասնակցու- թիւնը, համեստօրէն ստանձնելով սոսկ յիանապետի մը պաշտօն, երբ արժանի էր բուն իսկ հրամանատարի պաշտօնին:

Կուտակցութիւնը անոր աչքին բանակ մըն էր և կարգապա- հութիւնը՝ անշեղելի օրէնք մը: Հայ-թուրքական կոխներու ատեն, իրրի հրամանատար Երևանեան նահանգի կուտը ուժերուն, ան- խնայ կը պատժէր, երբեմն նոյն իսկ հրացանի կը բռնէր իր այն զինուորները, որոնք կը մեղանչէին զինուորական կարգապահութեան և աստատարակ բարոյականութեան դէմ: Իսկ բուն թշնամու հան- դէպ «ակն ընդ ական»ը անոր համար նոյնական պատերազմի մըն էր: Երբ թաթարները մէկ հայ կը բռնէին ու կանհետացնէին, Դու- ժման մէկի տեղ քանի մը թաթար կանհետացնէր: Անոր համոզու- մով՝ միակ միջոցն էր խաղաղութիւնը վերահաստատելու, խելքի բերելու յետագէմ, անդ խտակից և միշտ գուտադիր ու յարձակողա- կան խուժանները...

Անդու թ մէկը շէր, սակայն, մեր Դուժմանը: Սանասորի կու- րտան նա մէկն էր այն խմբապետներէն, որոնք կը հրահանգէին իննասի քիւրդ կիներուն ու երեխաներուն:

Այսպէս էր ահա այն մեծ հայրուկը, որ 1891ին անցաւ Պարսկաստան «Լափունջի» մէջ փաթթուած, սեւ փափախը գլխին, որսորդական բերդան հրացանը ձեռքին, որսի չունը առաջը ձգած» — ինչպէս կը գրէ Յովակ Սաեփանեան: Բարձրահասակ, նիհար, ջղուտ ու սակրատ, մէջքը փոքր ինչ կորացած, սեւ, կայծկրտող աչքերով, ուժեղ, խուզարկու նալամբով. պայծառ միտք, արագ ըմբոնող, վճռական ու պատրաստ, ինքնափստահ ու կորովի,



յանդուգն և ահեղ: Հրամանատար մըն էր — սիրտը՝ պողպատ, խօսքը՝ կարուկ, վճիռը՝ անդառնալի:

Երգե՛ր հիւսեցին քիւրդերը անոր վարած կռիւներու մասին — փայլուն ճակատամարտներու շարան մը, Բողազքեասանէն ըս-



Ն Ի Կ Օ Լ Կ Ո Ր Մ Ա Ն

կսած, որոնց շնորհիւ բալլուջեցի Նիկօլ Տէր-Յովհաննիսեանը արժանացաւ Ղարա-Դոււման անունին: Բայց ո՞ւր են այդ հերոսական կռիւներու նկարագրութիւնները... Չկան, տարաբախտաբար, ինչպէս որ չկան բաղմաթիւ այլ ուղղմիկներու սխրալի գործերուն պատմութիւնները: Ցան ու ցրիւ բեկորներ միայն... Սամսոն կը բերէ մէկ քանիսը իր յուշերուն մէջ.

« 1895ի հոկտեմբերին Դոււման 45 հողով Վան կերթայ: Ատոնց մէջ՝ 15 հողի արմեմականներ\*): Ձէնք կը փոխադրէին Սալմաստէն:

\* ) Վանի մէջ կար արդէն կաղմակերպութիւն, Պետօի ղեկավարութեամբ: Բաղմաթիւ նախկին արմեմականներ մտեր էին մեր շարքերը: 1895ի սեպտ. 11 Թահիր Դոււմանի մէկ նամակի մէջ, ուղղւած Սալմաստէն Ժընեւ, հետեւեալ տողեր կը կարդանք. «Վանում ունինք դաշնակալականների մի սոււար խումբ և և կանոնաւոր կաղմակերպութիւն»:

« Ճամբին հանդիպելով մի գիւղի, Դոււմանն արմենականների հետ մտնում է մարազ, մնացածները մի ուրիշ մարազ: Քրդերը չըջապատում են Դոււմանի մարազը, որից մի փոզոց դէպի աջ ծուելով դաշտ է դուրս գալիս: Պաշարողները դիրք են բռնում փողոցի երկու կողմի կտուրներին, իսկ մի քանիսը հրացան են պարպում մարազի երդկից ներս: Մարազի դուռն առջևը վառած խոտ են գցում. դուռն սկսում է այրել: Դոււմանն ասում է, որ ինքը դուրս է գալու և պատւիրում է, որ հրացանի կոթով կրակը խառնեն, որ բոցն իջնի: Բոցն իջնելուն՝ դուրս է թուշում մարագից: Կտուրներից հրացան են արձակում, բայց անվնաս է մնում: Թեքելով աջ, տեսնում է մի խումբ ձիեր և մօտները պաշարողների գլխաւորներին, նստած կրակի շուրջը: Իսկոյն ծուելը տալիս է գետին, գլխաւորներից երկուսին հրացանով դարկում և շփոթից օգտւելով, փախչում դէպի դաշտ: Միւս մարազից տղաներն արդէն դուրս եկած են լինում դաշտ: Աղմուկից օգտւելով, դուրս են գալիս և բոցավառ մարազի տղաները, դաշտում պատահում միւսներին և ձիւների միջով քաշում դէպի լեռները: Քրդերը հետապնդում են... Դոււմանը երեսանցի ինչչօի և զարաբաղցի Յարութիւնի հետ մի քարի ևտեւը մտած, հրացան է արձակում: Յանկարծ մի բան թափով կայում է կրծքին: Ասում է. «ես զարկեցի, բայց դեռ կամ. երբ որ ընկնեմ, դրամն ու թղթերը կառնէք վրայիցս ու կերթաք»: Քրդերը յետ են քաշում: Պարզում է, որ Դոււմանի կրծքին զիւլածը քարի կտոր է եղած, որ ժայռից սլակել էր թշնամու գնդակը: Ինքը դարմանում էր, որ այդ րնդհարումից անվնաս դուրս էր եկել. թէև հագուստը շատ տեղերից ծակծակել էր գնդակների հարւածներից, բայց ոչ մէկը մարմինն չէր կպել... Քրդերն այն կարծիքն են յայտնում, թէ Ֆէղալու գնդակը որոնում է իր զոհին: Այստեղ է, որ Նիկօլը վաստակում է «Դոււման» անունը, որ փոթորիկ կը նշանակէ: Պաշարումից ազատւելով՝ հասնում է իր խմբով Վան, ուր մնում է ամբողջ ձմեռը: Մի երկու ընկեր ստուշում են ճամբին ցրտից»:


\* \* \*

Ուրիշ կարևոր դէմք մըն ալ ծայր կուտայ Վասպուրականի հորիզոնին վրա, որ նոյնպէս կերթեկէր Վանի ու սահմանի միջև և որուն վիճակւած էր խոշոր դեր խաղալ մարտական խումբերու և դէնքի փոխադրութեան դժւարին գործին մէջ. — Տիգրան Դերայեանը, վանեցի, աւելի յայտնի Վագգէն անունով: Դերձակի աշկերտ էր և սլարդ, գոնհիկ միջադէպ մը—առօրեայ սովորական դէպքերէ — նետեց պինդը դէպի ըմբոստացումի ճամբան: Օր մը կը տեսնէ խանութէն, թէ ինչպէս թուրք գինւորներ անգթօրէն կը ծեծէին հայ խանութպան մը: Հայ մարդը կը ծեծէր հայ բազ-



մութեան մը աչքերուն առջև և ոչ ոք կը համարձակէր օգնութեան հասնիլ: Ամէնքը կը նայէին լուռ, սարսափահար:

Հայ պատանին — ապագայ Վազգէնը — դերձակի խանութին մէջ նստած, թաւ յօնքերու տակէն կը դիտէր տեսարանը և



Թ Ա Ի Ի Զ Ի Զ Ի Ն Ա Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ը

սիրտը կը փոթորիւէր: Յանկարծ վեր ցատկեց տեղէն և խելակորոյս բազմութիւնը տեսաւ, թէ ինչպէս նա հուժկու բռունցքներով հարւածներ կը նեղայ անսիրտ դինուորներու գլխուն:

Այդ առաջին խիզախ ժեսթը անոր յեղափոխական կառիճրի առաջին քայլն էր: Յաջորդեցին ուրիշ քայլեր — աւելի յան-

դուզն, հերոսական: Դերձակութենէն առաջ՝ դպրոցական մըն էր, որ ստիպւեցաւ թերի ձգել ուսումը: Իր ամենասիրելի ուսուցիչն էր Զուլս-Գեատուկի մէջ նահատակած Ագրիպպասեանը: Եւ անոր սէս կերդէր յաճախ՝

Դու ո՛վ ցանկալի վաճ, իմ հայրենիք,  
Սիրոյդ կարօտով մաշւիմ ես, հերի՛ք...

Դերձակի խանութը ձգելով, դարձաւ ուսուցիչ, քարոզիչ, դաւադիր, խմբապետ, գրող ու կուռղ: Սրտաուռ էն անոր քանի մը թղթակցութիւնները «Դրօշակ»ի մէջ: Ահա մէկը.

... «Մենք չենք կարող ունէ կերպով հաշտել թուրք կառավարութեան հետ, քանի որ նա իր էութեամբ թշնամի է մեր դոյութեան... Մեր կոխը դոյութեան բնական կոխ է, ազնիւ, նւիրական կոխ է... Մեզ համար սուրբ է նա, ով յանձն առած շարժարանք, մահ... ընկնում է մարտի դաշտերում: Թուրքիայի լուծին տակ մենք կը մեռնինք իբրև անասուն, բայց... վճուել ենք մեռնիլ, իբրև մարդ, իբրև հերոս ազատութեան և մեր յաւիտենական իրաւանց... Մեր դրօշակը միշտ բարձր կը պահենք, կը յաղթենք և փառաւոր ապագայի կարծանանք, կամ թէ դիւցադնական մահով կաներևութանանք պատմութեան բեմից:

«Յառա՛ջ, քաղաքակրթութիւնը միշտ զոհ է պահանջել մարդկութիւնից. փառք է մեզ, եթէ նրա արժանաւոր զոհը լինենք»...

Իր վերջին նամակն է «Դրօշակ»ին, գրւած մահէն քիչ առաջ (1896թ. № 15):

Կառավարութիւնը երկար ժամանակ կը փնտրէր հայդուկը՝ պատժելու համար: Վազգէն սպանւեցաւ Կուռուրաշի բռուն, արիւնահեղ կուր մէջ: Իրեն հետ ընկան վանեցի Արշակը և շատախցի Միքօն (1897թ.):







րիչները կատաղորէն կատէին զինքը և որոգայթներ կը լարէին իրեն դէմ, յեղափոխական վարդապետը անյողողդ կը շարունակէր իր ըմբոստ ու ժողովրդանէր ընթացքը: Ներսէս Խարախանեան մտերմական յարաբերութիւններու մէջ էր մերիններուն հետ (նմանապէս Կարնոյ առաջնորդ Ղեւոնդ եպ. Շիմանեանը): Աշոտ-Թաթուլի միջոցով մեզի (Ժընեւ) ղրկած մէկ թղթակցութեան մէջ կը նկարագրէր Տարօնոյ կացութեան սարսափները, թուրքաց յարաճուն հալածանքներուն ու հարստահարութիւններուն տակ: Քաջածանօթ էր երկրի պայմաններուն, ինքը բնիկ տարօնցի լինելով: «Կար ժամանակ—կը գրէր Դրօշակին վերոյիշեալ նամակին մէջ — երբ գրեթէ կառավարութեան սուերը միայն կար և քրդական տիրապետութիւնը միայն կը տեսնէր. տակաւին երևան չէր ելած ընդդէմ հայոց այս խոյրի և մահացու ատելութիւնը, որ կը սպառնայ հայ ազգը բնաջինջ անել զանազան դիւանաւար մեքենայութիւններով և բարբարոսութիւններով»:

Խարախանեան, Մկրտիչ Սարեան և բազմաթիւ եկեղեցականներ, Խրիմեանի հայրենաշունչ զաղափարներով սնուած, պատրաստեցին Դուրան-Բարձրաւանդակի մէջ ազատասէր, յեղափոխական առաքեալներու սերունդ մը, որոնցմէ էին, ի միջի այլոց, Ագրիպպասեան, Գէորգ Չաւուշ, Հրայր, Վաղարշակ, Գեղամ Տէր-Կարապետեան և վարդենիսցի Մարգար վարժապետը: (Սարեան Մուշ եկած էր Միացեալ Անկերութեան կողմէ 80ական թւականներուն և հիմնած էր Մուշի մէջ կեդրոնական վարժարան մը, նման այն մեծ դպրոցին, որ Մկրտիչ Փորթուգալեան կը վարէր Վանի մէջ, Խրիմեան Հայրիկի շունչին տակ):

Այդ երիտասարդ առաքեալներէն մէկ քանիսը իրենց բուն քարոզչութեան և ըմբոստ արարքներու հետեանքով, վաղաժամ զոհ դացին բռնութեան հարւածներուն: Անոնցմէ էր Մարգար վարժապետը, որ կախաղան բարձրացաւ 1893ին: Աւելի մեծ հրոշակ հանեց հայ հրոսակապետ մը — մեր առաջին մեծագոյն Ֆէդայիներէն — Արարո: Պարզ «ղաչաղ» մըն էր, անվեհեր աւագակ մը, նման քիւրդ աշխրթապետներուն, որ Դաշնակցութեան շունչին տակ դարձաւ ժողովրդական հերոս մը, ազատութեան համար մարտնչող: Իր հետ ունենալով ուրիշ հայ «աւագակապետ» — Դերդեվանքի Միսոն — նա երկար ատեն սարսափ կը տարածէ Մուշ քաղաքին շուրջ: Կը կտրեն ճամբաները, կը հալածեն իրենց «հպատակ» ժողովուրդի թշնամիները, կը խլեն աւագակներէն ոչխարները, կը կոտորեն հարկահաւաքները, ետ կը ճամբեն տա-

ճիկ պաշտօնեաները, հասկցնելով անոնց, թէ երկիրը իրենցն է և թէ հետեւաբար անոր խարճն ու խարաջն ալ իրենցն է...

Արարոի արչաւախումը հետզհետէ սոււարացաւ. նոր անձնէր կտրիճներ հարստահարած ժողովուրդի ծոցէն եկան միանալու հայ աշխրթապետին, որ դարձեր էր առասպելական իզիթ մը: Անոնց մէջ էին՝ Այիդլունանցի Լեւոնը, Մրդկենցի Գիւրդը (Չաւուշ), Գոմերցի Հովիկը, Բերդակցի Ներսոն և ուրիշներ:

Ի վերջոյ — ինչպէս միշտ, հայ մատնիչներու ցուցմունքով — հրոսակապետը կը ձերբակալուի Միսոն հետ Բերդակ գիւղի մէջ և բանտ կը նետուի: Շուտով, սակայն, կը յաջողի փախչիլ բանտէն, կանցնի Կովկաս և 16 հոգինոց զինւած խումբ մը կազմելով, 1893ին կը վերադառնայ երկիր: Եւ ահա ճամբան արիւնալի ընդհարումներ քիւրդերուն հետ: Այիդլունանցի Լեւոն կը սպանուի: Արարո, մնացած ընկերներուն հետ, համիտիէ քիւրդերու տարազով, կը շարունակէ ճամբան դէպի Դուրան: Բայց Գեալխորի ձորին մէջ վերստին կը բռնուին քիւրդերու հետ և գրեթէ բոլորն ալ կը սպանուին: Հերոսաբար կը կուրի Արարոն, նաև Վարդան ալ կը սպանուին: Հերոսաբար կը կուրի Արարոն, նաև Վարդան անունով ընկեր մը, Ախալցխացի: Նահատակւածներու մէջ էին՝ Բուլղարը, Խնուսցի Մելքոնը, Մշեցի Աւօն ու Մարտոն: Մեռաւ մեծանուն խմբապետը հազիւ երեսուն տարեկան: Ժողովուրդը երկար ատեն չի հաւատար, թէ Արարո մեռած է. «ան դեռ կը գործէ լեռներուն մէջ»... Եւ անոր անձին շուրջ երկեր կը հիւսնեն թէ հայեր և թէ քիւրդեր: Արտակարգ զեղեցկութեան տէր էր Արարոն: Իր կովկասցի մէկ ընկերոջ հակիրճ դրութեան մէջ հետեւեալը կը կարդանք. «Սուսերամերկ կոխներից մէկի մէջ դաշոյնի մի հարւած էր ստացել նա (Արարոն) և այլ հարւածի հետքը երկար ու թեք գծով իջնում էր նրա գոգտրիկ բերանի ձախ անկիւնից դէպի ծնօտը... և նրա դէմքի կուսական զեղեցկութեանը տալիս էր դիւցադնական կնիք»:

\* \* \*

Տեղի ունեցան շարք մը ուրիշ կոիւներ Տարօնի շրջանում. բայց ամենէն զորդագինն եղաւ Սասնոյ պոռթկումը, որու վրա պէտք է փոքր ինչ կանդ առնենք, թէ Է բուն Դաշնակցութեան պատմութեանէն դուրս է այդ, վասնզի այդ դէպքէն յետոյ եկան համիտեան մեծ կոտորածները — տարածւած Սասունէն ամբողջ Թուրքահայաստանի վրա — բայց և միւս կողմէն աշխարհ զորդաց

այդ ոճիքներէն և յառաջ եկաւ պետութիւններու, մասնաւորապէս Անգլիոյ գորաւոր միջամտութիւնը, որու հետեանքով պատրաստ-ւեցաւ բարենորոգումներու առաջին լուրջ ծրագիրը:

Քանի մը խօսք Սասնոյ անցքերու և յեղափոխական դէմ-քերու մասին:

Այնտեղ, վաղեմի ըմբոստ լեռնաստանին մէջ, որ կիսանկախ գոյութիւն մը ունէր և շատ անգամ էր ապստամբեր թուրքաց բռ-



Ա Ր Ա Ր Օ



ՎԱՐԴԱՆ, ԱԵԱԼՑԵԱՅԻ  
Յահատակած Արաբոի հետ

նութիւններուն դէմ, 90ական թւականէն ի վեր քարոզչի պաշտօնով հաստատուել էր հայ առաջին նշանաւոր յեղափոխականներէն մէկը — Միխրան Տամատեան, որ կը գործէր Հնչակեան կուսակցու-թեան անունով և որ մօտ երեք տարւան քարոզչութենէ յետոյ, ձերբակալուեցաւ հայերու մատնութեամբ ու տարուեցաւ Պոլիս՝ դատուելու և դատապարտուելու համար (1893): Այդ դէպքէն ի վեր հետզհետէ սաստկացաւ հակոդութիւնը Սասունի շուրջը: Կառավա-րութիւնը շարունակ կը լարէր քիւրդ ցեղերը սասունցիներու դէմ: Ընդհարումները կը դառնան անխուսափելի: Տամատեանէն յետոյ, նոյն կուսակցութեան կողմէ, Մուրատ Պոյանեան կը մտնէ Սա-սուն, Կարսի ճամբով — ինչպէս ըսինք նախորդ էջերուն մէջ, Դաշնակցութեան ղինական աջակցութեամբ — և կը շարունակէ

նախորդին գործը, մղելով ինքնապաշտպանութեան և ապստամ-բութեան քարոզչութիւնը:

Մուրատ հաւաքեց իր շուրջը քանի մը զգայուն, անձնէր երիտասարդներ, Սասնոյ, Տարօնի այլ և այլ գիւղերէն: Անոնցմէ մէկը իր խանդավառ հայրենասիրութեամբ, իր խօսքի, գրչի քա-րոզչութեամբ շուտով գերազանցեց իր ուսուցիչները — Մուրատն ու Տամատեանը — դարձաւ հոգին Տարօնոյ գրեթէ բոլոր շար-ժումներուն և միանգամայն մեծագոյն պարագլուխներէն մէկը հայ ազատագրական շարժման:

Ղըրլաղաջցի Արմենակն էր — աւելի յայտնի Հրայր ու Դը-ծոխք անուններով:

Առաքեալ մըն էր բուն իսկ Տարօնոյ ժողովուրդի ծոցէն: Մտաւորական մը՝ օժտուած խօսելու և գրելու գեղեցիկ տաղան-դով: Միտիկ շունչ մը կար այդ պարզ, շինական տղայի մէջ, որ միայն միջնակարգ կրթութիւն էր ստացեր և դիտէր խորապէս յուզել ձեզ իր սրտադրաւ քարոզչութեամբ:

Այդ վտիտ մարմինը, մաշած, վաղաժամ ախօսած դէմքով, այդ խորունկ ու թախծոտ աչքերը, որ այնքան սակաւ կը ժպտէ-ին և կարծէք հարապատ ժողովուրդի բախտը կուլային, այդ լուրջ, հանդարտ, insinuant զրոյցը, որ կընէր վշտոտ, սրտառուչ ձայնով մը, առանց ղիմացինին նայելու, այդ ամբողջ գերվի-շանման կերպարանքը, ղլխուն տնկած մշեցիի անբաժան արախ-չին — այդ ամենը անջնջելիօրէն զրոշմած կը մնայ բոլոր անոնց յիշողութեան մէջ, որոնք առիթ ունեցեր են մօտէն դիտելու գե-րազանցապէս ժողովրդական այդ դէմքը: 1895ի օգոստոսի վերջե-րը, Կարսի մէջ, հարիւրաւոր կտրիճներ, սպառազինւած Հ. Յ. Դաշնակցութեան ձևաբով, կը պատրաստէին սահմանն անցնիլ-այլտեղ էին մեր մեծ խմբապետները՝ Սերոբ, Անդրանիկ, Առտ-թաթուլ, Առիւծ-Աւաղ և այլն — և մէկը կար անոնց մէջ — մտաւո-րական ու խմբապետ միանգամայն — որ կը կապտէր ձեր ուշա-ղբութիւնը, կը ներշնչէր հեղինակութիւն ու հմայք և որու ձայ-նին ու հրահանգին երկիւղածօրէն կուկնդրէին ղինւորները:

Հրայրն էր: Դժւար է գտնել վերջին 10 տարւան ընթացքին թուրքահայ մտաւորականութեան շարքերուն մէջ ուրիշ մէկը, որ այնքան խոր ազդեցութիւն, թովք ու հմայք ունենար ժողովրդա-կան զանգւածներուն մէջ, ինչպէս այդ ինքնաբոյս դերվիշ-հրա-պարակախօսը, որ երկար տարիներ ազատութեան փողը հնչեցուց

Սասնոյ լեռներէն և բնկաւ 1904 ին, զէնքը ձեռին, Շէնքրի բարձունքներուն վրա, արիւնայի ճակատամարտի մը մէջ:



Հ Բ Ա Յ Բ

\*\*\*

Դասնանք Սասնոյ գէղջերուն: Հնչակը, իր 1894թ. № 3ի մէջ, կը հրատարակէր Դժոխքի գրութիւնը՝ Տարանոյ Հնչակեան Կազմակերպութեան Յայտարարութեան մասին, որ կուգար ծանուցանելու գայիք փոթորիկը: Ահա թէ ինչ կը կարգանք այդ Յայտարարութեան մէջ, որ գրած է գէղջերէն ստաջ և սրու հանդիսաւոր, թատերական սճր նոյն Հրայր-Դժոխքի գրիչը կը մասնէ:

«Հայ երայրներ,

«Հասաւ, վերջապէս, գարեթի ի վեր սպասուած կարմիր օրն. ահա կը հնչէ սրբազան գանդակն Սասնոյ բարձրաբերձ լեռներէն. ահա կը ծածանի այդ բարձանց վրա հայրութեան և մարդկութեան սոնակախաւած իրաւանց նախանձախնայի կարմիր գրօջակն. ահա գրկելոյն վրիժուց և բռնատարին գտատատանի կենաց և մահու Ժամն մճուական:

«Այսօր Հայկական ինդիքը նոր և գեղեցկայայտ շրջանի մը մէջ կը թևակոխէ: Այսօր ստրկական համբերութիւնը, զաղտա-

գողի հառաչանքը, լռելեայն գայրոյթը և խուլ բողոքը կը վերջանան և անոնց կը յաջորդէ առիւծի մոնչիւնը»...

Եւ յայտարարութիւնը կը վերջանայ այս բառերով.

«Թո՛ղ չկարծեն մեր հայ եղբարք, թէ մենք ընդարձակ պատրաստութիւն, պաշար, գէնք, դրամ, ռազմամթերք ունիմք ընդերկար դիմադրելու թշնամույն յարձակմանց, այլ յուսահատութիւնը, ծայրայեղ ճնշումը, լուռ ու մոնջ կորսելու տեղ կուսելով մեռնելու պատրաստականութիւնը մղեցին զմեզ յայս գործ»...

Տարաբախտաբար, «առիւծի մոնչիւն» արձակելու համար, Հնչակեան Կուսակցութիւնը տարրական պատրաստութիւն իսկ չէր տեսեր: Ինչպէս միշտ՝ անհամբեր, ածապարտ, յախուռն՝ կամեցեր էր միայն «բան մը ընել», ազմուկ հանել, փոխանակ քիչ-շատ լուրջ ճիգեր ընելու, կուռղ բանակ մը կազմակերպելու և մանաւանդ գէնք ու ռազմամթերք հայթայթելու\*), Սասունցիները, այնուամենայնիւ, իրենց նախնական գէնքերով անգամ կուսեցան քաջաբար քիւրդ ցեղերուն դէմ և տեղի տւին միայն կանոնաւոր բանակի գրոհին առջև (1894թ. օգոստոս): Եւրք մը յաջող կռիւններէ յետոյ — երբ հայերը ջարդ տալով քիւրդ ցեղերուն, ձեռք ձգեցին նոյն իսկ մեծաքանակ աւար (ոչխարներու հօտեր) — անոնք յանկարծ ամէն կողմէ պաշարեցան թուրք հետապնդող զօրքերով: Բարձրացան դէպի անառիկ դագաթները: Կառավարութիւնը դիմեց խորամանկութեան: Թուրք բանակի հրամանատարը խաղաղութեան փող կը հնչեցնէ և դրօշակը կը պարզէ: Ներում կը խոստանայ ապստամբներուն, եթէ վար իջնեն: Հայոց կացութիւնն ալ արդէն իսկ անտանելի էր. ոչ ռազմամթերք, ոչ սնունդ: Ճարահատեալ, հաւատացին թշնամու խոստումներուն, վար իջան և բարբարոսաբար կոտորեցան:

Որքա՞ն էր կոտորւածներու թիւը — ոչ ոք գիտէ մինչև օրս, ոչ իսկ մօտաւորապէս: Ոմանք ըսին — 6-7000 — ուրիշները՝ շուրջ մէկ հազար: Ճշմարտութիւնը, անտարակոյս, աւելի մօտ է վերջինին:

\*) 1904թ. յունւար 27 թւակիր նամակին մէջ, ուղղած Սոֆիա, Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին, հանդուցեալ Խարախանեան վարդապետը, այն ատեն աջօրական Երուսաղէմի մէջ, հետեւեալը կը գրէր.

«Կուրի համար գէնք պէտք է, որպէսզի դործն Սասունի 1894ի նման խեղճ ու ողորմելի վախճան մը չունենայ»:

Ապա կաւեցնէր, որ Սասնոյ դիւղերու մեծամասնութիւնը բնաւ չէ մասնակցած կռիւներուն, այլ միայն Գէլէկուզան, Շէնքը, Սէմալ, Տաւուրիէի գեղերը, ան ալ բոլորովին նախնական, չազմազլի հրացաններով:

Դէպքը մեծ ցնցում պատճառեց ոչ միայն Հայ աշխարհում, այլ և արեւմտեան երկիրներու մէջ, անգամ դիւանագիտական շրջաններում: Իզմիրլեան պատրիարքը ուժգին բողոքեց: Խիզախ քայլ մը՝ որու շնորհիւ մեծանուն հովիւը արժանացաւ «Երկաթէ Պատրիարք» տիտղոսին, կատղեցուց Արդիւլ Համիդը և աքսորեցաւ Երուսաղէմ:

Բողոքի ցոյցեր ամենուրեք, հսկայ միթինկներ, հարցապընդումներ Խորհրդարաններու մէջ: Վայրկեանը կը յիշեցնէր Յուսաստանի և Բուլղարիայի ազատագրութեան օրերը: Ամբողջ Եւրոպան կը գրադէր հայկական խնդրով, կը պահանջէր Ճըրդ յօդուածի իրագործումը: Հանրային կարծիքը մասնաւոր կատաղութեամբ ըմբոստացաւ Անգլիոյ մէջ: Գլադստըն արտասանեց իր մեծաղղորդ ճառերէն մէկը — Չեսթերի ճառը — խարանելով սուլթան Համիտը «Մեծ Մարդասպան» անունով: Ամէն կողմէ կը յիշեցնէին Անգլիոյ մասնաւոր պատասխանատուութիւնը հայկական ցաւերուն մէջ — 1878ի շարաշուք թւականը, Կիպրոսի դաշնագիրը, Դիպրայէլի թրքամու ընթացքը և կը պահանջէին, որ բրիտանական կառավարութիւնը կատարէ, վերջապէս, իր պարտքը Հայաստանի հանդէպ:

Եւ ահա Անգլիոյ նախաձեռնութեամբ նշանակեցաւ համալուար Քննիչ Յանձնաժողովը երեք մեծ շահագրգռած պետութիւններու կողմէն — Անգլիոյ, Փրանսայի և Ռուսաստանի — որ դնաց Սասուն, ամիսներու ընթացքին ուսումնասիրեց դէպքերը, տեղեկացաւ կատարած գարհուրանքներուն, արձանագրեց և յանձնեց քննութեան արդիւնքը Կ. Պոլիս, նոյն պետութեանց դեսպաններուն:

Մինչ երեք կառավարութիւնները գրաղած էին ուժգորմներու ծրագրին մշակումով — բան մը, որ երկար տեւեց, շնորհիւ պետութեանց ներքին ուժեղ հակառակութիւններուն — Հնչակեանները, Արփիար Արփիարեանի ղեկավարութեամբ, կատարեցին Բաբ Ալիի խաղաղ ցոյցը Կ. Պոլսոյ մէջ (1895ի Սեպտ.) և այնուհետև կտորածը մեծ ծաւալ առաւ, տարածելով ամբողջ Հայաստանի վրա: Չոհերը այժմ արդէն կը հաշուէին տասնեակ հազարներով, մինչև հարիւր հազար: Տպաւորութիւնը շքեցուցիչ էր: Սասունէն յետոյ՝ այդ գարհուրելի աղէտը... Եւ այդ այն ժամանակ, երբ ողջ Եւրոպան բռնած էր բողոքի ընդարձակ շարժումով Սասնոյ դազանութիւններու առթիւ: Թուրք կառավարու-

թեան այդ անսովոր յանդգնութիւնը շատերու համար առեղծւած մըն էր: Երևումով գտնուեցաւ առեղծւածի բանալին — այն հրէշաւոր դաւը, որ նիւթեր էր հայ ժողովուրդի դէմ ոռուսական դիւանագիտութիւնը Լօբանովի ղեկավարութեամբ...

Երբ դեսպանները, երկարատև ու ծանր երկունքէ յետոյ, Քննիչ Յանձնաժողովի տեսլներու հիման վրա, կազմեցին հայկական բարենորոգումներու նախագիծը, Անգլիոյ արտաքին գործոց նախարարը, լորդ Կիմբերլի, հեռագրեց Սըր Ֆիլիպ Քըրրիին\* (1895թ. ապրիլ 28), թէ այդ նախագիծը մէկ քննադատելի կէտ ունի, թէ վալիները պէտք է նշանակուին պետութիւններու համաձայնութեամբ — բարենորոգումները ազդու, իրական դարձնելու համար — և թէ անհրաժեշտ է, որ նոյն ինքը Բարձր Կոմիտայը, բարենորոգումներուն գերագոյն վերահսկիչը, ընտրուի նոյնպէս պետութիւններու հաւանութեամբ, այն էլ որոշ ժամանակով, ինչպէս Լիրանանի մէջ: Եւ հեռագրի մէջ լորդ Կիմբերլի կաւեցնէր, թէ միայն այդ ձևով կարելի է գոհացում տալ Անգլիոյ հանրային կարծիքին:

Քըրրի կը պատասխանէ, թէ ինքն ամէն ճիգ կ'ընէ իր պաշտօնակիցները համոզելու համար, բայց մեծ դժուարութիւններու կը հանդիպի...

Նորէն կը հեռագրէ Կիմբերլի Քըրրիին և կը հետևի նոյն պատասխանը: Այն ժամանակ Անգլիոյ արտաքին գործոց նախարարը կը սկսի բանակցիլ ուղղակի Պետերբուրգի հետ՝ իր դեսպանին միջոցաւ: Կը յայտարարէ ոռուս կառավարութեան, որ Անգլիա պատրաստ է հրաժարիլ իր միւս թելադրանքներէն, միայն թէ Ռուսաստան ընդունի, որ Բարձր Կոմիտայի ընտրութիւնը պետութիւններու հաւանութեամբ լինի\*\*):

Հայութիւնը սրտատրոփ կը սպասէր այս բանակցութիւններու վախճանին: Ի վերջոյ, իշխան Լօբանով համաձայնեցաւ (աւա՞ղ, ձևական համաձայնութիւն միայն), և Բարձր Կոմիտայի վերաբերեալ կէտն ևս աւելցուցին ուժգորմներու նախագիծին: Եւ երբ նախագիծը հրապարակեցաւ (1895 Մայիս) անգլիական այդ յաւելածով, ցնծութիւն էր հայոց աշխարհում: Իզմիրլեան խանդա-

\*) Կ. Պոլսոյ մեծ դեսպանը, որ հայոց ճիշտամի ընթացքին եղաւ նաև սրացաւ, վեհանձն մարդ մը, որ իր Քրանսացի պաշտօնակցին հետ (Կամբոնի), հակառակ ոռուս ներկողի ընդդիմութեան, շատ ճիգ թափեց ուժգորմներու լուրջ ծրագրի մը պատրաստելու ի նպաստ հայոց:

\*\*\*) Այս բոլորը կը բաղեն բրիտանական Կապոյտ Գրքէն, 1895թ.:



վառաձծ, կը հեռագրէր աւետարեք լուրը Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Թուրքահայաստանի ազատութեան Charte ն էր, որ կը հռչակէր երեք մեծ պետութիւններու ձեռքով, ընդամենը քանի մը տարւան յեղափոխական խլրտումներէն յետոյ... Հայութիւնը գրեթէ կը մոռնար երէկւան սոսկալի աղէտները և ամենէն պահպանողականներն ալ կորհնէին յեղափոխական շարժումը:

Վաղանցուկ էր համագգային բերկրանքը: Մայիսեան ծրագրին եւս վիճակաձծ էր մեռած տառ մնալ, ինչպէս Յէրզ յօդաձծին: Ռուսաստանի արիւնոտ թաթը պատուեց զայն՝ խանձարուրին մէջ: Ցարական Ռուսաստանը առերևոյթս տւեր էր իր համաձայնութիւնը, բայց տակէն կը դաւէր, կը յորդորէր սուլթանին՝ չընդունիլ, ձգձգել, դիմադրել...

Աւելի՛ն: Ռուսիոյ բացարձակ խրախուսանքով, Արդիւ Համիդ, բարենորոգումներու ծրագրին տեղ, իրագործեց Չարդի ծրագիր մը: Եւ արդէն մայիս 20ին դեսպան Քըրրի երկար հեռագրով մը հաղորդելով նախարարին քրդական նոր խժոճութիւնները Ռիթլիսի շրջանում, կը սահեցնէր այս խորհրդաւոր ու շարագուշակ բառերը.

«Քիւրդերը կրանն, թէ իրենք արտօնութիւն ունին քրիստոնեաները Չարդելու»...

Արտօնութիւն տւեր էր Երլղըզ Քեօշըր, թեւաւորաձծ Լօրանօվի հովանաւորութեամբ:

Սուլթանը կը շարունակէ ձգձգել ոչֆօրմներու գործը, լօրդ Կիմբերլի կը շարունակէ բանակցել Պետերբուրգի իշխանագն դահիճին հետ և երբ անգլիական կառավարութիւնը կառաջարկէ ճնշում գործ դնել սուլթանի վրա երեք պետութիւններու կողմէն, Լօրանօվ կը յայտարարէ, թէ Ռուսաստանը հակառակ է ունէ ճնշողական միջոցի դիմելու՝ հայկական ոչֆօրմներու առթիւ...

Յունիս 4ին Պետերբուրգի անգլիական դեսպանը կուղղէ լօրդ Կիմբերլիին այս տխուր հեռագիրը — ամենէն ճակատագրականը հայ դատի համար, որ առաջ կը բերենք Կապոյտ Գրքէն ամբողջութեամբ.

«Այսօր կէսօրէն վերջ, ինծի հետ գրուցելիս, իշխան Լօրանօվ շատ բացսիրտ (very openly) խօսելով Հայաստանի մասին, յայտարարեց, որ ինքը երբեք չէ ընդունիր Բարենորոգումներու նախագծին առաջադրումը, որպէս վերջնագիր մը Սուլթանին: Եթէ Սուլթանը մերժէ նախագիծը կամ հականախագիծներ առաջարկէ,

այդ չի նշանակեր, թէ դեսպանները կարող են սպառնական լեզու գործածել: Ռուսաստանը, ըսաւ իշխանը, ի հարկէ չպիտի ընդունի ունէ ճնշողական միջոց (any coercitive measure): Եւ վերստին ըսաւ Լօրանօվ. Ռուսաստանը ոչ մի պարագայի (in no way) չընդունիր, որ Փոքր Ասիոյ մէջ ստեղծի շրջան մը, ուր հայերը պիտի ունենան բացառիկ առանձնըշնորհումներ և ուր կարող է դառնալ կորիզ հայկական անկախ յազատութեան մը (a nucleus of an independent armenian Kingdom), որ յայտնապէս նպատակն է հայկապետ կոմիտէներուն:

Յունիս 13ին Պետերբուրգի անգլիական դեսպանը կը հեռագրէ լօրդ Կիմբերլիին Լօրանօվի այս նոր յայտարարութիւնը.

«Ռուսաստանը սիրով կ'ուզէ, որ ոչֆօրմները իրագործին, տարածուած սուլթանի բոյր հպատակներուն վրա, բայց չի կարող ընդունիլ, որ ստեղծի իր սահմաններում մօտ երկրորդ Բուլղարիա»\*):

Բարենորոգումներ — ամբողջ Թուրքիոյ մէջ... Երլղըզի խարդախ քաղաքալէտներու սովորական հնարքն էր այդ, ամէն անգամ, երբ անոնք կուղղէին ձգձգել բարենորոգումները այս կամ այն քրիստոնեայ հպատակ ժողովուրդին կացութեան մէջ: Լօրանօվ ևս բնաւ, ի հարկէ, չէր ուզեր, որ Թուրքիան բարենորոգելի և բարգաւաճի: Ռուսաստանին պէտք էր յաւիտենօրէն տկար, «հիւանդ մարդը», որ մը զայն կլլելու համար... Եւ Լօրանօվ «ընդհանուր ոչֆօրմներու» իր առաջարկով նոյն նպատակն ունէր — անվերջ ձգձգել Հայաստանի բարենորոգումը:

Այդպէս թաղակցաւ ոչֆօրմներու այդ խոստումնալից ծրագիրը — ցարիզի ժահրոտ թաթով:

Չարմանալի չէ, ի հարկէ, որ ռուս յետամնաց բռնապետութիւնը դահճի ձեռքով փակեց ժողովուրդի մը ազատութեան դռները: Բայց Ռուսիան ատկէ աւելի առաջ զնաց. նա արտօնեց և այդ ժողովուրդի Ֆիդիքական յօշոտումը: Ռուս բրոնաւոր ոչթիմի հիմնական շարիքներուն վրա կ'աւելնար պատասխանատու նախարարին զիւսական քմահաճոյքը, անոր դատանկարագիրը: Հայութեան կոյր բախտին՝ այդ ճակատագրական օրերուն Ռուսիոյ արտաքին քաղաքականութեան վարիչն եղաւ ամենապազան դահիճը, որ կարող է մրցել Թալաթ փաշաներուն հետ, ամենասիրիկ զիւանազատը, որու նմանը գուցէ չէ եղած

\*) Կապոյտ Գրք. 1896թ. էջ 83:

անգամ ցարական տարեգրութեանց մէջ: Անոր պէտք էր «Հայաստանը առանց հայերու»...

Եւ բարենորոգմանց ծրագրին տեղ՝ Շաքիր փաշան էր, որ կատարեց իր արեան թափօրը հայկական վիլայէթներուն մէջ, Բարձր Կոմիսարի պաշտօնով, լօրանովեան արտօնագիրը ձեռքին...

Գերմանիան և Աւստրիան թուրքիոյ բարեկամ ու պաշտպան էին, միանգամ ընդմիջոտ հրաժարած ամէն տեսակ մասնակցութենէ «Եւրոպական համերգին» մէջ, ընդդէմ օսմանեան կայսրութեան. Ֆրանսան ալ Գերմանիոյ ահէն՝ ոտով ձեռքով նետեր էր Ռուսաստանի դիրկը և ի դէմս տիրահոջակ Հանօտայի (արտաքին գործոց նախարար) կուրօրէն կը հետեւէր իր դաշնակցին, հակառակ դեսպան Կամբօնի քսոմնեցուցիչ տեղեկագիրներուն: Եթէ Ռուսաստանը նպաստաւոր դիրք բռնէր հայոց հանդէպ, Գերմանիոյ, Աւստրիոյ չեղօքութիւնը չպիտի խափանէր հայ դատի լուծումը, ինչպէս որ նոյն պետութեանց չեղօքացումը չկրցաւ արդէն լինել Կրետէի ադատադրութեան, 1896 թւականին: Իտալիան, որ համակիր էր մեղի, այդ միջոցին սքտեւրագմի բռնած էր Հարեչտանի հետ, չարաչար պարտութիւններ կը կրէր և կապէր իր ծանրագոյն տաքնապը ադատութեան օրերէն ի վեր: Բայց եթէ անգամ Հոմեր կարենար թափով միջամտել Անգլիոյ կողքին, դարձեալ բարենորոգումներու գործը չպիտի քալէր, քանի որ դէմ էր Ռուսաստանը... Լօրանով ոչ միայն կընդդիմանար, այլ և բացորոշ կը հասկցնէր Անգլիային, որ ամէն մի փորձ բռնի միջոցներ ի գործ դնելու թուրքիոյ դէմ՝ պիտի դիտէ որպէս casus belli:

\* \* \*

Ուրիշ ազատ մը — Վասպուրականի մէջ: Ընդհանուր կոտորածի ալիքը այնտեղ համեմատաբար թոյլ եղեր էր: Յեղափոխական կազմակերպութիւնները համեմատաբար աւելի ուժեղ էին, քան ուրիշ վայրերում: Սուլթանի կառավարութիւնը խորհեցաւ, որ Սասունն ընկճելէ և Հայաստանը արիւնքի վերջ, ժամանակը հասած էր՝ հարւածով մը արմատախիլ ընելու նաև այդ յեղափոխական, ինքնապաշտպան մարմինները: Անոնց դիւրաւոր բոյնը — զրեթէ միակը — կը մնար Վանը: Համիդ այլևս վախ չունէր Անգլիայէն: Թիկունքը կանչած էր ցարի կառավարութիւնը, որ ինքն ալ արդէն, նոյն 1896ին, արշաւանք սկսեր էր

Անդրկովկասի հայութեան դէմ, հարիւրներով կը ձերբակալէր ու կաշտրէր հայ մտաւորականութիւնը, մասնաւորապէս դաշնակցացականները): Կովկասի մէջ կը գործէր կառավարչապետի պաշտօնով իշխան Գոլիցին, ուրիշ հայակեր մը, փոքրիկ Լօրանով, որ կատաղօրէն կը հալածէր անգամ թուրքահայ փախստական գանդաւաճները, որոնք մեծ ջարդերէն ի վեր ապաստաներ էին Կովկաս: (Կը պահանջէր՝ կամ ընդունիլ ոռուսահատակութիւն կամ ոռուս երթալ Կովկասէն):

Ահա թէ ինչպէս են ներկայացւած Վանայ յունիսեան դէպքերը «Գրօշակ»ի մէջ: Գրողը Վազգէնն է, որ այն օրերուն, ոստիկանութենէն հետապնդելով, շատոնց թաքնած կապէր:

... «Կառավարութիւնը վաղուց հետամուտ էր կոտորած անել և Վանում, որ հայաշատ կեդրոններից մէկն է... Որպէսզի առիթ գտնէր կոտորելու, սկսաւ ամենախիստ խուզարկութիւններ անել, յուսալով ձեռք ձգել յեղափոխականներին: Այդ խուզարկութեանց ատեն ձերբակալեցաւ Օր. Զարուհի Տէրոյեան (Վազգէնի ջորը. Մ. Վ.), իբրև դաշնակցական, որին ամէն կերպ կաշխատէին խոստովանցնել, որպէսզի ցոյց տայ իրենց տան միջի գէնքի պահեստը...

«Տաճիկ խուժանը պատրաստ էր արդէն: Յունիս 1էն (1896 թիւ) շուկան իսպառ գոց էր: Յունիս 2ի գիշերը, գիշերապահ գործեր Այգեստանի մօտ, դաշտի մէջ ընդհարում ունեցան խումբ մը հայերու հետ, երկու զինուոր սպանուեցան և մէկ միլիոնով վիրաւորուեցաւ, օգնութեան գալարափողը հնչեց... Լոյսը բացուելուն... զինուորներու դիակները տարան թաղ փողոց և դրին ի ցոյց տաճիկ խուժանին...

Յունիս 3ին կոիւր սկսաւ... Հայ յեղափոխական կուսակցութիւններ (Դաշնակցական, Արմենական, Հնչակեան — երեքն ալ ունէին իրենց խումբերը Վանի մէջ. Մ. Վ.)... եղբայրաբար ձեռք ձեռքի տաւ, պաշտպանեցին ժողովուրդը: «Դաշնակցութիւնը» իր զինուորներով և լաւ զէնքերով շատ ոյժ տեղ գործին: Բոլոր կարևոր տեղերը, ուրկէ տաճիկները կարող էին մուտ գործել հայ թաղերը, մարտական դիրք ընտրեցին... և կատաղի կոիւ մղեցին մահամետականների դէմ...

Նախրի փողոց և մանաւանդ Շան թաղ... ամբողջ վեց օր կոիւ տւին մեր քաջերը՝ գիշեր ցերեկ և ետ մղեցին անարդ թըշնամուն... Կոիւր կանոնաւոր գործերի դէմ էր, որի հետ խառն էին զիրդ ու թուրք խուժանը: Թշնամու փախուստը և նրանց

\* Քանի մը հարիւր հօգի — գրող, ուսուցիչ, քահանայ, առևտրական կամ պարզ գործակատար — որոնց շարքին տարիքոտ գործիչներ՝ Ղազարոս Աղայեան, իժիշկ Նաւասարդեան և այլն — աղբորականի կեանք վարեցին Հիւսիսային Կովկասի և հարաւային Ռուսաստանի մէջ, ոմանք երկար տարիներ:



ՅԳՂԻ ՎՄԳՅՈՒՄ ՈՍԿՈՂՆՈՒՄԻ

դիակները նոր աւելն էին ներշնչում մեր կտրիճներին: Այդ 6-7 օրը հայաբնակ Այգեստանը ազատ էր, տաճկական իշխանութեան հետքը չկար. հայ գինւորներն էին, որ ուրախ զարթօգնութեան էին շտապում այս ու այն դիրքին: Ժողովուրդը... օրհնում էր քաջերին...

Յաջորդ օրը առաւօտից սկսեց Թնդանօթաձգութիւնը: Կռիւր կատաղի էր: Կանոնաւոր զօրք, ահագին ռազմամթերք, 7-8 թրնդանօթներ ափ մը առիւծներու դէմ... Այգեստանի փողոցի ծառերը մեծ մասը կճրտեցան, որպէսզի թշնամին չյաջողի ապաստանիլ անոնց ետևը: Հայ ընտանիքներ և անզէն մարդիկ ապաւինեցան դեպքանների տներ... Մինչև իրիկուն կուտղ հայերից միայն երկու զոհ տւինք, իսկ թշնամու կողմէն ընկան 200էն աւելի: Գիշերը մութին մենք սարը բարձրացանք...

Մեծ պետութեանց հիւպատոսներու միջամտութեան վրա՝ յեղափոխական խումբերը, մօտ 1000 հոգի, կոտորածի պատճառ չդառնալու համար, կը համաձայնին քաջիլ Վանէն և կուղևորւին դէպի Պարսկաստան: Թնդանօթաձգութիւնը կը դադրի: Աւերածի գործն է, որ կը շարունակւի: Թրքական թաղերու մէջ ցաք ու ցրիւ հայ բեկորները կոտորւած էին առաջին օրն իսկ: Թշնամին չուզեց շարունակել ջարդը հիւպատոսներու ներկայութեամբ: Բայց ջարդ ու աւերածներ կատարեցան գաւառներու մէջ: Շատախի մէջ ուժեղ դիմադրութիւն ցոյց տւին հայք և թեթև կորուստներով ազատեցան, շնորհիւ Դաշնակցութեան ինքնապաշտպան խումբին, որ կը գործէր Վարդանի ղեկավարութեամբ: Փետան-Դաշտի մէջ նոյն իսկ յաղթական եղան և մեծ թւով հրոսաններ ջարդեցին:

Վանէն հեռացած յեղափոխական խումբերը գնտ-գատ ճամբաներով ուղղեցան դէպի Պարսկաստան: Արմենականներն Աւետիսեանի առաջնորդութեամբ՝ 200 գինւած և 800ի չափ անզէն կը շարժին Հայոց-Ձորի, Աղբակի վրայով, Դաշնակցականները՝ 125 գինւած երիտասարդներ կը բաժնւին երկու մասի. մէկ մասը կը մնայ երկրի մէջ, միւսը՝ 58 հոգի, Պետի առաջնորդութեամբ կուղղւի դէպի պարսից սահմանը: Անոնց կը միանան 25 հոգի հնչակեանները Մարտիկի խմբապետութեամբ... Կուրի կը բռնւին Գարահիսար լեռան վրա զօրքերու և քիւրդերու հետ և ամբողջ օրւան բուռն կռիւներէ վերջ, գրեթէ ամենքը կը կոտորւին: Նոյն ճակատագրին կենթարկւի Արմենականներու սուար խումբը Ս. Բարթողիմէոս Առաքեալ վանքի շրջակայքում...

Վարդանի խումբը միայն կրցաւ ճողոպրիլ այդ ընդհանուր արհաւիրքէն:

VIII

ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՆԿԻ ԳՐԱԿՈՒՄԸ ԵՒ ՌՈՒՄԲԱՅԻՆ ԿՈՒԻՆԵՐԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Օրհասի ազադակներ. — Կոի՛ւ բոլոր միջոցներով. — Բարկէնի, Վոսմեանի, Զաւարեանի նամակներէն. — Զարնել բուն իսկ Կեդրոնին մէջ. — Օգոստոս 14ր. — Բանկ և Սաւաթիա. — Աննախորհրդաց սարսափ և իրարանցում. — Հ. Յ. Գ. Շրջաբերականը. — Կ. Պոլսոյ ապստամբութիւնը և Եւրոպան. — Մեր նահատակները.

Կացութիւնը ահռելի էր: Պահ մը տիրեց գերեզմանային անդորրութիւն երկրին մէջ: Կը թւէր թէ հայկական շարժումը Գարահիսար լեռան և Ս. Բարթողիմէոսի վանքի մօտ իր վերջին փամփուշտներն էր արձակեր...

Սակայն, վրէժի խուլ մրմունջ մը կանցնէր հայոց աշխարհէն: Հայ երկտասարդութիւնը դեռ մեռած չէր, վրէժ կը գոչէր կատաղարար: Ամենէն յուսահատները կաղաղակէին, թէ միւսնոյն է՝ ատկէ աւելի վատթար վիճակ չէր կարող լինել, միւսնոյն է՝ ատանց գարնելու և կուելու ալ՝ կը կոտորւինք — կը կոտորւինք անգամ խաղաղ, անմեղ թափօր սարքելով (Բար Ալի), կը կոտորւինք անգամ ամենէն օրինաւոր, պաշտպանողական դիրք բռնելով աւարատու և հայաջինջ հրոսակներուն դէմ (Սասուն), — ինչո՞ւ մենք ևս չյարձակինք և չղարնենք... Հ. Յ. Դաշնակցութիւնը մինչ այն ամէն կերպ խուսափեր էր յարձակողական և ցուցական գործողութիւններէ, խուսափեր էր մանաւանդ ուժանակի գործածութենէ: Ատենը չէ՞ր արդեօք որդեգրելու գործունէութեան այդ երկու ձևերն ալ, ցոյցեր սարքելու ամենէն «զգայուն» կէտերուն վրա, ոչ Բար-Ալիի պէս անմեղ, անվնաս, այլ զինւած ցոյցեր և ուժանակի ու այլ պայթուցիկ նիւթերու օգնութեամբ... Թո՛ղ ինչ կուզեն՝ ըսեն արեւմտեան կարգ մը ծախու թերթերը, թո՛ղ խարանեն հայ յեղափոխականը «անիշխանական», մարդասպան ու այլ մակղիրներով... Մենք յուսահատներու ժողովուրդ մըն ենք,

կըսէր օր մը պատրիարք Իզմիրլեան եւրոպացի թղթակցի մը՝ Ժօրժ Գոլիսին — մենք «յուսահատներու ազգ մըն ենք» և կը կուինք բոլոր միջոցներով, փոյթ չէ թէ երբեմն կը վնասուին նաև անմեղ մարդիկ... Ամէն կողմէ կը տեղային բուռն, ցասկոտ թելադրանքներ: Ընկերներէն ոմանք — ինչպէս կը կարդանք այդ օրերու իրենց նամակներուն մէջ, ուղղւած Արեւմտեան Բիւրօին — կը թելադրէին յոդս ցնդեցնել տաճկական դեսպանատները արեւմտեան մայրաքաղաքներում:

Կամաց-կամաց շարքերուն մէջ հասունցաւ ու գերակշռեց դադափար մը — գարնե՛լ բուն իսկ կեդրոնին մէջ, օսմանեան մայրաքաղաքում, բայց գարնել այնպէս, որ հարւածը դպի ոչ միայն թուրք պետութեան շահերուն, այլ և եւրոպական կապիտալի զարկերակին: Եւ Կազմակերպութիւնը Պոլիս ուղղեց իր կարևոր ուժերուն մէկ մասը: Բարկէն Սիւնի, այդ դադափարի խանդավառ պաշտպանը, կը գրէր «Դրօշակ»ին 1896թ. ապրիլ 28 նամակին մէջ, իր եղբրական մահէն երեք ու կէս ամիս առաջ:

— «Ընկերներ, փորձառութիւնով դիտեմ, որ Պոլիսը մեզ համար մեծ նշանակութիւն ունի, ուստի և անհրաժեշտ է հոս բարոյական մեծ ուժեր ունենալ... Մեկիքի (Յուսուֆեան. Մ. Վ.) հոս դալը այլ ևս անկարելի է. ուրիշներու մասին պէտք է մտածել. հարկաւոր են բարձր գարգացում ստացած մարդիկ. այդպիսիներու պակասը շատ դժուար է թէ յեղափոխականներու համար և թէ ժողովուրդին համար»: Իսկ Վոսմեան կը գրէր յունիս 14ին.

— «Մովեզերեայ քաղաքներուն մէջ (Դաշնակցութեան) դիրքը և տակտիկան փոխելու է. հոս հաւ մը մորթելու լուրն անգամ կը հեռագրւի, մինչ անդին, երկրին մէջ, հազարաւոր մարդիկ կը խողխողեն և չորս ամիս ետքը միայն կիմացւի Եւրոպայի մէջ... Բայց պէտք է որ ժողովրդի ձեռքը բան մը գտնւի ինքզինքը պաշտպանելու համար... Աւելի պաշտպանողական, քան յարձակողական դիրք պէտք է բռնել բազմամարդ թաղերուն մէջ, սակաւամարդներու մէջ կեդրոնացնելով ահաբեկող խումբեր: ... Այն ատեն միայն այդ մարդիկ (դիւանագէտները) մատերնին պիտի շարժեն, երբ տեւական ահաբեկու գործութիւն մը վեր ու վար ընէ մայրաքաղաքը»...

Ահա այս տրամադրութիւններու արդիւնքն էր Բանկ Օտտամանի պաշարման ծրագիրը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը ունէր արդէն իր համեստ մասնաճիւղը Կ. Պոլսոյ մէջ 1891ին, երբ Գում-Գափուի մեծաղմուկ ցոյցը ալեկոծեր էր օսմանեան մայրաքաղաքի մթնոլորտը: Հնչակեան-



ներու և Արմենականներու (Փորթուգալեանի մարդոց) միացեալ ճիգերով կազմակերպուած այդ անդրանիկ, փոքր ինչ յախուռն և ընդհանրապէս խաղաղ ելոյթը կատարեց, անշուշտ, իր որոշ դերը, որպէս «ագիտարար» թուիչք մը՝ սրտերը ցնցող ու սթափեցնող՝ բայց և յուսախար ըրաւ յեղափոխական շրջանները՝ իր անվնաս կեցածքով ու ծանր հետեւանքներով: Հայը գործ



Վ Ռ Ա Մ Ե Ա Ն

ունէր ամենէն սանձարձակ բունապետութեան հետ, որ անխնայ կը զարնէր ու կը ճարակէր անգամ խաղաղ թափօրները... Հարկ էր բեմ նետելի ոչ մերկ կուրծքերով և ըստ կարելոյն լուրջ պատաստութեամբ:

Հաւատարիմ իր կուսակցութեան կարգախօսին, Դաշնակցութեան ներկայացուցիչը կը տանէր իր գործը լռիկ-մնջիկ, համբերութեամբ, առանց տենդի ու աճապարանքի, կը մղէր իր քարոզչութիւնը Պոլսոյ գետնայարկերուն մէջ, զրաճանաչ երիտասարդութեան շարքերում և 3-4 տարեան ընթացքին կըցաւ ստեղծել գաղափարական ընտիր գործիչներու փաղանգ մը, կեդրոնական ուժեղ մարմին մը իր կոմիտէներով ու ենթակոմիտէներով,

որոնցմէ ելան Օննիկ Դերձակեան - Վառաճաճ, Բարկէն Սիւնի, Զարմայր - Վարդգէս (Մէրէնդիւլեան), Արտաշէս Դեւեան - Եզիպտացի, Յակոբ Կարապետեան-Զաւէն\*), Յարութիւն Գեւորեան-Պասքալ, Վոսմ Քէնդիրեան, Սարգիս Մինասեան և այլն, շատերը կեդրոնական Վարժարանէն:

Դաշնակցութեան լիազօրը, Յովհաննէս Եուսուֆեան\*\*) հըմուտ ձեռքով պատրաստեց նաև շարք մը յանդուգն ահաբեկիչներ, որոնք օր ցերեկով, բազմամարդ փողոցներուն մէջ կը զարնէին դաւաճանները և կանհետանային: Այդպէս, 1895ին մին միւս ետեւէ սպանուեցան կեդրոնական կոմիտէի կողմէ մահուան դատապարտուած առաջնակարգ հայազգի լքտես ու մատնիչներ, ոստիկան-կոմիտէր Հաճի Տիգրան, վիրաբոյժ Թիւթիւնջեւ, կարգալոյժ վարդապետ Մամբրէ և ուրիշներ, որոնք օսմ. ոսկիներէն հրատուրուած, դարձեր էին Նազըմ փաշայի հաւատարիմ գործակալներ և անոր ձեռքը կը մատնէին ու բանտերու մէջ կը փոկեցընէին բուն յեղափոխական գործիչներուն հետ նաև բազմաթիւ անմեղներ:

Գրաւե՛լ օսմանեան ու միջազգային դրամագլխի այդ հզօր միջնաբերդը, այնտեղէն ուժանակային կռիւ մղել տաճիկ ոստիկանութեան ու զօրքի դէմ և դրամատունը օր ցնդեցնելու սպանալիքով: Դիւանագիտական ազդու միջամտութիւն յարուցանել միևնոյն ժամանակ, մայրաքաղաքի շարք մը հայաբնակ թաղերը դարձնել կուրթատերեմ և ստեղծել ընդհանուր շփոթ, քաօս,

\*) Մի-մի հերոսապատու է այս տղաներու կեանքն ու վախճանը: Մեր ամենէն դրաւիչ երիտասարդներէն մէկն է Յակոբ Կարապետեան, որ դեռ դեղբոր յակահ սպասանի՝ իր ծննդավայր Տրապիզոնի մէջ անդամադրուած էր տեղւոյն զինուորի ընկերութեան (1880թ.) և 1893ին իր քանի մը դասընկերներուն հետ, թմբան ցուրտերուն, արկածալից ուղեւորութիւն մը կընէր դէպի Սասուն, ապստամբներուն օղնելու նպատակով... Զկրցան, ի հարկէ, տեղ հասնի... Կարապետեան եղաւ հետազային կազմակերպութեան գործօն անդամներէն մին: 1897ի ոմրաձուլութենէն յետոյ (կ. Պոլսոյ մէջ), երբ ոստիկանութիւնը կուզայ զինքը ձերբակալելու, Յակոբ զնդակներով կը պատասխանէ և վերջին զնդակն ալ իր ձեռակին կուղղէ, թշնամու ձեռքը չընկնելու համար:

\*\*) Եուսուֆեան, «Մեկիք» ծածկանունով, Կուսակցութեան առաջին ուխտակներու շարքէն էր, Նոր-Բայազետցի: Ներսիսեան զպրոցը աւարտելէ և քանի մը տարեան ուսուցչութենէ յետոյ, ներկեցաւ պատասարական շարժման: 1895ի աշնան ստիպուած եղաւ հեռանալ Պոլսէն, անցաւ Փլնէւ, ապա Ամերիկա, ուր մեծ զարկ տուաւ կազմակերպական գործին: Մեռաւ 1920ին, Լոզանի մէջ, 66 տարեկան:



Իրարանցու թէ թուրքական և թէ արեւմտեան շրջաններում... Գաղափարը դինովցուցիչ էր իր ահարկու մեծութեան մէջ և շուտ նւաճեց Կազմակերպութեան վերին խաւերն ալ:



ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՒՈՆԵԱՆ-ՊԱՍԿԱԼ  
ՊՈԼՍՈՅ ԿՈՄԻՏԵԻ

ՅԱԿՈՒ ԿԱՐԱԳԵՈՋԵԱՆ-ՋԱԻՆ  
ԱՆՎԱՄՆԵՐԷՆ

Հասաւ 1896ի օգոստոսը: Դէպքէն անմիջապէս առաջ, Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէն տաճկերէն թուոցիկ մը հրատարակեց, որով կազդարարէր թուրք ժողովուրդին, որ կոխը իրեն դէմ չէ, այլ իր բռնակալ կառավարութեան դէմ:

«Դարերէ ի վեր մեր հայրերը կապրէին քեզ հետ հաշտ ու խաղաղ... սակայն, այս վերջին ժամանակները ոճիրներով ստեղծւած քո կառավարութիւնը սկսեց խոռովութիւններ սերմանել մեր մէջ, որպէսզի աւելի մեծ դիւրութեամբ խեղդէ և քեզ և մեզ: Դուն չհասկցար, ժողովուրդ, այս դիւական քաղաքականութիւնը և մեր եղբայրների արեան մէջ թաթխւած, դու մեղսակից գտնւեցար այդ զայրելի ոճրագործութեան: Բայց թող քեզ քաջ յայտնի լինի, որ մեր կոխը ոչ թէ քո դէմ է, այլ քո կառավարութեան, որու դէմ կը կուին և քո լաւագոյն գաւակները»...

Օգոստոս 13ն է: Յաջորդ օրը պիտի կատարւի յարձակումը Օսմ. Բանքայի վրա: Ընկերները կը հաւաքւին վերջին անգամ ժողովի: Իրենց խորհրդաւոր ժամադրաւայրում, Բերայի մթին

սենեակի մը մէջ: Ամենը կը դիմաւորէ Բարկէն Սիւնին, որ բուն իսկ հոգին էր դաւադրական ձեռնարկին և ընտրւած էր ընդհանուր հրամանատար: Դէմքերը արտասովոր լրջութեան դրոշմ կը կրեն: Անգամ մշտածիծաղ ու գլարճախօս Բարկէնը նստեր էր յօնքերը կիտած: Երբեմն ճիգ կընէր ժպտելու, բայց չ'աջողիր: Կը տարակուսէ՞ր արգեօք ծրագրի յաջողութեան մասին: Ինքը որոշեր էր մեռնիլ Բանքայի փլատակներուն տակ: Եւ նոյն վրճաւականութիւնը կը փայլէր շարք մը ուրիշ դէմքերու վրա: Ամե՞նքն արդեօք կերթային դէպի մահ... Բարկէն մտախոհ էր: Եւ շարունակ կը խաղար ատրճանակի ու ուռմբի հետ: Կը պարզէր երկարօրէն ընկնիներուն, թէ ինչպէս պէտք է յարձակիլ Դրամատան վրա և վստահօրէն կը շեշտէր, որ եթէ իր հրահանգներուն հետեւին, գործը պիտի յաջողի: Կը սկսի ընթրիքը... Դաւաշիրներու վերջին ընթրիքը... Շիշ մը դինի՝ ամբողջ սեղանին վրա: Կենացներ կը խմեն, տաք, ողետուած խօսքեր կարտասանեն: Բարկէն կ'ստնէ լաժակը և խորունկ յուզումի մէջ հետեւեալը կ'սէ.

— «Ընկերներ, գիտեմ, որ պիտի մեռնինք. միայն փափաքս է, որ ողջ մնացողները աւելի կատաղօրէն շարունակեն մեր գործը, լուծեն մեր հարիւր հաղար սրախողիտը եղբայրներուն ու քոյրերուն վրէժը և աղատեն մեր դժբախտ հայրենիքը. այն ժամանակ մեր ոսկորներն ալ հանդիստ կըլլան: Կերպն'ունք, որ ողջ մնացողը չ'պիտի դաւաճանէ մեր սուրբ գործին»...

Վեց հոգի ընտրեցան՝ յարձակումը կատարելու, պահապանները սպաննելու և միւսներու ճամբան հարթելու համար\*): Վեց անվահեր քաջեր — մահու ապահով թեկնածուներ — որ ինքնարեքարար ճայնակեցան Բարկէնի կոչին՝ փոքրիկ վաշտի առաջապահը կազմելու համար:

Ահա և բուն դէպքը, նկարագրւած մեր ողբացեալ Հրաշի\*\*)

ձեռքով. (Կուտանք համառօտակի):

... «Օգոստոս 14... Ժամը առտւան վեց ու կէս: Հաւաքւեցան տղաքը... 26 հոգի: Բաւական էին յարձակումը սկսելու համար: Համբուրեցինք զիրար: Տաք-տաք, անոյշ մնաք բարովի յուզիչ համբոյրներ... Խօսքովը\*\*\*) ճամբեց վեց նախախարձակ քաջերը: Մնացած տղերքը կազմ ու պատրաստ կը սպասէին: Ռումբերու պարկերը նետեցան ուսերը, ատրճանակները ձեռքեր-

\*) Անոնցմէ մէկը Բէյնիցի Յովհաննէան էր, որ եւ առաջին զոհն եղաւ: Մ. Վ.

\*\*\*) Հրաշը, Հայի Թիրաքեան, Տրպիզոնցի (տարագրւած և սպանւած 1915ին), մեր լաւագոյն յեղափոխական ընկերներէն էր, որ դէպքէն քիչ առաջ կիսատ ձգեր էր ուսումը Նանսիի գիւղատնտեսական դպրոցին մէջ եւ իր ընկեր Արմէն Գաբօի հետ, Կուսակցութեան յանձնարարութեամբ անցեր էր Պոլսո:

\*\*\*) Բարկէնի մէկ անունը:



նին պահեստի տունէն դուրս ելանք: Պանքային մօտեցած ատեննիս, նախալարձակ ընկերներու արձակած բաժնիքներ արագ-արագ ատրճանակի ձայներ լսեցինք, աւելի խրախուսուած վազել սկսանք: Մեծ փողոցին մէջ շփոթը սկսած էր արդէն: Ասդին անդին կը վազէին շարած, ահ ու դողի մէջ: Հասանք Պանքայի մօտ և խուժեցինք ամբողջով ներս... Վարը դրան առջև 3 հոգի ընկած էին մերոնցմէ... մէկը յետոյ վիրաւորուած դտանք:



ՀՐԱԶ (ԹԻՐԱՔԵԱՆ)

Մինչդեռ մեր տղերքը կրակ կը տեղային դուրսը, ներսինները, Պանքայի պաշտօնեաներ, դողահար, գունատ, ծակերը մտած էին: Պողոցի, որ իրենց համար վախենալու բան չկայ, մինակ թէ տեղերնին անշարժ մնալու են... Մեզի գողեր կարծած էին... Հանդարտեցան: Բայց երբ ռումբերու որոտը լսեցին, կրկին սարսափահար ընկան յուսահատութեան մէջ: Քանի մը ժամ շարունակուող ուժեղութիւնը համոզեց իրենց, թէ մեր ըրածը ցոյց մ'էր կառավարութեան գէմ...

... Կուր տաք ժամանակը հինգ ընկերներով բարձրանալ սկսայ վերին յարկերը. պէտք էր շուտով տանիքը ելնել և նշան տալ դուրսը՝ հեռուն, տան մը մէջ սպասող մի ընկերով, որ մեր յաղթութիւնը տեսնելուն պէս, մեր պահանջները պարունակող պաշտօնական նամակները տանելու էր վեց պետութեանց: Առաջին գործն եղաւ թաշկինակս հանել և դուրսը ցոյց տալ. քիչ մը ծածանելէ ետքը ծխնելոյցի վրա յաղթութեան դրօշակի տեղ կապեցի: Քանի մը վայրկեան վերջը, մեր ընկերներէն Մրկօն տեսայ նշանակած բարձր տան պատնէչին վրա. զիս տեսնելուն պէս, ուրախութեամբ դուրս վազեց...

Տանիքի եզերքէն դիտեցի փողոցը: Պաշտօնակի և զօրքերու բազմութիւն կար հոն. միջնակ ռումբ մը նետեցի և վայնա-

տունը փրթաւ: Փախող փախողի եղաւ: Վիրաւորեալները, սպանուածները կը վերցնէին և նոր խումբ հրացանաձիգ զօրքեր կը բերէին... Ուրիշ ռումբ մը — և նոյն հա՛յ հո՛յը, փախուսաւ: Ռումբերը հրաշալի արդիւնք մը կուտային. զիպածը անմիջապէս ձեր սպաններ, բայց միտերը կը պատտօտէր, կը չարչրէր: Մանաւանդ ահագին որոտումը, որ թնդանօթի նման աղմուկ կը հանէր և ահ կը սփռէր, թոյլ չէր տար զօրքերուն Պանքային մօտենալ:

Միս ընկերներն ալ վարը կը կուէին, բայց չէի դիտեր, թէ ինչ զրութեան մէջ են: Կիմանայի ատրճանակներու և ռումբերու շարունակ որոտալը...

Դիմացի և հեռուն գտնուած տուներու պատշգամներէն, պատուհաններէն հետաքրքիր բազմութիւն մը մեզի կը դիտէր... Մեծ քանակութեամբ ուժանակ կար քոյս, որ պիտի յատկացէր Պանքը օդը հանելու համար... Ընկերները միտքս ընկան. տկանջ զրի, վարէն աղմուկ չէր լսել. սպանուած են, մտածեցի: Խիստ յուզւեցայ և լաց եղայ... Դեռ ժամ մ'առաջ բոլորն ալ ողջ էին... Մօտեցայ պատուհանի մը... Յանկարծ իմ անունը լսեցի: Մեր տղերքն էին, որ դիս կը փնտրէին: Վար իջայ... Գարօի հետ միասին դիրքատրի գրասենեակ մտանք: Պաշտօնական առաջին քարտուղարը հոն էր: Պայմանները գրեցան: ա) Խաղաղութիւն ամբողջ երկրի մէջ: բ) Պետութեանց զրկած մեր պահանջներու դարձադրութիւնը երաշխաւորել: գ) Բոլոր այդ ճակատամարտի մասնակցողներուն ազատ թողնել և սյժ զորք չդնել: դ) Հակառակ պարագայի տակ՝ օդը կը հանենք Պանքան մեզ հետ ի միասին:

Կուսով 17 հոգի մնացեր էինք: 3 սպանուած էին և 6 վիրաւոր: Ռումբերը քիչցած էին, սմանք լեցնելով կը գրադէին, սմանք պատուհաններու մօտ լաւ դիրք գրաւած էին. այլք դրանը յարձակողներու կրակ կը պարպէին: Տղերք ուրախ տրամադրութեան մէջ էին. մինչև մահ կուրսու պատրաստ լինելին կը յայտնէին... Ճերմակ դրօշ մը իբրև բանակցութեան նշան, պատուհանէն դուրս հանեցին (մերիները): Հրահանգ տրեցաւ մեր տղայոց՝ շնտել (ռումբեր) ... Պանքի պաշտօնեաներէն երկու հոգի բանակցութեան համար դուրս ելնելու են...

Ժամը 5էն ետքը, ներկայ տղայոց անունները սկսայ զրել... Ո՛հ, չարտի մոտնամ այդ մահացուցիչ վայրկեանը: Դուրսի գրանի մօտ... յանկարծ ծնկներս զողալ սկսան... զիմացս կը տեսնէի Բարիկէն Միւնին... այրած, երկու ձեռքերը պատտակներէն կախուած, գէմքը արխնած և մարմինը արխնաչէճի մէջ թաղուած... Սիրածի յուսանկարը Գարօի հետ գրադանէն հանեցինք, նաև ժամացոյցը և դրամը... Մութը կիսած էր և ճրարները վառուած...

Չորս ժամ շարունակ յարձակողական դիրք բռնելէ ետքը, 3 ժամ այ պաշտպանողական դիրքի մէջ մնացինք... Մեր տաճ միասնաբար ահագին էին... Երբեմն զոհերը շատ ու շատ էին (թշնամու կողմը), երբ հո՞՞ւր բազմութիւն կար: Վիրաւորածները



տոնալով գետինը կը փռէին, ցաւերը սոսկալի լինելու էին... Կա-  
մաց-կամաց զօրքերը Պանքի առջեւէն քաշուելով, քիչ մը աւելի  
հեռուն կանգնեցան. բոլոր հրացանները ուղղւած էին մեր շէնքի  
պատուհաններուն վրա. ակնդէտ կը սպասէին յիմարները, որ  
ապուշի նման զլուխնիս դուրս հանէինք... 13 ժամ Պանքի մէջ



Ա Ր Մ Է Ն - Գ Ա Ր Օ

մնացինք. ամենն ալ (մօտ 150) պաշտօնեաներ, մեծ մասամբ եւ-  
րոպացի. Մ. Վ.) մկան պէս կը դողային մեր առջևը. առանց  
հրամանի քայլ մը չէին կարող առնել... Ձէինք թողուր, որ տե-  
ղերնէն շարժէին... Մեր ձեռքերու մէջ անդադար բռնած ատրը-  
ճանակներն ու ուռմբերը նրանց մօտ հոգի չէր ձգած: Շատեր 4-5  
ժամ... նեղ ծակերու մէջ պահուած մնացին. յետոյ իրենք մեզի  
կը պատմէին: 30-40 հոգի, որոնք կանխաւ գետնայարկի մէջ կաշ-  
խատէին, մինչև վերջը վախերնուն դուրս չուղեցին ելնել: 20-30  
պաշտօնեաներ 6-7 ժամ պզտիկ սենեակի մէջ աղտոտ տեղ մը  
բանտարկւած էին... մանաւանդ մեր սուլիչներու տարօրինակ  
աղմուկը իրենց արիւնը կը քամէր»:

Ընդհատենք այժմ Հրաչի պատմութիւնը և խօսքը տանք  
Արմէն Գարօին (Գարեգին Պատարմաջեան, էրզրումցի), որ զբը-

խաւոր դերակատարն էր Բարկէն-Սիւնիի մահէն յետոյ: Գարօն  
հակիրճ ձևով կը նկարագրէ Բանկի դրաման առաջին վայրկեան-  
ները և Բարկէնի նահատակութիւնը.

... «Վեց նախալարձակները յառաջ ելան... 5 հոգի (մե-  
րիններէն) վերցրին դռան արգելքները. 1-2-3 ատրճանակի պայ-  
թոցներ — և գետին էին գլորւած երկու գափթիէ, դռնապաններէց  
մէկը. միւսին յաջողեց փախչել... Երբ ներս մտանք, գլխաւոր  
հոգսերից մէկն էր դուռը գոցել, բայց այդ այնքան հեշտ չէր.  
մարդկանց դիակները, դռան ահագին հաստութիւն ունեցող ջար-  
դած աղակերները արգելք էին լինում. միւս կողմից Բանկի ետե-  
ւր ապրող պահապան սատիկանները... անընդհատ զնդակ էին  
չալում մեզ վրա... Դուռը շուտ մաքրեց... Մեզ պաշարողները  
խոհեմութիւն արին հեռացան ու փողոցի զանազան անկիւններէց  
սկսեցին կրակ անել դէպի պատուհանները... Այժմ տէր էինք  
Բանկին. մեր նպատակի առաջին կէտին հասանք... Երբ անցնում  
էի մի պատուհանի մօտից (դիւրքեր ընտրելու համար), մէկ էլ  
տեսնեմ մեր վիրաւոր ընկեր Սեղբակը մօտեցեր է պատուհանին և  
իբրև ողորմութիւն թշնամու զնդակին էր սպասում... Ամբողջ կէս  
ժամ կախ էր ընկել պատուհանից, բայց ցանկալի զնդակը չկար  
ու չկար... Երևի պաշարողները վրա ուռմբի սարսափը մեծ էր...  
Կամաց-կամաց մահը իրենն առաւ... արիւնաքամ եղած (Սեղբա-  
կը)... սկսեց հանգստանալ (մեռաւ)...

... Բարկէնը վերջինն էր, որ պէտք է Բանկ մտնէր —  
այդպէս էր որոշւած — և նա երկրորդն էր, որ թշնամու զնդա-  
կին զոհ գնաց... Երկու ձեռքն երկու ուռմբ, Մարտինի (ատրճա-  
նակի) զնդակը փորին... նա մի քանի քայլ առաջ է վազել դէպի  
սանդուխը, բայց թուլացած չոքել է ծնկներէ վրա, երկու ձեռքը  
վերև բարձրացրած, մի դուցէ ուռմբերը գետնին կպչին ու պայ-  
թին: Նրա այդ ծունկ չոքելը միջոց է տւել մեր տղերանցը վերև  
վազել ու աղատել մի վայրկեան յետոյ տեղի ունեցող ուռմբերի  
պայթումից, որոնց միակ զոհը ինքը Բարկէն-Սիւնին է լինում...

\* \* \*

Կոիւր պայթեցաւ միաժամանակ Սամաթիայի մէջ: Նոյն  
օգոստոս 14ին: Մեծ պատրաստութիւններ տեսնւած էին այդ բազ-  
մամարդ գիւղին մէջ: Թողունք որ պատմէ ականատես ընկերը.

— «Ռազմական ծրագիր մը կազմւած էր... Մեծ քանակու-  
թեամբ ուռմբեր, 154 կտոր, ամէն տեսակէն, ցրւած էին զանա-  
զան տեղեր... Քանի մը ահարեկիչներ, զինւած լաւ դէնքերով,  
յարձակելու էին տեղական զօրանոցին վրա... Սպանելով զօրքե-  
րէն մի քանիսին, նրանք փախչելու, ապաստանելու էին այն կէ-  
տին վրա, որու շրջակայքի տուններու մէջ նախապէս ամէն տե-  
սակ ռազմամթերքով զինւած արիասիրտ երիտասարդներ, սպա-



առողական դիրքի մէջ մնալու էին, այնպէս որ մեր տերորիստները ... կարող կը լինէին այդ տուներու մէջ ապաստանիլ. մինչդեռ զօրանոցի ամբողջ զօրքերը ոստիկանական ամբոխը... տերորիստները հետապնդելով պիտի հասնէր նոյն կեդրոնի վրա. այդ պահուն մեր դժոխային մեքենաները պատուհաններէն փողոց նետելով, պիտի կոտորէին զօրքերը: Երբ ասդին՝ Սամաթիոյ գլխաւոր գինւորական օյժը կը ջախջախէր, անդին շատ մը ընկերներ եկեղեցին հաւաքելու էին, ուր կամաց-կամաց պիտի կեդրոնանային մնացած բոլոր ուժերը:

Անսպասելի արգելքներ եկան խանդարեցին ծրագրի ոգին: Գիւղին մէջ ոգևորութիւնը զգալի էր, շարժումը՝ շատ: Ծատ մը ընտանիքներ իմանալով կամ կասկածելով, կանուխէն փախած էին Ս. Ստեփանօի կողմերը: Սոյն անխոհեմ քայլը պատճառ եղած էր կառավարութեանը վաղուց ունեցած կասկածը հաստատելու: Անմիջապէս ոստիկանութիւնը սկսաւ ամէն դի շրջիլ փողոցներու մէջ:

Ժամը 2ին ձերբակալութիւն մ'եղաւ Սամաթիոյ մէջ... սեւ սուեր մ'անցաւ փայլուն արեւու վրայէն: Խուզարկութիւններ շատցան: Գիւղը ամբողջովին պաշարման վիճակի մէջ էր. փողոցներու անկիւնները բռնւած էին:

Մեր ընկերները այդ միջոցին (օգ. 14 լուսարացին. Մ.Վ.) հաւաքւած էին Միսաքեաններու տունը. դեռ շատ կանուխ լինելուն, անդամ մ'էս ժողովւած էին միասին, երբ յանկարծ դիրենք պաշարւած տեսան: Գնուները կը փնտրէին, իր տանը տէրը ձերբակալւած էր արդէն... Որքա՛ն զոհողութիւններ եղած էին, ի՞նչ յոյսեր գգւած էին ու դեռ քիչ առաջ կարող էին իրադրոծել իրենց փափաքը... Բայց այժմ... փակւած վանդակին մէջ...

Ժամը 3ը եկած էր: Պաշարողները սկսան բանակցել: Գնուները կը խօսէր նրանց հետ: Կառավարիչին անձնատուր լինել: — «Ժամը 6ին» — կը պատասխանէին մերոնք... Ժամը 6ին սկսելու էր ամբողջ Պոլսոյ դաշնակցականներուն ճակատամարտը... Եղածը եղած էր. պէտք էին շատ սուղ ծախել իրենց կեանքերը...

... Ժամը վեց ու կէսն էր: Յանկարծ ահապիս դղրդումներ լսուի սկսան: Տղերք ուռմբերը կը նետէին:

Ամբողջ դիւղը սարսուռի մէջ էր... կարմիր տերորը սկսած...

Իրարու ետէ ռումբերը այլ և այլ տեղերէ կը նետէին փողոցը, կը կոտորէին զօրքերը... Պաշարողներու կողմանէ անդադար հրացանաձուլութիւն կար տուներու վրա, մասնաւորապէս Միսաքեաններու տանը և մանչերու վարժարանին վրա: Առաջին ռումբը կին մը նետեց թշնամու գլխուն... Օրինակը քաջալերական էր. ընկերները բարոյապէս աւելի ուժովցած, առատօրէն կը գործածէին ռումբերը: Այդ միջոցին փոխադարձ յարձակում մը տեղի ունեցաւ: Մինչդեռ մեր քաջերէն քանի մը հողի զօրանոցի վրա խուժելով, կրակ կրնէին սքահապաններու վրա և խոյս կուտային, անդին զօրքերը, թւով ուժովցած, նոր յարձակում մը կրնէին

մանչերու վարժարանին վրա ու ամօթահար ետ կը մղւէին, շատ զոհեր թողնելով... Ծփոթը և սոսկումը աննկարագրելի էր: Հայեր փախչող փախչողի էին... ատանց ուր վաղելին գիտնալու... Փախչողները շուտով անխուսափելի մահը կը գտնէին: Վատհոգի դիւորներ, որ միայն գիտեն անգլն ժողովուրդը սպանել: Արդէն ամբողջ գիւղը կրակի մէջ էր... Արհաւիրք, սարսափ դժոխացուցած էին Սամաթիան:

Ժամը 12ն էր: Կոխիւր դաղրեցաւ: Մեծ դժուարութեամբ յաջողեցայ վարժարանի մէջ գտնուող ընկերներու հետ բանակցել: Դեռ բնաւ իրենցմէ զոհ չէին տւած: Թշնամին շատ զոհեր տւած էր: Կր խնդրէին, որ փամփուշտ հասցնեմ... Բայց անկարելի էր...

Խորին յուսթիւն մը յաջորդած էր: Երկու կողմանէ ալ պատրաստութիւններ կը տեսնէին: Մերոնք գիրքերը կամբարցնէին... Ժամը 4ին կոխիւր նորէն սկսաւ... Մեր սղերքը պաշարին խնայելու դիտաւորութեամբ... պաշտպանողական գիրք բռնել սկսան... Երկրորդ զաղար. զարձակալ խոր յուսթիւն: Կր կարծէի, թէ ամէն բան վերջացած էր, երբ յանկարծ ժամը 7ի ստանները սոսկալի որոտումներ... Կոխիւր վերսկսած էր. կոխի մը, որ վերջինը եղաւ...

... Թշնամուն օյժը անհամեմատ մեծ էր... Ենթին իրենց կացիններու, որով արդելքները կը խորտակէին... յաջողեցան (վարժարանի) զոհն ներս խուժել և սղերքը փնտրել: Հոն սղանեցին Սողոմոնը, որ արիարար կուտւած էր... Մնացած երկուքը պատուհանէ մը վար ցատկեցին... մէկը յաջողեցաւ հրաշքով ազատիլ, միւսը սպանեցին:

Երբ վարժարանին մէջ սոյն տրամը տեղի կուսնար, Միսաքեաններու տունը սրտաճմրիկ տեսարան մը կը ներկայացնէր: Տղերք հաւաքւած էին. իրարու ջերմ հրաժեշտի համբոյրներ փոխանակել վերջը գործի սկսելով, ունեցած ուժերնին կը հաշուէին: Դեռ զոհ մը չէին տւած: Վեց հողի էին. Գնուները, Սուրէնը, Երկու Միսաքեան եղբայրները, մայրերնին և ինձի անձամբ մէկը... Արդէն բոլորն ալ լմբոնած էին, թէ շատ ապրելու չէին... երդուեցին մաքառիլ մինչև վերջ և յեղափոխականի մը արժանի մահով մեռնիլ...

Սկսաւ հերոսական կոխիւր... Գանկարծ պատերազմական փողերու ձայնը լսեցաւ: Այս ձայնը խառնելով ռումբերու և հրացաններու որոտնդոստ աղմուկին հետ, ահեղ տպաւորութիւն կը ներշնչէին երկչոտին, խանդ ու եռանդ կուտղին...

Լուսարաց էր: Տղերք նոր ողի առած՝ կը շարունակէին կոխիւր, բայց հասած էր ճգնաժամը...

Չօրքերը ամբանալով, յանկարծ կատաղի կերպով յարձակեցան տանը վրա. այս անգամ յաջողեցան զոհները կոտրել և ահա ամբոխը ներխուժեց: Երեք տղերքը կը սպանւին... Սուրէն և Գնուների դեռ կը մաքառին. կը գգան, որ վսեմ վայրկեանը հասեր

է. քանի մը հոգի ալ կուզեն սպաննել... Վերջապէս, ալ դիմադրութիւնը անկարելի լինելով... իրենց ձեռքով վերջ կը դնեն կեանքերնուն...

Մեր ընկերներէն շատերը պատերազմի դաշտին վրա մեռած էին, 18 ժամ կուելէ վերջ»...

\*\*\*

Վերադառնանք Բանկի դէպքերուն: Ի՞նչ կանցնէր-կը դառնար Երլտրզի պալատին մէջ — չենք գիտեր. սպահովաբար սպաւորութիւնը շատ մեծ էր ամենուրեք և երկչոտ բռնաւորը, սահմուկած իր ջթին տակ կատարող այդ ահաւոր գործողութիւններէն՝ գուցէ չէր գիտեր իր ընկիւթը:

Իսկ այդ միջոցին հեռագիրը կը տանէր աշխարհի բոլոր թերթերուն պարունակութիւնը այն Երջարեքականին, որ Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէն դէպքերու սկզբին ուղղոր էր վեց պետութեանց դեսպաններուն\*): —

«Մենք անդուլ բողոքեցինք Եւրոպային թուրք բռնապետութեան դէմ, բայց մեր բողոքները որ օրինական էին, սիստեմաբար մերժուցան:»

Սուլթան Համիտ արիւնահեղ վրէժխնդրութեամբ պատասխանեց մեզ:

Տեսաւ Եւրոպան այս ահուկի ոճիրը և լռեց:

Ոչ միայն դահճի ձեռքը չբռնեց, այլ և մեզ լրբաբար համակերպութեան հարկադրեց:

Մեզ նախատեցին՝ մեր մարդկային իրաւունքը զլանալով մեզ, և մեր ազգային պատիւը ցմահ խոցեցին, մեր արեան մէջ մեր բողոքի ձայնը խեղդել ջանալով:

Մեր արիւնով սրբագործւած մեր պահանջներուն կուգայ հիմա միանալու և սրբազան վրէժի սեւեռուն գաղափարը, որ սեւ ուրականին պէս արձանացած է մեր աչքերուն առջև:

«Իրաւունքը զօրաւորինն է» ըսաւ մեզի Եւրոպան իր մահառիթ անտարբերութեամբ, և մենք, տկարներս, հարկադրւած ենք գիտութեանը դիմելու՝ որոնելով ամէն միջոց, փշրելու համար սուլթանի զարելի լուծը. ալ չենք կրնար հանդուրժել:

Դիւանագիտական խաղերու ժամանակն ա՛լ անցած է:

Մեր հարիւր հազար նահատակներուն թափած արիւնը մեզի իրաւունք կուտայ ազատութիւն պահանջելու:

Մեր թշնամիներուն տարածած բոլոր նենգամիտ գրոյցներուն հակառակ՝ մենք խնդրած ենք և հիմա ալ կը խնդրենք միմիայն անհրաժեշտը, այսինքն՝

- 1. Նշանակել ծագումով և ազգութեամբ եւրոպացի բար-

\*) Տարածւած Ֆրանսերէն, հայերէն և տաճկերէն:

ճրագոյն կոմիտար մը Հայաստանի համար, ընտրւած վեց մեծ պետութիւններու կողմէն:

2. Վալիները, միւթեսարըֆները և գայմազամները պիտի նշանակէ բարձր կոմիտարը և սուլթանը պիտի վաւերացնէ:

3. Եւրոպացի սպաներու հրամանատարութեան ներքև պիտի կազմակերպուի տեղական ազգերէն միլիցիա, ժանտարմա և ոստիկանութիւն... Եւ այլն:

Դիւանագիտութիւնը իրարանցումի մէջ էր և փութաց միջամտել:

Տղաները գրաւեր էին Բանկը օգոստոս 14ի առտւան, կուեր էին ամբողջ օրը և ահա կը վերադառնայ դուրսէն Բանկի փոխտնօրէնը, հետն ունենալով ուսական դեսպանատան առաջին թարգմանը — Մաֆսիմով: Ու կը սկսի երկարատև բանակցութիւն մը:

Մաֆսիմով. — Մինչև երեկոյ դեսպանատունն էի, ձեր Կեդրոնական Կոմիտէին կողմանէ ղրկւած թուղթը եկած չէր, իսկ այն պայմանները, զոր ասկէ կը ներկայացնէք, մասամբ ի նկատի առնւած են. ա) Երկրին մէջ խաղաղութիւն հաստատելու համար միջոցներ ձեռք առնւած են: բ) Ձեր և ձեր ընկերներու վրա յարձակումը դադրած է արդէն: գ) Ձեր ընկերներու համար երկրէն ազատ հեռացումը ապահոված է: Իսկ դ) պայմանին գալով՝ երաշխաւորել Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէի կողմանէ ներկայացուցած պահանջներու զործադրութիւնը, այդ մեզի անկարելի է ըսել: Ես չեմ կարող հոս ձեզի հետ դիպլոմատիական խնդիրներու վրա բանակցել. մենք կը ջանանք համոզել սուլթանը, ինչ որ արդէն կընենք և պիտի ընենք, որ երկրի պահանջներուն զոհացում տայ... Դուք մեկնեցէ՛ք, մինչև հիմակ արիւթիւնն ցոյց տւիք. այսքանը կը բաւէ ձեր խնդիրը նորէն յուղելու. բայց եթէ յամառիք մնալ, պիտի կորսնցնէք այն դատը, զոր կը պաշտպանէք. համակրութեան տեղ՝ ատելութիւն պիտի գտնէք: Կը սպառնաք, թէ հակառակ պարագայի տակ Պանքը օդը պիտի հանէք. ի՞նչ պիտի վաստկէք, 157 անմեղներու մահուան պատճառ լինելով. ամբողջ Եւրոպայի կատաղի հակակրութիւնը, ատելութիւնն ու թըշնամութիւնը պիտի գրաւէք:

Քառորդ ժամ տևեց մեր խորհուրդը: Հակառակ էինք անձնատուր լինելուն... Պէտք էր սպասել և մենք կրնայինք բաւական սպասել, պաշտպանողական դիրք բռնել: Բանակցել սկսաւ Գարօն:

Գարօ. — Պահանջները ներկայացւած են. պիտի սպասենք մինչև վաղը իրիկուն: Մինչև այդ ժամը թղթերը ստացւած կը լինին և ձեր հինգ պաշտօնակիցներն ալ իրենց պատասխանը կուտան...

Մաֆսիմով. — Կաղաչենք, ելէք դուրս: Նաուու վրա աւելի



մանրամասն կը խօսակցինք... Ժամանակը սուղ է, եթէ մնաք մինչև վաղը, թերևս այս գիշեր ջարդերու պատճառ պիտի լինիք. կաղաչեմ, ծնկան կուգամ, կը խնդրեմ, որ շտապէք: Շատ դժուարութեամբ սուլթանէն ձեր հրամանը ստացեր եմ: Վաղը կարող է փոխել այդ հրամանը... Ձեր վրա անազին պատասխանատուութիւն կը ծանրանայ. նոր ջարդերու պատճառ մի՛ լինիք. ձեր հարցով պիտի գրադինք, ձեր այդ քայլը կը բաւէ... Դարձեալ կըսեմ, թէ աւելորդ է ձեր պահանջած գրաւոր երաշխաւորութիւնը: Կարող ենք մինչև իսկ տալ այդպիսի մի թուղթ, բայց այդ երբեք խոստում մը չի լինիր... դանակը սրտին դրած ու խլած խոստում մը՝ իրաւարանական տեսակէտով՝ խոստում չհամարւիր, և մենք ան ատեն խոստումներս չկատարելէ գատ, պիտի ասենք ձեզ. նախ որ ձեր գործածած գէնքը լաւ չէ. կըմբռնեմ ձեր դրութիւնը, բայց ձեր յամառութեամբ դուք կը դռնէք ամբողջ Եւրոպայի ատելութիւնը... Դուք լաւ սկսաք և լաւ վերջացուցէք. քիչ մ'ալ խորհրդակցեցէք և ամբողջ ազգի մը ճակատագիրը աչքերնուդ առջև բերէք»:

Գարօն ալ համաձայն չէր շուտ անձնատուր լինելու, բայց մեր պատճառով ջարդերու տեղիք տալը կը սարսափեցնէր զինքը»...

Ի վերջոյ, տղաները կորոչեն դուրս երթալ: Վայրկեանի հոգեբանական պայմաններուն մէջ գուցէ և դժուար էր ուրիշ ելք գտնել... Հակառակ Մաքսիմովի յորդորին՝ ձգել բոլոր գէնքերը՝ տղերքը պահեցին ատրճանակները, որոչելով, որ եթէ ճամբան յարձակում լինի, ամենէն առաջ Մաքսիմովը պիտի սպանէին: Ռումբերը միայն ձգեցին Բանկի մէջ: Ատրճանակները սրահեցին:

Ու անցան Մաքսիմովի ուղեկցութեամբ քարափին վրա. փողոցին երկայնքով թուրք զինուորները շարւած էին, հրացաններով ու սեփններով:

Նաւը մեկնելէն քիչ առաջ, եկան նաև Փրանսական ու անգլիական դեսպանատանց ներկայացուցիչները, որոնք Մաքսիմովի ըսածը կը կրկնէին մեր ընկերներուն:

Փրանսական «Ժիրոնդ» շոգենաւը տարաւ հայ ապստամբները Մարսէյլ, ուր քանի մը օր անոնք բանտը մնացին Մելին-Հանտոյի տխրահռչակ կառավարութեան կարգադրութեամբ: Ապա ազատ արձակեցան:

\*\*\*

Պոլսոյ դէպքերը, թէպէտ և չկատարուեցան լիովին նախորոշած ծրագրով — և շատ քիչ անգամ ազգերու պատմութեան մէջ դաւադրական մեծ ծրագիրները իրագործւեր են իրենց բոլոր

մանրամասներով — Պոլսոյ դէպքերը, Բանկ Օտտոմանը և Սամաթիայի ապստամբութիւնը ունեցան աննախընթաց շատաշում ոչ միայն թրքական, այլ և արեւմտեան հանրային կարծիքի ու դիւանագիտական աշխարհին մէջ: Թուրք կառավարութիւնը չէր սպասեր, անշուշտ, որ հայկական մեծ ջարդերէն յետոյ, հայ յեղափոխական կազմակերպութիւն մը կարողանար հրապարակ գալ այնքան ուժով, արիւթեամբ ու յանդգնութեամբ — և այն էլ՝ սուլթանանիստ մայրաքաղաքին մէջ, ուր լրտեսական վոհմակները կը խժային օրն ի բուն:

Երլզըղի անարգ հրամանատարը գուցէ երբեք չէր ապրեր այդքան ծանր վայրկեաններ, երբ մայրաքաղաքը կը թնդար դժոխային մեքենաներու սրտէն, երբ բուռ մը յեղափոխականներ, պահակը կոտորելով, զօրք ու ոստիկանութիւն անարեկելով, կը գրաւէին միջազգային դրամական միջնաբերդը, որ կայսրութեան պատւարներէն էր, և անոնց ձեռքը կ'անցնէր այդ մեծ հիմնարկութեան անազին հարստութիւնը, նաև կեանքը հարիւրաւոր պաշտօնականներու, որոնք հայ ըմբոստներու անակնկալ արշաւէն սահմուկած, դողահար կծկւեր էին անկիւններուն մէջ... Իսկ անդին, թաղերուն մէջ, նոյն անձնուրաց խումբերը, որ կը կուէին նոյն դիւական գործիքներով, կը կոտորէին ու կը կոտորէին... Տեսարան մըն էր, որու նմանը ապահովարար օսմանեան փատիշահները երբեք չէին տեսած: Եւ կրկնակ նւաստացում բունաւորին համար, երբ յեղափոխականներու խումբը, թուրք զօրքերու ներկայութեանը, գէնքը ձեռին, ազատօրէն ձգեց մայրաքաղաքը: Դահիճը չէր կարող առանց կակիծի մարսել այդ անհաւատալի հարւածը և, ինչպէս միշտ, վրէժ լուծեց անպաշտպան ժողովուրդին վրա...\*) Կուղէր անտարակոյս, և աւելի մեծ չափերով կրկնել անմեղներու կոտորածը ողջ Հայաստանի մէջ. բայց այս անգամ հարկադրւած էր սանձ դնելու իր ախորժակներուն...

Վասնզի հայ յեղափոխականներու այդ նոր դաւի ու հարւածի տպաւորութիւնը նոյնքան խոր էր և արտաքին աշխարհում, հանրային կարծիքի վրա, քաղաքական շրջաններում: Յուզողը այս անգամ միայն Անգլիան չէր, այլ և անգամ հայ դատին հակառակորդ ու անտարբեր պետութիւնները՝ Ռուսիա, Փրանսա, Գեր-

\*) Թուրք խուժանն էր, որ ալ ու ձախ կը թալանէր ու կը սպանէր. մանաւանդ սակաւահայ թաղերուն մէջ: Մեր Կեդրոնական Կոմիտէին թուրքիկն ու հաւաստիացումները բնաւ, ի հարկէ, ազդեցութիւն չէին ըրեր այդ կոյր ու խաւար ամբոխին վրա...

մանիա, Աւստրիա... Հանրային կարծիքը բուռն կերպով արտայայտեցաւ Պրանսայի մէջ, զոր Հանօտօ-Մեյիին կառավարութիւնը կոյր գործիք ըրեր էր դաշնակից Ռուսաստանի: 1895 թ արեան թափօրներէն յետոյ, այս նոր ջարդը, կատարած մայրաքաղաքի մէջ, նոյն Երլարգի հրամանով, ոտքի հանեց կառավարութեան դէմ Փրանսական հասարակութեան զգայուն տարրերը և նոյն իսկ հարիւրէ աւելի երեսփոխաններ Պորհրդարանի մէջ, ժան ժօնէսի առաջնորդութեամբ: Մաս մը՝ դուռ մարդասիրական նկատումներով, ուրիշները Պրանսայի նիւթական շահերու մտահոգութեամբ, ազդւած Օսմանեան Բանկի ցնցող դրամայէն\*): (Պրանսան մեծագոյն դրամազլուխներն ու շահերն ունէր այդ միջազգային հաստատութեան և ողջ կայսրութեան մէջ):

Ոչ ոք այլ ևս կը տարակուսէր, որ հայ յեղափոխականը իր խորունկ յուսահատութեան մէջ ընդունակ է ամենէն խօլական վճիռներ ընդունելու և կատարելու: Շատեր կը խորհէին, որ Օսմանեան Բանկայի արիւնոտ դրաման տեսակ մը ազդարարութիւն էր, նախերգանքը աւելի անկող գործողութիւններու և այդ օրերուն իսկ յամառօրէն լուր կը պտտէր Պոլսոյ մէջ, թէ հայ դաւադիրները որոշեր են օղը հանել նաեւ մեծ պետութեանց դեսպանատները... Լուրեր՝ որոնք սովորական չափազանցուածութիւններով կանցնէին նաև արեւմտեան մամուլի էջերը...

(Բանկայէն հանւած պայթուցիկ նիւթերը տարան ղրկեցին Թոփհանէին մէջ — հայկական ուղիներու ցուցահանդէս մը սարքեց տաճիկ կառավարութիւնը՝ մահմետական ամբոխի մոլեռանդութիւնը գրգռելու համար...):

Բոլոր դեսպանները մերժեցին տօնել սուլթան Համիտի դաւակալութեան տարեդարձը, մերժեցին հրավառութիւն ընել, ինչպէս ամէն տարի: Թուրք կառավարութիւնն ալ, կարծելով թէ դարձեալ յուզումներ պիտի լինեն, յայտարարեց ժողովուրդին, որ գիշերը երթեկութիւնը դադրի Վոսիորի վրա և ոչ ալ պտոյտ թաղերու մէջ: Ուրիշ տարիներ ամբողջ Պոլիսը կը թնդար ուրախութեան խրախճաններու մէջ...

Ի՞նչ կանցնէր-կը դառնար այդ օրերուն պետութիւններու դիւանագիտական շրջաններուն մէջ, որքա՞ն անկեղծ և ուժեղ էր անոնց ճնշումը սուլթանի վրա՝ դադրեցնելու համար թուրք խու-

\* Պրանսայի տրամադրութիւններու այդ բարեշրջումի մասին դեռ պիտի խօսինք հետագային:

ժանի յարձակումները, ի՞նչ կը խօսէր ոչֆորմներու ծրագրի մասին և այլն — այդ բոլորը մեզի համար մութ կը մնայ բնականաբար: Մէկ բան ակնբեր էր. հայկական խնդիրը լուծելու համար, Անգլիան դարձեալ միս-մինակ էր. հանրային կարծիքը գերազդելու վիճակի մէջ, կը թելադրէր պատերազմի գնով իսկ իրականացնել Հայաստանի բարենորոգումները... Լորդ Սոլսբրի կուգէր քալել, առանց սակայն պատերազմի ռիսքն ընելու... Կը սպաննար առանց խածնելու: Պրանսան, ի դէմս իր կառավարութեան, անտարբեր էր ու չէր ուզեր հակառակիլ իր դաշնակցին: Ռուսաստանը — ըստ առաջնոյն մոլի հակառակորդ հայկական ոչֆորմներու — կը շարունակէր անդամալուծել բոլոր հայանպաստ ճիւղերը:

Արդիւլ Համիտ, սասանւած հայկական շարժման վերջին դրւագէն, բայց տակաւին քաջալերւած ռուսական հովանաւորութեամբ, ձկնց հայոց բարենորոգումները նոյն մեռեալ կէտին վրա: Զհամարձակեցաւ, սակայն, կրկնել 1895ի նախճիրները և այնուհետև դանդաղաբային կոտորած մը տեղի չունեցաւ Հայաստանի մէջ, մինչև Ադանայի ողբերգութիւնը (1909թ.):

Եւ սուր — այս պարագան ևս աւելորդ չէ յիշատակել, իբրև մէկը Կ. Պոլսոյ դղրդալին անցքերու հետեւանքներէն — սուլթան Համիդ փորձ մ'ըրաւ «հաշտելու» հայ յեղափոխական կադմակրպուլիսան հետ և շուտով զրկեց միջնորդ մը ժընեւ՝ «Դաշնակցութեան» Բիւրօին հետ բանակցելու նպատակով:

Այս մասին համառօտակի կը գրուցենք հետագային. այժմ քանի մը խօսք այն մասին՝ թէ ի՞նչ տպաւորութիւն էր ձգեր 1896ի օգոստոսեան այդ ասպտամբութիւնը Եւրոպայի մէջ:

Ամբողջ արևմտեան մամուլը ողողւած էր հեռագիրներով ու յօդւածներով: Բերլինը քանի մը քաղւածքներ միայն.

Վիեննայի «Պրայէ Պրէսսէ» —

«Պուժը մը հայեր, 20-30 հոգի, ատրճանակներով ու ռումբերով զինւած... յանկարծակի ներս խուժեցին... սպանեցին 5-6 հակող պահապանները և տիրեցին Բանկային: Պաշտօնեաներու մէկ մասը փախաւ տանիքներով, մեծ մասը մնաց: Յեղափոխականներէն 3-4 հոգի եւրոպական դիտարկ կը կրէին, միւսները Ֆէսեր: Առաջնորդները այնքան գեղեցիկ կը խօսէին Փրանսերէն, որ կարծես ծագումով Փրանսացի լինէին: Ներս խուժելով, անոնք յայտարարեցին, որ ձեռք չպիտի տան պաշտօնեաններուն, ոչ ալ Բանկայի դրամին, այլ որ մտադիր են ցոյց ընել կառավարութեան

դէմ և եթէ չիրագործւին իրենց պահանջները... օղբ պիտի հանին Բանկան և իրենք ալ պիտի մեռնին»:

Պարիզեան «Թան»ի Պոլսոյ թղթակիցը.—

«Հայկական յեղափոխութիւնը ցոյց տուա զինքը աւելի կազմակերպւած և աւելի վճռողական, քան սկիզբէն կարելի էր կարծել: Յեղափոխականները կաշխատէին տեականացնել սարսափը օր աւուր կրկնուող ձեռնարկներով և անոնց պարզ նպատակն է եղեր՝ սպանել տալ բազմաթիւ եւրոպացիներ, որպէսզի զիւանադիտութիւնը իր բոլոր ուժերով միջամտէ... Հայկական Կոմիտէն կը շարունակէ անյողողղ գործել. նա իր ձեռքն ունի անհաւատալի դրամախան միջոցներ... որ թոյլ կուտայ իրեն՝ շատ աւելի մեծ ծաւալով տանելու գործը»:

«Մորնինգ Պոստ».— Սպանւած հայերու թիւը զեռ յայտնի չէ. բայց յայտնի է, որ 450 թուրք սպաներ և զինուորներ սպանւած են կամ ծանր վիրաւորւած: Բերայի զինուորական հրամանատարը նոյնպէս վիրաւորւած է\*):

«Բերլինէր Տագբլատ».— Յանկարծակի բանկի մէջ ներս խուժողներու թիւը մօտ 30 էր, որոնցմէ 4 հոգի պարազլուիներ էին... Սպանելով պահապանները, ներս մտան, փակեցին դռներն ու պատուհանները, երկաթէ պարազաներով ամրացուցին, սպաս սկսան անցնել բերօժ բիւրօ, յայտնեցին զիրեքտորներուն ու ծառայողներուն, որ հանդիստ մնան... Զօրքը եկաւ. յեղափոխականները սկսան վերէն զնուակներ թափել: Երբ Մաքսիմովին յաջողեց համոզել յեղափոխականները ձգելու Բանկը, անոնք առաջարկեցին ստուգել դրամարկղը: Հաստատուեցաւ, որ ամէն ինչ անձեռնմխելի մնացեր էր: Միայն արծաթով լի քանի մը քսակներ պատուած էին... յեղափոխականներու վերջերս փաթթելու համար:

«Էտուալ Բելթ»ի ակնատես թղթակիցը\*\*\*) հետեւեալը կը գրէր նոյն օրերուն «Հայ հայրենասէրներու ազնուութիւնը» խորագրով իր թղթակցութեան մէջ.

\*) Անգլիական «Կապոյտ Գիրքը» շէշ յետոյ, նման վկայութիւն մը կը բերէր, ըսելով, թէ իրօք հարիւրաւոր թուրքեր են վիրաւորներ մերիներու նետած ուժեղներէն (Դեսպանատանց Դրօզմանները ստուգեր են այդ՝ հրանդանոցներուն մէջ, ուր զետեղւած եղեր են տաճիկ զոհերը):

Նոյն Կապոյտ Գրքին մէջ բերւած է Պոլսոյ Բրիտանական Դեսպանատան հաղորդագրութիւնը, ուղղւած լորդ Սոլսբրիին, որու մէջ զեպսանի տեղապահ Հերբերտ կորակէ Բանկ Օտտոմանի դրամուժը «a most daring outrage» (խիստ յանդուգն բռնափորձ մը) և կ'աւելցնէ.

— It was evident that the coup was well organised.  
(Ակներև էր, որ հարւածը լաւ կազմակերպւած էր):  
Blue Book 1897.

\*\*) Միանգամայն «Ժիրոնդ» նախ առողջապահական բժիշկ:

«Ինչ որ այստեղ կը պատմեմ ձեզ, անհաւատալի պիտի թիւի, և սակայն, ստույգ իրողութիւն է: Յեղափոխականները ներս արշաւեցին յիրաւի և 157 հողի ամէն ազդութեան պատկանող մարդոց փակեցին իրենց հետ, կոպուցին զոները: «Մի՛ վախնաք, գոռաց յաղթողներու պարազլուիսը, ձեզ չպիտի ձեռք տանք, ոչ ձեզ, ոչ ալ ձեր դրամարկղին. չչարժիք ձեր աւելին. մենք ունինք ուժանակ և կրնանք օղբ հանել ձեզ»: (Կրպարե, «ստույգ ոչ պոզ էին, ոչ աւագակ: Բոլոր գերիները ազատեցին իրենց կեանքը և անոնց մէջ՝ երեք փաշաներու զաւակներ ու սուլթանի մէկ քարտուղարը: Մէկ սանթիմ իսկ չէ գողցւած: Սեզանի վրա կար մոռցւած քսակ մը, 10 (30) տաճիկական յիրա և ահագին թուով բանկային տոմսեր: Ինքը յեղափոխականներու առաջնորդը տարաւ անձամբ յանձնեց այդ քսակը տնօրէնին: Եփօթութեան միջոցին գլխաւոր զանձարանը բաց մնացեր էր: Տնօրէնը խնդրեց ստաճնորդէն, որ փակէ: Անմիջապէս կատարուեցաւ խնդիրքը: Այս զիւցազնալէպին ամբողջ պատմութիւնը քանի մը տողով անկարելի է տայ... Փաստ մը միայն կուզեմ արձանագրել. այն՝ որ 17 կտորիներ կատարեալ անձնագոհութեամբ, օրը ցերեկով մայրաքաղաքի կեդրոնին մէջ զրաւեցին օսմանեան կայսրութեան ամենէն կարեւոր հաստատութիւնը, 13 ժամ մնացին այնտեղ, առանց մէկ սանթիմի ձեռք տալու, և ի վերջոյ ձկեցին Բանկը ամենապատուաւոր ու յաղթական ձևով: Եւ ահա այդ երիտասարդ հերոսները, այդ առաքելները մեզի հետ էին վեց օր շարունակ: Մենք ի վիճակի եղանք քննելու, զնահատելու զանոնք: Սպաներ և այլ պաշտօնեաներ՝ ամենքս հիացած ենք, կը պատուենք, կը սիրենք զանոնք»:

\* \* \*

Քիչ մ'ալ մենք խօսինք այդ երիտասարդ հերոսներու և միւս հերոս ընկերներու մասին, որոնք ընկան Կ. Պոլսում, Բանկ Օտտոմանի և Սամաթիոյ կոիւններու ընթացքին:

Եւ ամենէն առաջ մեր հանդէպ կը ծառանայ Բարկէն-Սիւնիի պաշտելի կերպարանքը:

Բարկէն-Սիւնի — բուն անունով՝ Պետրոս Փարիսի:

Գաւառացի չքաւոր ընտանիքէ կ'ըլլած, չքաւոր երիտասարդ մը, հազիւ 23 տարեկան, լի եռանդով, կրտսով ու անփրկապահ անձնագոհութեամբ: Հայ Յեղափոխութիւնն էր մարմնացած: Հոգին էր Պոլսոյ «Բաշակցութեան» մասնաճիւղին: Ակնի Բինկեան գիւղէն էր, հին, ազնուական գերդաստանի մը մարտնչ ցոյքը: Մանուկ հասակէն ձգելով հայրենի տնակը, ծնողական զուգուրանքը ու վերջին մնաս բարոյն ընկելով Եփրատի սիրտկան ակերուն՝ պանդխտեցաւ Պոլիս: Աշակերտեցաւ թաղային վարժարանի մը և վերջապէս 1887ին մտաւ Կեդրոնական Վարժարանը: Միջահասակ

ճրիտասարդ մըն էր, գորեղ, ամուր կազմեած քով, որ չժանգոտեցաւ բնաւ Վոսփորի հեղզ մթնոլորտին մէջ: Մինչև վերջ մնաց լերան կշտին բուսած առոյգ ծաղիկը, որ քամիի ուժեղ հեւքով օրօրւած և ուռճացած է: Օր մը իր տնօրէններէն մէկը օտարական այցելուի մը ներկայացնելով դայն, կըսէր. «ահա հայկական տիպար մը»: Ժուժկալուծիւնն ու չարքաշուծիւնը իր անբաժան ընկերներն էին — կըսէ իր Կեղրոնականի դասընկերը՝ մեր ողբաց-



Բ Ա Բ Կ Է Ն Ս Ի Ի Ն Ի



ՄԻՆՉԷ ԿԱՐՈՊԵՏԵԱՆ, ՊՐՈԻՍԱՑԻ-ԲԱՆԿԻ ՆԱԽԱՑԱՐՁԱԿՆԵՐԷ ՄԻՆ

ցեալ Սարգիս Մինասեանը: «Ապառաժի կոտորի մը վրա կընար իր գլուխը հանդ չեցնել... Դեռ աչակերտ՝ անգուսպ ոտիս մէք ազնականութեան ու զրամատիրութեան, ճշմարիտ ուսմկավարական, — արմատական տիպար մը... Մինչև վերջին րոպէն անարտունջ և անվրդով զործեց իր պաշտած ժողովուրդին փրկութեան համար: Վասնզի ահաւորութեան առջև հոգիի վեհ թափ մը կրնենար, արի և անվհատ: Գործին մարդն էր, գուլ ու դադար չունէր, երբեք: Կրտսններու, ուստիկաններու քթին տակ գէնքի, սուժբերու փոխադրումներ կը կատարէր, հիանալի պաղարիւնութեամբ, մտղի չափ կասկած չհրաւիրելով: Կը սպրդէր տաճկաց խաւերուն մէջ, կը դնէր դանոնք, կը հարցաքննէր: Անձանօթ մը

երբ Բարկէնը տեսնէր այդ վիճակին մէջ, անպատճառ լրտես մը պիտի կարծէր... Ահարեկչական գործողութիւններ վարեց կատարեալ ապահովութեամբ: Գիշեր-ցերեկ կը տքնէր... Դաշնակցութեան արթուն պահակն էր...

Բանկայի գրաւման նախաձեռնութիւնը իրեն կը պատկանէր և ինքն էր յղացեր նմանապէս Պոլիսը վառելու գաղափարը, որ մերժեցաւ, իբր չափազանց անողոք յղացում մը...

\*\*\*

Մտաւորական ու ղեկավար ուժերէն էին և Գնունի, Սուրէն (Արտաշէս Անդրէասեան, նախկին ճեմարանական), Միսաքեան, մանաւանդ առաջինը, որու մասին կըսեն ընկերները, թէ «երբ առիւծացած Գնունին կը մօտենար պատուհանին և ահարկու ձայնով անէծք կը թափէր տաճիկ բոնակալութեան դէմ, պաշարողները սարսափահար անկիւնները կը քաշէին»... Երեք խնկելի գործիչներն ալ իրենց խառնեւածքի, մտքի ու կորովի բաժինը բերին Սամաթիոյ գեղեցիկ ընդվզումին: Պաշարած իրենց վանդակին մէջ, ամբողջ 18 ժամ թուրք բանակի դէմ կանգնեցան, հարիւրաւոր զոհեր խլեցին թշնամիէն և ապա մեռան դիւցազնին վայել մահով... իրենց կեանքերուն վերջ դնելով:



ԱԶԷՆ ԶԱՆ՝ ԲԱԲԿԷՆ-ՍԻԻՆԻ, ԵԳԻՊՏԱՑԻ, ՄԻՍԱԿԵԱՆ, ԱՆՎՐԷԱՍԵԱՆ, ԳՆՈՒՆԻ



IX

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ

Վրիժառու և պատժական.— Գաղափարի յղացումը.— Նիկոլ-Դումանի դերը.— Հատուած մը իր մէկ մամակէն.— Ինչպէ՞ս պատրաստեցաւ արշաւանքը.— Կոիւր մագրիկցիներու դէմ.— Արձագանգներ.— Արշաւանքի փառարանութիւնը գերման հանդէսին մէջ.—

Խանասորը երկրորդ յարձակողական և միանգամայն վրէժ-խնդրական մեծ ակտն էր: 1897թ. օգոստոսի սկիզբները ստացանք «Իրօչակ»ի խմբագրատանը Ատրպատականի մեր Կեդրոնական Կոմիտէի հետեւեալ գրութիւնը.

«Դաշնակցութեան» սուար արշաւանումը... յարձակում գործեց Պանասորի լեռնադաշտի վրա և չորս կողմից սլաշարեց Մագրիկ կոչւած արևնարբու քիւրդ ցեղը: Ֆէդայիների շնչտակի գնդակները գրեթէ բնաջինջ արին այդ թշնամի ցեղը, որի գործն են Աղբակի բոլոր կոտորածները... որը դեռ անցեալ տարի Ս. Բարթողիմէոս վանքի շրջակայքում կոտորեց Աւետիսեանի առաջնորդութեամբ Վանից փախած հարիւրաւոր հայերի խումբը... Կոիւր տեւեց լեռնոտ դիրքերում մինչև ուշ գիշեր... Զոհ տւինք միայն 19 քաջեր»...

Եւ քիչ յետոյ դոքտոր Օհանեանէն\*) ստացանք հետեւեալ երկտողը.

\*) Նորերս վախճանւած մեր անձնէք ընկեր Քրիստափոր Օհանեանը, ատկէ երկու տարի առաջ աւարտելէ յետոյ ժընեւի համալսարանի բժշկական մասնաճիւղը, նետեցաւ յեղափոխական ասպարէզը, Դաշնակցութեան շարքերուն մէջ և մասնակցեցաւ Պանասորի արշաւանքին, որպէս պարզ զինուոր: Անգլիական դործակալները իրենց հեռագիրներուն մէջ անոր շէֆի տիտղոս յատկացուցեր էին ևւ անդամ Կապոյտ Գրէին մէջ արձանագրւած է Պարսկաստանի Անգլիոյ ընդհանուր հիւղատոսի այս հաղորդագրութիւնը. «Հայ արշաւանումը, 300 հոգի, դոկտոր Օհանեանի հրամանատարութեամբ» ևւ այլն:

Նոյն ընդարձակ տեղեկագրին մէջ, ընդհանուր հիւղատոսը ի միջի այլոց հետեւեալը կը գրէ իր բարձր իշխանութեան.

— ...Այդ արշաւանումը, որու յուսահատ սխրագործութիւնը հաղորդեցի ձեզ, կը կազմեն բարեկիրթ ևւ ընդհանրապէս շատ յարգելի շրջաններէ եկած երիտասարդներ: (Blue Book, 1897).

«Նոր վերադարձայ արշաւանքից... Մասնակցեցի իբր հասարակ զինուոր: Մտեցել էինք Շարաֆ-բէյի վրանին մինչև 15 քայլ... Գնդակները կարկտի պէս էին թափուում... Պատերազմից շատ աւար է բերւած: Ես էլ բերի Շարաֆի սուրը ևւ այն սպիտակ աթլասի վրա ոսկետառ Փիրմանը, որ Մարդասպանը (սուլթան Համիդ. Մ. Վ.) տւած էր Շարաֆին՝ քիւրդերից համիտիէ գունդ կազմելու համար»...

Լուր մըն էր, որ սփոփանքի հառաչանք պոկեց մեր սիրտերէն այդ մոռյլ, սրտաճաք օրերուն... Դէպքը առաջին անգամ այսպէս է հեռագրւած անլիլիական դեսպանատնէն Լոնդոն (հիմնւած բրիտանական գործակալներու տւեալներուն վրա), օգոստոս 10ին.

«Յեղափոխականները անցեր են սահմանը երկու գունդով, ամէն մէկը 2000 հոգի: Կոիւր տւեր է 2 օր շարունակ համիտիէ քիւրդերուն հետ: Հետեւեալը յայտնի չէ: Ուրբաթ լուսածաղին յեղափոխականները յարձակւեր են Շէրիֆ բէյի բանակատեղին վրա, Բաշկալէի մօտ, յանկարծակի բերելով դայն ևւ սպանելով ու բարբարոսաբար յօշոտելով այր, կին ու երեխայ: Զօրքը գալով, կոիւր դադրեր է ևւ շարաթ երեկոյ յեղափոխականները քաշւեր են պարսկական հողը:

Թշնամին էր, որ Լոնդոնով լուրեր կը տարածէր մեր ընկերներու «բարբարոս» արարքներու մասին: Յաջորդ հեռագրով Սըր Ֆրիլոյ Բըրրի — 1894—1896 թւականներու նոյն ազնւասիրտ դեսպանը — կը փութայ հերքել այդ շարամիտ դադտասուքը.

«Հայ յեղափոխականներու ձեռքով իբր թէ կատարւած բարբարոսութիւններու լուրերը շեն ստուգելի ևւ ես ինքս սուտ կը գտնեմ այդ, թէ ևւ, տարաբախտ: բար, կասկածելու տեղիք չկայ, որ կին ու երեխաներ ևւ սպանւեր են, երբ բանակատեղին (Շարաֆի) բռնւեր է հրացաններու կրակով... (Blue Book, 1898, էջ 284):

Մանօթ դէմքերէն կը մասնակցէին այդ արշաւանքին՝ Սաքօ, Նիբրեմ, Ուէօ, Կարօ, Բիճա (Դարալաղեայցի Տէր Գրիգորը), Սարղիս Օհանջանեան, Նիկոլ-Դուման, Վարդան, որպէս հրամանատար ևւ իշխան (Աղղութեան), որպէս օգնական հրամանատարի: Բայց այդ յանդուլն ձեռնարկը զլիաւորապէս Դումանի յղացումն էր, անոր վճռական ողիի ևւ տնդաղին աշխատանքներու արդիւնքը: Նիկոլ-Դումանն էր — Պանասորի Բաբկէնը — որ կը գրէր «Դաշնակցութեան» Վարիչ Մարմինն այս տողերը (1896թ. օգոստոս 10 թւակիր):





ՅԱՆԱՍՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ: ԳՐՕՇԻ ԱԶԱԿՈՂՄԸ  
 ԶԱՆԱԿՈՂՄԸ՝ ԻՇԵՆԱՆ ԱՐՂՈՒԹԵԱՆ

կատարել աւելի խոշոր ծաւալով և, ապահովաբար, հայ ժողովուրդի պատուհասներէն մէկը՝ մաղրիկցիներու արինարբու ցեղը իսպառ բնաջինջ պիտի լինէր:

Հակառակութիւնը երթալով սուր կերպարանք կառնէր: Ուստի Բիւրօի կողմէն Յարութիւն Շահրիկեան զնաց 1897ի յուլիսին Սալմաստ՝ տղաները հաշտեցնելու և ձեռնարկը փութացնելու համար: Շահրիկի առաքելութիւնը պսակեցաւ յաջողութեամբ:

Արշաւանքի լուրը տարածելով, ամէն կողմէ խումբ-խումբ կուգան կամաւորներ: Մէկ քանիսը նոյն իսկ բարեկեցիկ դասակարգի գաւաւկներ: Այսպէս՝ Թեհրանէն և Ղազինէն եկան Համբարձում Մելիք-Սարգսեան և Մեսրոպ Տէր-Յակոբեան, երիտասարդ վաճառականներ: Համադանէն Սաղաթել խան — իրենց ծախքով ու գէնքերով, Ղարաբաղէն, ի միջի այլոց, Կօլիա Ասրիբէկեան:

Միաժամանակ վազգէնը (Տիգրան Տէրոյեան) կը մեկնի դէպի Վան, խումբով մը, մօտ 25 հոգի, որոնց մէջ էին Անդրանիկ (այն խտեն դեռ անյայտ կամաւոր) և Գուրգէն: Ասոնք ալ պիտի անցնէին Տարօն:

Երկու էին քահանաները Պանասորի արշաւախումբին մէջ. Տեռ Երիզոր, կովկասցի և Տէր Վարդան, վասպուրականցի:

Հրամանատար, օգնական, հարիւրապետներ, յինապետներ և տնօրէններ: 250 հոգի, որոնցմէ 30 ձիաւոր: Հարիւրապետներ էին Շատախցի Օհանը և Մոկացի Ախպէրը, ունենալով իրենց օգնական՝ Ալաշկերտցի Արամայիսը և Գողթնեցի Կարօն (Ռոստոմի եղբայրը): Ձիաւոր խումբի վարիչն էր Սաքօ, անոր օգնականը Կօլիա Ասրիբէկեան: Եփրեմը — գալոց հրամանատարը պարսից սահմանադրական բանակի — միայն տասնապետ էր Պանասորի լեզէոնին մէջ:

Կար, վերջապէս, և մի թուրք ընկեր, վերամկրտած Սամէլ անունով, և մէկ ասորի, Ենան անունով:

Բերենք այժմ համառօտակի՝ արշաւանքի նկարագրութիւնը, գոր դրկած է Վերօշակիին ինքը հրամանատարի օգնականը, Յովսէփ Արղութեան. —

«Արշաւախումբը կազմ ու պատրաստ է: Ֆէտայիները հրաւիրուած են զինուորի հանդիսաւոր երդումը տալու... Բարձրանում է «Պաշտակցութեան» դրօշը... Ապա խօսում է ընդհանուր հրամանատարը: Կտոր՝ մը անոր ճառէն.

... «Յոյց տանք մեր հասարակութեան թերահաւատ մասին, որ մենք ընդունակ ենք յեղափոխական կռիւր յաջողութեամբ մը ղեկու... Յոյց տանք աշխարհին, որ հայն էլ գիտէ կուրի հայրենիքի ապատութեան համար»...

Ապա խօսում է Նիկոլ Դումանը... հակիրճ ու ոգևորիչ խօսքեր:



ՔՐԻՍՏԱՓՈՐ ՕՂԱՆԵԱՆ, ԱՐՇԱՒԱՆՈՒՄԲԻ ԲԺԻՇԿ-ՖԷՊԱՅԻՆ

«Տղերք, վերջացնում է նա, վեհանձն եղէք դէպի տկարները... ձեռք չտաք կանանց և երեխաներին»... Պօսում են նաև Փէշալի-բժիշկը, Փէշալի-քահանան... Ծափեր և որոտածայն կեցցէներ...

Փոքրիկ բանակը գինւած է Մոսինի հրացաններով: Ամէն մի Փէշալի կրում է 3-4 հատ փամփշտակալ, 230-300 փամփուշտով... 8 օրւան սնունդ, կարևոր դործիքներ, դեղեր և այլն...

Հեծելազունները սլաշտպանում է բանակի թիկունքը: Յիսնեակների առաջին փողփողում են եռագոյն դրօշակներ: Մայրդրօշը, որ ընծայեր էր Ապառաթի Կոմիտէն (Շուշի-Ղարաբաղ), յանձնւած էր Դումանի յիսնեակին. վրան գրւած բանաստեղծի ծանօթ խօսքը. «Ահա եղբայր, ջեզ մի դրօշ, որ իմ ձեռքով գործեցի»... Յուլիս 24ն է, պայծառ ու լուսնկայ գիշեր... Բանակը Արաուլի արեւելեան լանջն է, իսկ... ստորտում փուռղ խանա-

սորի ընդարձակ լեռնադաշտում ընկած են համիտիէ Մազրիկ աշիրէթի 250ի մօտ վրանները: Աչքի են ընկնում երեք հատ սպիտակներ, որ պատկանում են ցեղապետ Շարաֆ բէյին...

... Դժւար է նկարագրել այն սպաւորութիւնը, որ զգացինք այդ բարձրութիւններին հասնելիս: Դժբախտ հայրենիքի սգապատ լեռներն ու դաշտերն էին փուած մեր աչքի առջև: Հեռուն կանգնած են Սիփանն ու Արտոսը, Վարազն ու Առնոսը... Դէպի ձախ՝ կորդւած լեռները... Մեր դիմաց՝ Ս. Բարթուղիմէոսի վանքը դարևոր յիշատակներ է կենդանացնում... Եւ կարծես այդ անդնդախոր ձորերից մի խուլ աղաղակ է գալիս հասնում մեր ականջին. «վրէ՛ժ, վրէ՛ժ» են ձայնում մեր նահատակւած թանկագին ընկերները... Սարսուռ է անցնում բոլորիս մարմնով... և ամենքը յուզումից դողահար՝ դետին ենք փուում սիրոյ և յարգանքի համբոյրը տալու տանջւած մայր-երկրին...

Մօտենում է խորհրդաւոր վայրկեանը. տղերքը մահւան են պատրաստում... Փէշալի-քահանան, մի ձեռքում խաչ, միւսում սուր, սկսում է խօսիլ ձիւ վրայից. «Այսօր, ասում է նա, առաջին անգամը բացւում է ձեր առջև Դաշնակցական խաչը: Նայեցէ՛ք դէպի արեւմուտք. դուք տեսնում էք այնտեղ աւերակ սրբութիւններ, քանդւած քաղաքներ, ամայացած հայրենիք, — բոլորը ողջունում են ձեզ, լի յոյսերով: Դուք քիչ էք թուով հօր ոյժի դէմ. փոյթ չէ. 300 մարդ ունէր նաև Ղարաբաղի մեր Դաւիթ Բէկը, որ 70,000 պարսիկ ու թուրք յաղթեց...»

Քահանայի կրակոտ խօսքերը յափշտակում են մեր հոգիները: Հինգերորդ դարն է կարծես ներկայանում մեր աչքերի առջև, իսկ այդ կատաղի կրօնաւորը Ղևոնդ երէցի դէմքն է յիշեցնում...

Լաւում է յանկարծ, մեր թուրք ընկերով, Սամուէլի ձայնը. — Ընկերներ՛ր, եթէ ես ընկնեմ, յիշեցէ՛ք դոնէ, որ մի թուրք գինւոր ձեզ հետ միացած կուում էր բռնութեան դէմ:

Արեւն արդէն մայր է մտնում: Իջնում ենք դէպի խանասորի դաշտը... Մի ահաւոր գառիվայր, որ ցերեկը նայողի վրա սարսափ է ազդում... Հեռում փայլում են վառ կէտեր: Վրանների կրակն է... Դրանց շուրջն են խմբւած մեր թշնամիները...

Յարձակման ժամը որոշւած էր լուսաբացը: Պառկեցանք հանգստանալու... Բայց ո՞ւմ ջուր կը տանի... Հասնում է ժամը... Մինչև վրանները 100-150 քայլ է միայն... Ահագին բազմութիւնն առաջ է գնում մի մարդու նման, լուռ... ոտքերը յուշիկ փոխելով:





... Առանց զգալի կորուստի, դաշտից բարձունքն ելանք: Չորս թանկագին ընկերներու դիակները միայն թաղել էինք դաշտում: Անկարող լինելով Արաուլի բարձունքում ամրացած գլխաւոր ոյժի վրա յարձակել, թշնամին կատաղաբար ընկնում էր ստորոտում ուշացած Փէդայիների վրա... Մտնում են քարերի ետեւը... Կռիւր տաքանում է. շատ տեղեր մերոնք կուում են 20 քայլից... Օրհասական կռիւներ տեղի ունեցան, և այդտեղ երևան եկաւ իր հոգու ամբողջ մեծութեամբ և անվկանդ քաջութեամբ Կարօն\*), որ իրաւամբ օրւայ հերոսը հանդիսացաւ: Տենդային արագութեամբ շարունակ մի դիրքից միւսն էր վազում... Ի գուր ընկերները ձայն էին տալիս, զգուշացնում...



ԱՐԻՍ. ԶՕՐԵԱՆ (ԿԱՐՕ)

Գրաւել էինք աւելի քան 12 դիրք:

Գիւրդերը... ամբողջ օրը պտտւում էին լեռան շուրջը, բայց չնայելով որ միշտ 300 կամ 400 ձիաւորով էին յարձակւում ամէն մի կէտի վրա... չյաջողեցան մեզ դուրս հանել և ոչ մի դիրքից: Ամէն մի յարձակումի կորուստ ունեցան և ստիպւեցան յետ քաշուի... Մի քանի դիրքերում կատարեալ անդորրութիւն էր... այնտեղ և հանգստանում էին մեր վիրաւորները... Բանակի Ֆէ-

\*) Արիստակէս Զօրեան:

դայի-բժիշկը, թեւերը վեր քաշած, մտել էր իր դերի մէջ, լւանում էր վէրքերը, դեղ դնում ու կապում:

Դեռ չմթնած՝ պատերազմական խորհուրդ գումարեց... Ծարունակե՞լ կռիւր թէ նահանջել... Արշաւանքը հասած էր իր նպատակին: Մագրիկցիները բնաջինջ եղած էին\*): Ֆէդայիների երևումը կայծակի արագութեամբ տարածւելով շրջակայքում, անլուր սարսափ էր ազդել...

Միւս կողմից, մեր բանակի շուրջը հաւաքւել էին մօտ 2000 քիւրդ ձիաւոր, որոնց մէջ կային նաև Բաշկալայի տաճիկ զինւորներ: Եթէ հետեւեալ օրն էլ նոյն տեղը մնայինք՝ կարելի է 10,000 հոգի շրջապատէին մեզ... Բայց մեր փամփուռլտի կէսն արդէն սպառւած էր: Միաձայն որոշեց նահանջել... Իջնելու ճանապարհը արդէն ուսումնասիրած էր յիսնապետ Դումանը:

Կռիւր շարունակեց ամբողջ օրը: Գիւրդերը... իջնում էին ձիերից, քարերի ետեւից փորձում էին բարձրանալ, բայց գնդակահար ցած էին գլորւում... Ընկնում է Ջաւար աղայի եղբայրը իր ութ մարդկանցով, իսկ ինքը Ջաւարը վիրաւորւում է ճակատից և... փախչում...

... Մութն ընկնելուց յետոյ քիւրդերը կուելու սովորութիւն չունին: Կամաց-կամաց յետ են քաշւում... Կռիւր շարունակւում է միայն Կարօի դիրքում: (Նահանջող) վերջին ընկերները ամէն ջանք դործ են դնում՝ նրանց էլ իրենց հետ առնելու (Կարօն և Կրետացիին)... չեն աջողում: Եւ Կարօն... էլ չի վերադառնում (սպանւում է): Կողքին ընկնում է և Կրետացին, որ չի ուզում բաժանւել ընկերից...

\* \* \*

19 քաջեր ընկան հայրենի հողին վրա այդ բուռն կռիւններու ընթացքին: 19 նահատակներ հայոց աշխարհի բոլոր կողմերէն... Թուրքահայ, ուսասահայ, պարսկահայ: Վանեցի, շատախցի, համադանցի, մշեցի, գողթնեցի, դազախեցի, դզլարցի, նոր-բայազետցի, ալեքսանդրապոլցի, թիֆլիզեցի, դարաբաղցի, ախալցխացի, ախալքալաղցի և այլն:

\*) Դէպքի թարմ սպաւորութեան տակ գրւած այս տողերը կը պարունակեն, անշուշտ, չափազանցութեան խոշոր բաժին մը: Մագրիկցիներէն շատերը յաջողեր էին փախուստ տալ:

19ի յիշատակին նւիրեց ողբացեալ Լեւոն Աթաբէկեանը իր այս գգացած երկտողը «Դրօշակ»ի 1897թ. № 11ի մէջ.

Յարգանք ձեզ, սրտի մարդիկ: Ձեր անշնչացած դիակների առջև խոնարհում ենք մեր գլուխները... Մի սիրտ ունէիք, այն էլ զոհ բերիք ժողովրդի ազատութեան Ս. Գործին: Հայ աշխատաւոր դասի մաքուր դաւակնել, ժողովրդի հեծեծանքը ձեր սրտում միայն արձագանգ գտաւ: Դուք գնացիք սրբելու նրա արցունքները և ընկաք: Ընկաք, որ ձեր մատաղ արիւնով ոռոգւած Մայր-Հայրենիքը ծլի ու ծաղկի. մեռաք, որ մի ամբողջ ժողովուրդ ապրի: Յարգանք ձեզ, տղերք ջան:

Յուզիչ տողերով փառաբանեցաւ Խանասորի արշաւանքը Բերլինի «Die Zukunft» նշանաւոր հանդէսին մէջ: Ընդարձակ թղթակցութիւն-յօդւած մը, որ զրկեր էր գերման ճամբորդ մը թուրք-պարսկական սահմանագլխէն և որ ամբողջապէս տպագրւած է «Դրօշակ»ի մէջ, նոյն Լեւոն Աթաբէկեանի թարգմանութեամբ («Հայերու մէկ յաղթութիւնը» խորագրով):

X

## ՏԵՂԱՏԻՈՒԹԻՒՆ

Ռէակցիայի շրջան (1896-1904) — Դիւանագիտութիւնը և Հայկական խնդիրը — Հանրային կարծիքի ընդլզումներ Փրանսայի մէջ — Ժամ Ժօնէս — Իրարանցում ֆրանսական հոսիւրդարանի մէջ և անդրադարձումներ Ռուսաստանում ու Անգլիայում — «Կապույտ Դրփի» մէկ վկայութիւնը — Բեկում Երլղրգի հայաչինջ ընկալի մէջ — Թուրք կառավարութեան դիմումները ժրնելու — Բանակցութիւններ Հ. Յ. Դաշնակցութեան հետ — Քրիստափար ժրնելում — «Պրօ Արմենիա» և հայկական պրոպագանդի նոր շրջան — «Դրօշակ» — Տրամադրութիւնները կովկասի ու Երկրի մէջ — Ընդհանուր յուսալուծում — Վարանումը շարքերուն մէջ — Երկրի կացութիւնը — Դանդաղ մահացումը քալանի ու սպանութեան ռէժիմի տակ — Հայ և օտար վկայութիւններ — Հրօշի տեղեկագիրները — Ինքնապաշտպանութիւնը՝ հրամայական պահանջ — Կոխը՝ ճակատագրական անհրաժեշտութիւն — Ինքնապաշտպան խուլբերը մեծ կոտորածի օրերուն —

Ի՞նչ տւաւ 6-7 տարւան գրեթէ անդուլ պատերազմը Հայ յեղափոխականներու և սուլթանի կառավարութեան միջև:

Մենք պարուած էինք: Բայց թշնամին ալ յաղթական էր: Ապացոյց այն, որ նա հարկ տեսաւ շեղիլ իր յախուտն ու վայրագ ճնշումներու տաշտիկէն և բանակցութեան ճամբան բռնեց: Բանակցութիւն՝ յեղափոխականներուն հետ... առաջին անգամ օսմանեան բռնապետութեան կեանքին մէջ:

Ո՛չ, անշուշտ, Երլղրգը յաղթող չելաւ պատերազմէն: 1896-էն ի վեր — «Մանկ Օտտօման»ի օրերէն — թուրք կառավարութեան դործելակերպին մէջ յառաջ եկաւ նշանակելի բեկում մը: Հայութեան բնաջնջումը կը մնար, անշուշտ, դարձեալ տիրական նշանարանը և քրդական խժղութիւնները կը շարունակէին: Բայց թշնամու ընթացքը դարձաւ նւագ վճռական ու համարձակ, աւելի զգուշաւոր ու շրջահայեաց: Նա երագեր էր 1895ի արեան բաղանիքներուն մէջ շնչահեղձ ընել հայկական շարժումը: Յուսախար եղաւ: 1895էն ի վեր տեղի ունեցան այդ շարժ-

ման ամենէն ցնցող դրւագոյնը: Յեղափոխականներու սերունդը չէր հատնէր: Հայ արիութեան ու անձնագոհութեան աղբիւրը չէր ցամքեր: Անոր իւրաքանչիւր հետագայ ժայթքումը կը յայտնէր աւելի զօրաւոր, աւելի յանդուգն, քան նախորդը: Հայ յեղափոխական շարժումը իրօք դարձեր էր առասպելի հիդրամ, որու իւրաքանչիւր կտրւած գլխուն տեղ նորը կը բուսնէր:

Յուսախարութեան հետ ծայր տուաւ երկիւղը: Երկիւղ՝ որ երբեմն կը զարնէր ահաբեկումի, խուճապի մէջ: Համիդի բոլոր իրագեկ կենսազրոյնները — յոյն, եւրոպացի, կամ ազատական թուրք ու արաբ և այժմ ալ իր առաջին քարտուղարը թահաբին փաշա — միաբերան կը վկայեն, որ նա աներևակայելի սարսափ կը զգար յեղափոխականներու առջև, իր շուրջը միշտ դաւադիրներու, ամէն տեսակ ոսոխներու ուրակահանները կը տեսնէր և անդադար ինքը կը զարնէր — անգամ իր անմիջական շրջապատին մէջ — վախնալով, որ զինքը պիտի զարնէին... «Un despote fou d'épouvante» — այդպէս որակեց Համիդը հայութեան մեծ բարեկամներէն մէկը՝ Անատոլ Ֆրանս... «Բռնակալ մը, որ սարսափէն խելագար եղած է»... Բռնակալ մը՝ որ իր շաքէն կը վախնար: Օրին մէկը «հայ աւագակները» թնդացուցին մայրաքաղաքը իրենց դիւական մեքենաներով, — ուրիշ օր մըն ալ նոյն դժոխային մեքենան կրնար որոտալ Երլզըզի պարիսպներուն տակ... Բանկը գրաւող դաւադիրները ելան դացին, բայց կրնային օր մըն ալ վերադառնալ:

Երկիւղը բնական էր — և եւրոպական անտարբեր ջուրմն ալ կը սկսէր նեղել: Անգամ գերմանացիք, անգամ ռուսները խիստ լեզու կը բանեցնէին Երլզըզի հանդէպ 1896ի օգոստոսին և զսպեցին Համիդեան արտոմակը՝ 95ի նախճիրները կրկնելու: Ամենէն աւելի մտահոգ էր գուցէ Ֆրանսան: Ահագին էին Ֆրանսական կապիտալիզմի շահերը օսմանեան մայրաքաղաքին մէջ, ահագին էին, առաջնակարգ՝ նոյն իսկ «Բանկ Օտտոման»ի մէջ: Հանոտօ-Մելին տխուր գոյգն ալ, ի վերջոյ, փոքր ինչ զգաստացաւ: Դարձեալ, ի հարկէ, Ֆրանսան կը շարունակէր մէկտեղ քալել իր ռուսական դաշնակցին հետ. բայց, անտարակոյս, երբեմն նաև թթու զրոյցներ կուեննար Պետերբուրգի դահիճներուն հետ, երբեմն գուցէ անկախութեան երկչոտ հովեր կը ցուցնէր: Այդպէս կը պահանջէր ոչ միայն Անգլիոյ, Եւրոպայի խոռված հանրային կարծիքը, որ զգանքով կը դիտէր, թէ ինչպէս Դանտոններու հայրենիքը, կուրօրէն հետեւելով բռնապետական իր դաշնակցին,

անուղղակիօրէն դահճի դեր մը կը ստանձնէր հայ փոքրիկ, ազատասէր ժողովուրդին հանդէպ... Այդպէս կը պահանջէր հանրային կարծիքը նոյն իսկ Ֆրանսայի մէջ, ուր բարձրաձայն կը բողոքէին հեղինակաւոր մտաւորական ղեմքերը — բոլոր քաղաքական հոսանքներէն — Ալբեր Վանդալ, կոմս դը Մէօն, Ժան Ժորէս, Դընի Կօչէն և այլն: Բողոք մը, որ այնքան բուռն թափով արտայայտեցաւ նոյնիսկ Ֆրանսական Խորհրդարանին մէջ, 1896ի վերջերուն, Ժօնէսի ընդարձակ ու մտրակող ճառովը, որ ճշմարիտ փոթորիկ մը հանեց պարլամենտական և կառավարական շրջաններուն մէջ: Նախագահը ամէն վայրկեան կընդհատէր ընկերվարական պարագլուխը, անոր ճառին վերաւորական շեշտերուն համար՝ հանդէպ Ֆրանսական և ռուսական դիւանագիտութեան, զոր մեղսակից կը յայտարարէր հակահայ ոճիրներուն: Երբեք կառավարութիւն մը այնքան ուժգնօրէն չէր խարանաւած ազգային խորհրդարանին մէջ թրջանպատ քաղաքականութիւն՝ մը վարելու համար, և մեծ հոետորի այդ փիլիպպեանը յիշատակւած է բրիտանական Պաշտօնազրքին մէջ, որպէս ժամանակի կարեւորագոյն անցքերէն մէկը, որ... ըստ նոյն Կապոյտ Գրքի՝ զօրաւոր ազդեցութիւն ունեցաւ Ֆրանսայի այն ատենուան ստրկամիտ կառավարութեան վրա\*): Երբ, իբրև հետեանք ժորէսեան

\* Մեծանուն ընկերվարականին այդ ճառը լոյս տեսաւ իր Ամբողջիկան Գործին մէջ, (առաջին հատոր), որ պիտի հրատարակի եւրոպական բոլոր մեծ լեզուներով (ժող 20 հատոր): Ժօնէս բեմ ելաւ Խորհրդարանին մէջ հայկական խնդիրն ու հայ ողբերգութիւնը հանդամանօրէն ռուսականներէ յետոյ: Ատկէ առաջ, 1896ի օգոստոսին «Դաշնակցութեան» ներկայացուցիչը Լոնդոնի մէջ (Միջազգային Սոցիալիստական Կոնգրէսին) յանձնէր էր անոր «Իրօշակ» խմբագրութեան տպւած թուացիկը եւ Ժորէսի շարք մը հարցերուն ի պատասխան տեւր էր անոր քանի մը լուսարանութիւններ: Տեսներ էին Ժորէսի հետ եւ ուրիշ հայ գործիչներ: Ֆրանսական սոցիալիզմի պարագլուխը այն օրերէն ի վեր գարձաւ Ֆրանսայի հայանպատ շարժման սիւներէն մէկը, անոր ամենէն հեղինակաւոր ներկայացուցիչը, Պրէսասնէին հետ:

Այդ շարժումը միանդամայն ապարդիւն չանցաւ: Գանդատներ ունի, անշուշտ, հայ վատարախո ժողովուրդը, իրաւացի դանդատներ եւրոպական հասարակութիւններու անտարբերութեան առիթով. սակայն, միւս կողմէն իրողութիւն է եւ այն՝ որ արեւմտեան, մասնաւորապէս Ֆրանսա-բրիտանական կանցալիս կարծիքը, սկիզբէն ի վեր զարնելով Ռուսաստանի անխորտակելի չկամութեան և անգոր լինելով բարենորոգումներու խնդիրը լուծելու, ձգտեր է՝ իր բողոքի ցոյցերով, իր ցատուժի արտայայտութիւններով՝ ազդել կառավարութեան վրա, անգամ ռուս ու թուրք վարիչներու վրա, ձգտեր է եւ ստէպ յաշողեր է՝ — 1896էն ի վեր — սանձ դնել Երլզըզի ջարդարար արտոմանին:



ձառին և անոր յարուցած իրարանցումին, նախարարական դաշ- լիճը վստահութեան խնդիր դրաւ. Սորհրդարանին առջև, -- ստեղ- ծւեցաւ խիստ փափուկ ու դժուարին կացութիւն: Եթէ Սորհրդա- րանը հայկական խնդրոյն վրա սաստիկը դաշլիճը, ատով ծանր ապտակ պիտի հասցնէր նաև դաշնակից Ռուսաստանին, որու առ- ջև յայթիւած Ֆրանսան իտանկ կը ծխէր, որպէս իր հօր պաշտպա- նին՝ ընդդէմ յայթիւոյ ու միշտ սպառնացող Գերմանիայի: (Ֆրան- կո-ոսուս դաշնակցութիւնը կնքուած էր ասկէ ընդամենը վեց տա- րի առաջ):

Ուստի, երևախոսաններու ճնշող մեծամասնութիւնը, այնուամենայնիւ, կատարութեան ի նպաստ ձայն տուաւ: Բայց և այնպէս զանուցաւ արիւ ու աղլու փոքրամասնութիւն մը -- 126 հոգի ընկերաբարականներ և արմատականներ -- որ ծա- փահարեց ժօրէսը, բէարկեց ընդդէմ կատարութեան և այդ- պիտով իր խորունկ հակակրօնըր յայտնեց Ֆրանկո-ոսուս զիւա- նազխութեանը՝ հայթրքական խնդրոյն հանդէպ:

Վեր հանելով այդ իրողութիւնը, «Կապոյտ Գիրքը» կը

բուն և արգելիլ զանուածային կատարածները: Յաջողեալ է այդպիսով մէկ կողմէն պահպանել բաւ կարելոյն հայ ժողովուրդի համբանքը թուրքահայ վիլայէթներում, միւս կողմէն՝ փառ պահել հայկական գաղը Եւրոպայի մէջ, մինչև աւելի բարեկառնէ ժամանակներ... Եւ երբ հասան այդ ժամանակները (1908-1912-13 թուականները), երբ հայ գառի հոլովոյթը յանդեցաւ օսմանեան յեղափոխութեան և ապա ոսուս ու գերման արգիւնաւոր միջամտութեան -- բաղկանեան պատերազմի առեւ -- երբ եւրոպական մարզականները, Վեռսէնկ և Հոֆ, Հայաստան զայցին բարենորոգումներուն զլուխ կանգնելու, -- զեւ կար պատկառելի համբանք մը թուրքահայ վիլայէթներուն մէջ՝ այդ բարեկո- ռոգումներն ընդունելու համար: Այդպէս է, որ, ի շարս այլ ազգակներու, արեւմտեան հանրային կարծիքը -- իթանած մշտապէս Հ.Յ.Դաշնակցութեան կողմէն -- սենցեր է, անտարակոյս, իր բաժին գերը: Այս խնդրին մենք զեւ առիթ կուենեանք անդրադառնալու -- հետադայ անցքերու լուսարանութեան ըն- թացքին: Աշխարհի հանրային կարծիքը անշուտիկի, անկշուտիկի ազգակն է, (Impondérable), որ իր խոշոր գերն է սենցեր ճնշած ազգերու ազատագրու- թեան մէջ: Քրիստափոր իր սովորական հոտաութեամբ զիտցաւ զնահատել այդ ազգակի գերը: Ահա թէ ինչու, համիլեան աւերածներէն յետոյ, բէակցի- այի ու լրտմի օրերուն, Եւրոպա զայտով, նա ձեռնարկեց en grand եւրոպական պրոպագանդին, դարձնելով հայասիրական շարժումը «Դաշնակցութեան» տառը- նակարգ պաշտօններէն մին: Ահա թէ ինչու Քրիստափորի ջանքով կաղմակեր- պութիւնը կեդրոնացուց իր ճիւղերը զլիստարապէս Ֆրանսայի մէջ, որկէ հնարաւոր էր բիշ-շատ ազգէլ նաև Պետերբուրգի հայատեաց բանաւորներուն վրա: (Եւ գրեթէ միեւնոյն ժամանակ ու նոյն նպատակով Մինաս Զերազ փո- խազրեց իր թերթն ու բարոյցութիւնը Լոնդոնէն -- Պարիզ):

վկայէ, որ այնուհետև Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը, Գարրիէլ Հանոտո աւելի ևուանդ ցոյց կուտար հայկական խնդրի մէջ, կը բանակցէր բրիտանական կառավարութեան հետ, կը ցուցնէր ինքզինքը բարենորոգումներու ջերմ պաշտպան, պայմա- նով միայն՝ որ օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը պահ- պանելի, մեկուսացած զործողութիւններ չլինին (ակնարկ Անգլիոյ վրա. Մ. Վ.) և որ ոէֆորմները տարածելին երկրի ամբողջ ազ- դարնակութեան վրա, առանց խտրութեան ցեղի ու կրօնի: Սա- կայն, երբ Լոնդոնի կառավարութիւնը կառաջարկէ Հանոտոին, որ սուլթանի չկամութեան պարագային ճնշողական միջոցներ ի գործ դրելին, Հանոտո կը պատասխանէ.

— Այդ խնդիրն ևւս Ֆրանսական կառավարութիւնը պատ- րաստ է ջննելու, եթէ բոլոր պիտութիւնները անհրաժեշտ դտնեն զայն...

«Ոչ» ըսելու ձև մըն էր... Հանոտո լաւ դիտէր, որ բոլար պետութիւններու համաձայնութիւն չլիտի կայանար, քանի որ Ռուսիան անհրաժեշտ չէր զտնել այդ ճնշողական միջոցները...

Թերևս առաջին անգամը Ֆրանսայի նոյնիսկ պահպանողա- կան վարիչ գէմքերը -- անսնցմէլ չէր, անշուշտ, Հանոտո -- կը հրային, թէ որքան նւաստացուցիչ է իրենց մեծ հայրենիքի պատ- տոյն և աւանդութիւններուն համար բննապետական Ռուսաստանի ընկերութիւնն ու խնամակալութիւնը...

Բայց Ռուսաստանի վարիչներն ալ լաւ կը տեսնէին, թէ որպիսի ցառում ու դարչանք կը յարուցանէր դաշնակից երկրի և սցջ արեւմտեան աշխարհի մէջ իրենց ամառպի բաղաբականու- թիւնը թուրքահայ ժողովուրդի հանդէպ: Որքան այ բիրտ ու հայատեաց ցարբոււ կատարութիւնը, այնուամենայնիւ, կու- դէր և ճիւղ կընէր ժամանակակից քաղաքակիրթ կառավարութեան մը երևոյթը ցուցնելու աշխարհին և «վայելչութեան» սահման- ներու մէջ մնալու: Նա միանգամայն անողայ ու անտարբեր չէր դէպի Արեւմուտքի հանրային կարծիքը... Ահա թէ ինչու 1896էն ի վեր չուրեց այլևս կրկին լորանսիական արիւնստ փորձերը, չու- գեց քաջալերել սուլթանի հայաջինջ քաղաքականութիւնը և carte blanche չուաւ այլևս թուրք դահիճներուն՝ զանուածային նոր ջարդերու համար: Գուցէ վամպիր-իշխանի մահէն յետոյ, անոր

\*) Իշխան Լօրանով բիշ յետոյ, ուղեւորութեան մը ընթացքին, զնացքի մէջ յանկարծամահ եղաւ:

նշանաւոր կարգախօսան ևս — «Հայաստանը առանց Հայերու» — դուրս նետուեցաւ ոռու պետական բառագրքէն, որպէս չափազանց խօսուն ապացոյց մը դիւանագիտական ապուշութեան... Այսպէս թէ այնպէս, սուլթան Համիդ աջնուհետե ասլ ևս չգտաւ իր թիկունքին հօր բարեկամը, գրեթէ դաշնակիցը, որու հովանիին տակ այնքա՛ն դիւրութեամբ նա կատարեց 1895ի հայկական նախճիրները...

Ուշագրաւ են այն քանի մը տեղեկութիւններն ու կարծիքները, որ կը կարդանք եւրոպական մամուլի մէջ 1897ի մեր արշաւանքներու և ուժանակային հարւածներու առթիւ.

Նօրդին կը հեռագրեն Պետերբուրգէն, հոկտ. 13ին. — Մեծ պետութիւնները դիտել տւին սուլթանին, թէ մահմետական ամբողջի կատարելիք ամէն մի մոլեռանդ-խժդժական արարքի համար՝ սուլթանը միայն պատասխանատու պիտի լինի Եւրոպայի առջեւ:

Հաւաստի Գործակալութիւնը հոկտ. 20ին կը հաղորդէ... թէ Կ. Պոլսոյ մէջ կը սպասուի հայ յեղափոխականներու նոր հարւածներուն: Մայրաքաղաքի ոստիկանութիւնը զօրացուցած են և պահնորդներու թիւը կրկնապատուած:

Ստանդարտէն. — Պալատի պաշտօնեաները կը խօսին, թէ հայ կոմիտէները նոր ցոյց մը կը պատրաստեն ամսուն վերջը և այս անգամ Երզրզին դէմ:

Դէյլի Գրանիկ. — Փոքր Ասիայէն եկող ևւրոպայի մը կը հաւաստէ, թէ ամէն բան պատրաստած են նոր կոտորածներ սկսելու համար: Թուրքերը Պոլսէն հրամանի միայն կը սպասեն...

Այդ հրամանը չտրուեցաւ Պոլսէն: Ատոր փոխարէն սուլթանը իր պատուիրակները դրկեց ժընեւ, Հ. Յ. Դաշնակցութեան մօտ: (Իրօք, շարունակեց արդէն սկսած բանակցութիւնները):

\* \* \*

Ինչպէս ալ կամենանք բացատրել սուլթանի այդ քայլը — բանակցութեան մտնելու Դաշնակցութեան հետ — իրողութիւնը ինքնին նշան մըն է, որ աշխարհի ամենէն արիւնոտւտ ինքնակալը կընդունէր հայ մարտական կազմակերպութիւնը, որպէս ոյժ մը, զոր չի կարելի գինաթափ ընել միմիայն բիրտ, ոստիկանական ճնշումներով ու զազանութիւններով:

Սոսկ հետաքրքրութիւնը չէր, որ կը մղէր Դաշնակցութեան

ժընեւի գործիչները ընդունելու սուլթանական պատուիրակը, այլ և այն, որ մենք չուտով, կամայականամայ, հարկադրուած պիտի լինէինք զինադադար ընելու, վասնզի հայկական շարժումը ճշգրնաժամային օրեր կապրէր և յեղափոխական կազմակերպութիւնը աննախանձելի վիճակ մ'ունէր: Ոչ մէկը, ի հարկէ, այդ գործիչներէն չէր հաւատար սուլթանի քայլին անկեղծութեանը, ոչ ոք կը սնուցանէր ոեւէ պատրանք:

Միջնորդը սուլթանի կառավարութեան և Հ. Յ. Դաշնակցութեան միջև հայազգի Արթիմ վաշա Տատեանն էր, որ այն տեսները գրեթէ արտաքին գործոց նախարար էր օսմանեան կայսրութեան: Աւելորդ է ըսել, որ անոր բոլոր առաջադրութիւնները ժընեւի Բիւրօին ծայրէ ի ծայր ներշնչուած կամ պարզապէս թելադրուած էին Համիդէն:

«Բանկ Օտտոման»ի հարւածէն և Մամաթիայի ուժանակային կռիւններէն ետքն էր, որ սուլթանը առաջին անգամը խորհեցաւ պատուիրակութիւն մը գրկել Դաշնակցութեան մօտ: Պատուիրակը՝ Տիրան պէյ Տատեան, Յարութիւն փաշայի որդին, 1896 հոկտեմբեր 28ին ժընեւ եկաւ խնդրելու «Դաշնակցութեանէն», որ դադրեցնէ իր յարձակողական ձեռնարկները Թուրքիոյ մէջ, հաւաստելով, թէ սուլթանը որոշապէս խոստացած է անյապաղ մտցնել իր երկրին մէջ կարևոր բարենորոգումներ: Տիրան պէյի ըսելով, մինչև ինն ամիս բարօրութեան նոր թւական մը պիտի բացէր Թուրքիոյ համար:

«Դրօշակ»ի խմբագրութիւնը պատասխանեց Տիրան պէյին, որ հայ յեղափոխական շարժումը արտասահման գտնւող քանի մը անհատներու սարքած խաղը չէ, այլ բռնակալութեան տակ հեծող ամբողջ ազգի մը յուսահատ վճռականութեան գործը և հետևաբար այդ շարժումը արմատախիլ ընելու միակ ճամբան այդ ժողովուրդի պահանջները պահանջներն էր... և ոչ սին խոստումներով, այլ գործով:

Տիրան պէյի մեկնելէն երեք ամիս յետոյ, 1897 փետրւար 4ին, ժընեւ եկաւ երկրորդ պատուիրակ մը, պ. Վաղինակ Աճէմեան, Տիրան պէյի տւած հաւաստիքները կրկնելու: Կացութիւնը փոխուած չէր, ուստի անոր ալ նոյն պատասխանը տրուեցաւ:

Երրորդ անգամ պատուիրակ մը ճամբայ հանուեցաւ Կ. Պոլսէն, — Յարութիւն փաշայի եղբորորդին, Տրդատ պէյ, որ 1897 հոկտ. 26ին հասաւ ժընեւ՝ նախկին հաւաստիքները նորոգելու:

Ոմբազրութիւնը, կրկնելով իր նախկին պատասխանը, զարմանք յայտնեց, որ թուրք կառավարութիւնը կը համարձակի տակաւին Դաշնակցութենէն խնդրել, որ իր գործունէութիւնը կասեցնէ, մինչդեռ ոչ միայն տարի մը առաջ տրւած խոստումները մոռցւած էին, այլ և հայերուն դէմ հալածանքը չէր դադարէր:

Մեր ընկերներու այս պատասխանը ստանալէն քանի մը շաբաթ ետք՝ Տրդատ պէյ դարձեալ դիմեց մեզի և ծանրանալով բարենորոգումներու մասին Յարութիւն փաշայի սուլթանէն ստացած նոր հաւաստիքներուն կարեորութեան վրա, իր կողմէն առաջարկեց չափաւոր բարենորոգումներու ծրագիր մը մշակել ու յանձնել իրեն, որ կը յուսար Յարութիւն փաշայի միջոցով ընդունիլ և գործադրութեան դնել տալ, գործով ապացուցանելու համար այդ նոր խոստումներու լրջութիւնը:

Ոմբազրութիւնը, ի պատասխան, կը յանձնարարէր սուլթանական պատերազմին, ի միջի այլ վաւերագրերու՝ Դաշնակցութեան ծրագիրը և Պոլսոյ Կեդր. Կոմիտէի Յայտարարագիրը 1896ի օգոստոսեան դէպքերու առիթով:

«Դրօշակ»ի խմբագրութիւնը բանակցութիւններու մասին հարցրկեց երկրի ու դեռի բոլոր կոմիտէներուն և բոլորը միաձայն պատասխանեցին, որ սուլթանի ըրած դիմումները և տւած խոստումները զուրկ են կարեւորութենէ: 1898ի Ընդհանուր Ժողովն այ նոյն որոշումն ընդունեց. — հաւատ չընծայել Երլըզլի խոստումներուն և խղել բանակցութիւնները:

Իսկ սուլթանի պատերազմը ամբողջ ութ ամիս նստած էր ժրնեւում և շարունակ Արթին փաշայէն նամակներ կառնէր — մեզի կարողալու համար — նամակներ՝ որոնք կը ծանուցէին սուլթանական նորանոր «չնորհներու» մասին և յոյս կը յայտնէին, որ հեռոյսեալ Արտիւլ-Համիդ խոշոր բարիքներ պիտի հասցնէր հայ ժողովուրդին:

«Դաշնակցութեան» Ընդհանուր Ժողովը չուցեց անպայման մերժումով պատասխանել Համիտին, և — ապագային պէս-պէս առարկութիւններէ խուսափելու համար — որոշեց դարձեալ գիջում մ'ընել, և վերջին առաջարկ մ'ուղղել թուրք կառավարութեանը, Յարութիւն փաշայի միջոցով: Որովհետեւ Երլըզլը կուղէր անվերջ շարունակել բանակցութիւնները — Եւրոպայի աչքին թոյլ լիջելու նպատակով — Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը յայտարարեց Յարութիւն փաշային, որ պատրաստ է վերսկսել

պաշտօնական բանակցութիւնները թուրք կառավարութեան հետ, ու եռամսեայ պայմանաժամ կուտայ անոր, առաջարկելով այդ երեք ամսեան մէջ իրագործել հետեւեալ երեք կէտերը, իբր գրական մը Դաշնակցութեան մօտ ըրած իր դիմումներուն անկեղծութեանը:

ա. — Թուրքիայէն ելած բոլոր հայ զաղթականներուն արտօնութիւն և ապահովութիւն տրւի վերադառնալու իրենց հայրենիքը:

բ. — Զարդերու և դաղթականութեան միջոցին թուրքերու և քիւրդերու կողմէն իւրացւած հայոց անշարժ գոյքերը վերագարձելն իրենց օրինական տէրերուն:

գ. — Քաղաքական յանցանքով բանտարկւած բոլոր հայերն ազատ արձակելն:

Այդ միջոցին լուր հասաւ Սլաթի մէջ տեղի ունեցած սարսափներու մասին: Ուստի Կազմակերպութիւնը հարկ դատեց չորրորդ պայման մըն ալ աւելցնել:

դ. — Օրէնքի բոլոր խստութիւնով պատժելն Սլաթի և Բաղէշի սարսափներուն հեղինակները և վնասուող բոլոր գիւղերը հատուցում ստանան:

Ոստապահանջ էր յեղափոխական մարմինը: Շահ տ էին դրւած պայմանները: Թող անարդ թշնամին դէթ անտոյմէ մէկը իրագործէր...

Սուլթանը չընդունեց, ի հարկէ, Դաշնակցութեան այդ որոշումները. թելադրեց Յարութիւն փաշային ձիգ թափել, որպէսզի Կազմակերպութիւնը յետ վերցնէ զայն և անոր փոխարէն խմբագրէ կարճ գրութիւն մը, ուր վստահութիւն յայտնէ սուլթանի «բարեացակամութեան» վրա, «փափաքի» ձեռով և որպէս թէ «Դաշնակցութեան» բոլոր ուղած-չուլածը այդ չորս կէտերը միայն կը ներկայացնէ...

Երլըզլը չափը կանցրնէր... Լաւ կը զգար այլ, անտարակոյս, և Յարութիւն փաշան, որ այնուհետեւ արդէն անձամբ, ուղղակի կը գրէր «պատկառելի Դաշնակցութեան» խմբագրութեանը, կաղաչէր, որ «լաւ նկատողութեան» առնէին իր ըսածները, «բանդի, կրակ, վեհ. Սուլթանը այլ և այլ առիթներով, քէ ինձ և քէ Կ. Պատրիարքին յայտնած է իւր բարի տրամադրութիւններն առ հայ ազգն»...

1898ի դեկտեմբերի վերջերը Տրդատ պէյ արդէն հրաման ստացած էր Պոլիս վերադառնալու: Մեկնելէն առաջ խնդրեց ամիս

մը ևս երկարել եռամսեայ պայմանաժամը, որպէսզի ինքը միջոց ունենար ուր որ անկ է հասկցնելու, որ «Դաշնակցութիւնը» անդառնալիորէն որոշած է չչարունակել բանակցութիւնները: Այդ առաջարկն ևս ընդունեցաւ: Այդ պայմանաժամն ևս լրացաւ, առանց ոեւէ արդիւնքի: Այն ժամանակ (1899թ. 4/16 մարտ) ծանօթագրով մը յայտարարեցաւ Յարութիւն փաշային, որ խզած են պաշտօնական յարաբերութիւնները Դաշնակցութեան և թուրք կառավարութեան պատւիրակներուն միջև:

Թուրք քաղաքական բարքերուն քիչ-չատ ծանօթ իւրաքանչիւր մէկը կը հասկնայ, անշուշտ, որ այս ամբողջ պատմութիւնը թշնամու կողմէն նենգամիտ խաղ մըն էր: Եթէ Արտիւլ Համիտ իրօք կը փափագէր իր հայ հպատակներուն հետ հաշտութեամբ մը ունէ խնդիր կարգադրել—բնաւ պէտք չունէր այդ բանակցութիւններն սկսելու նւաստացումին ենթարկելու գինքը: Հին աղւէսը կուզէր մէկ քարով երկու թռչուն որսալ. յեղափոխական բռնկումներու սպառնալիքը հեռացնել և մէկ ալ բերանը գոցել արեւմտեան ազգերուն, որոնք կը շարունակէին ոէֆորմներու գործադրութիւնը պահանջել:

Յարաբերութիւնները խզեցան 1899ի մարտին: Իսկ քիչ յետոյ Լահէի մէջ պիտի գումարուէր Խաղաղութեան Համաժողովը: Թէև սուլթանը ապահոված էին, որ ներքին խնդիրներ չպիտի յուզին այնտեղ, բայց միշտ վախ ունէր: Ահա թէ ինչու նոր ու ապարդիւն փորձեր ըրաւ վերսկսելու յարաբերութիւնները «Դրօշակ»ի խմբագրութեան հետ: Եւ նոր խարդախութիւն մը բանեցուց: Վիեննայի «Կորեսպոնդենց Բլատտ»ի Պոլսոյ թղթակցին միջոցով հեռագիր հեռագրի վրա քաշել տուաւ եւրոպական թերթերուն՝ աւետելու համար, թէ այդ բանակցութիւնները յաջող վախճան մը ունեցած էին և հայկական խնդիրը ինքնին լուծուելու վրա էր: Առաջին հեռագիրը, 1899 մայիս 1ին այսպէս կը ծանուցանէր.

— Ժրնելի կոմիտէի երեք անդամները Պոլիս ժամանած են կառավարութեան հետ վիճաբանելու, հայոց վիճակը բարելաւելու համար ձեռք առնելիք միջոցներու մասին: Խորհրդակցութիւնները սկսուած են Արթին փաշա պէյին հետ: Լուր կը պտտի, թէ հայ պատւիրակները յանձնառու եղած են, որ Կոմիտէն հանդարտ պահելու ջանան:

Տաս օր յետոյ, նոյն թուրքական աղբիւրէն և նոյն օրգանի

միջոցով, երկրորդ և աւելի եղջիւրաւոր սուտ մը հրապարակ նետեցաւ:

Աւելորդ է ըսել, որ «Դրօշակ»ի խմբագրութիւնը փութաց պէտք եղած հերքումները հրատարակել եւրոպական պարկեշտ մամուլին մէջ<sup>\*)</sup>: Գերմանական «Ֆրանկֆուրտեր Յայտունդ»ը, մէկը արեւմտեան մեծազոյն օրգաններէն, որ ազնւագոյն կեցածքն ունեցաւ հայկական շարժման ամբողջ տեւողութեան ընթացքին և միշտ կը տպէր «Դրօշակ»ի հեռագիրներն ու անգամ թղթակցութիւնները, իր մայիս 12ի թւին մէջ (1899թ.) հրատարակեց ի լուր աշխարհի «Դաշնակցութեան» երկար ու վճռական հերքում-հեռագիրը, ի պատասխան թուրք կառավարութեան տարածած առասպելներուն, — հեռագիր մը՝ որ կը վերջանար այս բառերով.

— «Ատոնք նենգութիւններն են միայն Երլդըզին, որ Լահէի Խորհրդաժողովի նախօրեակին կը ճգնի մոլորեցնել Եւրոպայի հանրային կարծիքը<sup>\*\*)</sup>...»

Այսպէս վերջացաւ «բանակցութիւններու» կատակերգութիւնը: Որոշ օգուտ մ'ունեցաւ, բանալով աչքերը այն բոլոր մարդոց — հայ թէ եւրոպացի — որոնք միամտութիւնն ունէին կարծելու, թէ հայ յեղափոխականները մոլեռանդ ու ամբարիշտ տաքզլուխներ են, որ կուզեն արիւն թափել լոկ արւեստի սիրոյն համար... Եթէ Արթին փաշաներուն և Օրմանեան պատրիարքներուն ներքի էր մնալ իրենց «Համոզումներուն» մէջ — Համոզումներ՝ հիմնւած դիրքի և շահու վրա — սրտցաւ հայրենասէրներուն ժամանակ էր հասկնալու, որ դահճի և իր գոհին միջև կարող է միայն մէկ յարաբերութիւն լինիլ — կռիւր...

<sup>\*)</sup> Կար եւ անպարկեշտ մամուլը, որ մեծ դեր խաղաց հայկական ողբերգութեան ընթացքին, ստանալով առատօրէն թշնամու սոսկիները եւ ծառայելով անոր շահերուն...

<sup>\*\*)</sup> Խորհրդաժողովի օրերուն, երբ Մինաս Չերազն ալ Լահէյ երթալով, յիշատակազիր մը ներկայացուց ժողովի նախագահին եւ ազմուկ յարոյց հայկական խնդրի շուրջ, սուլթանի կառավարութիւնը Օրմանեան Գառիբաբէի միջոցով հեռագրել տուաւ եւրոպական թերթերուն, թէ Չերազ հայութեան ներկայացուցչի հանգամանք մը չունի եւ թէ թուրքահայ ժողովուրդը զոհ է իր վիճակէն:





«ԳՐՈՇԱՆԻ շուրջ համախմբում ուս.-ընկ. և համակիրներ (նկ. 1895թ.-ժրմեն) : Փետինն նստածները, ճախեն աջ՝ Գ. Բախաբերեան, օր. Լ. Մատինեան, Թուսում, օր. Մ. Աբրահամեան (հետ. տ. Արմեն-Փարո) : Երկրորդ շարք, ճախեն աջ՝ օր. Ա. Աբաբեկեան, օր. Մ. Կրկունյան (Խոնք. Ա. Մելիքեան, հետ. կամուր), Ա. Գանջեցեան, Վ. Տոսունյանց (հետ. պրոֆեսոր), Ա. Շիրեանց, օր. Բ. Շահնազարեան (հետ. տ. Թուսում Զորեան), օր. Մ. Խանդավրեան (հետ. տ. Վարամբեան) : Վերջ, 3 հոգի ենչակիսաններ : Անոնցմէ դեպի աջ կանգնածները՝ Ա. Աբաբեկեան, Գ. Խամակ, Վարամբեան :

Եւ կռիւը շարունակեցաւ, որպէս անողոք, ճակատագրական անհրաժեշտութիւն : Ըսինք արդէն, ոչակցիայի շրջան մըն էր, յուսախարութիւնն ու լքումը մեծ էր շարքերուն մէջ : Թըշնամու հարւածները չափազանց ծանր էին : Եւ նոյնքան ծանր ու վհատեցուցիչ էր դիւանագիտութեան բռնած դիրքը... Ուրիշ ելք չկար, սակայն... Կը խորհէին, անշուշտ, շարունակելու կողմնակից մեր մտաւորական և մարտական ուժերը — Քրիստափոր մը, Հրայր մը, Արամեան մը, Սերոբ մը, — որ այդ անյոյս կացութիւնը յաւիտենորէն չպիտի տուէր, որ քաղաքական կացութեան մէջ ևս կրնան վաղ թէ ուշ փոփոխութիւններ կատարել ի նպաստ հայոց, որ ուրիշ ազգեր ևս — ամենէն առաջ Յունաստանը — ունեցեր են իրենց երկարատե ազատագրական պատերազմի ընթացքին, նման տաղնապի ու աղէտի շրջաններ, ամբողջ տասնեակ տարիներ լքած աշխարհէն, պետութիւններէն...

1898ի Ընդհանուր Ժողովի կարևորագոյն որոշումներէն մէկն եղաւ՝ ոյժ տալ արտասահմանեան պրոպագանդին, ստեղծել Արեւմուտքում հայասիրական ծաւալուն շարժում մը, քաղաքական շրջաններուն վրա ազդելու համար — և այդ նպատակով ճամբեց Քրիստափորը՝ Ժընև : Հարկ էր միանգամայն ուժեղացնել Կուսակցութեան պաշտօնաթերթը, ոյժ տալ յեղափոխական գրականութեան և խտացնել գաղափարային շարքերը՝ թէ արևմտեան գաղութներու և թէ ուսանող երիտասարդութեան մէջ :

Ինչպէս և սպասելի էր, այդ բոլոր մարզերուն մէջ Քրիստափոր ունեցաւ փայլուն յաջողութիւն և լիովին արդարացուց իրեն վրա դրած յոյսերը : «Դաշնակցութեան» պարագլուխը, որ կարճ ժամանակ պիտի մնար արտասահմանում — երկու ու կէս տարի միայն — ծաւալեց արտակարգ եռանդ և այլազան ու բեղուն գործունէութիւն մը, զոր չպիտի կրնանք մանրամասնորէն ցուցադրել այստեղ : Ամենէն առաջ «Դրօշակ»ը դրաւ իր պատշաճ բարձրութեան վրա, նոր աշխատակիցներ բերելով, որոնցմէ կարևորագոյններն էին Ակնունի և Ահարոնեան : Մնայուն աշխատակիցներէն էր 1896էն ի վեր Ա. Վաւանեան\*), Պոլսոյ նախկին

\*) Վաւանեանի եւ շարք մը ուրիշ յեղափոխական դէմքերու մասին — որոնք այդ դէպքերէն յետոյ դեռ ապրեցան ու դործեցին ամբողջ տասնեակ տարիներ — քիչ-չատ մանրամասնորէն պիտի խօսուի, հարկաւ, ներկայ աշխատութեան երկրորդ հատորին մէջ :



Կեղերոնական Կոմիտէի անդամներէն, որ 96ի օգոստոսեան կռիւներէն յետոյ անցեր էր ժընեւ (1899ի սկիզբներուն մեկնեցաւ Ամերիկա, ուր երկար տարիներ վարեց «Հայրենիք»ի խմբագրութիւնը) :

«Դրօշակ»ի ծաւալը մեծցաւ և նոր տարր մը մտաւ անոր պարունակութեան մէջ — Ակնունիի երկար յօդածաշարքը «Կովկասեան խարրիկներ» վերնագրով՝ բողոք ընդդէմ Ռուսաստանի հակահայ բռնութիւններու, թարգման նոյն ընդհանուր ու խո-



ԱԿՆՈՒՆԻ (ԽԱՉԱՏՈՒՐ ՄԱԼՈՒՄԵԱՆ)

րունկ ցատումի, որ կը զգար հայութիւնը Լորանովներու և Գալիցիներու ոճիրներուն հանդէպ: Ուրիշ ուշագրաւ նորութիւն մըն էին Ղարիբ-Ահարոնեանի լացացնող ու մտրակող պատկերները: Վերջապէս, ինքը, Քրիստափորը կը բերէր իր հեղինակաւոր աշխատակցութեան բաժինը, տալով իր կողմ խմբագրականները, տպելով իր ընդարձակ և իմաստալից յօդածաշարքը «Ամբոխային Տրամարանութիւնը» խորագրով, որ կողջած էր համատարած ոէակցիայի դէմ մաքառելու, գէթ մասամբ լքումի մղձաւանջը փարատելու և հայութեան ընկճւած տրամադրութիւնները բարձրացնելու:

Երբորդ կարևոր նորութիւն մը «Դրօշակ»ի մէջ: Քրիստափորի թելադրութեամբ, խմբագրութիւնը կոչ ըրաւ եւրոպացի

ամէն կարգի հեղինակաւոր դէմքերու, խնդրելով, որ իրենց կարծիքները տան հայկական շարժման մասին և իրենց ձայնը բարձրացնեն ընդդէմ համիտեան բարբարոսութիւններուն: Եւ երկար ամիսներու ընթացքին «Իանակցութեան» պաշտօնաթերթը կը հրատարակէր այդ անւանի եւրոպացիներու սրտապնդող նամակներն ու հրահանգները — Պրեսանսէի, Ֆալոնի, Պիէռ Քիլեառի, Իւրբեն Դոհիէի, Չիպրիանիի, Գարիբալդիի և ուրիշներու:

Ահա թէ ինչպէս կը վերջացնէր մեզի ուղղած իր նամակը գօրավար Բիչիոտտի Գարիբալդի, աշխարհահռչակ հերոսին գաւազը:

— «Հայերը, ինչպէս և միւս ժողովուրդները, որոնք այսօր թուրք բռնապետութեան լուծը կը կրեն, եթէ կուզեն ազատագրուիլ, պէտք է որ արդարութեան ու մարդկայնութեան այդ գործը պահանջեն ղէնքը ձեռին: Այս կերպով միայն կարելի է ստիպել եւրոպական զիւանազիտութիւնը՝ ունկնդրելու թշուառ ժողովուրդներու ձայնին:

«Այդ մտքով ես և իմ բարեկամներս տրամադրութեանը տակ ենք հայ վատարախտ ժողովուրդին, որու հետ է մեր բոլոր համակրանքը»...

Ապա Քրիստափոր ուղղեց իր պրպտող նայւածքը դէպի Պարիզ: Իր ընկերներու միջոցով շօշափեց տրամադրութիւնները պարիզեան միջավայրում, ապա ինքն անձամբ գնաց այնտեղ և երկար բանակցութիւններէ յետոյ հիմնեցաւ Փրասահայ ծանօթ թերթը — Պրօ Արմենիա: Խոշոր անուններ դարդարեցին անոր ճակատը — Ժորէս, Պրեսանսէ, Կլեմանսօ, Անատոլ Ֆրանս: Խմբագրապետ — Պիեռ Քիլեառ: Թերթը պիտի հանդիսանար ոչ միայն իրրե տեղեկատու աղբիւր և հայկական դատի արծարծող, — նա պիտի դառնար կենդանի օճախ մը, որու շուրջը հետզհետէ պիտի համախմբէին Ֆրանսայի ու բոլոր երկիրներու հայասէրները՝ ընդհանուր ճիգերով յառաջ տանելու Հայաստանի ազատագրութեան դատը: Շարժման գործնական աշխատանքները վարելու համար (միթիկներ սարքելու և այլն) Քրիստափոր հրաւիրեց Պետերբուրգէն բժիշկ Լօրիս-Մելիքովը, չին դաշնակցական, որ տարաւ իր դուտ տեքնիկ աշխատանքը զովելի եռանդով ու հմտութեամբ: Փորձեցինք անգլիերէն ևս հրատարակել նոյնանուն թերթ Լոնդոնի մէջ, սակայն, միջոցներու պակասութիւնը արգելք եղաւ և անգլիերէն լեզուով լոյս տեսան 1-2 թիւ միայն:

Հայանպաստ շարժումը կեղրոնացաւ գլխաւորապէս Ֆրան-



սայի մէջ և հետզհետէ աւելի ու աւելի ծաւալեցաւ: «Պրօ Արմենիա» անունով մասնաճիւղեր հաստատեցան շարք մը ուրիշ երկիրներու մէջ ալ: Եւ տեղի ունեցան պարբերաբար ժողովրդական բազմամարդ միթիւններ ու ցոյցեր — Ժօռէսի, Պրեսսանսէի, Դընի Կոչենի, Սանբայի, Դիլտուրնել դը Կոնստանի և բազմաթիւ ուրիշներու մասնակցութեամբ — ցոյցեր՝ որոնց նմանը գուցէ չէր տեսած ոչ մի ուրիշ ազատագրող ժողովուրդ ի նպաստ իր դատին: Պարբերաբար կատարեցան նաև հարցապնդումներ հայոց հարցին շուրջ Փրանսական, անգլիական, երբեմն նաև իտալական, ռեյլիական, հոլլանդական խորհրդարաններուն մէջ: «Պրօ Արմենիա»ի Կոմիտէն կազմակերպեց նաև միջազգային կոնգրէս Բրիւսելի մէջ (1903թ. Յուլիս), որ տեւեց երկու օր և որուն ներկայ էին Պարիզէն՝ գործօն մասնակցութեամբ՝ Ժօռէս, Պրեսսանսէ, Բիլևաու և տիկին Սեվրին:

Տեղը չէ երկարօրէն նկարագրելու «Պրօ Արմենիա»ի յարուցած այդ մեծ շարժումը, որու գլխաւոր նպատակներէն մէկն էր՝ ազդել Փրանսական դիւանագիտութեան վրա, ստիպել, որ նա ըստ կարելոյն անկախ դիրք բռնէ դաշնակից Ռուսաստանէն՝ հայոց հարցին մէջ: Եւ այդ ճիգերը ապարդիւն չանցան, ինչպէս կը տեսնենք հետագային, մանաւանդ, Սասնոյ երկարատև ճգնաժամի օրերուն:

\*\*\*

Ռէակցիան պաշարեր էր հայութեան — նաև կովկասահայութեան — բոլոր խաւերը: Թրքահայ շարժումը 1896-97ի օրերէն ի վեր՝ երկար ժամանակ չունէր այլ ևս նախկին թովանքը: Պաղեր էին անգամ ժողովրդական ինտելիգենցիայի (մտաւորականութեան) շարքերը, որոնք սնուցեր ու զօրացուցեր էին Կազմակերպութիւնը 1890 թւականէն ի վեր և որոնց ծոցէն ելեր էին այնքան անձնագոհ գործիչներ ու նահատակներ: Ազատագրական քարոզչութիւնը գրեթէ ամենուրեք սկիսկալիներու, թերահաւատներու խուլ ականջներուն միայն կը հանդիպէր...

Թերահաւատութիւնն ու վարանումը — ինչո՞ւ թաղցնել — ծայր տւին նաև կուտղներու շարքերուն մէջ: Եօթ-ութ տարի անդուլ, տենդային աշխատանք, պրկւած շղեր, գերմարդկային ճիգեր և գրեթէ շարունակական յուսախարութիւն: Զախորդութիւնները, աղէտները, միջազգային դիւանագիտութեան և մանաւանդ ռուսական քաղաքականութեան դժոխային խաղերը մղձա-

ւանջի պէս ծանրացած էին բոլոր սրտերուն ու մտքերուն վրա...

Անխուսափելի էր տեղատուութիւնը և սակայն, ժամանակաւոր էր: Եթէ անգամ Կազմակերպութիւնը — ենթադրենք վայրկեան մը — որոշէր վերջ տալ պայքարին, հարիւր հազար նահատակներու դաւակները պիտի բարձրացնէին լքած դրօշը:

Ուժերու վերադնահատում մը կատարեցաւ, անշուշտ: Ցաւով ու ցասումով արձանագրեցաւ այն արտասուելի իրողութիւնը՝ որ ստէպ միջոցներն են պակսեր հայ կուտղ բանակին՝ պէտք եղած թափն ու ծաւալը հաղորդելու գործին: Հայ ունևոր դասակարգը քար անտարբերութիւն ցուցաբերեց շարժման ամբողջ ընթացքին... Ատոր դարմանումի մասին ալ խորհեցաւ... 1898ի Ընդհանուր Ժողովի մէջ խօսեցաւ արդէն բռնի միջոցներով ունևորներէն դրամ առնելու մասին: Ծատեր հակառակեցան: Ի վերջոյ, սակայն, Կազմակերպութիւնը պիտի հարկադրէր այդ արիւնաբոյր դաղափարն ևս որդեգրելու, այդ վտանգաւոր փորձերն ևս մտցնելու հայկական իրականութեան մէջ, — փորձեր, որ ճիշտ նոյն ատեններուն յաջողութեամբ կը կատարէին մեզի բախտակից — ապա և գործակից — մակեդոնացի յեղափոխականները...

Հաշուիլ դարհուրելի կացութեան հետ այնքա՞ն զոհաբերութիւններէն և կորուստներէն յետոյ — անհնարին էր հոգեբանօրէն, անհնարին էր և փաստօրէն: Ո՞վ էր այլ ևս, որ կը տարակուսէր թուրք բռնապետութեան հիմնական ծրագրի մասին — վերջ տալ հայկական դատին, բնաջինջ ընելով հայ ժողովուրդը... Եւ այդ ծրագիրը կը գործադրէր մեթոդիկ կերպով: Եւ հրոսակները անդուլ, անվերջ կը թալանէին ու կը սպանէին: Զանգուածային մեծ ջարդերուն յաջորդեր էր դանդաղ մահացումը...

Դեռ կանդուն էին թրքահայ բմբոստ մտաւորականութեան շարք մը խոշոր զէմբեր — Հրայր, Վահան, Վազգէն, Վարդգէս և այլն — որոնք կը գարնէին ահալուչնակը արեան ու արցունքի հովիտներէն, կ'աղաղակէին, թէ ժողովուրդը կը փճանայ, կը հալի, կը կորուի ամսէ ամիս, օրէցօր, կը հալի հրէշաւոր տուրքերէն, կոռ ու բէլեարէն, յարածուն ճնշումներէն, քիւրդի, թուրքի, պաշտօնեաներու և ամէն տեսակ տղրուկներու սանձարձակ հարստահարութիւններէն: Արիւն, արցունք կը հոսի Հրայրի անվերջ տեղեկագիրներէն, որ կը տպէին «Դրօշակ»ի մէջ: Հայրը սակայն, յեղափոխական էր: Բայց նոյն արեան հոտը կը բուրէ հայ բարեպաշտ եկեղեցականներու, դաւառական համեստ, օրացաւ հովիւներու տեղեկագիրներէն, ուղղւած հայոց Պատրիար-

քին: Ահա մէկը այդ վաւերագիրներէն, որ ժամանակին մեր ընկերներու ձեռքն է անցեր հեղինակի կամքով: Ընդարձակ և խղճմիտ հետազոտութիւն մը Բարկէն վարդապետի — այսօր Կաթողիկոս — որ և ատոր համար ձերբակալուեցաւ ու Պոլիս տարուեցաւ: Չենք կարող չրերել հոս գէթ քանի մը հատուած այդ գարհուրելի եղեռնապատումէն, որ կը պատկերացնէ հարազատօրէն թուրքահայաստանի վիճակը 90ական և 900ական թւականներուն:

Պիթլիսի կուսակալութեան Մուշի գաւառը — այսպէս կը սկսի Բարկէն վարդապետ — ... ղեղձումներու, անհանդուրժելի կեղեքումներու և սոսկալի ոճիրներու թատր եղած է: Այս շարիքները կը գործէին յանապա՛ն ձեւերով և դրութիւն մը դարձած են հայ տարրը փնացնելու համար:

Թուրք և քիւրդ աղաներ, վերջին քանի մը տարիներուն մէջ ձեռնարկած են հայ գիւղերու տիրանալու և դանոնք գրաւելու... Չնչին գումարի փոխարէն արտերը գրաւ կառնեն և յետոյ կիւրացնեն և գիւղացիներն այսպէս մերկացնելով կենթարկեն դանոնք իրենց ծառայութեանց:

«Աղնամի տուրքը» (անասնատուրք) հաւաքելու համար, ոստիկանէ և զինուորէ բաղկացած 20-25 հոգինոց խումբեր, ձիաւոր գիւղերը կը պտտին, իրենց ու ձիերուն ուտեստը գիւղացիներէն կը խլեն... տուրքերու և պարտքերու փոխարէն գրաւած ոչխարներու թիւը, ստանց ղեղչելու, նախորդ տարւայ հաշուով կը գանձեն աղնամը:

Բռնի և առհարկի խալամութիւն ընդունողներուն թիւը կը բազմապատկի հետզհետէ. գեղանի կիներ և աղջիկներ կառնանգուին, կը ընտրաբարին և իրենց պարագաները սրէ անցնելու սպառնալօք՝ դատարան կը տարւին, ուր իրենց բերնէն յայտարարութիւն կը կորզուի կրօնափոխութեան: (Տեղեկագրին հեղինակը կը յիշատակէ արևմտա փաստեր: Մ. Վ.):

Բրդաց կողմէ հայոց վրա գործ դրած հարստահարութիւնք արդէն հոչակեալ իրողութիւններ են և սակայն վերջին տարիներս կազմակերպեալ վիճակ մը ստացան... Չմնաց բնաւ հայաբնակ գիւղ մը, ուր խալամներ չգետեղուին: Ասոնց առաջին գործն եղաւ հայոց արտերը, տունները գրաւել... զի այս մասին ունին ամէն գիւրութիւն ու միջոց... Աղաները, անոնց արքանեակքն ու սպասաւորները իրենց բոլոր սլէտքերը բռնութեամբ կը ստանան... դիմադրողք կը սպաննին: Հայերը տարապարհակ աշխատութեամբ կը վարեն աղաներուն արտերը, կը քաղեն խոտերն ու հունձքերն: Հունձքերը հասնելուն՝ քիւրդերը կ'իյնան հայոց արտերը, հացահատիկի խուրձերը կը յափշտակեն, կը տանին... Հարստահարութիւնէ զատ՝ հեծեալ, հետեակ հրոսախմբեր կազմած են, դաշտերն ու լեռները յայտնի և աներկիւղ կ'ասպատակեն, կարաւաններ, անցորդներ կը կողոպտեն, ոչխարներ ու արջառններ

կը յափշտակեն... Աւարի տւած են Յրոնք և Աւաղաղբիւր գիւղերը և Ս. Աղբերիկ, Մ. Մատնավանք և Առաքելոց վանքերը... Այս տարի ալ Ջրաղանք գիւղը բնաջինջ եղաւ... Բոլոր բնակիչներն, որք 30-35 տնւոր կը հաշուէին, ջարդուկոտոր սպանուեցան... (1900թ. յուլիս)

Նոյն պատկերը կուտան հայ երկրի կացութեան մասին և անգլիական աղբիւրները. 1897-98-99 թւականներու «Կապոյտ Գրքերը» լեցուն են թալանի ու ասպատակութիւններու պատմութիւններով: Բիթլիսի փոխ-հիւպատոսը կը հաղորդէ դեսպան Քըրրիին, որ իր աչքով տեսած է, թէ ինչպէս տասնեակ ժանտարմներ կը մնան տասնեակ օրերով հայ գիւղերու մէջ և ծեծելով կառնեն գիւղացիներէն անոնց ուժերէն վեր տուրքերը, ստիպելով ծախել ունեցածը:

Ուշագրաւ են Վանայ անգլիական գործակալի (Մէճըր Ուիլիամ) զեկուցումները նոյն անգլիական դեսպանին.

Եթէ մէկ հատիկ քիւրդ առաջնորդ — կըսէ նա — կառավարութիւնը բերէ ու Վանի բանտը նետէ, կացութիւնը կը լաւանայ...

Ես վախ չունիմ, կըսէ, նոր ջարդերէ, բայց և կաւելցնէ, որ գործնականի մէջ այդ ձևով մեռնելը (հարստահարութիւնով, սովամահով) ժողովուրդի մը համար աւելի վատթար է, քան սրով մեռնելը... Մէճըր Ուիլիամը կը գ.՝ ուսուցի:

«Death by starvation is worse than death by the sword»...

Եւ խղճմիտ գործակալը, խորհելով որ կրնան գինջը մեղադրել չափազանցութեան մէջ, կը յաւելու.—

«Անհնա'րին է ինձի չափազանցել այդ վտանգը և սարսափելի բան է նստիլ այստեղ ու տեսնիլ իրերու այս ընթացքը, երբ լաւ գիտեմ, թէ որքան գիւրին կը լինէր այս քիւրդերէ խելքի բերելը:

Blue Book, 1898 էջ 26-27

Դժուար է բերել աւելի սլերճախօս, աւելի զօրաւոր վկայութիւններ՝ իրօք դժոխային կացութեան մասին: Աւելորդ է քաղածքներ բերել մեր Հրայրի, Արամեանի, Վահանի (Տողրամաճեան) և այլոց նամակներէն ու տեղեկագիրներէն:

Ահա թէ ինչու վարանումը կարճատե եղաւ յեղափոխական շարքերու մէջ: Անհնարին էր այնքան զոհողութիւններէն յետոյ քաշել հրապարակէ, թոյլ տալ, որ թաղու հայկական դատը մի



անգամ ընդմիջտ, ձգել ժողովուրդը ի սաստ բախտի, չտալ անոր ձեռքը գէթ քանի մը միջոցներ՝ ինքզինքը պաշտպանելու յաւիտենական հրոսակներուն դէմ: Չէ՛նք և ուղղամթե՛րք... Իսկ այդ պահանջը շողկապած էր գինատար խումբերու գործունէութեան հետ... Դարձեալ, ուրեմն, «յեղափոխական» գործունէութիւն... Թշնամու աչքին: Չէ՞, տարրական ինքնապաշտպանութիւնն ալ ապստամբութիւն ու ոճիր էր Թուրքիոյ մէջ... Կախարդական շրջագիծ մը... Ուրիշ ելք չկար:

Բոլոր թւած պատճառներուն հետ, յիշենք դարձեալ ծանրակշիռ մէկ պարագայ, որ կը մղէր երկրի ու դրսի մեր շարքերը՝ յարատեւելու «յեղափոխական», աւելի ճիշտ՝ ինքնապաշտպանողական գործունէութեան մէջ:

Եւ դարձեալ օտար մըն է — իրագեկ անգլիացի հիւպատոս մը — որ կարճանազրէ այս իրողութիւնը:

Հիւպատոս Գրէյվ հետեւեալը կը տեղեկագրէ Պոլսոյ անգլիական դեսպանին (Էրզրումէն, 1897թ. ապրիլ 12ին).

— 1895ի հոկտեմբերին (մեծ կոտորածի ատեն), երբ թուրք ու լազ հրոսախումբերը հեղեղեցին ողջ Էրզրումի դաշտը, թալանելով և կոտորելով, — անոնք կր փախչէին այն բոլոր տեղերէն, ուր կենթադրէին, թէ հայեր գիւնած են:

Եւ նոյն հիւպատոսը կը վկայէ, թէ ատոր շնորհիւ մէկ քանի գիւղեր բոլորովին ազատ մնացեր են ջարդէ ու թալանէ: (Blue Book, 1898թ., էջ 149):

Անգամ Էրզրումի մէջ, ուր տաճիկ ազգաբնակիւթիւնը թուով շատ աւելի էր, քան հայը, 1895ի կոտորածի ատեն մահմետական խումբանը մեծ զգուշութեամբ կը մօտենար հայերուն. այդպէս կը վկայէ ականատես Ռոստոմը, որ «Դրօշակ»ի հետաքրքրական մէկ տեսութեան մէջ պարզեր էր «մահմետական ամբոխի դերը» («Դրօշակ», 1896 № 5 և 6): Քաղենք Ռոստոմի բառերով.

— «Բացի Էրզրումի թուրք ժողովուրդէն՝ դրսից հաւաքել էին ամէն տեսակ գիշատիչներ՝ լազեր, չերքեզներ, թարաքամաներ, քրդեր... Թուով մօտ 20,000: Այդ ահագին բազմութիւնը խոնւած էր Կարնոյ փողոցներում, անցնելու տեղ չկար: Բայց և այնպէս հարկաւոր էր 3000ից աւել լաւ դիւնած զինուորներ, որ համարձակէին հայերի վրա յարձակում գործել: Կոտորածի ժամանակ բաւական էր մի ատրճանակի ձայն՝ այդ «ահուելի» ամբոխը ցիր ու ցան անելու համար: Հայերի կողմից ամենաթեթեւ դիմադրութիւնը ընդհատում էր մահմետական ամբոխի յաղ-

թական ընթացքը: Այդ ժամանակ օգնութեան էին հասնում մարտինի հրացաններով զինւած զինուորները և ամբոխի համար ճանապարհ բաց անում...  
... «Բարերը հայերը կազմում են տեղական մահմետական ազգաբնակչութեան 10րդ մասը: Չնայելով դրան, այնտեղ կուտակւած են եղել և անթիւ քանակութեամբ լազեր, բայց կոտորածը չի սկսել, մինչև Երզնկայից զօրք չի եկել...  
«Բարերդի շրջակայ գիւղերը բոլորովին զոհ գնացին խումբանի վայրագութեան, որովհետև անդէն էին, անպաշտպան... Լուսհանք գիւղում... դաշնակցական հրոսակային խմբի անդամներից մէկը, հրացանը ձեռքին կարողանում է պաշտպանել հարիւրաւոր ամբոխի դէմ մի տուն, լիքը հարսներով ու աղջիկներով»:

Ուրիշ յօդւածի մը մէջ («Դրօշակ» 1896 № 6) Ռոստոմ կը յիշատակէ բազմաթիւ այլ նման դէպքեր և կեղբակացնէ.

— «Այնտեղ, ուր Դաշնակցութիւնը դէնք էր բաժանել, ուր գինավարժ մարդիկ էր պատրաստել կամ հայրուկային խմբեր էր սահել, այնտեղ ժողովուրդը կամ անվնաս է մնացել (մեծ կոտորածի ատեն: Մ. Վ.) կամ թէ համեմատաբար շատ քիչ է վնասուել... Հայ ժողովուրդը զոհ է գնացել, որովհետև զուրկ է եղել ինքնապաշտպանութեան միջոցներից»:

Ռոստոմի խօսքը այն ընդարձակ գաւառական վայրերու մասին է, ուր զօրք ու թնդանօթ չէին հասեր և ուր ջարդ ու թալանը կը մղէին թուրք ու քիւրդ խումբանը:

Վան քաղաքի մէջ երկար ժամանակ կոտորած չեղաւ, վասն զի հեռաւորութեան պատճառով բաւականաչափ զօրք չկար, իսկ խումբաները չէին համարձակեր մօտենալ, գիտնալով որ ներսը կան ինքնապաշտպանութեան զինւած խումբեր: Անգամ երբ զօրքը եկաւ թնդանօթներով, հայոց ինքնապաշտպանութիւնը այնքան զօրաւոր էր, որ Վանը ելաւ համիտեան մեծ խորշակէն համեմատաբար չնչին զոհերով:

Այս բոլոր ծանրակշիռ իրողութիւնները չէին կարող չազդել Կազմակերպութեան մտածելակերպին վրա և անոնք ուժով շեշտեցան դեռ 1896ին գումարւած Դաշնակցութեան Շրջանային Ժողովին մէջ\*):

1896ի վերջերն էր, որ գումարւեցաւ այդ ժողովը — Բանկ

\*) Իր ժամանակին կոչւեցաւ Ընդհանուր Ժողով եւ այդպէս ալ արձանագրւեցաւ այն ատենւան վաւերագիրներուն մէջ: Սակայն, լրիւ ներկայացուցչութիւն մը չէր, ուստի հետագային «Երնդհանուր» բառը վերացուեցաւ: Աւելի՛ Շրջանային Ժողով մըն էր:

Օտտոմանի և Սամաթիայի դէպքերէն յետոյ: Թէև Մայիսեան ծրագիրը վիժած էր արդէն, բայց հայկական ոէֆօրմներու մասին կը խօսէր տակաւին Եւրոպայի մէջ և դեռ յոյսերը չէին մարեր հայոց աշխարհում:

Արձանագրութիւնը կը վկայէ, որ երկարօրէն ծեծւեր են այդտեղ բոլոր հրատապ խնդիրները և մանաւանդ գործունէութեան տակտիկի խնդիրը:

Ոմանք առջարկեցին կեդրոնացնել մեր գործունէութիւնը միայն եւրոպական Թուրքիոյ մէջ, իսկ բուն երկրում զբաղել միայն խաղաղ պատրաստութեամբ, սպասելով հայոց հարցի դիւանագիտական լուծման: Եւս դէմ լուծուաւ ճշդ մեծամասնութեան անտարկելի ու վճռական ձայնը, որ էր.

— Անկարելի է ձգել երկրի ժողովուրդը իր ճակատադրին եւ անհարին է երկար տարինը զրաւելի խաղաղ պատրաստութեամբ, առանց թշնամիէն նկատելու: Ժողովուրդը զենք կը պահանջէ ինքիցը պաշտպանելու եւ մենք չենք կարող չկատարել այդ պահանջը, եւս առաւել, որ այնքան պերճաբոս իրողութիւններ կը վկայեն ինքնապաշտպան խումբերու փրկարար դերը կոտորածի տեսն, որու սպանալիքը շարունակ կախած է ժողովուրդի գլխուն...

Այդ գիտակցութեամբ և նոյն իմաստով խօսեր ու որոշումներ է ընդուններ նաև 1898ի Ընդհանուր Ժողովը:

\*\*\*

Այդպէս ուրեմն կացութեան վերջնահատումը, ուժերու յարաբերութեան մանրադնին վերաքննութիւնը սահմանէն անգին ու ասդին՝ անկարող եղան հիմնական փոփոխութիւն բերելու Կաղմակերպութեան տաքտիկին մէջ: Երկրի գործունէութիւնը, ինքնապաշտպանութիւնը դարձեալ կը մնար մեր շարքերու առաջնակարգ հոգը:

Ձէնքի ներմուծումը, ուրեմն և զինակիր խումբերը, երկտասարդութեան զինավարժութիւնը և այլն մնացին առօրեայ ատիպողական պահանջ, ինչպէս առաջ:

Նոր արդէն անցեր էին Սերորի, Հրայրի, Գուրբախի, Արամեանի, Խնուցի Աւագի սուար խումբերը (չուրջ 120 հոգի) և ապահով տեղաւորւեր էին Բասենի ու Մուշ-Տարօնի շրջաններում: Թուրքական սահմանն անցնելէ յետոյ (Դալիբարայի գծին վրա), Սերոր ընդհարում մ'ունեցաւ և ժամու մը չափ կուելէ ետք՝ անցաւ Խնուս, ընտիր խումբով մը, բաղկացած միայն խլաթցիներէ:

### ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ ԵՒ ՏԵՐՐՕՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՖԵՂԱՅԻՆԵՐԸ ՏԱՐՕՆՈՅ ՄԷՁ

Աւանդ մը ուրիշ ապստամբ ժողովուրդներէն.— Հայդուկ և անարեկիչ.— Տերթոյր «Դաշնակցութեան» պատմութեան մէջ.— Հրոնախումբերու կոչումը.— Զինատար, մարզիչ և քարազիչ.— Չախոյոյրիւններ.— Միջավայրի արգելիքներ.— Խմբապետներ եւ առաքեալներ.— Ֆեղայիներու ժամադրավայրը՝ Սասուն.— Սերորի դիւցազնավէպը.— Հէֆեսթայի կոններ և եղբրական վախճան.— Անդրանիկ.— Ամմեռ լեզւանը.— Լոյսեր և սուերներ.— Ֆեղայիները խաղաղ օրերուն.— Կարգապահութիւնն ու կուսակցութեան պաշտամունքը.— Հայ դաւանանքներու մէջ.— Աշիրեսթա-Զգայացունց դրագ մը Սասնոյ անտառներուն մէջ.— Աշիրեսթապետ Խալիլի գլխատումը մերիներու ձեռքով.— Սփոփանքի հանաչանքներ.— Ուրիշ հեֆեսթայի թոյլ մը.— Առաքելոց վանքի կոչը.— Ռուզմիկներու կեդրոնացում Սասնոյ մէջ.— Վահան Մանուէլեան՝ կուսակցութեան լիագոր.— Երկպառակութիւններ շարքերուն մէջ.— Վահանի հաշտարար ընթացքը.— Հրայր, Վահան, Վարդգէս.— Նման համոզումներ և նման տակտիք.— Ինքնապաշտպանութիւն և երկարատև պատրաստութիւն.— Դերվիշ-Առաքեալի արտակարգ հմայքը.—

Ընդարձակ տեղ կը բռնէ այդ երկու ձևի գործունէութիւնը Կաղմակերպութեան կեանքի մէջ: Թերթիցէք «Դրօշակ»ը սկիզբէն ի վեր և կը տեսնէք զրեթէ իւրաքանչիւր թիւին մէջ ամբողջ էջեր ներկած հայդուկային անցուղարձին, զինատար խումբերուն, արչաւանքներուն և տերրորական աքտերուն:

Տերթորական (ահարեկչական) գործողութիւններ՝ որոնք, աւագ, խիստ յաճախ ուղղւեր են ներքին, հայ ոստիաններուն դէմ — մատնիչներուն, ուխտադրուժ լրտեսներուն և ամէն կարգի դաւաճաններուն: Ստէյլ հայդուկ և տերթորիստ նոյնանիչ են: Երկար տարիներ հայ ազատագրական շարժումը կ'ամփոփւէր այդ



Միակ ելքն էր: Գիւղի մէջ թերևս կրնային պատասպարել, ցերեկը քնանալ և գիշերը շարունակել ճամբան:

Եւ վալադներու ուղեկցութեամբ խումբը կուղղւի դէպի գիւղ: Մութին մէջ խարխափելով, կը մօտենան խարխուլ հողակոյտի մը: Մէկը շտապով կը բանայ դուռը: Գիւղի վարժապետն է, Պաշիկը, — մէկը մեր հարիւրաւոր գաղափարական վարժապետներէն, որոնք իրենց ուսերուն վրա կրեր են հայ ազատագրական շարժումը:

— Բարի էք եկեր, եղբայրներ, — կը շնջայ տանտէրը: Տղաք կը համբուրեն վարժապետին հետ, կը տարածւին դետնի վրա ու կը քնանան: Գուրսը կը հսկէ Պաշիկ վարժապետը:

Քանի մը ժամ յետոյ — ահագանդ: Հայ կին մը վազելով դրան շէմքին կը գուժէ. «Թշնամին կուգայ, պատրաստ եղէք»... Ու կը հեռանայ:

Տղաները վեր կը թռչին, խմբապետը հակիրճ քարոզ կուղղէ անոնց և կը պատրաստեն թշնամուն դիմաւորելու: Շուտով երևացին սակեարները և հնչեց կուռի ազդարար՝ տանկական զինւորական փողը: Կտուրն ի վայր 300-400 հրացան որոտաց: Գիւղը շրջապատուած էր:

Ճեղայինները դուրս նետեցան իրենց թագստոցէն և բուն կերպով գրոհ տւին թշնամու առաջին դիրքերուն վրա: Թուրքերը կը կուէին խոտի, աթարի դէգերէն, կտուրներու, աղբակոյտներու վրայէն: Մերինները որոշեր էին ճամբայ բանալ դէպի մօտակայ բլուրը, խլել մէկ առ մէկ թշնամու դիրքերը, սեփական արեան գնով... Եւ կը կուռին կատաղաբար, խմբապետի ու տասնապետներու հրամաններուն տակ, կը զարնեն ու կը զարնւին խօլական իրարանցումի մը մէջ, դիրքէ դիրք անցնելով. առաջին վայրկեաններուն իսկ բնաջինջ ըրին գիւղի տէրը, Դարվիշ աղան իր ընտանիքով, երկու եղբայր, երկու կուռղ զաւակներ. Թշնամին, թուով գերազանց, տեղի կուտար այդ մոլեգնած ուղեկիներու առջև, որոնք աներկիւղ յառաջ կը նետէին, արտակարգ ոգևորութեամբ ու վրէժխնդրութեամբ... Եւ շուտով մեր փոքրիկ վաշտէն չորս տասնեակներ թշնամու շղթան կտրելով դուրս ելան գիւղէն ու գրաւեցին դիմացի բլուրը: Պոլմբի միւս կէսը դեռ կը կուէր գիւղին մէջ:

Չօրքը, սակայն, բռնած էր մեզմէ աւելի բարձր դիրքեր, մեր բլուրէն մօտ 1000 քայլ տարածութեան վրա: Բայց երկար

ատեն չեն համարձակեր մերոնց մօտենալ: Ընդհատ-ընդհատ կը շարունակէր հրացանաձուլութիւնը մինչև երեկոյ: Ժամը վեցին, երբ մութը կոխեր էր արդէն, յանկարծ, սալաւաթ կոչելով, թուրքերը գրոհ տւին մերոնց դէմ: Եւ այնքան մօտեցան, որ այլ ևս հրացանով կուռիլը անհնարին էր: Տղաները ապաւինեցան իրենց մատուցեր ատրճանակներուն, որոնք առատ հունձ կընէին թշնամու շարքերուն մէջ:

Վայրկեանը զարհուրելի էր. ցնո՛րք էր այլ ևս ապրելու յոյսը: Ու յանկարծ կը հնչէ ազատարար փողի ձայնը. «պառկեցէ՛ք», — կը հրամայէ խմբապետը: Շուրջ քառասուն տղաներ կը տարածւին դետնի վրա ու կը շարունակեն կրակել ատրճանակներէն: Մերոնք այժմ, խաւարին մէջ, գիտէին, որ կանգնածները թուրքեր են: Իսկ թուրքերը չհասկցան ուղեկիտական այդ խաղը. մութին ու շարումին մէջ, անոնք զիրար թշնամի կարծելով, սկսան կրակել իրարու վրա և փոխադարձաբար կոտորել... Մերիններն ալ պառկած տեղերէն պակասը լրացուցին իրենց մատուցերներով: Թշնամու առաջին շարքերը հնձեցան: — Յետինները, ահաբեկած սկսան փախչիլ վայրենի աղաղակներով: Մերոնք՝ անոնց ետեւէն:

Ջարդը կատարեալ էր: Եւ նորէն համախմբեցան մեր զինւորները իրենց խմբապետին շուրջ: Գրկախառնում ու համբոյրներ: Յուզիչ էր տեսարանը: Շուտով յայտնուեցաւ, որ գիւղի մէջ մնացած մեր ընկերներն ևս հալածեր էին թշնամին և գրաւեր անոնց վիրքերը:

Գիւրը հասաւ, կուռը վերջացած էր: Հեռագրով օգնական զօրք կը կանչեն էրդրումէն, բայց խումբն արդէն հեռացած էր:

Պաստուր գիւղը բնաւ չվնասուեցաւ այդ դէպքի հետևանքով: Հայ գիւղացիներու և քիւրդերու վկայութեամբ, թշնամիէն սպանուած էին 450-500 հոգի: Անոնց մէջ 9 շէյխ և 10-15 նշանաւոր քիւրդ բէկեր: Նոյն աղբիւրներու համաձայն, կուռն մասնակցեր էին շուրջ 800 հետևակ զօրք, հեծելազօրք ու հինգ քիւրդ ցեղեր:

Հ. Յ. Դաշնակցութեան 15 կտրիճներ նահատակեցան Պաստուրի այդ մեծ կուռնի մէջ, 22էն մինչև 50 տարեկան, Հայաստանի բոլոր երեք հատուածներէն, մեծագոյն մասը թուրքահայաստանէն: Հինգ տասնապետ և տաս զինւոր:



\* \* \*

Թողունք բազմաթիւ, մանր-մունր ընդհարումներն ու կռիւները, որ պատահեր են մեր զինատար խումբերու վտանգալի ճամբաներուն. տանք միայն ընդհանուր պատկեր մը, կանգ առնելով հայդուկային շարժումներուն վրա մասնաւորապէս Տարօնի շրջանում, ուր կեդրոնացած էր երկար տարիներ Դաշնակցութեան գործունէութիւնը իր այլազան ձևերով — խաղաղ քարոզչութիւն, ժողովուրդի կազմակերպում ու զինում, արշաւախմբեր և արշասանքներ, տերրոր և ապստամբութիւն:

Ի՞նչ էր այդ հրոսակային արշաւներու նպատակը:

Իննսունական թւականներուն մեր առաջին յեղափոխական քայլերն էին — կազմել հայդուկային խումբեր և երկիր ճամբել: Անոնց պաշտօնն էր՝ զէնք փոխադրել երկիր ու զէնքի վարժեցնել հայ երիտասարդութիւնը. ույլ և ներսում կազմակերպութիւն ստեղծել ու յեղափոխական քարոզչութիւն մղել, վարժեցնել երիտասարդութիւնը անձնագոհութեան՝ իրենց իսկ անձնական օրինակով, իրենց զրկանքներով ու նահատակութեամբ:

Անհրաժեշտ է փոքր ինչ կանգ առնել միջառաջի վրա: Երկրի մը աշխարհագրական դիրքը, զծագրութիւնը, ազգաբնակութեան ցեղային ու ընկերային կազմը միշտ առաջնակարգ դեր են խաղացեր ազատագրական շարժման հոլովոյթի մէջ: Մակեդոնական չէթաները կը գործէին հեռու բուն Թուրքիոյ հորիզոններէն, ունէին հոծ, համատարր, միացեղ զանգւած, ազատ թուրք ու քիւրդ մեծ խառնուրդներէ և թիկունքն ալ՝ ցեղակից Բուլղարիան: Օսմանեան լուծէն ազատագրւած գրեթէ բոլոր քրիստոնեայ ժողովուրդները կապրէին նոյն եւրոպական հորիզոններուն տակ: Յոյները, որոնց ազգային հերոսամարտը ասկէ 100 տարի առաջ փառաբանեցաւ նաև արեւմտեան գրականութեան մէջ և որոնց դիւցազներուն շուրջ — Միաուլիսներուն, Բոցարիսներուն, Յաւելլասներուն — առասպելներ ու երգեր հիւսւեցան, — յոյները ունէին աւելի ևս նախանձելի աշխարհագրական դիրք, այնքա՛ն նպաստաւոր հայդուկային ու ապստամբական կռիւներու համար, երկիր մը, որ կը գտնուի ծովային հաղորդակցութեան մեծ ճամբուն վրա, զրեթէ դրացի արեւմտեան մեծ պետութիւններուն: Ժողովուրդ մը՝ հեռու իսլամ մեծ զանգւածներէն, ազատ՝ այլատարր ժողովուրդներու թիկունքային յարձակումներէն\*)...

\*) Եւ այնուամենայնիւ, կէս դարէ աւելի տեւեցին Յունաստանի յեղա-

Բախտաւոր էին նաև բուլղար, սերբ, ռումէն՝ ազգերը ամէն տեսակէտով: Ի՞նչ համեմատութիւն հայկական միջավայրի հետ...

Արեւմտեան աշխարհի մէջ ամենէն շատ հուշակաւ ու պանծացած է իտալական ազատամարտը — Risorgimento: Ապա և լեհականը, ունգարականը, իրլանդականը: (Պօքս այն շարժումներու մասին է, որոնք բռնկած են օտար լուծեր թօթափելու նպատակով): Որքա՛ն դիւրին էր համեմատաբար իտալացի ռազմիկներու դործը: Ի՞նչ նախանձելի միջավայր, ո՛ր պիտի հազարաւոր պայմաններ... Գարիբալդիները թիկունք ունէին նախ հարազատ Պիէտոնտէն, կազմակերպւած փոքրիկ իտալական պետութիւն մը իր կառավարութեամբ ու բանակով, որ անբաւ դիւրութիւններ կընձեռէր ապստամբներուն\*): Արեւմտեան սահմաններուն ալ ունէին բարեկամ Ֆրանսան, որ սիրով կը հիւրընկալէր իտալացի յեղափոխականները և որ, ի վերջոյ, ճամբեց հարիւր հազարաւոր իր բանակը դէպի Հիւսիսային Իտալիա ու դուրս քշեց այնտեղէն աւստրիացիները: Իսկ «Տիեզերական Ասպետը» կատարեց իր «Հազարի արշաւանքը», գրեթէ որպէս զինուորական (նաւային) զբօսանք մը, սքանչելի պայմաններու մէջ, ուր մին միւսի ետեւէ գուտ իտալական նահանգներ, հոծ, իտալածին զանգւածներ, ազա՛տ ներքին ոսոխներու մահացու պատուհասներէն, Հերոսի մէկ կոչին վրա, ոտքի կենէին, յաճախ անգէն, անպատրաստ և առանց դիմադրութեան հանդիպելու, դուրս կը քշէին բուրբոնեան մեղկ ու տկար իշխանութիւնները հայրենի հողէն...

Երեւակայեցէք, սակայն, որ օտար բռնութեան դէմ ծառայած այդ ազգերը — իտալացին, լեհը, իրլանդացին, ունգարացին, զեիցերացին — ունենային իրենց հայրենի հողին վրա իսկ՝ նախապատմական ցեղ մը, ներքին դաւադիր, ոսոխ ոյժ մը, որ շարունակ թիկունքէն զարնէր իրենց ռազմիկները և կաշկանդէր անոնց թափը, բուն թշնամուն՝ բռնապետական կառավարութեան դէմ, չեղոքացնէր ու խորտակէր անոնց բոլոր ազատագրական ճիգերը: Երեւակայեցէք միւս կողմէն, որ այդ ազգերու վրա ծանրացած բռնապետական իշխանութիւնները — աւստրիականը, անգլիականը, ռուսականը — սովորութիւն ունենային ըմբոստներու

փոխական խորումներն ու պոռթկումները, հարիւր հազարէ աւելի զո՛ւ տաւ հեւլէն ազգը, մինչև որ ստացաւ իր անկախութիւնը եւրոպացիներու բարոյական ու նիւթական աջակցութեամբ և, ի վերջոյ, երեք մեծ պետութիւններու զինուորական միջամտութեամբ:

\*) Ընդդէմ Աւստրիացիներու և Բուրբոններու:

արարքներուն համար պատասխանատուութեան կոչելու և կոտորելու անմեղ, անմասն ժողովուրդը... Որքա՞ն պիտի փոխւէր այդ ազգերու ազատագրական պայքարի ընդհանուր պատկերը և անոր հետեանքը...

Հայ յեղափոխականի, հայ հայդուկի գործունէութեան թատերաբեմը երկիր մըն էր, ուր ազատութեան դինուրի կեանքը տարիներու և տասնեակ տարիներու ընթացքին գրեթէ անդադրում Գողգոթայ մըն է, շարունակական նահատակութիւն: Անօրինակ միջավայր մը, ապահովաբար եզակի՝ յեղափոխական ազգերու տարեգրութեան մէջ: Այդ իսկ պատճառով, եզակի է և Հայոց Ազատամարտը, հայկական Դրաման՝ իր մուսլ արարածներով և իր խօլական, աննման դերակատարներով...

Ինչո՞վ արդեօք կը չափուի պայքարի մը մեծութիւնը, կրուտողի մը արիութիւնն ու անձնւորութիւնը: Անշուշտ, ամենէն առաջ՝ այդ պայքարի ճամբուն ցցած արգելֆնեքաւ մեծութեամբը: Որքան մեծ են յաղթահարելի արգելքները, այնքան դժնդակ և հաւուր է գաղափարական փոքրամասնութեան մղած պատերազմ մը, այնքան մեծ է կուտողի հոգին, անոր բարոյական նկարագիրը, անոր ռազմական սլացքը:

Ո՞ր կը գտնէք այն դժոխային խոչ ու խուժերը, որոնցմով պաշարւած էր Թուրքաց Հայաստանի մէջ հայ Փէդային, հայ մտաւորական դործիչը, քարոզիչը, կազմակերպույն ու ղեկավարը — Արաբօ մը, Դուման մը, Սերոբ մը, Անդրանիկ մը... Ո՞վ է չափեր մեր հայդուկներուն հոգու մեծութիւնն ու տառապանքի խորութիւնը: Ո՞վ է որոշեր արիութեան ու անձնուրացութեան չափը հայ ռազմիկներու, որոնք տքներ են տասնեակ տարիներ իրենց անիծապարտ միջավայրում, հեռու աշխարհի մեծ ճամբաներէն, փակւած լեռնային ցանցերուն մէջ, ուր դիւրութեամբ չէին հասներ ոչ օգնական զօրք ու նաւատորմ, ոչ հիացմունքի ծափ ու ուխտանա, ոչ իսկ կարեկցութեան ու համակրանքի ունէ ձայն լուսաւոր աշխարհէն... Միջավայր մը՝ ուր կայ ամենէն ահռելի պատուհասը, թափառական, խաշնարած ցեղ մը, որու բոլոր ընդունակութիւնները մշակւած, նրբացած, սրւած էին դէպի թալան, յախտակութիւն ու սպանութիւն, ընդդէմ իր խաղաղ, հողագործ, առաջադէմ հարեանի, — միջավայր մը, ուր հայ զանգւածը գրեթէ ամենուրեք հիւսւած էր այդ թշնամի տարրին հետ, ենթակայ ամէն վայրկեան անոր դաւերուն ու հարւած-

ներուն, ուր կար ոչժիմ մը՝ հազար անգամ աւելի վատթար, աւելի վայրադ, քան մեր յիշատակած ոչժիմները, բռնակալութիւն մը՝ որու նմանը գուցէ չի գտնւիր անգամ հնադարեան շրջաններում, Բաբելոնի, Ասորեստանի մուսլ, արիւնագանգ տարեգրութեան մէջ...

Իսկ սահմաններում՝ հսկայ ոսոխ-պետութիւն մը, որ ամենհի պատնէչի պէս ցցւեր է միշտ հայ ազատարար հոսանքի դէմ, խաթարելով եւրոպական միջամտութեան ամէն մի փորձ ի նպաստ հայութեան, խեղդելով հայոց ազատութեան ամէն մի ճիղ և ի վերջոյ քաջալերելով նոյնիսկ թուրքահայ ժողովուրդի զանգւածային բնաջնջումը...

Ո՞վ է չափեր խորութիւնը այդ շնաշխարհիկ դէմքերու, որոնք կուեցան նմանօրինակ պայմաններու մէջ և երբեք չվհատեցան, չթուլացան և երբեք չկորսնցուցին իրենց հոգեկան հաւասարակշիւր և միշտ յուսացին—ընդդէմ բոլոր յուսախաբութիւններուն—և կատարեցին սխրալի գործեր—ընդվզումի ու ինքնապաշտպանութեան — և վարեցին յեղափոխական ճակատամարտներ, որոնք դուցէ չնսեմանան զարիւրալեան թուիչքներուն առջև...

Կոպիտ, անտաշ տիպարներ՝ որ վեհագի «խենթութեամբ» կը նետուին յեղափոխական արիւնոտ խառնարանին մէջ, կը դրկեն ամենէն դժնդակ մահերը, կը ճաշակեն ամենէն դարհուրելի հոգեվարքը, կենթարկւին դահճի նրբենի գազանութիւններուն՝ բանտերու մէջ, կը ճօճին կախաղաններու վրա, բոցերու ճարակ կը դառնան իրենց վայրկեանական թազստոցներում, կամ թէ կը սառնին, կանհետանան Հայաստանի բուք ու բորաններու մէջ...

Կոպիտ, բրոնդէ տիպարներ՝ որոնց պարզ, անշուք արտաքինի տակ կեռայ դաղափարի և սուրբ ատելութեան ու վրէժխնդրութեան հնոցը: Պարտքը անոնցմէ շատերու աչքին՝ ինքնապաշտպան է, պտուղ ներքին «վիռակամ հրամայակամին»... Ոչ մի հաշիւ, վարձատրութիւն չեն ակնկալեր իրենց համար, ոչ մի փոխարինութիւն նիւթական կամ բարոյական, այս աշխարհի և ուրիշ ունէ աշխարհի մէջ: Գործել — վասնդի պէ՛տք է գործել: Մեռնիլ — վասնդի պէ՛տք է մեռնիլ: Այդպէս կը թելադրէր հայրենիքի և հարազատ ժողովուրդի տիրական ձայնը:

Կարդացէ՛ք Մալոյեաններու, Ապրօներու աներեւակայիլի մարտիրոսագրութիւնը, աչքէ անցուցէք կտրիճներու այդ հոյակապ շարանը — Մակարներու, Գալէներու, Մանուկներու —

յրոնց յուզիչ կենդանագիրը կուտայ Ռուբէն իր յեղափոխական յուշերուն մէջ, պարզ, անպաճոյճ ու հակիրճ, առանց ուէ գրականութեան, բայց և աղեկտուր, սրտաճմլիկ՝ իրենց լակոնիկ պարզութեան մէջ:

Եւ դեռ Փիղիքական տանջանքները բաւական չեն: Կոյ բարոյական տառապանքը, աւելի ծանր, աւելի մտրակող այդ զգայուն հոգիներու համար... Բարոյական տառապանքը — երբ իրենց աչքերուն առջև, իբր թէ իրենց մեղքերուն համար, դահլիճ կառավարութիւնը կը կոտորէ խաղաղ, անմեղ ժողովուրդը, իրենց հարազատները: Գոտէ՛ք նման իրականութիւն համաշխարհային պատմութեան մէջ...

Այդ է ահա մեր հայդուկի տարամերժ ճակատադիրը, անոր կեանքի ու մահուան պատերազմի սարսոնցուցիչ նկարագիրը: Նահատակ — կրկնապատիկ: Նահատակ՝ մարմնոյն մէջ և նահատակ՝ հոգիին մէջ...

Հապա որքա՞ն աւելի վսեմ է, աւելի փշոտ ու հերոսական՝ մեր անդրամիկ լեզուի ասպարէզը, մեր առաջին սպայիկներու հաւատքն ու կորովը: Եարժման նախակարապետներ՝ անոնք կերթային ասկէ քառսուն տարի առաջ, մշակելու խոսքն զետիւնը այդ դարհուրելի լեռնացանցին մէջ, մաքառելով բնութեան և կենդանի շրջապատին հաղաբաւոր արդելքներուն դէմ...

ԲաՖֆին ըսեր էր իր «Կայծեր»ուն մէջ, թէ Հայաստանի բնութիւնը իր լեռներով ու անդունդներով պիտի լինի հաւատարիմ դաշնակիցը Հայ յեղափոխական գործիչներու: Այդպէս պիտի լինէ՞ր, անտարակոյս, եթէ հայոց «լեռ-կղզի» մէջ լինէր միատարր Հայ բնակչութիւն: Այդպէս չէր սակայն: Հայ տարբը զրեթէ ամենուրեք բանտած էր քրդական սարդոտայինին մէջ, և անտառագուրկ լեռնապաշտերը ստէպ կորստարիւ պատուհաս մըն էին մեր զինակիր խմբերու և հայդուկային շարժումներուն համար:

Վարդան օր մը կը պատմէր մեզի, թէ ինչպէս քիւրդ հովիւներէն չնչմարելու համար, իր զինակիր խումբը անդամ մը ստիպւած եղաւ թաղնելու քրդական մէկ գիւղի շրջակայ... Ղէգերուն մէջ:

«Անակնկալ հանդիպումն էր — կ'ըսէր Եատախի համբաւաւոր ռազմիկը, որ ասկէ քառասուն տարի առաջ կերթելէ կը Վանի ու Սալմաստի միջև — հեռուէն նշմարեցինք քիւրդ հովիւները, որ կը շարժէին մեր ուղղութեամբ... Պէտք էր աճապարեչ

կորսնցնելու հետքերնիս: Բայց ո՞ւր... Արագ-արագ ճեղքեցինք խոտի բուրգերէն մէկ քանիսը և կերպով մը թաղեցանք անոնց մէջ, թողնելով փոքրիկ բացւած քներ շնչելու համար: Հասան հովիւները իրենց նախիրին հետ... Կը քալէին զրուցելով, գրեթէ մեր առջևէն: Եւ մինչ մենք կծկւած, սրտատրոփ կը համրէինք վայրկեանները, սպասելով անոնց հեռանալուն, մէկէն ի մէկ եղները մօտեցան մեզի պատասպարող ղէղերուն և սկսան ևռանդով քարշել ու լավել խոտը... Կարելի է երեակայել մեր տագնապը: Քիչ մըն ալ լափէին, պիտի բացւէր մեր թաղստոցը... Հովիւները հաւա՛ր պիտի գոռային մօտակայ քիւրդ գիւղին — և մենք կորած էինք... Բարեբախտաբար, երկար չտեսց եղներու այդ դաւաճան խաղը»...

Հայ յեղափոխական շարժման արհաւիրալի պատմութեան մէջ հազարներով կարելի է դտնել նման արտառոց պատկերներ ու զրոյցներ, գրեթէ անեկղոտային, դաւելոտական, բայց իրական և խորապէս ողբերգական...

Յուզիչ են մեր յեղափոխական շարժման առաջին զրուպները, այն առաջին քայլերն ու խարխափումները, այն խիզախ և յուսահատ փորձերը, որոնցմով մեր վաղեմի գործիչները ձգտեր են խորտակել անտարբերութեան սառոյցը իրենց թշուառ հայրենիքում, ձգտեր են փոթորկել ստրկութեան մրափը և հրել զանգւածները դէպի կռիւ ու վերածնութիւն:

Յուզիչ է պատմութիւնը և միալա՛ր, միօրինակ՝ իր դժոխային մանրամասներուն մէջ:

«Բայլի՛ր անմուռնչ գիշերային խաւարի մէջ, սարերով ու ձորերով, լուսաբացին թաղնի՛ր անմատչելի դարաններում, հըսկի՛ր մշտապէս քրդական ոտխի դէմ, որ ամէն մի քայլափոխիդ հետեւում է նորովի պէս, տնքա րևոխի տակ, փոխադրելու հրացանները շայակիդ, զողա՛ միշտ մատնելու վտանգից, մաքառի՛ր շարունակ սոսկալի բնութեան դէմ, տասապի՛ր ցրաից, քաղցից ու ծարաւից. ալրի՛ր միշտ անքուն, տանջալի գիշերներ, առանց տաք մտունդի, առանց տաք վերմակի, փնտրի՛ր շարունակ անառիկ քարայրներ, ուր կարենաս շունչ առնել, փոքր ինչ հազտանալ, կաղդուրել, պատրաստ եղիր ամէն վայրկեան պաշտպանելու, կուելու և վտանգի բոյլին մաղլցի՛ր լեռն ի վեր, շտապի՛ր գրաւելու ամենաբարձր դիրքերը, թաղի՛ր հաղճեպով սպանած ընկերներին, երբեմն ձգի՛ր նրանց հոգեվարքի ցնցումներում և փախի՛ր դահալիժող խուճապներից... Մի՛ խօսիր և մի՛ հաղար պտոյտներուդ միջոցին, քո ձայնը կարող է լսելի լինել շրջապատին. անտառի մէջ քալելիս մի՛ գարնէիր տերևներին, նրանց դաւաճան խլչոցը կարող է ուշադրութիւն հրաւիրել. մի՛ ծխիր օդի

մէջ, որովհետեւ այդ ծուխն եւ կարող է նկատուիլ թշնամու որջերից... Թագնւի՛ր բոլորից, ե՛րբ քրդից ու հայից, ե՛րբ կառավարական դատաւից, ե՛րբ հովուից ու շնորհից, կծկուի՛ր ու դալարւի՛ր, երբ հանդիպես մի անմեղ կարուանի, թէկուզ մի հատ ճամբորդի, թէկուզ մի խեղճ, ողորմելի լամուկի, որ կարող է հաւար ձգել և խումբի գոյութիւնը վտանգել... Եւ այդ անհնարին դժոխքի մէջ միաժամանակ առաջ տար քո դրական աշխատանքը, մտի՛ր դադարադուրի հայկական գիւղերի մէջ, հաւաքի՛ր զգայուն երիտասարդներին, քարոզի՛ր, կազմակերպի՛ր, հալածի՛ր վատերին, պատժի՛ր լրտեսներին, մատնիչներին, — ահաւասիկ այն անօրինակ պայմանները, որոնց մէջ մեր առաջին խումբերը կատարել են իրենց առաքելական թափօրը... Սոսկայի է, յոգնում էք, ձեր նեարդերը թուլանում են, ձեր ուղեղը տառապում է այդ միակերպ պատկերների անձայրածիր շարանից»:

Այսպէս կը գրէինք «Դրօշակ»ի մէջ, ասկէ 20 տարի առաջ, խօսելով մեր վաղապօսի գործիչներու, մեր շարժման առաջին ծիծեռնակներու գործունէութեան մասին:



Այսպէս էր Դաշնակցութեան հայրուկը: Ոչ միայն դէնք կը փոխադրէր, այլ և քարոզչական պտոյտներ կընէր, կը կազմակերպէր ու կը մարդէր:

Հետագային, երբ Կազմակերպութիւնը ճիւղեր արձակեց բուն երկրի մէջ, հայրուկային խումբերը ուրիշ դեր մըն ալ ստանձնեցին. աւտոք ի հարկին դարձան արշաւախումբեր, որոնք կամ սահմաններէն օդնութեան կը փութային ապստամբութեամբ բռնած վայրերուն, կամ կարչաւէին հայաջինջ աշիրէթներուն վրա, վրէժխնդրական նպատակով, կամ թէ կը փորձէին աւերել ու ջարդել սահմանադրութիւնի թուրքական գործակալներն ու պահակները: Այսպէս — Խանասորի ու Խաստուրի արշաւախումբը և այլա — Սասնոյ մեծ գէպերու ատեն — Բաղրիանդի, Օլթիի և այլ արշաւախումբերը:

Յանուն ճշմարտութեան, ցու ի սիրտ, պէտք է խոստովանինք, որ այդ ձեռնարկները, կյանելով հանդերձ նիւթական, մարդկային ու բարոյական ահալին միջոցներ, ընդհանուր առմամբ շարդարացուցին Կազմակերպութեան յոյսերը: Մաս մը, անշուշտ, կը հասնէր նպատակին, դէնք ու սպառնալիք ներմուծելով, բայց մեծապօսի մասը կէս ճամբուն իսկ կը կտորուէին անհաւասար կոխներուն մէջ, գարնելով թշնամու անխուսափելի

որոգայթներուն: Անգամ Խանասորի արշաւանքը — վրէժխնդրական և պատժողական ամենէն խոշոր ու յաջող փորձը — ջննադատութիւններու առարկայ եղաւ շարքերուն մէջ, թէպէտ և զգալի կորուստներ պատճառեց էր թշնամուն և զգալապէս բարձրացուցեց էր հայ երիտասարդութեան ընկճած տրամադրութիւնները: Իսկ այդ ձեռնարկը իւրեր էր Կազմակերպութեանն ոչ պակաս քան 40,000 բուրլիի ծախք — այն ժամանակուան չափով պատկառելի գումար մը — իւրեր էր և 19 դիւնոր, մեր ընտիր գիւնորներէն:

Ճշմարտութեան մեծ բաժին կայ, անշուշտ, Քրիստափորի զնահատութեան մէջ, երբ նա կը գրէր («Դրօշակ», 1900թ. № 2), որ «արշաւանքները, հրոսակային խումբերը կը կազմակերպեն կուռղ ուժերը, կը ժողովրդականացնեն բողոքի ճանապարհը, կը կրթեն ժամանակակից սերունդը, վառ կը պահեն ժողովրդի դիմադրական տրամադրութիւնը, կը հարւածեն թշնամու հեղինակութեանը թէ ներսը՝ սեփական հպատակների աչքում և թէ դուրսը՝ օտարներու առջև, կը վնասեն կառավարչական շահերուն, կը դրադեցնեն եւրոպական հանրային կարծիքը և դիւանատները, այսինքն առաջ կը մղեն միջամտութեան գործը, առնւազը թոյլ չեն տար, որ հարցը մոռացութեան մատնուի»...

Սակայն և այնպէս, յաճախակի ձախորդութիւններու և մարդկային ու նիւթական անբաւ կորուստներու առջև կը նսեմանային սակաւադէպ յաջողութիւնները:

Ձախորդութեան պատճառներուն վրա աւելորդ է երկար խօսիլ: Հիմնական պատճառը, ըսինք արդէն, մեր աշխարհագրական և ցեղագրական զարհուրելի միջավայրն է... Խումբերը ստէպ ողբերգական վախճան կունենային, հալածւած թէ սահմանապահ թուրք զօրքերէն, թէ քերդ ու թուրք խաժամուէէն և թէ՛ նոյն իսկ ռուսերէն ու պարսիկներէն: Յիշենք միայն Թորգոմի խումբը, որ գազանաբար մորթուեցաւ Օլթիի սահմանին մօտ և որու տասնեակ գլխատուած դիակներու շուրջը վայրենի խրախճաններ սարքեցին թուրք զօրքը և ռուս սահմանապահ կողակները, Բըկովի հրամանատարութեամբ: Յիշենք և Մահլամի դէպքը — Խանասորէն յետոյ — մեր եօթը գլխատուած ընկերները (պարսից Մեհմեդ շահի դահիճներն էին, որ կը գործէին թուրք դահիճներու դըրդումով...):

Կազմակերպութեան գոհողութիւնները հսկայական էին, արդիւնքը՝ չնչին: Հայրուկային արշաւախումբերը, որ նպատակ ու-



նէին որոշ վայրկեաններուն յեղափոխական դրոյթ ստեղծել երկրի մէջ, ցրել կառավարութեան ուշադրութիւնը, բաժնել անոր ուժերը, աւերել զօրանոցներ են. շատ քիչ անգամ կրնային իրազօրժել իրենց առաջադրած ձեռնարկները, քանի որ մեր իւրաքանչիւր կուռղին դէմ թուրք կառավարութիւնը և մահմետական խուժանը կը բերէին տասնեակ ու հարիւրաւոր կուռղներ: Եւ ամենէն հերոսական թուիչքները յաճախ կը կաշկանդէին տեղն ու տեղը, կը խորտակէին մեր անձնէր հայդուկներու արիւնին մէջ...

Ուրիշ պարագայ մը՝ որ կուզար աւելի եւս շեշտելու հայ յեղափոխականի կացութեան գարհուրանքը: Մեր հայդուկային կոխները, որ յաճախ, աւա՛ղ, ճակատագրօրէն կը մղէին քիւրդերու և թուրքերու դէմ — իբրև հետևանք անոնց իսկ դրդուումներուն ու յարձակումներուն — և մանաւանդ պատժողական արշաւանքները՝ թէկուզ ամենէն արիւնարբու տարրերուն դէմ՝ այն համոզումը կը տարածէին թուրքերու և քիւրդերու մէջ (կառավարական պրոպոկուստիոնի օդնութեամբ), թէ հայ յեղափոխականները իրօք իսլամ ժողովուրդներու դէմ էին ուղղած իրենց կռիւը... Մինչ մենք սկիզբէն ի վեր, մեր բազմաթիւ յայտարարութիւններով, մեր ծրարի յօդածներով իսկ ձգներ ենք միշտ համոզել այլ ժողովուրդները, որ յեղափոխական պայքարը ուղղած է տաճիկ կառավարութեան դէմ, որ մեր միակ թշնամին բռնապետական կարգերն են և ոչ թուրք ու քիւրդ ժողովուրդները, որոնց հետ մենք կուզէինք, ընդհակառակը, համերաշխի՛լ նոյն ընդհանուր թշնամուն դէմ:

Այսքան ահռելի էր այն միջավայրը, որու մէջ կոչւած էր խաղցելու հայկական մեծ դրաման: Այսքան եղբրականօրէն բարդ էր հայ յեղափոխական իրականութիւնը, եղակի, այո՛, նմանը չտեսնած ուրիշ ունէ ազգի պատմութեան մէջ...

Դրաման, այնուամենայնիւ, շարունակեցաւ — վերը ցուցադրւած պատճառներով — հայդուկային շարժումը շարունակեցաւ: Զգտելով քիչ-չատ բաւարարել ինքնապաշտպանութեան հոգերը բոլոր հայաբնակ դաւառներու մէջ, այլ շարժումը սկսաւ կամայ-կամայ կեդրոնանալ որոշ, համեմատաբար նպաստաւոր և առաւելապէս վտանգւած վայրերու մէջ, ուր վճռական պահերուն հնարաւոր էր կազմակերպել քիչ-չատ տեւական դիմադրութիւն:

1895ի աշնան սկիզբը Կովկասէն երկիր մտան Անդրանիկ,

Հրայր, Սերոր, Գուրբախ, Աշոտ-Թաթուլ, Խնուսցի Աւագ, իւրաքանչիւրը տանելով իր հետ քանի մը տասնեակ բնաիր գիւնդներ, գէնք ու սաղմամթերք: Սերոր և Աւագ գացին գէջի Մուշ: Հրայր և Աշոտ անկասարկեցան Բասենի մէջ: Գուրբախ՝ Խնուս: Հրայր, շատ չանցած ձերբակալեցաւ և առեն մը կրգրումի բանտը մտալէ յետոյ, ապա՛ արձակեցաւ ու նսյուկս գնաց Մուշ-Տարօն: Անդրանիկ նորէն գուրս գնաց երկրէն ու չուտով վերադարձաւ:

Ուրիշ շատ մը գործիչներ ևս — մտասուրական և սաղմիկ — համիդեան սարսափներէն յետոյ, այլ և այլ առաքելութիւններով մուտք գործեցին երկիր: Ճամբաները՝ աւելի քան երբեք՝ լի վտանգներով... Այնուամենայնիւ, մէկ քանիտը հազար ու մի արկածներով կը հասնէին ու կը տեղափոխէին: Այլուկս, Վախաւը (Տպրամաճեան-Մանուկեան) 1897ի վերջերք ձգեց ուսուցչական իր պաշտօնը Բուրյաբախում, անցաւ Կովկաս և ի վերջոյ գնաց հաստատուելու Կազմակերպութեան յաջօրի պաշտօնով Սասնոյ մէջ: Տարօն հասաւ և նշանաւոր Գուրգէնը, սուսական պահա՛տի գիւնդը, Գոյթան գատակն:

Ուրիշ րնկերներ նահատակեցան կէս-ճամբան, սահմանի մօտերը կամ երկրի մէջ: Աւետիք Մալոյքեան, մեր հին, համեստ գաւառական գործիչներէն (ուսուցիչ էր Ալեքսանդրապոլի մէջ), որ համիդեան ջարդերէն յետոյ նսյուկս կետար վրէժխնդրութեամբ, 1896ի վերջերք ձգեց յանկարծ, գիշերանց, հայրենական սուներ, անցաւ գաղտուկ իւրբախան սահմանապարսիք, բայց հոն բաժի բնակելով, գիշերային մտիկին րնկաւ ջուրերու մէջ և... ստուցաւ:

Նոյնքան ցնցոյ, եղբրական մահ գրկեց ուրիշ թանկագին րնկեր մը, Մկրտիչ Սահակեան, Արթո (Շապին-Գարահիտարցի), որ 1895-1896ի գէպրեթէն յետոյ նսյուկս անցեր էր Տարօն, բայց րնկաւ վաղաժամ իր ստաբիլութեան ճամբուն վրա՝ ոչ թէ թուրքի կամ քիւրդի գնդակէն, այլ Հոյաստանի ձիւնամբրիկներուն մէջ... Օր մը Մէլգրէտը բաւած բարձր սարէն անցնելու ստան, Տ. Թովմաս ԼՖէնտիին հետ, երկուքով թաղուցան ձիւնի հիւսին տակ\*)...

Կամայ-կամայ կը վերակենդանանար Տարօնի մեռեալ միթնաբար: Հին սաղմիկներու և քարոյիչներու թեկերուն տակ կը

\*) Հարիւրաւոր սասունցիներ պեղումներ կատարեցին և միայն մէկուկէս ամիս յետոյ գտնեցան երկու գիւնդերը:

գինւորադրելին անձնէր երիտասարդներու նոր շարքեր: Հոն  
եկաւ շուտով և Անդրանիկը. որ 1897ին, Խանասարի արշա-  
անքի օրերուն, Վաղղէնի հետ անցեր էր Սալմաստի գծով Վաս-  
պուրական:

Ճէզայիներու գլխաւոր ժամադրաւայրն էր Սասունը. --  
հայոց հինաւորց միջարեդր, որ 1894 թուականին ի վեր դարձեր  
էր թուրք կատախարութեան աչքին փուշը և զոր նա կը ձգտէր



ԱՅՐՈ



Ի. ԻՄԱՆՅԱՆ

քար ու քանդ ընել, ըստ կարելւոյն շուտ... Վասնոր Սասունն էր,  
որ իր ընդվզումով ու կրած արհաւիրքով աչքսն փոխորկիներ  
ծնաւ և քիչ մնաց լուծէր հայկական հարցը գիւտնադիտական  
ուժեղ միջամտութեամբ:

1898ի Ընդհանուր ժողովր, գումարած ուկաղիայի, տե-  
ղատութեան սեւ օրերուն, որոշեր էր կեդրոնացնել ուժերը  
(մարդ, զէնք, սպամթերք) գլխաւորապէս Սասնոյ մէջ. և  
ատոր համար ընտրուեցաւ յատուկ մարմին, Բարձրաւանդակի  
Կեդրոնական Պատասխանատու Մարմինը, որու մէջ էին Վահան  
Մանուկեան, Վարդգէս և Ռուբէն Շիշմանեան-Քեօի: Միմիայն  
Բարձրաւանդակի « կեդրոնացման » գործին համար որոշուեցաւ  
ներմուծել անուաղն 1500 հրացան մէկ միլիոն փամփուշտով: Այդ

և ուրիշ սկաւքերու համար սահմանուեցաւ 300,000 բուբլի բիւղ-  
ջէ: Կեդրոնացում, նւազ չափերով ու բիւղջէով, Կուսակցութիւնը  
որոշեց նաև Վասպուրականի նկատմամբ:

Աւելորդ է բսել, որ անկախ այդ բոլոր որոշումներէն ու  
սահմանումներէն՝ լրբոսաներու նոր խումբերը մեծ ջարդերէն  
յետոյ ետ, կը շարունակէին իրենց խորհրդաւոր ստոյանները, մաս-  
նաւորապէս Բարձրաւանդակի շրջանում: Երիտասարդներ՝ որոնք  
ամէն բան կորսնցուցած և արդար մրէժխնդրութեամբ վառւած՝  
զէնք ու զեկափարներ կը փնտրէին՝ ժողովուրդի համար կուելու  
և մեռնելու, անոր ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու հա-  
մար:

Ճէզայիներու սուար փաղանդ մըն էր, որ երևան կուգար  
հայոց աշխարհի բուն իսկ սրտին մէջ — Տարօնում:

Անոր հողին էր — Խլաթցի Սեդարը: Հայ յեղափոխական  
գիւցապնակչոյի ամենէն հմայիչ զէմբերէն մէկը, մի ճշմարիտ  
Condottiere, որ կը յիշեցնէ հեյլին գիւցապնակչութեան Բոցարիս-  
ները և բոլոր սպասումը սպերու լեղենդական հերոսները:

Աերոր-փաշա -- Ազրբիւր-Սերսը... Խլաթ գաւառի Սոխորդ  
գիւղէն էր, հայկական հին ու համբաւաւոր օճախէ մը, Խղէի  
տոհմէն: Իր տիւտանեան կազմուածքին կը միացնէր բնական խելք  
և բարոյական բարձր աստիճանութիւններ: Պատանի հասակին սի-  
րած գրադումն էր՝ ձի հեծնել, յետեր ժուռ դալ, որսորդութիւն  
ընել: Փոշուները կը գտնէր նախ սրբատախկով, նետ ու սղե-  
գով: Երբ քիչ մը չափահաս եղաւ, Միսէն, իր եղբայրը, գաշոյն  
ու հրացան մը նուիրեց իրեն: Իսկ Ասաթըլ հօրեղբայրը, որ Պոլսէն  
նոր եկած էր հայրենասիրական հովերով, կարծի սրսորդին մէջ  
յեղափոխական գաղափարը մտցուց... Այնուհետև 20-22 տարե-  
կան պատանին կը սկսի իր գնդակներու սթըր թշնամու վրտ փոր-  
ձել: Օր մը, յետերուն մէջ, երկու քերթի հետ կուի կը բռնել,  
մէկը կը սպաննէ, միւսը փոխելով կազատի: Քերթերը կը սկսին  
հետապնդիլ զինրը: Աերսը Վարդանմ ձի սթը սպորմութիւններու  
լուրը կը հասնի և թուրք իշխանութիւնը... տկանջին: Հօրեղ-  
բայրը 1891ին աչան գաղանի Պոլիս կը փախցնէ: 1892ին Աերսը  
կը ձգէ Պոլիսը, կանցնի Ռուսական Սոսիալիստ քաղաքը, որ կային  
արդէն մեծ թւով հայաստանցի պանդուխտներ: Արձարան կը բա-  
նայ շատ մը սերիներուն պէս, կաշխատէ տարի մը, ապա կանցնի  
Բաթում: Մէկ երկու տարի ետ թափառելէ յետոյ կը մտնէ Իսպ:

նակցութեան շարքերուն մէջ, կը սորվի արագաձիգ հրացաններու գործածութեան եղանակը և սուտար հրոսախումբով կերթայ երկիր:

Իր գործունէութեան վայր ընտրեց Բաղէշի նահանգը, մասնաւորապէս Ախլաթի գաւառը: Ման կուգար Մուշ, Սասուն, Բաղէշ, Պուլանըր և այլուր, կը հաւաքէր երիտասարդութիւնը, հայրենասիրութիւն ու միութիւն կը քարոզէր: Երկար ատեն չեր-քեզի գգեստով կամ ուրիշ տարադններով ծպտւած, իր ափ մը ընկերներով ժուռ կուգար, ամէն տեղ կապեր ու կոմիտէներ հաստատելով: Առիծի սիրտ մ'ունէր, քաղցր լեզու, անոյշ, վեհանձն բնաւորութիւն, որով ամենուրեք սիրելի դարձաւ ժողովուրդին: Ահազին էր անոր հեղինակութիւնը ամբողջ վիլայէթին մէջ, սարսափն ու սրտկառանքը նաև թուրք ու քիւրդ խուժաններուն մէջ:

1895ի աշնան, երբ Բաղէշի գաւառներում ընդհանուր ջարդի արհաւիրքը կը տիրէր, Սերոբ դորաւոր խումբով, երկինքէ իջածի պէս, ոտք կը դնէ իր ծննդավայրին մէջ: Սոխորդը կը շրջապատուի 5-600 քիւրդերով: Ասոնք մեծ պատրաստութիւններ տեսեր էին նախօրօք, էշեր, ձիեր, սայլեր բերած էին, որպէսզի դիւղին ճոխ աւարն ու կողոպուտը կարենան իրենց վրանները փոխադրել: Թշնամին «սալաւաթ» կանչելով առաջ կը խուժէ: Հրոսապետի հրահանգով դիւղացիներու կտրիճ մասը դիւղէն դուրս կելլէ և դիրքեր բռնելով կը պատրաստուի դիմադրելու խաժամուժին: Կր հասնի գերեզմանոցէն քիչ հեռու, որ ձորով մը կը բաժնէր գիւղէն և ուրիշ քիչ մը վեր Սերոբ իր խումբով թաքստած էր: Հաղիւ քիւրդերը գերեզմանոցէն և ձորէն անցնելով, դիւղացիներուն դէմ առ դէմ կուգան կուելու, երբ Սերոբ իրեններուն հետ, ձորէն իջնելով կը մտնէ գերեզմանոց և քիւրդերը երկու կրակի մէջ կառնէ: Թշնամին լեղապատառ, խառնխուռն կը փախչի, ձղելով եօթ գիակ, որոնց մէջ իրենց շէյխը:

Նման յաղթական կռիւներ Սերոբ վարեց շատ ուրիշ տեղեր ևս: Այն բոլոր դիւղերը, ուր խումբէն 2-3 հոգի կը գտնուէին, կոտորածէ ու կողոպուտէ գերծ մնացին: Ախլաթի 27 դիւղերը Սերոբի խումբին շնորհիւ անվնաս ելան կոտորածէն: Կառավարութիւնը կը դարձանար այդ արտասովոր երևոյթին վրա: Քիւրդերը սարսափած էին մերիններու արագաձիգ հրացաններէն: Իսկ հայ ժողովուրդը կորհնէր Ֆէդային, կորհնէր Սերոբը և այդ օրերէն կնքեց զայն «Աղբիւր» անունով, որ ժողովուրդի երևակայու-

թեան մէջ հեքեթային դիւցադնի մը կերպարանք կառնէր: Իգիթը ճշմարիտ պաշտամունքի առարկայ մ'եղաւ: «Վերև Աստուած, ներքև Սերոբ»... Հայ աղջիկները, հիացմունքով կը պատմէին, որ Աղբիւր մէկ ձեռքով մէկ անգամէն եօթ քիւրդի գլուխ կտրեր է»...

Որպէսզի իր սիրած ժողովուրդին ապահովութիւնը չվտանգուի և ինքը ամէն վայրկեան կարենայ օգնութեան հասնիլ վտանգուած գիւղերուն, Ֆէդայիներու առաջնորդը փոխադրեց իր բնակավայրը դէպի բարձ լեռները: Քանի մը շարաթ թափառեցաւ Նեմրութի անառիկ բարձունքներում, ձմրան բուք ու բուրանին մէջ, ապաւինած իր հրացանին և անպաղար հետապնդելով դորքերէն: Բազմաթիւ կռիւներ ունեցաւ: Ի վերջոյ, խաղաղ կորսնցուց հետքը և ամէն ոք կարծեց թէ Սերոբ մեռած է... Առասպելներ հիւսուցան փոխստական հերոսին շուրջը, անգամ քիւրդերուն մէջ և երբ վերստին լուր հասաւ, թէ Սերոբ ողջ է, ընդհանուր դարձանքը այնքան մեծ եղաւ, որ մարդիկ խորհեցան, թէ հրաշքի մը առջև կը գտնուին... Նոր սլացք առաւ ժողովրդական երևակայութիւնը, նոր, գերմարդկային յատկանիշներով օժտեցին Հայդուկը. «Նեմրութի հսկայ — Նեմրութի ասլան»...

Ողջ էր — և ժամանակ առ ժամանակ խումբ մը ընտիր քաջերով դուրս կը նետէր իր խորհրդաւոր թաղստացիներէն, կը շանթահարէր բազմապիսի թշնամիները — մատնիչներ, դաւաճաններ և ժողովուրդի ամէն կարգի հարստահարիչներ՝ սատիկան, թալանչի ու ջարդարար, միւլթեղիմձի, թահսիլտար... Առջ ապաւինելով, նա աղբարարներ էր ժողովուրդին, «մա՛հ դաւաճաններուն ու աղբուրացիներուն»... Բազմաթիւ մատնիչներու և կրօնափոխ աղբայիններու գլուխը կտրեց, լրտեսութիւնը մեղմացաւ Սերոբեան տերրորի անուրջ հաւաճներուն տակ և շատերը, որ վախէն իսլամութիւն ընդունել էին, Սերոբի սպանանալիքներէն ահաբեկուած՝ վերադարձան իրենց աղբութեան դիրկը:

Ընդհանուր հաւատք կար ժողովուրդի մէջ, թէ ուր որ Սերոբ կը գտնուի, հոն Աստուած իրեն օգնական է... 1897ին հարիւրի չափ Հասնանցի քիւրդ ձիււորներ կը յարձակին Թեղուտ գիւղին վրա: Պատահամբ հոն կը գտնուի Սերոբ իր չորս ընկերներով. և սովորական խիղախութեամբ, հինգ հոգով կը ծառանայ ահարկու վոհմակին դէմ. կը դարնէ երեք հոգի, մէկ քանին ալ կը վերաւորէ ու ետ կը մղէ յարձակումը:

Հրայր և Սերոբ — դաշտերու զէրվիչ-մտաւորականը և

լեռներու պարզ, անուս ուղմիկը — տարածութեամբ իրարմէ  
զատուած, սերտ յարաբերութիւն կը պահպանէին իրարու հետ-  
անոնց հետ՝ ընտիր Ֆէդայիներու փոքրաթիւ բանակ մը և թի-  
կունքին՝ հոյակապ վեղարաւոր մը — Մշոյ առաջնորդ Վարդան  
վարդապետը — որը դիւթիչ պերճախօսութեամբ, որը գէնքով ու  
խիզախութեամբ, որը դիւանագիտական հնարքներով՝ կարողա-  
ցան մեր զուլումի տարիներում փրկել ընդհանուր կոտորածէն



Վ Ա Ր Դ Ա Ն Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ

ողջ ընդարձակ ու հայաբնակ շրջանը — Մշոյ դաշտը, Ախլաթի  
գաւառը — բան մը՝ որ ատամներու կրճտոց յարոյց էրզրումի,  
Բաղէշի, Տիզրանակերտի իսլամ ջարդարար խուժաններու մէջ.  
ասոնք չէին ներք իրենց ցեղակիցներուն, որ թանկագին առիթը  
փախցուցին և չկրցան ձարակել Դուբան-Բարձրաւանդակի հոծ  
հայկական դանդաղները... Ատամներու կրճտոց՝ նաև, անշուշտ,  
Երզրդի շրջաններում: Ապացոյց՝ որ երբ 1896ին ներումի պէս  
բան մը հռչակեցաւ և եկան համեմատարար խաղաղ օրեր — իրօք  
կարճատև զինուոր մը, արևմտեան բողոքի ցոյցերուն ազդեցու-  
թեան տակ — թուրք կառավարութիւնը փութաց պաշտօնանկ ընել  
Մշոյ միւթեարիՓր, որ թոյլ գտներ էր հայ յեղափոխականնե-  
րու հանդէպ և հետացուց Մուշէն Վարդան վարդապետը, որ

այնուհետև դնաց կղզիացաւ Ս. Կարապետի վանքին մէջ, առանց  
առկայն կտրելու իր յարաբերութիւնները հայ մարտական խում-  
բերուն հետ, առանց վայրկեան մ'իսկ լքելու իր սիրած հօտին  
դատը, հայկական ինքնապաշտպանութեան դատը:

Վերադառնանք Ախլաթ: Ինքնապաշտպանութեան գործը այդ  
ընդարձակ գաւառին մէջ աւելի թափ առաւ, երբ Սերոբին օգ-  
նութեան հասաւ Վասպուրականէն Դուրգէնն իր խումբով: Ռուս  
բանակի զինուոր, ռազմիկ և միանգամայն մտաւորական գործիչ՝  
այդ արի Ագուլեցին, Կուսակցութեան վարիչ շրջաններէն  
հրահանգած, եկաւ խորացնելու Հ. Յ. Դաշնակցութեան գործը,  
ժողովուրդի սեփականութիւն դարձնելու կուսակցութիւնը, ժողո-  
վուրդի ուրոյն նախաձեռնութիւնը հրահրելու, ժողովրդային  
բնոյթ տալու ինքնապաշտպանութեան գործին: Օգտուելով Սերոբի  
տիրական հմայքէն, անոր հետ միասին կը շրջէր գիւղէ-գիւղ, կը  
ցնցէր մեղկ, վեհերոտ բազմութիւնը, կը դատէր կուր ընդունակ  
տարրերը, կը ստեղծէր կոմիտէներու ցանց մը, որոնք կը կազ-  
մակերպէին ինքնապաշտպանութիւնը, կը հայթայթէր անոր հա-  
մար անհրաժեշտ նիւթական միջոցները, կը վարէր ներքին դա-  
տեր և այլն: Եւ ամենուրեք ժողովուրդը ընդառաջ կուգար յեղա-  
փոխական քարոզիչներուն, լաւ գիտնալով արհաւիրաց փորձե-  
րէն, թէ որպիսի թանկագին օգնութիւն էին քանի մը ընտիր  
հրացանաւորները ամբողջ շրջանի մը համար\*):

Սերոբ՝ անդուլ հետապնդումներէ ազատելու համար, ստիպ-  
ւած եղաւ, ի վերջոյ, թողնել հայրենի գաւառը և ապաւինեցաւ  
Սասնոյ լեռներուն, ուր շատոնց արդէն տարածւեր էր անոր գէնքի  
սիրագործութիւններու համբաւը: Իրեն ուղեկից էր իր քաջարի  
կինը — Սուէն: Լեռնաստանի Ֆէդայիներու փաղանգը գուրգու-  
րանքով ընդունեց զինքը որպէս պարագլուխ: Երկար կը լինէր  
ցուցադրել այստեղ նեմրութի ռազմիկին ամբողջ մարտական և  
վարչական գործունէութիւնը Սասունի մէջ: Կառավարութիւնը  
հոն ալ շարունակեց իր հետապնդումները՝ թանկագին որսը ձեռք  
ձգելու համար և շարժման մէջ դրաւ լրտեսներու ամբողջ բանակ  
մը: Կառավարական բոլոր դաւերը ապարդիւն անցան, մինչև որ  
հայ մարդու սևսիրտ դաւաճանութիւնը միջամտեց և ծուղակին  
մէջ առաւ հայոց լեռներու աներևոյթ տիտանը... Մէկ-երկու ցած  
հայերու մատնութեամբ թուրք իշխանութիւնները գտան վերջա-  
պէս հայուկի թաքստոցը — Կէլիէկուզան: Հոն էր ապաստանած



Սերորը ժամանակաւորապէս, և իրեն հետ էին կինը և 12 տարեկան դուստրը: Նոյն վարձկան Յուդաները թոյն հրամցուցին Ֆէդայիներու հրամանատարին... ծխախոտի միջոցով: Ապա եկաւ թշնամին, ամենէն արիւնարբու քիւրդ ցեղապետի մը — Պալիւլի — առաջնորդութեամբ և պաշարեց Կէլիէկուզանը:



Ս Ե Ր Ո Ր

1899ի աշնանային օր մըն էր, հայ շարժումներու պատմութեան ամենէն մոայլ օրերէն մէկը: Հերոսի շուրջը օդակ կազմեր էին մօտ 1500 զօրք ու քիւրդեր, Պալաքցի, Սիւնցի և այլ աշխրէթներէն: Պաշարումը կատարեցաւ յանկարծակի, գիշերով: Հայ ժողովուրդը ոչինչ գիտէր — գիտէին միայն ցածհողի մատնիչները: Փախուստի ոչ մի կարելիութիւն... Ռազմիկը շուրջ անձնատուր լինել առանց կուրի: Ի՞նչ փոյթ, թէ ունէր միայն բուռ մը կտրիճներ, ընդամենը 12 հողի և իր Սօսէն ու Յակոբիկը: Եւ մահառիթ թոյնն ալ արդէն ըրեր էր իր ազգեցութիւնը. աչքերը կը մթազնէին ու հազիւ կրնար շարժիլ: Երբ թշնամին բաւական կը մօտիկնայ, մեր զինուորները դուրս կը սլանան իրենց ապաստանած տունէն, երեք խումբի կը բաժնուին և հրացանաձգութիւնը կարկուտի պէս կը սկսի երկու կողմէն: 14 հողի—ընդդէմ 1500ի... Դիմադրութիւնը երկար չէր կարող տևել: Սերոր կը սպանուի: Սօսէն կառնէ անոր հրացանը և կը շարունակէ օրհասական կոչիւր: Կը նահատակին Աղբիւր-Սերորին հետ իր 12 տարեկան կորիւնը և երկու եղբայրները: Կը սպանուի և գիւղին տէր Քաջ քահանան: Սօսէն ալ, ի վերջոյ, գետին կը փուրի, ծանր վիրաւոր: Երեք-չորս հողի կը յաջողին փախչիլ: Իննը հայ նահատակներ և երկու տասնակ սպանուածներ ալ թշնամու կողմէն: Չնչին սփոփանք՝ ահաւոր կորուստին հանդէպ... Սօսէն, վիրաւոր, գերի տարան: Ռազմիկին գլուխը կտրեց ինքը գազան Պալիւլ և զրկեց Բաղէշ Սօսէին հետ միասին: Թշնամին կը ցնծար իսլամ ամբոխին հետ: Պրախճաններ սարքեցան մեծ յեղափոխականի կտրուած գլխուն շուրջ, որ ցցի հանեցաւ Բաղէշի մէջ, հայ ժողովուրդը ահաբեկելու համար...

Մանր էր կորուստը հայ ազատագրական շարժման համար: Դեռ նոր էր սպանուել Գուրգէնը, որու եղբրական վախճանը գրեթէ մահացու հարած մը տուաւ յեղափոխական գործին՝ Մշոյ դաշտին մէջ: Սերոր՝ սպանուած — ասես Տարօնոյ ժողովուրդը մէկէն ի մէկ գլխատեցաւ...  
Սակայն, հայոց ազատամարտի փառանքը անսպառ էր և անընկճելի: Անմեռ լեզունն էր հին, քաղաքակիրթ և ազատատենչ ժողովուրդի, որ չէր ուզեր պարտուիլ և որ ամենայն իրաւամբ կրնար կոչել Գարիբալդիներու թեւաւոր բարբառով.  
Noi siamo la sacra legione umana,  
Che lotta e non mai muore !  
Սպանուած առաջնորդին տեղը թափուր չմնաց: Սերորի դերը ստանձնեց — Անդրամիլ: Ոչ նւազ կտրիճ և ոչ նւազ կարող խելքով ու բնազդով: Մնեալ ռազմագէտ մը, քաջածանօթ Հայաստանի լեռ ու ձորերուն, անզուգական առաջնորդ ու հրամանատար, նոյնքան յանդուգն ու անվեհեր, որքան շրջահայեաց և հեռատես: Մուրատը — սերաստացին — վարպետօրէն բնորոշեր էր զայն.

\*) Մինչ մարդկային լեզունն ենք սրբազան, Որ կը կուրի եւ երբեք չի մեռնի:

— «Անդրանիկ աչք ունի»... Հա՛, սար ու ձորով կանցնինք խումբով, հրացաններս ուսերիս, և ամէն մէկս իր ճամբան կը քալէ, իսկ Անդրանիկ ամենքիս ճամբան. մենք անհող կերթանք, ան կը տեսնի, կը դիտի, կը պրպտի ամէն քար ու դար, ամէն ժայռ ու բլրակ, մացաւ ու պուրակ: Ոչինչ չի վրիպի նրա տեսողութիւնից: Եւ ինչ որ մի անգամ տեսաւ, էլ երբեք չի մոռնայ. թէ նոյն ճամբով յետ գալու լինինք, կուով ու նահանջելով, նա հրաշալի դիտէ, թէ մինչև ո՞ւր պիտի քաշուինք այս ինչ բլրին, թում-



ԿԱՆԳՆԱՐ՝ ԱՁԷՆ ՉԱՆ՝ ԴՈՒՐԱՏ. ԱՆԿԵՆՆԵԿ. ՍԵՊՈՒՆ: ՆՍՏԱՍ՝ ԱՁԷՆ ԵՐԿՐՈՐԻՔ՝ ԿԱՅԵՎԱԿ-ԱՌԿԵՆԷԼ. ԵՐՐՈՐԻՔ՝ ՏՐԱՊԵՊՈՆՅԻ ԱՌՕ:

բին հանդիպելու համար: Յետոյ, նա գիտէ աննման դիրք բռնել թշնամու գէմ. և միանգամ որ նա մեր տեղերը որոշեց կուից առաջ, այն ժայռի տակ, այս բլրի յետև, այն պուրակի ծոցում, ապա մենք գտաւէ ենք, որ դա լուսադոյնն է. ամբողջ օրը կրիւ կանենք և մեր դիրքերը միշտ լուսադոյնը կը մնան: Անդրանիկի հրամանին տակ կուիլը խաց ու պար է»...

Այդ և ուրիշ կարգ մը ատաւելութիւններու շնորհիւ, Անդրանիկի անձնական հմայքը հետոյ՛հետէ շեշտեցաւ. նա նւաճեց ամենալայն ժողովրդականութիւն ծարօնոյ մէջ, ուր սակայն քաջութեամբ իրմէ ետ չէին մնար ուրիշ գէմքեր, ինչպէս Գէորգ Չաւուշը, Սպարանայ Մակարը, ապա նոյն ինքը Մուրատը... Այդ հոյակապ Չաւուշը, որ արիութեան ու համես-

տութեան և տարեւտիպ մըն էր և իր կեանքը՝ խօլ արկածներու շարան մը... Այդ ահարկու Մակարը, որու ձայնի որոտներուն ունկնդիր էր ամբողջ «Սասնայ աշխարհը» և այդ միւս, աւելի խոնարհ, հարիւրաւոր կտրիճները, որոնք 1894էն մինչև Սասնոյ մեծ ապստամբութիւնը (1903-1904) ու անկէ յետոյ երկար տարիներ լեցուցեր են Դաշնակցութեան շարքերը, մաս մը հին ռազմիկներ, մեծաւ մասամբ նորընծաներ, վերամիտուած Հրայրի, Չաւուշի և այլ հին մարտիկներու զաղափարային աւագանին մէջ — Շէնրկցի Մանուկը, Ղաղարն ու Չօթօն, Մշեցի Տիգրանը, Եղօն ու Կրպօն, Ուրուխայ Արթինը, Դալէն ու Յակօն, Ախօն ու Մկրօն, Մօսօն ու Աճօն, Կայծակ-Վաղարշակը, Կոտոյի Հաճին, Առիւծ Աւազը, Աւրանաց Արամը, Ախջանի Ռուբէնը, Սուլուխցի Սերօրը — վաղը-Սերօրը, որ ամենէն սրտայոյզ կուին ունեցաւ իր երկու կորիւններուն հետ և ամենէն ցնցող նահատակութիւնը — Խնձորեկի Նաղօն, որ Սերօրի վրէժը լուծելու համար, գիշեր-ցերեկ զայլի պէս թուռ կուզար անտառներուն մէջ և կը շանթահարէր իր ձեռքն ընկած քիւրդերն ու հայ դաւաճանները — Մաշադի Աւետիսը, Աւօն ու Փարհատը, Արլարինջի Վարդանը, Քեաթառ Արշակը, Մօսկանցի Սիմօնը, Աշոտն ու Միսօն, Սմբատն ու Իսօն, Նշտանն ու Վարդանը, Սեղրակն ու Սարօն, Զուլում-աթն ու Աստուր, Բաղլչի Մուշեղը, Ռաշօն ու Ակէն, Յրոնքցի Մուրատը, Էլօն ու Միսկօն, Գեարուցի Ղաղարը, Եահուտի Բարսեղը, Ջնդօն ու Սէյդօն, Բալաբէխ Կարապետ, Գոմսի Կորիւնը, Ճարտար Յակօրը, Երկար Բարսեղը, Փրանկ Սահակը, Ջրից Համբարձումը, Քեռի Ղաղարը, Բաղլովայ Յովոն, Սոխտարայ Տիրանը, Մեղտի Սիսակը, Յիսովայ Արութը, Ավրանի Հայկը, Իսօն ու Ասօն, Գոմերի Յովիկը և Տէր Սարգիսը, Բեղարցի Պետօն, Կարինու Մկրտիչը, Մօկունաց Դաւօն, Տէտէվանուց Վարդանը, Բերդակի Ներսօն, Վարդենիսի Մարտիրոս, Իրմերզու Յովհաննը, Ալիգըլլունի Անդրանիկը, Ատոսցի Հրաչը, Գորբէցի Արշակը, Բաղադուրի Ղաղարը, Միսթարայ Օհանը, Զուլայ Արթինը, Փոթիկեան Արամը, Չաթօ և Փուրթօ, Զիթենաց Ըռզօ, Ալիջանցի Միսթար, Դուրանու Քեռին, Մշեցի Մուշօ, Սէմալայ Կրպօ և այլն և այլն:

Քանի՛ քանիսը կան, որոնց գործերը չեն իսկ յիշատակած մեր յեղափոխական դրականութեան մէջ: Քանի՛ քանիսը՝ որոնց անուններն անգամ մոռցած են յաւէտ... Շքեղ, լեռնական տիպարներ՝ որոնցմէ իւրաքանչիւրին կեանքը դիւցազնավէպ մըն է և վախճանը՝ զարհուրանք մը: Երբեք, անշուշտ, 2000ամեայ մեր

պատմութեան մէջ չենք ունեցած այդքան առատ ցանք ժողովրդական ճշմարիտ հերոսներու...

Մեզմէ քանի՞սը կը ճանչնան Շէնրկցի Մանուկը, հայ մեծատան այդ չնաչխարհիկ գաւակը... Կարդացէ՛ք սակայն, անոր հերոսական կառիէրի նկարագրութիւնը: Ի՛նչ վեհ հոգի այդ գեղջուկ երիտասարդին մէջ, ի՛նչ գեղեցիկ նկարագիր: Իր եղբրական մահէն քանի մ'օր առաջ, երբ ինքն ալ մեր միւս տղաներուն պէս սոված, տանջահար պառկեր էր Հարսնգոմերի ծառերուն տակ, Ռուբէն — ինքն ալ ղեկավար մեր ռազմիկ ուժերուն — հետաքրքրութենէ մղած՝ կը հարցնէ Մանուկին. «Ա՛յ, մարդ, դու ինչո՞ւ Փէդայի եղած ես, ինչո՞ւ համար կը տանջուիս»: «Պարո՛ն, կը պատասխանէ, ռոմը (թուրքը) ղուլում է»:

— «Լաւ, եթէ ռոմը ղուլում է, քեզի՞ ինչ. ձեր տունը հարուստ է... դուք ազատ էիք այդ ղուլումից»:

— Ծիշտ կըսես, պարոն, մենք աշիր էինք, ուժեղ, հարուստ էինք և ենք: Այդ իսկ պատճառով մենք ամենէն շատ պէտք է շարժարեւինք... Երբ Մարաթուկ կամ Ս. Կարապետ ուխտի գնան, մատաղացուի համար չեն ընտրեր ջոսոտ այծերին, անընդունելի է սուրբին համար. միշտ պէտք է ընտրել զոչ ու զլաւ խոյերին՝ ուխտի նպատակին հասնելու համար... Մեր աստուածը Հայոց ազատութիւնն է. աշիր և հարուստ հայերը ամենէն առաջ պէտք է մատուցէին այդ զոհարանին:

— Լաւ, բայց մատաղցու խոյը գոնէ մի բան կը ստանայ. նախ, լաւ կը կերակրեն, կը շոյեն ամենքը... և ճակատն ալ կը ներկեն... Դուն այդ հաճոյքներէն ալ զրկւած ես, փորդ անօթի, բոլորն ալ կը հալածեն քեզ, յաճախ քո մօտիկներդ. նշան ալ չկայ վրադ, միշտ հասարակ զինուոր ես, ինձի նման պարոն ալ չես ճանաչի:

Եւ Մանուկ կը պատասխանէ.

— Է՛հ, դատարկ բաներ են դրանք. թէ որ ամենքիս վերջը մի գերեզման է, մի տաք ղուրջուն (գնդակ), աշխարհի վարձքը անմիտ բան է»...

Ո՛րպիսի ջինջ փիլիսոփայութիւն այլասիրութեամբ և անվերապահ անձնուրացութեամբ...

Վարդապետն վէպ մը չէր, անշուշտ, Փէդայիներու ներքին կեանքը, քիչ-շատ խաղաղ օրերուն... Չենք ուզեր բնաւ իդէալացնել — անգամ այդ չքնաղ անձնուրացները: Համերաշխութիւնը միշտ կատարեալ չէր ազատութեան բանակին մէջ: Մարդիկ էին — և հայ մարդիկ — իրենց նախնական բարքերով

ու կիրքերով, իրենց կոպիտ նախապաշարումներով, որոնք ստէպ երկպառակութիւններ կը ծնէին... Ո՞ւր չեն եղեր նման բարքեր — փառասիրութիւն, ցուցամոլութիւն, իշխելու տենչ, նախանձ ու քէն, դաւ ու սադրանք — ո՞ր երկրի մէջ յեղափոխութեան ու ազատութեան անունով չեն նիւթեր նոյն իսկ ամենածանր յանցանքներ... Մեր ամենէն հոյակապ ռազմիկներն անպամ ունեցեր են թերացումներ ու սայթաքումներ և առատօրէն տուրք տւեր են հայ նահապետական կենցաղի պահանջներուն, հայ բարքերու դոհակութեան:

Գէորգ Չաւուշի հօրեղբայրը կը սիրահարւի Ագրիկցի աղջկայ մը վրա: Եւ օր մը Խսանք դաւառի Մկրտչի գիւղէն կուղեւորւի դէպի Սասուն՝ աղջիկը փախցնելու համար: Հաւար կընկնի և կը ձերբակալուի երկու «յանցաւորները» մերոնց ձեռքով ու կը բերին Սերոբի մօտ, իրրեւ յեղափոխական աստղնորդի՝ Դատուրի համար: Սերոբ պատասխանատուութեան կը կոչէ նոյնինքը Գէորգ Չաւուշը և ժողովուրդին առջև նախատէ զայն. «Ինչպէ՞ս կը լինի, որ դու ամենահին զինուորային զինն, թոյլ կուտաս, որ հօրեղբայրդ կնիկ փախցնէ Սասնոյ աշխարհէն»: Եւ Գէորգ կը պատասխանէ.

— Դու մեծն ես այս երկրի, դատ ու դատաստան քո ձեռքին. ինչպէ՞ս կուղես, արա:

Բայց Սերոբ բարկացած կը շարունակէ իր նախատինքը. «Գէորգ, Փսանայ սոսան, ինչպէ՞ս համարձակի դալ այստեղ և Սասունէն աղջիկ փախցնել, եթէ խորհուրդ ստացած չլինէր քեզմէ: Եթէ դատ ու դատաստան իմ ձեռքն է, ես կըսեմ քեզ. դնա՛ ու դատէ»...

Գէորգ, ստանց պատասխանի, դուրս կելլէ, շտապ քայլերով կերթայ դէպի այն տունը, ուր բանտարկւած էին հօրեղբայրն ու կինը և ստանց խօսք մ'իսկ բսելու, հրացանը կուզէ հօրեղբոր կուրծքին ու մէկ հարեւածով զեռին կը զլորէ: Ուրիշ զնդակ մ'ալ կուտայ սարսափահար կնկան ձակտին և հրացանը վիզը ձգելով, կը հետանայ դէպի Հարսնգոմերի բլրակները՝ սղբալու համար իր սիրելի ու անմեղ հօրեղբոր մահը...

Այս տխուր դէպքը և Սերոբի վարմունքը խոր դժգոհութիւն յարուցին Փէդայիներու մէկ մասին մէջ, ոմանք բմբոստացան աստղնորդին դէմ, ձյտեցին վարկարեկ ընել զայն, և Սերոբ, ներքին համերաշխութիւնը վերահաստատելու համար, որոշեց հեռա-

ցընել հակառակորդ ուժերը ու պահել միայն իրեն համակիր Ֆէդայիները: Այդ իսկ նպատակով գինաթափ ըրաւ Անդրանիկը և



Գ Ե Ո Ր Գ Զ Ա Ի Ո Ի Շ

անոր խումբ մը զինուորները՝ դանոնք յարմար ատեն արտասահման զրկելու համար:

Ո՛չ, սուրբեր ու հրեշտակներ չէին ջան-Ֆէդաները և դրախտարոյր հովերգութիւն մը չէր անոնց կեանքը (չէ եղած

այդպէս և ոչ մի ուրիշ տեղ) և խաղաղ օրերուն ստէպ նոյն իսկ դժգոհութիւն ու գանգատներ կը յարուցանէին ժողովուրդի մէջ: Բայց բոլոր մարդկային թերութիւններով հանդերձ՝ անոնք դարձեալ պաշտելի էին ժողովուրդին համար, թէկուզ միայն այն պատճառով, որ անձնուրացի, ուխտեալի կոչումն ունէին, ամենքը կանխօրէն զոհաբերած ժողովրդական դատին, ամենքը պատրաստ նետուելու արիւնի ու կրակի մէջ, ամենքը գիտակից թեկնածուներ վաղաժամ, անխուսափելի մահուան...

Եւ ի՞նչ դատան, սպարտական դպրոց մը... Գիւղի պարզ, անուս մարդիկ — անոնք գիտէին իրենց անազատ միջավայրի դժնդակ պայմաններում, ինքնակրթութեամբ, խօլ արկածներու ճամբուն վրա, սորվիլ կուի արւեստը, այն բոլոր ռազմական յատկութիւններն ու հնարքները, որոնք կը վաստակին բարձր ազգերու մօտ, տարիներով, ախորքսմէնական և զինուորական վարժարաններուն մէջ: Ի՞նչ դիւթական ոյժ մըն էր հայրենիքի և ազատութեան սէրը, որ անպրագէտ գեղջուկներուն մէջ կը մշակէր այդքան բարձր առաքինութիւններ, — այդ սրտաշարժ հնազանդութիւնը հեղինակաւոր ընկերներու, զինակիցներու հանդէպ, այդ խոր յարգանքը դէպի սուաջնորդը, դէպի Կուսակցութիւնն ու հաւաքական գործը...

Հսկայ Մակարը, որ վերը Ասուած կը ձանձնար, վարը՝ Յեղափոխական Կազմակերպութիւնը և որու համար զէնքէ զրկելը մեծագոյնն էր անարդանքներէն, թոյլ կուտայ սակայն — մանկական խոնարհութեամբ և մանուկի պէս հեկեկալով — որ Կուսակցութեան լիազօրը իբրև պատիժ, իր մէկ պարտադանցութեան համար, հանդիսաւոր կերպով գինաթափ ընէ զինքը:

Տեսարանը այնքան յուզիչ է, որ կարծէ նկարագրել փոքր ինչ մանրամասնօրէն: 1904ի փոթորկալից պէպքերէն ու հարւածներէն յետոյ, տագնապ կապրէր Ֆէդայիներու փոքրիկ բանակը: Երկպառակութիւն կար շարքերուն մէջ: Հրայրի, Վահանի սպանութենէն և Անդրանիկի ու խումբի հեռանալէն վերջ, Գէորդ Չաւուշ ձանձցած էր որպէս զեկավար, հրամանատար: Բայց դժգոհութիւն կար անոր դէմ: Սկսեր էր պակսիլ աւանդական հնազանդութիւնը մեծաւորի հանդէպ: Պայեր էին մասնաւորապէս Մակարի և Գէորդի յարարութիւնները: Ասաջնակարգ Ֆէդայիներէն Շէնրիկի Ղազարն ու Մանուկը, Չօլօն ու Գալօն, որ Գէորդի էին ընկերներն էին, չէին կատարեր այլ ես անոր հրամանները և կը թեքէին Մակարի կողմը: Վէճը հեռագնակ կը բարբաթեր Գէորդի ու Մակարի միջև: Կային սկզբունքի և անձի հակասակութիւններ: Հինաւուրց, արեգարդ Ֆէդային — Սպապանաց Մակա-



բր — որ իշխան մըն էր և խիստ ազդեցիկ սասունցիներու մէջ, դրեթէ լմբոստ էր Գէորգի հանդէպ և ամենուրեք կը քննադատէր անոր գործերը: Միամիտ, անուս, նեց աշխարհայեացքի տէր, մարդը կապրէր ֆէզայիի հին աւանդութիւններով. չէր հանդուրժեր, որ Գէորգը շատ մը քայլեր կընէր ատանց իր խորհուրդին: Կը պահանջէր, որ նա միշտ շարժի ընկերներուն հետ համախորհուրդ: Կը դժգոհէր նաև, թէ Գէորգը դուրս ելած էր կուսակցական աւանդութիւններէն և ամուսնացած էր հակառակ ընկերներու սրտման: Չէ՛ որ ժամանակին Գէորգը ինքը հակառակ էր Սերոբին, որ ընտանիքով Փէդայութիւն կընէր... Այժմ ինքը նոյնը կընէր: Այդպիսի մէկը չէր կարող զեկավար լինել, ըստ Մակարի: Վերջապէս Գէորգ անդգոյշ էր, յաճախ ձիով կը պտտէր — մինչ ֆէզային ստքով շրջելու է, անվտանգ մնալու համար — ապա Գէորգը շատ կը հաւատար քիւրդ բէկերուն և այլն և այլն: Այդ բոլորի դէմ կը բողոքէր Մակար և անոր քննադատութիւններուն մէջ կար ճշմարտութեան բաժին մը: Կար և կիրք ու շարժանցութիւն:

Այսպէս թէ այնպէս, վէճը բաւական սուր կերպարանք առեր էր և գէշ կաղզէր ժողովուրդի վրա, մինչ թշնամին կուրախանար: Պէտք էր լուծել այդ վէճը և վերականգնել կարգապահութիւնը: Եւ ահա հաւաքուած են Ղըզըլազաճի անտառին մէջ շուրջ 80 Փէդայիներ և 10ի մօտ ծպտեալ զինւորներ: Ծանր էր կուսակցութեան լիազօրի պաշտօնը, զոր ստանձնէր էր նորեկ Ռուբէն: Թողունք, որ ինքը խօսի.

— «Իմ զրութիւնը շատ ծանր էր. անջնա կանգնած են մարդիկ, որոնք իրենց անցնալով կարող էին զիս իրենց դրօշմանը կոխել և իրենց քաջութեամբ ու ազդեցութեամբ մղոններով բարձր էին ինձմէ: Հրաժարիլ միջամտութենէ, պիտի նշանակէր ծածկել վէրքերը և խորացնել, ինչպէս նաև ցոյց տալ իմ թուլութիւնը... Փէդայիները որքան որ կը սիրեն իրենց մեծաւորը, նոյնքան և կը սոսկան անկէ: Անոնք զիտեն, որ մեծաւորը կը սիրէ զիրենք, բայց դաժան, անողոք է իր հրամանը չկատարողին հանդէպ: Մանաւանդ վտանգի ժամանակ խմբապետը խիստ կարուկ է ու անողոք. ան կը սպանէ առանց վարանման իր հրամանին անսաստողը: Ծայր աստիճանի բռնութիւնը և ծայր աստիճանի հաւասարութիւնը իրարու հետ խառնուած ներդաշնակութիւն են ստեղծած Փէդայիներու ընտանիքին մէջ...

«Որոշեցի միջամտել... և գործել կարուկ ու վճռական, եթէ նոյն իսկ կարգադրութիւններս սխալ ըլլային... Կը դրայի, որ Մակարի ու Գէորգի վէճին լուծումէն կախած էր շատ բան... Չեմ յիշեր ինչքան երկար խօսեցայ... ահա եզրակացութիւնս. «Երբ դուք բոլորը կը տեսնէք, թէ այս երկպառակութիւնն կը վնասի ֆէզայական կեանքը, որմէ կը տուժէ միութիւնը և ժողովուրդի հաւատը զեկի ֆէզային... Ապա այս բոլորի պատճառ Մպաղանաց Մակարը պիտի պատժուի զինւորական կարգով, իբր

ըմբոստ իր զեկավարին հանդէպ... Ու դառնալով Մակարին, կէս շրջանքով, կէս սպառնական ըսի. «Թէ որ դուն Մակարն ես Սպաղանաց, որ քսան տարիէ աւելի գէնք է շարկած, թէ որ դուն ես նախանձարինդի ֆէզայիի պատուին ու կարգապահութեան, ապա իբր օրինակ, դուն իսկ քո ձեռքովդ պիտի պատժուիս, ուստի քանդի՛ր գէնքերդ ու ինձ յանձնիր»:

«Եթէ ճիշտ է, որ վագրին ու ասլանին երգն ու նւագը կը գսպեն, ապա Փէդային ալ կընկճուի գեղեցիկ խօսքերէ, անդարձ վճուի ձեռով արտասանուած: Սպաղանաց Մակար ոտքի է կանգնած. անոր հոյակապ հասակն ու կեցածքը պատկեր մըն է շքեղ անտառի լուսթեան մէջ... Գլուխը խոշոր, սպիտակով պատած... աչքերը մեծ մեծ, արիւնով լեցած. վիշտ ու կատաղութիւն մրցման են ելած, շրթունքները դեղնած կը դողան: Բայց լուռ է Մակար: Անձայն ձեռքերը կը տանի կողքին և կը քանդէ իր ատրճանակը, սպիտակ խենչալը, մոսին հրացանը՝ Գուրգէնի յիշատակ, իր պատուոնդաշները տասնեակ տարիներ պատուով պահպանած. կը համբուրէ զանոնք մէկիկ-մէկիկ և յանդիմանական նայածքով կը բերէ կը թափէ առաջս: Սպաղանաց Մակար գիտնաթափ է եղած: Ով որ Փէդայի եղած է, ան կը հասկնայ թէ ինչ կը նշանակէ գինաթափ ըլլալ. սա արեւնաբարձր ու դաժան վճիռն է, աւելի ծանր քան մահը:

«Բոլորս ալ, Գէորգ Չաւուշն ևս, խորապէս զգածուած ենք... Դառնալով դէպի Մակարը և անոր կողմնակից ընկերները, ըսի. — «Քանի որ, Մակար, դու բարձր պահեսցիր և կատարեցիր յեղափոխութեան ու ազգի հրամանը, այժմ նոյն պատիժը պէտք է լինի միւս զինւորներու վերաբերմամբ, յանուն ազգութեան»: Շէնրկի Ղազար և Լաճկանցի Արթին իրենք իրենց գինաթափ եղան: Իսկ Շէնրկցի Մանուկ, որպէս կատողած վագր, ամուր բրոնած իր հրացանը, հեծկտացող ձայնով կաղերսէ. «գէնքս չը ի տայ. գնդակ մը տուր էսա ճակատիս. դու իմ պատուի հետ հորթ կը խաղաս»: Սպաղանաց Մակարը աչքերը կը չոյն Մանուկի վրա. յանկարծ հրացան մը կը վերցնէ մօտի ընկերէն և կը մօտենայ հպարտ Մանուկին. դոնդաղով հարուած մը կիջեցնէ թիկունքին և հրացանը խլելով կը բերէ կը դնէ առջևս: Այնուհետև, քաշելով ծառերու տակ, վիրաւոր եղնիկի նման, հօնգուր-հօնգուր արտասուք կը թափէ, իր զինւորներուն գլուխները իր կուրծքին քաշած:

«Տեսարանը խիստ յուզիչ է: Կարտասուէ և Գէորգ Չաւուշ, որ այլ ևս չգիմանալով, կը մօտենայ Մակարին ու անոր վիզէն փաթթուած, միասին կուլան... Այդ դէպքը բոլոր Փէդայիները միացուց, մէկ հոգի դարձուց: Բոլորն ալ գուրգուրանքով իրարու փարեցան... Մէկ ժամ յետոյ, Գէորգն է, որ կը պահանջէ.

— «Եղածն եղած է, պատիժը բաւ է, գէնքերը դարձուր... վճուեցաւ որ Մակար երկու օր առանց խենչալի անցնէ, միւսները երկու շաբաթ, իսկ Մանուկ ամբողջ մէկ ամիս ծպտեալ պիտի մնայ»...



Հայ բազմաթիւ մասնիչներ ու դաւաճաններ մորթուեցան անխնայ, վայրագօրէն, Երբեմն ամբողջ ընտանիքներ խողխողեցան... Յեղափոխութեան ճամբան, աւա՛ղ, չէ եղերած վարդի թուփերով — կրքի խօլ բռնկումներուն գոհարեւած են ստէպ անմեղներ... Բայց հայկական փոխ-փրէժի գլխաւոր աքտը հայ դաւաճաններու կոտորածը չէր: Կար բուն գահիճը—աշիրեթապետ Խալիլը: Նա էր, որ կտրեր էր Սերորի գլուխը\*) և ցցի հաներ Բաղէշի մէջ: Նա էր, որ Սպաղանքը հիմնադրուեց կործաներ էր և բազմաթիւ հայեր ջարդեր: Նա՛ էր, որ իր հայաջինջ սխրագործութիւններու համար, արտակարգ պատիւներու արժանացեր էր թուրք կառավարութեան մօտ և շքանշաններ ստացեր օսմանեան փատիշահէն: Մուսա պէյի տիպարով գազան մըն էր, Սասնոյ ջիւղը ցեղապետներու մէջ դուցէ ամենէն փայլողը, որ իր ատելութիւնը հայոց դէմ կը գործադրէր զարհուրելի սճիւրներով՝ անգամ ձերբերու, կիներու, մանուկներու դէմ: Հայ եկեղեցական մըն է, որ կը նկարագրէ այդ արիւնարբու դահիճը... Հանդուցեալ Չիլիսիիերեան եպիսկոպոսը, որ այն ատեն Բաղէշի տաճարը էր և հետագային արձանագրեր է իր յուշագրքին մէջ ֆէլգայիներու շարք մը գործերը, որոնք իրենց մանրամասներով ծանօթ էին ողջ Տարօնոյ հայութեան.

«Տեսնելու էր այդ ջիւղը գագանին սոնրայումը, Երբ սուրթանին շքանշանը իր կուրծքին՝ շքապատուած իր մարդերով, կուզար Մուշ, կերթար գոտր և կը բազմէր միւթկտարֆին քով: Իր թիւաւոր և մեղաւոր հազարատին թափթփածութիւնը, իր խոչոր-խոչոր աչքերը արեւն սեղան գլմբի մը խոտաններուն մէջ, լեցան ատելութեամբ և արիւնով, խոյի մաղերուն պէս շտամնած իր պիտերը կուէցնէին իր գլմբին փայլապ գիծերուն խտութիւնը... Հեծեալ և գինեալ մարդոց խումբով կատարատակէր միշտ և կը յոխորտար, թէ ինքը փախցոյ մը չէր ֆէլգայիներէն և կուզէր հանդիպիլ անոնց անպամ մը... Եւ իրօք օր մըն ալ հանդիպեցաւ...»

1899ի աշնան Երեկոյ մըն էր: Իմաց տրուած էր Անդրանիկի, թէ Պալի պիտի անցնէր Մուշի Պատկուզնի գէպի Ս. Աղբերիկ Երկարոյ կիճաստ կիրճէն, որու խորէն օձադատյա կը սողսակի հեռակալի ճամբայ մը: Անդրանիկ սաստիկ կը տատայեր յօգացաւ: Հալիւ կը բայէր, կրթնելով իր գինուրներուն... Իջան ճամբու եզերք և ընտրեցին այնպիսի վիրքեր՝ իրարմէ հետու՝ որոնք հաստատրապէս կը տիրէին այդ ճամբուն, այնպէս որ կարելի

\*) Իրեն գործակից էր Հիւսէյին պան, նոյնպէս սպանած մերկներու ձեռքով:

չէր, որ անցորդ մը վրիպէր գնդակէ: Անդրանիկ և իր մարդիկ անտեսանելի էին ժայռերու և ծառերու ետև: Ամէն կողմ լուծիւն կը պատէր, խորունկ, ահաւոր խաղաղութիւն մը կը ծանրանար կիրճին մէջ:

Լսեցաւ ձիերու քայլածքին դոփիւնը: Քիւրդ ցեղապետը իր ամենէն հուժկու 13-14 ձիաւորներով կը քայլէր: Պալիլ հեծած էր գորշ դրաստի մը վրա, գեղեցիկ էր մը, գոր բունի առած էր Սասնոյ կովի գիւղի ոչն Խըջօ Արէշի ձեռքէն: Պատակցելով կերթային և կը խօսէին ֆէլգայիներու հանդիպելու հաւանակութեան վրա, այնքան կասկածանքով, որ Պալիլ կը ջանար քաջալերել իր մարդիկը և կը յոխորտար, թէ ոչ ոք պիտի յանդգնէր իր դէմ ելլել... Պատակցութիւնը բաւական բարձր ձայնով էր, ըստ լեռնցիներու սովորութեան և յստակօրէն կը հասնէր Անդրանիկի խումբին: Պալիլի հեծելախումբը կամաց-կամաց կը հասնէր այն կէտերուն, ուր հայ ֆէլգայիներ բռնած էին իրենց դիրքերը: Անդրանիկ տուաւ նշանը և ահա շնդակ մը\*) սուր սուլիւնով յանկարծակիի բերաւ յոխորտացող ցեղապետը:

Գնդակները յաջորդեցին իրարու: Պատուաշուքեալ Պալիլի հեծելախումբը նեղ ճամբու վրա և խոյս տուաւ: Պալիլ ինկաւ ձիէն... Տղերքը վաղեցին և ցեղապետը բերին Անդրանիկի առջև:

Պօք տանք այժմ Անդրանիկին, որ իր ընդարձակ յուշագրքին մէջ չէ մոռցած, ի հարկէ, այդ նշանաւոր դրաւը:

— «Որչափ կարելի է, թախ, պէտք է աշխատիլ ողջ բռնել, որպէս զի կրնանք հարցաքննել, թէ իր հայ լրտեսները որո՞նք են եղած մինչև հիմա... Ժամը 3½ն էր. երկու հայու առաջնորդութեամբ, 15 աւանակ բարձած, Պալիլի ջիւղը կը տանէին հայերից հաւաքած իւղ, բուլղուր, և այլն... Երբ Պալիլը գիւղէն ճանապարհ պիտի ընկնի եղեր, ձին կը սկսի փէքոր ընել, մի ազուաւ ալ կը սկսի կռուալ: Պալիլ կրտէ իր խուլամներուն. «Էսօր մեր առաջ փորձանք մը կայ, ձիս փէքոր կրնէ, ազուան ալ կը կռկոյալ»: Պուլամները կրտեն. «Աղա՛, ո՞վ պիտի ըլլայ առաջը, երթանք»...

Մէյ մ'ալ տեսանք՝ հեռուէն ձիու գլուխը երեւաց... Մի մի հաւտ ձիուն դարկինք... Բոպէ մը շտեւեղ ձին ընկաւ: Պալիլի ոտքը մնաց ձիուն տակ, զինի մէջ: Նա մեղնից 400 քայլ հեռու էր: Վաղեցինք, բռնեցինք Պալիլին: Նրան նստեցուցի և տի Գալէի ձեռքը: Էդ ատեն ուղեցի խանջալովս դարնել, մոռցեր էի, որ պայմանաւորուած էինք հարցաքննութիւն ընելու: Մակար, Գեւորդ, Յարութիւն հեռուից պոռացին. «Բան պիտի հարցնենք, մի՛ դարնիր»: Սպասեցի մինչև էնոնց գալը:

\*) Սպաղանաց Մակարն էր հեռուէն հեռու արձակողը — սոսնց սեւէ սողանալով. ազուներն խրաքանչիւրը կը փութաւ իր ձեռքով որսալ ահարկու հրոսակապետը: Մ. Վ.

Գևորգ, Յարութիւն բռնեցին Պալիլի թւերից, ես բռնած էի գլխու երկար մազերէն: Յարութիւն հարցուց (քրդերէն).

— Պալիլ դը բէժէն դո՞ւ է:

(Պալիլ որ կըսեն, դո՞ւն ես):

Պալիլ կը պատասխանէ.

— Հըլ հարիա ազըմ (այո՛, ես եմ):

— Սարը Սերոփ փաշա դու շարժէքը, դու խար խեստաբ քը: (Սերոփ փաշայի դուխը դո՞ւն կտրեցիր):

— Դո՞ւն էիր, որ Սպաղանք քանդեցիր...

Պալիլ ձայն չէր հաներ, պատասխան չէր տար:

— Ովքե՞ր էին հայ լրտեսներդ: Նա միայն կըցաւ ըսել.

— Բասը, բասը, իշխուլումը թամամ բըր:

(Բաւ է, բաւ է, այ դարձս լմնցած է):

Գևորգ, Յարութիւն երկու կողմից դարկին երկու խանջաւ, ես կարեցի գլուխը, սրով՝նուս կը շտապէինք, հաւարը հասնելու էր:

Պալիլը վիզը կախած ունէր մի համայիլ՝ կախարդական բան, սրպէսպի դնդակը շրտնէ իրեն... Վրան ունէր սուլթանէն ստացած պատուանշտնր, որ այժմ Դրոշալի խմբադրատանն է»...

Այդ սպանութեան համար ամբողջ Սասունի և Դաշտի ժողովուրդը սերախութեան մէջ էր...

Իսկ Զիլինկերեան սրբազանը կը գրէ.

« Հայակեր քիւրտին գլխատումը ախիրերան ըրաւ Մշոյ թուրք կառավարութիւնը և պահ մը խաղաղութիւն բերաւ խոչտանդած Սասունի»:

\* \* \*

Պատմենք այժմ համառօտակի Ֆէդայական մի այլ դրամա, որու թատերաբեմն էր հայոց հինաւորաց փանրերէն մէկը և որն ունեցաւ իր արձագանգները նաև Եւրոպայում: Հայ անձնուրացներու յուսահատական թռիչքներէն մէկին էր, ծնունդ անել, դժոխային կացութեան մը:

Ասանոյ շարջը կը խտանային հեղհեղ շարադուշակ ամպերը: Հայոց գլխաւորութեան միջնարեղը խորտակելու համար կառավարութիւնը կը ջանար իսպառ մեկուսացնել զայն հայ աշխարհէն, կտրել զայն Մշոյ դաշտէն:

1901թ. աշունն է: Թուրք զօրքերը և մուհաճիքները դրաւեր են Դաշտի բազմաթիւ հայ գիւղեր, ալան-թալանի կենթարկին ժողովուրդը. տեղի կունենան սանձարձակ բռնութիւններ, սպանութիւնները համաճարակի բնոյթ կը ստանան: Ռուս հիւպատոս

Ումանսկի, գիշակեր թռչունի նման կը շրջի ամէն կողմ և կը ջանայ յուսահատ հայութիւնը օրթոտոքսութեան գիրկը նետել:

Այդ օրերուն մեր ռազմիկներու մէկ մասը հաւաքած Մուշ քաղաքին մէջ, ելք կը փնտրեն ծանր կացութենէն: Կոտոյի Հաջին, որ շատ չէր սիրւած իր քանի մը թերութիւններու պատճառով, բայց որ մեր քաջ, անձնէր գործիչներէն էր, խելօք, յանդուգն ճարպիկ, կառավարիչ քանի մը խիզախ ծրագիրներ: Մէկը, որ ընդհանուր հաւանութիւն գտաւ, հետեւեալն է.—Յեղափոխականները կորոչեն՝ պաշարել Առաքելոց վանքին մէջ և, պաշտպանելով անոր բերդաման պարիսպներու ետևը, կռիւ մղել երկար ատեն: Այդ միջոցով յոյս ունէին սթափեցնել ժողովուրդը, սիրտ տալ անոր, որ հրաժարի կրօնափոխ լինելու գաղափարէն: Կը խորհէին նաև, թէ դէպքը աղմուկ պիտի հանէր Եւրոպայի մէջ և ատոր հետեւնքով թուրք կառավարութիւնը կրնար մեղմել իր հալածանքը:

«Ժողովուրդը յուսահատած, օրթոտոքսութեան դիմած է: Չորս կողմերնիս մատնիչով լեցւած: Փոխանակ երթալու Դաշտ մեռնելու, հոս կը մնանք (վանքին մէջ), կը կուրծք ու կը մեռնինք»... Այսպէս կը գրէ Անդրանիկ իր յուշերուն մէջ:

Բաւականաչափ դէնք ու ռազմամթերքով Ֆէդայիները կամբանան վանքի մէջ: Ծուրջ 60 հոգի՝ Ֆէդայի, շալակաւոր և այլն: Ատկէ դատ՝ միարանները և 40-50 որբ երեխաներ: Վանքի ամուր դռները կը դոցւին և դերքերը կը բաժնւին: Գլխաւոր ղեկավարը Անդրանիկն է, անոր հետ է Գէորգ Չաւուշ: Զօրքերը կուգան շուտով, վանքը կը սլաշարւի: Մերիները գնդակներու տարափ կը տեղան և թշնամին կը ստիպւի փոքր ինչ յետ քաշել, վանքի հաստ պատերէն հեռու: Եւ կը սկսին բանակցութիւնները կողմերու միջև... Տեսարանը կը յիշեցնէ Բանկ Օտոմանի գրաւումը: Միջնորդը՝ վանահայրն է, Յովհաննէս վարդապետը, որ կը բերէ մերիներուն Մուշի միւթեսարիֆի սպանադին նամակները: Եւրոքը շարունակ անցուդարձին իրազեկ էր և կը տեղար իր հեռագրական հրամանները: Ի վերջոյ, սուլթանական բանագնացները եկան մերիներու պահանջմամբ պաշտօնապէս խօսելու և ընդունեցան վանքին մէջ: Թուրք կառավարութիւնը կը սլահանջէր Ֆէդայիներէն անձնատուր լինել: Անդրանիկ կը պատասխանէ.

— Երբ Մայիսեան ծրագրի ռէֆորմները երկրի մէջ մտնեն, մենք այն ատեն էստեղից դուրս կը գանք... Գիտցէք, որ վեց ամիս կոււելու ոյժ ունիմ: Եթէ կուգէք, թողանօթ բերէք գարկէք:



Մինչև ձեր ներս գալը ձեզնեկ հաղարատորներ կը սպանին, սպա միայն կրնաք մեկ յաղթել: Իսկ մենք որ օրը որ հրացան տուր ենք, այն օրէն զխոցեր ենք մեր մեռնիլը: Այսչափ տարի դուք լսած էք քիւրդ մը, կարաւան մը թալանելու կամ փոստ մը դարնելու (բախն՝ չէ): Լսած էք անմեկ քիւրդ մը կամ թուրք մը սպանելին: Էն մարդը, որ մեզի վնաս կը հասցնէ, քոստուն տարի ալ անցնի, մեր վրէժը կտանենք: Եթէ մենք ինքներս չկրնանք վրէժնիս առնել, մեզմէլ յետոյ եկող ջան Փէզայիները կտանեն իրենց բնակիւններու վրէժը»<sup>6</sup> :

Մալխոսան ծրարի ուժգոյններէն գտած՝ Փէզայիները ատա- ջարկեցին սուլթանի կատարարութեանը շարք մը գործնական պահանջներ, զիւրաւ իրադրծելի:

— Ազատ արձակել քաղաքական բանտարկեալները: Պատմել Ապագանքի և այլ քանի մը վայրերու աւերոյցներն ու կոտորոյ- ները և հասուցում տալ վնասած զիւրերուն: Եւ այլն:

Երբորքը, բնականաբար, խոյ սկանջ րբաւ: Սատարագամը, ճարահատակ, հայոց պատրիարքարանի միջոցով ատաջարկեց Փէզայիներուն անձնատուր լինիլ, խոստանալով ներման արժա- նացնել զանոնք և զոհասցում տալ անոնց պահանջներուն: Մերիննե- րը, իրաւամբ կատկածելով, որ նենց թշնամին, խորխրելով կու- գէ միայն զիրենք ձերբակալել, կը սկսին միջոցներ ձեռք առնել՝ վանքէն անվտանգ դուրս ելնելու համար: Մանր վայրկեաններ էին: Վիրաւոր զինուոր մը կար ներսը, մահամերձ վիճակի մէջ: Ուրուփայ Յարութիւնն էր (Արթինը), մեր յատուցն հայրուկ- ներէն մին, որ մասնակցեր էր Գէորդ Չաւուշի բոյսը արկածնե- րուն և սիրած էր ամենքէն: Դուրս ելնելու խիզախ ծրարի իրա- գործումը այդ պատճառով կը ձգձգէր: Քսան օր արդէն անցեր էր պաշարումի օրէն: Վերջացաւ զժրախտ հայրուկի հոգեվարքը: Հոցին յանձնեցին մանքի մէջ Արթինի զխակը և պատրաստեցան քաչելու զէպի սպաս լեռները, զիչեր ասուն, գորքի չզխան կարե- րով: Հայոց հերոսամարտի ամենէն գրամատիկ վայրկեաններէն է... Արիւթիւնը միայն կուրս մէջ չէ, այլ և ճարպիկօրէն խոստովելու թշնամու գերակշռող սովերուն առջի գրեթէ ան- խոստովելի մահան վտանգով...

Պաշարման ճիշտ Չարդ զիչերը, նոյնմըրեւան ձիւն ու բու- րին կորսնէն դուրս ելնել վանքէն՝ խնդրելով միարաններէն և

<sup>6</sup> Անդրանիկ, Յուշեր:

որբերէն չհետեւիլ իրենց: Բայց նախքան դուրս գալը, կը հագնին եկեղեցու երկար ճերմակ շապիկներ: (Ձիւնը իջած էր ամենուրեք, սողաք կը յուսային այդպիսով աննկատելի լինիլ պահակներուն):

Հրամանատարը կուտայ պէտք եղած հրահանգները. սողաք կը բաժնուին խումբերու. յառաջապահ, յետնապահ և այլն: Առ- ջևէն՝ պիտի քալէին Հաճի և Բարսեղ: Ետքը՝ Անդրանիկ, Գէորդ և ուրիշ քանի մը տղաներ: Ամենէն ետքը՝ Վաղարշակ, Սարգիս: Մաս մը կը ճամբին այլ և այլ ուղղութիւններով ու կը պայմա- նաւորին վերջը հաւաքելի բարձր դիրք ունեցող մարազի մը մէջ:

Եւ փոքրիկ վաշտը կը շարժի լուռ, անչուկ: Իբր թէ թուրք զինուորներ են... Շուտով կը հանդիպին առաջին թուրք պահա- կին, որ կը փորձէ կանգնեցնել տղաները, բայց վախէն լուռ կը մնայ: Քամին ու բուքը կարգիլեն թուրքերուն լաւ հետեւիլ Փէ- դայիներու շարժումներուն: Սակայն, երբ սողաք կը մօտենան նոր պահակներու, Դաւթի քարերուն մօտ, գաղտնիքը կը բացւի: Չօրքը կը սկսի կրակել, պոռալ:

— Վաշտըլա՛ր, ջան ֆիտայիլար, զաշտըլա՛ր:

Բայց արդէն ուշ էր: Վանքի կուրներու ընթացքին մենք կորսնցուցինք չորս ընկեր, իսկ թշնամին, ըստ Անդրանիկի, 12 զինուոր և 2 սպայ: Բայց թուրքերու մեծ կորուստները յայտնե- ցան դէպքէն յետոյ:

Չօրքերը տիֆով բռնեցան, օրական 20-30 հոգի կը մեռ- նէին... Պուլէն եկած բժիշկը քննեց, ըսաւ, որ շատերու թոքերն աւրւած են:

Առաքելոց վանքի երեք շարաթևան դիմադրութիւնը և հայ- դուկներու յաջող նահանջը սիրտ տւին ու նոր յոյսեր ներշնչեցին Դուրան-Բարձրաւանդակի ժողովուրդին:

\* \* \*

Դաշնակցութեան փոքրիկ բանակը Սասնոյ մէջ կ'աճէր հետզհետէ: Կազմակերպութեան գործին ուժեղ սատար եղաւ Վահանը (Մանուէլեան), որ իբրեւ Կուսակցութեան լիազօր, եկաւ ստանձնելու գործերու ղեկը: Անցեր էր Վանէն, տեսակցեր էր Վարդգէսի՛ն հետ, որ այն ատենները ղեկավարն էր Վասպու- րականի ուժերուն: Կատարւեր էր, Հրայրի մասնակցութեամբ, ընկերներու խորհրդակցութիւն մը Վասպուրականի և Տարօնի ուժերուն ապագայ գործունէութեան մասին. ապա Վահան կը

մեկնի գէպի Սասուն, ուր յանուն Դաշնակցութեան կը հաստատուեալ մը գինւորական գիկտատորութիւն: Դիկտատորի կեցածք մըն ալ առաւ, կը պահէր լեռներու մշուշին մէջ, խորհրդաւորութեամբ շրջապատւած, մատչելի միայն սակաւաթիւ պարտազուխներուն: Արդէն իսկ պարզ լեռնականներու աչքին Կոստակցութեան գերագոյն ներկայացուցիչը խորհրդաւոր վեհութիւն ու



Վ Ա Ն Ա Ն Մ Ա Ն Ո Ւ Է Լ Ե Ա Ն

կարխարգանք մ'ունէր -- և յաւ կը տախկա, անհրաժեշտ էր գանդաձններու երեակայութեանը պարներու, սրտին ու մտքին խոսկրու, հաստ ու կրտսի ներշնչելու և գէպի գործ մղելու համար...

Վահան, անշուշտ, Հրայր մը չէր: Չունէր գերբիշակապտատորին ոչ խօսքին սքմբ, ոչ այ գրչին գեղեցիկութիւնն ու հմայքը: Բայց գորտէն եկած մարդարէ մըն էր, Բիւրօի տառքուտ, հին, երախտաւոր գործիչ մը, բարեհամբույր, հարթ ու հանդարտ բնուորութեան տէր -- և յաջգեցտա կարճ միջոցում ուժեղ գործի տայ ներքին համերաշխութեան, յարգանք ու հեղինակութիւն պարտապրելի Փէզայիններուն ու Սասնոյ ժողովուրդին:

Վահանի գալն յետոյ, Հրայր ձգեց լեռնավայրը, Էջմատ գաշտ և վերսկսաւ իր քարոզչական պատյաները գէպի Ախլաթ,

Բուլանըխ, Վարդօ, Խնուս և այլուր, գինւած իր հին ու սեւեռուն դաղափարով -- պատրաստել ժողովուրդը, մշակել տակաւին անգիտակից ու անտարբեր գանդաձնները գալոց մեծ պայքարներու համար: Երկրորդ Քրիստոս մըն էր ժողովուրդին համար. ցուպն առած, պարզ շինականի գգեստով, մեն մենակ կը շրջէր գիւղէ գիւղ և կը քարոզէր: Կառավարութիւնը գիտէր այդ, կը փնտրէր այդ վտանգաւոր մարդը ամենուրեք. բայց ոչ ոք կը մատնէր գինքը, հակառակ շարժարանքներուն ու կաշառքի խոստումներուն: Անգամ Ախլաթի յայտնի դաւաճաններ, որ շատերը մատնած էին, չէին համարձակեր վատութիւն ընել այդ նոր մարդարէին: Հայ ժողովուրդը կը պահէր դայն գուրգուրանքով իր ծոցին մէջ:

Յեղափոխական քարոզչութեան հետ, Հրայր կը դբաղէր նաև մշակութային դործերով, կը քաջալերէր ուսումը, վաճառականութիւնը, համայնական աշխատանքները, փոխադարձ օգնութեան սկզբունքը: Անոր գործերէն են Գրդուոի տակ փուած Ջրհոր գիւղի ջուրն ու աղբիւրները: Գիւղացիք կը տառապէին ջրի սակաւութենէն, ցանքերը կը փճանային: Դաշնակցութեան քարոզիչը շինականներու համադործակցութեամբ ջուր բերել տւաւ և աղբիւր մը կառուց, որ կը կոչուի «Արմենակի աղբիւր»:

Պէտք է լուսաւորել ժողովրդեան միտքը, արծարծել յեղափոխութեան դպտփարը: Եկտք է պատրաստել, հանդարտ ու յամաս աշխտատանքով, ըստ կարելւոյն խուսափելով կուխերէ, խնայելով ժողովուրդի ուժերը: Որովհետև կ'ըսէր, համբերելը, տակայր նոյնքան անհրաժեշտ գէնքեր են, որքան հարկ եղած պարտային գէնքով կուխը և արիւն թափելը... Այս էր Հրայրի շատանց սրղեղրած տակտիկը: Աւա՛ղ, միայն թշնամին չպիտի թոյլ տար յեղափոխականներուն՝ երկար տարիներ պատրաստուիլ, աճիլ ու զօրանալ...

Հրայրի տակտիկին համարւած կողմնակից էր ինքը Դաշնակցութեան նորեկ յիազօրը՝ Վահան Մանուէլեան: Երկու առաջնորդները, թարգման բուն իսկ Կոստակցութեան տրամադրութիւններուն, ոչ միայն կը խորհէին, որ գանդաձը երկարատև պատրաստութեամբ միայն կարող է ընդունակ դառնալ կուխ: Ղիմադրութեան, այլ և կը զխտակցէին, որ սոսկ հայու ուժերը բաւական չէին՝ լուրջ, արդիւնաւոր ցնցումներ յառաջ բերելու բռնապետական կարգուսարքին մէջ և որ անհրաժեշտ է կրկէս բերել

միւս դժգոհ ցեղերն եւս: Անոնց միտքը կանգ կառնէր, բնակա-  
նաբար, քրդական որոշ ցեղերու վրա — և հայ-քրդական համա-  
ձայնութեան ծրագիրները երկար ատեն կը զբաղեցնէր Տարօնոյ  
մեր կազմակերպութիւնը:

## XII

## ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

Քանակցութիւններ ժընեւի մէջ (1895-96թ.) — Ապտիւռահման  
բէյ «Դրօշակ»ի խմբագրատունը — Մեքիմներու աշխատանքը  
երկրին մէջ — Քեռին՝ Տերսիմ — Հրայր, Գէորգ, Վարդան  
Վարդապետ — Կապեր ցեղապետներուն հետ — Իբրահիմ փաշա,  
Վասըմ բէյ, Աէյնալ և այլն — Ապարդիւն հիգեր —

Հին, ցաւոտ կնճիռ մը՝ որ իր երկար պատմութիւնն ունի  
և որ այստեղ չսլփաի ընենք: Հակիրճ տողեր միայն: Դաշնակցու-  
թիւնը, իր դոյութեան առաջին տարիներէն իսկ ճիգ ըրեր է մօ-  
տենալու մեր արեւելի զբաղիներուն և դեռ 1895-96 թւականնե-  
րուն Պեղրխանի ժրնեւարնակ դաւակներէն մին, Ապտիւռահման  
բէյ մեր հրաւերով, կուզար յաճախ «Դրօշակ»ի խմբագրատուն  
ու տեղի կունենային երկարատե գրոյցներ անոր և Ռոստոմի ու  
այլ ընկերներու միջև: Բանակցութիւններ՝ աւա՛ղ, անյոյս: Կը  
յորդորէինք, որ մեր միջոցներով երկիր երթար, որպէս քարոյր: . .  
Ապարդիւն: Միակ արդիւնքը այն քանի մը պաթեթիկ կոչերն են,  
որ Ապտիւռահման բէյ մեր խնդրանքով հրատարակեց «Դրօշակ»ի  
մէջ, — կոչեր՝ որ քիւրդ երեւելին, մեր միջոցով, կուղղէր իր  
հեռաւոր ազգակիցներուն, կը հրաւիրէր դանոնք ըմբոստացումի,  
կը յորդորէր համերաշխ լինել հայերուն հետ, ճանչնալ բուն թըշ-  
նամին, չենթարկել թուրք կառավարութեան դաւերուն, չմաս-  
նակցիլ հայերու կոտորածին: Քիւրդ լեզուով ու արեւբական տա-  
ռերով՝ այդ կոչերը երկիր կը ճամբէին և մերիներու ձեռքով  
կը տարածէին քիւրդերու մէջ:

1896էն ի վեր, Երզնկացի Քեռին (Ռուբէն Շիշմանեան)  
հաստատեցաւ իբրև Դաշնակցութեան առաջնալ, Տերսիմի մէջ,  
երկու-երեք տարի մղեց այնտեղ իր քարոզչութիւնը քիւրդերու  
մէջ, ձերբակալեցաւ թուրքերու ձեռքով և կախաղանով պսակեց  
իր դժւարին առաքելութիւնը: Այդ ձեռնարկն եւս — ամենէն  
նպաստաւոր սեպած քրդական գետնին վրա — արդիւնք մը չուու:

Ռուբէն Շիշմանեան ունէր արդէն յեղափոխական պատկառելի անցեալ մը. եղեր էր Գաբրիէլ Արխանեանի խումբին մէջ, մասնակցեր էր Հետագային Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովին (1898թ.): Ձերբակալուելէն յետոյ, Երզնկայի բանտը



ՏԵՐՍԻՄԻ ԲԵՌԻ (ՇԻՇՄԱՆԵԱՆ)

նետուեցաւ շղթայակապ և մնաց այնտեղ ամբողջ չորս տարի, մինչեւ իր եղբերական վախճանը... 1903 Յունիս 10ին կախաղան բարձրացաւ 30 տարեկան հասակին մէջ:

Քիւրդ-հայկական մերձեցման աշխատանքը հետապնդուեցաւ և ուրիշ վայրերում: Քանի՜ քանի անգամ մեր ընկերները Վասպուրականի, Տարօնի մէջ յուսահատ փորձեր ըրեր են դաշնակցելու այս կամ այն քիւրդ ցեղապետին հետ, աշխատելով կառավարութեան դէմ հանել քիւրդերը, կամ դէժ չկողբացնել անոնց հայա-

ղինջ ձգտումը... Որքան ճիշդ թափեր են մեր Հրայրը և Գէորգ Չաւուշը: Երկար տարիներ աշխատեց է այդ ուղղութեամբ Վարդան վարդապետը, որ կը դործէր նոյն Հրայրի հրահանգներով: Մասնաւորապէս Գէորգ Չաւուշ մեծ հմայք ունէր քիւրդերու մէջ և անոր մահը պահ մը դաղրեցուց բանակցութիւնները, զոր շարունակեց Ռուբէն 1907ին ի վեր: Դաշնակցութիւնը կապեր ստեղծեց Դիարբեքի Նահանգին քիւրդ Իրրահիմ փաշային հետ, նաև Փէնջանարցոց և Սիլվանի կիսանկախ ցեղերուն հետ, որոնք առատորէն կաշառքներ կը ստանային Արդիւլ Համիդէն՝ հնագանդութեան մէջ պահելու համար: Կապեր՝ նաև Սեւերիկի քիւրդ հզօր ցեղերուն հետ, որոնք մեծ ազդեցութիւն ունէին հայկական Բարձրաւանդակի աշխրէթներուն վրա: Մերիները նամակ ու ընծաներ կը դրկէին ցեղապետին և անկէ ալ կը ստանային նամակ ու ընծաներ: Այդ բոլորը, սակայն, լոկ պղատոնական համակրանք մըն էր, առանց ռեւէ դործնական հետևանքի: Ընծաներու փոխանակութիւնը Գէորգ Չաւուշի հնարքներէն էր:

Սերտ կապեր հաստատեց էինք և Ղասրմ բէյի հետ (տիրահոջակ Մուսա բէյի եղբայրը), որ շատ ազդեցիկ էր իր շրջանի քիւրդերուն մէջ: Ղասրմը յայտարարեց էր զինքը մեզի դաշնակից և անդամադրուել էր «Դաշնակցութեան»: Անոր հետ ևս մերիները կը փոխանակէին ընծաներ: Կերթային ծածուկ անոր վրանը և խորհրդակցութիւններ կուենային: Օր մըն ալ Ղասրմ բէյ փոխայցի կուգայ մեր Փէդայիներու բանակը, 100ի չափ քիւրդ ու հայ զինեալներով և տեղի կուենայ խորհրդաւոր տեսակցութիւն մը Ղզըլաղաջի անտառին մէջ: Երկու օր հիւր կը մնայ մերիներուն: Ամէն տեղ արդէն տարածայնած էր մեր միութիւնը, «եղբայրութիւնը»... Գաղանիք չէր, հարկաւ, և թուրք իշխանութիւններուն համար: Եւ ահա Ղասրմի այդ զորդադին փոխայցէն ետք, օր մը թուրք զօրքը կը շրջապատէ ու թնդանօթի կը բռնէ քիւրդ ցեղապետին բնակավայրը: Վերջինը քանի մը տասնեակ զօլամներով պահ մը կը դիմադրէ: Բայց միայն իր ու ընտանիքի գլուխն ազատելու համար... Ապա կը փախչի: Բաղմաթիւ քիւրդեր կը սպաննին այդ կուին մէջ և անոնց հետ՝ քանի մը հայ Փէդայիներ, որ օղներ էին իրենց «դաշնակցին»:

Այս դէպքերը տեղի կուենան 1907ին: Ղասրմէն ալ յուսախար եղանք: Եւ դարձեալ մերոնք շյուսահատեցան: Հայ-քրդական եղբայրացումի փորձերը շարունակուեցան: Կաղմակերպութիւնը



ճիշդ կընէր ամբողջութեամբ իր կապերը մի այլ աշխրհէթի հետ (Պորթլիայի, Դըմիլիկ ցեղէն), որ ցեղակից էր Տերեխիմի քիւրդերուն: Աշխրհէթի պետը հսկայ մըն էր, Զէյնալ անունով, որ հայերէն ալ քիչ-չատ գրեւ-կարգաւ գիտէր — սորովեր էր Խարբերդի հայկական դպրոցին մէջ: Յեղափոխական մըն էր, ըմբոստ ընդդէմ կառավարութեան, ջերմ կուսակից հայ-քիւրդ եղբայրութեան և կը քարոզէր երկու ցեղերու խառն ամուսնութիւններ՝ միութիւնը աւելի սերտ դարձնելու համար (մերիներու մէջ ևս կար այդ դադափարը):

Թուրք կառավարութիւնը, ի վերջոյ, այդ դաւն ևս չէզոքացուց: Սկսաւ հալածել Զէյնալը, իբրեւ հայերու դաշնակից: Ապստամբ ցեղապետը փախստական եղաւ: Հալածանքը անոր դէմ շարունակեցաւ և Իթթիհատի օրով: Ի վերջոյ, Զէյնալ դաւադրութեամբ սպանեցաւ (1908ի վերջերը, Բինգիօլի մէջ):

Յարաբերութիւններ կը մշակէին և շարք մը ուրիշ ցեղերու հետ — Հասնանցի, Զիբրանցի, Հայտարանցի և այլն: Հայ-քիւրդական համերաշխութիւն ստեղծելու փորձեր ըրին մեր ընկերները նաև Վասպուրականի մէջ, — Արամ, Իշխան, Վ. Փափագեան, Վոսմեան, Մալխաս և այլն:

Երբեմն մեր պրոպագանդը կուտար փոքրիկ արդիւնքներ: Երբեմն ալ՝ մեծ վնասներ: Մեր գործիչներէն ոմանք կուգան այն համոզումին, որ հարկ է երես դարձնել աշխրհէթներէն և կեդրոնացնել համերաշխութեան քարոզչութիւնը քիւրդ ռայաի մէջ: Այդ բեկումը ուժով չեչուեցաւ համառուսական մեծ անցքերէն և մեր Վիեննայի Համագումարէն վերջը, երբ Թրքահայ մտաւորական երիտասարդութիւնն ևս Վան ու այլ կեդրոններու մէջ տարւեցաւ ընկերվարական հովերով: Կենթադրւէր, à priori, թէ «ռայան», աշխատաւոր ու տառապող քրդութիւնը, խոր համակրանք ունի դէպի շարժարակից հայ ժողովուրդը և անոր դատը... Եւ մեր երիտասարդ ընկերները ամենայն եռանդով սկսան մշակել քիւրդ ռայան: Քանի մը քիւրդ գիւղեր կազմակերպեցան, որպէս «դաշնակցականներ»: Բայց ցաւը հոն էր, որ ռայան ալ յուսալի նեցուկ մը չէր, քանի որ կը շարժէր աշխրհէթի կամքով ու հրամանով... Եւ շարք մը ամուլ փորձերէ վերջ, մեր վատաբախտ քարոզիչները համոզուեցան, որ լաւ է ձգտիլ աշխրհէթներուն համակրանքը չսահելու, քան ստրուկ ու անգոր ռայաի...  
Քանի՜ յուսահատ փորձեր, բանակցութիւններ, միութեան

և եղբայրութեան յայտարարութիւններ ու հրաւերներ... Ապարդիւն: Կցկուտը ու կարճատե էին համերաշխութեան գործնական արտայայտութիւնները: Երբեմն ալ բարեկամ ու դաշնակից քիւրդ առաջնորդը կը կատարէր անակնկալ վօլտ-ֆլաւ մը և դաւադրորէն կը խողխողէր իր յարկին տակ հիւրընկալած «դաշնակցական» առաքեալները... Այդպէս աղէտեցաւ, ի միջի այլոց, Զնո, մեր լաւագոյն գինւորներէն:

Հայու չար ճակատագիրը կամեցաւ, որ իր դրացի քրդութիւնը արթննար, գնահատէր համերաշխութեան քարոզները և ձեռք մեկնէր հայութեանը միայն այն ժամանակ, երբ Թուրքական բռնութիւնը քիւրդի ձեռքով իսկ ջնջեր էր, կամ թէ երկրէն դուրս նետեր հայ գանգաւոր...  
Այսպէս, տասնեակ տարիներու ընթացքին, Տարօնոյ, Վասպուրականի մեր անխոնջ գործիչներու քարոզչութիւնը քիւրդերու մէջ մնաց ձայն բարբառոյ յանապատի: Հ. Յ. Դաշնակցութիւնը անբաւ եռանդ ու զոհեր տուաւ երկու դարաւոր հարեաններու համերաշխութեան գործին, բայց չկրցաւ իրագործել քիչ-չատ լուրջ ու տևական գործակցութիւն — նա չկրցաւ անգամ չէզոքացնել այդ զօրաւոր դրացիի յարձակողական բնագոյնը, չաջողեցաւ գայն համոզել, որ չդառնա՛յ կոյր գործիք բռնակալութեան ձեռքին՝ հայ դատը խոշտանգելու, հայութիւնը բնաջնջելու նպատակով...  
Եւ երբ Ելլըզլի դաւերով բռնկեցաւ 1904 թւականին Սասնոյ մեծ ապստամբութիւնը, քիւրդ ցեղերը փութացին միանալու գործերուն, գրոհ տւին հայոց դէմ\*) և խեղդեցին, անգամ մ'ևս, հայ ժողովուրդի ազատագրական ճիգը...

Սասնոյ ապստամբութեան մասին կը խօսինք հետագային: Այժմ վայրկեան մը հեռանանք երկրէն և արձանագրենք հայկական Դրամայի մէկ ուրիշ փոքրիկ արարը, որ խաղացեր է Բալկաններու մէջ, ուր Հ. Յ. Դաշնակցութիւնը — Թուրք ու քիւրդ ժողովուրդներէն յուսահատ — մօտեցեր էր և եղբայրական համերաշխութեան կապեր հաստատեր Մակեդոնացի յեղափոխականներուն հետ:

Եւ երբ Ելլըզլի դաւերով բռնկեցաւ 1904 թւականին Սասնոյ մեծ ապստամբութիւնը, քիւրդ ցեղերը փութացին միանալու գործերուն, գրոհ տւին հայոց դէմ\*) և խեղդեցին, անգամ մ'ևս, հայ ժողովուրդի ազատագրական ճիգը...

Սասնոյ ապստամբութեան մասին կը խօսինք հետագային: Այժմ վայրկեան մը հեռանանք երկրէն և արձանագրենք հայկական Դրամայի մէկ ուրիշ փոքրիկ արարը, որ խաղացեր է Բալկաններու մէջ, ուր Հ. Յ. Դաշնակցութիւնը — Թուրք ու քիւրդ ժողովուրդներէն յուսահատ — մօտեցեր էր և եղբայրական համերաշխութեան կապեր հաստատեր Մակեդոնացի յեղափոխականներուն հետ:

\*) Նոյնը, աւա՛ղ, 1915ին, երբ քիւրդը հանդիսացաւ հայկական Մեծ Եղեռնի մեծագոյն դերակատարներէն մէկը...

XIII

ՀԱՅ-ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ

Հայկական շարժման անդրադարձումները Բուլղար-Մակեդոնիայի մէջ. — Շփումը Դաշնակցականներու և մակեդոնացի յեղափոխականներու միջև. — Կ. Պոլիս, Սոֆիա, Փրնև. — Ռոստոմ և Սարաֆով. — Հայ և մակեդոնական գոյգ դատը Եւրոպայում. — «Դրօշակ» խմբագրատունը՝ ժամադրավայր. — Հայ-մակեդոնական եղբայրութիւնը արեւան դաշտում. — Աղբիւսնապոլսի կախազանները.

Նման են շատ կողմերով երկու ժողովուրդներու ճակատագիրները. — Հայերու և բուլղար-մակեդոնացիներու: Բուլղարիոյ ազատագրութիւնը թուրքաց լուծէն — ասկէ 53 տարի առաջ — չեղաւ լիակատար: Խոշոր մաս մը այդ երկրէն — բուլղար Մակեդոնիան — մնաց թուրքական բռնութեան տակ, մեզի բախտակից: Նոյն բարբարոս ոչ ժամը, ճնշումներն ու հալածանքը, միլիոնաւոր ժողովուրդի տառապանքն ու ապարդիւն բողոքը... Եւ այդ բոլորը՝ հօր, ցեղակից բուլղար պետութեան կողքին, անոր սահմաններում... Այդ հարեանութիւնը և առհասարակ Մակեդոնիոյ աշխարհալրական դիրքը, եւրոպական մայր-ցամաքին վրա, հարկաւ կը մեղմէին թուրքական բռնապետութեան հարւածները: Զանգաւազային մեծ ջարդերը անհնարին էին Մակեդոնիոյ մէջ: Ուրիշ նպաստաւոր պարագայ մըն ալ խլամ տարրի սակաւութիւնն էր, գրեթէ չգոյութիւնը այդ երկրում:

Այնուամենայնիւ, ուշ արթնցան մակեդոնացիք, մեզմէ ալ ուշ: Մեծ գարկ տուաւ Հայ շարժումը անոնց յեղափոխական գարթօնքին: Մասնաւորապէս Օսմանեան Բանկի գրաւումը և Կ. Պոլսոյ կոիւնները (1896թ.): Այդպէս կը խոստովանէին իրենք իսկ մակեդոնացի պարագլուխները և անոնց մէջ ամենէն հուշակաւորը՝ Բոքիս Սարաֆով:

1896ի ղէպքերէն առաջ և մանաւանդ անկէ յետոյ, Պոլսոյ մէջ այդ պարագլուխներէն մէկ քանիսը ինքնաբերաբար կը մօտեան մերիներուն և ծանօթութիւնը հետզհետէ կը դառնայ սերտ

բարեկամութիւն: Բանկ Օսոմանի նահատակները, Բարկէն Սիւնիի հերոսական պատկերը, Սամաթիոյ մտաւորական ռազմիկները բուլղար-մակեդոնացիներու խանդավառ հիացմունքի առարկայ էին:

Հայ-Մակեդոնական զաղափարային դաշնակցութիւնը կը դարձնէր, միւս կողմէն, բուն իսկ Բուլղարիոյ մէջ, ուր 1898էն ի վեր հաստատուած էր — Ֆիլիպէի մէջ — Ռոստոմը, որպէս տեղւոյն վարժարանի տեսուչ և միանգամայն Բալկանեան մեր մարմիններու ընդհանուր ղեկավար: Միաժամանակ, Ռոստոմը, մակեդոնացի ընկերներու աջակցութեամբ, Բուլղարիոյ ազատ հողին վրա կը կատարելագործէր պայթուցիկ նիւթերու իր սիրած մասնագիտութիւնը, զոր հետագային պիտի շարունակէր Քրիստափորը նոյն Բուլղարիայում: Նոյն մակեդոն յեղափոխականներու շնորհիւ, Հ. Յ. Դաշնակցութիւնը կը ստանար այլ և այլ արտօնութիւններ երկրի կառավարութենէն: Այդպէս, Բուլղարիոյ բարձր Ձիւղորական Վարժարանը դրեցաւ մեր տրամադրութեան տակ և հոն զինուական արեւստը սորվեցան շարք մը դաշնակցական երիտասարդներ, որոնցմէ մէկ քանիսը հետագային կարեւոր դեր խաղացին մեր կոիւններուն մէջ (Գարեգին Նժդեհ, Թուրքիկ Գեորգ, Թաշիգ և ուրիշներ):

Բորիս Սարաֆովի աջակցութեամբ մերիները հիմնեցին նոյն իսկ Հ. Յ. Դաշնակցութեան զաղտնի զինուորական դպրոց մը, Դուրնիցայի շրջանին մէջ, բուլղար-թուրք սահմաններուն մօտ: Ճարարախտաբար, զաղտնիքը երեւան դալով, թուրք կառավարութեան ազդարարութիւններուն վրա, բուլղար իշխանութիւնները հարկադրած եղան փակել դպրոցը. բայց իր կարճատեւ գոյութեան ընթացքին ալ (չուրջ մէկ տարի, 1906—1907), այդ վարժարանը, բուլղար բանակի հարիւրապետ Պօղոս Պօղոսեանի տնօրէնութեան տակ, տուաւ ութսունի չափ Հայ երիտասարդներ, բաւականաչափ մարդած զինուորական արեւստի մէջ: Վարժարանի ծախքերը կը հոգար մեր Բալկանեան Կեդրոնական Կոմիտէն, որ այն ժամանակները ունէր արդէն ընդարձակ ճիւղաւորումներ Բուլղարիոյ շուրջ 30 հազարնոց Հայ զաղութին մէջ, Ֆիլիպպէ, Վառնա, Ռուսուկ, Բուրգաս, Սլիվեն, Եամբուլ և այլն:

Նոյն Սարաֆովի և ընկերներու շնորհիւ, Դաշնակցութիւնը սերտ բարեկամական կապեր ստեղծեց շարք մը բուլղար նախադարձներու և այլ բարձրաստիճան անձերու հետ, ինչպէս Պետկով

M13

(նախարարապետ), Ն. Գենադիէվ և մանաւանդ զօրավար Սափով (հետագային Բուլղարիոյ դեսպան Պարիզի մէջ):

Բորիս Սարաֆով սիրեց Ռոստոմը, որու հետ շատ առիթներ ունեցաւ շփուելու իր բուլղար հայրենիքի մէջ: Ռոստոմն ալ փոխադարձաբար սիրեց Բորիսը, որ հայ ժողովուրդի ու Հ. Յ. Դաշնակցութեան ամենաջերմ բարեկամներէն էր և — ինչ ալ որ ըսեն հակառակորդները անոր անձնական կեանքի մասին — մեծադոյն յեղափոխական դէմքերէն մէկն էր Բալկաններու մէջ և ատեն մը ամենէն ժողովրդական մարդը բուլղար աշխարհում: Երբ նա դիւցազնական կոիւներէ յետոյ, Մակեդոնիոյ ռազմադաշտերէն փառքի դափնիներով կը վերադառնար ազատ Բուլղարիա, կանցցնէր մայրաքաղաքի յաղթական կամարներու տակէն, ժողովրդական խելայեղ կեցցէներուն մէջ...

Երրորդ վայրը, ուր կը մշակէր հայ-բուլղար-մակեդոնական բարեկամութիւնը — Ժընեւն էր: Բաղմաթիւ էին բուլղար ու մակեդոնացի ուսանողները ժընեւի համալսարանին մէջ և դեռ 1896 թւականէն անոնցմէ մէկ քանիսը կը յաճախէին «Դրօշակ»ի խմբագրատունը: Հոգ էր անոնց ամենէն նշանաւոր հրատարակադիրը, Սիմոն Ռադէվ (այժմ դեսպան Բուլղարիոյ՝ Ուոշինգտոնում), որ թերթ հիմնեց ժընեւի մէջ և երկար տարիներ մեկի հետ քով քովի մեկը պրօպագանդա եւրօպայի մէջ ի նպաստ իր երկրի: Բուլղար-մակեդոնացիք կուզային մեր ուսանողական ժողովներուն ու միթիոններուն, մերթնէրն ալ կերթային անոնց հասարակներուն. երբեմն ալ միասին կը կազմակերպէինք միթիոններ՝ երկու քոյր դասերը եւրօպայիներու տոճու արծարծելու նպատակով:

Միթիոններ՝ նաև Պարիզի, Լոնդոնի, Միլանի մէջ, հայ և մակեդոնական դասերուն շուրջ, կազմակերպում «Պրօ Արմենիա»ի կոմիտէի ձեռքով, որ Դաշնակցութեան ներկայացուցիչներուն հետ՝ բեմ կուզային և մակեդոնացի դործիչներ: 1907 թւականին ալ Դաշնակցութիւնն ու Մակեդոնացի յեղափոխականները մէկտեղ յիշատակալիր ներկայացուցին Հապի վեհաժողովին (յատուկ հայկական պատերազմութիւն մըն ալ — Ահարոնեան, Իւթիւճեան եղ., Յովհ. Շահնազար — կաթողիկոսի կողմէն զինաց Հապի, Վիքտոր Բերարի տառջնորդութեամբ՝ նոյն վեհաժողովին մօտ՝ հայ դատար պաշտպանելու համար):

Իսկ երբ բարբոքեցաւ մակեդոնական յեղափոխութիւնը —

1902-903 թւականներուն — կոիւներէն յետոյ, մին միւսի ետեւէ ժընեւ կուզային հանգստանալու շարժման կարևոր դէմքերը՝ Սարաֆով, Լիպով, Գարվանով, Թիւֆեկչիւ, Չակարով և այլն՝ (վերջինը երկար ամիսներ կը բնակէր մեզ մօտ, «Դրօշակ»ի խմբագրատանը): Եւ տեղի կուեննային յաճախակի տեսակցութիւններ ու մտերմական գրոյցներ մակեդոնական շարժման փայլուն սպայակոյտին հետ:

Հայ-մակեդոնական զինակցութիւնը ունեցաւ, վերջապէս, և իր արիւնտ սրբագործումը կուի դաշտում: 1901 թւականի ամառը, Ազրբայձանուլոյ մօտերը տեղի ունեցաւ ճակատամարտ մը, որ կը մղէին ըստ մը մակեդոնացիներ ու Դաշնակցութեան զինուորներ, թուրք զօրքին դէմ — մէկ զունդ հեծելազօր և երկու վաշտ հետեակ: Զինակիցներէն վեց հոգի ընկան կուին մէջ և չորսը գերի բռնեցան, սպառելով իրենց վերջին փամփուշտը: Թուրք սատրապամը — Քիւչիկ Սայիտ փաշա — խիստ տպաւորուած անակնկալ դէպքէն, որոշեց սաղմի մէջ խելդել հայ-մակեդոնական զինակցութիւնը: Եւ «մահու անարդ սիւները» տնկեցան Ազրբայձանուլոյ չորս հրատարակներուն վրա: Մահապարտներն էին՝ Հ. Յ. Դաշնակցութեան հինաւորաց ու սիրուած կամաւորներէն՝ Պետրոս Սերեմեան, Ֆիլիպպի և Օհնիկ Թորոսեան, Ռոստոթօցի: Մակեդոնացիներն էին՝ Սվետոսլավ Մերջանօֆ, Ժրնեւի համալսարանէն, և Խրիստօ Հաջի Իլիւվ:

NB

Ազրբայձանուլոյ շատոնց չէր տեսած կախաղաններ և այդօրը արտակարգ յուզումի մէջ էր: Սուգ էր հայերու և բուլղարներու մէջ: Ահագին ամբոխ մը հաւաքուած էր կախաղաններու շուրջ: Չորս կտրիճները մեռան հերոսաբար: Պետրոս\*) շանթալից ճառ մը ըսաւ կախաղանի առջև, նման այն ճառին, որ արտասանեց էր Արամ Արամեան էրզրումի իր կախաղանէն, ասոկ երեք տարի առաջ:

— Այո՛, ես յեղափոխական եմ, գոչեց Պետո, բարձրանալով մահու աթոռին վրա և դիմելով ժողովուրդին ու դահճիճներուն. մի՛ մոռնաք, որ ես այստեղ կը ներկայանամ, իբրև գաղափարի ներկայացուցիչ. ինձի կը կախէք, բայց զաղափարը կախել չէք կարող...

\*) Կը կոչէինք զինքը Բուլղարացի Պետո: Բուլղար բանակի սպայ մըն էր, շատ սիրուած Դաշնակցութեան շարքերուն մէջ: Մասնակցեց է և Խանասորի արշաւանքին:

Ապա ինքը վիզն անցուց չուանը և հրեց աթոռը...

Աղբիանուպոլսոյ կախաղանները խորապէս ցնցեցին Հայ ու բուլղար-մակեդոնական շրջանները և նոր դարկ տւին երկու ժողովուրդներու փոխադարձ ջերմ դպացումներուն: Դէպքը ունեցաւ իր արձագանգները և Եւրոպայում: Հայ ու մակեդոնական դատերը այլ ևս անբաժան կը ներկայանային արեւմտեան հանրային



Պ Ե Տ Բ Ո Ս Ս Ե Բ Է Մ Ճ Ե Ա Ն

կարծիքին առջև (մէկը յանուն Բերլինի դաշնագրի 61րդ յօդաժին, միւսը՝ յանուն նոյն դաշնագրի 23րդ յօդաժին): Ֆրանսիս դը Պրեսսանսէ — մարդկանց և ազգերու իրաւունքներու անգուճական ասպետը — եկաւ ժընեւ, Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան հրաւերով, և «Վիքտորիա Հօլ» մեծ սրահին մէջ, քաղաքի բազմահազար ընտրանիին առջև, խանդավառ գովքն ըրաւ Հայ-մակեդոնական հերոսներուն ու նահատակներուն: Իսկ ժընեւի բուլղար ու Հայ ուսանողները յուզիչ սգահանդէս մը կազմակերպեցին, Ակնունիի նախադասութեան տակ, ուր Հայ ու բուլղար հոգևորներ փառարանեցին երկու ազգերու կուռղ տարրերու եղբայրութիւնը:

Եղբայրութիւն մը՝ որու շքեղ, աննախընթաց տեսարանը պարզեց մայրաքաղաք Սոֆիան մեր Քրիստափորի և Վուսիթի թաղման օրը (մարտ 1905թ.):

Եւ ատկէ երեք տարի յետոյ, Բորիս Մարաֆովի և Գարվանովի եղբրական մահէն վերջ, անոնց հանդիսաւոր թաղումին, նոյն Սոֆիայի մէջ, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր յարգանքի ու վշտակցութեան բաժինը կը բերէր մակեդոնացի ընկերներուն, յատուկ պատգամաւորութեամբ — Անդրանիկի և ուսանող ընկեր Ասլանի, որ գնաց Եւրոպայէն:

N B

Ազատագրական դեղեցիկ ու փոթորկալից շարժում մ'ունեցաւ բուլղարական Մակեդոնիան: Յեղափոխական կազմակերպութիւնը, զոր առհասարակ գաղտնօրէն կը հովանաւորէր բուլղար կառավարութիւնը, հերոսական և արիւնալի կռիւներ վարեց Մակեդոնիայի լեռ ու ձորերում և ունեցաւ ուղղակիներու, նահատակներու փառաւոր բոյլ մը — Դելչեւիներ ու Դամիան Գրուբեւիներ, Ապոստոլներ, Սարաֆովներ ու Մերջանովներ... Շարժումը, սակայն, հակառակ այնքան արիւններուն ու աւերածներուն, հակառակ նաև եւրոպական միջամտութեան կրկնակի փորձերուն, չուաւ սեւէ արդիւնք, չյանդեցաւ սեփարմանք: Բայց արդէն կը մօտենար Վեստենիներու և Հոֆերու դալստեան ժամը նաև այդ բազմատանջ երկրին համար, արդէն մակեդոնական նաւը արագ-արագ կը մօտենար իր փրկարար նաւահանգիստին, ինչպէս հայկականը, որ համիդեան և իթթիհատեան արիւններու մէջէն դուրս լողալով 1912-13 թւականներուն, եւրոպական մարդպաններու օգնութեամբ, կը մտնէր խաղաղ ու ազատ ծովին մէջ... Համաշխարհային պատերազմը եկաւ տրորեց բոլոր յոյսերն ու ծրագիրները և քանի մը շարաթւան մէջ ի չիք դարձուց այն դեղեցիկ արդիւնքը, որ վաստկեր էր Հայ ժողովուրդը, տասնեակ տարիներու դժնդակ մաքառումներով, իր հերոս դաւակներու և հարիւր հազար նահատակներու արեան դնով... Հայաստան և Մակեդոնիա իրենց լրակատար ազատագրութեան սեմին վրա էին — համաշխարհային պատերազմը նետեց դանոնք վերստին եւթաղանին ու լուծին տակ:

Բուլղար Մակեդոնիան — նւազ դժբախտ, քան Հայաստանը — կողբայ, սակայն, տակաւին իր ճակատադիրը օտար իշխանութեան տակ (Եւրոպայի ու մասամբ Յունաստանի) և կոմիտաջիներն ու չեթաները դեռ կը շարունակեն, ծանր կորուստներով, ազատագրական իրենց պատերազմը...



XIV

ՍԱՍՆՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Արդիւ Համիդ՝ անդրուի իր հայաջինջ քաղաքականութեան մէջ. — Նոր դար Սասունի դէմ. — Խորտակելի հայկական միջնաբերդը և «մաքիլ» Տարօնոյ հայութիւնը. — Դուեր՝ միաժամանակ Զեյթունի դէմ. — Սասնոյ տագնապը և Փէդայիները. — Օգնական ուժեր կովկասէն. — Չիաւոր խումբին մը զգայացունց ուղևորութիւնը. — Սերաստացի Մուրատ. — Մեծ բախումի նախօրեակին. — Հայոց գորակոչը և գծուած սագմիկներու հանդիսաւոր գրկախառնումը. — Սրտայոյց տեսարաններ. — Հրամանատարի քննարկութիւն. — Թուրք բանակի զգուշուոր վերելքը. — Թուրք ու Բիւրք նորէն համերաշխ. — Քրդական դաւ Անդրանիկի դէմ. — Աւաջին փակատաւարտ (1904, մարտ 30). — Հայկական ուժերու դասաւորումը. — Երկրորդ փակատաւարտ. — Միջնորդներ և բանակցութիւն. — Երկրորդ կր պահանջէ անձնատուր լինել. — Սասունցիներու մերժումը. — Անհաւատար կռիւ. — Բուռ մը հայութիւն քնդդէմ 30 հազար քուրք ու Բիւրքերու. — Մերիմները՝ յաղթող առաջին բախումներու մէջ. — Նահանջը դէպի բարձունքները. — Ճակատագրական վայրկեաններ. — Ռազմավարքեր պղտելով, Փէդայիները կորոշեն դաշտ իջնել. — Կուելով կը տանին իրենց հետ ժողովուրդը. — Երկրորդ կը հրամայէ քրդերով լեցնել պարպած Սասունը. — Պետութեանց միջամտութիւնը և սուլթանական ծրագրի վիժումը. — Սասունցիք կը վերադառնան իրենց բոյները. — Հրայր և Վահան նահատակուած. — Հրայրի կարապին երգը. —

1902—903 թւականներն են: Ֆեդայիները ցրուել են Սասնոյ գիւղերուն մէջ, լուծուել են, անհետացել լեռնական ժողովուրդի ծոցում:

Այդպէս էին տնօրինել Հրայր և Վահան: Երկու մեծ վարիչները հայկական շարժման՝ Մեծ Հայքի մէջ: Երկու դէմքեր՝ նման խառնածքով և համոզումով. զգուշուոր և խոհական: Երկուքն ալ համոզուած՝ որ հայ ժողովուրդը պատրաստ չէ ընդհանուր ապստամբութեան համար, իսկ մասնակի, անհատական և խմբական թռիչքները Սասնոյ վրա կը հրաւիրէին կառավարութեան ուշադրութիւնը: Կուզէին ըստ կարելոյն խուսափել անօ-

գուտ գրգռումներէ, պատրակ չտալ թշնամուն լայն ծաւալով հալածանք ու ճնշումներ նիւթելու:

Եւ երկուքին համամիտ էր Դաշնակցութեան երրորդ խոշոր վարիչ դէմքը՝ Վարդգէսը, որու գործունէութեան վայրն էր Վանը, Վասպուրականը:

Այլ կարգի իրողութիւններ ևս կը թւի թէ կոչուած էին հանգստացնելու համիտեան կառավարութիւնը, մեղմելու անոր վախը, կասկածները և հայահալած եռանդը: Կովկասեան, ռուսական իշխանութիւնները սկսել էին խստիւ նեղել իրենց հպատակ հայութիւնը: Կը հալածէին նաև կովկասաբնակ թուրքահայ տասնեակ հազարաւոր փախստականները, հարկադրելով զանոնք՝ կամ ընդունիլ ռուսահպատակութիւն, կամ թէ հեռանալ Կովկասէն:

Ու գրեթէ միաժամանակ ռուս հիւպատոսները թուրքահայաստանի որոշ շրջաններում — անշուշտ, վերին հրահանգով — կաշխատէին զրաւել թշւառ, անօթի հայ զանդուածները՝ օրթոդոքսութեան դիրկը:

Վերջապէս, ցարական կառավարութիւնը, իշխան Գոլիցինի սադրանքներով, հրատարակեց ծանօթ ուկագը հայ եկեղեցական դոյքերը բռնագրաւելու մասին, որով ոտքի հանեց ամբողջ ռուսահայութիւնը, հարկադրելով թուրքահայ պատրիարքն ևս հանդիսաւոր բողոք բանալ ի լուր աշխարհի:

Համիտեան կառավարութիւնը կը տեսնէր այդ բոլորը: Նա կը տեսնէր ողջ հայութեան բուռն հակադրեցութիւնը ցարիզմի ռուսարար քաղաքականութեան դէմ, և Բագրի, Թիֆլիզի, ամբողջ Ռուսահայաստանի արիւնահեղ ընդհարումները Հ. Յ. Դաշնակցութեան ու բռնագրաւող ոստիկաններու, կողակներու միջև: Միև կողմէ, թուրք կառավարութեան համար բնաւ դադունիք չէր, որ թուրքահայոց սպանանջները արտակարգ ոչինչ կը պարունակէին, որ անոնց ուղածը կեանքի ու դոյքի ապահովութիւն մըն էր և որ նոյն Դաշնակցութեան դործիչները, մասնաւորապէս Մուշ-Տարօնի շրջանում, ամէն առթիւ համերաշխութեան քարոզը կը հնչեցնէին ազդեցիկ թուրքերու մէջ ևս՝ ձգտելով համոզել զանոնք, որ հայ մարտական կուսակցութիւնը չունի բնաւ անջատական ձգտումներ և որ թուրքահայք կուզեն մնալ օսմանեան պետական յարկին տակ, բարենորոգուած Հայաստանի մէջ:

Քիչ-չատ բարեացակամ, համբերատար ընթացք մը Երկրորդ վարիչներուն կողմէ դէպի հայութիւնը կրնար մեղմել այդ վեր-

Ղինի ատելութիւնն ու թշնամանքը և տրամադրել զայն ի նպաստ օսմանեան տիրապետութեան: Գերագանց առիթ մըն էր սիրաշահելու հայ ժողովուրդը...

Երբզրզը, սակայն, նշանախեց մ'անգամ չփոխեց իր դաւադիր քաղաքականութիւնը հայոց հանդէպ, ինչպէս որ չփոխեց



ՎԱՐԴԳԷՍ ԱՆՐԵՆԿԻՆԼԵԱՆ

1898—1890 թւականներու զինադադարի շրջանին, երբ Արթին փաշայի միջոցով կը բանակցէր Հ. Յ. Դաշնակցութեան հետ — այդ վերջինը զինաթափ ընելու նպատակով — և երբ Հայաստանի ու թուրքիոյ մեր մարմինները չձեռնարկեցին քիչ-շատ խոշոր ասլուտամբական ունէ շարժման: Հայաջինջ մեթոդը անչեզ, անդուլ կը շարունակէր: 1902 թւականէն հալածանքները բուռն թափ առին: Այս անգամ թշնամու բոլոր ճիգերը կը կեդրոնանային մէկ կէտի վրայ — Սասնոյ դէմ: Երբզրզը ծրագրեր էր այս անգամ իսպառ ոչնչացնել հայկական լմբոստացումի կեդրոնավայրը, զոր չկրցաւ խորտակել 1894—1895ին: Եւ այդքանով նա չպիտի գոհանար: Պէտք էր ճարակել և Մշոյ, Տարօնոյ հոծ հայութիւնը, որ 1895—1896ի գարհուրանքներէն ազատուեր էր համեմատաբար թեթև կորուստներով: Ֆեդայիներու բանակը անհետացե՞ր էր, լուծուե՞ր էր ժողովուրդի մէջ, — այդ ամեններն չէր հանգստացներ դահիճը:

Սասնոյ դատարկման ծրագիրը նա պիտի իրագործէր, եթէ անգամ մէկ հատիկ Փեդայի չմնար հայոց լմբոստ լեռնաստանի և ողջ հայկական Տարօնի մէջ:

Դեռ 1901 թւականէն թուրք կառավարութիւնը ձեռնարկած էր զօրանոցներ կառուցանելու Տալուրիկի, Շէնքի, Գէլիգուղանի բարձունքներուն վրայ, բայց հանդիպել էր սասունցիներու կորովի ընդդիմութեան: Անգամ մը սասունցի կանայք էին, որ կատաղաբար նետեցան հայ բանուորներուն վրայ և վիժեցուցին շինութեան գործը:

Մինչ թշնամին կը սպառաստէր իր յարձակումը Սասնոյ դէմ, քիւրդ ու թուրք վոհմակներ ազատ, անպատիժ կը կատարէին իրենց թալանի արշաւները Մշոյ դաշտին վրայ: Եւ անհաղանդը պարբերաբար կը հնչէր Թաւրիղի, Թիֆլիղի վրայով դէպի ժընկ:

Այլտը, սակայն, տակաւին հեռու էր: Թշնամին կը շարժէր խիստ զուշութեամբ: 1893ի օրերը չէին: Հիւպատոսները մին իր իտեւէ կը փութային դէպի դէպքերուն թատերավայրը:

Ամբողջ 1902—1903 տարիներն անցան հայ ազգաբնակչութեան ա՛ն ու դողին մէջ: 1903ի վերջին ամիսներուն, դէպքերը հասան իրենց տագնապալի շրջանին:

\* \* \*

Տեսնենք, թէ ի՞նչ կանցներ-կը դառնար Սասնոյ Փէդայիներուն մէջ: Մանր մտահոգութիւններով պաշարուած էր փոքրիկ բանակը: Գիտէին, անշուշտ, շրայր, Վահան և մեր միւս ղեկավարները, որ թուրք կառավարութիւնը իր վերջին ու զօրաւոր ճիգը կընէր լմբոստ լեռնավայրը ոչ միայն ընկճելու, այլ և իսպառ քարուքանդ ընելու: Գիտէին, որ նոյն բախտը վիճակուած էր Մշոյ դաշտին, ողջ Տարօնոյ հայութեան: Գիտէին, վերջապէս, որ իրենց փոքրաթիւ, քիչ-շատ զինուած, ուղղմունակ բանակը միակ յոյսն ու ապաւինն էր հալածական ժողովուրդի: Պատրաստ էին, ինչպէս միշտ, արիւարար կուրծք տալու թշնամու սեխնեբուն, բայց կոխը չափազանց անհաւատար պիտի լինէր և իրենք դեռ չունէին բաւականաչափ զէնք ու ուղղամթերք, չունէին և բաւականաչափ կուռոյներ:

Օգնական ուժերու կը սպասէին Կովկասէն: «Դաշնակցութեան» կովկասեան մարմինները չթերացան իրենց պարտականութեան մէջ և Սասնոյ, Տարօնի այդ բախտորոշ օրերուն, արտա-

կարգ ետանդ ցուցնելով, կտրմտկերոյցին տմբոյջ շարք մը կուող վաշտերու, որոնք ընտիր խմբապետներու տաջնորդութեամբ, նորազոյն զէնքերով սպասապիւստ՝ պիտի անցնէին — ու անցան մին միւսի ետեւէ — թուրքական սահմանապարսր — բայց զիւրին բան չէր ժամանակին օղնութեան զայ Սասունին, յայթաճարելով տարածութեան անհաշիւ արդեւորները և մակն վայրկեան հանդիպելով կամ թուրք կանոնաւոր զօրքերուն, կամ թէ ջիւրդ ու թուրք խաժամութիւն...

Մէկը, այնուամենայնիւ, այլ ընտիր ու ստար խումբերէն կարողացաւ անցնիլ հոգարատը խոչ ու խոթերէն և կովկասէն մեկնելով, հասաւ ժամանակին իր երազովայրը, զնաց զրկախառնելու Սասնոյ ֆէլդայիններուն հետ, զէպքերէն ամիսներ առաջ: Ղարաբաղցի թուրքերի (թուրքամի) ձիաւոր խումբն էր:

«Tour de force» մըն էր, զրեթէ հրաշք: Քանի՛ այլովտի հրաշքներ է զործեր հայ քաջերու փառանդը իր օրհասական պատերազմի ընթացքին, — հրաշքներ, որոնք, աւա՛ղ, նսեմացեր ու մարեր են թշնամու նիւթած հրդեհներու բոցերուն մէջ, ձախորդութիւններու, յուսախարութիւններու համայնակուլ ալիքին մէջ...

Մեծ էր ողևորութիւնը: Անգրանիկն է, որ կը զրէ իր յուշերուն մէջ:

— Ըներ եկաւ ինձի, թէ 20 հոգիէ բաղկացեալ ձիաւոր խումբ մը եկաւ Մէմալ: Ելանք զայինք Մէմալ, տեսնուցանք թուրքերու հետ: Նրանց մէջ կային իմ նախկին ընկերներս, Գնէն — Քեաւթաւ Արշակը\*, Սեպուհ Արշակը, Գուրբախը, Մուրատը: Ուրախութիւններ շատ մեծ էր, ամբողջ ժողովուրդը ողևորուցաւ\*\*):

Մուրատն ևս, վերջապէս—Սերաստացի Մուրատը—հասաւ, երկար, սրտատրոփ սպասումէ ետք, իր երազներուն աշխարհը՝ Սասուն:

Եւ ահա անոնք, հայոց աշխարհի ուղիները բանակ դրած Սասնոյ բարձրաբերձ լեռներուն մէջ, զու անցքերու նախօրեակին: Հրայր, Վահան, Անգրանիկ, Չուուշ, Մակար, Մուրատ, Սեպուհ, Առաքել, Աւօ, Մանուկ, Վաղարշակ, Քեռի, Սմբատ,

\* շեռագայի նշանաւոր Քեռին:  
 \*\* թուրքոյց, իր այդ խիզախ և յաջող փորձէն յետոյ, վերստին քանի մը հոգով սլացաւ դէպի կովկաս, որպէսզի նոր ուժերով ու ուղիւստութեամբ հարձակուի Սասուն: Բայց այդ երկրորդ արշաւի ընթացքին, անոր վեճակուցաւ զարհուրելի վախճան մը, որ համտօտիւ կը պատմենք հետագային:

Մէյրօ, Գալէ... Կարծէք այդ խորհրդաւոր լեռնաշխարհի հին, լեզենդական դիւցազուններն էին, որ մէկէն ի մէկ լոյս աշխարհ եկան հայրենիքի ցաւոտ երկունքի յրերուն... Տարերային ոյժ մը խլեր էր զանոնք իրենց հայրենի օճախներէն, ծնողներէն ու սիրելիներէն, խլացուցիր էր անոնց մէջ աշխարհիկ վայելքներու տենչը և կատաղօրէն նետեր էր զանոնք դէպի արիւնոտ ջրապտոյտը: Մտքի և բազուկի ընտրանին էր թուրքահայ գաւառի՝ որ կ'անձնաւորէր ցեղի առնական յատկութիւնները, անոր խիղճը, պատիւն ու պարծանքը: Քաղաքական քիչ մը նպաստաւոր պայմաններու մէջ, անոնք պիտի կարենային լուծել ազգային մեծ կնճիղը և պիտի պսակէին համաշխարհային հռչակի դափնէ պսակներով, նման հելլեն դիւցազնավէպի մեծ դէմքերուն...

Կը հնչէ հայրենիներուն զօրակոչը, Սասնոյ բոլոր ծայրերէն հարիւրաւոր կտրիճներ կը համախմբէին իրենց ընտիր սպարապետներուն շուրջ: Թիկունքը՝ մեր լեռնական ժողովուրդը, զինւած կոպիտ զէնքերով, աւանդականօրէն քաջ, ուղիւստ և աներկիւղ: Իսկ անդին՝ ողջ Տարօնոյ հայութիւնը, սարսափահար գալիք անցքերու հեռանկարէն և կծկւած իր հարադատ, նւիրական Սասունի շուրջը:

Սպասելով նոր օղնական խումբերուն, «Բաշնակցութեան» սպայակոյտը կը հաւաքէ իր բոլոր ուժերն ու ուղիւստութեամբ, կը կանչէ հեռու մնացած նշանաւոր ուղիւստները, յետ կը կոչէ Վասպուրականի «աքորէն» Գէորգ Չաւուշը, որ պիտի կուէր յառաջապահ շարքերուն մէջ — «Քիւշիկ Չաւուշ», կորսիկացի տխրանին փոքրիկ հասակով և անոր անվահարութեամբ ու խիզախութեամբ — կը կեդրոնանայ փոքրիկ բանակը իր ուղիւստական դիրքերուն վրա և կը սպասէ անցքերուն: Կը սպասաստուի ճակատելու մեծ զրոհին, որու նմանը Սասունն անգամ աղահոգաբար երբեք չէր տեսած իր հոգմակոծ գոյութեան ընթացքին, ինչպէս չէր տեսած և այդ լեզէնը աղատութեան մարտիկներու, որոնք ամէն բան թողած, համակ զաղափար ու անձնագոհութիւն, համակ սէր ու գուրդուրանք դէպի հայրենի բազմաշարժար ժողովուրդը, գացեր էին հոն, այն ահաւոր լեռնացանցին մէջ գրկելու դաժան, անխուսափելի մահը...

Սպայակոյտին մէջ, տեսանք արդէն, դէպքերէն առաջ, համերաշխութիւնը կատարեալ չէր: Ո՞ւր չեն գժտուեր ուղիւստները խաղաղ ժամանակ, առօրեայ մանր հոգերու մթնոլորտին



մէջ... Լաւ չէին յարաբերութիւնները Հրայրի ու Անդրանիկի,  
Հրայրի ու Գէորգի, Վաղարշակի ու Հրայրի, լաւ չէին և երկար



Ա Ն Գ Ր Ա Ն Ի Կ

ատեն չէին խօսեր: Գծաւած չէին և շատ մը զինուորներ, ոմանք  
դառնացած Անդրանիկէն:

Հաշտութեան բերազոյն Ժամն էր, — անվերապահ զղջումի,  
Եղբայրական գրկախառնումի ժամը:

Հաւարած են այդ նոյնիւնիւն արարողութիւնը կատարելու:

Պօքըր Վահանին է: Մտաւորական ղեկավարն է, Կուսակցութեան  
պաշտօնական ներկայացուցիչը, որու ձայնին ամենքը կուշկնդրեն  
պատկառանքով, երկիւղածութեամբ: Եւ այդ ձայնը կտրուկ է,  
վճռական, ինչպէս զօրավարի կոչը պատերազմի դաշտին վրա:

— Ընկերներ, պէտք է խա՛ջ դնենք անցեալին վրա և  
ամենքս մաքուր սրտով, թեւ թեւի տւած, յառաջ տանինք մեր  
սուրբ գործը:

Վահան Մանէլեանին կը յաջորդեն Կովկասէն նոր ժամանած  
Եզոբն ու Երկաթը:

— Տղերք, գործի սիրոյն համար անցեալը պէտք է դերեզ-  
ման իջեցնել:

Եւ տեղի կուենայ գրկախառնումի վսեմ, սրտաշարժ տե-  
սարանը: Կը համբուրէին Հրայրն ու Անդրանիկը, կը համբուրէին  
Գէորգն ու Հրայրը և բոլոր զինուորները և բոլոր զգտւածները: Եւ  
այդ կարծրացած, սպարտական կուրծքերուն տակ, սիրտերը կա-  
լեկոծին ու կը փղձկին: Հրայր՝ մէկ կողմ, Անդրանիկ՝ միւս կողմ  
— չեն դիմանար զգացումներու յորդ հեղեղին ու կը սկսին լալ...

Եւ սրբազան լեռներու շուքին տակ կը վերականգնի, աւելի  
ամուր դարբնելով, ուխտեալներու յուզիչ ներդաշնակութիւնը:

Ահա և հրամանատարի ընտրութեան ժամը: Նո՛ւրբ, կըն-  
ձոտտ խնդիր մըն ալ այս: Ո՞վ պիտի առաջնորդէ ազատութեան  
լեզէտնը պատերազմի ընթացքին: Թեկնածուները — մէկէ աւելի  
և դրեթէ հաւասար իրաւունքով: Վիճարանութիւնները կը սկսին,  
ձայները կը բաժնուին: Կը հնչէ սերաստացի Մուրատի ձայնը:

— Հրամանատարի պաշտօնը տալու ենք այն ընկերոջ, որ  
Սերսի մահէն յետոյ առաջնորդեր է Ֆէդայիներու շարքերը...  
Անդրանիկն է այդ առաջնորդը և եթէ անդամ նա մեռած լինի,  
անոր դիակը մեր զբօշակին հետ պէտք է տարել մեր առջեւէն դէպի  
կռիւ ու ազատութիւն...

Եւ Անդրանիկ կը նշանակուի կուռղ ուժերու ընդհանուր  
Հրամանատար:

\*\*\*

Դէպքերը կը դաճավիժին: Թրքական ուժերը ամէն կողմէ,  
անգամ հեռուոր Տիգրանակերտէն, անընդհատ կուղան, կը հա-  
մախմբուին Սասունի շուրջ: Կը կարելի ամէն հաղորդակցութիւն  
լեռնավայրի ու դաշտի միջև: Կը սկսին անվերջ խուզարկութիւն-



ներ հարիւրաւոր դիւղերուն մէջ: Կը գրգռեն հայերուն դէմ խաւաճ  
խաժամուժը: Ամէն միջոց ի գործ կը դրւի հայութիւնը զինաթափ  
ընելու և ահաբեկելու:

Միւս կողմէ, սակայն, թշնամին կը ջանայ «երեւոյթը  
փրկել» արտաքին աշխարհի առջև: Նա եկեր էր 1895ի տեսարան-  
ները վերարտադրելու ամբողջ Տարօնոյ մէջ, եկեր էր Հիմնական  
բնաջնջումի ծրագրով և խիստ մտահոգ էր Եւրոպայի մէջ տեղի  
ունեցող շարժումներէն: Վախ ունէր, անշուշտ, և սասուցիներու  
երկարատեւ դիմադրութենէն, կը չափազանցէր հայերու ուժը:  
Ուստի յառաջ կը շարժէր մեծ ուժերով, դանդաղաքայլ և զգուշու-  
թեամբ: Կը խուսափէր գահավէժ, դղրդազին ժեսթերէ, չէր ար-  
տօներ մասսային նախճիրներ, անգամ Մշոյ դաշտին վրա, ուր  
համեմատաբար դիւրին էր այդ: Նա կուգէր ցուցնել աշխարհին,  
որ ինքը եկեր է Սասնոյ հայոց ապստամբութիւնը ճնշելու,  
«խռովարարները» պատժելու... Իսկ այդ արդէն իր իրաւունքն  
էր և ատոր դէմ ոչ ոք կարող էր բողոքել...

Երբ թուրքական բանակը, երկար պատրաստութիւնէ ետք,  
բարձրացաւ Սասուն, տասնեակ լեռնային թնդանօթներով, նա  
այնտեղ ևս երկար ատեն չէր դիմեր զինուորական գործողութիւն-  
ներու, չէր ուզեր նախայարձակի դեր ստանձնել, այլ կամացուկ  
կը պատրաստէր իր դիւրին յաջողութեան գետինը — կը գրգռէր  
քիւրդ աշիրէթները հայոց դէմ: Փորձ մը՝ որ նոյնպէս ճիգ կը  
պահանջէր, վասնզի քրդերը տեղ-տեղ կը մերժէին իրենց գործակ-  
ցութիւնը, յիշեցնելով տասը տարի առաջ եղած դէպքերն ու յու-  
սասխարութիւնը:

— Ասկէ առաջ ալ մեզի դրդեցիք հայերը ջարդելու, բայց  
երբ եւրոպացի ջննիչներն եկան, մեր վրա ձգեցիք ամբողջ պա-  
տասխանատուութիւնը, իբր թէ մենք ինքնազուլուխ էինք սարքեր  
ջարդերը...

Մերինները գիտէին առաջուց, որ կայ այդպիսի տրամադրու-  
թիւն մը քրդական որոշ տարրերուն մէջ և շատ ճիգ թափեցին  
օգտագործելու գայն, սիրաշահելու այդ ահաւոր ոյժը, գէթ չէ-  
զոքացնելու նպատակով, բայց բոլոր ճիգերն ապարդիւն անցան:  
Թուրք կառավարութիւնը աւելի զօրաւոր միջոցներ ունէր գրաւե-  
լու Քիւրդը և մեզի դէմ մղելու գայն:

Քրդական դաւադրութիւն մը բացեցաւ Անդրանիկի դէմ,  
գործարարներ էին սպանել Տափըկայ մէջ: Մերայնոց արթուն հըս-

կողմութեան շնորհիւ դաւը վիժեցաւ: Մեր խումբերը գրաւեցին  
Տափըկը և դուրս քշեցին քիւրդերը: Ուրիշ կողմ մը, «Տալաւէ  
գոմ» ըսած տեղը, պատրկանցի քիւրդերը խորհուրդ ըրին՝ իրենց  
չըջանին մէջ գտնուող եօթը տուն հայերու գոյքերը գրաւել և  
զիրենք ալ գերի պահել: Հայասէր քիւրդ մը կը մասնէ այդ դաւը  
մեր ընկերներուն: Շէնիկ, Սէմալ գիւղերը կը յուզին: Մուրատ  
այդ միջոցին կը գտնուէր Սէմալի մէջ: Պորհրդակցեցան — և սերաս-  
տացի ռազմիկը, առնելով իրեն հետ գոմերցի Իսօն, մօկունքցի  
Իսրայէլը, և ուրիշ զինուած ու շալակաւոր զինուորներ, կերթան  
գիշերով փոխադրելու անօգնական, լքած հայերը: Չատկի առա-  
ջին օրն էր, Մարտ 27ը: Դեռ ասոնք ճամբայ չելած, լուր կուգայ,  
թէ քրդերը յարձակեր են Տալաւէի վրա, թալներ են Մերթօի  
տուն, սղան տարեր և մնացած հայերն ալ բանտարկեր իրենց  
տուները: Մուրատ բազմաթիւ ընկերներով կուղղւի դէպի Տալա-  
ւէ, կը վառեն քիւրդերու տուները, կառնեն իրենց հետ անօգնա-  
կան, վտանգուած բոլո մը հայերը ու կը քաշին Կէլիէկըմման:  
Հաւարը կ'ընկնի քիւրդերուն մէջ: Մօտ 200 պատերազմիկներ  
կարչաւեն հայոց դիրքին վրա: Ու կը սկսի արիւնահեղ կռիւ մը,  
Մարտ 30ին: Շէնըքցիներ ու Սեմալցիներ ալ օգնութեան կը վա-  
զեն մերիններուն: Կռիւը տեւեց աղօթարանի բացումէն մինչեւ  
կէսօր: Հայոց յաղթութիւնը կատարեալ էր: Թշնամին չդիմանա-  
լով մերայնոց կատաղի յարձակումներուն, փախուստ տուա թող-  
նելով կուռ դաշտում 25 սպանուածներ և բազմաթիւ զէնքեր: Սաս-  
նոյ այդ անդրանիկ ճակատամարտին մենք գոհ տւինք մէկ ընկեր  
միայն — Իսրօն, մօկունքցի հերոսը: Եւ երկու շէնիկցի՝ վերա-  
տրուած:

«Հոս աննկարագրելի քաջութիւն ու յանդգնութիւն կը ցուց-  
նեն՝ թէ Մուրատն ու զինուորներ և թէ հայ ժողովուրդը»...

Վահանն է գրողը... Իր առաջին թղթակցութիւնն է պատե-  
րագմի մասին՝ տպած «Դրօշակ»ի մէջ:

Քրդական յարձակումը նախերգանք մըն էր: Անոր յաջոր-  
դեց թուրք կանոնաւոր բանակին գրոհը: Եւ Սասուն ամբողջ  
բռնկեցաւ:

Ինչպէ՞ս էին դասաւորուած մեր ուժերը: Հայերու պաշտպա-  
նողական գիծը կուռնեայ հինգ գլխաւոր կէտ: Հարաւ՝ Տալաւէիկ  
և Իշխնձոր, հիւսիս՝ Տափըկ և Շէնիք: Ու կեդրոն՝ Կէլիէկուզան:  
Հարաւային կէտերը աւելի ամուր էին, թշնամին ալ հոն համե-

մատարար տկար էր: Ուստի Գեորգ Չաւուշ իր ուժերու մէկ մասը կողզէ դէպի հիւսիսային ճակատը, Սպաղանաց Մակարի մօտ, իսկ ինքը Կէլիէկուզան կը բերէ իր ամենաընտիր զինւորները Տալւորիկէն ու Սպաղանքէն:

Կը նախատեսէր, որ Թշնամին պիտի դարձնուէր Շատախներու կողմէն և գրաւելով գիւղերը մինչև Շուշնամերիկ, պիտի բարձրանար Չայը ու մտնէր Կէլիէկուզան: Այդ շարժումը կասեցնելու համար, Անդրաքիկ կը ստանձնէ պաշտպանութեան գործը այդ ուղղութեամբ: Եւ կեդրոն ունենալով Տափըկը, կը սպասէ դէպքերու զարգացման:

Բարձրանալով Չայը, Թշնամին մէկ կողմէն պիտի կտրէր Անդրանիկն ու շատախցիները Կէլիէն, միւս կողմէն պիտի մտնէր Կէլի, բարձրանալով Ալիանքի ու Բարբառի հովիտով:

Այս ճակատի պաշտպանութիւնը յանձնեցաւ Հրայրիմ:

Հրայր երեք մասի բաժնեց իր ճակատը. ա. Չայի շրջան, զոր յանձնեց Մակարին: Այստեղ կը գործէին նաև Մուրատ իր Ֆէդայիներով, Կոտոյի Համիմ իր կամաւորներով: Բ. Կեդրոնը, որ կը գտնէր Ալիանցիներուն ձեռքը, մինչև Բարբառի հովիտը. և գ. Բարբառի հովիտը: Այս վերջին կէտերը պիտի պաշտպանէին՝ Սեպուհը իր Ֆէդայիներով, Շէնիբցոց տասնեակները Ղազարի ու Մանուկի ղեկավարութեամբ, Լաճկանցի Արթինը, Մէմալցի քեաթիպ Մանուկն ու Կրպօն՝ Մէմալի գլխաւոր ուժերով, Իսօն՝ Գոմսեցի կամաւորներով ու Ալիանցիներով, Մերկերցի Յովսէփը և ուրիշները իրենց տասնեակներով:

Ինչպէ՞ս էր դասաւորած Թշնամին իր ուժերը: Սալիհ փաշան եօթը թապուր կանոնաւոր զօրք ունէր այդ ճակատին վրա: Հասած էր և Բիթլիսի կուսակալ Ֆէրիտ փաշան: Հոն էր նաև Կինճի միթէսարիֆը: Յարձակող զօրամասերու հրամանատարն էր ուսուսածկական պատերազմի հերոսներէն չէրքէզ Գեօսէ պինպաշին:

Հարաւային ճակատներուն վրա Տիարպէքիրէն ու Սղերդէն եկած զօրքերը յառաջ կը շարժին: Անոնք կը բռնեն Ղայսերի, Փասուր, Սաչտուն և Փուռքա գիւղերը: Հաւաքւած են և ուրիշ երեք թապուրներ ու տեղական ջիւղեր: Այդ բոլոր ուժերը խիստ ճնշում կը գործեն Տալւորիկի հարաւ ու հարաւ-արևելեան մասերուն վրա: Եւ ապրիլ 1ին արդէն Գէորգ Չաւուշին յանձնած ճակատները լուրջ վտանգի տակ են:

Ապրիլի 2ին Թշնամին գրոհ կուտայ դէպի Քորախու, Ծո-

վասարի փէշերուն վրա: Սպաղանաց Մակարը, որ կը հսկէր Տալւորիկ գետի հոսանքին, կանցնի գետը և օգնութեան կերթայ Քորախուին: Իրեն կը միանայ Սմբատի տասնեակը: Մակար, սակայն, կը յաջողի կոտորածէ ազատել միայն Քորախուցիները և անոնց հետ կը նահանջէ գետի աջ եզերքը, ուր իր գլխաւոր պաշտպանողական կէտերն էին:

Հիւսիսային ճակատներուն վրա Թշնամու ուժերը կը կեդրոնանան երկու ուղղութեամբ. մաս մը՝ դէպի Հաւատորիկ, մաս մը՝ դէպի Ղզըլ Աղալ—Պոզման—Կէտուկ: Ապրիլի 6ին զօրքերը Հաւատորիկի վրայով կը բարձրանան դէպի Քոք ու Գեոման: Միաժամանակ, Մահպուկանքի վրայով, Բունաչէնի կողմէն կը յառաջանան ջիւղերը դէպի նոյն ճակատը: Անդրանիկ, տեսնելով, որ անկարելի պիտի լինի դիմադրել երկու կողմերէն եկող Թշնամուն, կը դատարկէ յիշեալ գիւղերը և այրելով գանոնք, ետ կը քաշի դէպի Տափըկ ու Գեղաչէն:

Այդ շարժումներուն զուգընթաց՝ չորս թապուրէ աւելի զօրքեր, իրենց հետ ունենալով Մշոյ ու Բաղէշի առաջնորդներն ու երեւելիները, կուղղուին դէպի Շէնիք: Թշնամուն օգնութեան կերթան նաև Պատրկանցի ու Սօլախցի ջիւղէքալիքները: Բայց սաստիկ ձիւնը անկարելի կը դարձնէ ամէն յառաջխաղացում՝ թէ Թշնամուն և թէ սասունցիներուն համար: Թուրք ու ջիւղէքալիք կամփոփուին Մէրկէմօզանէն դէպի արևմուտք, իսկ սասունցիք Սեմալ կը փոխադրեն Շէնիքի ժողովուրդը և Շէնիքն ալ կը վառեն՝ Թշնամու ձեռքը չտալու համար: Ու երկու կողմերը կը մնան սպասողական վիճակի մէջ մինչև Ապրիլ 11:

Ապրիլ 11ին տեղի կունենայ երկրորդ ճակատամարտը, աւելի մեծ ու արիւնհակող, քան Մարտ 30ի հայ-ջրդական ընդհանրումը: Թուրքերը, շուրջ 700 հեծեալներու զօրամասով կը մտնեն կիսաւոր Շէնիքը և իսկոյն կը յայտնին վտանգաւոր կացութեան մէջ: Մէկ կողմէն՝ Կուռտքի ձիւնները, միւս կողմէն (արևելքէն) Սեմալն էր, իսկ հարաւէն՝ սասունցիներ ու Ֆէդայիներ:

Հայոց ուժերը օգտուելով այդ նպաստաւոր պարագաներէն, անմիջապէս կանցնին յարձակման: Մէմալցի քեաթիպ Մանուկը իր համազիւղացի զինւորներուն հետ, Շէնիքցի Ղազարն ու Մանուկը, իրենց տասնեակներով, Սեպուհը իր Ֆէդայիներու և Ալիանցիներու հետ, Շէնիքցի Չոլոն իր համազիւղացիներու և Կէլիկանըմցիներուն հետ, Լաճկանցի Արթինը, Աւետիսն ու ուրիշ

մարտիկներ զանազան կողմերէ միահամուռ գրոհ կուտան Շէնիքի վրա, առնելով զայն խաչաձև կրակին տակ և ջանալով կտրել զայն թշնամու բանակէն: Թուրք ձիաւորները չորս ժամու չափ դիմադրելէ յետոյ, փախուստի կը դիմեն, թողնելով երկու տասնեակ սպանւած ու վիրաւոր և շատ մը զէնքեր: Սասունցիք բաւականատեն կը հետապնդեն փախչողները, բայց մուսթը կոխելով, կապաւինին իրենց նախկին դիրքերուն:

Այս երկրորդ ճակատամարտին մէջ հայ շարքերէն սպանւեցաւ Ալիանցի Տօնօի Լեքո անուն քաջարի երիտասարդը:

Թշնամին փախաւ ատամները կրճտելով և շուտով պիտի գար նորէն ու աւելի մեծ բանակով: Ի՞նչ կընէին թուրքերու բերած հայ առաջնորդները, որոնց միացան նաև Ստեփան ու Վարդան վարդապետներ, ամբաստանւած, իբրև ապստամբութեան հեղինակներ: Ի պատիւ իրենց, պէտք է ըսել, որ հակառակ սելիներու սպառնալիքին, անոնք յամառօրէն մերժեցին թշնամուն՝ ասոր պահանջած վաւերաթուղթը: Հայ բարձրաստիճան եկեղեցականները և Մշոյ ու Բաղէշի երեւելիները պիտի ստորագրէին արձանագրութիւն մը այն մտքով՝ թէ Ֆէդայիները յարձակեր են թուրքերուն վրա, ջարդեր ըրեր են և հրդեհներ քիւրդ ու հայ գիւղեր, մինչդեռ երկրին մէջ ոչ մէկ բռնութիւն, անարդարութիւն գոյութիւն ունի...

Ապրիլ 12ի իրիկան, կուսակալի կողմէն իբր պատգամաւոր Սեմալ կուգայ Ս. Յովհաննէսի վանահայր Առաքել վարդապետը, որ 1894ին ստորագրած էր թուրքերուն համար նպաստաւոր գրութիւն մը: Սա կը բերէ իր հետ Հայոց Պատրիարքին կոնդակը, որու միտքն այն էր, թէ ապստամբները պէտք է անձնատուր լինին կառավարութեան ու արահով դառնան իրենց տեղերը, ժողովուրդն ալ հպատակի կառավարութեան ու սպասէ անոր շնորհներուն:

Անմիջապէս Հրայր, Անդրանիկ և տեղացի իշխաններ խորհուրդ ընելով, կորոշեն յաջորդ առաւօտ մեծ ժողով գումարել, բայց որովհետև իրենց պատասխանը, անձնատուութեան վերաբերեալ, մերժողական պիտի լինէր, կը վճռին պատասխանելէ վերջ Ալիանքի, Սեմալի, Գեղաշէնի, Ծուշնամերիկի, Տափըքի, Իրիցունքի և այլ գիւղերու կուրդ ուժերն ու ժողովուրդը հաւաքել Կէլիկիւզան և հոն սպասել թշնամուն: Այս բոլոր գիւղերը կրակի կը տրւին: Անդրանիկ գիւղերով կը մեկնի Տարքը:

Հրայր առաւօտեան նկատելով թուրք զօրքերու յատուցադատութիւնը, կը հասկնայ, որ բանակցութիւնը լսի խորհական միջոց մըն է թուրքերու կողմէն և ճամբու կը գնէ Առաքել վարդապետը: Ինչպէս 1894ի սպանդի օրերուն, այս անգամ ես, իշնամին կը փորձէր խարդախութեամբ իր ծուլական տանի ըմբոսաները և մէկ հարւածով խեղդել հայկական ղեմադրութիւնը:

Հասաւ Ապրիլ 13ի առաւօտը: Ճակատադրական օր մը հայոց ազատութեան հինաւուրց երգչին՝ Հրայրին համար, որ Սեմալի տանիքներէն հեռադիտակով կը դիտէր զօրքերու յաւաքսադացքը դէպի Շէնիք ու Սեմալ: Անմիջապէս, նա հրաման կուտայ դիմաւորելու: Մերինները իսկոյն կրակի կուտան Սեմալն ու Դաշտակը: Խուճաք մը Ֆէդայիներ և ժողովուրդը երկու մասի կը բաժնուին. մէկ մասը Սեպուհի ու Մուրատի հետ կը բռնեն Բլրիկ, միւսը Հրայրի առաջնորդութեամբ կը բարձրանան գիւղի վերևի քարերը և կը պատրաստուին ղեմադրութեան: Կուսակալը իրարու ետևէ հինգ անգամ թնդանօթ արձակել կուտայ Սեմալի վրա և զօրքերը երկու խումբի բաժնւած, կարչաւեն գէպի Սեմալ: Թըշնամու ուժն էր՝ ութ վաշտ զօրք և 3-4000 ջուրդ: Մեծ մասը պիտի յառաջանար դէպի հարաւ, Ալիանքի վրայով անցնելու Բէրբէրի հովիտով և մտնելու Կէլիկիւզանի հովիտը: Իսկ միւս մասը պիտի ուղղւէր դէպի արևելք և Սեմալ, Չայ ու Չայի գլուխն անցնելով նորէն պիտի մտնէր Կէլիի հովիտը:

Ծանր էր մեր խումբերու կացութիւնը Սեմալի մէջ թշնամու ահաղին բռնակի հանդէպ: Ամենէն սուկի մտահոգիչ էր անդէն ժողովուրդի վիճակը: Տղաները աշխտակցին բոս կարելոյն դանդաղեցնել զօրքերու ընթացքը, որպէս զի ժողովուրդը կարենար ապահով անցնիլ Կէլիկիւզան: Երկուստեք կը տեղադրուէր հրացանաձողութիւն: Սարերը ձիւնապատ, զիրքերը անյարմար — բայց մեր կտրիճները անվհաս կը մղեն կոխը Մխիթարայ խորէն մինչև Ալիանցոց գլուխը: Անձրիի պէս կը տեղան զնդակները և թնդանօթը կորոտայ անընդհատ:

Գլխուն զնդակի հարւած մը ընդունելով, Չայի մէջ կը նահատակի Հրայրը... Ու քիչ յետոյ կը սպանին Սեմալցի Կրպօն, Ախալցխացի զինուոր Մարտօն և ուրիշ քանի մը տեղացիներ:

Կուրդներէն մաս մը Չայի վրայով կենէ Կէլիի կողմը: Քտեկէն կը խուժէ զօրքը: Ծանր հարւածներ կրեր էր հայոց բանակը, բայց այդ վայրկեանին բախար ժպտեցաւ անոր: Անդրա-

նիկ և ուրիշ խմբապետներ իրենց զինուորներով օգնութեան հասան ու կատաղօրէն յարձակեցան զօրքերուն վրա: Խուճապն սկսաւ թուրքերու և ջրղերու մէջ, ցիր ու ցան փախան: Մաս մը զինուորներ, որ մնացեր էին հովիտի մէջ, անխնայ կոտորեցան մերոնց ձեռքով: Ֆէդայիները շարունակեցին հետապնդել փախչող թշնամին, նետելով զայն դէպի Չայը և այնտեղէն վար, դէպի Շէնիքի ու Սեմապի աւերակները: Գիշերը հասնելով, կռիւը դադարեցաւ:

Թշնամին հարիւրէ աւելի զոհ տուաւ, բազմաթիւ վիրաւորներ ու թողուց կուր դաշտը 17 հատ մաուզէր: Բայց մեր շարքերն ալ ճարակւած էին և դաւնազին կողբային Հրայրի մահը...

Այդ կուր մէջ վիրաւորեցան Սեպուհը և քանի մը այլ ընկերներ:

Ապրիլ 14ին Մուշէն նոր օգնական զօրք հասաւ թուրքերուն: Գրոհ տւին դէպի Մէրկէր, բայց մերոնք վայրկենաբար ցիր ցան ըրին թշնամին: Մէրկէրն ալ պարպեցինք, Իշխնձորն ալ կրակի տւինք... Երկու-երեք օր խաղաղ անցաւ: Զօրքերը հետզհետէ կը խտանային ու կը պատրասուէին զրոհ տալ դէպի բարձունքները, ուր համախմբւած էին ժողովուրդն ու Ֆէդայիները:

Այս բոլորը կը պատմէ մեր դժբախտ Վահանը իր հապշտապ ու կցկտուր նամակներուն մէջ, ուղղւած «Դրօշակ»ին: Այստեղ կը կտրւի անոր թղթակցութեան թելը... Դաշնակցութեան լիազօրի թաթը մէկէն ի մէկ կանդամալուծւի և անոր մարմինը թաւազլոր կերթայ հանգչելու իր պաշտելի լեռնաշխարհի խորխորատներում...

Այնուհետև Տարօնոյ մեր Կոմիտէն է, որ կը տեղեկագրէ ողբերգական դէպքերը Դաշնակցութեան պաշտօնաթերթին:

Թուրք զօրքը կը բարձրանայ, կը պաշարէ Կէլիէկուզանը: Ահազին բազմութիւն են՝ բանակ ու աշիրէթներ, տասնեակ լեռնային թնդանօթներով: Ապրիլ 20ի գիշերն է... Պատերազմը զրեթէ անընդհատ տւեալ է արդէն տասը երկար, տանջալի օրեր... Կէլին պաշարւած է: Առաւօտեան ժամը 7էն թնդանօթները կորոտան և հրացանաձգութիւնը թշնամու բանակէն կը տւե՛ մինչև երեկոյ: Մերիները կը դիմադրէին, բայց մօտ էր արդէն ճակատադրական վախճանը: Առաջին օրը կրցան պահպանել իրենց դիրքերը, ապա ստիպեցան նահանջել: 300է աւելի թնդանօթային ուղմեր թափեցան պաշարւած հայերուն վրա... Մեծ էր

կորուստը, մեծ էին նաև թշնամու կորուստները: Սկիզբէն ի վեր և մանաւանդ այստեղ, Կէլիէկուզանի արաշարման միջոցին, անգէն ժողովուրդի կացութիւնը սաստիկ կը նեղէր ու կը կաշկանդէր մեր ռազմիկներու շարժումները: Կէլի մէջ համախմբւած շուրջ 20,000 կիներու, երեխաներու, ծերերու և հիւանդներու լացն ու կոծը թնդանօթային ուղմերու տարափին տակ՝ սիրտ կը կտրատէր: Շարունակել կռիւը՝ ըսել էր անխուսափելի բնաջնջման մատնել այդ ահազին բազմութիւնը, որ Սասնոյ 45 գիւղերու ժողովուրդն էր: Կացութիւնը կրիտիքական էր, պէտք էր միջոց գտնել՝ այդ գանգաձուր փրկելու: Մաս մը ռազմական առաջնորդներուն հետ ապաստանեցան ժամանակաւորապէս Տալուրիկ: Թշնամին սակայն, կը հետապնդէր և բուռն կռիւներու թատր դարձան Տալուրիկի բարձունքներն ևս: Ժողովուրդի միւս մասը մեր խումբերու պաշտպանութեան տակ, գիշերանց, գաղտնի ճամբաներով դէպի դաշտ իջաւ, հալածւած շարունակ ջիւրդ ու թուրք վոհմակներէն, որոնք լեռնային բոլոր խորշերը կը խուզարկէին անդադար: Կուսելով դաշտ իջան և մեր մեծ խմբապետները, տանելով իրենց հետ մնացած ժողովուրդը, որ ապաւիններ էր բարձունքներուն: Կռիւր վերջացած էր Սասնոյ մէջ և կը շարունակէր Մշոյ դաշտին վրա, ուր ամենուրեք կը վխտային թուրք զօրքերը: Սասունը ընկճելէ յետոյ, թշնամին այժմ կը սպասուար Տարօնոյ հոծ հայութեան...

\*\*\*

Աւելորդ է ըսել, որ Սասնոյ ժողովուրդը մեծ զոհեր տուաւ՝ թէ կռիւներու ընթացքին և թէ գահավէժ փախուստի օրերուն, երբ դաշտ կիջնէր նահանջող ու կուող Ֆէդայիներուն հետ, տուն, տեղ թողած, աննկարագրելի թշուառութեան մէջ: Հազարէ աւելի սպանւածներ, մնացածը՝ կամ սլաքապարւած Սասնոյ անդունդներուն մէջ, կամ թէ ցիր ու ցան Մշոյ դաշտում, ենթակայ հալածանքի ու ամէն տեսակ զրկանքներու: Շուրջ 6,000 հոգի իջեր էին Մուշ:

Եւրօրդի կառավարութիւնը գոհ չէր բնաւ պատերազմի ելքէն, գոհ չէր իր այնքան դժւարին ու զոհառատ ճիղերու արդիւնքէն: Եւ կը պատրաստէր նոր հարւած մը: Հրաման տուաւ, որ հազարաւոր փախստական սասունցիները այլ ևս չվերադառնան



իրենց բոյները, այլ տեղաւորին տափարակներուն վրա և Սասունը բնակեցւի ամբողջապէս քիւրդերով...

Հայկական Սասունը — իսպառ հայագերծ... Չարհուրանքի և ցասուժի ճիչ մը անցաւ փախստական զանգւածներուն և ողջ Տարօնոյ հայութեան մէջ: Բայց անակնկալ միջամտութիւն մը եկաւ խանգարելու Յըլզըզի ծրագիրները: «Յւրոպա» ըսւածը, այժմ այլևս անգոյս լէջ մը չէր... Հիւպատոսները հոն էին, Մուշի մէջ իսկ, կը կատարէին հսկողութեան իրենց գործը, հրահանգւած իրենց պատկանեալ կառավարութեանէն: Եւ երբ հասաւ սուլթանի հրամանը, անոնք ծառայան, բողոքեցին, արգիլեցին: Ու անոնց հովանաւորութեան տակ, շուրջ 6000 սասունցի ժողովուրդը նորէն բարձրացաւ իր հարազատ լեռնավայրը, գնաց վերստին շտկելու և շէնցնելու երկիրը...

Այո՛, անգէն ժողովուրդն էր սուտողը — մեծ մասամբ կանայք, ծերեր ու երեխաներ, — գինեալները գիտէին կուրի ու պաշտպանել թէ իրենք գիրենք և թէ, ըստ կարելոյն նաև ժողովուրդը: Դրութիւնը կրիտիքական էր: Պարագլուխները կատաղի հետապնդումի առարկայ էին: Հակառակ ատոր, հակառակ 15 հազարանոց թուրք բանակի և տասնեակ հազարաւոր քիւրդերու ներխուժումին ու արշաւներուն, Գէորգ Չաւուշ, Մակար ու այլ խմբապետներ չհեռացան Սասունէն, մնացին պահուած քարայրներուն մէջ: Անդրանիկ, Մուրատ, Սեպուհ, Առաքել, Աւօ և այլք, շուրջ հարիւր ընկերներով նոյնպէս երկար ատեն պահուեցան Մշոյ դաշտի գիւղերուն մէջ, ուր սակայն հետապնդումներն ու խուզարկումները կը կատարէին անողոք կատաղութեամբ: Հայ ժողովուրդը հիւրընկալած ու պահած էր զանոնք: Խոշոր վարձատրութիւն մը նշանակւած էր Անդրանիկը մատնող հայուն: Ոչ ոք համարձակեցաւ ստանձնել դաւաճանի անարգ պաշտօնը: Անդրանիկ կրցաւ նոյնիսկ նորէն Սասուն բարձրանալ, մնաց այնտեղ մէկուկէս ամիս և ապա ձգեց — ընդմիջտ, աւա՛ղ — իր սիրած լեռնավայրը... Դաշտ իջաւ Գէորգ Չաւուշի հետ, դառաւ ընկերները համախմբւած Բերդակի մէջ: Կամեցաւ, նախ քան մեկնիլը, անգամ մ'ևս հարւած տալ թուրք կառավարութեան ու զօրքերուն, որոնք կը շարունակէին իրենց խժգժութիւնները, հակառակ որ Սասունը ընկճւեր էր արդէն:

Յուլիս 16ին 34 գինակիցներով կերթայ Կուրավու: Յաջորդօրն իսկ լուր կը հասնի խումբին, թէ 80ի չափ թուրք գինւորներ

գիւղը կուգան: Գիւղապետը կը դիմաւորէ զանոնք և կը տանի գերեզմանոցը, ուր ամենքն ալ կը ստանան ուտելիք: Չինւորներու վոհմակը ատով չի գոհանար, կը մտնէ գիւղը և կը սկսի տուներէն բռնի պահանջներ ընել: Մէկը կը փորձէ հայ կնոջ մը պատուին դպիլ: Կինը, ահաբեկած, ճիչ կարձակէ ու կը փախչի: Ֆէ-դայիները իրենց թագստոցէն կը դիտէին տեսարանը: Խումբը չորս մասի բաժնւած էր: Չինւորներէն մէկը կը մօտենայ այն դրան, ուր Առաքելի տանեակը կը գտնւէր, կը ծեծէ դուռը. տղերք կուղեն դուրս նետուիլ, բայց Կայծակ-Առաքել կը պահէ զանոնք: Դրան արանքէն գինւորը կը նկատէ ներսը գտնուողները և «Կէլի՛ն, պուրտա Ֆէդայի վար» կանչելով ձայն կուտայ միւս ընկերներուն: Շուտով կը հաւաքին թուրք գինւորները և կը պաշարեն տունը: Անդրանիկ միւս երեք խումբերը պատրաստ կը պահէ, բայց քիչ ևս կը սպասէ, որ զօրքերը աւելի հաւաքին, որպէսզի կարենայ աւելի առատ հունձ ընել:

Յանկարծ երեք կողմերէ կը պայթին մերոնց հրացանները: Թուրքերը կընկնին դիակ դիակի վրա, խուճապը կը սկսի: Մէկ մասը հազիւ կը կարողանայ գիւղի աթարներու կոյտերուն ետևը և գերեզմանոցին մէջ դիրք բռնել: Գէորգ Չաւուշ և Մուրատ կը սլանան դէպի գերեզմանատուն և անոնց ետևէն կը թռչին գիւղի թուրքերը: Ու երկու կողմէն կը սկսի կատաղի կռիւ մը, գրեթէ կուրծ կուրծքի: Կը հասնին շուտով Սմբատ, Իսօ, Պօղոս, Աստուր: Թուրք գինւորներու դիակներով կը ծածկուի գերեզմանոցը, ողջ մնացողները մի կերպ փախչելով կազատին: Գլխապատառ կը փախչի և զօրապետը, որ քիչ առաջ խրոխտ հրամաններ կարձակէր:

Ժամ էր, սակայն, հեռանալու: Անդրանիկ կը զրկէ Մուրատը բոլոր դիրքերուն իմաց տալու, որ մութը կոխելուն պէս, ամենքը կազմ ու պատրաստ սարսեն սուլիչի ձայնին՝ հաւաքելու Մուրատ գետի ափը: Որոշւած ժամուն խումբը այնտեղ է և գիշերային լուսութեան մէջ կ'անցնի ջուրը, կը հեռանայ:

Ի վերջոյ, հրամանատար և խմբապետներ ճամբայ բացին հազարաւոր արգելքներու մէջէն և բազմաթիւ ընդհարումներէ յետոյ, անցան Վասպուրականով Պարսկաստան, ապա Կովկաս:

Երկուքը միայն մեր յեղափոխական առաջնորդներէն գտան իրենց յաւիտենական հանգիստը Սասնոյ լեռներուն մէջ: Չկար այլ ևս Կուսակցութեան պաշտօնական ներկայացուցիչը, Վահան

Մանուէլիան: Քայլելու անվարժ՝ նա չէր կրցեր միանալ Անդրա-  
նիկին, Մուրատին, դաշտ իջնող ընկերներուն: Պահեր է որոշ  
ժամանակ քարայրի մը մէջ, և օր մը դուրս ելլելով, նշմարեւր է  
գօրքերէն ու գնդակահարեւր: Ո՞ւր կը հանգչին անխոնջ քարոզչի  
ոսկորները — ոչ ոք գիտէ...

Կէլիէկիւզանի հանդստարանին մէջ, Սերոբի կողքին, պառ-  
կած կը մնայ մեր միւս խնկելի նահատակը, Ղզըլաղաջի մեծ գա-  
ւաղը — Դժոխք-Հրայրը: Ի՞նչ գեղեցիկ կեանք մըն էր — համակ  
նւիրւած Գաղափարին — և ի՞նչ հերոսական մահ: Անոր սգատանջ  
կերպարանքը յաւէտ պիտի մնայ դրօշմաւած մեր հայրենաբաղձ  
սրտերուն մէջ և անոր քարոզներն ու ռազմի թւաւոր խօսքերը հո-  
գեպարար մեղեդիի պէս պիտի հնչեն միշտ մեր ականջներուն:  
Սերոբ մը չէր, ոչ ալ Անդրանիկ: չունէր մէկուն առիւծային կագ-  
մաւածքը, միւսին խիզախ թռիչքները, բայց իր ձայնին մեղեդիով  
տասնեւհինգ տարի շարունակ կը հմայէր ժողովուրդը՝ լեռնցի և  
դաշտեցի՝ որոնց հետ ապրեցաւ նա սիրող ու գթօտ եղբօր պէս,  
բաժնելով ամենուն վիշտն ու տառապանքը և ներշնչելով յոյս ու  
կորով... Տասնեւհինգ տարի՝ թափառական ու հալածական, եր-  
բեմն նաև բանտի ու աքսորի մէջ... Եւ նոյն ժողովուրդին հետ  
մնաց գերագոյն փորձութեան ժամին, երբ նւիրական լեռներուն  
վրա նորէն կուտակեցան շանթառատ ամպերը... Անգամ մը ևս,  
իր վտիտ մարմնով ցցեցաւ Սասնոյ ծերպերուն վրա և աղիողորմ,  
սրտառուչ ձայնով հաւա՛ր կոչեց համայն հայութեան:

«Սասունը ահա բռնկեցաւ—կը գրէր Դրօշակին իր վերջին նա-  
մակով\*), դէպքերէն ամիս մը առաջ—գուցէ այս ըլլայ մեր վերջին  
նամակը... Ձիւնը շա՛տ, բուք ու բորանը՝ խիստ, ժողովուրդը՝  
մերկ ու բորիկ, կոիւր անհաւասա՛ր... Ընկերներ՛ր, գիմում ըրէք  
քաղաքական աշխարհին, մեր բարեկամներուն, առանց վայրկեան  
կորսնցնելու: գուցէ գազանութիւններուն սահման կը դուրի»...

Անվերջ համբոյրներով  
Հրայր»:

Մէկ ու կէս ամիս այդ հաւարէն վերջ, Յեղափոխութեան և  
Ազատութեան քաղցրախօս սոխակը ընկաւ շանթահարւած թշնա-  
մու գնդակէն ու գնաց ընդմիշտ հանգչելու այն խրոխտ բարձունք-  
ներուն վրա, ուր այնքա՛ն հառաչանքներ էր արձակեր և այնքան  
երազներ փայփայեր...

\*) 1904թ. 6-7 փետրւար:

Այսպէս վերջացաւ Սասնոյ աննախընթաց պատերազմը:

Ապստամբութեան — ճիշտ կը լինէր ըսել՝ ինքնապաշտպա-  
նութեան — կռիւները մնացին կղզիացած լեռնաստանի մէջ: (Եթէ  
չհաշուենք պարտիզանական քանի մը կռիւներ դաշտին վրա, որոնք  
անխուսափելի դարձեր էին ստեղծուած պայմաններուն մէջ): Վաս-  
պուրականի\*), Կարնոյ ու այլ շրջաններ հանդարտ մնացին: Այդ-  
պէս ալ կանխաւ որոշուած էր: Թշնամին աճապարեւ էր, ժամանակ  
չէր տւեր մեր ուժերուն քիչ-չաւտ պատրաստելու, կեդրոնանա-  
լու: Ոչ իսկ Սասունի մէջ:

Իսկ հայոց պատրաստութիւնները դանդաղ կերթային...  
Դիւրին բան չէր՝ ղէնք, խումբեր ու ռազմամթերք փոխադրել ու  
կեդրոնացնել այնքան ծանր պայմաններուն մէջ...

\*) Վասպուրականի մարտինն ալ արդէն ղլխատուած էր: Վարդգէս  
բանտն էր...

ԻՎ

ՍԱՍՆՈՅ ՊԱՏԵՐԱԶՍԸ ԵՒ  
ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՃԻԳԸ

Հ. Յ. Դ. Կովկ. Շրջանային Ժողովի մէջ. — Թաուցիկ խումբեր և պարտիզանական կոիւնքեր. — Օգնութեան աշխատանքները Բագուսում. — Ռուսներու արհեստանոց. — Խմբապետներու շարքանը. — Դուստան, Խան, Նէվրուզ, Ռոսկան, Աշոտ-Նրկաթ. — Զօրի եւ Մօսիմի արշաւանքները. —

Տալուրիկի և Կէլիի բարձունքներուն խաղացող դրաման իր դրդադադին արձագանդներն ունեցաւ ողջ հայ աշխարհում: Հերոսական լեռնավայրի կենաց ու մահու խնդիրը և նոր ընդհանուր կոտորածի հաւանականութիւնը դարձեր էին, ընկանաբար, համայն հայութեան հրատապ խնդիր և ծանր մտահոգութեան առարկայ: Տարօնէն մինչև Սալմաստ ու Թաւրիզ, մինչև Թիֆլիզ, Երևան ու հեռաւոր գաղութները՝ ողջ գիտակից հայութիւնը հեւ ի հեւ կը հետևէր Սասնոյ շարժման ելևէջներուն և սրտատրոփ կը սպասէր վախճանին: Գուցէ երբեք հայ ազատագրական պատերազմի սկիզբէն ի վեր, կովկասահայք այն աստիճան չէին խանդավառուեր թուրքահայոց շարժումներով և երբեք չէին ծաւալեր այնքան բուռն գործունէութիւն ի նպաստ քոյր-հասուածին, անոր դատին, անոր ազատութեան պայքարին: Ռուսահայ մամուլի էջերը լեցուն էին Սասնոյ անցքերու նկարագրութիւններով և Անդրանիկին ու այլ պարագլուխներուն ներկած ռազմական երդերը կը հնչէին մեծատան ասլարանքներէն մինչև յետին հայ գեղջուկի խրճիթը: Ռուս մամուլն իսկ, Կովկասի ու Ռուսաստանի մէջ, կենդանի հետաքրքրութիւն կը ցուցնէր դէպի Սասնոյ անցքերը և օրը օրին կարճանագրէր հայ մարտիկներու սխրագործութիւնները:

Եւ ամենուրեք կը շեշտէր, որ 1904ի պատկերը հիմնականապէս տարրեր էր 1894ի պատկերէն. հայը, սասունցին, կը ներկայանար աշխարհի առջև՝ ոչ այլ ևս իբրև ջարդուող, այլ իբրև

կուռ ժողովուրդ: Կուռը՝ յանձին իր ազատատենչ, զազախարական փոքրամասնութեան, կուռը յանձին իր «անմեա լեզէնին»: Սասունը չէր ծածկէր միայն մարտիրոսութեան զափնիներով, այլ և հերոսութեան լուսապսակով:

Խանդավառութիւնն ու երգերը, սակայն, բաւական չէին: Պէտք էր իրական օգնութիւն բերել կուռը Սասունին, նոր ջարդերու մղձաւանջին տակ ապրող Տարօնոյ ժողովուրդին: Եւ այդտեղ ալ՝ դրսի հայութիւնը, կարող ենք ըսել, չթերացաւ իր պարտականութեան մէջ: Պօսթս, հարկաւ, մեր միլիոնատէր դասակարգի մասին չէ, որ երբեք չէր ելլեր իր վհատեցուցիչ անտարբերութենէն — թէև կը պարծենար յաչս օտարի իր ցեղակից ռազմիկներու գործերով — խօսքս բուն ժողովրդական տարրերու մասին է, որոնք այս անգամ չզլացան իրենց փութկոտ աջակցութիւնը Հայ Մարտական Կազմակերպութեանը, բերելով անոր իրենց տուրքը դրամով, գէնքով, մարդով:

Պէտք էր օգնել Սասունին, պէտք էր ընել անկարելին՝ նոյն իսկ օգնական խումբեր ճամբելու Կովկասէն:

Եւ ահա մեծ, դժարալոյծ կնճիւղը, որ կը դրւի ու կը ծեծւի երկարօրէն Դաշնակցութեան Շրջանային Ժողովին մէջ\*): Կը մասնակցին Հ. Յ. Դ. բոլոր կովկասեան մարմինները՝ իրենց ձեռնհաս պատգամաւորներով:

Թուցիկ, օգնական խումբերու հարցը լուծւեցաւ դրական իմաստով: Քանի մը խումբեր զրկւած էին դեռ դէպքերու սկիզբը:

Գրքիս սահմանափակ ծաւալը թոյլ չի տար տարաբախտաբար, ներկայացնել այստեղ քիչ-չատ լիակատար պատկերը հայրենասիրական այն աննախընթաց եռուզեռի և այն տենդային աշխատանքներուն, զորս պարզեցին կովկասահայ և պարսկահայ հատուածները այդ խոռվայոյզ ժամանակաշրջանում, երբ ինքը Ռուսահայաստանն ալ խորապէս ալեկոծւած էր եկեղեցական գոյքերու առթիւ սկսւած շարժումներով:

Ահա փոքրիկ պատկեր մը — Բաղուն: Նաթաշխարհի մայրաքաղաքը 1903—1904 թւականներուն թատերարեմ է հետաքրքրական ու պէս-պէս աշխատանքներու: Ոստիկանական հսկողութիւնը թոյլ է համեմատաբար և հայ տարրը քիչ-չատ ազատ է իր շարժումներուն մէջ: Բալախանիի նաւթահանքերը, Սեւ Քաղաքը,

\*) Ամաթիւը չկայ Արձանագրութեան վրա: Հաւանականօրէն ժողովը կայացեր է Մարտ ամսոյ մէջ (1904):

բուն իսկ Բագուն ցանցապատած են Դաշնակցութեան բջիջներով: Բագմաթիւ են ծանօթ ու անծանօթ հայդուկները և մանաւանդ հայդուկութեան երիտասարդ թեկնածուները: Ձէնքի Փոնդեր ու պահեստներ կը ստեղծէին և Ռուսաստանի հեռաւոր քաղաքներէն գէնք, ռագմաթերք և պայթուցիկ նիւթեր կը փոխադրէին ու կամբարէին Բագուի մէջ՝ Թուրքահայաստանի՝ և Կովկասի կարիքներուն համար: Չոհեր շատ տաւ Կագմակերպութիւնը թէ այդ փոխադրութեան աշխատանքներու և թէ ռումբեր պատրաստելու փորձերու առեն: (1903ի աշնան Կարսի ուժանակային պայթիւնը խլեց մեզմէ հինգ թանկագին գործիչներ, որոնք կը պատրաստէին սահմանն անցնել — Իսաջան Առաքելեան, շուշեցի, Պօղոս Պօղոսեան, տրապիդոնցի, Յովհաննէս Նահիկեան, խարբերդցի — Հիւսէյնիկ գիւղէն — Սարգիս, ռօղօստօցի, Վարդան Տօնօյեանց, կարսեցի):

Բագուի Կեդրոնական Կոմիտէն նոյն իսկ սեփական արհեստանոց հիմնեց ռումբեր պատրաստելու համար:

Կային և շարք մը կանանց խումբեր, որոնք թէ պրոպագանդով կը գրադէին և թէ ձեռագործ կը պատրաստէին գացող հայդուկներուն նւիրելու կամ թէ Կարմիր Պաչին համար վաճառքի հանելու:

Դադանի խումբեր ամենուրեք: Ու մէկ կարգախօս — ամէն դաշնակցական պէտք է զինավարժ լինի և սեփական գէնք ունենայ: Միմիայն քարոզչութեամբ չէին պարապել խումբերը. զինական մարզանքներ ալ կը կատարէին մեր նորակոչ, նորընծայ տղաները: Դաշնակցական Պէչօ և ուրիշ հին ռագմիկներ հեռու, բաց դաշտին մէջ, Գայլի Դրունք կոչւած տեղը զինավարժութեան դասեր կուտային տղաներուն: Մարզած կամաւորները, Կուսակցութեան կոչին վրա, կուղղւէին դէպի Կարս ու այլ սահմանակից վայրեր՝ ասպատակային խումբեր կազմելու և Սասուն ճամբելու նպատակով:

\* \* \*

Եւ ահա ասպարէզ նետեցաւ փայլուն, աննախընթաց շարան մը հայդուկային զինւած խումբերու, որոնք Պանի, Թորգոմի, Դումանի, Թէքիրդաղցի Նեվրուզի, Աշոտ Երկաթի ու այլ խմբապետներու ղեկավարութեան տակ, Տարօնոյ մեծ դէպքերու օրերուն, անցան ռուսական սահմանը, մաս մը Սասուն երթալու

դիտաւորութեամբ, մաս մըն ալ Կարնոյ, Բագրևանդի, Վասպուրականի շրջաններում կուելու, թուրք կառավարութեան ուշադրութիւնը ցրելու, թուրքական ուժերը ջլատելու և անոնց մէկ մասը բուն դէպքերու թատերավայրէն հեռացնելու նպատակով... Մղեցին հերոսական ճակատամարտներ պօրքերու, քիւրդերու դէմ, մեծ կորուստներ պատճառելով թշնամուն, բայց ի վերջոյ — անխուսափելի վախճան մը — պարտեցան ու մեծ մասամբ զոհ գացին անհաւասար դօտեմարտին:



ԱՇՈՏ-ԵՐԿԱԹ (կանգնած): Նստածը՝ ՆԱՀԻԿԵԱՆ՝ կը պատրաստուէր նոյնպէս անցնել Սասուն (1903թ.), բայց գոհ գնաց Կարսի ուժանակային պայթումին:

Ամբողջ վէպի մը նիւթ պիտի դառնար այդ Թէքիրդաղցի տիտանը — Օննիկ Նեվրուզ — ճշմարիտ Հերքուլէս մը, Սերրոբէն ալ աւելի բարձրահասակ, յաղթանդամ, որ թէեւ ծնւած հայրենիքէն հեռու, մեծատան զաւակ մը՝\*) մանուկ օրերէն երա-

\*) Հին, գաղափարական ընտանիքներէն էր: Օննիկի հետ միաժամանակ կը գործէին Կուսակցութեան դրօշին տակ Նեվրուզ ընտանիքի միւս անդամները՝ Յակոբ (հետագային դոքտոր Նեվրուզ) և իր եղբայրը՝ Մաքս-Լեւոն, որ իր դերն ունեցաւ Բանկ Օտտոմանի դէպքին մէջ: Նեվրուզները կը գրադէին նաև





Վէպերու նիւթ են և հարիւրաւոր ուրիշ ռազմիկներ, որոնցմէ իւրաքանչիւրը ամբողջ աշխարհ մըն է հոգեկան փոթորկումներու և սրտացունց դրւագներու... Ե՛րբ պիտի գրւին այդ վէպերը, ո՞վ պիտի գրէ, ե՞րբ պիտի տեսնեն մեր սերունդները դէ՞թ ամփոփ կենդանագիրներ ծանօթ ու «անանուն» այդ հերոսներուն, որոնք մղեցին ազատութեան պայքարներուն ամենէն դժնդակը և մեռան, որպէսզի ապրի հայկական դատը... Մենք կանցնինք միայն հակիրճ, թուցիկ ակնարկներով:

Ի՞նչ հէքեաթային թուիչք մըն էր այդ սքանչելի **Փորզումի** առաջին ուղեւորութիւնը ձիււոր խումբով դէպի Տարօն, անոր անակնկալ ժամանումը Սասուն — և ի՞նչ սասանեցուցիչ ողբեր-

անդ հաւատը. 1893ին թէ 94ին Կ. Պալտայ Կեղզոնական Կոմիտէն Ռոջոստօ կը գրկէ իր ներկայացուցիչը եւ անոր հետ Կուսակցութեան կնիքը: Այդ օրը մեծ էր ոգեւորութիւնը մեր մտերմիկ շրջանի մէջ: Մերինները, չորս հոգի, հաւաքուցան մէկուն մօտ՝ հնգերորդ ընկերոջ մը ներկայութեամբ, որ տակաւին չէր «միջառած»: Երբ Կեղզոնական Կոմիտէի պատգամաւորը ոգեւորիչ խօսքերով բացատրեց իւրաքանչիւրի պարտականութիւնը եւ ապա հանց գրդանէն խորհրդաւոր կնիքը, նեմբող իսկոյն ձեռքն առաւ զայն եւ համբուրեց կրօնական ջերմեանդութեամբ: Անոր օրինակին հետեւեցան միւս ընկերները, բացի հինգերորդէն, որ ինքզինքը տակաւին անարժան կը սեպէր յեղափոխութեան կնիքը համբուրելու: — «Տղա՛ս, պտոպց նեմբուրը, ա՛ն համբուրէ, սա զօ խաչէդ սուրբ է»...

Հետաքրքրական էր տեսնել թէ չէրդաղջի այդ վիթխարին մեր բազմամարդ դադութային ժողովներում, 1896-97ին, Ռուսմանիայ մէջ, ուր «աշճի» էր եւ փոքրիկ ճաշարանի տէր: Կը խօսէր համարձակ, ժողովրդական պարզ, անպատճ բարբառով եւ ընդհանուր սիրոյ, գուրգուրանքի առարկայ էր: Բալաբեի Կարապետի պէս, միայն Իաշնակցութիւնը կասուածացնէր, կը պաշտէր անոր կնիքն ու գրօջը եւ չէր հանդուրժեր ոեւէ հակաճատութիւն: Ահաւոր էր մանաւանդ վատ, բանասերկու հակառակորդներու հանդէպ, որոնք կուգային խանդարելու ժողովներուն ընթացքը իրենց կրքոտ հակաճատութիւններով: Նեմբուրովի մի խիստ նայածքը բաւ էր՝ գինաթափ ընելու ամենամասնաձ կրքերը եւ առհասարակ անոր ներկայութեամբ միջկուսակցային վիճարանական ժողովներու մէջ կը տրէր կարգ ու անդորրութիւն:

Երբ 1899ին այցի կեւա ժընեւ, «Երօշակ»ի խմբագրապետը պաղ անտարբերութեամբ ընդունեց զինքը: Գրիստափորին հաճելի չէր անոր մանկական հետաքրքրութիւնն ու երկար ուղեւորութիւնը աղբարիկ գրպանով՝ ժընեւի անցուղարձը եւ գործիչները տեսնելու նպատակով: Բայց 2-3 տարի յետոյ, Իաշնակցութեան առաջնորդը սկսաւ փնտրել նեմբուրը... «Փոթորիկ»ի համար: Ու դատու: Եւ թէ չէրդաղջին իր դերն ունեցաւ Շուշիի գիշերային դաւադրութեան մէջ: Իր հէքուլէսեան կերպարանքով եւ խոժոռ նայածքով սարսափահար ըրաւ ժամհարեանը եւ ստիպեց զայն քաշել անձուռն թղաններուն հետ դէպի ժամանակաւոր գերութիւն, քաղաքէն դուրս...

գութիւն էր նոյն կարիճի երկրորդ մասը, աւելի մեծ խումբով, դէպի մարտնչող լեռնավայրը, որպէստարչ նահատակութիւնը կէս ճամբուն...

Երիտասարդ ուխտեալներու շարքէն էր, Մենակի, Իսաղանի, Նժդեհի դասընկեր Շուշիի Թեմականում. ապա բարձրագոյն ուսման հետամուտ Մոսկուայի մէջ, գրեթէ մանկութենէն ինքզինքը նւիրած Հայրենիքին, նա շատերուն պէս կիտատ կը թողու ուսումը, կը մտնէ գինւորական ծառայութեան, կը ստանայ ուսական սպայի աստիճան ու կը նետուի հրդեհին մէջ... Առաջին յաջողութիւնները կը պատեցնեն իր դուլիւր և հետզհետէ կը դառնայ աւելի յանդուգն ու ձեռներէց: Սասուն երթալը 20 ձիււորով, ան ալ 1903ի վերջերուն, երբ զիւրդ ու թուրք խաժամուժը մարախի պէս փուած էր իր ճամբուն, ապա Սասունէն վերադարձը Կովկաս, դարձեալ անվնաս, քանի մը ընդհարումներէ ճողպարելով, — այդ բոլորը, ինչպէս ըսինք, հրաշքի պէս բան մըն էր:

Բայց ահա երկրորդ ու եղբրական արշաւը: Որսորդ Գէորգի հետ կը կազմէ 61 հոգինոց խումբ մը: Մէջը՝ շարք մը մտաւորականներ, բժիշկ, ուսանող, քահանայ. նոյն իսկ հարուստ ընտանիքի մէկ զաւակ, Լ. Քալանթարեան, որ Բագուի նաւթահորերը թողած, դացեր էր Հայաստանի համար կուելու: Այդտեղ էր և արիասիրտ Վաղօն, որ թալներ էր Աղեքսանդրապոլի կառավարական մեծ պահեստը և միլիոնաւոր փամփուշտներ յանձներ Իաշնակցութեան: Այդտեղ էր Անուշաւանը և անոր պէս բազմաթիւ անձնուրացիներ:

Ճամբայ կեւեն Օլթիի շրջանէն, սահմանը կանցնին, աղբիւրի մը վերև, լեռ կը բարձրանան ու դիրքեր կը բռնեն: Բայց ուսու գինւորները կը նշմարեն Ֆէդայիները և լուր կուտան իրենց սահմանապահ գործի հրամանատարին: 150 ուսու գինւորներ կը շրջապատեն մերոնց դիրքերը, միաժամանակ լուր տալով տաճիկ գործերուն, որոնք կը փութան դէպքի վայրը: Օլթիի կողմէն ալ ուսական հրամանատար, զնդապետ Բրկօվ, կը հասնի նոր օգնական ուժերով: Առաջին յարձակումը կը գործեն ուսուներ, քշելով Ֆէդայիներուն խումբը դէպի թուրքերը: Թորգոմ կը հրահանգէ ընկերներուն՝ չպատասխանել ուսուներու յարձակումին և կուիլ միայն տաճիկներուն դէմ: Ու պատգամաւոր կը զրկէ ուսու հրամանատարին՝ բացատրելու խումբի նպատակը: Իրարու ետեւէ դացող երկու պատգամաւորները, Անուշաւան և Քալանթարեան,

բանտ կը նետուին: Բըկօվի հրամանով ուսաները երեք կողմէ կը սրաշարեն Փէդայիներու խումբը. չորրորդ կողմէն ալ՝ Թուրքերը. ու այսպէս կառնեն հայոց խումբը խաչածեղ կրակին տակ: Անել կացութիւն մը՝ տարօրինապէս ողբերգական: Մեր դժբախտ ընկերները, չէին կրակեր ուսաներուն վրա, իսկ վերջիները, ատկէ քաջալերած, աւելի եռանդով կը շարունակէին յարձակումները:



Աջ ԿՈՂՄԸ՝ ԹՈՐԳՈՄ, ՁԱՆ՝ ԻՍԱԶԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Միայն տածիկներն են, որ 10ի չափ ասկեարներ զոհ կուտան մերիներու գնդակներուն: Մէկ քանի ժամ կուելէ յետոյ, Փէդայիները կորոչեն անձնատուր լինիլ ուսաներուն: Խումբի քահանան, խաչը ձեռին, ընդառաջ կ'երթայ, բայց կը զարնւի ուսաներու կողմէ: Որսորդ Գէորգն ալ կը սպանւի, դարձեալ ուսա գինւորի մը սւինով: Ըստ երևոյթին մինչև վերջ տղաները կը մնան իրենց կրաւորական դիրքին մէջ՝ հանդէպ ուսաներուն: Բան մը, որ կը մնայ անհասկանալի... Մերիներէն կը սպաննին 27 հոգի, 6 հոգի ալ կը վիրաւորին և 14 հոգի գերի կառնեն ուսաները. անոնց մէջ՝ խմբապետը: Մնացած տղաները կրցան փախչիլ ու ասրաստանիլ մութ անտառները: Իսկ գերիները, նոյն Բըկօվի հրամանով, մորթուեցին Թուրք բանակի ներկայութեամբ:

Ռուս և Թուրք գինւորականներ խրախճան սարքեցին մորթած հայրուկներու դիակներուն շուրջ...

Կուկունեանի ողբերգութիւնն էր, որ կրկնեցաւ աւելի վայրագ, բարբարոս ձեւով...

Հ. Յ. Դաշնակցութիւնը չէր կարող մարտել ուսա սահմանապահ բանակի այդ նենգաւոր խաղը և շատ չանցած, 1904 օգոստոս 31ին, Օլթի քաղաքին մէջ, արիւնարբու հրամանատարը, գնդապետ Բըկօվ, գետին փուեցաւ մեր տերրօրիստի վրիժառու ձեռքով\*): Գրեթէ միաժամանակ սպանեցաւ մեր ձեռքով միւս բարձրաստիճան հայատեացը, Իգդիրի գաւառապետ Բօզուսլավսկի:

Ահա ուրիշ, նոյնքան ուշադրաւ տիպարներ: Փէդայիներու ուրիշ խումբ մը՝ որ Դոււմանի առաջնորդութեամբ կը մեկնի Բագէն դէպի Սասուն, նոյն 1904 թւականի ամառը: Դարձեալ, բուն կուող հայրուկներուն հետ — չարք մը մտաւորականներ, ճեմարանաւարտ կամ համալսարանաւարտ, Յակոբ Չաւրեան, Մարգար Ժամհարեան, Ռուբէն — այն ատեն տակաւին սկսնակ — Սարգիս, փոքրիկ Սարգիսը, յանդուգն տերրօրիստը և յեղափոխութեան պերճախօս քարոզիչը, և գինւորներէն՝ երկու համբաւաւոր Խէչօները՝ Դաշնակցական և Սարբազ Խէչօ, Թաղէոս Ամիրեան, Սուրէն, Աւդօ, Սերոբ և այլն:

Դոււմանի խումբը: Կովկասեան մարմինները կը ճամբէին Դոււմանը, որպէս լաւագոյն թեկնածուն Սասնոյ կուիներու հրամանատարութեան պաշտօնին համար: Կը ճամբէին Նիկօլը այդ դժուարին առաքելութեամբ, գիտնալով, որ տեղւոյն պարագլուխները փոքր ինչ պաղած էին իրարմէ և որ դուրսէն եկածը առհասարակ աւելի հմայք ու հեղինակութիւն կը ներշնչէ շարքերուն, քան տեղացիներէն ուէ մէկը, որ, ինչքան ալ բարձր լինի, «տեղացի» մըն է, «մարգարէ յիւրում գաւառի»... Կը շրջէին Նիկօլ-Դոււմանը մանաւանդ այն նկատմամբ՝ որ Սասնոյ բոլոր մեծ դէմքերը, Հրայրէն մինչև Անդրանիկ, Չերմ, անվերապահ յարգանք կը տածէին դէպի Գարահիսարի, Բողազքեասանի և Խանասորի կուիներուն հերոսը, դէպի անոր ռազմագիտական ու վարչական տաղանդը, այլ և քաջութիւնն ու վճռականութիւնը:

\* Աճրեք գնդակներն ալ մահացու էին — կը ծանուցանէր Կարսի մեր Կեդրոնական Կոմիտէն — տերրօրիստը ազատ է, սպաւորութիւնը մեծ է ամէն տեղ, ժողովուրդի արդար վրէժիկներութեան ծարաւը մասամբ յաղեցաւ...»

12/3



Ե Ր Մ Ն Ը Ս Դ Պ Ռ Թ

Կը վարանէր Հին Մարտիկը: Գիտէր, որ այդ անօրինակ պայմաններուն մէջ, երբ Հայաստանի ահագին տարածութեան վրա թուրք ու քիւրդ ուժերը ենթարկած էին ընդհանուր զօրաշարժի, Սասուն հասնիլը այդ բիւրաւոր խուժաններու շղթաները ճեղքելով, բացարձակ անկարելիութիւն էր: Գիտէր, որ իր խումբը կերթար «էշ նահատակ» միայն դառնալու և այնուամենայնիւ որոշեց մեկնիլ:

Բագուի ընկերները տեսան բոլոր անհրաժեշտ պատրաստութիւնները խումբի առաջման համար: Եւ հող տեղի ունեցաւ յուզիչ միջոցառում, որ կենդանի զրոյցներու նիւթ դարձաւ Բագու, Թիֆլիզ և այլուր: Մէկէն ի մէկ հանդէս եկաւ բժիշկ Զաւրեան — նաւթաշրջանի բանւորական հիւանդանոցի գլխաւոր վարիչը — և խնդրեց, որ զինքն ալ տանեն Թուրքահայաստան՝ կուրելու: Մարդ մը, փափուկ սնած ու մեծցած, որ նոր էր մտեր մեր շարքերուն մէջ և երբեք գործ չէր ունեցած հրացանի ու վառօդի հետ... Դուժման, բնականաբար, մերժեց: Նա որոշեւ էր տանիլ իրեն հետ միայն փոքրաթիւ զինավարժ երիտասարդներ: Բայց ի վերջոյ ստիպւած եղաւ զիջիլ բժիշկ ընկերոջ աղերսանքներուն:

Չնաշխարհիկ իդէալիստներէն էր այդ նորընծայ դաշնակցականը, մօտ 40 տարեկան, որ այնուհետև ընդմիջտ լծեցաւ մեր աշխատանքներուն, գեղեցիկ անձնագոհութեամբ գործեց Կաղմակերպութեան դրօշակին տակ՝ Տարօնոյ, Պոլսոյ, Կովկասի, Ռուսաստանի մէջ, մինչև 1917 թւականը, երբ նոր ազատւած բոլշեւիկեան բանտէն, կը պատրաստէր Եւրոպա անցնելու և յանկարծ տիֆոզ բռնեցաւ ու մեռաւ Մոսկուայում, խոր կսկիծ թողնելով մեր բոլոր շարքերուն մէջ:

Յակոբ Զաւրեան — դօքտոր Զաւրիսի, ինչպէս կանուանէին զինքը իր հազարաւոր ընկերներն ու հիացողները — իր տեսակին մէջ եզակի մարդ մըն էր. նա կուգար մեր «վերին» խաւերէն, գրեթէ իսպառ օտարացած, ոռուսախօս հայ գերդաստանէ մը, «հրաժարիմք» կըսէր իր բարեկեցիկ գոյութեան, ցասումով երես կը դարձնէր նաւթաշրջանի գորշ, նիւթապաշտ մթնոլորտէն և կը գրկէր նոր կեանք մը, գաղափարական կուռղի կեանքը, լի տառապալից արկածներով, կերթար ձուլուելու խոնարհ, չարքաշ ժողովուրդին հետ, հնազանդելով իր մեծ սրտի ազնուական մղումներուն: Անդրկովկասի մեր ահարկու բախումները ցարի կառավարութեան հետ — եկեղեցական-ազգային զոյգերու շուրջ —



արթնցուցեր էին անոր մէջ Հայրենասիրական ուժեղ գգացումը, Հ. Յ. Դաշնակցութիւնը ծառայեր էր անոր պրպտող աչքերուն առջև փառքի, հերոսութեան լուսապսակով և օտարացած Հայ մարդը թողնելով տուն, տեղ, հարազատներ ու փայլուն կռուիէր, կուգար 1903 թւականի վերջերուն դէպի Արևմուտք, կուգար նետ-ւելու Կազմակերպութեան գիրկը, թերևս յիշելով ոռւս յեղափո-խութեան մեծագոյն բանաստեղծ՝ Նեկրասովի ծանօթ պատգամը:

— Տա՛ր ինձ այնտեղ, կուտղներու բամակը, ուր կը մեռնիմ Սիրոյ մեծ գործիմ համար...\*)



Գ Ո Ք Տ Ո Ր Զ Ա Ի Ր Ե Ա Ն

Նիկոլ-Դումանի արշաւախումբը Սալմաստի գծով անցաւ Վասպուրական, չկրցաւ, սակայն, շարունակել իր յառաջխաղա-ցումը դէպի Սասուն, կուի բռնեցաւ թուրք զօրքերու, քիւրդերու հետ և մէկ-երկու գոհ տալով վերադարձաւ՝:

Աշոտ-Երկաթ իր վերադարձին Կովկասէն, Արճէշի մօտերը, ումբային յուսահատ կռուէ մը յետոյ նահատակեցաւ ամբողջ խումբով:

\*) Отъ ликующихъ, праздно болтающихъ

Уведи меня въ станъ погибающихъ  
За великое дѣло любви.

Մեծ եղաւ իր նիւթած կոտորածով և յարուցած դղրդիւնով Զօրի ու Մօսուկի արշաւանքը: Այդ անուններով կը կոչուին թուրք սահմանապահ զօրանոցներ, որոնք շատ կորուստներ պատճառած էին մեր արշաւող խումբերուն: Երևանի մեր Կեդրոնական Կոմի-տէն կորոչէ ոչնչացնել զանոնք: Քայլ մը՝ որ վրէժխնդրութեան աջտ մըն էր և միանգամայն կարող էր թեթև օգնութիւն հասցնել վտանգւած Սասունին, թուրքաց բարձր հրամանատարութեան ուշադրութիւնը ցրւելով:

Այդ ծրագիրը իրագործելու համար երկու խումբեր կը կազ-մուին, Արտաւազդ ու Մասիս անուններով, բաղկացած 102 Ֆէդա-յիներէ: Մէկուն ղեկավար կը դառնայ Գայլ Վահանը (Մինաս Տօլ-պաշեան): Միւսին՝ Բարերդցի Միհրանը, այն, որ հետագային նիւթեց միհրանական ծանօթ շարժումը:

Երկու խումբերը մէկտեղ անվտանգ կանցնին սահմանը, կը հասնին Զինգիլի բարձունքը, ուր կը բաժնուին երկու մասի: Ար-տաւազդ խումբը կուղղուի դէպի Մօսուն, Գայլ Վահանի առաջնոր-դութեամբ, իսկ Մասիսը կերթայ Միհրանի առաջնորդութեամբ Զօր, Զիլանցի աշիւթի վրա:

Գիշերւան ժամը 2ին Արտաւազդ խումբը կը պաշարէ հե-ռուէն թրքական զօրանոցը, նախապէս կտրելով Բայազիտի հե-ռագրաթելը և զօրանոցէն քիչ հեռու, երկու զինւորական վրան-ներն ևս առնելով պաշարման օղակին մէջ: 4 Ֆէդայի մութին մէջ կը մտնեն զօրանոց ու կը բարձրանան երդիքը, որուն տակ պառ-կած էին մօտ 150 զինւորներ: Պահապանը կը նշմարէ այդ, բայց տեղն ու տեղը կընկնի Ֆէդայի գնդակէն: Անմիջապէս չորս ուումբ կը նետուի զինւորներուն մէջ: Ռումբերը պայթելուն պէս, մեր բո-լոր հայդուկները չորս կողմէն կրակ կը բանան: Թուրք զօրքերը, յանկարծակիի եկած, խուճապի կը մատնուին և ժամ մը չանցած, ամբողջ զօրքը կը վերածուի դիակոյտի մը: Կը կոտորուին մօտակայ Հայ գիւղի մէջ գտնուող թուրք զինւորներն ևս. ամբողջ զօրքը այդպիսով բնաջինջ կը լինի: Հայ գիւղացիք, վաղւան պատաս-խանատուութենէն վախնալով, դեռ լոյսը չբացւած, կը դիմեն դէ-պի ոռուսական սահմանը:

Ի՞նչ կընէր Մասիս խումբը: Բաժնուելով Արտաւազդէն, նա կերթայ կը բռնէ Զօրի շրջակայքը և այն հովիտը, ուր օպա դրած էին զիլանցի քրդերը: Երբ գիշերւայ ժամը 2ին Մօսունէն կը լուի



Խ Ա Ն Ի Ա Ր Շ Ա Ւ Ա Խ Ո Ւ Մ Բ Ը

մեր ումբերուն որտղ, իրենք ալ ս աժամանակ յարձակում կը գործեն զորանոցին ու ջիւրղերուն վրա: Հաւա՛րը բարձրացած էր արդէն թշնամու շարքերում, բայց մերինները դուրս նետելով իրենց դարաններէն, կը պաշարեն թէ զորանոցը և թէ օպաները: Զօրքի ու քրդերու մէկ խոշոր մասը կը կոտորւի, մնացածը փախչելով կազատին:



ԳԱՅԼ ՎԱՀԱՆ ԵՒ ԻՐ ԹԻԿՆԱԳԱՀՆԵՐԸ

Այսպիսով երկու ձեռնարկներն ալ կատարեալ յաջողութեամբ կը պսակին: Այնուհետև ուրիշ ծանր խնդիր մը ցցւեցաւ մեր հայդուհներուն առջև. պէտք էր պաշտպանել փախչող հայ գիւղացիները կատղած թշնամու վրէժխնդիր յարձակումներուն դէմ և հասցնել ռուսական սահմանը: Եւ այդ պարտքն ևս հերոսաբար կատարեցին — զոհաբերելով, սակայն, իմբապետ Գայլ Վահանը և Նիկողայոս-Բարկէնը և շատ մը ուրիշ անձնուրացներ: Տարարախտարար, ռուս սահմանապահ զօրքը — կօզակներ ու ջիւրղեր — բռնեցին նահանջի ճամբան և կրակ բացին Փէդայի-

ներու ու ժողովուրդին վրա... Շատերն ընկան ռուսական գնդակներէն, մաս մը փախչելով ազատեցան, մնացած Ֆէդայիներն ու ժողովուրդն ալ գերի ընկան ռուսներուն ձեռքը:

Փշոտ էր, աւա՛ղ, այդտեղ ևս մեր դաւադրական ձեռնարկներու ճանապարհը: Մերիններն, անշուշտ, կը նախատեսէին այդ վտանգները, ձեռնարկելէ առաջ, բայց Սասունի և Թուրքահայութեան այդ բախտորոշ օրերուն կազմակերպութիւնը չէր կարող կանգ առնել այդպիսի վտանգներու և կորուստներու հաւանականութեան առջև:

Զօրի, Մասունի և հետագայ կռիւներու ընթացքին 102 Ֆէդայիներէն սպանւեցան 30 հոգի:

## ՍԱՍՆՈՅ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

«Երրորդ ազգակը».— Ֆրանսական դիւանագիտութիւնը և Հայաստանը.— Հանօտօէն մինչև Դելկասսէ.— Ընկերվարականները և հայ դատը.— Պրեսանսէ և Ժօնէս.— Բրիւսսէլի միջազգային համագումարը.— Սասնոյ շարժումը Ֆրանսական հորհրդարանի մէջ.— Հայամալաստ շարժման հետեւանքները.—

«Ընկերներ, դիմում ըրէք քաղաքական աշխարհին, մեր բարեկամներուն, առանց վայրկեան կորսնցնելու. գուցէ դադանութիւններուն սահման կը դուրսի»...

Այսպէս կը վերջացնէր իր ահադանդի նամակը Հրայր, — իր վերջին նամակը:

Եւ նոյն կոչը մեր բոլոր միւս ընկերներէն ու մարմիններէն և նոյն ջերմ, ստիպողական կոչերը մեր Կովկասեան Շրջանային Ժողովէն, որ երեք խմբադրական յանձնաժողովներ ընտրել էր Սասնոյ և Թուրքաց Հայաստանի անցքերը գրելու, հեռագրելու, քաղաքական աշխարհին հասցնելու—Կուսակցութեան Արևմտեան Բիւրօի միջոցով — Եւրոպայի ուշադրութիւնը գրաւելու, եւրոպական միջամտութիւնը հրահրելու նպատակով...

Վասնզի Հրայր և ամբողջ յեղափոխական մեր բանակը լաւ գիտէին, որ—ինչքան ալ դիւցազնական թռիչքներ գործէ ու գերմարդկային ջանք ու ճիգ թափէ մեր սագմիկներու աննման լեզէոնը և նոյնիսկ ողջ հայութիւնը — սոսկ մեր ուժերով չպիտի կարենայինք յաղթահարել ամբողջ պետութիւն մը, որ ունէր միլիոնաւոր բանակ, թնդանօթներ, անհաշիւ զէնք ու սագմամթերք, ունէր նաև իրեն աջակից, հայութեան ստի՛ շրջապատող իսլամ զանդաւանները...

Հայկական շարժման նպատակն է եղեր սկիզբէն ի վեր՝ կազմակերպել ըստ կարելոյն երկար տևողութեամբ կռիւր օսմանեան բռնապետութեան դէմ, ստեղծել երկրի մէջ յարատև յե-

դպիրսական կացութիւն, միշտ ունենալով աչքի առջև երրորդ ազգակի միջամտութիւնը... Եւրոպական ազգակի:

Եւրոպան, բերլինեան դաշնագրի ճկող յօդուածի գորութեամբ, պիտի կատարէր Իրաւարարի նոյն պաշտօնը մեր և թուրք պետութեան միջև, ինչպէս ըրեր էր հին օրերուն՝ յոյնի ու թուրքի, սերբի ու թուրքի, բուլղարի ու թուրքի միջև:

Ի՞նչ ըրաւ այդ «Գերագոյն Իրաւարարը» 1903—1904 թւականներուն, երբ ծագեր էին Սասնոյ հրդեհն ու անոր հետեանք պարտիզանական խումբերու արշաւները և երբ մասսային կոտորածներու վտանգը վերստին կախաւծ էր թուրքաց Հայաստանի վրա:

Ըսենք անմիջապէս. հայկական խնդրի լուծման համար, բարենորոգումները իրագործելու համար, դիւանագիտութիւնը այս անգամ ևս վճռական քայլ մը չըրաւ: Մեր խօսքը, հարկաւ, երեք շահագրգռած պետութիւններու մասին է՝ Ռուսաստանի, Անգլիոյ և Ֆրանսայի: Ռուսաստանը, ամենէն շահագրգռածը, բռնաւծ այն ատեն ճապոնական պատերազմով, կը շարունակէր ընդդիմանալ հայոց հարցի քիչ-շատ լուրջ, հիմնական կարգաւորումին: Բայց այլ ևս չէր խրախուսեր զանգաւածային կոտորածներ թուրքահայոց մէջ, ինչպէս Լօրանովի օրերուն և մինչև որոշ աստիճան կը գործակցէր երկու միւս պետութիւններուն՝ 1895ի սարսափներու կրկնութիւնը արգելելու նպատակով\*):

Ռուսաստանը չքաջալերեց այլ ևս համիրեան սանձարձակութիւնները և չտարաւ իր ետեէն դաշնակից Ֆրանսան, ինչպէս 1895-96ի օրերուն, Հանօտի ու Մէլիի ատեն: Ընդհակառակը, Ֆրանսան էր, որ յայտնի չափով ազդեց բռնապետական դաշնակցին վրա, մեղմելով անոր հայատեաց տրամադրութեան բռնկումները...

Որովհետև 1895էն ի վեր զգալի փոփոխութիւն մը յառաջ եկած էր Ֆրանսայի հանրային կարծիքի տրամադրութեանց մէջ, շնորհիւ այն բուն ու ծաւալուն հայանպաստ շարժումին, որ մղեր էր այդ երկրի ժողովուրդին ու քաղաքական շրջաններուն մէջ և որուն գլուխ կանգնած էին շարք մը առաջնակարգ, աշխար-

\* Ռուսաց հիւպատոսն ալ Մուշ գացեր էր — թէև բաւական ուշ — միւս երկու պետութեանց հիւպատոսներուն հետ հսկելու համար: Պազ, անհամբոյր, անտարբեր դիրք բռնել էր դէպքերու ընթացքին Ռուսիոյ այդ գործակալը. ոչ մի եռանդ ու նախաձեռնութիւն... գործողները միւս երկու հիւպատոսներն էին:

հահուչակ դէմքեր, Պրեսսանսէ, Ժօրէս, Կլէմանսօ, Անատօլ Ֆրանս և այլն: «Պրօ Արմէնիա»ի նիւթած շարժումը այնքան գորաւոր էր, որ Հանօտի պէս նախարարներն անգամ չափով մը պիտի ենթարկէին անոր ազդեցութեան:

Ենթարկեցաւ, բնականաբար, և այն ատենուան կառավարութիւնը, Վալդէկ Ռուսօ և մանաւանդ Դելկասէ, որ Հանրապետութեան արտաքին գործոց նախարարն էր: Ենթարկեցաւ և շարք մը կարեւոր քայլեր առաւ ի նպաստ հայոց, որու համար երախտագիտութեան ջերմ խօսքեր ուղղեցին իրեն հայ կարեւոր գործիչներ, մամուլի մէջ և նամակներով, Եւրոպայէն ու նոյնիսկ երկրէն:

Յոռետեսները, սկեպտիկները, մարքսեան նիւթապաշտ վարդապետութեան մոլեռանդ կուսակիցները, որոնք ամէն տեղ և մանաւանդ պետութիւններու դիւանագիտական ձեռնարկներուն մէջ կը տեսնեն միայն չոր ու գոհհիկ շանի աստառը, այս պարագային ալ կը տրամարանեն, որ 1894-95ին, Սասնոյ ու թուրքաց Հայաստանի ջարդերու ատեն Ֆրանսիայի շահը կը թելադրէր Հանօտի պէս շարժիլ, իսկ 1904ին, տասը տարի ետքը — Դելկասէի պէս:

Այս եւս կոպիտ թիւրիմացութիւն է: Ճշմարտութիւնն այն է՝ որ դիւանագիտութիւնը, կառավարութիւնները յաճախ են ենթարկւել հանրային կարծիքի ճնշումներուն, իսկ այդ վերջինը, անգամ խորապէս բուրժուազական հասարակութիւններուն մէջ՝ երբեմն-երբեմն ունեցեր է մարդասիրական վեհօգի շարժումներ, մանաւորապէս Ֆրանսայի մէջ, ի նպաստ ճնշած, իրաւագուրկ ժողովուրդներու:

1895-96ին Ֆրանսան, հակառակ Ժօնէսի և քանի մը այլ հեղինակաւոր անձերու փաստացի ճառերուն ու ազդարարութիւններուն, չըմբոստացաւ զանգաւածօրէն դաշնակից Լօրանովի ու անոր ստրուկ Հանօտի տմարդի քաղաքականութեան դէմ, վասնզի տակաւին անգէտ, անտեղեակ էր Հայաստանի մէջ կատարուող անցքերուն, անտեղեակ հայկական խնդրի ու հայ ժողովուրդի պատմութեան, անոր մշակոյթին ու ձգտումներուն: Շատերն ալ կը խորհէին — շատ շատերը, տարարախտաբար — թէ այնտեղ, հեռու Արևելքի մէջ, խղճուկ, անհրապոյր համայնք մը կայ, վաշխառուներու ցեղ մը, որ գուրկ է իսպառ ունէ առնական յատկութեան, որ չունի անգամ ինքնապաշտպանութեան տարրական բնագղը, որ գիտէ միայն վիզը երկնցնել ու կոտորել...



Իսկ այժմ, Ֆրանսական մեծ գործիչներու բուն, ազիտա-  
բար գործունէութիւնը Խորհրդարանի ու երկրի մէջ, հրապարա-  
կային բանախօսութիւններն ու բազմամարդ միթիւնկները, յաճա-  
խակի հարցապնդումներն ու ճառերը պարլամենտական ամբիո-  
նէն, ներքողայից արտայայտութիւնները հայ կռիւններուն ու հե-  
րոսներուն շուրջ նոյն Խորհրդարանի բեմէն և նոյնը անգլիական,  
բելգիական, հոլլանդական, իտալական խորհրդարաններում, ան-  
գամ գերման Ռայխստագի և աւստրիական Ռայխրաթի մէջ,  
գրեթէ ամէն տեղ կատարւած ընկերվարական կուսակցութեանց  
ձեռքով\*), Ինտերնացիոնալի (Ընկերվ. Միջազգայինի) շրջաբե-  
րականները, որ ցատումով կը բողոքէին հայաջինջ սարսափներուն  
և անոնց բոլոր ոտա, թուրք ու այլ հեղինակներուն դէմ, Բրիւտէլի  
հայ - եւրոպական համագումարը՝ Ժուէսի ու Պրէսանսէի,  
տիկին Սէվրինի, էլիզէ Ռէշլիւի և գերման ու այլ երկիր-  
ներու պատգամաւորներուն մասնակցութեամբ, ապա Ֆրանս-  
բրիտանական բազմամարդ համագումարը Լոնդոնի մէջ, նախա-  
գահութեամբ Լորդ Բրայսի և մասնակցութեամբ նոյն Պրե-  
սանսէի, Պիէռ Բիշաուի, Վիգտոր Բերարի և շատ ուրիշ անգլիա-  
ցի ու Ֆրանսացի հայասէրներու վերջապէս, անհաշիւ յօդւած-  
ները հայկական խնդրի մասին, թերթերու, հանդէսներու մէջ, —  
այդ բոլորը եկան ոչ միայն վերջ դնելու եւրոպական հասարակու-  
թիւններու տգիտութեանը հայերու և հայոց հարցի վերաբերմամբ,  
այլ և ստեղծելու իրական համակրանքի հոսանք մը բոլոր շրջան-  
ներու մէջ հանդէպ հեռաւոր դժբախտ ժողովուրդի, որ ունի դա-  
րերու մշակոյթ ու պատմութիւն և որ այժմ մարդկային իրա-  
ւունքներու դրօշն էր պարզեր ասիական խաւարին մէջ...

Մեծ էր մանաւանդ այն տպաւորութիւնը, որ ըրին Յրան-  
սիոյ մտաւորական շրջաններուն մէջ Վիգտոր Բերարի հմտալից  
ուսումնասիրութիւնները — հրատարակւած պարիզեան առաջնա-  
կարգ հանդէսի մէջ (Լա Ռեվիւ դը Պարի) — ուր նա գիտուն ու  
յուզուղ գրչով կը ցուցադրէր հայ ցեղի տնտեսական ու մշակու-

\*) Աւստրիական Խորհրդարանում հարցապնդումը կատարեցաւ հայա-  
ծին երեսփոխաններու ջանքերով: Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչ տն-  
միջական շփումով ու մղումով՝ Գալիցիայի ու Բուկովինիայի հինաւուրց հայ  
գաղութներու ընտրանին թուցիկ մըն ալ հրատարակեց, ուղղելով դրան Խոր-  
հրդարանի անդամներուն եւ պահանջելով Բերլինի դաշնադրի ՅՈՒՄՅՈՒՄ  
իրագործումը:

թային կարողութիւնները և անոր ցնցող ողբերգութիւնը օսման-  
եան բունպետութեան լուծին տակ:

Չարհուրելի էր մեր դատին համար նախապաշարումներու,  
թիւր ու մոլար հասկացողութիւններու այն լեռը, որ բարձրացեր  
էր արեւմտեան աշխարհի մէջ հայու «ցեղային քուլտուրքուքեան»  
մասին: Եւ կար, անշուշտ, ճշմարտութեան բաժին մը այդ տխուր  
նախապաշարումներուն մէջ, զոր միայն խիստ գունաւորեր, չա-  
փազանցեր էին Պիէռ Լօտիներն ու Կլօշ Ֆարբերները իրենց  
ուշադրաւ և, տարաբախտաբար, շատ տարածւած վէպերուն մէջ:  
Հայկական շարժումը, Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնը  
եկան խոշոր չափով մը խախտելու, թուլացնելու, այդ ծանր,  
մեղի համար այնքան նւաստացուցիչ, անարգական կարծիքներու  
ոյժը: Դեռ Սասնոյ Դրամայի սկիզբներուն, Յրանսիս դը Պրեսան-  
սէ, Ժընեւի «Վիգտորիա Հօր» մեծագոյն սրահին մէջ, ամբողջ  
ժընեւեան ընտրանիի և բազմահազար ժողովուրդի առջև, մօտ  
երկու ժաման իր սքանչելի բանախօսութեամբ կը ջատագովէր  
հայ ազատագրական շարժումն ու Ադրիանուպոլսի մեր նահատակ-  
ները: Եւ նոյն նիւթին շուրջ պարիզեան «Օրօր» ի իր խմբագրական  
մէկ յօդւածին մէջ — «Հերոսներ» խորագրով — այսպէս կարտա-  
յայտէր բառացի.

— «... Լաւ է յիշեցնել այս իրողութիւնները բոլոր անոնց,  
որոնք արդար ցատումով կըմբոստանան այսպէս կոչւած հայկա-  
կան թուլամորթութեան դէմ: Ադրիանուպոլսու մէջ կախածները  
մեռեր են իրենց պարտքը կատարող մարդկանց հանդարտութեամբ:  
Մի նոր ողջակէզ է այդ՝ մատուցւած եւրոպական քաղաքականու-  
թեան ատրուշանի վրա: Մեծ գաղափարներու համար դո՛ւսած այդ  
պարզ նահատակներու հանդէպ, դուք կը զգաք դիւանապէտներու  
անբուժելի նանրութիւնը... Կը հասկնաք միւլնոյն ժամանակ, որ  
այն ժողովուրդները, որոնք կը ծնին այդպիսի հերոսներ և չեն  
դադրիր իրենց իրաւունքները պահանջելէ, վերջ ի վերջոյ պիտի  
տեսնեն յաղթանակը իրենց օրինաւոր տնէներուն»...

Իսկ 1904 Յունիս 9ին արդէն Յրանսայի Խորհրդարանի բե-  
մէն էր, որ նոյն Պրեսանսէ, բուն ծափերու մէջ, կը շնորհաւո-  
րէր ու կը ներքողէր հայկական շարժումը, նախարար Դելկասէի  
և ամբողջ Ֆրանսական կառավարութեան առջև, ի լուր աշխարհի:  
Ահա կտոր մը այդ զգայացունց և խմաստալից ճառէն, որ կը  
դառնար Սասունի դէպքերուն շուրջ.


— «Ես չեմ ըսեր, թէ այդ արիւնոտ ողջակէզները ջարդեր  
են միայն: Եղեր են նաև կռիւներ — և ես բարձրաձայն կը դովեմ

Հայերը — եղեր են կոիւներ, անհաւասար կոիւներ, քանի որ հայք գրեթէ անգէն են. բայց դրանք այն կոիւներէն են, առանց որոնց ոչ մէկ ժողովուրդ կը նւաճէ իր գոյութեան իրաւունքը: Հայերը չուզեցին նահատակուիլ, ինչպէս 1894ին, առանց գէթ փորձ ընելու իրենք զիրենք պաշտպանելու և բողոքելու: Անոնք կուեցան մի ամբողջ ամիս, առանց տանելու յազրանակը, որ անհնարին էր»...

Միւս կողմէն, Ժօրէս — Ֆրանսական սոցիալիզմի մեծանուն պարագլուխը — որ իր հուժկու, հեղինակաւոր ձայնով կը



Պ Ի Է Ի Բ Ե Ը Ա Ի



ՖՐԱՆՍԻՍ ԳԸ ՊԵՍՍԱՆՍԷ

մղէր Դեկասսէն դէպի դործ, և միւս կուսակցութեանց առաջնորդներուն հետ պարբերաբար տեսակցութիւններ կուենար նախարարին հետ, կը յորդորէր անոր՝ ուրոյն քաղաքականութեան մը հետեւիլ Հայկական խնդրում, անկախ ուստական ազդեցութիւններէն, համաձայն Ֆրանսայի մեծ աւանդութիւններուն: Ահա թէ ինչ կըսէր Ժօրէս Բրիւսսէլի Հայասիրական մեծ ժողովին արտասանած իր ճառին մէջ (Յունիս 1903թ.):

«... Ինչպի՞սի դիրք պիտի բռնէ Ռուսիան Հայաստանի նրկատմամբ: Կը վստահանամ ըսելու, որ այդ կախած է Ֆրանսայի բռնելիք դիրքէն... Ես կարող եմ պնդել առանց թիւս հայրենասիրութեան, որ Ֆրանսայի վրա մեծ յոյսեր դրած եմ՝ Եւրոպայի հանրային կարծիքը հաւաքական գործունէութեան հրուիրելու

համար: Ֆրանսան չուտով կը կրկնապատկէ իր հիւպատոսներու թիւը Հայաստանի մէջ: Ատի սկզբնաւորութիւն մըն է. նա պէտք չէ կանգ առնէ կէս ճամբուն վրա, պէտք է աւելի հեռուն երթայ, եթէ չուզեր դաւաճանել պատուոյ այն օրինադրքին, որը դարերէ ի վեր կը կապէ գինքը աշխարհի ճակատագրին հետ»...


Շատ ձայներ լուեցան հայոց մեծ տաղնապի օրերուն, շատ պերճախօս փաստաբաններ ունեցաւ հայ ժողովուրդը, Հայկական դատը, բայց Ֆրանսայի մէջ — կարելի է ըսել՝ ամբողջ Եւրոպայի մէջ — ամենէն ջերմ, հեղինակաւոր ու զօրաւոր ձայնը այդ երկու ընկերվարական պարագլուխներուն էր — Պրեսանսէի և Ժօրէսի — որոնք երկուքն ալ զարդն էին Ֆրանսական ամբիոններու, յարգւած, ունկնդրւած բոլոր շրջաններուն մէջ. մէկը՝ ներհուն, քաղաքագէտ-հրապարակագիր, որուն հետ դժւար կարող էր մրցիլ ունէ ուրիշը արեւմտեան երկիրներում համաշխարհային կնճռալից խնդիրներու մարզին մէջ, խմբագիր պարիզեան մեծագոյն քաղաքական օրգանի: Միւսը՝ Ժօնէս՝ Ֆրանսայի և աշխարհի անգուղական հոետորը և միջազգային աշխատաւորութեան ամենէն փայլուն ու ազդեցիկ պարագլուխը: Երկուքն ալ Հայկական խնդրի շտակ ըմբռնումն ունէին, — լաւ գիտէին, որ Ռուսաստանը հայոց ճակատագրի չար հրեշտակն է, լաւ գիտէին, որ միմիայն Ֆրանսան կարող էր ազդել իր դաշնակցին վրա, Ֆրանսան միայն իր կորովի նախաձեռնութեամբ, կարող էր գլուխ բերել Եւրոպայի (կամ գէթ չորս պետութիւններու) հաւաքական միջամտութիւնը՝ հայոց բարենորոգումներու ցաւոտ կնճիւղ լուծելու համար: Վասնզի Անգլիոյ նախաձեռնութիւնները կը զարնէին միշտ Ռուսաստանի կասկածոտ չկամութեան ու կը վիժէին:

Այո՛: Տարիներու անդուլ ու համատարած քարոզչութեան շնորհիւ, Ֆրանսան 900ական թւականներու սկիզբներուն գէթ մասամբ լքեց Հանօսոսներու պաշտպանած դժուծ, եսամոլ հաւատամբը, որու համեմատ Ֆրանսայի շաքը կը նշանակէր՝ սողալ դաշնակից Ռուսաստանի առջև, քալել անոր ետեւէն — Հայկական ողբերգութեան ընթացքին — երբեք թեսթ մը չընել ցարական դիպլոմատները վշտացնելու և Ֆրանսայի դէմ զանոնք տրամադրելու ռիսքով...

Այժմ ամէն ոք կը զգար, որ այդ քաղաքականութիւնը անարգանք մըն է Մեծ Յեղափոխութեան Հայրենիքի համար և ողջ երկիրը կը պահանջէր, որ եթէ Ֆրանսան չէր կարող իր դաշնակցին գատ, անոր հակառակ լուծում տալ հայոց հիմնական

խնդրին, գէթ պարտաւոր էր կաշկանդել Մարդասպանին ճարակող թաթը, թոյլ չտալ, որ նա անվերջ, անպատիժ նիւթէ արեան բաղնիքներ հայ ժողովուրդի դիխուն:

Եւ Ֆրանսայի հանրային կարծիքի այդ տրամադրութիւնն էր, որ հարկադրեց Դելկասէն ուսումնասիրել հայկական հարցը և ուշի ուշով հետեւիլ Հայաստանի անցքերուն: Փոթորիկը բարձրացաւ Խորհրդարանին մէջ դեռ 1901ի օրերուն, երբ Ֆրանսան, քանի մը սեղանաւորներու շահերը պաշտպանելու համար Միտիլէն ճամբեց իր նաւատորմը և սպառնաց Թուրքիային: Շարք



Ժ Օ Ռ Է Ս



Վ Ի Ք Տ Ո Ր Բ Է Ր Ա Ր

մը հայասեր երեսփոխաններ պահանջեցին, որ կտաւարութիւնը օդաւ առիթէն և հրատարակ հանկ հայոց սէֆորմներու հարցը: Մամուլն ևս խօսեցաւ:

Դելկասէ, հարկաւ պատասխանեց, որ Ֆրանսան միայնակ չէ կարող ընթացք տալ բարենորոգումներուն: Գրոհը հետզհետէ սաստկացաւ: Հարցադրում՝ հարցադրումի ետեւէ: Աջակողմէն պահանջողականներն անդամ ազմկեցին: Անոնց կողմէ կը խօսէր Դընի Կօչէն: Բայց ամենէն համարձակ ու վճռական տոնով ճառեր խօսեցան երկու ընկերավարական պարագլուխներ՝ Մարսէլ Սանրա և Ռուանէ: Ամենքն ալ դիտէին, որ Դելկասէ ընդհանրա-

պէս աւելի պարկեշտ ու սրտցաւ մարդ մըն է, քան Հանօսօն, գիտէին նաև, որ նա արդէն ատկէ առաջ ըրեր էր ազդու քայլեր՝ սպառնացող կոտորածները կանխելու համար և այնուամենայնիւ, Խորհրդարանը գոհ չէր անկէ և կը յորդորէր շարունակ արտաքին գործոց նախարարին աւելի կորովի ընթացք բռնել: Օր մը նոյն իսկ Սանրայի հարցապնդումէն վերջ, քիչ մնաց, որ դահլիճը տապալի: Խորհրդարանը 227 քէնով ընդդէմ 212ի, առաջնութիւնն սուա ընկերավարական Սանրայի բանաձեւին՝ հայկական խնդրի առիթով... Վալդեկ-Ռուսօ, որ վարչապետ էր, այդ ծանր պատահարը կանխելու համար, միջամտեց ու յորդոր կարգաց Խորհրդարանին՝ ուրիշ բանաձեւ քէարկելու և ազատեց դահլիճը:

Այդ անխորժ փորձութիւնն ևս ապարդիւն չանցաւ: Դելկասէ, որ այնուհետև դեռ երկար տարիներ պիտի վարէր Ֆրանսայի արտաքին քաղաքականութիւնը, հետզհետէ աւելի և աւելի հետաքրքրեցաւ հայոց ցաւերով: Քանի մը անգամ Խորհրդարանի բեմէն երկար ճառերու մէջ նա արտայայտեց իր միտքն ու զգացումները Հայաստանի անցքերուն առթիւ: Աւելորդ չէ քաղաածօրէն բերել այստեղ անոր շարք մը յայտարարութիւնները.

Դեռ 1901թ. Նոյեմբեր 4ին, նա կըսէր ի պատասխան Մարսէլ Սանրայի և Կօչէնի հարցապնդումներուն.

— «Երեք տարի է միշտ շահագրգռած եմ Հայաստանով և հայերը քանիցս իրենք իսկ ճանչցած են մեր գործունէութեան ազդեցութիւնը... Կարդացած եմ բոլոր տեղեկագիրները, որոնք բոլորն ալ կը հաստատեն երկրին ցաւալի կացութիւնը... Բայց Ֆրանսան չէ մինակ Բերլինի դաշնագիրն ստորագրողը»:

Աւելի համարձակ և զօրաւոր յայտարարութիւններ ըրաւ նախարարը ամիս մը յետոյ, ի պատասխան ընկերավարական Ռուանէին, որ դիւնած է. Յ. Դաշնակցութեան տեղեկութիւններով, երկար ու կորովի ճառ մըն էր արտասաներ Խորհրդարանի մէջ.

«Ճակատագրական կը թւի, կըսէ Դելկասէ, որ եթէ ազգաբնակչութիւնները շարունակաբար ու անպատիժ կերպով թալանէին ու ենթարկէին եղեռնափորձերու, անոնք ի վերջոյ պիտի խորհին, որ ամէն վիճակ լուսագոյն է, քան այն կեանքը, որ կը գտնուի կոտորածի մզձաւանցի տակ\*»...

«Ահա թէ ինչու... Ֆրանսան այս վերջին տարիներու ընթացքին ճիգ թափեր է — և պ. Ռուանէ լաւ գիտէ այդ — կասե-

\* Այս խօսքերով նախարարը ոչ միայն կը նշաւակէր Թուրքական ոչ-միջը, այլ և ի լսւր աշխարհի կը ներառործէր հայ յեղափոխական շարժումը:

ցնելու շարիքները, որոնք միշտ աւելի պիտի գրադեցնեն քաղաքագէտները, քանի որ անոնք միշտ աւելի կը յուզեն հանրային խիղճը:

«Մէկ քանի անգամ մենք դիւանագիտական ճնշումներ ըրինք Կ. Պոլսոյ մէջ և ուրիշ գործողութիւններ, որոնց ազդեցութիւնը հայերն իսկ խոստովաներ ու հուշակեր են... Թոյլ տէք ինձի յիշատակել երկու տող Հայաստան ապրող հայէ մը, որ ամենէն ազանաւոր հայերէն մէկն է և որու անունը լուսթեամբ կանցնիմ, չկամենալով մատնել զայն ցասումի ու վրէժխնդրութեան: Ահա թէ ինչ կը գրէ այդ հայը, դիմելով Պրանսայի արտաքին գործերու նախարարին. —

«Ջարդերը տեղի չունեցան, շնորհիւ դեսպաններու ազդարարութիւններուն և դիւանագիտական յարաբերութեանց խզելուն Փրանսական կառավարութեան կողմէ, որու կորովի ընթացքը ամենագորաւոր տպաւորութիւնը գործեց»...

Խիստ հետաքրքրական են ուրիշ շարք մը յայտարարութիւնները, որ Դելիասէ ըրաւ Սասնոյ մեծ դէպքերու օրերուն, 1904ի Յունիսի սկիզբներուն, երբ երկար ճառով կը հարցապնդէր Պրանսան, սպառագինւած նոյն Հ. Յ. Դ. Արեւմտեան Բիւրօի նիւթերով: Գտեմարտ մըն էր Խորհրդարանին մէջ Պրեսանսէի ու Դելիասէի միջև: Առաջինը, խոստովանելով հանդերձ, որ նախարարը իրօք կատարեր էր շարք մը ազդու, դիւանագիտական քայլեր հայոց ի նպաստ, բայց և վախնալով, որ Սասունը ընկճելէ յետոյ, թուրք կառավարութիւնը կարող էր այնուամենայնիւ վերսկսիլ 1895ի ընդհանուր կոտորածը, կը յորդորէր նախարարին կրկնապատկել իր ճիգը, պաշտօնանկ ընել տալ Զէքի ու Ֆէրիտ փաշաները և պահանջել ոչֆորմներու իրագործումը:

Իսկ Դելիասէ կը ջանար հանգստացնել հայ ժողովուրդի մեծ բարեկամը, կասկած կը նետէր անոր ստացած տեղեկութիւններու ճշտութեան վրա — Սասնոյ կորուստներու վերաբերմամբ — կը հակադրէր «Իրօշակ»ի տեղեկութիւններուն ուրիշ աղբիւրներ, ստացւած թուրքիարնակ բարձրաստիճան հայ մարդոց կողմէ (հաւանականօրէն եկեղեցականներէ), որոնց անունը չէր ուզեր տալ հասկանալի պատճառներով, ապա վերստին կը ցուցադրէր իր հայանպաստ ձեռնարկներն ու իր խորհրդածութիւնները Հայաստանի աղէտներու, Ֆէդայիներու և ապստամբական կոիւններու մասին: Եւ այս անգամ ըրաւ կարգ մը բոցաշունչ, յեղափոխական յայտարարութիւններ, որոնք փոքր ինչ խորթ կը հընչէին մեծ պետութեան մը արտաքին գործոց նախարարի բերնին

մէջ, և, ապահովարար, աննախընթաց էին դիւանագիտական տարեգրութեանց մէջ: Այնպէս որ Պրեսանսէ նոյն օրը իր երկրորդ ճառին մէջ, յայտնելով հանդերձ, որ մինիստրի պատասխանը իր հարցապնդումին գոհացուցիչ չէ, ըսաւ.

— « Փորձեցին (ուրիշ մարդիկ, վարձկան, հայատեաց գրիչներ, որոնցմէ դեռ շատ կան նոյնիսկ Պրանսայի մէջ) — փորձեցին ապացուցանել, որ Մշոյ, Սասունի անցքերու մեղը կընկնի իրենց իսկ հայերու, Ֆէդայիներու վրա: Այս առթիւ ես իմ շնորհակալութիւնը կը յայտնեմ պ. նախարարին, որ նա բարեհաճեցաւ յայտարարել ամբիոնէն; Թէ հայերու... համար կան այնպիսի պարագաներ, ուր ապստամբութիւնը ամենէն սուրբն է և առաջնագոյնը բոլոր պարտաւորութիւններէն (ծափահարութիւններ):

Ահա Դելիասէի խօսքերը.

— «Սասունը դժւարամատչելի մի լեռնավայր է... ուր ապաստաներ էին հայ յեղափոխականներու կամ Ֆէդայիներու բազմաթիւ խումբեր՝ ջիւղերու և թուրք զօրքերու հետ ունեցած բազմաթիւ ընդհարումներէ յետոյ, Մուշի, Բիթլիսի ու Վանի շրջակայքում: Այդ Ֆէդայիները հայերու մէջ քիչ մը նոյնն են, ինչ որ անցեալ տարւան բուլղար յեղափոխականներն էին Մակեդոնիայի գիւղացոց համար, — եղբայրներ, անտարակոյս, բայց ծանրաբազուկ, հրամայական ժեսթով, որ օրէնքներ կը թելադրեն, կը հրամայեն ուղղիչներ համախմբել, պաշար ու դրամ կը հաւաքեն և չեն հանդուրժեր ընդդիմութեան:

«... Թէպէտ և — կը խնդրեմ հաւատալ ինձի — մեր առևտրական շահերը բնաւ չեն պահանջեր այդ՝ ես աւելցուցեր եմ մեր գործակալներու թիւը Հայաստանի մէջ՝ միայն ու միայն ցոյց տալու համար Պրանսայի հոգատարութիւնը: 1903թ. Սեպտեմբերի 14ին ես հաստատեի եմ փոխ-հիւպատոսութիւն վանի մէջ և այս տարւայ Յունւար 23ին՝ ուրիշ հիւպատոսութիւն մը Խարբերդի մէջ: Նոյնը ըրեր են Ռուսաստանն ու Անգլիան: Այդ հիւպատոսներու ներկայութիւնը մի ճշմարիտ սփոփանք է եղեր հայ ազգաբնակչութեան համար և շատ անգամ մեր գործակալներու միջոցով մեզի հաղորդւած երկիւղը փարատեր է մէկ փութկոտ ու կորովի միջամտութեամբ Կ. Պոլսոյ մէջ:

«Մինչև իսկ ասկէ երկու տարի առաջ — յարգելի պ. Պրեսանսէ գիտէ այդ — ես կաղմակերպեր էի յատուկ միսսիոն (առաքելութիւն), որը պտտեր է ջիւրջերու սպանանալիքներուն տակ գտնուող շրջանները... Այդ ևս ունեցեր է լաւ հետևանքներ և ազգաբնակչութիւնը վկայեր է մեղ իր երախտագիտութիւնը — յարգելի պ. Պրեսանսէն, ի հարկէ, չի կարող չգիտնալ այդ:

«Ձեր հրահանգներուն համեմատ, ես հրաման տւեր եմ Վանի մեր փոխ-հիւպատոսին՝ մնալ Մուշի մէջ Ռուսիոյ և Անգլիոյ իր պաշտօնակիցներուն հետ, մինչև այն օրը, երբ լիակատար հանգստութիւն կը տիրէ Սասունի մէջ»:



Վերջապէս, ահա թէ ինչ կը յայտարարէր Դեղիասէ Հայոց կորուստներու մասին (Սասնոյ կռիւներու ատեն), հիմնած Պոլսոյ Ֆրանսական դեսպանի տեղեկագիրներուն վրա .

«Այն տեղեկութիւններէն, որ հասեր են մեր դեսպանատուն, Վանի մեր հիւպատոսի կամ էրզրումի փոխ-հիւպատոսութեան միջոցով կամ թէ ... — Թոյլ տւէք լուծեամք անցնիլ այս անունը, օտարերկրացի մը, զոր չեմ ուզեր մատնել մարդոց բարկութեան — այդ տեղեկութիւններէն կը հետեւի նախ՝ որ ոչ մի նմանութիւն չէ կարելի գտնել ներկայ և 1894ի անցքերուն միջև: Ստոյգ է, որ զօրքի ու հայերու միջև տեղի են ունեցեր յաճախակի կռիւներ, և որ ճնշումը շատ խիստ է եղեր: Որոշ թւով գիւղեր հրդեհներ են՝ Շէնիք, Սեմալ, Ալիանք, որոնց տիրեր են զօրքերը բազմաթիւ կռիւներէ յետոյ: Երեք գիւղերն ալ մոխրի վերածուեր են: Նոյն վիճակին է ենթարկուեր Կէլիէկուզանը... Նա գրաւուեր է յուսահատ դիմադրութենէ յետոյ... Անոր անկումն է, որ վերջ դրեր է Սասնոյ հայերու գինւած դիմադրութեան...»

«Զօրքը տէր դառնալով Սասունին, կը քէ ժողովուրդը դէպի Մուշ: Կը խօսին հազարաւոր զոհերու մասին: Կը կարծեմ որ չափազանցութիւն է... Զարիքը մեծ է, չէ կարելի վիճիլ... Տարակոյս չկայ, որ ապստամբութեան ճնշումը ունեցեր է իբր հետեանք կոտորումը մեծ թւով ապստամբներու, նաև խաղաղ գիւղացիներու, որոնք կապրէին Փէդայիներու բնակած գիւղերում...»

«Թոյլ տւէք յիշել այստեղ Անգլիոյ Խորհրդարանի մէջ կոծա Պերսիի երկու օր առաջ ըրած յայտարարութեան 3-4 էական տողերը. «Համաձայն այն տեղեկութիւններուն, որ ստացեր է Նորին Մեծութեան կառավարութիւնը, 12 գիւղ այրուեր կամ կործանուեր են Մուշի սանջակին մէջ և 13 գիւղ Կիւնճի սանջակում. սակայն, պարզ չերևար՝ ո՞վ է աւերողը, ապստամբները, թէ թուրքաց զօրքը: Կարծես թէ հիմքեր կան յուսալու, որ մեռածներու թիւը համեմատաբար փոքր է... Տարակոյս չկայ, որ հիւպատոսներու ներկայութիւնը բաւարար ներգործութիւն է ունեցեր»...»

Դեղիասէ կը շարունակէ .

— «Սակայն, եթէ անգամ թւերը հասցնենք փոքրիկ չափերու, դարձեալ ողբալի է, որ այդ տեսակ իրողութիւններ կարող են առաջ գալ: (Շատ լաւ, շատ լաւ):»

«Եթէ չէ կարելի մերժել Դրան իրաւունքը՝ ապստամբութիւնը ճնշելու, ապա կարելի է շատ իրաւացի կերպով ամբաստանել գոյն, որ հակառակ բացորոշ յանձնառութիւններուն, կը պահպանէ մի այնպիսի վարչութիւն, որուն տակ ապստամբութիւնը կը հանդիսանայ, որպէս միակ ապստամբութիւնը յաւանատ ու կատարած ազգաբնակչութեան համար: (Մտախաբութիւն):»

«Եւ թէպէտ անխուսափելի է, որ ապստամբութեան ճնշման ընթացքին հարստները, մոլորելով, կընկնի նաև անմեղ մարդոց

վրա, սակայն, անմեղ զոհերու թիւը չափազանց պարզ կը վկայէ, որ զինուորները շատ ալ չեն նեղւիր ընտրութեան մէջ: (Շատ լաւ, շատ լաւ):»

«Սասնոյ դէպքերը պէտք է ալեկոծէին շրջակայ վայրերը: Մեզ հաղորդեր են, որ կայ խռովութիւն Բիթլիսի մէջ և շատ խիստ երկիւղ Մուշում: Ահա թէ ինչու ես անմիջապէս հրաւիրեցի Վանի փոխ-հիւպատոսը՝ ճանապարհել դէպի Մուշ և մնալ այնտեղ այնքան ժամանակ, որքան ժամանակ իր ներկայութիւնն ու աջալուրջ հսկողութիւնը անհրաժեշտ կը լինին փախստականներու հովանաւորութեան համար:»

«Միւս կողմէն, Կ. Պոլսոյ մեր դեսպանը հրահանգ է ստացեր՝ անյապաղ համաձայնութեան գալու իր պաշտօնակիցներուն հետ և ազդու կերպով դիմում ընելու Բ. Դրան, որ ապստամբութեան ճնշումը վերջացած է, որ պէտք է ոչ թէ շարունակել զինուորական գործողութիւնները, այլ օգնել անմեղ զոհերուն... որ մեր գործակալները անընդհատ պիտի դրկեն մեզ տեղեկութիւններ ու պիտի միջամտեն թուրք կառավարութեան առաջ, որ, վերջապէս, Դուռը, հրահանգուած այնքան փորձերէն... պէտք չէ յոյս տաքձէ, որ իր պատասխանատուութիւնը ոչ այլ ինչ է, քայց եթէ լոկ խօսք:»

«Կը խնդրեմ պատգամաւորներուն հաւատալ, որ կառավարութիւնը չպիտի դադրի իր պարտականութիւնները կատարելէ, իր բովանդակ պարտաւորութիւնը»: (Բուռն ծափեր):»

\* \* \*

Ահա այս չափով անդրադարձաւ Սասնոյ շարժումը հայկական խնդրի այսպէս ասած դիւանագիտական ճակատագրին վրա: Մենք աշխատեցանք քիչ-շատ ամփոփ ու առարկայօրէն ցուցադրել այն «երրորդ Իրաւարար Ազգակի» խաղցած դերը, որու ազդու միջամտութեամբ միայն Դաշնակցութեան գործը, հայ յեղափոխութեան գործը կարող էր պսակել ճշմարիտ յաղթանակով: Հետաքրքրական է, անշուշտ, մեր ներկայ ու գալոց սերունդներուն համար գիտնալ, թէ ի՞նչ ըրեր է այդ երրորդ Ազգակը մեր տաղ-նապալից շարժումներու ընթացքին, ի՞նչ արժէք կը ներկայացնէին այդ շարժումները երկրէն դուրս, ի՞նչ հմայք ու համարում գտեր էր մեր ռազմիկը, մեր ազատագրական կռիւը քաղաքակիրթ աշխարհին մէջ ու դիւանագիտական շրջաններում և թէ ի՞նչ խոչընդոտներ ցցուեր էին՝ մեր վերջնական յաղթանակը վիժեցնելու, հայոց հարցի հիմնական լուծումը յաւիտենօրէն ձգձգելու համար...»

Արձանագրելով շարք մը դրական, լուսաւոր երևոյթները

արեւմտեան հանրային կարծիքի և դիւանագիտութեան մարզին մէջ, բնաւ, ի հարկէ, նպատակ չունինք չքմեղացնելու այդ արեւմտեան ազգերն ու կառավարութիւնները: Բերքինի դաշնագիրը ստորագրող վեց պետութիւններէն երկուքը — Գերմանիա, Աւստրիա — սկիզբէն ի վեր անտարբեր մնացին դէպի հայկական խնդիրը, հաւատարիմ Բիսմարկի արձակած կարգախօսին: Իտալիան, ամենէն նւազ ազդեցիկը վեց պետութեանց մէջ, պատրաստ էր դործակցելու հայանպաստ ձեռնարկներուն: Ռուսիոյ դիրքը՝ միանգամայն թշնամական՝ հետզհետէ սակայն, — Ֆրանսայի և Յւրոպայի ուժգին բողոքներու ազդեցութեան տակ — աստիճան մը կը մեղմանար, կը շեղէր լօբանովեան աղէտաւոր ընթացքէն, ձգտելով դէթ տարրական պահանջներուն մէջ համերաշխ քալել Ֆրանսայի և Անգլիայի հետ...

Բայց հայ ժողովուրդը զանգատ ունի նաև այդ երկու պետութիւններուն դէմ, որոնք ամենէն համակրելի, բարեացակամ դիրքն էին բռնած հայոց հարցի հանդէպ և անկեղծօրէն կը բաղձային տեսնել Թուրքաց Հայաստանը բարենորոգւած ու բարգաւաճ: Հայ մարդը դառնութեամբ հարց կուտայ, թէ ինչո՞ւ այդ երկու պետութիւնները համախորհուրդ չձեռնարկեցին Հայաստանի բարենորոգման՝ Սասնոյ տազնապի օրերուն, երբ հայերու մեծ ոսոխը, Ռուսաստանը, բռնւած էր ճապոնական պատերազմով, կը պարտէր չարաչար և բնաւ ի վիճակի չէր Անգլիոյ թաթը բռնելու, պատերազմով սպառնալու Անգլիային, ինչպէս ըրաւ 1896ին, լօբանովի օրերուն, երբ Լոնդոնի կառավարութիւնը շանթ ու որոտ կարձակէր Երլըզլի բռնաւորին դէմ և ջանք ու ճիգ կը թափէր — իր երկրի հանրային կարծիքին ճնշման տակ — լուծելու հայոց «գորղեան հանդոյցը»... Հայ մարդը անիծելով հարց կուտայ, թէ ինչո՞ւ Ֆրանսական Խորհրդարանը, երբ մեծամասնութեամբ անվտանգութեան քէ կուտար իր կառավարութեան, հայկական խնդրի նկատմամբ—ինչպէս որ եղաւ ընկերվարական Սանբայի հարցապնդումէն յետոյ—ինչո՞ւ նա չյամառեցաւ այդ դիրքին մէջ, չուղից տապալել դահլիճը Հայաստանի առթիւ և ստիպել, որ Ֆրանսական նոր կառավարութիւնը Անգլիոյ, Իտալիոյ հետ միասին, լուծում տայ հայ դատին, ընդդէմ Ռուսիոյ բացորոշ ցանկութեան, անոր տմարդի քաղաքականութեան...

Այդպիսի մի նախաձեռնութիւն Ֆրանսան միայն կարող էր ստանձնել, ինչպէս իրաւամբ կաղաղակէր Ժան Ժօրէս:

Բայց այդ մեծ երկրի բուրժուա պոլիտիկոսները ականջ կախեցին Վալդեկ Ռուսօներու յորդորներուն, չուզեցին տապալել կառավարութիւնը հայկական դատի առիթով: Վախցան ասոր հետեւանքներէն: Վախցան՝ և՛ 1901 թւականին և՛ 1904ին: Անոնց աչքին հայոց հարցի այդքան ուժեղ պաշտպանութիւնը դահլիճի տապալումով և Թուրքիոյ դէմ բռունցք թափահարելով՝ կը նշանակէր շոնդալից ապտակ դարնել դաշնակից Ռուսաստանին, այն ահաւոր օրերուն, երբ ցարական բանակը ջարդելով յետ կը նահանջէր ճապոնական թնդանօթներուն առջև և ողջ կայսրութիւնը բռնւած էր յեղափոխական ուժգին խմորումով... Վախցան, որովհետև 1871ին պարտւած և յօշոտւած Ֆրանսան դեռ կը դողար դերման թշնամու հանդէպ և Ռուսաստանը անոր կը թւէր միակ փրկութեան խարխուր...

Որքան ալ խոր կարեկցութիւն ու համակրանք ունէր Ֆրանսան հայ տառապող ժողովուրդի հանդէպ, իր սեփական շահը այնուամենայնիւ վեր դասեց ամէն ուրիշ մտահոգութենէ և չկամեցաւ «հայոց խաթեր» հարւած մը տալ Ֆրանսա-ռուսական դաշնակցութեան: Այդ հարւածն ալ, անշուշտ, չպիտի աւելբ Ֆրանսա-ռուսական դիտակցութիւնը — այդպէս կը խորհէին Ֆրանսացի ընկերվարականներն ու ձախ արմատականները — և ուրեմն, այդտեղ ևս Ֆրանսայի «շախը» թիւր կ'ըմբռնէր կառավարութեան ընթացքը պաշտպանող խորհրդարանային մեծամասնութեան կողմէ... Վերջինս յայտնապէս կը չափազանցէր երկիւղը:

Միակ ոյժը երկրին ու Խորհրդարանին մէջ, որ պատրաստ էր մինչեւ վերջ պաշտպանել հայկական դատը, առանց մտահոգուելու ռուս դաշնակցի համակրանքով կամ հակակրանքով, միակ ոյժը, որ անկեղծօրէն կը պայքարէր յանուն արդարութեան ու մարդասիրութեան և որոշած էր հասնիլ իր նպատակին, հայոց հարցին մէջ, անգամ ի գին նախարարական տազնապներու և տապալումներու՝ այդ միակ ոյժը — ըսելու ենք հոս, բարձրաձայն, անվերապահ — ձախակողմեան տարբերն էին, ընկերվարական կուսակցութիւնն էր, դեկավարութեամբ Ժօրէսի, Պրեսանսէի, Սանբայի, Ռուանէի, և անոր հետ՝ արմատական-ընկերվարականներու ձախ հատւածը: Բայց ատոնք ալ, տարարախտարար, չէին կազմեր մեծամասնութիւն ազգային Խորհրդարանին մէջ:

\* \* \*

Որքան ալ անօրինակ էր հայասիրական շարժումը իր ծաւալով ու խորութեամբ, այնուամենայնիւ, դարձեալ բաւականաչափ ուժեղ չէր իր կամքը պարտադրելու կառավարութիւններուն՝ հայոց հարցի բաւարար լուծումն ստանալու համար: Հարկ էր աւելի զօրաւոր շարժում ստեղծել: Հարկ էր ստեղծել այդպիսին մանաւանդ այնտեղ, բուն երկրի մէջ: Հարկ էր կազմակերպել աւելի ընդարձակ և աւելի տեական դիմադրութիւն:

Տարաբախտաբար, Դաշնակցութիւնը իր ունեցած միջոցներով այդքանը միայն կարողացաւ դուրս բերել: Եւ Եւրոպան ալ օգնեց մեզի այն չափով, որ չափով ինքը հայ ազգը օգներ էր իրեն, իր մարտնչող փոքրամասնութեան... Հայ ազգը՝ իր միլիարդատէր ու յաւիտենորէն բթացած բուրժուազիայով, իր ապիկար, պառակտւած ու մեծ մասամբ հակայեղափոխական մտաւորականութեամբ... Այս ևս մոռնալու չենք...

Եւրոպայէն եկած այդ համեստ անկեղծութիւնն ալ, այնուամենայնիւ, խոշոր բան մըն էր բազմաչարչար ժողովուրդին համար: Որչոր վաստակ մըն էր այն՝ որ Պորհրդարանի բոլոր շրջերը համակող այդ շարժումը — կարեկցութեան, ցասումի ու բողոքի — հարկադրեց ողջ Փրանսական կառավարութիւնը ծառանալ Եւրոպի դէմ (և անուղղակի՝ Ռուսաստանի դէմ), բռնել դահճի արիւնտութիւնը և կանխել նոր արհաւիրքները: Առանց ատոր, ոչ մի տարակոյս, — և հող միաձայն, ներդաշնակ են բոլոր վկայութիւնները, հայ և օտար — առանց ատոր, 1895-96ի արեան բաղանիքները պիտի վերսկսէին ողջ Բիթլիսի վիլայէթին մէջ, թերևս նոյնիսկ աւելի հեռուն:

Աւա՛ղ... Արիւնի հեղեղները եկան դարձեալ, վերջ ի վերջոյ, այդ դէպքերէն 10 տարի ետք, բայց այդ արդէն համաշխարհային պատերազմի օրերուն էր, երբ Եւրոպան անջատուեր էր թուրքիայէն անանցանելի խրամատներով և միայն հեռուէն անդօր սպառնալիքներ կուղղէր տաճկին, հայկական աննախընթաց կոտորածներու ասիթով: Անկէ առաջ, հայ ազատագրական շարժումը գրեթէ բոլորովին հասած էր արդէն իր նպատակին, հայաստանը կը վերանորոգէր, հայ ժողովուրդը կ'աճէր ու կը յառաջալիմէր...

Ֆրանս-անգլիական գործակցութեամբ էր — և մանաւանդ Ֆրանսայի ճիգերով — որ 1904ին Մուշ-Տարօնոյ հայութիւնը

ազատեցաւ մասսային նախճիրներէ: Գեղամ Տէր-Կարապետեանի թղթակցութիւնները, և բոլոր միւս ազբիւրները — Սասնոյ, Մուշի գերագոյն տագնապի օրերուն — միաբերան կը վկայեն, որ Փրանսական հիւպատոսը գտնուեր է իր մարդկային կոչումի բարձրութեան վրա, որ նա ճշմարիտ հայու մը պէս պաշտպաներ է հայ ժողովուրդը — այդպէս հրահանգւած էր իրեն Պարիզէն — և որ հիւպատոսներու նշանակումը ուրիշ վտանգւած վայրերում ու անոնց աչալուրջ հսկողութիւնը միւսնոյն ժամանակ Պուլսոյ դեսպանի մշտնջենաւոր յորդորներն ու ազգարարութիւնները Բ. Դրան՝ ազատեցին մեր ժողովուրդը միւս վիլայէթներուն մէջ ևս: Եւ նոյն կորովի միջամտութիւններուն շնորհիւ ալ՝ Եւրոպը յետ առաւ իր որոշումը՝ վերջ տալու հայկական Սասունին և բնակեցնելու գայն քիւրդերով...

Կատարեցաւ այդպիսով մեր ողբացեալ Հրայրի բաղձանքը, արտայայտուած իր վերջին նամակի մէջ... «Սահման դրեցաւ գաղանթութիւններուն»:

Իւ այդ բոլորը դուրս եկաւ շնորհիւ արեւմտեան, մասնաւորապէս Փրանսական հանրային կարծիքի յեղաշրջումին, շնորհիւ պրոպագանդի այն մեծ, ծաւալուն գործին, որուն սկիզբ դրաւ Եւրոպայի մէջ նոյն ինքը Հ. Յ. Դաշնակցութեան պարադուսը, Գրիստափոր Միքայէլեան, 1899 թւականին:



ԳԵՂԱՄ ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

XVII

«ՓՈԹՈՐԻԿ»Ի ԳՈՐԾԸ

Դրամական տագնապը և բռնի հանգանակութեան խնդիրը. — վարանումներ մեր վարիչ շրջաններում. — Քրիստափոր՝ նորէն կովկաս. — «Փոթորիկ»ի առաջին հարածը Շուշիում. — Ժամհարեանի մատուցիւնը և մահը. — Բագու և Թիֆլիզ. — «Դաշնակցութեան» սպանագին դիմումները և խուճապը հայ մեծատանց շարքերում. — Արդիւնքը. — «Փոթորիկ»ի դէմքեր. — Սարգիս, Նէվրուզ, Մասթէոս. —

Հ. Յ. Դաշնակցութեան այդ արիւնոտ ձեռնարկը ճակատագրական ծնունդ մըն էր այն պաղ, անխռով, հայրենադաւ անտարբերութեան, որ կը ցուցահանէր հայ ունեւոր դասակարգը իր հարպաս ժողովուրդի օրհասական պայքարներու հանդէպ:

Մեր նորագոյն պատմութեան ողբերգական էջերէն մէկն է այս ցարէն հակապատկերը հայ տատապող ու գոհարերող ընդհանրութեան և երջանիկ, բարեկեցիկ փոքրամասնութեան... Մինչ այդ շարքաչ, աշխատատար ընդհանրութիւնը հազարներով կը ծնէր ճշմարիտ, մարդկայնաստիպ հերոսներ, որոնք անվերջ շարքերով կ'երթային իրենց գլուխը վնակու հայրենիքի ազատութեան սեղանին, հայկական մեծահարուստ բուրժուազիան տասնեակ տարիներու ընթացքին չծնաւ մէկ հատիկ վեհանձն հայրենասէր, որ լայն բանար իր քսակը ազատութեան գործին համար...

Եւ այդ քար անտարբերութեան մէջ կը յամառէին ոչ միայն Պուտոյ, Իգմիրի, Բագուի, Թիֆլիզի մեր կրեսոսները — որոնք իրենց բարոյական սնանկութիւնը քողարկելու համար երբեմն կը պատրուակէին թուրք ու ռուս կտտապարութեան հակողութիւնը — այլ և Պարիզ, Լոնդոն, Մանչեսթր, Նիւ-Եօրք ու այլ ապաստան կեդրոններում հարստացած ու յլիւսացած մեր ազգային ջոջերը:

Պատերազմը յաջող վարելու համար — ըսեր է վաղուց Նապոլէօն — անհրաժեշտ է ամենէն առաջ դրամ, դրամ և դրամ: Եւս առաւել անհրաժեշտ էր այդ անխնայարտ դրամը հայոց ազա-

տութեան պատերազմի համար, որու դէմ ծառայած էին այնքան ահռելի խոչընդոտներ: Քանի՛ քանի ձեռնարկներ վիժեր են այդ թանկագին նիւթի չգոյութեան երեսէն...

Հայ ժողովուրդը — հարուստ՝ գաղափարով ու անձնագրահութեամբ, հայ բուրժուազիան — աղքատ՝ հողիով, գծուծ ու նիւթապաշտ: Մէկը իր կեանքը կուտար՝ յանձին իր մարտնչող վաշտերուն, միւսը իր գանձին վրա կը դողար և անարգօրէն կը փախչէր ազատագրական շարժման կրողներէն... Դժուար է գտնել նման պատկեր մը ուրիշ ազգերու տարեգրութեան մէջ:

Քրիստափոր՝ որ հրաշքի պէս բան մը նիւթեց, ստեղծելով ազատութեան պատկանելի բանակ մը ցիրուցան, անմիաբան, կեդրոնախոյս ազգի մը մէջ, անգոր եղաւ այդ ցեղային արատին դէմ և յուսահատ կը բացազանչէր իր «Ամբոխային Տրամաբանութեան» մէջ.

«Հագարաւոր ցիւքապէս ապահով հայեր Հնդկաստան, Անգլիա, Ամերիկա, Աֆրիկա, ցիւքապէս են գնում ո՞վ գիտէ ինչ դժոխային միջոցներով իրենց ունեցածը աւելացնելու համար. բայց ոչ մէկը չգտնեց, որ այսպիսի մի անավոր պատմական դժբախտութեան օրերում տեղիցը շարժւէր՝ հասարակօգուտ որևէ ձեռնարկի համար — և այս ոչ միայն հիմ սերունդի ներկայացուցիչների մէջ, այլ և երիտասարդ դրամատէրերի շրջանում, որոնք ունին և՛ ուսում և՛ զարգացում ու երբ սկսում են խօսել հասարակական գործունեութեան և ժողովրդի շահերին ծառայելու անհրաժեշտութեան վրա, Գլադստոններ ու Լասսալներ պէտք է գերեզմաններից կանչուեն նրանց հետ մրցելու համար»...

Միմիայն յեղափոխականները չեն, որ նշաւակեր ու մտրակեր են այդ հնաւանդ արատը: Յիշեցէք այն մոլորներ շանթերը, որ կը նետէր Միքայէլ Նալբանդեան հայ ունեւոր դասակարգին, դեռ «Հիւսիսամիայլ»ի էջերէն: Յիշեցէք Գամառ Քաթիպայի ցաւկոտ աղաղակները՝ արձակով ու ոտանաւորով...

«Մեր ազգը կազատէր, երբ մեր հարուստները ընդունակ լինէին մի շնչին գոհարերութեան» — կը գրէր «Հիմի է՞լ լոենք»ի հեղինակը 1878 փոթորկայոյց թւականին, երբ Բերլինեան վեհաժողովի որոշումը պաղ ջուր էր մաղեր հայ գիտակից տարբերու «ինքնավարութեան» երազներուն վրա: Եւ խորունկ վրդովմունքով կը շարունակէ Պատկանեան.



«Ի՞նչ իրաւունք ունինք մենք գանգատելու Բիֆոնֆիլդէն, Սոյսիւրիէն... որ նոքա հայերու ինքնավարութիւն չուին, մինչ մենք ոչ միայն արեան գոհէն խուսափեցանք... այլ և մի քանի կռակի հասարակաց գանձարան չձգեցինք... Մեր հարուստները ձեռքէն բաց քողին այն բարեյաջող դիպածը, որ հազար տարիք մի անգամ է պատահում»...\*)

Հայ շարժման ղեկավարները արիւնոզ սրտով կը յիշէին յոյն բախտակից ժողովուրդի ազատագրական պատերազմը, երբ Աւերօփ մը իր գրեթէ ամբողջ կարողութիւնը ի սպաս դրաւ հայ բենիքի փրկութեան գործին... Երկար անոնք քարոզեցին զոհաբերութեան գաղափարը ազգի կուշտ դասակարգին, երկար ատեն աշխատեցան խաղաղ ճամբով յուզելու անոր կարծրացած սիրտը... Ապարդիւն: Ու մնաց վերջին, յուսահատական միջոցը — բռնի հանգանակութիւն: Կազմակերպութիւնը հարկադրեցաւ անոր ալ դիմելու: Մահացու տագնապ կ'ապրէր հայութեան մեծ զանգւածը և այդ տագնապի հանդէպ գարմանալի չէին, անչուշտ, հիւանդագին ծայրայեղութիւնները...

Եւ սակայն, բռնի հանգանակութեան գաղափարը մէկէն ի մէկ չընդունեցաւ շարքերէն: Նա անցաւ երկար ճամբայ, հասունցաւ քայլ առ քայլ, ժողովէ-ժողով:

Ի՞նչպէս կ'ապրէր Կազմակերպութիւնը, ի՞նչ միջոցներով կը տարւէր շարժումը. — կամաւոր տուրքերով, անդամավճարներով, վիճակախաղի, երեկոյթներու, այլ և այլ հանդէսներու հասոյթներով, երբեմն ալ լայն ժողովրդական հանգանակութեամբ (Ռուսաստանի ու Թուրքիոյ մէջ, բնականաբար՝ գաղտնի): Բայց համեստ էին այդ ճամբով ստացւած գումարները, չափազանց խղճուկ՝ հսկայական պահանջի հանդէպ: Այդ պահանջի մասին դէթ մտաւոր գաղափար տալու համար՝ բաւ է յիշատակել Արեւելեան Բիւրօի շրջանային ժողովի կողմէ 1899թ. յունւարին սահմանուած բիւզնէն: Ժողովի արձանագրութեան մէջ կը կարդանք.

«Բարձրաւանդակի կեդրոնացման համար ներմուծել առնուազն 1500 հրացան... կեդրոնացման վայրում ամէն մի հրացանի արժէքը մօտաւորապէս 70 ուրլի ենթադրելով, 1500×70=105,000 ուրլի:

«Նայն քանակութեամբ հրացանների համար գումը մէկ միլիոն փամփուշտ..... 100,000 ուրլի:

«... Անհրաժեշտ ռազմամթերքների և ծախքերի համար — 25,00 ուրլի:

\*) Մի ճանապարհորդութիւն. Մշակ, 1878թ. № № 166-167:

«Զինակիրների և մարդասիրերի պաշարի համար — 75,000 ուրլի:

«Ընդամէնը Բարձրաւանդակի կեդրոնացման համար — 305,000 ուրլի»:

Եւ նոյն հաշուով նախագծւած էր նոյն գումարը Լեռնավայրի կեդրոնացման համար:

Այդպիսով, երկու գլխաւոր վայրերուն Կազմակերպութիւնը յատկացուցեր էր աւելի քան 700,000 ուրլիի բիւզնէ մը:

Եւ այդ միայն Արեւելեան Բիւրօի շրջանին համար...:

Երբ առաջին անգամ բռնի հանգանակութեան խնդիրը դրուեցաւ Երկրորդ Ընդհանուր Ժողովի առջեւ (Թիֆլիզ 1898), տեղի ունեցաւ երկարատեւ վիճարանութիւն: Թեթեւ սրտով չէր, որ ընկերները կը մօտենային այդ ծանր, պատասխանատու խնդրին: Որքան ալ հայ շահամուտ արպագօններու դասակարգը յանցապարտ էր ցեղի գերագոյն պայքարի ստիպողական պահանջներուն հանդէպ՝ այնուամենայնիւ, այդ պայքարի ղեկավարները դժւարութեամբ կը մարտէին նոր, հաւաքով Թելադրանքը — դրամ հայթայթել բռնութեամբ, ի հարկին նոյն իսկ՝ արիւնհեղութեամբ...:

Ահա թէ ինչու 2րդ Ընդհանուր Ժողովը՝ ընդունելով հանդերձ բռնի հանգանակութեան սկզբունքը, յանձնարարեց մարմիններուն՝ տերրօրի դիմել միայն ամենաժայռայեղ, յուսահատակամ պարագաներու:

Եւ երբ այդ որոշումէն 5-6 ամիս յետոյ, խնդիրը աւելի սուր կերպով դրուեցաւ — Կարսի կոմիտէի կողմէն — Արեւելեան Բիւրօի շրջանային ժողովի մէջ (1899թ. յունւարի), դարձեալ ձայները բաժնեցան, և մեծամասնութեամբ որոշեցաւ՝ նորէն յետաձգել տերրօրի գործադրութիւնը, նորէն դիմել խաղաղ քարոզչութեան՝ անհրաժեշտ դրամը հայթայթելու համար: Ատենագրութեան մէջ կը կարդանք բառացի.

«... Որովհետեւ մեծամասնութիւնը չէր կարողանում խզնի հանդարտութեամբ հաստատել, թէ բոլոր հնարաւոր խաղաղ միջոցները իրագործել և անյաջող սպասել են,

«Որովհետեւ սուր միջոցի, այսինքն տերրօրի գործադրութիւնը վերապահել է Ընդհանուր Ժողովի կողմից ամենաժայռայեղ և յուսահատակամ դէպքում,

«Որոշեց չորսից մինչեւ վեց ամիս անպայման աշխատել ծանուցեալ խաղաղ միջոցների իրագործումին: Եւ նոյն ժամանակամիջոցում, եթէ Դաշնակցութեան նիւթակամ միջոցները ցանկացւած ծաւալն ու յաջողութիւնը չեն ստացել, այն ատեն միայն

Բիւրօի շրջանական երկրորդ ժողովը գումարելով, կատարել գործունէութեան հաշվետուութիւնը և արդիւնքի համաձայն վճռել յանձնարարել կոմիտէներին Ընդհանուր ժողովի արտօնած ծայրայեղ միջոցը իրագործելու, ուր որ անհրաժեշտ է համարուում»...

Եւ այդ որոշումն ալ անցաւ դարձեալ ոչ միաձայն, այլ 5 ձայնով ընդդէմ 2ի: Պորհրդակցութեանը կը մասնակցէին ի միջի այլոց՝ Նիքորա (Յ. Շահրիկեանի ծածկանունը), որպէս Բազուի մարմիններու ներկայացուցիչ, Մէլիք (Եռուստիեան) և Սմբատ (Ի)հանեան (Ս. Չաւարեան), վերջինը յամառօրէն կը մերժէր տերորը:

«Նաղալ միջոցները» սպառուեցան: Ապարդին — բոլոր քարտիներն ու յորդորները: Հայ բուրժուազիան չպիտի շարժէր, մինչեւ որ «չփոթորկէր» իր հանգիստը: Եւ շատ չանցած, «Փոքորիկ»ը հասաւ...

1901ին «Դաշնակցութեան Կամքը ներկայացնող Մարմինը» նիստ ունեցաւ Տիլիպպէի մէջ, Քրիստափորի մասնակցութեամբ. վերստին քննեց բուն հանգանակութեան խնդիրը, որոշեց դործադրել զայն և այդ նպատակով ընտրեց յատուկ մարմին մը — «Փոթորիկ» Կոմիտէն: Նորընտիր մարմնի ղեկավարութիւնը ստանձնեց նոյն ինքը Քրիստափորը, որ և նոյն տարւայ աշնան ձգեց Եւրոպան ու վերադարձաւ Կովկաս:

Նախ քան մեկնիլը, իր ձեռքով իսկ «Դրօշակ»ի տպարանին մէջ, դիշերանց — երբ չկար դրաշար ու այլ անբաղձալի հիւրեր — պատրաստեց «Փոքորիկ» Կոմիտէի ճերմակ կտաւէ պատաստները, դրօշմեց անոնց վրա «Դաշնակցութեան» խորհրդանշանն ու ազդարարագիրը, որով յանուն Կ. Պոլսոյ Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէի, մահուան սպանալիքով, հայրենիքի ազատութեան տուրք կը պահանջէր հայ հարուստներէն: Առաւ անոնցմէ բազմաթիւ օրինակներ, խնամքով ամբացուց իր ճամբորդական պարագաներուն մէջ, ուղեւորեցաւ Բերլինի վրայով — ուր տեսակցութիւն մըն ալ ունեցաւ Բէրէլի հետ\*) — և անցաւ ռուսական սահմանը:

\*) Իր վերջին ճիգն էր Եւրոպայի մէջ... Թարգման ունենալով Բերլինի մեր ընկերներէն բժիշկ-ուսանող Գրիգոր Սաղեանը՝ Քրիստափոր զնաց արժարծելու հայկական դատը աշխարհահռչակ ընկերավարական պետին մօտ: Աւելուս Բէրէլ սիրով ունկնդրեց հայկական դատի առաջնալին եւ երկար նամակով մը, ուղղած «Դրօշակ»ի խմբագրութեան, բացատրեց թէ ինչու կիսատեսական Գերմանիայի կառավարութիւնները պաշտ, անտարբեր դիրք են բունք

Հաստատուեցաւ Բազուի մէջ: Կը դրադէր աւտամապէս խաղաղ քարոզչութեամբ, կը դիւնորագրէր նոր երիտասարդ շարքեր, որոնք անսովոր խանդավառութեամբ կը դիմաւորէին հայոց ազատութեան հինաւորեց Բանբերը:

Յեղափոխական վերադարձումի օրերն էին ողջ կայսրութեան մէջ: Բազուն — կովկասեան արդիւնաբերութեան մեծ կեդրոնը — թատերաբեմ էր վիթխարի դործադուլներու և հայ երիտասարդութիւնն ալ գահավէժ կը տարւէր ռուս ու վրացի ընկերավարականներու դիւրին կարգախօսներով ու կամաց-կամաց կը սրաղէր, կը հեռանար բուն ազգային շարժումներէն: Քրիստափոր նշմարեց վտանգը, իր ահագին հեղինակութեամբ նետուեցաւ միջիններու ժխորին մէջ, սկսաւ տենդային բանակուր մասնաւորապէս սօցիալ-դէմօկրատ մարքսիստներուն դէմ: Ինքն ալ հինաւորեց և համոզուած ընկերավարական՝ նա, ի հարկէ, սրտի խորունկ գոհունակութեամբ կը դիմաւորէր համաուսակեան շարժումը, բայց և կ'ըսէր հայ երիտասարդներուն.

— Դուք կը յափշտակիք մարքսեան աւետարանով և դործադուլային անարին յեղափոխութեամբ, դուք կ'ըմբոստանաք դրամատէրներու իւրացուցած աշխատաւորական յաւելիալ արժէքին դէմ, բայց մի՛ մոռնաք, որ անդին ամենէն ճշուած ու պրօլետար ժողովուրդը կայ, որ ոչ միայն գրկուած է իր արդար վաստակի յաւելեալ արժէքէն, այլ և ամէն օր իր «յաւելեալ արիւնը» կուտայ թրջական նշտրակի հարւածներուն տակ... Մի՛ մոռնաք բուն հայկական դատն ու շարժումը, որ կը կարօտի ձեր մշտաթուն ուշադրութեան ու աջակցութեան:

Մեր մեծ ընկերով կորովի միջամտութիւնը այդ պատմական օրերուն վճռական ազդեցութիւն ունեցաւ մտքերուն վրայ և դադափարական երիտասարդութեան սուար զանգածը քայեց սիրւած քարոզչի ետեւէն ու մնաց Դաշնակցութեան շարքերում: Բարեբախտութիւն էր, անշուշտ, որ հայ ազգային կարգախօսը չմարեցաւ այդ օրերուն կովկասեան

դէպի հայկական խնդիրը և բոլոր արեւելեան խնդիրները: Քրիստափորի այդ տեսակցութենէն յետոյ, Բէրէլի հրահանգով, ընկերավարական երեսփոխան Գրադնուէր ըբաւ առաջին հարցապնդումը Ռայխստագի մէջ՝ հայոց հարցի առթիւ, և վարչապետ Բիւլով առաւ Բիսմարկի արժանաւոր յաջորդին վայել պատասխանը... Գերմանիան այն ատեն իրաւ տարւած էր Բազուի երկաթուղու և այլ հսկայ ծրագրերներով, կը սիրաբանէր սուլթանին հետ ու բնաւ սիրտ չուէր հալածական ժողովուրդներուն համար:

հորիզոններուն տակ, համառուսական, ընկերվարական ժխորին մէջ, ընդհակառակը՝ հնչեց տիրականօրէն, Դաշնակցութեան հեղինակաւոր առաջնորդի բերնով, զգաստացուց պայքարող երիտասարդութիւնը և ուղղեց գայն դէպի շիտակ ճամբան: Բարեբախտութիւն մըն էր, վասնզի շուտով պիտի հասնէր ուսանհայ



Վ Ա Ն Ա Յ Ս Ա Ր Գ Ի Ս

ժողովուրդի գոյութեան ամենէն տաղնապալի շրջանը, ուր մեր դեռարոյս ընկերվարականներու կարգախօսները պիտի յայտնէին կատարելապէս անոյժ ու սնանկ: Արդարեւ, հայ սօցիալ-դէմօկրատները չէին — ոչ ալ սօցիալիստ-յեղափոխականները — որ պիտի վարէին արիւնոտ պայքարը ցարիզմի դէմ՝ հայ ազգային-եկեղեցական գոյքերու թալանի առթիւ՝ և անոնք չէին, որ պիտի մղէին ինքնապաշտպանութեան երկարատև պատերազմը թաթար հայաջինջ խուժաններուն դէմ...

Բայց Քրիստափոր այդ տենդազին օրերուն իսկ՝ չէր մոռնար իր գլխաւոր հոգը — «Փոթորիկ»ի գործը:

Բռնի դրամահաւաքութեան առաջին փորձը կատարեցաւ Շուշիի մէջ: 1902ի ամառը հոն էր ինքը առաջնորդը իր խուզարկու գինւորներով: Այդտեղ էր փոքրիկ Մարգիսը, գանձակեցի — հետագային Վանայ Մարգիսը (Օդարաչեան) — որ Քրիստափորի

հրահանգով կիսատ ձգեր էր ուսումը ժընեւի մէջ և անցեր էր Կովկաս: Այդտեղ էր Թէքիրդաղցի հսկան՝ Օննիկ Նէվլալը, (Անոր մէկ նայւածքը բաւ էր՝ ահաբեկելու դրամի իշխանները և Քրիստափոր ընտրեր էր գայն յատկապէս այդ դերին համար): Այդտեղ էր Մարգար Ժամհարեան, բնիկ շուշեցի, որ Մարգարի պէս նոր ձգեր էր համալսարանը Գերմանիայում և այժմ կը հետեւէր Կուսակցութեան Առաջնորդին՝ անոր ոխքոտ ձեռնարկներուն մէջ: Այդտեղ էին Սեւ Աշոտ և ուրիշներ:

«Փոթորիկ»ի առաջին հարւածն իջաւ ծանօթ միլիոնատէր Իսահակ Ժամհարեանի վրա\*): Այդ մարդու մօտ՝ Կազմակերպութիւնը ըրեր էր արդէն ապարդիւն դիմումներ, 1900 ի սկիզբները, Տրանսայի հարաւում, Նիսի մէջ: Այս երկրորդ փորձն էր — և այս անգամ սպառնալիքով: 1902ի ամառը, մէկ գիշեր, երբ Ժամհարեան Շուշիի քաղաքային ակումբէն իր տունը կը վերադառնար, «Փոթորիկ»ի խումբը ձերբակալեց զինքը և տարաւ քաղաքէն դուրս, ամայի տեղ մը, երկարօրէն բացատրեց Կուսակցութեան նպատակը, յորդորեց, «համոզեց», որ կատարէ Գոլոտյ Կեդրոնական Կոմիտէի պահանջը և հասկցուց, որ հակառակ պարագային իր կեանքը պիտի վտանգւի: Աւելորդ է նկարագրել գոռոզ դրամատիրոջ հոգեկան վիճակը այդ անակնկալ բանտարկութեան երկար ժամերուն: Մահան սարսափի տակ, նա խոնարհազին կ'աղերսէ տղաներուն, որ ազատ ձգեն զինքը, կ'երդէ իր բոլոր աստւածներով, որ անմիջապէս պիտի կատարէ յեղափոխականներու պահանջը, առանց մատնելու գաղտնիքը ողուս իշխանութիւններուն: Եւ այդ խոստումն առնելով, մերոնք ազատ կը ձգեն բանտարկեալը: Ուրիշ ելք չունէին արդէն: Դիւրին բան չէր օրերով պահել կալանաւորը քաղաքի շրջակայքում: Դէտքը արդէն մեծ յուզմունք էր յարուցեր, ոստիկանութիւնը ոտքի էր: Միակ ելքն էր՝ հաւատալ Ժամհարեանի խօսքին և տուն ճամբել գայն: Վերջին անգամ «Փոթորիկ»ի խումբը կը յորդորէ անոր՝ դադարնապահութեամբ, խաղաղ կերպով կարգադրել գործը, և նորէն ու վճռական շեշտով կը յայտարարէ, որ մերժումի ու մատնութեան պարագային երբեք չպիտի ազատուի Դաշնակցութեան ձեռքէն և վաղ թէ ուշ մահով պիտի պատժուի: Կը պայմանաւորուին, որ յաջորդ օրն իսկ, որոշեալ ժամուն՝ Ժամհարեան

\* Մէկն էր Մուկայի առաջնակարգ սեզանուորներէն, որ եկած էր մտառը անցնելու իր ծննդավայր Ղարաբաղում:

անձամբ բերէ սլահանջած գումարը նշանակած տեղը (Պետէ Աղբիւրին մօտերը) ու յանձնէ յեղափոխականներուն:

Ինչպէս վերը բացատրեցինք, Դաշնակցութիւնը որոշած էր ամէն կերպ խոյս տալ սպանութենէ: Եւ այդ իսկ նպատակով, մեր ընկերները պահանջեցին ժամհարեանէն համեստ գումար մը — երեսուն հազար ուրբի — որ Մոսկուայի մեծահարուստ սեղանաւորը կրնար դիւրութեամբ գոհարերել: Սակայն, անվնաս տուն վերադառնալով և այլ ևս ինքզինքը սպահով զգալով, մարդը ոչ միայն արհամարհեց մեր ընկերներու սպառնալիքը, այլ և անմիջապէս լուր տուաւ Ոստիկանութեան: Եւ նշանակած ժամուն, երբ մերոնք կը սպասէին անտառի իրենց թագստոցի մէջ, — ոստիկաններու սուար խումբ մըն էր, որ ժամհարեանի ու Ոստիկանապետի առաջնորդութեամբ եկաւ ձերբակալեց դաւադիրները:

Այլպէս ձախուկեցաւ «Փոթորիկ»ի առաջին փորձը, որ ունեցաւ զլրջագին արձագանգներ ողջ Կովկասում: Քրիստափոր և ընկերները չէին տարւեր պատրանքով: Միամիտ չէին և գիտէին փորձէն առաջ, որ հայ կրեստը, անգամ մը ազատելով, կարող էր զրթել իր խոստումը և աղախինել իր աչքին ամենակարող Ոստիկանութեան... Թուրքահայոց ազատութեան գործը շատ արիւն էր հոսեցուցեր, երկար էր վատ հայերու շարանը — ուրացողներու, մատնիչներու, ամէն տեսակ դաւաճաններու — շանթահարած հայ վրիժառու ահարեկիչի ձեռքով... Ձոհեր սէտք էին այստեղ եւս: «Փոթորիկ»ի աննախընթաց և ահաւոր ձեռնարկն եւս չպիտի անցնէր առանց արիւնի: Հայ ունեւոր դասակարգը տասնեակ տարիներէ ի վեր արհամարհեք էր հայ ժողովուրդի լաւագոյն զուակներու դերմարդկային ճիգերը, արհամարհեք էր անոնց զոյտութիւնն իսկ — սէ՛տք էր անգամ մը իջեցնել լախտի հարւածը անոր մէջքին ալ...

Իր սինիք մատնութեամբ ժամհարեան արդէն դարբներ էր իր եղերական ձակատագիրը: Եւ ահա զէպքէն քանի մը ամիս յետոյ, օր ցերեկով, Մոսկուայի հայոց եկեղեցու բակին մէջ, խուռն բազմութեան ներկայութեամբ, մատնիչը քաւեց իր յանցանքը, ընկաւ դաշոյնի հարւածներուն տակ...

Տարւորութիւնը ահագին էր Մոսկուայի մէջ և մանաւանդ Կովկասում: Սարսափը սլաշարեց հայ բուրժուազիային: Ոստիկանութիւնը խլրտաց: Եւ ընդհանուր իրարանցումի մէջ դաւադիրներու խումբը սկսաւ իր գործը: «Փոթորիկ»ի վշտոտ ու վրէժխնդիր ոգին՝ Քրիստափոր Միքայէլեան՝ ձգեց Ղարաբաղի

մայրաքաղաքը, անցաւ արդիւնաբերական մեծ կեդրոնները — Բազու, Թիֆլիզ — ու շարժման մէջ դրաւ իր անձնէր փաղանդը, ինքը մնալով գետնայարկերու մութին մէջ: Ժրնեւէն բերւած կտաւէ խորհրդաւոր պատասանները մեր զինուորներու ձեռքով կը թափանցէին հայ ջոջերու գրասենեակներն ու բնակարանները. Կուսակցութիւնը կը պահանջէր իւրաքանչիւրէն նախորոշած տուրքը: Ձոջերը իրարու անցան, գաղտնի, խորհրդակցական ժողովներ գումարեցին որոշելու համար իրենց դիրքը անլուր անակալի հանդէպ: Ձայները բաժնեւեցան: Ամենէն համարձակները — նաեւ ամենէն գծծիները — կը թելադրէին Ոստիկանութեան ձեռքը մատնել և՛ այդ կտաւէ պատասանները և՛ Դաշնակցութեան բոլոր ծանօթ ղեկավարները: Մեծամասնութիւնը խոհականութեան ձայնը հնչեցուց և որոշեցաւ համակերպիլ Դաշնակցութեան պահանջներուն: (Երկու խոչորագոյն ջոջերը անձամբ եկան Պարիզ և հատուցին իրենց պարտքը Արեւմտեան Բիւրօին): Գտնեցան, այնուամենայնիւ, միլիոնատէրերու դասակարգին մէջ, մէկ-երկու տիպար-Արպագօններ, որոնք յամառօրէն մերժեցին մեր մարմիններու պահանջը — Յարութիւն Աղամեան, Ջանիօլադեան — և կրեցին մահաւան պատիժ: Դաշնակցութեան կամքի առջեւ խոնարհեցան նաեւ ուրիշ վայրերու մէջ հաստատուած շարք մը խոշոր կապիտալիստներ — Հիւսիսային Կովկաս, Ռոստով, Մոսկուա և այլուր:

Ազուլեցի Մաքեաւն էր այն անողոք նեմեզիդան, որ «Փոթորիկ»ի ճամբան հարթեց, աղէտելով ժամհարեանը և ահարեկելով բոլոր միւս ժամհարեանները: Ռուսական ատեանի առջեւ նա յայտարարեց, որ անձնական ոչինչ ունէր հանդուցեալի դէմ, բայց որ այդ վերջինը արժանի էր մահաւան պատժի, որովհետեւ մերժեք է իր խոստացած աջակցութիւնը ի նպաստ թուրքահայ դատի, «մերժեք է տալու այն չնչին գումարը, որ նա (ժամհարեան) մէկ գիշերուան մէջ կը վատնէր»...

Կառավարութիւնը հասկըցեր էր, անշուշտ, որ այդ խորհրդաւոր գործը նիւթւած էր գաղտնի կազմակերպութեան մը ձեռքով, ուստի ամենուրեք կը փնտրէր դաւադիրները: Մասնաւոր հետապնդումի առարկայ էր «գաղտնի կոմիտէի» պարագլուխը: Ետտեք գիտէին անոր տեղը — ոչ ոք մատնեց: Այնուամենայնիւ, Քրիստափոր փութաց անցնիլ արտասահման, ուր շուտով պիտի



գումարէր Յրդ Ընդհանուր Ժողովը: Իր գործը գրեթէ աւարտած էր:

Անցան արտասահման նաեւ «Փոթորիկ»ի շարք մը անդամները — Օննիկ Նէվրուզ, Սեւ-Աշոտ և այլն: Փոթորիկ Սարգիսը միայն — խումբի առաջապահ կտրիճը — մնաց ռուսական ոստիկանութեան ճանկերում: Ձերբակալուած դեռ Պէխէ Աղբիւրի անտառին մէջ՝ նա մնաց Շուշիի բանտը. ապա որոշեցին փոխադրել զինքը Գանձակ՝ դատելու համար: Բայց Կազմակերպութիւնը միջոցներ ձեռք առաւ ազատելու թանկագին ընկերը: Եւ երբ վերջինը իր պահակին հետ հասաւ Եւլախ կայարանը, մեր դարանակալ զինւորները յարձակեցան, կոտորեցին պահակը և փախցուցին Սարգիսը: Անվեհեր երիտասարդը, որ պիտի դառնար այնուհետեւ Կուսակցութեան «զետնայրկերու» տողանդաւոր քարոզիչներէն մին, որոշ ատեն պահւեցաւ թագստոցներում ու վերստին հրապարակեկաւ հայ-թաթարական կռիւներու ընթացքին, գործեց Նախիջևանի շրջանում, ապա 1906 թ. անին անցաւ Վան, ուր երկար տարիներ մնաց ղեկավար մարմնի մէջ՝ Արամի, Իշխանի, Կոմսի և այլոց հետ, սիրւած ու յարգուած բոլոր ընկերներէն... մինչեւ որ 1915ի Պորչակը զինքն ալ տարաւ մեր հարիւրաւոր մտաւորականներուն հետ՝ դէպի մեծ Սպանդը...

Տանջալի ողիսական մը ունեցաւ և Մաթէոսը: Իր կատարած տերրորէն յետոյ, տաժանակիր աշխատանքի դատապարտուած, նա ճաշակեց բանտի վայելքները Մոսկուայի ու Կովկասի մէջ, ապա քշեցաւ Սիրիւր, ուրկէ, սակայն, յաջողեցաւ փախչիլ, երկար ատեն մնաց թաղնւած կովկասեան քաղաքներուն մէջ, ապա, լոյս աշխարհ գալով, շարունակեց ծառայել իր Ուխտին, նոյն սրտաշարժ անձնադոհութեամբ, անցաւ Թուրքաց Հայաստան, երկար տարիներ գործեց Մուշի մէջ և 1915ին գոհ գնաց նոյն Պորչակին:

Երրորդ Ընդհանուր Ժողովի մէջ (Սոֆիա, 1904թ. Յունւար) — որու առջեւ Քրիստափոր մանրամասն հաշիւ տուաւ «Փոթորիկ»ի դործունէութեան և ստացուած զուժարներու մասին — Կուսակցութիւնը վերստին շեշտեց, որ բռնի հանգանակութիւնը ընդունելի է միայն «որոշ տագնապալի վայրկեաններու մէջ, իբրեւ անխուսափելի միջոց մը, որը սակայն, իբր բացարձակ չարիք՝ պէտք է իր կիրարկութեանը մէջ սահմանափակուի Ընդհանուր Ժողովի կողմէ մասնաւոր որոշումներով»:

Այս տողերը Ժողովի ատենագրութեան մէջ գրւած են Քրիս-

տափորի ձեռքով: Եւ այդ պարբերութենէն յետոյ կուգայ անմիջապէս հետեւեալը.

«Այդ նպատակաւ Ընդհանուր Ժողովը կընդունի՝ ա. «Փոթորիկ»ի գործը շարունակելու իրաւունքը տալ միմիայն Կազմակերպութեան Յուցական Մարմնին\*) և այն՝ մինչեւ Դաշնակցական Խորհուրդի առաջիկայ նիստը միայն (այդ Մարմնէն դուրս, արտասահմանի ոչ մէկ մարմին իրաւունք չունի բռնի միջոցներով դրամ հանգանակել): ք. Ընդհանուր Ժողովի բացակայութեանը՝ Դաշնակցական Խորհուրդը միայն կրնայ բռնի դրամ հաւաքող խումբի ձեռք բերած զուժարներու բաշխումը կատարել»:

«Փոթորիկ»ի գործունէութիւնը կարճ ժամանակով վերսկսաւ Կովկասի մէջ 1905ին, թաթարական դրոհի ալեծուփ շրջանում... Վասնզի հայ ունեւոր դասակարգը, ընդհանուր առմամբ, կը շարունակէր իր փոքրոգի ընթացքը, չէր տրամադրեր անհրաժեշտ միջոցները ազգային պաշտպանութեան բանակին — անգամ համատարած սարսափի այդ օրերուն, երբ աւերածի հողմը կուգար վտանգելու իր իսկ, հայ բուրժուազիայի, կեանքն ու ստացուածքը...

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

\*) Ընտրուած նոյն Սոֆիայի Ընդհանուր Ժողովում:

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

ՅԱՌԱՋԱԲԱՆ

21-26

**I**

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՆԱԽ ԲԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Շարժման ծնունդը.— Իրականությունը և գաղափարային խմբումներ.— Շարժման նախակարագետները.— Խրիմեան և իր «Վանգոյժ»ը.— Ազգային Սահմանադրության լոյսերն ու սուերենները.— Ըմբոստացումի ճայներ.— Վասպուրականի շարժումները.— Հրոսախումբներ.— Զարօ-Շեքօ.— Դուրբիկեան.— Կարճոյ ցոյցը.— Կովկասեան տրամադրութիւններ.— Մոսկուայի խումբը.— «Ազատութեան Աւետարներ» . . . . .

27-68

**II**

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՆՈՒՆԴՈՒՆԸ

Թիֆլիզեան խմբումներ և խումբեր.— 'Լզգային» և «Միջագային».— Ռուսահայ գաւառը.— Քանի մը յուշեր.— Թրքահայ առաջնայինը Թիֆլիզի մէջ.— Զաքարեան, Սարկաւազ, Յուսո.— «Դաշնակցութեան» երկունքը և Գրիգոր Արծրունի.— «Հայ Յեղափոխականներու Դաշնակցութիւնը» և «Հնչակ».— Միութեան բանակցութիւններ և վիժում.— Հնչակեան կուսակցութեան գործը.— Պառակտում.— Հ. Յ. Դաշնակցութիւնը հրապարակի վրա.— Կուկունեանի արշաւանքը . . . . .

69-94

**III**

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆՆԵՐ

Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարային պատկերը.— Ժողովրդական և դեմոկրատ.— Խրիմեանի, Նալբանդեանի, Բաֆֆիի սերունդ.— Դաշնակցութեան «Կեդրոնը».— Գործիչներ գէպի երկիր.— Տպարան և առաջին բանցիկներ.— Հայկական շարժման վիպական շրջանը.— «Ջահելները» . . . . .

95-104

**IV**

ԴԵԿԱՎԱՐՆԵՐԸ

Հայ շարժման գաղափարային սրբորդութիւնը.— Քրիստափոր, Զաւարեան, Ռոստոմ . . . . .

105-123

**V**

ԵՐԱԳԻՐ, ՏԱԿՏԻԿ, ԱՇԽԱՐՀԱՀԱՅՅԱՑՔ

Առաջին համագումար.— Ընդհանուր ապստամբութեան խնդիրը.— Արամ Արամեանի առաջարկը.— Անհատական տերթօր.— Զէմֆի փոխադրութիւն և ժողովուրդի մարզում.— Յեղափոխութիւն և զանգուածային հոգեբանութիւն.— Կազմակերպութեան ճեւղ.— Կեդրոնացում և ազակերպում.— Յոնեան և Զաւարեան.— Անփութութիւնը ծրագրային խնդիրներու հանդէպ.— Բաղաժական և տնտեսական պահանջներ.— Ժողովրդապետութիւնը՝ կուսակցութեան հաւատամքը.— Ընկերվարական հայեր . . . . .

124-133

**VI**

ՆՈՐՍԿԱՍՏԱՆԸ ՈՐՊԷՍ ԽԱՐԻՍԻ

ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԴԵՄՔՆԵՐ

Գործիչներու շարանը կովկասէն.— Դաշնակցութեան զինագործարանը Թաւրիզում.— Գալուստ Ալոյեան, Սաֆօ, Յովսէփ Արզուրեան.— Պետօ, Թերլիմէզեան, Վարդան, Մովսէս Խլիանեան.— Դերիկի կռիւները.— Դարձեալ Շեքօ և Զարօ . . . . .

139-156

**VII**

ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԶԱՐԹՕՆԻԸ ՏԱՐՈՆԻ ՄԷՋ

ԱՐՁԱԳԱՆԿՆԵՐԸ ԵՒՐՈՊԱՑՈՒՄ

Վեղարարուր յեղափոխականներ.— Խրիմեանի շունչը.— Առաջին կախաղան.— Արարօ և իր արշաւախումբը.— Սասնոյ բանակումը 1893ին և հնչակեան գործիչներ.— Տամատեան, Մուրատ Պոյաճեան, Հրայր.— Սասնոյ կատարածը և Եւրոպան.— Պետութիւններու միջամտութիւնը.— Բարեկրօնագումներու Մայիսեան ծրագիրը և Ռուսաստանը.— Սեւ օրեր . . . . .

157-171

**VIII**

ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՆԿԻ ԳՐԱԽՈՒՄԸ ԵՒ ՌՈՒՄԲԱՑԻՆ ԿՈՒՆԵՆԵՐԸ Կ.ՊՈԼՍՈՒՄ

Օրհասի ազդակներ.— Կախի բոլոր միջոցներով.— Բարկեմի, Վաւեանի, Զաւարեանի նամակներէն.— Զարմել բուն իսկ կեդրոնին մէջ.— Օգոստոս 14ը.— Բանկ և Սամաթիա.— Անախընթաց սարսափ և իրարանցում.— Հ.Յ.Դ.Շրջափարակները.— Կ. Պոլսոյ ապստամբութիւնը և Եւրոպան.— Մեր նախատակները . . . . .

172-193

IX

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԽԱՆԲԸ

Վրիժառու եւ պատժական.— Գաղափարի յղացումը.— Նիկոլ-  
Դումանի գիրքը.— Հասուած մը իր մէկ նամակէն.— Ինչպէ՛ս պատ-  
րաստանցու արշաւամբը.— Կռիւը մագրիկցիներու գէւ.— Արժա-  
գանգներ.— Արշաւամբի փառաբանութիւնը գերման համդէտին մէջ

194-207

X

ՏԵՂԱՏԻՈՒԹԻՒՆ

Ռեւոլյուցիայի շրջան (1896-1904).— Դիւանագիտութիւնը եւ Հայկա-  
կան խնդիրը.— Համարային կարծիքի՝ ընդվզումներ Տրամաշայի մէջ.  
— Ժան Ժօռէ.— Իրարանցում ֆրանսական Խորհրդարանի մէջ եւ  
անդրադարձումներ Ռուսաստանում ու Անգլիայում.— «Կապոյտ  
Գրէի» մէկ վկայութիւնը.— Բեկում Երլզըզի հայաչինջ ընթացքի  
մէջ.— Թուրք կառավարութեան գիմումները ժընեւ.— Բանակ-  
ցութիւններ Հ. Յ. Դաշնակցութեան հետ.— Քրիստափար ժընե-  
ւում.— «Պրո Արմենիա» եւ հայկական պրոպագանդի նոր շրջան.  
— «Երօշակ».— Տրամագրութիւնները Կովկասի ու Երկրի մէջ.—  
Հնգիւստան յուսովում.— Վարանումը շարքերում մէջ.— Երկրի  
կացութիւնը.— Դանդաղ մտահացումը քալմի ու սպանութեան  
աւժիմի տակ.— Հայ եւ օտար վկայութիւններ.— Հրայրի տեղե-  
կագիրները.— Ինքնապաշտպանութիւնը՝ հրամայական պահանջ.—  
Կռիւը՝ նախապարտական անհրաժեշտութիւն.— Ինքնապաշտպան  
խումբերը մեծ կատարածի օրերում

208-228

XI

ՀԱՅԴՈՒԿԱՏԻՆ ԵԱՐԺՈՒՄ ԵՒ ՏԵՐՐՕՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԵՒԱՏԻՆԵՐԸ ՏԱՐՐՈՆՈՑ ՄԷՋ

Աւանդ մը ուրիշ ապստամբ ժողովուրդներէն.— Հայդուկ եւ ահա-  
բեկիչ.— Տերթոբը՝ «Դաշնակցութեան» պատմութեան մէջ.— Հրո-  
սախուժներու կոչումը.— Ջիմատար, մարգիչ եւ քարոզիչ.— Ձա-  
խաղութիւններ.— Միջովայրի արգելիները.— Խմբակներու եւ  
առաքելութիւնը.— Յէրայիներու ժամագրավայրը՝ Սասուն.— Սերոբի  
գիւցազնավէպը.— Հէֆաթային կռիւներ եւ եղբրական վախճան.—  
Անդրամիկ.— Անուշա լեզուներ.— Լոյսեր եւ սուրբներ.— Յէրայի-  
ները խաղաղ օրերում.— Կարգապահութիւնն ու կուսակցութեան  
պաշտամունքը.— Հայ դաւանամներու կատարած.— Ջգայացունց  
զրուց մը Սասնայ անտառներում մէջ.— Աշիրեքապետ Խալիլի  
գլխատումը մերիներու ձեռքով.— Սփռփամբի հառաչանքներ.—

XII

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

Բանակցութիւններ ժընեւի մէջ (1895-99թթ.).— Ապսիւսահեան քեյ  
«Երօշակի» խմբագրատունը.— Մերիներու աշխատանքը երկրին  
մէջ.— Քեռիմ՝ Տերսիմ.— Հրայր, Գէորգ, Վարդան վարդապետ.—  
Կապեր ցեղապետներում հետ.— Իրրակիմ փաշա, Ղազար քեյ,  
Ջէյնալ եւ այլն.— Ապարդիւն ճիգեր

229-270

271-275

XIII

ՀԱՅ-ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹԻՒՆ

Հայկական շարժման անդրադարձումները Բալզար-Մակեդոնիայի  
մէջ.— Եփումը Դաշնակցականներու եւ մակեդոնացի յեղափոխու-  
կաններու միջեւ.— Կ. Պոլիս, Սոփիա, ժընեւ.— Ռուսում եւ  
Սարաֆով.— Հայ եւ մակեդոնական զոյգ դատը Երազայում.—  
«Երօշակի» խմբագրատունը՝ ժամագրավայր.— Հայ-մակեդոնա-  
կան եղբրայութիւնը արեան դաշտում.— Արքիանապոլսի կախա-  
զանները

276-281

XIV

ՍԱՍՆՈՑ ՊԱՏԵՐԱՄԸ

Արդիւ Համիդ՝ անդրդուլի իր հայաչինջ քաղաքականութեան մէջ.  
— Նոր դաւը Սասունի գէւ.— Խորտակել հայկական միջնորդները  
եւ «մաքել» Տարօնայ հայութիւնը.— Դուրք՝ միաժամանակ Ջէյ-  
քունի գէւ.— Սասնայ տագնապը եւ փէրայիները.— Օգնական  
ուժեր Կովկասէն.— Ջիւառ խումբի մը զգայացունց ուղիւտու-  
թիւնը.— Սերաստացի Մուրատ.— Մեծ բախումի նախօրեակին.—  
Հայոց զօրակոչը եւ գծուած ազգիկներու հանդիսուտը գրկախառ-  
նումը.— Սրտայոյց տեսարաններ.— Հրամանատարի ընտրութիւն.  
— Թուրք բանակի զգուշուտը վերելք.— Թուրք ու քիւրդ նորէն  
համերաշխ.— Քրդական դու Անդրամիկի գէւ.— Աւաչին նախա-  
տամարտ (1904, մարտ 30).— Հայկական ուժերու դաւաւորումը.  
— Երկրորդ նախատամարտ.— Միջնորդներ եւ բանակցութիւն.—

ՍՏԱՆՈՑ ԿԵ ԿՈՒՆԱԿՆԵՐ ԻՔՆԻ.— Սասունցիներու մեր-  
ժուովը.— Անհուսաստ կախ.— Բուս մը հայուրիւն բնորդ 30  
հազար բուրք ու քիւրքերու.— Մերիները՝ յազարդ առաջին բա-  
խումներու մէջ.— Նահանգը զէպի բարձունքները.— Ճակատագրա-  
կան վայրկեաններ.— Ռազմամթերքը սպանելով, փէշայիները կա-  
րոշեն դաշտ իջնել.— Կուելով կը տանին իրենց հետ ժողովուրդը.—  
— ՍՏԱՆՈՑ ԿԵ ԿՈՒՆԱԿՆԵՐ ԻՔՆԻ.— Սասունցի կը հրամայէ քրքերով լեցնել պարպուած Սասունը.—  
Պետութեանց միջամտութիւնը եւ սուլթանական ծրագրի վիժումը.—  
— Սասունցի կը վերադառնան իրենց բոյները.— Հրայր եւ վահան  
նահատակուած.— Հրայրի կարագին երգը

282-301

XV

ՍԱՆՆՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՒՓԵԱՆ ՃԻՂԸ

Հ. Յ. Գ. Կովկ. Շրջանային ժողովի մէջ.— Քառուցիկ խումբեր եւ  
պարտիզանական կռիւներ.— Օգնութեան աշխատանքները Բազում.—  
— Ռուսներու արհեստանոց.— Խմբակներու շարանը.— Դու-  
ման, Խան, Նէվրուզ, Որսկան, Աշու-Սրկաք.— Կօրի եւ Մտիմի  
արշաւանքները

302-318

XVI

ՍԱՆՆՈՑ ՇԱՐՃՈՒՄԸ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

«Շրթարդ ազգակը».— Ֆրանսական դիւանագիտութիւնը եւ Հայաս-  
տանը.— Հանուստէն մինչեւ Դեկտեմբ.— Ընկերակարակները եւ  
հայ դատը.— Քրեանսէ եւ ժողով.— Բրիւսէլի միջազգային հա-  
մագումարը.— Սասնոյ շարժումը Ֆրանսական հորհրդարանի մէջ.—  
— Հայաստան շարժումն հետեւանքները

319-335

XVII

«ՓՈՒՐԻԿ»Ի ԳՈՐԾԸ

Դրամական տագնապը եւ բանի հանգանակութեան խնդիրը.— Վա-  
րանումներ մեր վարիչ շրջաններում.— Գրիստափոք՝ նարէն Կով-  
կաս.— «Փոքրիկ»ի առաջին հարածը Շուշում.— Ժամհարեանի  
մտանդութիւնը եւ մտեր.— Բազու եւ Թիֆլիզ.— «Եղանակցութեան»  
առնագին դիմումները եւ խումբը հայ մեծատանց շարքերում.—  
Արգիւնքը.— «Փոքրիկ»ի զէմեր.— Սարգիս, Նէվրուզ, Մասթեա

336-367